

The Institute of Ancient Manuscripts after Mesrop Mashtots
“MATENADARAN” and “Friends of the Matenadaran”
Benevolent Fund express their gratitude to
“JTI ARMENIA” CJSC
for sponsoring the publication of this volume

Մերոպ Մաշտոցի անվան Մատենադարանը և
«Մատենադարանի բարեկամներ» բարեգործական
հիմնադրամը երախտագիտություն են հայտնում
«ՋԵՅ ԹԻ ԱՅ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ-ին
սույն հատորի հրատարակությանը աջակցելու համար



“MATENADARAN”

MASHTOTS INSTITUTE OF ANCIENT MANUSCRIPTS

BULLETIN OF MATENADARAN

26

**“Nairi” publishing house
YEREVAN – 2018**

“МАТЕНАДАРАН”

ИНСТИТУТ ДРЕВНИХ РУКОПИСЕЙ ИМ. МАШТОЦА

ВЕСТНИК МАТЕНАДАРАНА

26

**Издательство “Наири”
ЕРЕВАН – 2018**

«ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ»

ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՀԻՆ ԶԵՌԱԳՐԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԲԱՆԲԵՐ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ

26

«ՆԱԻՐԻ»

ԵՐԵՎԱՆ – 2018

Տպագրվում է Մաշտոցի անվան Մատենադարանի
գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագրական խորհուրդ՝ Վ. Տեր-Ղևոնդյան (գլխ. խմբագիր), Գ. Տեր-Վարդանյան, Գ. Մուրադյան (պատասխանատու քարտուղար), Կ. Մաթևոսյան, Օ. Վարդազարյան, Գ. Գասպարյան, Վ. Քորոսյան

«Բանբեր Մատենադարանի», Հ. 26 Մաշտոցի անվան հին ձեռագրերի ին-տ. – Եր.: «Նաիրի» հրատ., 2018:

Հ. 26/խմբ. Վ. Տեր-Ղևոնդյան, 2018:

«Բանբեր Մատենադարանի» հանդեսի սույն համարում ընդգրկված են պատմութ-
յանն ու աղբյուրագիտությունը, բանասիրությունը և միջնադարյան բնագիտությունն
առնչվող հոդվածներ, ուղագրավ մի հրատարակում և այլ նյութեր:

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՂԲՅՈՒՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԱՇՈՏ ՍԱՐԳՍՅԱՆ

ԱՆՅՅԱԿԻ ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՄ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ԱԿՏԻՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾՈՆ. ԱՅՍՕՐՎԱՆԻՑ ՄԻՆՁԵՎ ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՅԻ

Բանալի բառեր՝ ինքնապատկերացում, ինքնագերագնահատում, ինքնաթերագնահատում, քաղաքական միտք, ստեղծագործական աշխատանոց, մեծամոլություն, թերարժեքության բարդույթ, ռացիոնալ մտածողություն, օբյեկտիվություն, հավաստիություն:

Ինքնապատկերացումը՝ որպես անհատի և ազգի վարքի երկրպագ

Ինքնապատկերացումը, ինքնության գիտակցումը, ինքնագնահատականը, դառնալով վարքի երկրպագ, շատ կարևոր են ինչպես անհատի, այնպես էլ ազգի կեցվածքում՝ պայմանավորելով նրա վարքագիծը և գործողությունների արդյունավետության աստիճանը: Նաև այդ հիմքի վրա են ձևավորվում նրա արժեհամակարգը, պատկերացումներն ազատության, արժանապատվության մասին, քաղաքական և այլ ձգտումներն ու հավակնությունները:

Կարող է լինել երեք տարբերակ.

1. Ինքնագերագնահատում. Եթե մարդուն կամ ազգին ներշնչում-համոզում են, որ նա բոլորի մեջ միակն է ու բացառիկը՝ մեծամոլական ախտով վարակված և իրականության զգացումը կորցրած՝ նա մի օր կոշտ բախվում է նույն այդ իր կողմից թերագնահատած իրականությանը: Թե՛ անհատի, թե՛ ժողովրդի դեպքում այդ ներշնչումն ապահովում են յուրայինները՝ «բարի կամեցողները»: Ժողովուրդների դեպքում սա նշանակում է բացառիկության ուսմունքով հասարակությանը պարտադրված մեկ գաղափարախոսություն, ինչի անխուսափելի քաղաքական հետևանքը գաղափարախոսական տվյալ հիմքով բռնապետության ստեղծումն է: Պայմանականորեն սա կոչենք «**ներքին բռնապետություն**»: Բացառիկության մեծամոլական ախտը պատմության ընթացքում ազգեր ու կայսրություններ է կործանել: Մեր ժամանակներում դրա լավագույն օրինակները Ֆաշիզմ վերապրած երկրներն ու ժողովուրդներն են, Խորհրդային Միությունը: Եվ նույն ճակատագրին կարժանանան նրանք, ովքեր կունենան նույն գայթակղությունը, եթե անգամ դա բերի ժամանակավոր, թվացյալ հաջողությունների: Այսինքն՝ **ինքնագերագնահատումը քաղաքական գործոնի վերածվելով ժողովրդի համար կորստաբեր պատկերացում է:**

2. **Ինքնաթերազնահատում.** Եթե մարդուն և ազգին ներշնչում են, որ նա ուրիշներից ցածր է, ոչ լիարժեք, նրա մեջ թերարժեքության բարդույթ է առաջանում, մեռնում է պայքարի և առաջընթացի որևէ ձգտում: Թե՛ անհատի, թե՛ ժողովրդի դեպքում դա անում են օտարները, շարակամները: Ժողովրդի **ինքնաթերազնահատման** բարդույթը ևս այն գործոններից մեկն է, որի հետևանքով պատմության ասպարեզից պետություններ ու ժողովուրդներ են վերացել: Դա տեղի է ունեցել, երբ թերարժեքության բարդույթը դարձել է համընդհանուր, յուրօրինակ գաղափարախոսություն և ոչնչացրել է ազգի, տեսակի պաշտպանական իմունային համակարգը: Ինքնագերազնահատմանը հակադիր լինելով՝ **ինքնաթերազնահատման երևույթը** նույնպես բռնապետությունների ստեղծման ու պահպանման հիմք է: Նվաճված ժողովրդի հետ, որպես կանոն, այդպես է վարվել օտար նվաճողը (անգամ օրենքով նրա «երկրորդ» տեսակ լինելն ամրագրելով)՝ որպես նրա վրա իր իշխանությունն ապահովելու, դյուրացնելու մի միջոց: Սա էլ պայմանականորեն անվանենք «**օտարի բռնապետություն**»: Ըստ էության՝ հենց բռնապետության այս տեսակին է համընկնում նաև սեփական ոչ օրինակարգ իշխանությունը: Վերջինս նույնպես հաստատվում է գործող օրենքների, ավանդույթի, ժողովրդի կամքի, արժանապատվության արհամարհմամբ: Դրանց երկուսի մեջ էլ հավասարապես մահացու վտանգ տեսնելով՝ կենսունակ ժողովուրդներն իրենց ողջ պատմության ընթացքում նույն կերպ պայքարել են թե՛ օտար իշխանության, թե՛ սեփական ոչ օրինակարգ իշխանության դեմ: Այսինքն՝ **ինքնաթերազնահատումը նույնպես, կենցաղում անհատի, իսկ քաղաքական գործոնի վերածվելով՝ ժողովրդի համար կորստաբեր պատկերացում է:**

3. **օբյեկտիվ գնահատում.** Եթե անհատը կամ ժողովուրդը համարում է, որ ինքը ոչ մեկից ո՛չ ավելի, ո՛չ էլ պակաս, նրա մտածողությունը դառնում է ռացիոնալ, վարքագիծն ու գործողությունները՝ իր ուժերին համեմատ, իրականությանը համարժեք, և դրանով իսկ՝ առավելագույնս արդյունավետ: Եվ դա ապահովում է նրա հաջողություններն ու կենսունակությունը, հավասարակշռությունը, համաշափ զարգացումը, զերծ պահում ծայրահեղություններից ու վտանգներից, ստեղծում զարգացման ու բարգավաճման համար անհրաժեշտ ավելի տևական խաղաղ շրջաններ: Անհատների դեպքում՝ օրինակներ բոլորս կգտնենք մեր շրջապատում: Ազգերի դեպքում՝ դրանք այսօր ծաղկող երկրներն են, որոնք այդպիսի պատկերացման հիմքի վրա ստեղծել են ժամանակակից ժողովրդավարական համակարգեր՝ որպես գերնպատակ ունենալով սեփական քաղաքացու ազատության և արժանապատիվ կյանքի ապահովումը: **Այսինքն՝ ինքնապատկերացումը օբյեկտիվ գնահատմամբ այն միակ հիմքն է, որի վրա կարող է կառուցվել անհատի, իսկ քաղաքական գործոնի վերածվելով՝ ազգի լավագույն ներկան և երաշխավորված ապագան, դառնալ նրա կայուն զարգացման երաշխիքը:**

Պատմությունը՝ որպես ինֆնապատկերացման հիմք

Ազգի ինքնապատկերացման հիմքը նրա պատմությունն է, եթե ոչ միակը, ապա՝ առաջնայինը:

Ժողովրդի համար պատմությունը կարող է լինել դաշնակից և խորհրդատու՝ իր ներկան ճիշտ բացատրելու ու հասկանալու կարևոր միջոց և, ազդելով նրա քաղաքական կեցվածքի վրա՝ ապահովել նրա ներկան ու կանխորոշել նրա կայուն ապագան: Պատմությունը կարելի է դիտարկել երկու տեսանկյունով: Առաջինը՝ տեղի ունեցածի **օբյեկտիվ կամ իրական պատմությունն է** իրադարձությունների իր օբյեկտիվորեն արձանագրած շղթայով, իրողություններով, ընթացքով և ներքին տրամաբանությամբ: Պայմանականորեն՝ սա կոչենք **«օբյեկտիվ պատմություն»**, որ պայմանավորում է ազգի ու նրա անդամների հավաքական ենթագիտակցությունը, ինչը երբեմն իրավացիորեն կոչվում է նաև ժողովրդի առողջ կամ իմաստուն բնազդ: Երկրորդը՝ պատմագրության և պատմագիտության կողմից նույն իրադարձությունների **սուբյեկտիվ ընկալումն ու շարադրանքն է**: Սա էլ կոչենք **«սուբյեկտիվ պատմություն»**, որը մեծապես ազդում է ազգի ու նրա անդամների գիտակցության, մտածելակերպի վրա: «Օբյեկտիվ» և «սուբյեկտիվ» պատմությունները միասին, այլ գործոնների թվում, ձևավորում են ազգի և նրա քաղաքական ընտրանու պատկերացումներն ու քաղաքական միտքը, ազդում նրա ծրագրերի և վարքագծի վրա:

Իրական «օբյեկտիվ» և շարադրված՝ «սուբյեկտիվ» պատմությունները երբևէ չեն կարող ամբողջությամբ համընկնել: Գիտական պատմագրության նպատակը՝ հավաստիության ձգտմամբ դրանք առավելագույնս միմյանց մոտեցնելն է: Որքան սրանք միմյանց մոտ են, այնքան տվյալ ազգի մեջ պակաս կլինի երկվությունը, հաստատուն և ռացիոնալ կլինի ինքնագիտակցությունը, իրատես՝ քաղաքական ծրագրերը, արդյունավետ կլինեն քայլերը և վարքագիծը: «Օբյեկտիվ» և «սուբյեկտիվ» պատմություններն՝ միմյանցից առավել հեռու լինելը ազգը կարող է դարձնել ծայրահեղությունների գերի: Հերոսականությունը, անգամ զանգվածային պոռթկմամբ, կարող է իր անհաշվենկատ բացարձակության մեջ դառնալ հանցավոր արկածախնդրություն, հանգեցնել անդառնալի կորուստների: Զգուշավորությունը, դարձյալ իր ծայրահեղության մեջ, կարող է հանգեցնել անտարբերության, պատմականորեն տրված կամ առաջացած շանսերը չնկատելու և չօգտագործելու հանցավոր անգործության: Երկուսն էլ հղի են ճակատագրական հետևանքներով, առաջինը՝ ավերիչ երկրաշարժի, երկրորդը՝ կոռուզիայի նմանությամբ ու հետևանքներով:

Վտանգավոր է պատմության և նրա փաստերի բացարձակացում-ուճացումը, ձախողումների պատճառը միշտ հակառակորդի կամ օտարի մեջ փնտրելը, չհասած ճակատամարտերն ու անտեղի թափած արյունը՝ «բարոյական հաղթանակ», արկածախնդրությունը՝ հերոսություն համարելը, սեփա-

կան քաղաքական տկարամտությունը՝ ազնվություն, ուրիշների դիվանագիտական հմտությունները՝ խաբեություն, դավաճանություն գնահատելը: Իրականում չարիքներ բերած, բայց հերոսություն գնահատված ու սրբագործված ձեռնարկումներն ու քայլերը նոր կորուստների վտանգ են պարունակում, միշտ ուրիշներին մեղադրելը ծնում է անզորության և դատապարտվածության բարդույթ: «Հայրենասիրական դաստիարակության» համար պատմությամբ ավանդված սյուժեն գրականության և արվեստի համար կարո՞ղ է նյութ հանդիսանալ ու ենթարկվել տվյալ ժանրով թելադրված չափազանցությունների: Սակայն կործանարար է, երբ հենց այս մոտեցմամբ է պատմությունը գրվում, սրբագործվում և ապա այդ որակով դառնում նաև ժողովրդի ինքնապատկերացման, նրա քաղաքական ընտրանու մտածողության, ծրագրերի ու գործողությունների հիմք:

Օբյեկտիվ և ճշմարտացի պատմություն՝ ամենևին չի նշանակում ընտրել պատմական փաստերին և իրադարձություններին տարբեր ելակետերից տրված, երբեմն՝ հակադիր, գնահատականների միջինը: Անաչառությունն էլ չի նշանակում պատմական դեմքերի կամ ուժերի նվաճումների ու հաջողությունների կողքին անպայման գտնել ու նշել նաև թերություններ ու բացթողումներ: Մեխանիկորեն «միջինացված» պատմությունն ամենևին «ոսկե միջին» չէ և ոչ մի կապ չունի հավաստիության, օբյեկտիվության ձգտման հետ: Այն գուցե և օբյեկտիվության պատրանք է ստեղծում, բայց պատմությունը դարձնում է առավել արհեստական և, որպես անհատի ու հավաքականության վարքագծի ելակետ՝ խոտելի ու վնասակար:

Ուրեմն՝ պատմությունը ժողովրդի համար անցյալի հիշողությունների ամփոփման պասիվ մատյան չէ, այլ իր տված դասերով ու հենց իրենով որոշակիորեն ներգործում է նրա ներկայի և ապագայի վրա: Պատմության ազդեցությունն անհատի ու ժողովրդի վրա այնքան ավելի դրական և օգտակար է, որքան օբյեկտիվ են պատմագիտության տված գնահատականները: Իսկ ամեն մի պատմական անհատի, քաղաքական ուժի, իրադարձության, ձեռնարկի, ձեռնարկների շղթայի, պատմական շրջափուլի և դարաշրջանի գնահատականն անաչառ կարող է լինել միայն այն դեպքում, եթե որպես հիմնական չափանիշ ու չափորոշիչ՝ դրա հիմքում դրված է առարկայացված վերջնական քաղաքական արդյունքը:

Այսպես՝ 5-րդ դարում, 450 թվականից սկսած, պարսկական տիրապետությանը ընդդիմանալու և պատերազմների պատմական շրջափուլը գնահատելու ելակետը պետք է լինի դրա քաղաքական արդյունքը՝ նվարսակի հաշտության պայմանագիրը՝ Հայաստանի ներքին լիակատար ինքնավարության ձեռքբերումը¹: Արաբական տիրապետության դեմ Բագրատունիների քաղաքականության

¹ Այս շրջանի մասին տե՛ս մասնավորապես՝ Կ. Յուզբաշյան, Ավարայրի ճակատամարտից դեպի նվարսակի պայմանագրությունը, Երևան, ԵՊՀ հրատ., 2005, էջ 118-162:

գնահատման ելակետը պետք է լինի դրա քաղաքական արդյունքը՝ հայկական պետականության վերականգնումը և շուրջ 200 տարվա անկախության, պետականության գոյությունը: 19-րդ դարի վերջում «Հայկական հարցով» սկսված շրջափուլի գնահատման ելակետը պետք է լինի դրա քաղաքական արդյունքը՝ Յեղասպանությունը և հայ ժողովրդի 3000-ամյա հայրենիքի մեծագույն մասի կորուստը: 1988-ով սկսված տասնամյա պատմական շրջափուլի գնահատման ելակետը պետք է լինի անկախության ձեռքբերումը և պետականության կայացումը, վտանգված հայաբնակ Արարաթի փրկությունը և այն:

Հայոց պատմության պատմագրական միջավայրը

Արդեն շարադրված պատմությունը, իր սրբագործված դոգմաներով, տարւններով և գաղափարախոսությունների մամլիչի տակ կրած ձևախեղումներով, ճնշում և այդպես էլ թույլ չի տալիս գտնել բաղձալի «Պատմության դասերը»:

Հանգամանքների բերումով, իր գոյության ողջ ընթացքում, հնագույն ժամանակներից ի վեր, հայ (և ոչ միայն) պատմագրությունը եղել է գաղափարախոսական շրջանակների մեջ՝ ի վնաս նրա օբյեկտիվության: Դարեր շարունակ այդ շրջանակները նրա համար գծել է Հայ առաքելական եկեղեցին: Նորագույն շրջանում՝ շուրջ 70 տարի, արդեն՝ ազդեցիկ, դա արել է կոմունիստական գաղափարախոսությունը Հայաստանում և «հայդատական» գաղափարախոսությունը՝ Սփյուռքում: Որոշակի գաղափարախոսություն սպասարկելու անհրաժեշտության բերումով «օբյեկտիվ» և «սուբյեկտիվ» պատմությունների խզումը խորացել է: Դրանով իսկ՝ շարադրված պատմությունը, որպես քաղաքական գործոն, դրական առաջընթացի համար դարձել է ոչ միայն պակաս արդյունավետ, այլև հաճախ խոչընդոտող հանգամանք:

Անշուշտ, այս ամբողջ ընթացքում, հենց 5-րդ դարից սկսած, եղել են պատմագրական երկեր և պատմագիտական ուսումնասիրություններ, որոնք դուրս են եկել գաղափարախոսությունների գծած շրջանակներից, օբյեկտիվության ձգտմամբ անգամ հակադրվել դրանց: Դա պայմանավորված է եղել ինչպես տվյալ պահին հոգևոր, գաղափարականի նկատմամբ աշխարհիկ, քաղաքական գործոնի գերակայությամբ, այնպես էլ պատմիչի կամ պատմաբանի անձով, նրա ունակություններով և առողջ մտածելակերպով: Սակայն, ընդհանուր առմամբ, այսպես ասենք՝ «պաշտոնական պատմության» վրա գաղափարախոսությունների ազդեցությունը մնացել է առաջնային:

Վերոհիշյալ հարցադրումների շրջանակով իջնենք մեր պատմագրության սկզբնավորման դարը: «Ի՞նչ է պատմությունը», «ինչպե՞ս պետք է այն շարադրել», «ի՞նչ առաջնային հատկանիշներ այն պետք է ունենա», «ինչպե՞ս է այն

ազդում ներկայի վրա» և այլ հարցադրումները ու դրանց պատասխանները փնտրենք Պատմահայր Մովսես Խորենացու «Հայոց պատմության» մեջ: Նախապես ասենք, որ այդ խնդիրների ընկալումը ոչ միայն հնարավոր է արտածել հեղինակի շարադրանքի ստեղծագործական աշխատանոցի բացահայտումներով, այլ նաև արձանագրել նրա բազմաթիվ ուղղակի վկայություններով:

Ի՞նչ է պատմությունը՝ ըստ Մովսես Խորենացու

Ամենասկզբում «ինքնապատկերացումը՝ որպես ազգի վարքի ելակետ» վերնագրի տակ մենք ներկայացրեցինք պատմության ներգործության երեք տարբերակ, արձանագրելով, որ պատմությունը ժողովրդին ու նրա քաղաքական ընտրանունն կարող է օժտել՝

ա) բացառիկության պատկերացմամբ,

բ) թերարժեքության բարդույթով,

գ) իրականությանն առավել համարժեք ռացիոնալ մտածողությամբ:

Դեռ 5-րդ դարում պատմահայր Մովսես Խորենացին ամենայն խորությամբ գիտակցել է այս խնդիրը և այն լուծել հօգուտ երրորդ տարբերակի: Առ այդ, նա ունի բազմաթիվ վկայություններ, իսկ դրանց մեջ՝ նաև հանրահայտ, բյուրեղացված մի բանաձև, որ 1500 տարի առաջվա ոչ միայն հայ պատմագիտական, այլ նաև քաղաքական մտքի արգասիք է.

«Ձի թէպէտ եւ եմք ածու փոքր, եւ թուով յոյժ ընդ փոքու սահմանեալ, եւ զօրութեամբ տկար, ու ընդ այլով յոլով անգամ նուաճեալ թագավորութեամբ՝ սակայն բազում գործք արութեան գտանին գործեալ եւ ի մերում աշխարհիս, եւ արժանի գրոյ յիշատակի»² («Որովհետև թեպետ մենք փոքր ածու ենք, սահմանափակ թվով և շատ անգամ օտար թագավորության տակ նվաճված, բայց և այնպես, մեր աշխարհում էլ քաջության շատ գործեր են գործված՝ գրով հիշատակվելու արժանի»³):

Քաղաքական հարթության վրա այս խոսքի առաջին մասն ուղղված է ազգային բացառիկության, ինքնագերագնահատման վտանգի դեմ, երկրորդ մասը՝ թերարժեքության հնարավոր բարդույթի ձևավորում թույլ շտալու նպատակ

² **Մովսէս Խորենացի**, Պատմութիւն Հայոց, քննական բնագիրը և ներածությունը Մ. Աբելեանի և Ս. Յարոսլինեանի, նմանահանութիւն, լրացումները Ա.Բ. Սարգսեանի, ՀԽՍՀ ԳԱ հրատ., Երևան 1991, Ա. Գ., էջ 10: Փակագծերում բերում ենք աշխարհաբարը (ըստ Ստ. Մալխասյանի 1940 թ. թարգմանության), իսկ հղված էջից առաջ դրված է նաև Պատմության գլխահամարը:

³ Մալխասյանցը «եւ արժանի գրոյ յիշատակի» կապակցությունը թարգմանել է «գրելու եւ հիշատակելու արժանի»: Կարծում ենք՝ նշգրիտ թարգմանությունը կլինի՝ «գրով հիշատակվելու արժանի» (բառացի) կամ «գրավոր հիշատակվելու արժանի» (իմաստով): Նման թարգմանությունն էսկանոռեն փոխում է խոսքի իմաստը՝ հստակ ցուցադրելով այն բնական իրողությունը, որ տվյալ ժամանակում որևէ կերպ (բարի վրա թե մազադաթի) «գրով» հիշատակվելը երևութի, դեպքի, իրադարձության, անձի արարքի և այլն կարևորության ընդգծում էր, գուցե յուրատեսակ պատիվ, ինչին պետք էր արժանանալ:

ունի: Այսինքն՝ ժողովրդին ու նրա քաղաքական ընտրանունն հեռու պահել պատմության ոչ ճիշտ իմացությունը կամ չիմացությունը պայմանավորված հնարավոր ծայրահեղություններից՝ ինչպես արկածախնդրությունից, այնպես էլ անգործությունից:

Խորենացին համարում է, որ պատմությունն ակտիվ ներգործուն դեր ունի տվյալ ժողովրդի ու երկրի կյանքում, նրա քաղաքական ընտրանու վարքագծի վրա:

Այս թեզը փորձենք հիմնավորել նրա ուղղակի վկայություններից մի քանի կարևորները ներկայացնելով:

Հենց սկզբում նա գովեստներ է ուղղում իր մեկենաս Սահակ Բագրատունուն այն բանի համար, որ վերջինս, ի տարբերություն իրենից առաջ ապրած հայ իշխանների ու թագավորների, գիտակցել է Հայոց գրավոր պատմությունն ունենալու անհրաժեշտությունը.

«...գի եթէ որք յառաջ քան զմեզ եւ կամ առ մեօք եղեն հարուստք եւ իշխանք աշխարհիս Հայոց, ոչ ընդ ձեռամբ անկելոց իւրեանց արդեօք գտելոց իմաստնոց զայսպիսեացս հրամայեցին կարգել զյիշատակս բանից, եւ ոչ արտաքուստ ուստեք այսոցիք ի ներքս ածել խորհեցան օժանդակութիւնս իմաստից, եւ զքեզ այժմ այսպիսի եղեալ ծանեաք, — ապա ուրեմն յայտ է, թե ամենեցուն քան զքեզ նախագունիցն ճանաչիս վեհագոյն, եւ բարձրագունից արժանաւոր գովութեանց, եւ յայսպիսիս պատկանաւոր դնիլ յարձանագրութիւնս բանից»⁴ (եթե մեզնից առաջ և մեր ժամանակ ապրող Հայոց աշխարհի ցեղապետներն ու իշխանները ո՛չ իրենց ձեռքի տակ ընկած և հավանորեն եղած իմաստուններին հրամայեցին այսպիսի պատմական հիշատակարաններ գրել, ո՛չ էլ մտածեցին դրսից որևէ տեղից ներս բերել իմաստության նպաստներ, և այժմ քեզ ենք տեսնում այդպիսի մարդ, ուրեմն պարզ է, որ դու պետք է ճանաչվես բոլոր քեզնից առաջ եղածներից վեհագոյն, բարձրագոյն գովեստների արժանավոր և պատմական այսպիսի արձանագրության մեջ դնելու արժանի»):

Չբավարարվելով դրանով, Խորենացին մի ամբողջ գլուխ է նվիրում նույն խնդրին՝ «Յաղագս անիմաստասէր բարուց առաջնոցն մերոց թագաւորաց և իշխանաց»⁵ («Մեր առաջին թագավորների և իշխանների անիմաստասեր բարքի մասին») պերճախոս վերնագրով ևս մեկ անգամ շեշտելով Բագրատունի իշխանի մտահղացման կարևորությունը.

«Բայց ընդ քո յոյժ զարմացեալ եմ ընդ մտացդ ծննդականութիւն, որ ի սկզբանցն մերոց ազգաց մինչև ցայժմուսս միայն գտար զայսպիսույ մեծէ իրէ բունն հարկանել, և մեզ խոյզ խնդրոյ առաջի արկանել — երկար և շահաւոր

⁴ Մովսէս Խորենացի, Պատմութիւն Հայոց, Ա. Ա., էջ 6:

⁵ Նույն տեղում, Ա. Գ., էջ 9-11:

գործով զազգիս մերոյ կարգել զպատմութիւնն ճշտիւ...»⁶: (Բայց ես շատ եմ զարմանում քո մտքի ծննդականութեան վրա, որ մեր (նախարարական) ցեղերի հներից սկսած մինչև այժմյանները միակը գտնվեցիր այսպիսի մեծ խնդրի ձեռնարկելու և մեզ առաջարկեցիր հետազոտություն կատարել՝ երկար և շահավոր գործով ճշտութեամբ հորինել մեր ազգի պատմությունը...):

Այս ամենը ժամանակի պատմագրական ժանրով թելադրված ու մեկենասին ուղղված սոսկական հաճոյախոսություններ չեն: Պատմահայրը պարզապես գտել է հարմարագույն տեղը, առիթը և ձևը՝ խոսելու համար ժողովրդի գրավոր պատմության կարևորության մասին՝ որպես նրա ներկայի ու վարքագծի վրա ազդող գործոնի:

Անցյալի հիշողության կամ գրավոր պատմության նկատմամբ անհոգ գտնված «անիմաստասեր նախնիների» մեջ Պատմահայրը, այնուամենայնիվ, քիչ անց, որպես բացառություն, առանձնացնում է Հայաստանում Արշակունյաց հարստության հիմնադիր Վաղարշակին: Վերջինս նրա կողմից ամենաբարձր գնահատված և իր գործունեությամբ ամենաընդարձակ ներկայացված գահակալներից մեկն է: Նրա կատարած բոլոր գործերի՝ պետական կառույցների և ապարատի կարգավորման, բարենորոգումների, արտաքին քաղաքական հաջողությունների կողքին նույնքան կարևորություն է տրվում ու ընդարձակ ներկայացվում է մի այլ նախաձեռնություն՝ պարզել այն երկրի ու ժողովրդի պատմությունը, որին ինքը թագավորում է.

«Սորա կարգեալ զիշխանութիւն իւր մեծապէս, եւ հաստատեալ զթագաւորութիւն իւր՝ կամ եղև գիտել սորա, թէ ո՛չք արդեօք եւ ո՛րպիսի արք տիրեալ իցեն ի վերայ աշխարհիս Հայոց մինչև ցնա. զքաջա՞ց արդեօք եթէ զվատաց անցեալ ունիցի զտեղի»⁷ (Սա իր իշխանությունը լիովին կարգի բերելով և իր թագավորությունը հաստատելով՝ կամեցավ իմանալ, թե ովքե՞ր արդյոք և ինչպիսի մարդիկ տիրելիս են եղել Հայոց աշխարհի վրա իրենից առաջ, արդյոք ինքը քաջերի՞ տեղն է գրավում, թե՞ ապիկարներ...):

Այդ նպատակով Վաղարշակը դիմում է իր ավագ եղբորը՝ Պարսից թագավոր Արշակ Մեծին՝ բացել արքունի դիվանը իր ուղարկած մարդու՝ Մար Աբաս Կատինայի առաջ, որպեսզի վերջինս կարողանա այստեղից տեղեկություններ հավաքել իրեն հետաքրքրող հարցերի մասին.

«Եւ այժմ ի քումմէ խնամակալութենէ զետեղեալ զթագաւորութիւնս՝ խորհուրդ ի մտի եդի գիտել, թէ ո՛չք ոմանք յառաջ քան զիս իցեն տիրեալ աշխարհիս Հայոց, եւ ուստի՝ նախարարութիւնքս որ աստ կան: Զի ո՛չ կարգ ինչ աստ լեալ յայտնի, եւ ո՛չ մեհենից պաշտամունք. եւ ո՛չ գլխաւորաց աշխարհիս առա-

⁶ Նույն տեղում, Ա. Գ., էջ 11:

⁷ Նույն տեղում, Ա. Բ., էջ 29:

ջինն յայտնի է, եւ ոչ վերջինն, եւ ոչ այլ ինչ օրինաւոր, այլ խառն ի խուռն ամենայն եւ վայրենի»⁸ (Քո խնամակալութեամբ թագավորութունս կարգավորելով՝ միտքս դրի իմանալ, թե ինձնից առաջ ովքե՞ր են տիրել Հայոց աշխարհիս, և որտեղի՞ց են այն նախարարութիւնները, որ այստեղ կան: Որովհետև այստեղ ոչ հայտնի կարգեր են եղել և ոչ մեհենական պաշտամունքներ, և աշխարհիս գլխավորներից ո՛չ առաջինն է հայտնի, ո՛չ վերջինը):

Սեփական գրավոր պատմությունն ունենալու, դրա ոչ թե թանգարանային նմուշի կամ ընտանեկան մասունքի, այլ գործնական քաղաքական անհրաժեշտութիւնը շեշտելու համար պատմահայրն ունի նաև այլ տիպի վկայութիւններ, այս անգամ այն մասին, թե ինչպէս են օտարները վերաբերվել մեր պատմությանը: Նա շեշտում է, որ օտար թագավորներն ու պատմիչները, որոնք հոգ են տարել իրենց՝ սեփական պատմությունն ունենալու մասին՝ հենց գործնական, ըստ էութեան՝ քաղաքական մի քանի դրդապատճառներով է, որ կա՛մ անտեսել, չեն անդրադարձել, կա՛մ խիստ սակավ են անդրադարձել մեզանում եղած կարևոր իրադարձութիւններին ու գործիչներին: Նա դրա համար նշում է երեք պատճառ.

Ա) Թագավորներն իրենք են հրահանգել պատմիչներին՝ չգրել ուրիշների մասին: Այդ մասին է խորենացու մի ուղիղ մեջբերումը Կեփաղիոնից.

«Մանր գամենայն ի սկզբան մերոյ աշխատութեանս սկսաք գրել զազգաբանութիւնսն ի դիւանացն արքունի. այլ առաք հրաման ի թագաւորաց՝ թողուլ զաննշանից եւ զվատաց արանց ի հնոցն զյիշատակն, եւ գրել միայն զքաջս եւ զիմաստունս եւ զաշխարհակալս նախնիս, եւ մի՛ յանպէտս զժամանակս մեր ծախել»⁹ («Մեր աշխատութեան սկզբում սկսեցինք մանրամասն գրել բոլոր ազգաբանութիւններն՝ արքունական դիւաններից առնելով, բայց թագավորներից հրաման ստացանք՝ հներից բաց թողնել աննշան և վատասիրտ մարդկանց հիշատակութիւնները, այլ հիշել միայն քաջ, իմաստուն և աշխարհակալ նախնիքներին»):

Հասկանալի է, որ իր պատմիչին պատվեր տվող թագավորն առաջին հերթին իրեն ու իր նախնիներին պետք է համարեր քաջ և իմաստուն, իրենց գործերը՝ գրավոր արձանագրելու («գրով հիշատակվելու») արժանի, և օտարին, հակառակորդին՝ աննշան ու վատասիրտ, գրավոր հիշատակվելու անարժան:

Բ) Պատմիչներն իրենք դիտավորյալ չեն ներկայացրել օտարների պատմությունը, և խորենացու բացատրությունն այսպիսին է.

«...գի ոչ հարկ ինչ եւ ոչ պէտք կարելորք էին նոցա՝ զազգաց օտարաց եւ զաշխարհաց ի բացեայ եւ զհամբաւս հինս եւ զգրոյցս նախնականս յիրեանց

⁸ Նույն տեղում, Ա. Թ., էջ 30:

⁹ Նույն տեղում, Ա. Ե., էջ 21:

թագաւորաց եւ մեհենից մատեանս գրել. մանաւանդ զի եւ ոչ պարծանք ինչ եւ ոչ բարգաւաճանք՝ օտար ազգաց քաջութիւն եւ գործք արութեան»¹⁰: (...նրանք հարկավոր եւ կարևոր չէին համարում օտար ազգերի, հեռավոր աշխարհների հին լուրերն ու նախնական զրույցները իրենց թագավորների կամ մեհյանների մատյաններում գրել, մանավանդ որ պարծանք եւ պատիվ չէր օտար ազգերի քաջությունը եւ արիական գործերը հիշատակել):

Ընդ որում, միայն յուրաչիւններին ներկայացնելու եւ ուրիշներին անտեսելու խտրական վերաբերմունքի համար հորենացու քննադատության թիրախ է դառնում անգամ Ս. Գիրքը.

«Մանաւանդ զի աստուածայնոյն Գրոյ զիւրսն ի բաց հատեալ չինքն սեպհական ազգ՝ ելիք զայլոցն իբր զարհամարհելեացն եւ իւրոց անարժան կարգելոց բանից»¹¹ (Ս. Գիրքը յուրաչիւններին զատելով իբրև իր սեփական ազգ, մյուսներին լքեց իբրև արհամարհելի եւ իր կողմից հիշատակվելու անարժան (ազգեր):

Գ) Որոշ դեպքերում էլ, առավել «անձնասեր» թագավորներ ավելի վայրենի վերաբերմունք են դրսևորել այս հարցում եւ ոչնչացրել իրենից առաջ եղածների մասին արդեն գրված պատմությունները, որպեսզի միայն իրենք մնան պատմության մեջ.

«...Հպարտ եւ անձնասէր գորով Նինոս, եւ կամելով զինքն միայն աշխարհակալութեան եւ ամենայն քաջութեան եւ լաւութեան ցուցանել սկիզբն՝ հրամայէ զբազում մատեանս եւ զրոյցս առաջնոցն, տեղեաց տեղեաց եւ ուրուք ուրուք գործոց քաջութեան այրել, իսկ որ առ իւրովք ժամանակօք՝ դադարեցուցանել, եւ որ ինչ վասն իւր միայնոյ՝ գրել»¹² (Նինոսը հպարտ եւ անձնասեր մարդ լինելով, եւ կամենալով միայն իրեն ցույց տալ որպես սկիզբ աշխարհակալության, ամեն տեսակ քաջության եւ կատարելության՝ հրամայում է այրել բազմաթիվ մատյաններ եւ նախնյաց մասին զրույցներ (որ վերաբերում էին) զանազան տեղերի եւ առանձին մարդկանց քաջության գործերին, իր ժամանակ եղածներինը դադարեցնելով (գրել) եւ գրել միայն այն՝ ինչ որ իրեն է վերաբերում):

Իսկ ինչպե՞ս, ի՞նչ ճանապարհով են պահպանվել այն տեղեկությունները Հայաստանի ու նրա պատմության հնագույն շրջանի մասին, որոնց հիման վրա հորենացին շարադրել է իր պատմությունը: Նա այս հարցը ինքը տալիս ու ինքն էլ պատասխանում է.

«Ի հնոցն դիւանաց Քաղդէացոց, Ասորեստանեաց եւ Պարսից, վասն մտելոց անուանց եւ գործոց նոցա ի քարտէս արքունի, իբրեւ գործակալաց եւ

¹⁰ Նույն տեղում, Ա. ԺԿ., էջ 47:

¹¹ Նույն տեղում, Ա. Ե., էջ 17:

¹² Նույն տեղում, Ա. ԺԿ., էջ 48:

վերակացուց աշխարհիս ի նոցանէ կացելոց եւ մեծաց կողմնակալաց»¹³ (Քաղաքացիների, ասորեստանցիների և պարսից հին դիվաններից, որովհետև մեր նահապետները նրանց գործակալները և նրանցից մեր աշխարհի վրա նշանակված վերակացուներն ու մեծ կողմնակալները լինելով՝ նրանց անուններն ու գործերը մուծվել են արքունի գրքերի մեջ):

Սա ամբողջ չէ: Բայց այսքանն էլ բավարար է ցույց տալու համար, որ սովյալ թեմայով պատմահոր հաղորդումները կազմում են մի ամբողջ համակարգ՝ նրա պատմության բազմաթիվ համակարգերից մեկը¹⁴: Այն, անշուշտ, պատմագիտական դիտանկյունից կարելի է մեկնաբանել որպես պատմագրական ժանրով պայմանավորված, այսօրվա բառերով ասած՝ աղբյուրների տեսություն, մեկենասին գովաբանելու առիթ, պատմությունը որպես պարզ հետաքրքրասիրություն բավարարելու միջոց ու ընթերցանության նյութի ներկայացում: Սակայն հեղինակի՝ **Խնդրին տված բացառիկ կարևորության** հանդիման՝ պատմագիտության տեսանկյունից բնական այս բացատրությունները դժվար է բավարար համարել: Այս ամենը չի կարելի բացատրել նաև իր արած գործի մեծությունը շեշտելու, ինքնամեծարման շարժառիթով՝ որքան էլ որ Խորենացին հեռու է միջնադարյան պատմագիրների ցուցադրական համեստությունից:

Կարծում ենք՝ սպառիչ բացատրությունն ի հայտ է գալիս, երբ այս ամենին նայում ենք քաղաքագիտական դիտանկյունից, այն է.

Խորենացին գիտակցել է, որ պատմությունը, որպես ժողովրդի ինքնաճանաչման, երկրի իշխանության քաղաքական ընտրանու հաշվարկված ծրագրերի, հավակնությունների ու վարքագծի հիմք՝ կարևորագույն քաղաքական գործոն է և ակտիվ ներգործուն դեր ունի ժողովրդի ներկայի ու ապագայի համար:

Եվ սա է՝ «ի՞նչ է պատմությունը» հարցի Մովսես Խորենացու պատասխանը:

Խնդրի հենց քաղաքական գիտակցումն է, որ նրան թելադրել է պատմությանը նման բացառիկ կարևորություն տալ: Այլ կերպ պարզապես անհնար է բացատրել այն փաստը, որ նա ժողովրդի գրավոր պատմությանը տալիս է ոչ ավելի, ոչ պակաս, քան թագավորական գանձերի մեջ առաջինը լինելու պատիվը. Վաղարշակը, ստանալով Մար Աբաս Կատինայի բերած Պատմությունը՝ այն «...առաջին իւրոյ գանձուն համարելով՝ դնէ յարքունիսն ի պահեստի մեծաւ զգուշութեամբ եւ զմասն ինչ յարձանի հրամայէ դրոշմել»¹⁵ (...համարելով առաջինն իր գանձերի մեջ՝ հրամայում է մեծ զգուշությամբ պահել արքունիքում և մի մասը նրանից հրամայում է արձանի վրա դրոշմել):

¹³ Նույն տեղում, Ա. ԻԱ., էջ 66:

¹⁴ Խորենացու «Հայոց պատմության» համակարգերի մասին տե՛ս **Գ. Խ. Սարգսյան, Մովսես Խորենացու «Հայոց պատմության» ժամանակագրական համակարգը**, Երևան, ՀԽՍՀ ԳԱ, 1965, **նույնի՝ Մովսես Խորենացու «Հայոց պատմությունը»**, Երևան, 1991:

¹⁵ Մովսես Խորենացի, Պատմութիւն Հայոց, Ա. Թ., էջ 31:

Որո՞նք են պատմության առաջնային որակները

Իր առջև դրված խնդրի քաղաքական կարևորությունը գիտակցող պատմիչը, բնականաբար, նաև պիտի մտածեր, թե ի՞նչ որակներ պետք է ունենա պատմությունը՝ նպատակին առավել արդյունավետ ծառայելու համար: Վերևում բերված նրա հայտնի խոսքը («Թեպետ եւ եմք ածու փոքր...») նաև իր պատմիչի համար գծված շրջանակ է՝ չափազանցել անցյալում եղածը, նաև չնսեմացնել այն, այլ ձգտել առավել օբյեկտիվության և հավաստիության:

Հավաստիությունն է, որ պատմահայրը համարում է պատմության որպես քաղաքական գործոնի ներազդման գործառույթի ամենակարևոր հատկանիշը:

Այլ խոսքով՝ նա իր առջև ոչ թե այս կամ այն տոհմին բարձրացնելու, ոչ թե արտաքին քաղաքական կողմնորոշման, ոչ էլ դավանական նախապատվության կամ նմանօրինակ այլ խնդիր է դրել, այլ (ամենասկզբում մեր կիրառած պայմանական տերմինաբանությամբ ասած)՝ պատմության իր «սուբյեկտիվ» շարադրանքն իրականությանը, «օբյեկտիվ» պատմությանը առավելագույնս մոտեցնելու գերխնդիր:

Եվ, այս դեպքում ևս, այս սկզբունքը ոչ միայն հնարավոր է արտածել նրա ստեղծագործական խոհանոցից, այլև գտնել հեղինակի բազմաթիվ ուղղակի վկայություններում, որոնց համադրումը նույնպես մի ողջ համակարգ է կազմում: Այստեղ այդ համակարգն ամբողջությամբ ցուցադրելու նպատակ չունենալով, ստորև բերենք նույն բանն ասող՝ նրա տարբեր բնույթի վկայություններից մեկական օրինակ:

Ա) Մեկն ուղղակի հռչակում-խոստում է. *Խորենացին իր ստացած առաջադրանքը կամ իր առջև դրած նպատակը պատկերացնում է «...երկար եւ շահաւոր գործով զազգիս մերոյ կարգել զպատմութիւն ճշտիւ...»¹⁶ («... երկար և շահավոր գործով ճշտութեամբ հորինել մեր ազգի պատմությունը...»):*

Կարելի է ասել, որ նման խոստում կարող են տալ բոլորը: Բայց խնդիրը խոստումը չէ, այլ այն ջանքերը, որ ներդրվում են այդ խոստումն իրականացնելու համար:

Բ) «Ոչ է պատմութիւն ճշմարիտ առանց ժամանակագրութեան»¹⁷ (Չկա ճշմարիտ պատմություն՝ առանց ժամանակագրության): Սա արդեն մի խոստում է, որի մեջ «ճշմարիտի» իրականացումը կարելի է ստուգել: Գիտական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ նա, իրոք, ամենամեծ ջանքերի գործադրմամբ, խայտաբղետ աղբյուրների հակասական նյութերից կարողացել է իր Պատմության համար ստանալ ներքուստ անթերի, հակասություններից զերծ ու կուռ մի ժամանակագրական համակարգ: Կարևորն այստեղ ճշգրիտ

¹⁶ Նույն տեղում, Ա. Գ., էջ 11:

¹⁷ Նույն տեղում, Բ. ԶԲ., էջ 224:

ժամանակագրությունը բացառիկ դերի շեշտումն է, և գիտականորեն ապացուցված այն փաստը, որ նա ահռելի ջանքերի գործադրմամբ այդ խնդիրն իրեն հասու նյութերի շրջանակներում լուծել է անթերի¹⁸:

Գ) «Քանզի ասելն ումանց անհաւաստի մարդոց, ըստ յօժարութեան եւ ոչ ըստ ճշմարտութեան, ի Հայկայ զթագադիր ազգոց Բագրատունեաց լինել: Վասն որոյ ասեմ. մի՛ այսպիսեաց չիմար բանից հաւանիր. Ձի եւ ոչ մի շաւիղ կամ ցուցումն գոյ նմանութեան յասացեալսդ՝ որ զարդարութիւն ակնարկէ»¹⁹ («Մի քանի անվատահելի մարդիկ ասում են, հաճոյանալու համար²⁰, ոչ թե ճշմարտությանը հետամուտ, թե, իբր, Բագրատունիների թագադիր ցեղը ծագում է Հայկից: Ուստի ես ասում եմ այսպիսի հիմար խոսքերի մի հավատար, որովհետև ոչ մի հետք կամ ապացույց չկա այդ խոսքերում, որ ցույց տա դրանց ճշմարտությունը»):

«Ճշմարտություն» բառի կրկնակի օգտագործմամբ այս վկայությունն արդեն վերաբերում է որոշակի մի խնդրի, ավելին՝ նուրբ խնդրի: Խորենացու հեռակա գրուցակիցը, որին դիմում է, իր մեկենաս Սահակ Բագրատունին է: Քանի որ հասցեատերն անձնավորված է, կարելի է նաև ենթադրել, թե Բագրատունի իշխանը նրան իր տոհմի՝ Հայկից ծագած լինելու թեմայով ոչ միայն հարցում է արել, այլև, ակներևաբար, շահագրգռություն ցուցաբերել: Բոլոր դեպքերում, Խորենացու պատասխանը կոշտ է, թվում է՝ նույնիսկ անցնում է կոռեկտության սահմանները: Նա, իր կարծիքով, առաջնակարգ աղբյուրներից վստահաբար գիտի Բագրատունիների հրեական ծագման մասին ոչ թե մեկ վկայությամբ, այլ նաև դրա հետ կապված հետագա իրադարձությունների ու դեպքերի մի ամբողջ շղթայով: Ուստիև մեկենասին տված պատասխանը (որի կոշտությունը ոչ թե մեկենասին, այլ նման լուրեր տարածողներին է ուղղված) մի բացատրություն կարող է ունենալ. այն բխում է շարադրվող պատմության ճշմարտացիության, հավաստիության նկատմամբ հեղինակի անբեկանելի սկզբունքից ու հավատամքից:

¹⁸ Այս մասին տե՛ս Գ. Խ. Սարգսյան, *Մովսես Խորենացու «Հայոց պատմության» ժամանակագրական համակարգը*:

¹⁹ **Մովսես Խորենացի**, *Պատմություն Հայոց*, Ա. ԻԲ., էջ 68-69:

²⁰ «Յօժար» բառի համար ՆՀԲ-ի տված իմաստները (հաճ եւ հաւան, ինքնայորդոր, դիւրապատրաստ, յառաջամիտ, կամակար) տվյալ դեպքում ավելի շատ հուշում են ոչ թե ինչ-որ բան ենթադրելու այլ ինչ-որ մեկին հաճոյանալու, ընդառաջելու իմաստ: Խորենացու՝ մեկենասին տված պատասխանից դժվար չէ տեսնել, որ Սահակ Բագրատունին շահագրգռված է եղել, կամ կուզենար, ուրախ կլիներ, որ իր տոհմը ծագած լիներ Հայկ նահապետից: Ահա, ամբողջ այդ խոսքի բովանդակային կոնտեքստն էլ տրամաբանորեն այդպիսի իմաստ է հուշում: Ուստիև Մալխասյանցի՝ «մի քանի անվատահելի մարդիկ ասում են, ըստ իրենց ենթադրության, բայց ոչ նշմարտությամբ» թարգմանության փոխարեն դնում ենք հետևյալ թարգմանությունը. «մի քանի անվատահելի մարդիկ, հաճոյանալու համար, ոչ թե նշմարտությամբ հետամուտ, ասում են...»:

Ինչպես ասացինք, պատմությունը հավաստի, ճշմարիտ ներկայացնելու՝ հորենացու սկզբունքը կարելի է դիտարկել ոչ միայն նրա ուղղակի վկայություններով, այլ նաև դուրս բերել նրա ստեղծագործական աշխատանոցի ուսումնասիրությամբ: Այս խնդիրը պատմագիտական տեսանկյունից լուծված է ակադեմիկոս Գագիկ Սարգսյանի՝ հորենացու Պատմության համակարգերին վերաբերող վերոհիշյալ աշխատություններում, որոնք և ներկայացնում են Պատմահոր ստեղծագործական աշխատանոցի հետևյալ պատկերը.

Ա) հորենացին օգտագործել է պատմության հետազոտման և ստեղծման համար անհրաժեշտ տարաբնույթ այն բոլոր աղբյուրները, որոնց վրա հենվում և որոնք օգտագործում են նաև ժամանակակից պատմաբանները. գրավոր աղբյուրներ, վիմագիր արձանագրություններ, բանավոր աղբյուրներ, իրեն հայտնի լեզուների բառերի, անվանումների ստուգաբանությունները և այլն:

Բ) Առաջնորդվելով առողջ դատողությամբ ու բանականությամբ, նա լուծել է իր բազմաբնույթ աղբյուրների մատուցած խայտաբղետ նյութից համադրման ճանապարհով կարևորի ու երկրորդականի, հավաստիի ու պակաս հավաստիի տարբերակման խնդիրը: հորենացու Պատմությունը գերծ է հրաշապատում դրվագներից, այն, ըստ էության, գերծ է անգամ որևէ բան վերին նախախնամությամբ բացատրելու՝ դարաշրջանի համար, եթե չասենք՝ պարտադրված, ապա՝ տարածված մեթոդից:

Գ) Համադրման ճանապարհով և առողջ դատողության սկզբունքով հավաստի համարած ամբողջ նյութը հորենացին այնուհետև տեղավորել է մեծ ու փոքր բազմաթիվ համակարգերի և ենթահամակարգերի մեջ: Դրանց թվին են պատկանում ժամանակագրական համակարգը, աղբյուրների հիշատակման համակարգը, թագավորական և նախարարական տոհմերի համակարգերը, հեթանոսական հավատալիքների համակարգը և այլն: Յուրաքանչյուր դեպքում պատմիչը հասել է այն բանին, որ այդ համակարգերը լինեն ներքին հակասություններից զերծ: Այդ համակարգերն էլ, իրենց հերթին, գոյացրել են նրա «Հայոց պատմության» նույնպիսի գերհամակարգը:

Այսինքն՝ Պատմահայրը իր ոչ միայն ուղիղ վկայություններով, այլ նաև աշխատանոցային մանրամասների բացահայտմամբ «Ինչպիսի՞ն պետք է լինի պատմությունը» հարցին տալիս է հետևյալ պատասխանը.

Պատմությունը պետք է լինի անցյալի իրադարձությունների և երևույթների ճշմարտացի և հավաստի վերարտադրությունը:

Եվ այս մտահոգության մեկնակետը առաջին հերթին քաղաքական է:

Միայն այս դեպքում, ըստ Պատմահոր, պատմությունը կարող է ձևավորել տվյալ ժողովրդի օբյեկտիվ ինքնապատկերացումը, նրան հեռու պահել հավասարապես կործանարար՝ մեծամոլության ախտից և թերարժեքության բարդույթից, դառնալ ազգի ուսցիտնալ մտածողությանը նպաստող ու սթափ վարքագիծը

պայմանավորող ակտիվ քաղաքական գործոն՝ կարևորագույն հանգամանք ինչպես նրա ներկան ապահովելու, այնպես էլ ապագան երաշխավորելու համար:

Եվ այսպես, քաղաքական մեկնակետից քննելով խնդիրը, կարծում ենք, պետք է վերանայել հայ պատմագիտության մեջ տարածված այն գնահատականը, թե խորենացու «Պատմության մեջ պիտի ցույց տրվեր հայ ժողովրդի զավակների անսահման նվիրվածությունը հայրենիքին», ինչի համար նա «իդեալականացնում է Մեծ Հայքի թագավորությունը, և նրա պատմական երկն ամբողջությամբ տոգորված է հայրենասիրական գաղափարով»²¹: Որպես գիտնական-պատմիչ՝ հավաստի, իր խոսքով՝ «Ճշմարիտ» պատմության ստեղծումն է եղել Պատմահոր գերխնդիրը, քանզի որպես բարձրակարգ քաղաքական գիտակցության կրող՝ նա շատ լավ է հասկացել նախ՝ գրավոր պատմության շփոթության, ապա նաև ոչ ստույգ պատմության, ժողովրդի անցյալի ինչպես նվաստացման, այնպես էլ «հայրենասիրական իդեալականացման» քաղաքական վտանգները: Եվ սա է, որպես շատ ավելի կարևոր իրողություն, Պատմահորը բնութագրիչն ու բացառիկ արժանիքը:

ASHOT SARGSYAN

MEMORY OF THE PAST OR HISTORY AS AN ACTIVE POLITICAL FACTOR: FROM OUR DAYS TO MOVSES KHORENATSI

Key words: self-concept, over self-estimation, under self-estimation, political thought, creative laboratory, delusion of grandeur, inferiority complex, rational reasoning, objectivity, truthfulness.

A nation's self-concept influences its political conduct and is manifested in three ways:

1) **Over self-estimation**, when seeming heroism can be unreasonably exaggerated, turn into maleficent adventurism, and lead to non-recoverable losses.

2) **Under self-estimation**, when extreme caution may lead to indifference, maleficent inertness, and negligence of historically given chances.

3) **Objective self-estimation**, when a nation's mentality becomes rational, its conduct and actions correspond to its abilities, are adequate to the reality and *eo ipso* are most effective.

A nation's own history forms the main, if not the only, basis of its self-estimation. Together with other factors, it forms the mentality and political conceptions of that nation and its political elite, influencing its plans and conduct.

Already in the 5th century, the Father of History Movses Khorenatsi

²¹ Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, ՀՍՍՀ ԳՍ, հ. 2, Երևան, 1984, էջ 197:

was profoundly aware of this eternal political problem and solved it in favour of a third possibility. In the light of this consciousness he

- Regarded the creation of a written history of his people extremely important; he speaks about this at length for several times.
- Took on the important task of neither embellishing nor disparaging the past but of striving for maximal objectiveness and truthfulness.
- Rejected any fantastic elements in the narrative and the widespread practice of explaining this or that event by “the providence from above.”
- Excluded from his work, as far as possible, all inner contradictions and based himself on facts and logic.

Such approaches of a truthful narrator and a learned historian are based on the **political credo** of the Father of History. Studying his work from this point of view, one should reconsider the assessment of Khorenatsi, which is widespread in Armenian historical science. According to it, his goal was to demonstrate “the boundless devotion of the sons of the Armenian people to their motherland,” and for the sake of this he “idealized the kingdom of Greater Armenia, and his historical work is thoroughly inspired with the idea of patriotism.”

As a scholar and historian, Khorenatsi had the main task of creating “truthful” history, because as a **bearer of elevated political consciousness**, he perfectly understood what political dangers could result from the absence of written history, as well as from the existence of false history and from both disparagement and “patriotic idealization” of the past of his people. And this is the main characteristic and exceptional merit of the Father of History.

АШОТ САРГСЯН
ПАМЯТЬ О ПРОШЛОМ ИЛИ ИСТОРИЯ КАК АКТИВНЫЙ
ПОЛИТИЧЕСКИЙ ФАКТОР: ОТ НАШИХ ДНЕЙ ДО МОВСЕСА
ХОРЕНАЦИ

Ключевые слова: представление о себе, самопереоценка, само-недооценка, политическая мысль, творческая лаборатория, мания величия, комплекс неполноценности, рациональное мышление, объективность, достоверность.

Представление нации о самой себе воздействует на ее политическое поведение и может проявляться в трех вариантах:

1) **Самопереоценка**, при которой кажущийся героизм может непродуманно абсолютизироваться, превращается в преступный авантюризм и приводит к невозполнимым потерям.

2) **Самонедооценка**, при которой осторожность, доведенная до крайности, может привести к индифферентности, к преступному бездействию, при котором исторически предоставленные шансы остаются без внимания.

3) **Объективная оценка**, при которой мышление нации становится рациональным, а поведение соответствующим своим силам, адекватным действительности и тем самым – наиболее результативным.

Основа суждения нации о себе (если не единственная, то по крайней мере главная) – собственная история. Она, в числе других факторов, образует представления и политическую мысль нации и ее политической элиты, влияет на ее планы и образ действий.

Уже в 5-ом веке Отец истории Мовсес Хоренаци глубоко сознавал эту проблему, существующую во все времена, и решал ее в пользу третьей возможности. В свете этого сознания он, в частности:

- Считал исключительно важной задачей создание письменной истории народа, о чем он пространно высказывался несколько раз.

- Ставил перед собой задачу ни в коей мере не приукрашивать прошлое, но и не принижать его, а стремиться к наибольшей объективности и достоверности.

- Полностью отказался от фантастических элементов повествования, от распространенной практики объяснения какого-либо эпизода “провидением свыше.”

- По возможности исключил из своего труда внутренние противоречия, основывался лишь на фактах и логике.

Эти представления правдивого рассказчика, а точнее, ученого историка, основаны на политическом кредо Отца истории. Рассматривая проблему с этой точки зрения, следует пересмотреть оценку Хоренаци, распространенную в армянской исторической науке, согласно которой, его целью было показать “беспредельную преданность сынов армянского народа своей родине,” ради чего он “идеализирует царство Великой Армении, и его исторический труд полностью проникнут идеей патриотизма.” Главной задачей Хоренаци как ученого историка было создание “правдивой” истории, ибо как **носитель высокого политического сознания**, он прекрасно понимал политическую опасность, таящуюся, во-первых, в отсутствии письменной истории, а также в существовании неправдивой истории, как принижения, так и “патриотической идеализации” прошлого народа. В этом главная характеристика и исключительное достоинство Отца истории.

ԳԱԿԻԿ ԴԱՆԻԵԼՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՎԱՆՔԵՐԻ ԵՎ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԻՇԱՏԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱԲՈՒ ԱԼ-ՄԱՔԱՐԻՄԻ ԵՐԿԻ ԱՆՀԱՅՏ ԷՋԵՐՈՒՄ

Բանալի բառեր՝ ղպտի-արաբական պատմագրություն, Աբու Սալիհ Հայ, «Ալեքսանդրիայի պատրիարքների պատմություն», Յուսաբ Ֆուվաջի, Ֆաթիմյան խալիֆայություն, Բադր ալ-Ջամալի, Վահրամ Պահլավունի, Գրիգորիս, Գրիգոր Բ Վկայասեր:

1895 թ. ղպտիագետ Բ.Թ.Ա. Էվեթսը (Ա. Ջ. Բաթլերի ծանոթագրություններով) Օքսֆորդում անգլերեն թարգմանությամբ հրատարակեց անհայտ հեղինակի մի արժեքավոր արաբալեզու աշխատություն հետևյալ վերնագրով՝ *The Churches and Monasteries of Egypt and Some Neighboring Countries*, ավելի ճիշտ՝ այդ աշխատության հատորներից մեկը¹: Հրատարակչի ձեռքի տակ եղած ձեռագիրը² սկզբից թերի էր քսան էջով: Այնուամենայնիվ, նա, առաջին էջին եղած գրառումից (մնացած բնագրից ակնհայտորեն տարբերվող ձեռքով)³ *Tārīḥ al-ṣayḥ Abī Ṣal[i]ḥ al-Armanī yudkaru fīhi min aḥbār nawāḥiy Miṣr wa-iqtā'ihā* («Շեյխ Աբու Սալիհ Հայի պատմությունը, որում հիշատակվում են եգիպտոսի շրջանների և նրա տիրույթների մասին հաղորդումներ») մակաբերել է երկի ենթադրյալ հեղինակի անունը՝ Աբու Սալիհ Հայ: Հատկանշական է, որ հեղինակի անունը (*kunya*) իրականում գրված է ուղղագրական սխալով, և *Sālīḥ*-ի փոխարեն իրականում բնագրում *Ṣalīḥ* է: Այնուամենայնիվ, երկում

¹ *The Churches and Monasteries of Egypt and Some Neighbouring Countries Attributed to Abū Ṣālīḥ the Armenian*, ed. and trans. by **B.T.A. Evetts**, with added notes by **A.J. Butler** (Anecdota Oxoniensa, Semitic Series 7), Oxford, 1895: Հատկանշական է, որ Էվեթսից առաջ մի քանի արևելագետներ ծանոթ են եղել արաբալեզու այս աղբյուրին և երբեմն օգտագործել իրենց ուսումնասիրություններում: Խոսքը մասնավորապես Եվսեբիոս Ռենոդոյի (մահ. 1720 թ.), Էթիեն Կատրմերի (մահ. 1857 թ.) և ղպտիագետ Էմիլ Ամելինոյի (մահ. 1915 թ.) մասին է: Տե՛ս **Eu. Renaudot**, *Historia Patriarcharum Alexandrinorum Iacobitarum: a D. Marco usque ad finem saeculi XIII; cum catalogo sequentium patriarcharum & collectaneis historicis ad ultima tempora spectantibus; accedit epitome historiae Muhamedanae ad illustrandas res Aegyptiacas*, Fournier, Parisiis, 1713; **Et. Quatremere**, *Mémoires géographiques et historiques sur l'Égypte, et sur quelques voisines. Recueillis et extraits des manuscrits coptes, arabes, etc., de la Bibliothèque impériale*, tome second, Paris, 1811; **E. Amélineau**, *La géographie de l'Égypte à l'époque copte*, Imprimerie Nationale, Paris, 1890.

² Ըստ հիշատակագրության՝ ընդօրինակված 1338 թ.:

³ Ձեռագրի էջը տե՛ս ներքևում՝ հավելված Ա-ում:

հայերի վերաբերյալ բազմաթիվ եզակի տեղեկությունների առկայությունը հրատարակչի մոտ գրեթե կասկած չի թողել, որ աշխատությունը հայազգի հեղինակի գրչի գործ է: Բ. Էվեթթսի օգտագործած ձեռագիրն այժմ գտնվում է Ֆրանսիայի ազգային գրադարանում (BnF) *Arabe 307* համարի ներքո:

Նորահայտ երկի հրատարակությունն անմիջապես մեծ արձագանք գտավ գիտական, այդ թվում՝ հայագիտական շրջանակներում: Օգտագործելով «Աբու Սալիհ Հայի» տեղեկություններն իր մի հոդվածում Ա.Պ. Սալոմոնը, չնայած փաստերի բացակայությանը, վերջինիս վերաբերյալ նման եզրակացություն է հանգել. «Եվ թեև պատկանում էր հայկական հավատքին, բայց ղպտիական եկեղեցուն, որ նման է հայկականին իր դավանաբանությամբ, վերաբերվում էր մեծագույն համակրանքով»⁴: Թիֆլիսյան «Մշակ» թերթի նույն տարվա դեկտեմբերյան համարներից մեկում Հրաչյա Աճառյանն ուրախությամբ ընթերցողներին ծանոթացրեց Էվեթթսի հրատարակությանը. «Այս թարգմանութեան շնորհով, մենք իմանում ենք, որ ... XII-րդ դարում գոյություն է ունեցել մի հայ ուսումնական և պատմագիր Աբու-Սալիհ անունով...»⁵: Այս ընթացքում, Մխիթարյան Հայր Ղևոնդ Ալիշանն արդեն աշխատում էր Էվեթթսի հրատարակության՝ եգիպտոսի հայերին և հայկական վանքերին վերաբերող հատվածների թարգմանության վրա՝ հեղինակին «[ըստ] մեր մատենագրաց և ազգային սովորութեան» ներկայացնելով Աբու Սալի Հայ անվամբ (ո՛չ «Սալիհ», ինչպես Էվեթթսը, և ո՛չ «Սալհ», ինչպես իրականում ձեռագրում է — Գ. Գ.): Հիշյալ աշխատությունը նախ հրատարակվեց «Բազմավէպ» հանդեսի էջերում⁶, ապա՝ արտատպվեց առանձին գրքով⁷: Հայր Ալիշանը, երկի բովանդակության վրա հիմնվելով, անգամ փորձել է վերականգնել «Էնթագրյալ» հայ հեղինակի նկարագիրը. «Հմուտ է մահմեդական օրինաց և պատմութեանց, և ոչ շատ խորշող երկար գրելով և իբր բուն նպատակ՝ Ղփտեաց եկեղեցիքն և վանորայքը՝ ավելի յարեալ կերևի այս ազգի, իբր համակրօն, և անոնց մէջ ծնած և սնած. Թէ և հաւանօրեն՝ քանի մի դարէ ի վեր յեգիպտոս գաղթած Հայոց սերունդ է. թուի թէ և մեր նոր գաղթականաց նման՝ բնիկ հայրենի լեզուին անգէտ կամ ոչ շատ գետ, արաբէրեն գրեր է, իբրև գիտնական լեզուաւ, որոյ հմտութիւնն անտարակոյս է, նա և շատ պատմիչներ յիշելէն: Բաց ի սկզբան բաւական երկար

⁴ **А.П. Саломон**, “Коптский рефоматор XII-го века”, *Вестник Европы*, т. 176 (тридцатый год), том 6, Санкт-Петербург, 1895, с. 470.

⁵ **Հ.Ա.**, «Հայ պատմագիր Աբու-Սալիհ», *Մշակ*, № 146, 1895, էջ 2:

⁶ **Ղ. Ալիշան**, «Աբուսահլ Հայ Աբաբազի պատմիչ, եկեղեցեաց եւ վանորէից եգիպտոսի» *Բազմավէպ*, 1895, էջ 130-132, 164-167, 197-200, 250-255, 355-358: Մշակի հաջորդ համարում արդեն ծանուցում կա Ղ. Ալիշանի ձեռնարկման մասին: Տե՛ս **Հ.Ա.**, «Մի բացատրութիւն», *Մշակ*, № 147, 1895, էջ 2-3:

⁷ **Ղ. Ալիշան**, *Աբու Սալի Հայ, Պատմութիւն եկեղեցեաց եւ վանօրէից եգիպտոսի, Վեմետիկ, Սուրբ Ղազար*, 1895 (վերահրատարակվել է 1933 թ.), էջ 8:

Հայոց վրայէ գրածէն, այլե եւ այլ տեղ յիշէ զնոյն Հայ պաշտօնեայս և Վզրուկս. և ուր որ Հայոց եկեղեցի և վանք կայ, բայց ամենեւին իր հայազգի ըլլալը կամ ազգասիրութիւն՝ չի ցուցըներ. և ընդհանրապէս ոչ միայն անկողմնասէր, այլ և ցուրտ կերեւի, թէ և հաւատարիմ ի պատմութեան»⁸: Այլուստ նույն հեղինակը գրում է. «Աբուսահլի Հայ ըլլալուն վրայ տարակոյս չի կայ. սակայն ինչպէս գրութիւնն օտար լեզուաւ է, այսպէս ազգային ոգի այլ չերեւիր իր գրածին մէջ, թէ և ստուգութեամբ պատմէ»⁹:

Հայր Ալիշանի թարգմանությունից հետո աշխատությունն է՛լ ավելի մեծ ճանաչում ստացավ հայագետների շրջանում և սկսեց լայնորեն օգտագործվել և այժմ էլ օգտագործվում է հատկապէս եգիպտոսի հայ համայնքի պատմությանը նվիրված ուսումնասիրություններում, ընդ որում երկի հեղինակ է համարվում «Աբուսահլի Հայ» հորջորջվածը: Խոսքը մասնավորապէս ն. Աղազարմի, Յ. Սուֆեանի, Գ. Մըսրլեանի, Ա. Ալպոյաճեանի, Հ. Թուրշանի, ն. Տեր-Միքայելյանի և Ս. Դադոյանի աշխատությունների մասին է¹⁰: Նրանցից Յ. Սուֆեանը, ով իր գրքում առանձին տեղ է հատկացրել Աբու Սալիհին և նրա երկում եգիպտահայ գաղութի պատմության համար կարևոր տեղեկությունների քննարկմանը, վերջինիս մասին հետևյալ եզրակացությունն է հանգել. «Ասկե զատ ալ անիկա ըստ բաւականի բարեկեցիկ ու միջոցի տէր էր, որովհետեւ Վերին ու Ստորին եգիպտոսի ինչպէս նաեւ ուրիշ տեղեաց վանքերն ու եկեղեցիները նկարագրելու համար, ստիպուած էր սոյն վայրերն այցելել, որով իր ժամանակին կարեւոր մասը ճամբորդելով կ'անցներ – բան մը զոր նիւթական միջոցներէն զուրկ մէկը չի կրնար ընել»¹¹:

Հայագիտական շրջանակներից դուրս, երկի՝ օտար հետազոտողների ուսումնասիրությունները կասկածներ ու երկմտանք առաջացրին նրա հեղինա-

⁸ Անդ. էջ 11-12:

⁹ **Նույնի՝** Հայպատում: Պատմիչք եւ Պատմութիւնք Հայոց, յօրինեալ ի Հ. Ղեւոնդեայ Վ. Մ. Ալիշան յարոտակալ վարդապետէ Մխիթարեան ուխտին, հ. Ա, Ս. Ղազար, Վեմետիկ, 1901, էջ 305:

¹⁰ **Ն. Մ. Աղազարմ**, Նօթէր եգիպտոսի հայ գաղութին վրայ, տպ. Զարեհ Ն. Պէրպէրեան, Գահիրէ, 1911, էջ 14, **Յ. Սուֆեան**, եգիպտոսի հայ մէմլուքներն ու իշխանները Ֆաթիմեան շրջանին, տպ. Լուսարձակ, Գահիրէ, 1928, էջ 65-80, **Գ. Մըսրլեան**, Ականաւոր Հայեր եգիպտոսի Մէջ, Տպ. Սահակ-Մեսրոպ, Գահիրէ, 1947, **Ա. Ալպոյաճեան**, Արաբական Միացեալ Հանրապետութեան եգիպտոսի նահանգը եւ հայերը (սկիզբէն մինչեւ մեր օրերը), տպ. Նոր-Աստղ, Գահիրէ, 1960, **Հ. Թուրշեան**, «XI և XII դարերի եգիպտահայ գաղութի պատմությունից», Արևելագիտական ժողովածու II, ՀՍՍՌ ԳԱ հրատ., Երևան, 1964, էջ 301-317, **Ն. Գ. Տէր Միքայելեան**, եգիպտահայ գաղութը 10-15-րդ դարերում, Պէյրոս, 1980 և **նույնի՝** «Եգիպտահայ գաղութը Ժ-ԺԲ դարերում և հայկական եկեղեցիները», էջմիածին, 1993, յուլիս-օգոստոս, էջ 55-69 և նոյեմբեր-դեկտեմբեր, էջ 81-92, **S. B. Dadoyan**, *The Fatimid Armenians: Cultural and Political Interaction in the Near East, Islamic History and Civilization* (Studies and Texts, vol. 18), ed. **Ulrich Haarmann and Wadad Kadi**, Leiden: E.J. Brill, 1997:

¹¹ **Յ. Սուֆեան**, եգիպտոսի հայ մէմլուքներն ու իշխանները, էջ 70:

կային պատկանելության հարցում: Դեռ 1925 թ. եգիպտացի հետազոտող Թաուֆիկ Իսկարիոսը հայտարարեց աշխատության մեկ այլ հատորի գոյության մասին՝ պնդելով, թե երկի հեղինակն ամենևին էլ Աբու Սալիհը չէ: Ըստ նրա՝ երկի իրական հեղինակը ազգությունամբ ղպտի մի վանական էր՝ Աբու ալ-Մաքարիմ Մաադալլահ իբն Զիրջիս իբն Մասուդ անունով, ինչն ապացուցող թեև կցկտուր, բայց հիմնավոր վկայություններ կան հիշյալ ձեռագրում: Ինչ վերաբերում է Աբու Սալիհին, ապա նա, հավանաբար եղել է երկի հատորներից մեկի ձեռագրի սեփականատերը¹²: Իսկարիոսի այս պնդումը միանգամից «քաղաքացիություն» չգտավ գիտության մեջ, և տասնամյակներ շարունակ (բացառությամբ առանձին դեպքերի)¹³ աշխատությունը վերագրվում էր Աբու Սալիհ Հայ անունով անհայտ հեղինակին:

Երկի՝ Աբու ալ-Մաքարիմի գրչին պատկանելու վերաբերյալ օտար հետազոտողների պնդումներն իրենց արձագանքն ստացան նաև հայագիտական շրջանակներում: 1969 թ. Նուբար [Տեր-]Միքայելյանը մի հոդված տպագրեց «Բանբեր Հայաստանի արխիվների» հանդեսում՝ «եգիպտահայ գաղութը Ժ-ԺԲ դարերում և հայկական եկեղեցիները» վերնագրով, որտեղ ի շարս այլևայլ հարցերի՝ քննարկեց Կահիրեի Ղպտիական թանգարանի կատալոգի այն տեղեկությունը, թե հիշյալ երկի իրական հեղինակը Աբու ալ-Մաքարիմ անունով ղպտին է՝ գրելով. «Ձեռագրում ոչ մի նշում չկա, որ հիմք տար այս շինծու և կեղծ փաստը հաստատելու»¹⁴: Նուբար Տեր-Միքայելյանի ակնարկած փարիզյան ձեռագրում իսկապես նման նշում չկա, բայց երկի մյուս հատորներն ընդգրկող ձեռագրում (տե՛ս ստորև), որի գոյության մասին նա պատկերացում անգամ չի ունեցել, Աբու ալ-Մաքարիմի «հեղինակային իրավունքի» օգտին խոսող որոշ փաստեր կան, որոնց վրա էլ հիմնվել է Ղպտիական թանգարանի կատալոգի հեղինակը:

Այս անորոշ իրադրությունը դույզն-ինչ փոխվեց 1984 թ., երբ Սամուիլ ալ-Սուրյանի անունով ղպտի մի քահանա (հետագայում Շիբին ալ-Կանատիրի եպիսկոպոս) խմբագրեց և հրատարակեց աշխատության անհայտ մասերը՝ էվեթթսի արդեն իսկ հրատարակած հատորի (որպես Բ հատոր) հետ մեկտեղ՝

¹² Տե՛ս **Tewfik Iskarous**, “Un nouveau manuscrit sur les églises et monastères de l’Égypte au XIIe siècle”, *Congrès international de géographie, le Caire – avril 1925*, Vol. V, Cairo, 1926, p. 207-208:

¹³ Օրինակ, Գ. Գրաֆը, իր տեղեկության աղբյուր նշելով Ղպտիական թանգարանի ուղեցույցը, գրում է, որ երկն սխալմամբ է վերագրված Աբու Սալիհ Հային, թեև ինքն էլ երկի «իրական հեղինակի» անունն սխալմամբ Աբու ալ-Մաքարիմի փոխարեն, Աբու ալ-Մուքարամ է տալիս: Տե՛ս **G. Graf**, *Geschichte der Christlichen Arabischen Literatur*, B. 2, Città del Vaticano, Biblioteca Apostolica Vaticana, 1947, p. 340:

¹⁴ Տե՛ս **Ն. [Տեր-]Միքայելյան**, «XII-XIII դարերի հայագրի պատմիչ Աբու Սալիհը և նրա անհայտ երկու էջերը», *Բանբեր Հայաստանի արխիվների*, 3 (24). Երևան, 1969, էջ 191-204, նաև **նույնի՝** «եգիպտահայ գաղութը», *Էջմիածին*, 1993, յուլիս-օգոստոս, էջ 191-204:

*Tārīḥ al-kanāʾis wa-l-adyura fī al-qarn 12 al-mīlādī li-Abī al-Makārim alladī nusiba ḥaṭaʾan ilā Abī Sāliḥ al-Armanī*¹⁵ («Աբու ալ-Մաքարիմի եկեղեցիների և վանքերի պատմությունը՝ սխալմամբ վերագրված Աբու Սալիհ Նալին»): Նորահայտ երկու մասերին կցված է ևս մեկը, որն իրենից ներկայացնում է եգիպտոսի նկարագրությանն առնչվող քաղվածքներ միջնադարյան արաբալեզու այլ աղբյուրներից (ալ-Շաբուշթի, ալ-Մակրիզի և այլն) և ուղեգրություններից՝ օրինակ ժէ դարի գերմանացի ճանապարհորդ Յոհաննես Վանսլեբի (մահ. 1679 թ.) ուղեգրությունից¹⁶: Այն, հավանաբար, պատկանում է երկի այդ ձեռագրի սեփականատեր եղած Ջիրջիս Ֆիլուտատու Ավադ անունով հեղինակի գրչին, որոնք բոլորը հավաքվել են խմբագիր-հրատարակչի ձեռքով և լույս ընծայվել որպես չորրորդ հատոր: Հատորը եզրափակվում է նույն Ջիրջիս Ֆիլուտատու Ավադի հեղինակած հոդվածով՝ Աբու Սալիհին վերագրված և իր տրամադրության տակ եղած ձեռագրերի առնչակցության վերաբերյալ, որտեղ նա փորձում է փաստերով ապացուցել, որ երկու տարբեր ձեռագրում եղած բնագրերն իրականում մեկ՝ Աբու ալ-Մաքարիմի գրչին պատկանող աշխատության մասեր են¹⁷:

Սամուիլ ալ-Սուրյանիի հրատարակությունը՝ շնայած խմբագրական և աղբյուրագիտական աշխատանքի առումով ոչ այնքան հաջող լինելուն, այնուամենայնիվ, ոչ միայն ամբողջացրեց, այլև նորովի արժևորեց երկը: Գիտական շրջանակներում աշխատությունն ընդունվեց որպես եգիպտոսի և հարակից երկրների քրիստոնեական վանքերի ու եկեղեցիների վերաբերյալ պատմատեղագրական տեղեկությունների իսկական շտեմարան:

Սամուիլ ալ-Սուրյանիի ձեռնարկած հրատարակությունից հետո, այս բացառիկ աղբյուրի նկատմամբ հետաքրքրությունն ավելի սրվեց: Խոսքը, մասնավորապես, Ուզո Չանեստիի և Յոհաննես դեն Հեյերի արժեքավոր ուսումնասիրությունների մասին է: Նրանցից Ու. Չանեստին պարզեց, որ Ջիրջիս Ֆիլուտատու Ավադին պատկանած այն ձեռագիրը, որի հիման վրա հայր Սամուելն

¹⁵ **Samūʿil al-Suryānī**, *Tārīḥ al-kanāʾis wa-l-adyura fī al-qarn 12 al-mīlādī li-Abī al-Makārim alladī nusiba ḥaṭaʾan ilā Abī Sāliḥ al-Armanī*, 4 ց., Dayr al-Suryān, 1984: Վերահրատարակվել է 2000 թ.՝ **Al-Anbā Samūʿil**, *Tārīḥ Abū al-Makārim ʿan al-kanāʾis wa-l-adyura fī al-qarn 12*, 4 ց., 2000: Իսկ 1992 թ. հրատարակվել է հիշյալ չորս հատորներից առաջինի անգլերեն թարգմանությունը: Տե՛ս **Bishop Samuel**, *Abu al-Makarem: History of the Churches and Monasteries in Lower Egypt in the Thirteenth Century*, Cairo, 1992:

¹⁶ **Samūʿil al-Suryānī**, *Tārīḥ al-kanāʾis*, ց. 4, ք. 111-122. Հատկանշական է, որ այժմյան Փարիզի ազգային գրադարանի Arabe 307 ձեռագիրը, ի շարս բազմաթիվ այլ ձեռագրերի, հենց Յոհաննես Վանսլեբն էր Ֆրանսիա հասցրել և հանձնել Փարիզի արքայական գրադարանին: Տե՛ս **G. Troupeau**, *Catalogue des manuscrits arabes. I, Manuscrits chrétiens, Tome I, N^{os} 1-323*, Bibliothèque Nationale, Paris, 1972, p. 269:

¹⁷ **Samūʿil al-Suryānī**, *Tārīḥ al-kanāʾis*, ց. 4, ք. 145-153.

իրականացրել է երկի ամբողջական հրատարակությունը, այժմ գտնվում է Բավարիայի պետական գրադարանում (Մյունխեն) թիվ Arab 2570 համարի ներքո: Նա ենթադրեց, որ փարիզյան և մյունխենյան ձեռագրերն իրականում մի ժամանակ մեկ միասնական գրչագիր են կազմել, որը հետագայում է բաժանվել երկու մասի¹⁸: Մյուս կարևոր, լրացուցիչ պարզաբանման կարոտ խնդիրները երկի հեղինակային պատկանելության և գրչության ժամանակի հարցերն էին: Բանն այն է, որ Աբու ալ-Մաքարիմի մասին, բացի երկի մյունխենյան ձեռագրում առկա ինքնակենսագրական բնույթի կցկտուր տեղեկություններից¹⁹, այլ աղբյուրներից ուրիշ ոչինչ հայտնի չէ: Չանետտիի ձեռագրագիտական ուսումնասիրությունը ցույց տվեց, որ երկի ստեղծման գործում առնվազն երկու հեղինակ է ներգրավված եղել Աբու ալ-Մաքարիմը և մի ուրիշ խմբագիր: Ըստ Յ. դեն Հեյերի՝ երկը գրվել է 1160-1220 թվականների միջակայքում, և Աբու ալ-Մաքարիմը հավանաբար երկի միակ հեղինակը չի եղել: Մանրամասն քննելով երկը՝ նա առանձնացրել է շարագրանքի տեքստային և ոճական առանձնահատկություններ ունեցող առնվազն երկու հիմնական (գրված համապատասխանաբար 1153-1186 և 1200-1208 թվականների միջակայքում) և մի քանի երկրորդային շերտ: Հետևաբար, ըստ նրա՝ աշխատության ստեղծման գործում Աբու Սալիհ հորջորջված հեղինակի մասնակցության հանգամանքը դեռ շարունակում է անորոշ մնալ²⁰: Վերջինս գուցե պատասխանատու է եղել երկի

¹⁸ U. Zanetti, “Abū al-Makārim et Abū Ṣālih,” *Bulletin de la Société d’Archéologie Copte* 34 (1995) 85-138.

¹⁹ Օրինակ, մեկ-երկու տեղում բնագրի հեղինակն իրեն կոչում է «[այս] գրքի հեղինակ» (*nāzim haḍā al-kitāb* կամ *muṣannif al-kitāb*): Նա մի դեպքում խոսում է ալ-Չուվալյա քաղում գտնվող իր տան մասին, մեկ այլ դեպքում՝ իր կնոջ և նրա ունեցվածքի մասին: *Stu Tārīḥ al-kanāʿis*, ց. 1, ք. 4, 21:

²⁰ J. den Heijer, “The Composition of the History of the Churches and Monasteries of Egypt. Some preliminary Remarks,” D. W. Johnson (ed.), *Acts of the Fifth International Congress of Coptic Studies*, Washington, 12-15 August 1992. vol. 2. Papers from the sections 1-2, Rome, 1993, 209-19, հուլյանի՝ “The Influence of the History of the Patriarchs of Alexandria on the History of the Churches and Monasteries of Egypt by Abu l-Makarim and Abu Salih,” *Parole de l’Orient: revue semestrielle des études syriaques et arabes chrétiennes: recherches orientales: revue d’études et de recherches sur les églises de langue syriaque*, vol. 19, 1994, pp. 415-439, հուլյանի՝ “Coptic Historiography in the Fātimid, Ayyūbid and Early Mamlūk Periods,” *Medieval Encounters*, vol. 2.1, 1996, pp. 77-81, հուլյանի՝ (assisted by Perrine Pilette), “History of the Churches and Monasteries of Egypt,” *Christian-Muslim Relations; A Bibliographical History*, vol. 4 (1200-1350), ed. by David Thomas and Alex Mallett, Brill, Leiden-Boston, 2012, pp. 983-988: Հիշյալ հոդվածներից մի քանիսը սիրալիբ կերպով մեզ է տրամադրել ինքը՝ հեղինակը, ինչի համար մեր խորին երախտագիտությունն ենք հայտնում նրան: Երկի հետազոտության շրջանակներում երկու հոդված է հեղինակել մաս Կլարա Բեն Հակենը, որոնցում քարգմանաբար ներկայացրել է Անտիոքի և Եդեսիայի նկարագրությանը նվիրված հատվածները: Երկում Սև լեռների հայկական վանքերին

հայկական նյութի համար, ինչը փաստերով ապացուցելու հնարավորություն, ցավոք, չունենք:

Որոշ պարզաբանման կարիք ունի նաև «եկեղեցիների և վանքերի պատմության» աղբյուրների հարցը: Երկի առաջնային սկզբնաղբյուրներից մեկն «Ալեքսանդրիայի պատրիարքների պատմություն» է, որը ղպտիական եկեղեցու պատմության կարևորագույն պատմական հուշարձաններից է²¹: Այն երկար ժամանակ վերագրվել է Սավիրոուս իբն ալ-Մուկաֆֆա ին: Վերջին հետազոտությունների արդյունքներով, սակայն, մասնագետների մոտ միտում կա երկի ստեղծման գործում հիմնական դերը կամ հենց ստեղծումը վերագրել Մաուհուբ իբն Մանսուր իբն ալ-Մուֆարրիջ անունով հեղինակին²²: Վերջինս անձամբ ժամանակակից է եղել ղպտիական եկեղեցու Քրիստոգոլոս (1047-1077 թթ.) և Կյուրեղ Բ (1078-1092 թթ.) պատրիարքներին և ականատեսի իր տեղեկություններով է վկայագրել նրանց պատրիարքության տարիների պատմությունը: Մաուհուբ իբն Մանսուրից հետո երկը բազմաթիվ հայտնի (օրինակ՝ Միխայիլ ալ-Դամանհուրի, Մարկոս Գ պատրիարք) և անհայտ շարահարողներ է ունեցել, որոնք ղպտիական եկեղեցու պատմության շարադրանքը հասցրել են մինչև 20-րդ դարը²³:

վերաբերող հատվածն ընդգրկված է Անտիոքի մերձակայքի նկարագրության մեջ, որը նաև մենք ենք քարգմանել ներքևում: Տե՛ս **Cl. ten Hacken**, “The Description of Antioch in Abu al-Makarim’s History of the Churches and Monasteries of Egypt and Some Neighbouring Countries,” *East and West in the Medieval Eastern Mediterranean*. 1: *Antioch from the Byzantine Reconquest Until the End of the Crusader Principality: Acta of the Congress Held at Hernen Castle in May 2003*, ed. by **K. Ciggaar and M. Metcalf**, Peeters, Leuven, 2006, pp.185-216 և **նոյնի՝** “The Description of Edessa in Abu al-Makarim’s History of the Churches and Monasteries of Egypt and Some Neighbouring Countries,” *East and West in the Medieval Eastern Mediterranean*. 2: *Antioch from the Byzantine Reconquest Until the End of the Crusader Principality: Acta of the Congress held at Hernen Castle (the Netherlands) in May 2006*, ed. by **K. Ciggaar and M. Metcalf Peeters**, Leuven, 2013, pp. 201-218:

²¹ Հարցը մանրամասն քննված է Յ. դեմ Հեյերի “The Influence of the History of the Patriarchs of Alexandria” հոդվածում: Տե՛ս նախորդ ծանոթագրությունը:

²² **նոյնի՝** *Coptic Historiography*, pp. 69-77 և հատկապես **նոյնի՝** *Mawhūb ibn Mansūr ibn Mufarrīg et l’historiographie copto-arabe. Étude sur la composition de l’Histoire des Patriarches d’Alexandrie* (Corpus Scriptorum Christianorum Orientalium, vol. 513), Louvain, 1989:

²³ Երկը եվրոպացի արևելագետներին հայտնի է և հասանելի դեռ ժԸ դարից՝ սկսած եվսեբիոս Ռենոդոյի լատիներեն փոխադրական-վերապատմողական (իմա՝ ոչ բառացի) քարգմանությունից: Տե՛ս ծան. 1: Արաբերեն բնագիրը նույնպես մի քանի հրատարակություն է ունեցել, որոնցից ոչ մեկը, սակայն, լիակատար քննական չէ: Այս աշխատանքում մենք օգտագործել ենք Սամուիլ ալ-Սուրյանիի եռահատոր հրատարակությունը: Տե՛ս *Tārīḥ al-baṭārika li-anbā Sāwīrūs ibn Muqaffa ‘asqaf al-Aṣmūnīn* (sic-Գ.Գ.), 3 ց., bi-i ḍād al-Anbā Samū’īl, al-Qāhira, [ա.թ.] (հետայսու՝ *Tārīḥ al-baṭārika*): Երկը նաև քարգմանություններ է ունեցել: Առաջին կեսը խմբագրել և անգլերեն է քարգմանել Բ.Թ.Ա. Էվերսը,

Այս երկու երկերի հետ անմիջական առնչություն ունի ղպտիական պատմագրական ավանդույթի ևս մի արաբալեզու հուշարձան՝ Ֆուվվայի եպիսկոպոս Յուսաբի (Հովսեփ) գրչին վերագրվող «Պատրիարք հայրերի պատմությունը»։ Այս աշխատության հաղորդումներն օգտակար են լինելու մեզ համար հետագա շարադրանքում, ուստի հարկ է փոքր-ինչ մանրամասն ներկայացնել այն։ Հեղինակի մասին կենսագրական տեղեկություններ են գտնվում լոկ նրա երկում։ Ապրել է ժԳ դարում՝ առնվազն մինչև 1270-ական թվականների սկզբները, թեև մահվան հստակ թվականը հայտնի չէ։ Ինչպես երկի վերնագրից է երևում, այն ղպտիական ուղղափառ եկեղեցու պատմություն է՝ սկսած Մարկոս Ավետարանչից և շարահարողների ձեռքով շարունակված մինչև Հովհաննես ժԶ-ի պատրիարքության տարիները (1676-1718 թթ.)։ Շարադրանքի գծով և բովանդակությամբ շատ նման է «Ալեքսանդրիայի պատրիարքների պատմությունը»-ը, բայց, ի տարբերություն վերջինիս՝ ղպտի հայրապետների ամբողջական տարիները համառոտ է ներկայացնում։ Արդի հետազոտողները դեռ հիմնավոր փորձ չեն կատարել՝ պարզելու այս երկու երկերի առնչակցության աստիճանը և պատասխանելու այն հարցին, թե Յուսաբին վերագրվող երկն իրականում «Ալեքսանդրիայի պատրիարքների պատմությունը» պարզ համառոտումն է, թե նրա հեղինակն այլ աղբյուրներ էլ է օգտագործել։ Ի դեպ, վերջին պնդումն իսկապես տեղին է, քանզի երկում իրադարձությունների պատմումները երբեմն զգալիորեն շեղվում են «Ալեքսանդրիայի պատրիարքների պատմությունը»-ից, ինչպես կհամոզվենք ստորև, իսկ որոշ տեղեկություններ, առհասարակ եզակի են ու բացառիկ։ Այդուհանդերձ, վերջին տարիներին կասկածներ են հնչում Յուսաբի՝ հիշյալ երկի հեղինակ լինելու վերաբերյալ՝ երևան բերելով նոր հարցականներ²⁴։

մնացած մասերը Օ. Բուրմեսթերը, Ա.Ս. Արիյան և ուրիշներ։ Տե՛ս *History of the Patriarchs of the Coptic Church of Alexandria*, Arabic text ed., trans. and annotated by **B.T.A. Evetts** (Patrologia Orientalis, tome I), pp. 99-214, 383-518, tome V, pp. 1-215, tome 10, pp. 358-551, Firmin-Didot, Paris, (համապատասխանաբար) 1907, 1910, 1915 և *History of the Patriarchs of the Egyptian Church Known as the History of the Holy Church* (հետայսու՝ **HP**) by *Sawirus ibn al-Mukaffa*՝ *Bishop of al-Asmunin* (sic-Գ.Գ.), ed. and tr. by *Yassa Abd al-Masih, O.H.E. KHS-Burmester, A.S. Atiyya, A. Khater*, Cairo, 1943-1974:

²⁴ Տե՛ս **J. den Heijer**, *Coptic Historiography*, pp. 81-83; **W. Witkowski**, “Coptic and Ethiopic Historical Writing,” *The Oxford History of Historical Writing*, Vol. 2: 400-1400, ed. by **S. Foot and Ch. F. Robinson**, Oxford University Press, 2012, p. 144 և հմմտ. **S. Moawad**, “Yūsāb of Fuwwa,” *Christian-Muslim Relations. A Bibliographical History*, Vol. 4 (1200-1350), ed. by **D. Thomas, A. Mallett**, Brill, Leiden-Boston, 2012, pp. 486-490: Ըստ Ս. Մուվադի՝ երկի հեղինակը վերոհիշյալ Հովհաննես ժԶ պատրիարքի ժամանակակից անանուն հեղինակ է, որը երկը շարադրելիս, բազմաթիվ աղբյուրներ է ունեցել ձեռքի տակ, այդ թվում՝ «Ալեքսանդրիայի պատրիարքների պատմությունը» և Յուսաբի կորած աշխատությունը։ Տե՛ս անդ. էջ 488-489: Երկը հրատարակվել է մեզ արդեն

«Եկեղեցիների և վանքերի պատմության» էվեթթսի հրատարակած հատորի (Սամուել ալ-Սուրյանիի հրատարակության Բ հատոր) հայոց պատմության համար կարևորություն ներկայացնող տեղեկությունները վաղուց հայտնի են հայագիտությանը՝ թեկուզ հայր Ղ. Ալիշանի՝ էվեթթսի հրատարակությունից կատարած ծաղկաքաղ թարգմանությունից: Չնայած այդ տեղեկությունների հետ կապված առանձին հարցեր դեռ մնում են, այնուամենայնիվ, այստեղ կսահմանափակվենք դրանք ամփոփ ներկայացնելով: Մասնավորապես, աշխատությունը խիստ արժեքավոր տեղեկություններ է պարունակում եգիպտոսի հայկական վանքերի ու եկեղեցիների, հայ համայնքի ու խալիֆայության հայագրի վեզիրների (Բադր ալ-Դին ալ-Ջամալի, ալ-Աֆդալ Շահնշահ, Տալա Դիբն Ռուզգիբ, Վահրամ Պահլավունի), Ֆաթիմյան խալիֆայության մայրամուտին եգիպտոսի հայերի նկատմամբ քուրդ Այյուբյանների գործադրած ճնշումների, կոտորածների և արտաքսման մասին: Շատ հետաքրքիր է եգիպտոսի հայոց պատրիարքի (նախկինում եղած Աթֆիհի²⁵ եպիսկոպոս) 1172 թ. Կահիրեից Նրուսաղեմ տեղափոխվելու²⁶ և տեղի հայոց պատրիարքի կողմից դավադրաբար թունավորվելու մասին պատմությունը: Այստեղ կխոսենք բնագրի՝ հիշյալ պատրիարքին վերաբերող մի հատվածի մասին, որը դուրս է մնացել էվեթթսի (հետևաբար նաև Ղ. Ալիշանի) թարգմանությունից՝ ոչ թյուրիմացաբար, այլ դիտավորությամբ: Հատվածը փարիզյան ձեռագրում զբաղեցնում է մեկ տող 3b թերթից, 4a թերթին ամբողջությամբ և մի քանի տող 4b թերթից²⁷: Խոսքը հայոց պատրիարքի վերաբերյալ տարածված մի բանասարկության մասին է: Պարզվում է ալ-Հաֆիզ խալիֆայի օրոք պատրիարքն անհիմն կերպով մեղադրվել է ալ-Յասալ անունով մի երևելի այրի²⁸ դստեր հետ «սեռական հարաբերություններ» ունենալու մեջ: Ֆաթիմյան վերնախավում մեծ վարկ ու հեղինակություն ունեցող պատրիարքի վերաբերյալ այս բամբասանքն այնքան է վհատեցրել խալիֆա ալ-Հաֆիզին, որ նա հանձնարարել է ստուգել այս մեղադրանքի իսկությունը: Ասկալոնցի հայտնի փիլիսոփա և բժիշկ Աբու ալ-

հաջ հայտնի Սամուիլ ալ-Սուրյանիի և Նաբիհ Քամիլ Դավուդի աշխատասիրությամբ: Տե՛ս *Tārīḥ al-ābā' al-baṭārika li-l-anbā' Yūsāb asquf Fuwwa*, bi-tahqīq Ṣamū'īl al-Suryānī wa-Nabīh Kāmil Dāwud, al-Qāhira, 1987:

²⁵ Հին հունական Աֆրոդիտոպոլիսն է:

²⁶ Ըստ աղբյուրի՝ հոգևոր առաջնորդն իր հետ երուսաղեմ է տարել 75 ձեռագիր մատյաններ:

²⁷ Տե՛ս ստորև՝ հավելված Բ:

²⁸ Խոսքն, ամենայն հավանականությամբ, վեզիր Բահրամ ալ-Աւմանիի եղբայր, Վերին Եգիպտոսի Կուս նահանգի կառավարիչ Վասակի մասին է: Երկում ալ-Յասալի մասին ևս մի հիշատակություն կա: Տե՛ս **B.T.A. Evetts**, *The Churches and Monasteries*, p. 147 (՝. 63): Վասակը մուսուլմանական պատմագրության մեջ ավելի շատ հայտնի է ալ-Բասաթ (*al-Bāsāk*) անունով: Տե՛ս, օրինակ, **al-Maqrizī**, *Itti āz al-ḥunafā' bi-ahbār al-a'imma al-Fāṭimiyyīn al-ḥulafā'*, ց. 3, bi-tahqīq Ḡamāl al-Din al-Šayyāl wa-Muḥammad Ḥilmī Muḥammad Aḥmad, al-Qāhira, 1996, ՝. 157, 159-161 և **նույնի**՝ *Kitāb al-Muqaffā al-Kabīr*, ց. 2, bi-tahqīq Muḥammad al-Ya'lāwī, Dār al-Ḡarb al-Islāmī, Bayrūt, 1991, ՝. 514-515:

Կասիմ Խալիլը բժշկական զննություն է ենթարկել պատրիարքին և պարզել, որ նա առհասարակ ունակ չէ սեռական հարաբերությունների, ուստի և կասկածները փարատվել են: Էվեթթսի թարգմանությունից դուրս մնացած այս հատվածը նկատել են նաև Գէորգ Մըսրիեանը և Նուբար Տեր-Միքայելյանը, որն անգամ մի առանձին հոդված է նվիրել այդ պատմության լուսաբանմանը: Վերջիններս, այնուամենայնիվ, էթիկայի կանոններից ելնելով, խուսափել են հատվածի ամբողջական բառացի թարգմանությունից²⁹:

Պատրիարքի մահից հետո առանց հովվապետի մնացած եգիպտահայ համայնքին պատկանող եկեղեցիների և վանքերի մի մասը յուրացվեց ղպտինների կողմից: Հատկապես թեժ էր վեճը հայերի և ղպտինների միջև ալ-Բասաթին (Այգեստան) և ալ-Ջուհրի թաղամասերի երկու եկեղեցիների համար: Նույնքան բացառիկ է Կիլիկիո «հայոց արքայի»³⁰ մի եպիսկոպոսի գլխավորությամբ եգիպտոս ուղարկած պատվիրակության մասին պատմությունը: Եպիսկոպոսը ձեռքին ուներ «հայոց արքայի» նամակը՝ ուղղված եգիպտոսի փոխարքա ալ-Մալիք ալ-Մուզաֆֆարին³¹ հայերից խլված եկեղեցիները նրանց վերադարձնելու խնդրանքով երկու այլ երաշխավորական նամակների հետ միասին (մեկը՝ Սալահ ալ-Դինից³², մյուսը՝ նրա եղբորից՝ ալ-Մալիք ալ-Ադիլ Սալֆ ալ-Դինից³³): Հիշյալ եպիսկոպոսը, սակայն, հիվանդանում և մահանում է եգիպտոսում, և նրա առաքելությունը ձախողվում է: Երկու եկեղեցիների համար վեճը շարունակվում է: Ըստ հեղինակի՝ 1186 թ. ալ-Մալիք ալ-Ադիլի հրամանով երկու համայնքներին պատվիրվում է զատել երկու եկեղեցիները և առանձին օգտագործել, բայց սա չի լուծում թնշուկը: Ուստի «մեծամեծերի ժողովն» ի վերջո որոշում է դրանք հանձնել հայերի սեփականությանը: Հատորի՝ հայերին վերաբերող այս ընդարձակ պատմությունից բացի՝ ոչ պակաս կարևոր են Ֆաթիմյան խալիֆայության շրջանում եգիպտոսի տարածքում հայերին պատկանած այլ վանքերի և եկեղեցիների հիշատակությունները³⁴: Հատկանշական է,

²⁹ Տե՛ս Մըսրիեան, *Ականաւոր Հայեր*, էջ 154; Ն. [Տեր-]Միքայելյան, *XII-XIII դարերի հայագրի պատմիչ Աբու Սալիհը*, էջ 191-204, ինչպես նաև **նույնի՝** *Եգիպտահայ գաղութը 10-15-րդ դարերում*, էջ 93-95 և **նույնի՝** «Եգիպտահայ գաղութը», *էջմիածին*, 1993, յուլիս-օգոստոս, էջ 67-68, ինչպես նաև **S. Dadoyan**, *Fatimid Armenians*, p. 98:

³⁰ Խոսքը, հավանաբար, Ռուբեն Գ իշխանի (1175-1187 թթ.) մասին է:

³¹ Ալ-Մուզաֆֆար Թակի ալ-Դին Ումարն է, որը եգիպտոսի Այյուբյան փոխարքա է եղել 1181-1186 թվականներին:

³² Այյուբյան դինաստիայի հիմնադիրն է և Այյուբյան սուլթանության առաջին սուլթանը՝ 1174-1193 թթ.:

³³ Սալահ ալ-Դինի եղբայրն էր, որը 1183-1186 թվականներին զբաղեցնում էր Հալեպի կառավարչի պաշտոնը: Հետագայում՝ 1200-1218 թթ., ալ-Ադիլը եղել է եգիպտոսի և Ասորիի Այյուբյան սուլթան:

³⁴ Խոսվում է Կահիրեի ալ-Բասաթին (Այգեստան) թաղամասի սբ. Հակոբ հայկական եկեղեցու վերաշինության և նույն թաղամասում գտնվող մեկ այլ եկեղեցու մասին, Կահիրեի

որ հաշվի առնելով երկի այդ հատորի հայտնած տեղեկությունները՝ եգիպտոսի հայ համայնքի պատմությանը նվիրված ուսումնասիրություններում մինչ օրս խոսվել է Ֆաթիմյան շրջանում հայերին պատկանած մոտ 30-35 վանքերի և եկեղեցիների մասին³⁵: Մինչդեռ երկի՝ հայագիտական շրջանակներին անծանոթ մնացած էջերում հիշատակություններ կան եգիպտոսի այլ շրջաններում հայերին պատկանած ևս մոտ 2 տասնյակ վանքերի և աղոթատեղիների մասին: Սա ավելորդ անգամ հաստատում է այն հայտնի փաստը, թե ինչ բարձր դիրք ու ազդեցություն է ունեցել հայկական համայնքը եգիպտոսում ժԱ-ԺԲ դարերում³⁶:

Հետագա շարադրանքում մենք քաղվածական թարգմանությամբ կներկայացնենք երկի՝ հայագիտական շրջանակներին ցայսօր գրեթե անհայտ մնացած այն էջերը, որոնցում նույնպես արժեքավոր վկայություններ կան ոչ միայն եգիպտոսի, այլև Պաղեստինի (մասնավորապես՝ Երուսաղեմի), Ասորիքի և Կիլիկիայի հայկական վանքերի ու եկեղեցիների մասին՝ երկու կարևոր բացառությամբ: Առաջինը՝ եգիպտոսի ղպտիական եկեղեցու եպիսկոպոս հայր Մարտիրոսի մի հոդվածն է՝ «Հայերը եգիպտոսում ժԱ դարից մինչև օսմանյան դարաշրջանի սկիզբը», տպագրված Կահիրում, արաբալեզու Արեգ (նախկինում Արև) ամսաթերթում (խմբագիր՝ Մուհամմադ Ռիֆա'աթ Իմամ): Հեղինակն անդրադառնում է եգիպտոսի հայկական վանքերին, և, ճիշտ է, իր տեղեկությունների աղբյուրները չի մասնավորում, բայց ակնհայտ է, որ դրանց հիմքն «Ալեքսանդրիայի պատրիարքների պատմությունն» ու Աբու ալ-Մաքարիմի երկն են³⁷: Երկրորդ բացառությունը Մաջիդ Իզաաթ Իսրաիլի «եգիպտոսի հայերը... Պաղեստինի հայերը... հեռու քաղաքականությունից» նորագույն արաբալեզու

ալ-Ջունրի թաղամասի եկեղեցու, ալ-Ջուվայլա թաղամասի սբ. Հովհաննես Մկրտիչ և Իթֆիհի (Աթֆիհ) սբ. Գևորգ եկեղեցիների մասին, Ասյուտի և շրջակայքի 4 հայկական եկեղեցիների և մեկ վանքի, Շինարա ավանի յոթ եկեղեցիների մասին: Հիշատակություններ կան հայերին պատկանած այլ եկեղեցիների մասին նույնպես: Հայերը մի եկեղեցի ունեին Տուրայում, մեկ ուրիշը՝ Կարուսանայում, նրանց էր պատկանում Սաֆթ Մայդումի եկեղեցու խորաններից մեկը և այլն: Տե՛ս հաջորդ ծան.:

³⁵ Տե՛ս Թ. Գուշակեան, *եգիպտոսի հայոց հին եւ արդի եկեղեցիները*, տպ. Յաթէթ-Պաղտասար, Գանիրէ, 1927, էջ 12-18, Գ. Մըսրէան, *Ականաւոր Հայեր*, էջ 146-173 և Ն.Գ. Տէր-Միխայէլեան, *եգիպտոսահայ գաղութը 10-15-րդ դարերում*, էջ 103-110, 260-261:

³⁶ Ֆաթիմյան խալիֆայությունում հայերի ունեցած դերին և եգիպտահայ գաղութի պատմությանը նվիրված մեծածավալ գրականություն կա: Ընդ որում, թեման լավ ուսումնասիրված է ինչպես հայագրի, այնպես էլ օտար հետազոտողների կողմից: Եվ թեև շատ ու շատ դրվագներ դեռ շտկման, վերանայման և որոշ նորահայտ աղբյուրների լույսի ներքո լրացման կարիք ունեն, այնուամենայնիվ հետագա շարադրանքում հիմնականում կխոսասփենք հանրահայտ փաստերի մեջ խորանալուց՝ մեր ուշադրությունը կենտրոնացնելով առավելապես խնդրո առարկա երկի արժանիքների և պարունակած նորությունների վրա:

³⁷ Տե՛ս **Al-Anbā Mārtīrūs**, *Al-Arman fi Mişr mundu al-qarn al-ḥādiya ʿaşara ḥatta bidāyat al-ʿaşr al- utmānī* // Arīk, № 10 (māyu), al-Qāhira, 2011, փ. 6-12.

աշխատությունն է³⁸ նվիրված Եգիպտոսի և Սուրբ Երկրի հայկական գաղութների պատմությանը՝ ընդհուպ մինչև մեր օրերը: Եգիպտոսի և Պաղեստինի հայկական վանքերի ու եկեղեցիների մասին պատմական ակնարկում հեղինակն օգտագործել է նաև Աբու ալ-Մաքարիմի երկը, չնայած՝ նրա հայտնած տեղեկությունները քննելիս, ավելի հաճախ հղում է հայր Մարտիրոսի վերոհիշյալ հոդվածը՝ կրկնելով նաև նրա սխալները: Օրինակ, ըստ «Ալեքսանդրիայի պատրիարքների պատմության» և Աբու ալ-Մաքարիմի երկի՝ Գրիգորիսը Եգիպտոս է եկել (այս մասին՝ ստորև – Գ. Դ.) Նահատակաց 803 թ., որը համապատասխանում է Գրիգորյան 1087 թվականին (+ 284), այլ ոչ թե 1080-ին, ինչպես որ երկուսն էլ պնդում են:

Շարադրանքում մենք զուգահեռաբար կքննենք ինչպես Սամուիլ ալ-Սուրյանի հրատարակությունը (Ա և Գ հատորներ), այնպես էլ Բավարիայի պետական գրադարանի Arab 2570 ձեռագիրը՝ անհրաժեշտության դեպքում լրացումներ կամ ճշտումներ կատարելով: Լայնորեն կօգտագործենք նաև «Ալեքսանդրիայի պատրիարքների պատմություն»-ը, որը, ինչպես նշել ենք, «Եկեղեցիների և վանքերի պատմության» առաջնային սկզբնաղբյուրներից մեկն է, ինչպես նաև Յուսաբ Ֆուվվացուն վերագրվող երկը, մանավանդ որ այդ աղբյուրները նույնպես, ինչպես հարկն է, արժևորված չեն հայագիտության մեջ:

³⁸ **Māğid ʾIzzat Isrāʾīl**, *Arman Mişr.. Arman Filastīn.. ba ʿīdan ʿan al-siyāsa*, al-taqdīm bi-qalam ʿAsim al-Dasūqī, Dār al-ʿarabī li-l-naşr wa-t-tawzīʿ, al-Qāhira, 2017.

**«ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԵՒ ՎԱՆՔԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ»
Ա.Ռ.Ա.ՋԻՆ ՀԱՏՈՐ**

Էջ 10

Կահիրեի եկեղեցիների մեջ կան այնպիսիները, որոնց հարտարապետական դիմագիծը չի փոխվել, բայց վերածվել են մզկիթի կամ տան: Թաղամասում դրանցից մեկը հայտնի է որպես ամիր ալ-ջույուլ³⁹ Բադրի որդի ալ-Աունադի⁴⁰ տուն, [հետո նաև] Շիհաբ ալ-Դաուլա Բադր ալ-Խասսի⁴¹ տուն, որը տուն է դարձել՝ անվանվելով Սաֆան ալ-Կուֆուլ (Sakan al-Qufūl, բառացի՝ «կողպեցիների կացարան»): Նրա գմբեթը մինչ օրս երևում է, նրանում մնում են եկեղեցական որմնա[պատկերները], և ամեն անգամ, երբ թարմացվել է դրանց սպիտակեցումը⁴², պատկերներին ձեռք չեն տվել:

...⁴³ [պատկանել է] միայն հակոբիկներին⁴⁴: Հայերը նրա պատին կից խորան են կառուցել, և սա եղել է պատրիարք⁴⁵ Անբա Մարկուս իբն Ջուրա⁴⁶, Բահանաների և Ժողովրդի ներկայությամբ: Նրա վրա մեր Սուրբ Տիրամորը նվիրված եկեղեցի կա, որ մի ֆանի երևելի այրեր (բնագրում՝ arāhina) են հիմնել:

³⁹ *Amīr al-ǧuyūṣ* նշանակում է «գորբերի հրամանատար» կամ «գորապետ»: Այն Ֆաթիմյան խալիֆայության վեզիրներին տրված բարձրագույն ռազմական և ադմինիստրատիվ պատվանունն է:

⁴⁰ Վեզիր Բադր ալ-Ջամալիի ավագ որդին էր, որը 1084 թ. խոռվեց հոր դեմ, բայց անհաշորության մատնվեց, բանտարկության մեջ անցկացրեց մոտ մեկուկես տարի և ազատ արձակվելուց կարճ ժամանակ անց մահացավ: Բադրի մյուս որդին՝ ալ-Աֆդալ Շահնշահը, հաջորդեց հորը վեզիրության պաշտոնում (1094-1121 թթ.):

⁴¹ Բադր ալ-Խասսի վերաբերյալ աղբյուրներում տեղեկություններ գրեթե չկան: Ալ-Մակրիզիի մոտ հաղորդում կա նրա կառուցած մի բաղնիքի մասին: Նա նրան կոչում է «*Ֆաթիմյան պետության երևելի այրերից*»: Տե՛ս **Al-Maqrīzī**, *Al-Mawāʾiz wa-l-iʿtibār bi-ḍikr al-ḥiṭaṭ wa-l-aṭār* (հետալյուն՝ *al-Ḥiṭaṭ*), ց. 3, bi-taḥqīq Ayman Fuʿād Sayyid, Muʿassasat al-Furqān li-l-turāṭ al-ʿarabī (Al-Furqān Islamic Heritage Foundation, London, 2004), ց. 274, ինչպես նաև **Ibn Taǧrī Birdī**, *Al-Manhal al-Ṣāfi wa-l-Mustawfi baʿda al-Wāfi*, ց. 5, bi-taḥqīq Nabīl Muḥammad ʿAbd al-ʿAzīz, al-Hayʾa al-Miṣriyya al-ʿĀmma li-l-Kitāb, al-Qāhira, 1988, c. 231, h. 3.

⁴² Ձեռագրում  առանց դիակրիտիկ նշանների: Սամուիլ ալ-Սուրյանին բառը *t.ī.y.ḍ.h.ā* (تبيضا) է կարդացել, ինչը դժվարանում ենք բացատրել: Մեր կարծիքով պետք է *t.b.y.ḍ.h.ā* կարդալ, որ կնշանակի «դրանց սպիտակեցումը», այն է «կրածեփումը»:

⁴³ Ձեռագրի այս տեղում երկու էջի բացատ (լակունա) է: Հրատարակիչ Սամուիլ ալ-Սուրյանի կարծիքով այստեղ խոսքը հավանաբար Կահիրեի Սարյակուս թաղամասի վանքերից մեկի մասին է:

⁴⁴ Հակոբիկներ են կոչվում ուղղափառ ասորիները՝ իրենց եկեղեցու հիմնադիր հայր *Հակոբ Բարադետու* (կամ *Ծանծաղոս*, մահ. 578 թ.) անունով: Արաբական մատենագրության մեջ երբեմն այդպես են անվանում նաև դպտիներին:

⁴⁵ Ընդգծված բառը հավերժ ենք ձեռագրից. Հրատարակչն այն չի ընթերցել:

⁴⁶ Ղպտիական ուղղափառ եկեղեցու՝ 1166-1189 թթ. պատրիարք (թվով 73-րդ)՝ Մարկուս Գ: Հատկանշական է, որ նա «Ալեքսանդրիայի պատրիարքների պատմության» շարահարողներից մեկն է: Նրա հեղինակած հատվածն ընդգրկում է 1131-1167 թթ.:

Էջ 14-15

Այս թաղամասում⁴⁷ ալ-Մուսթանսիրի⁴⁸ խալիֆայության օրոք մեծ թվով ասորիներ էին ապրում, որոնցից էր Իբն ալ-Տաուիլ անունով մի մարդ: Սակայն հետո ամիր ալ-ժույուշ Բադրը այն բնակեցրեց հայերով՝ տեղահանելով այնտեղից ասորիներին, որոնք տեղափոխվեցին Դայր ալ-Խանդակում⁴⁹ գտնվող Անբա Բուլայի (Սբ. Պողոս) եկեղեցի Անբա Կյուրեղ 67-րդի⁵⁰ պատրիարքության օրոք⁵¹:

Այս թաղամասում (իմա՝ ալ-Հուսայնիյյա) հայերն այդ վանքին հարող եկեղեցի ունեն, որն ավերվել է դուզերի օրոք, երբ հայերը արաբական 564 թ. Ջու ալ-Հիջջա ամսում (1169 թ. օգոստոս-սեպտեմբեր) արտաքսվեցին Կահիրեից, մեծ մասն էլ սպանվեց թրով՝ հանուն Քրիստոսի⁵²: Գմբեթը երկար ժամանակ դեռ կանգուն էր, մինչև որ փանդվեց:

Այս թաղամասում (իմա՝ ալ-Հուսայնիյյա) քրիստոնյա հայերի թիվը՝ չհաշված նրանց, որ ապրում էին Կահիրեի թաղամասերում՝ ինչպես հյուսիսային, այնպես էլ հարավային կողմերում, մոտ 5 հազար հեծյալ էր՝ չհաշված կանանց, իսկ [միայն] հետևակայինների թիվը մոտ երեք հազար էր⁵³:

⁴⁷ Խոսքը Կահիրեի հայաշատ ալ-Հուսայնիյյա թաղամասի մասին է:

⁴⁸ Ֆարսիմյան պետության խալիֆա 1036-1094 թթ.:

⁴⁹ Բառացի՝ *Խանդակի կամ Խրամի մենաստան*: Խանդակը արվարձանային ավան էր Կահիրեի հյուսիս-արևելքում:

⁵⁰ Ղպտիական ուղղափառ եկեղեցու պատրիարք 1078-1092 թթ.:

⁵¹ Հաղորդման սկզբնաղբյուրը «Ալեքսանդրիայի պատրիարքների պատմությունն» է: Աբու ալ-Մաֆարիմը պարզապես համառոտել է *Մաուհուբ Իբն Մանսուր Իբն Մուֆարրիշի* հաղորդումը. «Կահիրեում Իբն ալ-Տաուիլ անունով մի ասորի կար: Նա և մի խումբ այլ ասորիներ ապրում էին Կահիրեին հարող ալ-Հուսայնիյյա [Թաղամասում], որը հաստատված էր որպես հայ գինավորականության կեցավայր: Ամիր ալ-ժույուշը (իմա՝ Բադր ալ-Ջամալին) հրամայեց, որ հայերից բացի ոչ ոք չսպիրի ալ-Հուսայնիյյայում: Նա այնտեղից հանել տվեց Իբն ալ-Տաուիլ Ասորուն և նրա հետ եղած ասորիներին: Նա ներկայացավ Ամիր ալ-Ջույուշին մի նամակով, որում խնդրում էր իրեն նվիրել Դայր ալ-Խանդակում եղած դատարկ եկեղեցիներից մեկը, որպեսզի ինքն ու իր ուղեկիցները հաստատվեն այնտեղ: [Ամիր ալ-Ջույուշը] բավարարեց նրա խնդրանքը և նրան եկեղեցի տրամադրեց այնտեղ Հուստոսի որդի Պողոս նահատակի անունով, ում մարմինն էր ամփոփված այնտեղ»: Տե՛ս *Tārīḥ al-baṭārika*, ց. 2, Տ. 189 և *HP*, vol. 7, pp. 355-356:

⁵² 1169 թ. Ֆարսիմյան վերջին խալիֆա ալ-Ադիդի (կառ. 1163-1169 թթ.) խաչակիրներից պաշտպանելու խնդրանքով Կահիրե են մտել Նուր ալ-Դինի բուրդ գորավար Շիրկունի գորբերը: Կարճ ժամանակ անց Շիրկունին արդեն յուրացրեց վեզիրի պաշտոնը: Երկու տարի անց՝ 1171 թ., Ֆարսիմյան խալիֆայությունը կնքեց իր մահկանացուն, և Շիրկունի զարմիկ Սալահ ալ-Դինի գլխավորությամբ երկրում նոր իշխանության գլուխ եկան Այյուբյանները: Հայ բնակչության արտաքսումն ու նրա նկատմամբ Այյուբյանների օրոք սկսված հալածանքները պայմանավորված էին նախկին կառավարող ռազմաֆաղափական վերնախավում և բանակում նրա ունեցած դերով:

⁵³ Ալ-Հուսայնիյյա թաղի հայկական հետքի մասին խոսում է նաև մամլուֆյան հեղինակ *Մուհի ալ-Դին Իբն Աբդ ալ-Ջահիրը*՝ Կահիրեի պատմաաշխարհագրական նկարագրությանը

Այս վաննն ամբողջությամբ պատկանում էր հակոբիկներին և հայերին, բայց [հետո] բաժանվել էր երկու մասի՝ ավելացվելով հակոբիկյան վանին:

Գետափնամերձ **ալ-Մակսամ** [թաղամաս]⁵⁴ (բնագրում՝ al-Maqs bi-l-qurb min sâhîl al-bahr –Գ. Գ.)

[Այստեղ է] սբ. Գևորգի վանքը, որը վերանորոգել է հայերի առաջնորդներից մեկը: Հետո այն ալ-Հաֆիմի խալիֆայության օրոք մզկիթի է վերածվել, ապա գետի տակ անցել:

Ալ-Ռայդանիյա⁵⁵

Ra's al-Ṭābiyya, Siqāyat Raydan («Ռայդանի առու» կամ «Ռայդանի ջրանց») և al-Bustān al-kabīr («Մեծ այգի») [անուններով] հայտնի թաղամասն է: Հիմնվել է ամիր ալ-ջույուշ Բադրի կողմից: Ռայդան ալ-Սակլարին⁵⁶ ալ-Հաֆիմ [խալիֆայի] հովանոցակիրն էր: Խալիֆաներն այնտեղ իջևանում էին ամեն տարվա սկզբին և Ռամադան ամսի սկզբին, որ կոչում էին «մեծ պտույտ»:

Էջ 17

Հայկական եղեղեցի՝ շատ հիանալի, որ հիմնել և վերաշինել է հայերից

նվիրված իր երկում: Նրա հաղորդումը հետագա հեղինակներից փոխառել են *ալ-Մակրիզին*, *ալ-Կալկաշանդին* և *Աբու ալ-Մահասին իբն Քադրի Բիրդին*: Իբն Աբդ ալ-Չահիրը գրում է. «Ալ-Հուսայնիյան [ութ թաղամաս ուներ]՝ Համիրի թաղամասը, Մեծ շինուվյունը, Փոքր շինուվյունը, Մեծ թաղամասը, Միջանկյալ թաղամասը, Մեծ շուկայի թաղամասը և ալ-Վազիրիյան: Այն ամբողջությամբ հայերի բնակատեղին էր՝ ինչպես հեծյալների, այնպես էլ հետևակայինների, [որոնց թիվը մոտ յոթ հազար էր կամ դրանից էլ ավելի]»: Այս վերջին [...] փակագծերում առնված հատվածը Իբն Աբդ ալ-Չահիրի երկի մեզ հասած օրինակում բացակայում է, և հրատարակիչը նախադասության վերջավորությունը լրացրել է ալ-Մակրիզիի երկից: Տե՛ս **Ibn 'Abd al-Zāhir**, *Al-Rawḍa al-bahīyya al-zāhira fī ḥiṭaṭ al-mu'izziyya al-Qāhira*, bi-taḥqīq Ayman Fu'ād Sayyid, al-Dār al-ʿarabiyya li-l-kitāb, 1996, թ. 122-123, և հմմտ. **Al-Maqrīzī**, *Musawwadat Kitāb al-Mawā'iz wa-l-i'tibār bi-dīkr al-ḥiṭaṭ wa-l-aṭār, bi-taḥqīq Ayman Fu'ād Sayyid*, Landan, *Mu'assasat al-Furqān li-l-turāt al-Islāmī*, 1995, թ. 385; **Ֆայնի**՝ *al-Ḥiṭaṭ*, թ. 3, թ. 62; **Al-Qalqašandī**, *Ṣubḥ al-aṣā*, թ. 3, al-Maṭba'a al-amīriyya, al-Qāhira, 1914, թ. 360; **Ibn Taḡrī Birdī**, *Al-Nuḡūm al-zāhira fī mulūk Miṣr wa-l-Qāhira*, թ. 4, bi-taḥqīq Muḥammad Ḥusayn Šams al-Dīn, Dār al-kutub al-ʿilmiyya, Bayrūt, 1992, թ. 48-49:

⁵⁴ **Al-Maqrīzī**, *Musawwada*, թ. 325-326 և **Ֆայնի**՝ *al-Ḥiṭaṭ*, թ. 2, թ. 562-563.

⁵⁵ Այժմ՝ ալ-Աբբասիյա:

⁵⁶ Գատելով անունից՝ սլավոնական ծագում է ունեցել:

Սարգիսը⁵⁷, ով *hāmī al-munāḥāt*-ն էր ալ-Ջաֆիրի խալիֆայության⁵⁸ և Ալի [ի]բն Ասասալլար ալ-Դայլամիի⁵⁹ վեզիրության օրոք:

Բար ալ-Դարբին հարակից եկեղեցի՝ Սուրբ Աբու Մակարի անունով, որ պատկանում էր ղպտիներին: Բայց երբ Ադրիդուրյուար (դեռ կֆննարկենք, թե ով է-Գ.Գ.) Մեծ Հայքի պատրիարքը, Ալիական պետություն⁶⁰ եկավ՝ ալ-Մուսթանսիրի խալիֆայության և ամիր ալ-ջույուշ Բադրի վեզիրության օրոք, տեսավ, որ Խանդակի եպիսկոպոսն այնտեղ խոտ է պահեստավորում: Նա աղոթելու թույլտվություն խնդրեց նրանից, վերջինս թույլ տվեց և բացեց այն: Այն բանից հետո, երբ Ամիր ալ-Ջույուշը բացահայտեց անասնակերի և [եկեղեցին] պահեստի [վերածելու] մասին լուրերը և համոզվեց դրանց իսկության հարցում, այն այդուհետ հայերի ձեռքը հանձնեց՝ ընդհուպ մինչև օրս⁶¹: Սա պատահեց Կյուրեղ 69-րդ պատրիարքի պատրիարքության օրոք: Այն վերանվանվեց Սուրբ Գևորգի անունով: Նրա առջև թոնրատուն կա՝ սուրբ հաղորդության հացը և [առհասարակ] հաց թխելու համար: Այն կամարակապ գմբեթ ունի⁶²:

⁵⁷ Բնագրում իրականում *Շարքիս (Šarkīs)* է: Այս Սարգսի մասին այլ տեղեկություններ արարալեզու պատմագրության մեջ գտնել չի հաջողվում: Ալ-Մակրիզիի «*Խիտատ*»-ում ակնարկ կա լոկ *hāmī al-munāḥāt* ռազմական պաշտոնի մասին՝ միայն թե բացատրված չէ, թե մասնավորապես ինչի համար էր պատասխանատու այդ պաշտոնյան: Տե՛ս *Al-Maqrīzī, al-Ḥiṭat, ǧ. 2, ʃ. 335*: Այնուամենայնիվ, ալ-Կալկաշանդիի *Subḥ al-a ʃā* երկից իմանում ենք, որ *al-munāḥāt* էին կոչվում ուղտերի ախոռները, և հետևապես, հիշյալ Սարգիսը եղել է արևմտիսի ուղտերի ախոռների վերատեսուչը: Տե՛ս *Qalqašandī, Subḥ al-a ʃā, ǧ. 3, ʃ. 479*:

⁵⁸ Ֆարսիական պետության խալիֆա 1149-1154 թթ.:

⁵⁹ Ալ-Ադիլ իբն ալ-Սալլարն է, որը ալ-Ջաֆիրի վեզիրն է եղել 1149-1153 թթ.:

⁶⁰ Խոսքը Ֆարսիական խալիֆայության մասին է:

⁶¹ Միջադեպի աղբյուրը կրկին «Ալեքսանդրիայի պատրիարքների պատմությունն» է: Հմմտ. *Tārīḥ al-baṭārika, ǧ. 2, ʃ. 189; HP, vol. 7, p. 356*:

⁶² Ձեռագրի էջը տե՛ս ստորև՝ Հավելված Գ: «Ալեքսանդրիայի պատրիարքների պատմությունն»-ից կարող ենք հավելում կատարել. «Աստված այնտեղ շատ ու շատ հրաշքներ է գործել իր սբ. Գևորգ նահատակի ձեռքով, և ուրիշ եկեղեցիներում նույնպես, որ նրա անունն են կրում: Օրինակ, ասում են, որ [մի անգամ] *Banū Khilāf* ցեղից մի բեդվին մտել է նրա անունով Գամալուտի եկեղեցի՝ [Կուվիսնայի շրջանում]: Նա կանգ է առել և սկսել կովել նրա պատկերի հետ, մինչև որ նա (սբ. Գևորգը) սրի է քաշել նրան, և վերջինս մեռել է»: Տե՛ս *Tārīḥ al-baṭārika, ǧ. 2, ʃ. 189*: Գ. Մըսլեանը Խանդակի սբ. Գևորգ եկեղեցուն՝ հայերին պատկանած լինելու մասին տեղեկությունը ֆաղում է Թ. Գուշակեանի գրքից՝ չկարողանալով պարզել նրա օգտագործած աղբյուրը: Տե՛ս Թ. Գուշակեան, *Եգիպտոսի հայոց հին և արդի եկեղեցիները*, տպ. Յաբէթ-Պաղտասար, Գանիթ, 1927, էջ 12-18 և հմմտ. Գ. Մըսլեան, *Ականաւոր Հայեր*, էջ 160-161: Պարզվում է Թորգոմ Գուշակեանին Կանիթեի ղպտիական թանգարանի վարիչի՝ Սիմայկա Փաշայի (ոս վերը հիշատակել ենք որպես Ղպտիական գրադարանի ձեռագրացուցակի հեղինակի) օգնությամբ թարգմանվել և հասու են դարձել «Ալեքսանդրիայի պատրիարքների պատմության» հայերին վերաբերող մի շարք էջեր: Տե՛ս Թ. Գուշակեան, *Եգիպտոսի հայոց հին և արդի եկեղեցիները*, էջ 10:

էջ 63

Կովայսիմա: Այնտեղ Անբիծ Տիրամոր անունով եկեղեցի կա՝ երեք խորաններով՝ մեկը ղպտիների, մեկը՝ հայերի, մյուսը՝ մելքիսների համար:

Տանահը՝ Մուրթահիլյայի շրջանում: Այնտեղ վանք կա Սուրբ Գևորգի անունով: Եվս մի վանք կա, որը վերանորոգել է հայերի առաջնորդ շեյխ Թաջ ալ-Դաուլա Բահրամը:

էջ 64

Դումուճ՝ Դակահիլյա [շրջանում]: Տիրուհու անունով մի վանք՝ ղպտիների և հայերին պատկանող:

էջ 65

Մինյաթ Շահա՝ ալ-Դակահիլյա [շրջանում]: Երեք վանք՝ մեկը հայերին պատկանող, մեկը՝ ղպտիներին՝ Սուրբ Գևորգի անունով, և մյուսը՝ մելքիսներին:

Ալ-Բարմունյան՝ ալ-Դակահիլյա շրջանում: Երկու վանք կա՝ ղպտիներին պատկանող Սուրբ Կույսի անունով մի վանք, մյուսը՝ հայերին պատկանող: Ինչպես նաև մելքիսներին պատկանող մի վանք:

Մինյաթ ալ-Նասարա՝ ալ-Դակահիլյայի հարավում: Բնակավայրի կենտրոնում հայերին պատկանող մի վանք կա՝ Սուրբ Գևորգի անունով:

էջ 67

Ալ-Բահվ: Նրա արևելյան կողմում կա Սուրբ Կույսին նվիրված մի վանք և հայերին պատկանող մի ուրիշ վանք:

Շարնաֆաջ (Շարնակաս – Գ.Գ.): Այնտեղ կան Սուրբ Կույսին և պաշտելի սուրբ Գևորգին նվիրված վանքեր, ինչպես նաև հայերին պատկանող մի վանք:

էջ 69

Դաջսաթ ալ-Ղարբիլյա: Այնտեղ հինգ վանք կա. մեկը՝ ղպտիներին պատկանող Սուրբ Կույսի [վանքը], մեկ ուրիշը՝ պաշտելի⁶³ հրեշտակապետ Միհայելին նվիրված, ինչպես նաև հայերին պատկանող երեք վանք:

⁶³ Ընդգծված բառը (*al-ğalīl*) բացակայում է հրատարակված տեքստից և լրացվում է ձեռագրից:

Էջ 71

Ֆիշա: Այնտեղ մի ֆանի վանքեր կան: Հակոբիկները երեքն ունեն, իսկ թե շրջակայքում մեկփուններն ու հայերը ֆանիսն ունեն, տեղեկություն չունեն, որ հիշատակեն:

Էջ 104

Կյուրեղ 67-րդ պատրիարքի հովվապետության օրոք մի սուրբ հայ վանական էր եկել հայոց երկրից՝ ալ-Մանաֆիս անունով, ով իր մարմնին երկաթյա հագուստ ուներ հագած՝ վրայից մագից հյուսած ֆուրձ: Նրա կատարած սրբազորություններից էր այն, որ [մի օր] նրա մոտ բերեցին մի երիտասարդի, որը տառապում էր սատանայի հոգուց: Նա նրան տանջում էր ամեն օր, և սա տեղի էր ունենում Ալեֆսանդրիայում: Հայերից մի վանական եկավ և ջուր ստեղծեց խեցամանում⁶⁴: Նա [սուրբ] գրքեր կարդաց նրա վրա, ապա այս սուրբը վերցրեց այդ ջրից և լողացրեց երիտասարդին: Նեոն այդժամ դուրս եկավ նրա միջից, և երիտասարդն այս սրբի աղոթքի ուժով ապափնվեց: Ապա վերջինս գիտակից և ողջ մնաց նրա մոտ՝ գրել սովորելու նպատակով⁶⁵:

ԵՐՐՈՐԳ ՀԱՏՈՐ

Էջ 32

Հայերին պատկանող և Մատթեոս աշակերտի անունով մի եկեղեցի՝ Սիոնի (արաբ.՝ Şahyūn) վանքի տակ, որի մերձակայքում գերեզմաններ կան:

Էջ 39

Հովհաննես Մկրտչի հայկական վանքն ու այլ վանքեր

Bāb al-qiyāma-ի ([Սբ.] Հարության դարպաս) մոտ մի հայկական վանք կա՝ Զաֆարիա ֆահանայի որդի Հովհաննեսի անունով⁶⁶: Եվս մի հայ-

⁶⁴ Բնագիրը հրատարակողը *qaysariyya* է կարդացել, մինչդեռ ձեռագրում իրականում *qasriyya* է: «Ալեֆսանդրիայի պատրիարքների պատմության» համապատասխան հատվածում նույնպես *qasriyya* է, որը «խեցաման», «ծաղկաման», «գիշերանոթ» է նշանակում:

⁶⁵ Հաղորդման սկզբնաղբյուրն անկասկած «Ալեֆսանդրիայի պատրիարքների պատմությունն» է, ընդ որում պարզվում է, որ Մաուհուբ իբն Մուֆարրիջն անձամբ տեսակցել է հիշյալ սրբին: Լրացնելի է այն, որ «...[ալ-Մանաֆիսը] մտեց էր Աբու Մակարի անապատը՝ միանալով Բասսուս անունով սուրբ վանականին՝ հրճվելով այն ամենի համար, ինչին ականատես էր եղել նրա սրբությունից: Ապա նա Ալեքսանդրիա է ժամանել, և մենք բանավիճել ենք նրա հետ կրոնի հարցերի շուրջ՝ համոզվելով նրա ուղղափառ հավատի ճշտության և նրա քրիստոնեական կրոնի ճշմարտացիության մեջ»: Տե՛ս *Tārīḥ al-baṭārika*, ց. 2, ք. 183-184 և *HP*, vol. 7, p. 345:

⁶⁶ Սբ. Հովհաննես եկեղեցի:

կական վանք կա առաքյալներից գլխավորագույնի՝ Պետրոսի անունով, Երուսաղեմի Bāb ...⁶⁷-ի մոտ՝ Դավթի աշտարակին մերձ: Այնտեղ է գտնվում նաև Bāb al-bustān-ը (բառացի՝ «Այգիների դարպաս»), որը հիմնել է արքաներից մեկը և հայտնի է Իբրահիմի մենաստան (Dayr Ibrāhīm) անունով:

Էջ 40

Եվս մի վանք Սարգիս նահատակի անունով, որտեղ մի խումբ սուրբ ճգնակյացներ կան:

Եվս մի հայկական վանք⁶⁸, որտեղ ամփոփված է Զեբեդեոսի որդի Հակոբոս առաքյալի անարատ մարմինը, ինչպես նաև սարկավագապետ և նախավկա Ստեփանոսի մարմնից աչ ձեռքը, որը Պողոս առաքյալի⁶⁹ ֆրոջ որդին էր:

Էջ 60

Անտիոքին մերձ գտնվում են Սև լեռները, որոնց շրջակայքում 700 հայկական վանք կա⁷⁰, որոնցից յուրաքանչյուրը շրջապարիսպ, աշտարակ ունի,

⁶⁷ Բնագրում՝ *Bāb al-Quds* է: Դարպասի անվանումը կարծես թե ընկած է տեխստից:

⁶⁸ Սրբոց Յակոբեանց վանքն է:

⁶⁹ Բնագրում *al-rasūl al-muntaḥab* է, որը հրատարակիչը *al-ra'īs al-muntaḥab* է կարդացել:

⁷⁰ Սև կամ Ամանոսի լեռների վանքերը ոչ միայն հոգևոր ծառայության և ճգնակեցության, այլև դպրության և մատենագրության խոշոր կենտրոններ էին, որտեղ սովորել կամ գործել են իրենց ժամանակի շատ առաջադեմ այբեր (օրինակ՝ Գրիգոր Բ Վկայասեր, Գրիգոր Գ Պահլավունի, Ներսես Շնորհալի, Միքայել Գոշ և այլք): Այդ վանքերի վերաբերյալ միջնադարյան աղբյուրներում պահպանված տեղեկությունների սղության պատճառով, հայագիտությանը հայտնի չեն նրանց մեծ մասի անվանումները և տեղադրությունը: Հայկական վանքերից բացի, Սև լեռներում շատ էին նաև ասորական, հունական, լատին և վրացական վանքերը: Սև լեռների հայկական վանքերի մասին տե՛ս **J.J.S. Weitenberg**, “The Armenian Monasteries in the Black Mountain,” *East and West in the Medieval Eastern Mediterranean I. Antioch from the Byzantine Reconquest until the End of the Crusader Principality* (Orientalia Lovaniensia Analecta, 147), Leuven-Paris-Dudley, MA, ed. by **K. Ciggaar and M. Metcalf**, 2006, pp. 79-93, ինչպես նաև **Է. Շիրինյան**, «Կրթությունը Կիլիկյան Հայաստանի Սև լեռան հայկական վանքերում», *ԲՄ*, № 21, 2014, էջ 351-362: «Տեղեկեցիների և վանքերի պատմության» վկայությունները Սև լեռների անապատների վերաբերյալ, անշուշտ, հետաքրքիր են: Մեզ, այդուհանդերձ, միջնադարյան արաբական աղբյուրներից այլ տեղեկություններ էլ են հայտնի Սև լեռների և տեղի հայ հոգևորականության մասին: Օրինակ, հալեպցի պատմիչ **Իբն ալ-Ադիմի** (մահ. 1262 թ.) մոտ կարդում ենք. «Սև լեռներն արևելքից հարում են ալ-Լուքքամի լեռներին: Ասում են, որ Իբրահիմը, Ալլահն ազդեցի նրա համար և ողջունի, Հալեպում եղած ժամանակ իր հովիվներին ուղարկում էր այնտեղ, որ իրենց հոտերն արածեցնեն: Այնտեղ շատ ծառեր կան [թեև] ոչ պտղատու, որոնցից փայտ են հատում նրա շրջակա երկրներ տանելու համար: Այնտեղ է գտնվում Դարպասկ ամրոցը, որ անառիկ բերդ է: Այն արևելքից եզերում է Սև գետը (*al-Nahr al-Aswad*), որը հիշատակել ենք արշուճալի մարտերի մասին խոսելիս, թե ինչպես են հոռոմները ճակատամարտում ճամբարել նրա մոտ: Այն նաև Անեծքի գետ է կոչվել: Այս լեռները հասնում են մինչև

որոնց շուրջը՝ վանականների համար նախատեսված մենախցեր: Այնտեղ եպիսկոպոս կա և 700 և ավելի ճգնակյաց վանական:

Եվս մի հայկական մենաստան՝ Դ.բ. al-miṭraqa⁷¹ անունով, որտեղ ամփոփված է Լեոնի որդի [Թո]րոսի⁷² մարմինը: Այն շուրջակա պարսպ ունի, և նրա շուրջը կան մենախցեր, որոնցում 900⁷³ ճգնակյաց և սուրբ վանական կա:

էջ 66

Սև լեռների անապատներ

[Արդեն] հիշվել են Սև լեռներում գտնվող մի շարք վանքեր: Հայերն

Սարֆադ (իմա՝ Սարվանդիքար), որը ամուր բերդ էր հայերի ձեռքին: Այնտեղ մեծ թվով հոգևոր սպասավորներ և վանականներ կան»: Տե՛ս **Ibn al-ʿAdīm**, *Buḡyat al-ṭalab fī tāriḫ Ḥalab*, ց. 1, bi-taḥqīq Suhayl Zakkār, Bayrūt, 1988, ց. 438: Արաբագիր հեղինակները Սև լեռները երբեմն նաև «Հայկական լեռներ» են կոչել, ինչպես օրինակ Աբու ալ-Ֆիդան (մահ. 1331 թ.) և նրանից օգտված ալ-Կալկաշանդին (մահ. 1418 թ.). «Ալ-Լուքքամի լեռները ձգվում են նաև դեպի հյուսիս, մինչև որ հասնում են Սահյունին, ալ-Շուդրին, ալ-Բաքքասին և ալ-Կուսեյրին: Հիշյալ լեռներն ավարտվում են Անտիոքի մոտ և կտրվում, և նրանց առջև երևան են գալիս Հայոց լեռները: Ալ-Ասի (Օրոնտես) գետը հոսում է դրանց և Հայոց լեռների միջև և բաժանում նրանց, մինչև որ ալ-Սուվայդիյայի մոտ թափվում է ծովը»: Տե՛ս **Abū al-Fidāʾ**, *Taqwīm al-buldān (Géographie d'Aboulféda*, ed. M. Re naud et W. Mac Guckin de Slane, Paris, 1840), ց. 69 և հմմտ. **al-Qalqašandī**, *Ṣubḥ*, ց. 4, ց. 86:

⁷¹ Հմմտ. **Cl. ten Hacken**, *The Description of Antioch*, p. 205: Հեռաբերի է այս վանքին տրված *Դ.բ. al-miṭraqa* անվանումը: Դժվարանում ենք վստահորեն բացատրել *t.բ.* բառը: Եթե հիշտ կլինի *ṭarab* կարգալ, ապա կարելի է «դողանջ» հասկանալ: Մյուս բաղադրիչը՝ *al-miṭraqa* (բառացի՝ «մուրճ»), ծագում է արաբերեն *t.բ.գ* արմատից՝ «հարվածել», «խփել», «գարկել»: Կարծում ենք՝ անվանումը պետք է որ լինի «Դրազարկ» (իմա՝ «դռան զարկ») կամ «Թրի զարկ») անվանման աղավաղված թարգմանությունը: Ուստի իստիք հավանաբար, Սաի արևելյան կողմից արևմուտքի՝ Դրազարկի վանական համալիրի մասին է (Սաից մոտ 35 կմ դեպի արևմուտք), որտեղ գտնվում էր Ռուբինյան պայազատների իշխանական դամբարանը: Բացի Թորոս Բ-ից (1145-1168 թթ.), որի մասին ակնարկ կա հանրորդման մեջ, Դրազարկում են թաղվել նաև Թորոս Ա-ը, Թորոս Գ-ը, Ռուբեն Գ-ը, Հեթում Ա արքան, Զարեկ թագուհին, Կեռան թագուհին, Օշին Ա արքան (1308-1320), ինչպես նաև Կիլիկիո հայոց մի շարք կաթողիկոսներ և այլ եկեղեցական գործիչներ (Գրիգոր Գ Տղա, Գրիգոր Ե Քարավեժ, Հովհաննես Զ Սսեցի, Կոստանդին Ա Բարձրբերդի, Կոստանդին Գ Դրազարկցի, Սարգիս Պիժակ, Գևորգ Մեղրիկ և այլն): Դրազարկի վանքի մասին տե՛ս Զ. Զ. **Ոսկեան**, *Կիլիկիայի վանքերը*, Մխիթարյան տպարան, Վիեննա, 1957, էջ 151-199; **C. Mutafian**, *L'Arménie du Levant (XIe-XIVe siècle)*, t. 1, Les Belles Lettres, Paris, 2012, p. 617-620, ինչպես նաև **S. Grigoryan**, «The Location of Drazark, Burial Place of the Kings and Queens of Armenia and of the 'Blessed Rubenians',» *Zeitschrift für Armenische Philologie (ՀԱ)*, 1-12, 2017, էջ 61-84:

⁷² Հրատարակիչը *rūs* է կարդացել՝ *T.rūs.* (Թորոս)-ի փոխարեն:

⁷³ Հրատարակիչը 700 է կարդացել, մինչդեռ տեքստում կարծես թե իրականում 900 է՝

سبع مائة:

այնտեղ 700 մենաստան ունեն՝ բնակեցված եպիսկոպոսներով, ֆահանաներով, վանականներով, հզնավորներով և մենակյացներով՝ [դեռ] չհաշված այն վանքերը, որոնք չեն հիշատակվել՝ նրանցում վանականների քիչ լինելու պատճառով: Նրանցից յուրաքանչյուրում մոտ 10 վանական կա՝ ի լրումն այն անհաշվելի թվով վանականների, որոնք Անտիոքի շրջակայքում կան, Կեսարիայում, Մարաշում, Տարսուսում, Կիլիկիայում և հարակից այլ վայրերում⁷⁴:

Էջ 114

Հայաստան (Arminya)

Այն հայոց թագավորության արձան է (*kursī mamlakat al-Arman*): Իսկ հայերն այդպես են կոչվում *Arām ibn Nāhūr ibn Tārih Abū Ibrāhīm*-ի (Աբրահամի հայր Թարայի որդի Նահորի որդի Արամի) անունով⁷⁵: Ասում են [նաև], որ Արամը Սեմի որդիներից էր:

Այնտեղի ամենամեծ վանքն է [այն մեկը], որտեղ թաղված է Նաթանայելը և Բարդուղիմեոսը⁷⁶ 12 աշակերտներից մեկը:

Մի վանք Հայաստանում, որը կառուցել է Դիոնիսիոսը՝ հոռոմների արքան (ն՞վ է – Գ.Գ.): Այնտեղ բազմաթիվ վանքեր կան: Հայերը շատ էին հպարտանում վանքերի կառուցմամբ: Հայաստանի բոլոր վանքերը բնակեցված են ֆահանաներով և ժողովրդով:

Էջ 117

Հռոմկլա

Հռոմկլան հայոց երկրինն է՝ գետի մեջ: Նրա վերևում մեծ եկեղեցի կա, որտեղ գտնվում է պատրիարքի կացարանը: Հռոմկլայում և նրա շրջակա շենքերում մոտ 700 եկեղեցի կա և մի մեծ վանք: Նրա մասին ասում են, որ

⁷⁴ Հմմտ. **Cl. ten Hacken**, *The Description of Antioch*, p. 205:

⁷⁵ Հեղինակը փորձում է ստուգաբանել *al-arman* («հայեր») եթնոնիմը՝ ակնհայտորեն նկատի ունենալով հայոց Արամ նահապետին: Այնուամենայնիվ, ըստ Մենդոց գրքի՝ Նահորն *Արամ* անունով որդի չի ունեցել: Հայկական ավանդույթը (սկսած Մովսես Խորենացուց) հայ ժողովրդի ծննդաբանությունը կապում է Նոյի որդիներից Հաբեթի սերունդների հետ:

⁷⁶ Նոր Կտակարանում հիշատակվող Նաթանայելն ու Բարդուղիմեոսը շատ հաճախ նույնացվում են: Նաթանայել Բարդուղիմեոսը Հայ Առաքելական եկեղեցու հիմնադիրներից մեկն է՝ Սբ. Թադևոսի հետ: Վասպուրական աշխարհի Ադրակ գավառում նրա անունով հայտնի էր մի վանք, որն ըստ ավանդության կառուցված է առաջյալի գերեզմանի վրա: Խոսքը հավանաբար հենց այս վանքի մասին է: Տե՛ս **Հ.Ս. Էփրիկեան**, *Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան*, հ. Ա (Ա-Ը), Վենետիկ, Սուրբ Ղազար, 1902, էջ 385-387, **Հ. Ոսկեան**, *Վասպուրական-Վանի վանքերը (Գ մաս)*, Մխիթարեան տպ., Վիեննա, 1947, էջ 785-805, **M. Van Esbroeck**, “The Rise of Saint Bartholomew’s Cult from the Seventh to the Thirteenth Centuries,” *Medieval Armenian Culture*, ed. by **Th. J. Samuelian & M.E. Stone** (University of Pennsylvania Armenian Texts and Studies 6), 1984, pp.160-178; **M. Van Esbroeck**, “La Naissance du culte de Saint Barthelemy en Arménie,” *REArm*, t. 17, 1983, pp. 171-195:

նա չի օգտագործում բալասանի յուղը մկրտության [ծիսակարգում], քանի որ այն մուսուլմանների ձեռքով է մշակվում: [Փոխարենը] նա ֆնջոս է մշակում, որի յուղն ստացվում է հայ հոգևորականների և ֆահանանների ձեռքով, և դրանով էլ մկրտում է⁷⁷:

Վերը բերված հատվածներից իմացանք, որ «եկեղեցիների և վանքերի պատմության» ցայժմ հայագիտությանն անհայտ էջերում տեղեկություններ կան եգիպտոսի հայոց պատրիարք Գրիգորիսի և գուցե նաև Վահրամ-Գրիգոր Բ Վկայասեր կաթողիկոսի մասին, որոնց քննարկմանը հարկ ենք համարում քիչ ավելի հանգամանալից անդրադառնալ:

Հիշյալ Գրիգորիսը Գրիգոր Ապիրատ Մագիստրոսի որդի Ապլջահապի որդին էր, 1135-1137 թթ. եգիպտոսի վեզիրի պաշտոնը զբաղեցրած Վահրամ Պահլավունու (Բահրամ ալ-Արմանի), ինչպես նաև Վասակ և Ապիրատ Պահլավունիների եղբայրը, Գրիգոր Բ Մեծ Վկայասեր կաթողիկոսի քեռորդին:

Գրիգորիսի մասին առաջին վկայությունն արաբալեզու մատենագրության մեջ գտնում ենք «Ալեքսանդրիայի պատրիարքների պատմության» մեջ: Մաուհուբ իբն Մանսուր իբն Մուֆարրիջը գրում է. «Նահատակաց 803 թ. արիբ (1087 թ. հունիս-հուլիս) ամսին Կոստանդնուպոլսից մի նավ է ժամանել Ալեքսանդրիա, որում եղել է մի երիտասարդ այր՝ պաճուճագարդ, իր ուղեկիցների և սպասավորների հետ: Նրա մասին ասում էին, որ նա Հայոց պատրիարքն է, և նրա անունը Գրիգորիս էր (Ağrığünīs), [ինչպես նաև] նրանց նախորդ կաթողիկոսի քեռորդին էր և սերում էր Սենեքերիբ արքայի⁷⁸ զարմից, և որ նրա մորեղբայրը պատրիարքությունը նրան էր փոխանցել և ուղարկել եգիպտոս՝ տալով իրեն սրբերի թանկագին մասունքներ, ոսկյա խաչեր և այլ իրեր⁷⁹:

«... Հետո Հայոց պատրիարքը եկավ Կահիրե և մեծ պատվով ընդունվեց Ամիր ալ-Ջույուշի կողմից, ապա իջևանեց մելքիսեանցին պատկանող Սուրբ Մարիամի եկեղեցում՝ ալ-Ջումրի թաղում՝ Աբու Կոզման պաշտելի նահատակի եկեղեցու մերձակայքում, որը հակոբիկներին էր պատկանում:

⁷⁷ Հռոմկլայի հայրապետական արքեպիսկոպոսի պատմության արաբական սկզբնաղբյուրներին մենք մի ծավալուն հոդված ենք նվիրել, որը գրելիս «եկեղեցիների և վանքերի պատմության» այս հետաքրքիր հաղորդումը մեզ անհայտ է եղել: Տե՛ս Գ. Գանիեյան, «Հռոմկլայի հայրապետական արքեպիսկոպոսի պատմության արաբական սկզբնաղբյուրները», Ա. Բոզոյան (խմբագիր), Ռ. Շոմուրով, Վ. Տեր-Վանդյան, Գ. Գանիեյան, Կիլիկյան Հայաստանը սահմանակից պետական միավորների ընկալումներում (պատմաբանասիրական ակնարկներ), Երևան, 2016, էջ 199-288:

⁷⁸ Խոսքը, հավանորեն, Վասպուրականի վերջին թագավոր Սենեֆերիմ-Հովհաննես Արծրունու մասին է: Գրիգորիսը, անշուշտ, այսպես է ներկայացել իր պնդման հավաստիության նկատմամբ կասկածներ չհարուցելու նպատակով:

⁷⁹ *Tārīḥ al-baṭārika*, ց. 2, թ. 183 և *HP*, vol. 7, pp. 344-345.

Այն մոտ էր Կանիիրեի (al-Qāhira) և Miṣr-ի (իմա՝ Ֆուստատը կամ Հին Կանիիրեն – Գ. Գ.) միջև գտնվող կամրջին, և մինչ օրս էլ էլ այնտեղ է ապրում և բնակվում: Հետո հանդիպեց նաև սրբազան Հայր Կյուրեղ պատրիարքի հետ, որը նրան հարգանքի արժանացրեց և ուրախացավ նրա ներկայությունից: Նա (Գրիգորիսը – Գ. Գ.) ընդունեց ուղղափառ նշմարիտ հավատը, որ [նաև] մեր հավատն է, հակոբիկների ժողովում, որ այդ օրը կայացավ մեծ բազմության ներկայությամբ մեր հայր սբ. Կյուրեղ պատրիարքի մենախցում, և համայն ժողովուրդն իմացավ ղպտիների, հայերի, ասորիների, եթովպացիների և նուբիացիների՝ ուղղափառ նշմարիտ հավատի հարցում ունեցած համերաշխության մասին, որի հետ համաձայն են եղել սրբազան հայրերը, և որին Նեստորը, Լևոնն ու Քաղկեդոնի ժողովն են հակառակվել»⁸⁰:

Հատկանշական է, որ Գրիգորիսի՝ եգիպտոս այցելության մասին հաղորդումներն իրենց արձագանքն են գտել նաև Յուսաբին վերագրվող «Պատրիարք հայրերի պատմության» մեջ, թեև նկատելի տարբերություններով: Բնագրում կարդում ենք. «Ապա Հռոմների երկրից ժամանեց հայոց պատրիարքը՝ այցելելու համար եգիպտոսում եղած հայերին: Նա իր հետ ուներ սրբերի մասունքներ: Ալեքսանդրիայի դիվանապետը (ṣāhib dīwān) պահանջեց, որ մասունքների համար նրանցից մի բան (իմա՝ «մախային տուր») վերցվի: Նա գրեց Ամիր ալ-Ջույուշին՝ հայտնելով նրան, որ ֆրիստոնյաները մեծ ակնածանք ունեն այս նշխարների նկատմամբ, թեև պարտավոր են նրանցից դրանց համար գումար վերցնել: Դրա համար փաստարկ էր այն, որ սբ. Մարկոսի գլուխը գտնվում էր Բանու Մուֆարիջի մոտ, և նրանք դրա համար 10 հազար դինար էին տվել, բայց չէին վաճառել: Նրանք այդպես նպատակ ունեին պատրիարքից էլ մի բան վերցնել Մարկոսի գլխի»⁸¹ դիմաց:

[Իսկ նախքան այդ] մի հայ վանական էր Աբու Մակարի անապատ եկել, ապա այնտեղից [ուղևորվել] Ալեքսանդրիա՝ հայր պատրիարքի մոտ: Նա նրանից կեցավայր էր խնդրել, և վերջինս տվել էր նրան: Ապա նրան էին միացել բազմաթիվ հայեր, որ [մշտապես] այցելում էին նրան, քանի որ զորքի մեծամասնությունը հայեր էին: Նա իր մաշկի վրա երկաթյա հանդերձանք էր կրում, որի վրայից՝ մազե հագուստ: Նրա սրբությունը հայտնի դարձավ, երբ նրա մոտ մի հիվանդ մարդ բերեցին: Նա ջրի վրա շատ աղոթքներ կարդաց, լողացրեց նրանով, և նա բուժվեց: Վերջինս մի միտք հղացավ, և այնքան շանաց, որ Ամիր ալ-Ջույուշից մի թուղթ ստացավ, որ [ոչ ոք] չհակառակվի հայոց պատրիարքին, ով իր հետ ուներ սբ. Բարդուղիմեոս առաքյա-

⁸⁰ *Tārīḥ al-baṭārika*, ց. 2, Տ, 184 և *HP*, vol. 7, pp. 345-346.

⁸¹ Բնագիրը սխալաշատ է, տեղ-տեղ խրթին և անհասկանալի: Հավանաբար պետք է լինի ոչ թե «Մարկոսի գլուխը», այլ «Բարդուղիմեոսի գլուխը», ինչը հետևում է շարադրանքի արամաբանությունից:

լի գլուխը, Աղրիղուրիս (Գրիգոր) Հայի ձեռքը⁸², Հովհաննես Մկրտչի ձեռքը, [Քրիստոսի] խաչից մի կտոր և սրբերի ոսկրեր, որոնցով օրհնվեց ժողովուրդը, որից հետո նա Կահիրե անցավ: Ինչ վերաբերում է սբ. Մարկոսի գլխին, ապա վախից թափցրին այն՝ վախենալով, որ նրա համար էլ մի բան կպահանջեն: Ապա հայոց պատրիարհը տեղ պահանջեց Խանդակի մենաստանում, բայց չավեցին նրան: Ամիր ալ-ջույուշը նրան տեղ հատկացրեց Աբու Մակար Ավագի եկեղեցուն մոտ, որ կոչվում էր Հովհաննես Մկրտչի անունով: Նա բնակություն հաստատեց և սկսեց այնտեղ ապրել, որ այժմ ալ-Ջունրա է կոչվում: Հայոց պատրիարհն օրհնվեց Անբա Կյուրեղ պատրիարհի կողմից՝ [ֆննարկելով նրա հետ] հավատի միասնության, [սբ.] հաղորդության և մկրտության [հարցերը]: Եվ յուրաքանչյուր հայ, ինչպես նաև ասորի, հաստատապես իմացավ, որ հավատի հարցում [համերաշխ է] եթովպացիների և նուբիացիների հետ: Ապա հայոց պատրիարհն [աղոթա]-տեղի պահանջեց Անբա Անդունայի անապատում, բայց մերժում ստացավ, որովհետև այն հայերին չէր պատկանում: Ապա նա անցավ Սինայի լեռան կողմը և այնտեղ հաստատվեց: Հայերը տխրեցին դրա համար, և նրա հետևից շտապեցին և կրկին հետ բերեցին»⁸³:

Գրիգորիսը եգիպտոսի հայոց պատրիարք է եղել մինչև 1120-ական թթ.: 1110 թ. նա հունարենից թարգմանել է Ոնոփրիոս անապատականի⁸⁴ վարքը⁸⁵: Ըստ «Ալեքսանդրիայի պատրիարքների պատմության»՝ 1117 թ. Գրիգորիսը (Ağrığavṛīs-Աղրիղուրիս) մասնակցել է Ֆուստատի ղպտի եպիսկոպոս Սանհուտի հուղարկավորության արարողությանը⁸⁶: Այդ երկում նա այլուր էլ է հիշվում, երբ խոսվում է նրա եղբայր Վահրամ Պահլավունու (Բահրամ ալ-Ար-

⁸² Խոսքն ակնհայտորեն «Լուսավորչի աջ»-ի մասին է:

⁸³ *Tārīḥ al-ābā' al-baṭārika*, §. 128.

⁸⁴ Գ/Ե դարում եգիպտոսում ապրած ճգնավոր հայր՝ համաբրիտոնեական տոնելի սուրբ:

⁸⁵ Մ. Ալեքեան, *Կիսկատար վարք եւ վկայաբանություն սրբոց*, էջ 459, *Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ*, Ե-ժԲ դդ. (հետայսու՝ ՀԶԶ, Ե-ժԲ դդ.), աշխատասիրությամբ Ա.Ս. Մաթևոսյանի, Երևան, ՀՍՍՀ ԳՍ հրատ., 1988, էջ 141:

⁸⁶ *Tārīḥ al-baṭārika*, §. 3, §. 5-6 և *HP*, vol. 8, p. 11-12: Հմմտ. *Tārīḥ al-ābā' al-baṭārika*, §. 232: Աղբյուրը հետաքրքիր մանրամասներ է հաղորդում Սանհուտին հաջորդող եպիսկոպոսի ընտրության հանգամանքների մասին: Պարզվում է Սանհուտից մահից հետո թափուր մնացած եպիսկոպոսական աթոռը զբաղեցնելու համար առաջադրվել է նրա որդի Յուաննիսի (Հովհաննես) թեկնածությունը: Դպտիական եկեղեցու պատրիարհ Մակարիոսը (1102-1128 թթ.) խնդրել է Գրիգորիսին, որ նա ստուգի «նրա վիճակը, գիտելիքներն ու հավատը» և հավաստիանա, որ հիշյալ Յուաննիսն արժանի է եպիսկոպոսական աթոռին: «Հայոց պատրիարհը» վերջինիս բերել է տալիս իր մոտ և մի ֆանի օր պահում իր մենախցում և ի վերջո տալիս իր հավանությունը վերջինիս եպիսկոպոս ձեռնադրելու հարցում: Տե՛ս *Tārīḥ al-baṭārika*, §. 3, §. 15-16 և *HP*, vol. 8, p. 31-34: Հմմտ. *Tārīḥ al-ābā' al-baṭārika*, §. 232:

մանի) վեզիրության մասին. «Վեզիր Քաչ ալ-Դաուլա (բառացի՝ «պետության թագ») Բահրամի եղբայրը սրբազան այր էր՝ անտարբեր աշխարհիկ կյանքի նկատմամբ, որին «պատրիարք» էին ձեռնադրվել իր երկրի հայերի համար: Ապա նա եգիպտոս եկավ՝ որպես նրանց պատրիարք: Նա հայտնի էր իր կրոնի և ողջախոհության, սրբության և մեծահոգության, ողորմածության և գրածության համար: Նրա անունը Անբա Գրիգորիոս (Aḡrīgawīs) էր: Եվ երբ նա վախճանվեց, նրանք նրա փոխարեն ուրիշին նշանակեցին որպես եգիպտոսի [հայոց] պատրիարք, ում [Ա.]նանիաս էին անվանում»⁸⁷:

Գրիգորիոսի անունը հիշատակված է նաև Վերին եգիպտոսում Լուքսորի և Այուտի միջև՝ Սոհագից մոտ 5 կմ հեռավորության վրա գտնվող Սպիտակ վանքի⁸⁸ խորանի որմնագրողումների կողքին պահպանված հայերեն արձանագրություններից մեկում: Գրանք հեղինակել է Թեոդորոս անունով «նկարիչը և գրիչը» («ի գաւառեն Քեսնոյ») «ի հայրապետութեանն Տ[եառ]ն Գրիգորի, քերորդույ Գրիգորիսի, որ Տէր Վահրամն կոչուր»⁸⁹: Խորանի վրա մեկ ուրիշ արձանագրություն կա՝ հայոց «ՇՀԳ» թվականը (Գրիգորյան 1124 թ.): Խորանի մյուս կողմում առկա է մեկ այլ արձանագրություն՝ ղպտերենով, թվագրված Մարտիրոսաց 840-ով (= 1124 թ.): Եթե փաստարկ ընդունենք այս թվականները, ապա կարող ենք պնդել, որ Գրիգորիոսը շարունակել է եգիպտահայոց առաջնորդը լինել գոնե մինչև 1124 թվականը:

Գրիգորիոսի վերաբերյալ մի հետմահու հիշատակություն կա նաև մուսուլմանական արաբական պատմագրության մեջ: Մի քանի պատմիչներ՝ Իբն Զաֆիր ալ-Ազդին, Իբն ալ-Տուվայրը, Իբն Մուլասսարը⁹⁰, Իբն ալ-Ֆուրաթը, ալ-Մակրիզին և այլոք, խոսելով վեզիր Բահրամ ալ-Արմանիի և Ռիզվան ալ-Վալախշիի հակամարտ հարաբերությունների մասին, հաղորդում են, որ Կահիրեից Բահրամի հեռանալուց հետո (1137 թ.) ալ-Վալախշիի կողմնակիցները մտել են հայկական թաղամաս, կողոպտել հայերի տները, ինչպես նաև «թալանի մատնել ալ-Ջուհրի հայկական եկեղեցին ու պղծել Բահրամի եղբայր Պատ-

⁸⁷ *Tārīḥ al-baṭārika*, ց. 3, ք. 22 և *HP*, vol. 8, pp. 46-47:

⁸⁸ Վեզիրի պաշտոնից ազատվելուց հետո Բահրամ ալ-Արմանին հենց այս վանք է ֆաշվել և կրոնավորության անցել:

⁸⁹ **Cl.Z. Mutafian & A. Ouzounian**, “Le Monastère Blanc en Egypte et ses inscriptions Arméniennes,” *Բանբեր հայագիտության*, № 2-3, 2013, p. 112: Հմմտ. **Քորզում աբեղյախ. [Գուշակեան]**, «Հայերեն արձանագրութիւններ Վերին եգիպտոսի ղպտի վանքի մը մէջ», *Ամէնուն տարեցոյցը* (խմբ. **Քէոզիկ**), Ժէ տարի, տպ. Մ. Յովակիմեան, Կ. Պոլիս, 1923, էջ 374-380; **S. Dadoyan**, *The Fatimid Armenians: Cultural and Political Interaction in the Near East* (Islamic History and Civilization: Studies and Texts), vol. 18, ed. **Ulrich Haarmann and Wadad Kadi**, Leyden: E. J. Brill, 1997, pp. 103-105:

⁹⁰ Վերջինիս երկի բնագիրը կորած է: Նրանից հատվածներ են պահպանվել միայն հետագա պատմիչների (մասնավորապես՝ ալ-Մակրիզիի) կատարած ֆաշվածների տեքստով:

րիարքի գերեզմանը»⁹¹: Պատրիարքի անունը հիշված չէ, բայց պարզ է, որ խոսքը Գրիգորիսի մասին է: Նույն այս ավարառության ժամանակ է, որ սպանվել են եգիպտահայոց վերոհիշյալ առաջնորդը՝ Անանիան, և նրա հետ եղած մի խումբ հոգևորականներ⁹²:

Հստ հայկական աղբյուրների՝ Գրիգորիսին եգիպտահայոց հոգևոր առաջնորդ է կարգել Գրիգոր Բ Վկայասերը: Վերջինս, իրեն փոխանորդ և աթոռակիր նշանակելով, հաճախ է մեկնել ճամփորդության կամ ճգնակեցության տրվել: Նման մի երկարատև ուղևորություն նա մեկնարկել է 1075 /1076 թ.՝ լինելով Կ.Պոլսում, եգիպտոսում, երուսաղեմում և ի վերջո վերադառնալով Կիլիկիա: Բյուզանդական մայրաքաղաքում Գրիգոր Բ-ն, հիշյալ քեռորդին և մյուս ուղևորները բազմաթիվ հունալեզու վարքեր, վկայաբանական և հայրաբանական երկեր են ընդօրինակել՝ դրանք հայերեն թարգմանելու նպատակով: Աղբյուրները⁹³ փոքր-ինչ հակասական տեղեկություններ են հաղորդում կաթողիկոսի ճամփորդության ընթացքի, տևողության և նրա երթուղու կայանների հերթա-

⁹¹ **Ibn al-Ṭuwayr**, *Nuzhat al-muqlatayn fī aḥbār al-dawlatayn*, bi-taḥqīq Ayman Fu ād Sayyid, Bayrūt, 1992, թ. 45-46; *Muntaqā min Aḥbār Miṣr li-Ibn Muḡassar*, bi-taḥqīq Ayman Fu ād Sayyid, al-Ma had al-ilmī al-faransī li-l-aṭār al-šarqiyya, al-Qāhira, 1981, թ. 125; **Ibn al-Furāt**, *Tārīḥ al-duwal wa-l-mulūk*, ց. 2, bi-taḥqīq Muḡammad Farīd al-Šayyāl (*A critical edition of Volume II of Tārīḥ al-duwal wa'l mulūk by Muḡammad B. al-Ṭuwayr*, University of Edinburgh, 1986), թ. 155 [p. 255]; **Al-Maqrīzī**, *Itti āz al-ḥunafāʾ*, ց. 3, թ. 160-161; **նոյնի՝** *Kitāb al-Muqaffā al-Kabīr*, ց. 2, թ. 515: Տե՛ս նաև **Գ. Մըրլեան**, *Ականաւոր Հայեր*, էջ 67; **S. Dadoyan**, *Fatimid Armenians*, p. 101:

⁹² Տե՛ս **Tārīḥ al-baṭārika**, ց. 3, թ. 24 և **HP**, vol. 8, p. 50: Հիշյալ անձանց շփոթ կա Յուսաբ Ֆուվազուն վերագրվող երկում, ըստ որի՝ սպանված «պատրիարքը» Գրիգորիսն էր. «Երբ Ռիզվանը Կահիրե մտավ, սպանեց [ճանապարհին իրեն] պատահած ամեն մի հայի, ավարի ենթարկեցին ալ-Հուսայնիյա կոչված թաղը՝ պատանդ վերցնելով այնտեղ իրենց հանդիպած կանանց և սրի քաշելով նրանց տղամարդկանց: [Ապա] անցան ալ-Զուհրի և սպանեցին հայոց պատրիարքին, որը թաշ ալ-Դաուլա Բահրամի եղբայրն էր (sic.-Գ.Գ.):»: Հմմտ. **Tārīḥ al-ābā al-baṭārika**, թ. 238:

⁹³ Գրիգոր Վկայասերի ուղեգնացության մասին հաղորդում են Հովհաննես Ոսկեբերանի «Մեկնութիւն գրոց առաբելոց» երկի թարգմանության համար հենց կաթողիկոսի թողած մի հիշատակարան (տե՛ս *Մեկնութիւն գործոց առաբելոց Յուսկեբերանէ և Յեփրեմէ*, տպ. Ս. Ղազարու, Վենետիկ, 1839, էջ 457-458; **ՀԶ**, Ե-ԺԲ դդ., էջ 108-109), Ներսես Շնորհալու վարձագիրը և հենց Ներսես Շնորհալին «Վիպասանության» մեջ, Վարդան Արևելցին, «Հայսմավուրբ»-յան մեկ-երկու վարբ, Մաթթեոս Ուռույեցին, Սմբատ Սպարապետը, Կիրակոս Գանձակեցին, «Պատմութիւն սրբոց հարցն մերոց»-ի անանուն հեղինակը, Ժէ դարի Դավիթ Բաղիշեցի անունով ժամանակագիրը: Հետաքրքիր է, որ Մաթթեոսի երկում, երբ խոսվում է Գագիկ Բ վերջին Բագրատունի արքայի գահ բարձրանալու հանգամանքների մասին, Գրիգոր Բ-ն անվանված է Գրիգոր Մարցե, ինչը բազմաթիվ սխալական վարկածների պատճառ է դարձել: Առավել տրամաբանական է Հ. Բարթիկյանի տեսակետը, որ *Մարցե*-ն հավանորեն հետագայի գրչական սխալագրության հետևանք է, և փոխարենը պետք է եղած լինի «*Մարցի*», այսինքն «*եգիպտացի*»: Տե՛ս **Հ.Մ. Բարթիկյան**, «Ուռույեցու երկում հանդիպող «Մարցե» անվան մասին», **ՊԲՀ**, 1973, № 2, էջ 163-168:

կանոնության մասին: Ըստ Մատթեոս Ուռհայեցու և նրան հետևած հեղինակների (Սմբատ Սպարապետի և որոշ շափով նաև Կիրակոս Գանձակեցու) հայրապետն անգամ եղել է Հռոմում, թեև գրեթե անկասկած է, որ այս մտայնության ակունքում Հռոմ և Հոռոմ (իմա՝ Բյուզանդիա) եզրերի շփոթն է մատենագիրների մոտ: Վկայասերի ճամփորդության ընթացքի և հանգրվանների մասին խոսող աղբյուրների հաճախ անթվակիր վկայությունները հակոտնյա տեսակետների տեղիք են տվել նաև արդի պատմաբանների շրջանում՝ ոմանց անգամ բերելով այն եզրահանգմանը, որ կաթողիկոսը համարյա նույն երթուղով երկու անգամ է ճամփորդել: Բոլորովին վերջերս Վահե Թորոսյանը, զուգահիշ քննության ենթարկելով Վկայասերի ուղեգնացության մասին աղբյուրների վկայությունները և հայագիտական գրականության մեջ առաջ քաշված վարկածները, փորձել է թվագրական ճշտումներ կատարել և պարզել կաթողիկոսի կատարած կայանները, մասնավորապես նրա՝ Հռոմում լինել-չլինելու հարցը⁹⁴: Նա օգտագործել է նաև «Ալեքսանդրիայի պատրիարքների պատմության» հաղորդումը Վկայասերի քեռորդի Գրիգորիսի՝ Կ. Պոլսում ընդօրինակված ձեռագիր մատյանների հետ եգիպտոսում հայտնվելու հանգամանքների մասին և հանգել այն եզրակացությանը, որ Գրիգորիսն անվտանգության նկատառումներով եգիպտական իշխանություններին ներկայացել է որպես հայոց կաթողիկոս, և որ նա եգիպտոս է այցելել միայն 1099-1100 թթ. և այնտեղ գտնվող ձեռագրերը Կիրիկիա տեղափոխել: Վ. Թորոսյանը որպես փաստարկ նշում է, որ հենց այդ թվականից հետո են Բյուզանդիայում արտագրված վարքերի թարգմանությունները շրջանառության մեջ դրվել⁹⁵:

«Ալեքսանդրիայի պատրիարքների պատմության» մեջ, ինչպես տեսանք, Մաուհուբ իբն Մանսուր իբն Մուֆարրիջն իսկապես վկայում է, որ 1087 թ. Կ. Պոլսից Ալեքսանդրիա եկած Գրիգորիսը հայտարարել է, թե ինքը կաթողիկոսությունից հրաժարված հայոց հայրապետի քեռորդին է՝ վերջինիս կողմից ուղարկված եգիպտոս⁹⁶: «Եկեղեցիների և վանքերի պատմության» հեղինակը,

⁹⁴ Վ. Թորոսյան, «Գրիգոր Բ Վկայասերը Հռոմում: Բյուզանդական կայսրության նվաճողական փառափառությունը և Հայոց կաթողիկոսությունը (1045-1066)», *Երիտասարդական 3-րդ գիտաժողովի զեկուցումներ (Երևան, Մատենադարան, 2017 թ. նոյեմբերի 28-30)*, Երևան, «Արմավ», 2018, էջ 240-290:

⁹⁵ Տե՛ս անդ, էջ 277-278:

⁹⁶ Հայ մատենագրության մեջ պահպանված վկայությունների և «Ալեքսանդրիայի պատրիարքների պատմության» հաղորդած տեղեկությունների հակասականությունից փորձել են զրուխ հանել մաս Ա. Կապոյան-Կոչումջյանը և Յ. դեմ Հեյերը: Տե՛ս **A. Kapoian-Kouymjyan**, *Le Catholico Grégoire II le martyrophile (Vkasayer) et ses pèlerinages*, Extr. de Bazmavep, vol. 132, n°3-4, pp. 306-325, Venise, St. Lazare, 1975, pp. 15-19; **J. den Heijer**, "Considérations sur les communautés chrétiennes en Égypte fatimide: L'État et l'Église sous le vizirat de Badr al-Jamālī (1074-1094)," *L'Égypte fatimide. Son art et son histoire*, ed. **M. Barrucand**, Paris, 1999, pp. 574-578:

որն «Ալեքսանդրիայի պատրիարքների պատմություն»-ից բազմաթիվ հաղորդումներ է փոխառել, Գրիգորիսի գալու վերաբերյալ վկայությունն այս և ոչ մի այլ առիթով չի օգտագործել: Փոխարենը նա մի քանի անգամ խոսում է «հայոց պատրիարքի»՝ Եգիպտոսում ծավալած գործունեության մասին: Այդ վկայությունները, սակայն, հստակ թվագրված չեն, և հստակ չէ՝ նա նկատի ունի Գրիգորիսին, թե Վահրամ-Գրիգոր Վկայասերին, հնարավորություն չտալով ճշտել վերջինիս Եգիպտոս այցելության թվականը: Օրինակ, ինչպես տեսանք, երբ պատմվում է Խանդակի եկեղեցու հայերին հանձնվելու մասին, «Հայոց պատրիարքն» անվանվում է Մեծ Հայքի պատրիարք, ով, ըստ հեղինակի՝ Ֆաթիմյան սուլթանություն է եկել ալ-Մուսթանսիրի խալիֆայության, Բադր ալ-Ջամալիի խալիֆայության և դպտիական ուղղափառ եկեղեցու Անբա Կյուրեղ 67-րդ պատրիարքի աթոռակալության օրոք: Հիշյալ խալիֆան կառավարել է 1036-1094 թթ., Բադրը նրա վեզիրն է եղել 1074-1094 թթ., իսկ Կյուրեղը գլխավորել է դպտիական եկեղեցին 1078-1092: Ստացվում է, որ եթե «Մեծ Հայքի պատրիարք» ասելով «եկեղեցիների և վանքերի պատմության» հեղինակը նկատի է ունեցել Վկայասերին, ապա վերջինիս այցը Եգիպտոս 1099-1100 թթ. թվագրելը խիստ անտրամաբանական կլինի:

Ուշադրության է արժանի մի հանգամանք ևս: Վերն ասացինք, որ պատահականության (փոթորկի) հետևանքով Եգիպտոսում հայտնված Գրիգորիսն «անվտանգության նկատառումներով» է «հայոց պատրիարք» ներկայացել: Բայց հետո, իհարկե, պիտի պարզվեր, որ նա և իր ուղեկիցները ամենևին էլ թշնամական միջավայրում չեն հայտնվել, ինչպես պատկերացնում էին: Երկրի կառավարման իրական դեկը գտնվում էր հայազգի Բադրի ամուր ձեռքերում, ով, չնայած մուսուլման լինելուն, մեծ պատվով է դիմավորել իր հայրենակիցներին և ամեն կերպ աջակցել՝ շատ դեպքերում անգամ կողմնակալ վերաբերմունք ցուցաբերելով հայերի նկատմամբ նրանց առնչվող հարցերում որոշումներ կայացնելիս: «Գրիգորիս իր յաջողությունը կը պարտի այն պարագային, որ իր այցելությունը Եգիպտոս զուգադրիպեսա Պէտր էլ Ճէմալ հայազգի բայց իսլամացած վէզիրի իշխանութեան շրջանին», — գրում է Ն. Ակինյանը⁹⁷: Այդ դեպքում, ի՞նչ կարիք կար խուսափելու եղելություններն այնպես ներկայացնելուց, ինչպես որ պատահել էին: Ըստ Ն. Շնորհալու վարքագրի՝ Եգիպտոսում հայտնված Գրիգորիսը նամակ է գրել իր քեռուն՝ հայցելով «փութապէս հասանել առ նոսա»: Վերջինս, ի դեպ, ըստ նույն հեղինակի՝ «վաղվաղակի մտեալ

⁹⁷ Ն.Վ. Ակինյան, *Ներսէս Լամբրոնացի արքեպիսկոպոս Տարսոնի (Կեանքն եւ գրական վաստակները հանդերձ ազգաբանութեամբ Պահլաւունեաց եւ Լամբրոնի Հեթմեանց)*, Վիեննա, Մխիթարեան տպ., 1956, էջ 381:

ի նաև, անդր հասաներ»⁹⁸: Մի՞թե այդ ճամփորդությունը կարող էր 12/13 տարի հետաձգվել (1087-1099/1100): Ամեն դեպքում, հայ մատենագրություն մեջ արդեն 1080-ական թթ. Վահրամ-Գրիգորը հիշատակվում է եգիպտոսում⁹⁹: Եթե հաշվի առնենք մի շարք հայկական աղբյուրների այն տեղեկությունը, որ Վկայասերը ֆրանկների կողմից Երուսաղեմի 1099 թ. գրավման ժամանակ այնտեղ է եղել¹⁰⁰, ապա այդ թվականին նա կարող էր միայն եգիպտոսից Կիրիկիա հետդարձի ճանապարհին լինել, այլ ոչ թե հակառակը: Փաստորեն, չենք բացառում, որ Վկայասերը մոտ 10 տարի անցկացրած լինի եգիպտոսում, որտեղ հավանաբար իրեն նվիրել է ճգնակեցությունը և Կ. Պոլսում ընդօրինակված վարքագրական երկերի թարգմանությունը: Այնուամենայնիվ, աղբյուրների վկայությունների հակասականության պատճառով հարցերը շատ են, դրանց տրված պատասխանները՝ սոսկ ենթադրություններ, քանի դեռ հայտնի չէ Վկայասերի՝ եգիպտոս այցելելու վերաբերյալ հստակ թվագրված վկայություն¹⁰¹:

Հայկական և արաբալեզու աղբյուրների հաղորդումները ևս մի աչքի զարնող ընդհանրություն ունեն: Գրիգոր Վկայասերի ճամփորդության մասին պատմող որոշ հայկական աղբյուրներ վկայում են, որ կաթողիկոսի՝ եգիպտոս այցելության շնորհիվ այնտեղ երկար սպասված անձրև է տեղացել: Խոսքը, մասնավորապես, Վարդան Արևելցու՝ նրան և Պահլավունի մյուս կաթողիկոսներին Կիրիկիո Հայոց Հեթում Ա արքայի (կառ. 1226-1269 թթ.) կարգադրություններով ձեռնարկող¹⁰², Կիրակոս Գանձակեցու «Պատմութիւն Հայոց»-ի¹⁰³ և

⁹⁸ Տե՛ս Պատմութիւն Սրբոյն Ներսեսի Շնորհալոյ (Սոփերֆ Հայկական ԺԳ), Վենետիկ, տպ. Մխիթարեանց, 1854, էջ 26:

⁹⁹ Տե՛ս Մատթեոս Ուոհայեցի, Ժամանակագրութիւն, գրաբար բնագիրը Մ. Մելիք-Աղամյանի և Ն. Տեր-Միխայելյանի, աշխարհաբար թարգ.-ը Ն. Բարսիկյանի, Երևանի համալսարանի հրատ., 1991, էջ 246, 248, Սամուել Անեցի և շարունակողներ, Ժամանակագրութիւն, աշխատասիրությամբ Կ. Մաթևոսյանի, Երևան, «Նաիրի», 2014, էջ 198:

¹⁰⁰ Մատթեոս Ուոհայեցի, Ժամանակագրութիւն, էջ 286/287, Սմբատայ Սպարապետի Տարեգիրք, աշխատասիրությամբ Հ. Սերովբէ Ազըլեանի, Վենետիկ, 1956, էջ 110, Սամուել Անեցի և շարունակողներ, Ժամանակագրութիւն, էջ 200-201:

¹⁰¹ Մեզ է հասել 1099 թվականին Ալեքսանդրիայում Ահարոն անունով գրիչի ձեռնով ընդօրինակված Ավետարան, որի հիշատակարանը, սակայն, արժեքավոր ոչինչ չի հաղորդում մեզ հետաբերող հարցի կապակցությամբ: Տե՛ս Գարեգին Ա. Կաթողիկոս Յովսէփեան, Յիշատակարանք Ձեռագրաց, Հատոր Ա. (Ե. Գարից Մինչև 1250 թ.), Անթիլիաս, Տպարան Կաթողիկոսութեան Հայոց Կիրիկիոյ, 1951, սյուն. 263-266, ՀԶԶ, Ե-ԺԲ դդ., էջ 119-120:

¹⁰² Վարդան Արևելցի, Ճառք, Ներբողեանք, աշխատասիրությամբ Հ. Քյուսեյանի, Երևան, «Ոսկան Երևանցի» հրատ., 2000, էջ 364: Հմմտ. նաև Գ. Յովսէփեան, Յիշատակարանք, սյուն 306 (հիշատակագիրը շփոթում է Գրիգոր Մեծ Վկայասերին Գրիգոր Գ Փոքր Վկայասերի հետ):

¹⁰³ Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, աշխատասիրությամբ Կ. Ա. Մելիք-Օհանջանյանի, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1961, էջ 97:

ԺԳ դարի անանուն հեղինակի «Պատմութիւն սրբոց հարցն մերոց»¹⁰⁴ տարեգրության մասին է: Հար և նման հրաշագործությունների մասին պատմություններ պահպանվել են նաև «Ալեքսանդրիայի պատրիարքների պատմության» և վերջինիս հետևություններում նաև «Եկեղեցիների և վանքերի պատմության» մեջ, ինչպես նաև Ֆուլվայի եպիսկոպոս Յուսաբին վերագրվող երկում, որը վերը ներկայացրել ենք թարգմանաբար: Մասնավորապես պատմվում է ալ-Մանաքիս անունով հայ սրբի¹⁰⁵ կողմից մի դիվահարի բուժման և մեկ այլ հայ վանականի կողմից ջուր ստեղծելու հրաշագործության մասին: Հնարավոր է արդյոք՝ խոսքն այստեղ հենց եպիսկոպոս եկած Վկայասերի կատարած մի «սքանչելագործության» մասին է, որը դեպքերի ժամանակակից ղպտի Մաուհուբ իբն Մանսուր իբն Մուֆարրիջը լսել և արձանագրել է՝ անտեղյակ լինելով նրա իրական ինքնության մասին. դժվար է ասել:

¹⁰⁴ Լ. Տեր-Պետրոսյան, *Խաչակիրները և հայերը, հտ. Բ, Պատմա-քաղաքագիտական հետազոտություն* (Հայկական մատենաշար Գալուստ Կիլպէնկեան հիմնարկութեան), Երևան, 2007, էջ 511:

¹⁰⁵ Նա, ինչպես գիտենք, նգնակեցության էր անցել Աբու Մակարի մենաստանում ընկերակցելով Բասսուս անունով մի վանականի: Սրան զուգահեռվում է Մատթեոս Ուոհայեցու այն հաղորդումը, թե Վկայասերը «եկեալ յեպիսկոպոս՝ շրջեցաւ ընդ անապատսն ամենայն առաջին սրբոց հարցն»: Տե՛ս Մատթեոս Ուոհայեցի, *Ժամանակագրութիւն*, էջ 228/229:

ՀԱՎԵԼՎԱԾ Ա¹⁰⁶

تاريخ الشيخ ابي عبد
 الازهي
 فيه ذكر اخبار من فواحي
 واطاعها
 الفصل الاول نتدى بعون الله
 وارشاده ان في عصرنا هذا في ابتدا سنة اربع وستين
 وخمماية كان بنا الكنيسة التي على اسم ماري يعقوب
 بناحية البساتين من فواحي بلاد مصر بناحية الجبل في
 زمان امير مسلط عليها من جانب الخليفة وكان محبا
 لجميع النصارى الكبير منهم والصغار وكان له
 564.

2

¹⁰⁶ Փարիզի ազգային գրադարանի Arabe 307 ձեռագրի առաջին թերթը՝ «Շեյխ Աբու Աա-
[[ի]՝ Հայի պատմությունը» գրառումով:

ՀԱՎԵԼՎԱԾ Բ¹⁰⁷

3b

وقال له اريد اليوم الكشف ليك سر لم يتطلع عليه احد

4a

غير امتداد واحد وانت تقول لنا اني فقلت له انني التمه
فكشف عن سؤونه وقال ابصره لا الحال فرأت مضيب
دوره قبل عدم بالاضاله ولم يسو الاجاره طوبله والانتبين
وبه هاه الحلاه حبه فاستنجل منه قضيه الحال فدر
انه كان قد لحقته مثل هذه الحبه وهو صبي فاطل منه
الفضب جميعه حتى لم يتو منه غير هاه الحلاه التي
تراها وها قد عمادت الحبه في هذا الوقت وقال اني
داوئيه الى ان برى وزالت الحبه واستعمل منه
على الامتداد فدر انه رفع فيه الى الحافظ سس ائنه
ايضا لانها كانت جميله الصوره وداستاتي اليه وتجره
وتستشيره ويعرف عليه وتعلم فونده ولم يكن احد يقدر
ان يخوابها لاجل ديانتها وعقلها واشتسهر امر خواتها
به ويرددها الى قلائينه فاصعبه ذلك الامتداد في
امرها وقال له ان بعض الناس ينهونك بالاقبال
له لكشف لنا سر امري ومخالصوا الناس لم تحرك
في احد وللذات متولى لسر بعلم الظاهر والباطر وانه
حلمته نفسه ان اخبر الحافظ بظوره الحال وساله في

4b

ان سر من امناه من تجيره للكشف ما ادعاه الدطر برمي
حال عضو الناسل فسره له امتداد من الارض لامة موتمن
عنده على حراس ما له وضادق القول عندك بلشيف له
عزديك فلم يله ان تمتنع من ذلك فاطلعه على امره

¹⁰⁷ Փարիզի ազգային գրադարանի Arabe 307 ձեռագրի 3b բերթի վերջին տողը, 4a բերթը և 4b բերթի առաջին չորս տողերը, որտեղ խոսվում է Արֆիհի հայոց եպիսկոպոսին վերաբերող բանասերկության մասին:

ՀԱՎԵԼՎԱԾ Գ¹⁰⁸

يَصْعَدُ إِلَيْهِ مِنْ أَمْوَالِهِ الْمُبْتَعَةَ وَيَكْفِيهِ عَلَى الرَّبِّهِ وَاجْلُ
 الْأَجْرِ وَالْبُسْتَانِ الْبَيْرِ وَخَنْدَقِ الْمَوْلَى الْقَصْرَةَ وَالْبُسْتَانَ
 الْمَعْرُوفَ بِالْمُخَضَّرِ وَغَيْرِهِ وَفِي هَذَا الدَّيْرَةِ كَمَا نَسَبَ وَهِيَ مَذْهَبُ
 الْمَذْهَبِ عَلَى بَيْتِهِ الدَّاخِلِ لِنَسَبِهِ الْأَرْمَنِ لَطِيفِهِ جَدًّا
 أَنْشَأَهَا وَجَدَّ عَمَّارَتَهَا شَرِيحَتَيْنِ مِنَ الْأَرْمَنِ وَكَانَ خَاطِمِي
 الْمَنَازِلِ فِي الْخِلَافَةِ الطَّافِرِيَّةِ وَوَزَارَهُ عَلَى إِبْرَاهِيمَ سَلَّارِ
 الدَّيْلَمِيِّ لِنَسَبِهِ مَلَا صُوقَ بَابِ الدَّرْبِ عَلَى اسْمِ الْقَدِيسِ
 أَبُو مَقَارَانَتِ لِلْقَيْطِ وَمَا وَصَلَ عَرَبِيًّا بَوْتِ بِطْرِيكِ
 أَرْمِينِيَّةِ الدَّيْرِ إِلَى دَوْلَةِ الْعَالَوِيَّةِ فِي الْخِلَافَةِ السُّنْتِزِيَّةِ
 وَوَزَارَهُ أَمِيرَ الْجَيْوشِ بَدْرًا وَجَدَّ اسْتَقْفَ الْخَنْدَقِ
 حَزَنَ فِيهَا قُرْطُ فَالْتَمَسَهَا الصَّلَاةَ فَسَلَّاهُ فَتَمَّتْ
 وَاسْتَمَرَّتْ بِبَيْدِ الْأَرْمَنِ إِلَى الْآنِ بَعْدَ أَنْ كَشَفَ أَمِيرَ
 الْجَيْوشِ عَنَّا لِلْقُرْطِ وَخَرَنَهُ بِهَا وَوَصَلَهُ صَحِيحًا
 وَدَلَّكَ فِي بَطْرِيكِهِ دَرَسَ السَّابِعَ وَاسْتَمَرَّتْ فِي عَدَّةِ الْبَطْرَانِ
 وَجَعَلَتْ بِاسْمِ الْقَدِيسِ مَارِي حَرْجِسَ وَمَا لَهَا الْفَرَسُ الْخَيْرُ
 الْقَبَانِ وَالْجَبْرِ وَعَلَيْهِ فِيهِ مَعْقُودَةٌ لِنَسَبِهِ مَجَاوِرَةٌ
 الْجَوْشُونِ بِاسْمِ الشَّهِيدِ بَوْلَا إِبْرَاهِيمَ سَلَّارِ الْقَائِدِ وَجَسَدُهُ
 الْمَالِي

¹⁰⁸ Բավարիայի պետական գրադարանի (Մյունխեն) Arab 2570 ձեռագրի այն էջը, որտեղ խոսվում է «Մեծ Հայքի պատրիարք Գրիգորիոսի» եգիպտոս կատարած այցելության և Խանդակի Սբ. Գևորգ եկեղեցու մասին:

GAGIK DANIELYAN

REFERENCES TO ARMENIAN MONASTERIES AND CHURCHES ON
UNKNOWN PAGES OF ABŪ AL-MAKĀRIM'S WORK

Key words: Coptic-Arabic historiography, Abū Ṣāliḥ al-Armanī, *History of the Patriarchs of Alexandria*, Yūsāb of Fuwa, Armenian churches and monasteries, the Fatimid Caliphate, Badr al-Ġamālī, Bahrām al-Armanī, Grigoris, Gregory II the Martyrophile.

In 1895, on the basis of a unique manuscript kept in the National Library of Paris, B.T.A Evetts prepared an edition of a valuable Arabic work by an unknown author with the following title: *The Churches and Monasteries of Egypt and Some Neighbouring Countries*. The title written on the first page of the MS, *Tārīḥ al-ṣayḥ Abī Ṣal[i]ḥ al-Armanī yudkaru fīhi min aḥbār Miṣr wa-iqtā'iha* (*History of the Sheikh Abu Salih the Armenian, which Contains Information on the Districts and Fiefs of Egypt*), allowed the editor to identify “Abū Ṣāliḥ the Armenian” as the author of the work.

This edition was welcomed enthusiastically by scholars, especially Armenologists. The work appeared to contain invaluable topographic information on Christian (including Armenian) churches and monasteries in Egypt in the late period of the Fatimid Caliphate. Then for several decades the work was ascribed to “Abū Ṣāliḥ the Armenian”.

However, in the first quarter of the 20th century, scholars began to raise doubts about the authorship of the source. Things changed in 1984, when a Coptic monk named Samuel al-Suryani (later bishop of Ṣībīn al-Qanāṭir) published a new edition of the work. In this edition, the Arabic text prepared by Evetts was supplemented by two other volumes of texts theretofore unknown to academicians.

Soon it became clear that the manuscript used by Samuel al-Suryani was kept in the Bayerische Staatsbibliothek in Munich. The meticulous studies of two modern scholars, Ugo Zanetti and Johannes den Heijer, came to prove that the two parts had once formed one manuscript and that it was divided into two volumes. Each of them had its own fate before appearing in Paris and Munich respectively.

A thorough codicological and textual analysis showed that besides Abū al-Makārim there might have been several other contributors to the work. Thus, the authorship of Abū Ṣāliḥ remains obscure. Did he have any connection with the parts concerning the Armenian community? Unfortunately, we have no evidence to prove this supposition.

This article discusses the passages about the Armenians, their churches and monasteries. Still mostly unknown to Armenologists, those passages are cited in Armenian translation for the first time. They contain valuable information on the Armenians, Armenian churches and monasteries not only in Egypt, but also in Palestine (Jerusalem in particular), Syria, and Cilicia. This information is significant and enriches our knowledge of the Armenian community in Fatimid Egypt in the 11th-12th centuries.

**ГАГИК ДАНИЕЛЯН
УПОМИНАНИЯ АРМЯНСКИХ МОНАСТЫРЕЙ И ЦЕРКВЕЙ НА
НЕИЗВЕСТНЫХ СТРАНИЦАХ ТРУДА АБУ АЛЬ-МАКАРИМА**

Ключевые слова: копто-арабская историография, Абу Салих Армянин, *История Александрийских патриархов*, Юсаб из Фуввы, Фатимидский Халифат, Бадр аль-Джамали, Бахрам аль-Армани, Григорис, Григор II Мартирофил.

В 1895 году Б.Т.А. Эветтс издал по уникальной рукописи из Национальной Библиотеке в Париже ценный труд неизвестного автора под следующим названием: *Церкви и монастыри Египта и некоторых соседних стран*. Титульная запись на первой странице рукописи *Tārīḥ al-ṣayḥ Abī Ṣal[i]ḥ al-Armanī yuḍkaru fīhi min aḥbār Miṣr wa-iqtā'ihā* (*История шейха Абу Салиха Армянина, в которой сообщаются сведения о районах и областях Египта*), позволила редактору предположить, что автором является некий “Абу Салих Армянин”.

В научных кругах, в частности в арменоведческих, издание источника было встречено с большим интересом. Оказалось, сочинение содержит бесценную топографическую информацию о христианских церквях и монастырях Египта, в том числе и армянских, в поздний период истории Фатимидского Халифата.

Однако, начиная с первой четверти 20-го века, ученые стали высказывать сомнения в авторстве источника. Ситуация изменилась в 1984 году, когда коптский монах (впоследствии епископ Шибин ал-Канатира) Самуил аль-Сурьяни опубликовал новое издание труда. В этой публикации том, изданный Б.Т.А. Эветтсом, был дополнен двумя другими томами, содержащими тексты, ранее не известные ученым.

Вскоре выяснилось, что рукопись, которую Самуил аль-Сурьяни использовал в новом издании труда, хранится в Баварской государственной библиотеке в Мюнхене. Тщательные исследования

двух современных ученых, Уго Дзанетти и Иоганна ден Хейера доказали, что эти две рукописи являются частями одной рукописи, расчлененной на два тома. Каждый имел собственную судьбу, прежде чем появиться в Париже и Мюнхене. Тщательный текстологический анализ показал, что кроме Абу аль-Макарима, возможно, в написании произведения участвовало несколько других лиц. Таким образом, роль автора по имени Абу Салих в составлении произведения остается неясной. Мог ли он иметь отношение к пассажирам, представляющим особый интерес для истории армянской общины и армян? К сожалению, у нас нет реальных фактов, чтобы доказать это предположение.

Настоящая статья посвящена изучению тех частей труда, которые по сей день остаются в основном не известными арменоведческим кругам. Впервые в армянском переводе представлены отрывки из Мюнхенской рукописи, касающиеся армян. Они содержат ценную информацию об армянах и армянских церквях и монастырях не только в Египте, но и в Палестине (в частности, в Иерусалиме), Сирии и Киликии. Эта информация имеет важное значение для переоценки труда для арменоведения в целом, а также для расширения наших знаний об армянской общине в Фатимидском Египте в XI-XII вв. в частности.

ՔՐԻՍՏԻՆԵ ԿՈՍՏԻԿՅԱՆ, ՀԱՅԿԱԶ ԳԵՎՈՐԳՅԱՆ

**ՄԵՖՅԱՆ ՇԱՀԵՐԻ ՆՈՐԱՀԱՅՏ ՀՐՈՎԱՐՏԱԿՆԵՐԸ
ՄԱՏԵՆԱՂԱՐԱՆԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԳԻՎԱՆՈՒՄ**

Քանալի բառեր՝ Սեֆյան, շահ, հրովարտակ, վավերագիր, կաթողիկոս, մահմեդական, Քրիստոնյա, վանք:

Մատենադարանի պարսկերեն վավերագրերի հիմնական հավաքածուն գրանցված ու նկարագրված է Կաթողիկոսական դիվանի 1ա-1գ թղթապանակների 1032 վավերագրերի, նույն դիվանի 2ա-2բ թղթապանակների 383 վավերագրերի, ինչպես նաև թղթապանակներ 3-ի և 4-ի 151 վավերագրերի անոտացիաները բովանդակող հ. 29 անտիպ ցուցակում: Կաթողիկոսական դիվանից զատ, 29 պարսկերեն վավերագրեր են պահվում նաև Դավիթ Մելիք-Շահնազարյանի դատական հայցի կապակցությամբ կազմված գործի արխիվային ֆոնդում¹, Ավո Հովհաննիսյանի անմշակ ֆոնդում, որում ընդգրկված են մեծամասամբ Նոր Զուղայի XIX-XX դարերի ազգաբնակչությանը վերաբերող նյութեր:

2014 թ. Մատենադարանի արխիվի աշխատակիցների տեղեկացմամբ հայտնի դարձավ, որ պարսկերեն վավերագրեր կան նաև Կաթողիկոսական դիվանի 1է և 1ը թղթապանակներում, որոնք համարակալված են համապատասխանաբար որպես վավերագրեր 1033-1470, 1471-1788: Այսպիսով, երկու թղթապանակներում կա ընդհանուր թվով 755 պարսկերեն վավերագիր, որոնք երբևէ նկարագրված և ուսումնասիրված չեն եղել: Այս պատճառով մենք ձեռնամուխ եղանք այդ վավերագրերի ուսումնասիրությանը՝ շատ շուտով հայտնաբերելով, որ դրանք սերտորեն կապված են նույն դիվանի մյուս թղթապանակների վավերագրերի հետ, որոնց մի մասը հետազոտվել ու թարգմանաբար հրատարակվել է «Մատենադարանի պարսկերեն վավերագրերը» շարքի հերթական 6 պրակներում²:

Նորահայտ վավերագրերի մի մասը շարի՝ աթական-նոտարական փաստաթղթեր են՝ կազմված առքուվաճառքի, նվիրատվության, դատական վեճերի

¹ Այդ ֆոնդի վավերագրերի նկարագրությունները տե՛ս **Ք. Կոստիկյան**, «Գեղարժույթի Մելիք-Շահնազարյանների պատմությունից», Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, XXIV, Երևան, 2005, էջ 310-316:

² **Հ. Փափազյան**, Մատենադարանի պարսկերեն վավերագրերը, I, Հրովարտականեր, պրակ Ա, Երևան, 1956, պրակ Բ, Երևան, 1959, II, Կալվածագրեր, պրակ Ա, Երևան, 1968, **Ք. Կոստիկյան**, Մատենադարանի պարսկերեն հրովարտակաները, պրակ Գ, Երևան, 2005, պրակ Դ, Երևան 2008, **Ք. Կոստիկյան, Մ. Խեչո**, Մատենադարանի պարսկերեն վավերագրերը, III, Շարիաթական նոտարական վավերագրեր, Ժէ-ԺԸ դարեր, Երևան, 2018:

կապակցությունները: Կան նաև մեծ թվով նամակագրությունների, պարտամուրհակներ, ստացականներ: Վավերագրերը դասավորված են ժամանակագրական կարգով՝ 16-րդ դարից մինչև 19-րդ դար: Հնագույնները 16-րդ դարից են (շուրջ մեկ տասնյակ), կան ավելի մեծ թվով 17-րդ դարի վավերագրեր: Վավերագրերի հիմնական մասը վերաբերում է Նախիջևանի և Երևանի նահանգների (խանությունների) պատմությանը:

Այս վավերագրերի մեջ կան 16-17-րդ դարերի Սեֆյան շոքր շահական հրովարտականեր, որոնք երբեք չեն հետազոտվել և ընդգրկված չեն եղել Մատենադարանի հրովարտակաների շարքի վերջը նշված պրակներում: Դրանց մասին տեղյակ չի եղել Հակոբ Փափազյանը, Մատենադարանի պարսկերեն հրովարտակաների ու կալվածագրերի շարքի իր երեք պրակները կազմելիս, հետևաբար առաջին պրակում ընդգրկված չէ Տաթևի վանքի կալվածքները հաստատող Սեֆյան շահ Թահմասբ Ա-ի 1545 թ. հրովարտակը (տե՛ս ստորև վավերագիր հ. 1), մինչդեռ այդ պրակում տպագրվել են այդ վանքին վերաբերող թե՛ ավելի վաղ և թե՛ ավելի ուշ հրապարակվածները:

Տաթևի վանքի պատմությանն առնչվող փաստաթղթերի մեջ են Մատենադարանի հնագույն՝ Կարա Կոյունլու տիրակալների հրովարտակաները, որոնք հրատարակվել են Մատենադարանի պարսկերեն վավերագրերի «Հրովարտականեր» շարքի առաջին պրակում³: Հայոց այդ վանքին տրված մեծ թվով Սեֆյան շրջանի հրովարտականեր ու այլ փաստաթղթեր են հրատարակվել թե՛ նշված և թե՛ հաջորդաբար հրատարակված նույն շարքի մյուս չորս պրակներում: Այդ շարքից դուրս մնացած հիշյալ հրովարտակը գրանցված է Կաթողիկոսական դիվանի թղթապանակ 1է-ում որպես վավ. հ. 1044: Բնագրային շարադրանքով ստորև ներկայացվող հրովարտակը բավականին մոտ է նույն շահի 1557 թ. հրովարտակին, և, ինչպես վերջինս, հենվում է շահ Իսմայիլ Ա-ի 1510 թ. հրամանագրի վրա՝ հաստատելով վանքի վակֆային կալվածքները Սյունիքի գյուղերում և նրանց հարկային պարտավորությունները վանքի նկատմամբ⁴:

Նորահայտ երկու հրովարտականերն էլ վերաբերում են Հավուց-թաուի Ամենափրկիչ վանքի պատմությանը, որի Զաքարիա վարդապետի ժառանգական կալվածքները հանդիսացող Ավանիկ, Կուզիս, Սուրբ Սարգիս, Ավանասար մազրա՛ե⁵, Թառնիս մազրա՛ե, Կոխթ, Կուտուց վանք մազրա՛ե, Դըզըլ վանք (Հավուց-թաու) գյուղերը 15-րդ դարում Ակ Կոյունլու Յաղուբ փառիշահի օրոք բեյթ ուլ-մալը⁶ փորձում է բռնագրավել, սակայն ըստ 1489 թ. կալվածագրի՝ դրանք

³ Հ. Փափազյան, *Հրովարտականեր*, պրակ Ա, վավ. 1, 2, 4:

⁴ Նուն տեղում, վավ. 11 և 15:

⁵ Մազրա՛ե (مزرعه) – Հացահատիկի հող, գյուղակ, որ պատկանում է մայր գյուղին:

⁶ Բեյթ ուլ-մալ (بيت المال) – Բառացի «գանձատուն» իմա՛ պետական գանձարան: Այս եզրույթը գործածության մեջ է եղել խալիֆայության տիրապետության շրջանից, երբ արևմտի գանձարանը կոչվում էր «բեյթ ուլ-մալ-ե մուսլիմին – بيت المال مسلمين»: Այնուհետև

5000 դրնար գումարով փրկագնվում են ու վերադարձվում վանքին, որից հետո էլ 1526 թ. վակֆ են արվում Հավուց-թառի Ս. Ամենափրկիչ վանքին⁷: Հրովարտականների շարքի առաջին պրակում Հ. Փափագյանը հրատարակել է Հավուց-թառի Ամենափրկիչ վանքի կալվածքները մշակող հողագործներին Զաքարիա վարդապետի նկատմամբ իրենց հարկային պարտավորությունները կատարելու հրահանգով 1577 թ. հրապարակված Սեֆյան շահ Իսմայիլ Բ-ի հրովարտակը⁸: Հետագոտողն օգտվել է այս հրովարտականներից մեկի պատճենից՝ նշելով, որ նրա բնագիրը չի պահպանվել⁹, մինչդեռ այն, թեև թերի վիճակում, առկա է Կաթողիկոսական դիվանի 1 է թղթապանակում գրանցված որպես վավերագիր հ. 1047¹⁰: Բովանդակային առումով այս վավերագրի հետ է կապվում նույն ժամանակահատվածում շահ Իսմայիլ Բ-ի անունից հրապարակված մեկ այլ հրովարտակ (տե՛ս ստորև վավերագիր հ. 2), որը գրեթե նույն բովանդակությունն ունի, ինչ նախորդ հրովարտակը, սակայն առանց միսալի¹¹ է և մեկ անգամ ևս հաստատում է վերը նշված գյուղերի պատկանելությունը Զաքարիա վարդապետին ու մի քանի այլ անձանց, որոնց անունները ևս նշվում են:

Հետագայում նույնպես այդ գյուղերը հավանաբար շարունակում էին պատկանել նշված վանքին, որովհետև Աբրահամ Գ. Կրետացի կաթողիկոսի օրոք նույն կալվածքները, համախոսական գրությունը, հաստատվում են որպես Ղրզըլվանքի (կամ Հավուցթառի Ս. Ամենափրկիչի) սեփականություն¹²:

Շահ Աբբաս Բ-ի 1650 թ. հրովարտակը (տե՛ս ստորև վավերագիր հ. 3) ևս բովանդակային առումով կապվում է Հ. Փափագյանի կողմից Մատենադարանի հրովարտականների երկրորդ պրակում ընդգրկված մի վավերագրի հետ, որն իրենից ներկայացնում է Սեֆյան շահին Փիլիպոս կաթողիկոսի մատուցած մի խնդրագիր՝ էջմիածնին հուզող մի շարք խնդիրների, այդ թվում նաև Վաղար-

նրա տակ հասկացվում էին նաև պետական հարկերը, իսկ ավելի ուշ՝ հարձունիս գրավվող և պետականացվող ամեն ինչ:

⁷ Տե՛ս Հ. Փափագյան, *Կալվածագրեր*, պրակ Ա, Երևան, 1968, վավ. 8, 16, էջ 82-86, 105, 155-7, 166-7:

⁸ Հ. Փափագյան, *Հրովարտականներ*, պրակ Բ, վավ. 19:

⁹ Նույն տեղում, էջ 95-96:

¹⁰ Ի նկատի ունենալով այս վավերագրի բովանդակային նույնությունը Հ. Փափագյանի հրատարակված հրովարտակի հետ, այն չենք ներկայացնում ստորև ընդգրկված վավերագրերի շարքում:

¹¹ «Միսալ» (مثال) էին կոչվում մուսուլմանական հոգևոր ատյանների վեհուները: Նախքան Սեֆյան ժամանակաշրջանը, այդ եզրույթն այլ իմաստ է ունեցել՝ համարժեք լինելով ֆիրման («հրովարտակ») բառին: Սեֆյան շրջանում իրավական կարևոր նորմերի (վակֆային ու մուպային իրավունքների, կրոնական ազատությունների) խախտման կապակցությամբ դիվան ալ-սադարաթը կայացնում էր դրանց վերաբերող որոշումներ՝ միսալներ, որոնք հաստատվում էին միսալի հակառակ կողմում գրված հրովարտակներով:

¹² ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 1 է, վավ. 1189:

շապատ գյուղից գանձվող մանալ¹³ հարկի գիշման մասին¹⁴: Ստորև ներկայացվող հրովարտակը փաստորեն խնդրագրում բարձրացված այդ հարցի կապակցությամբ հրապարակված շահական հրամանագիրն է: Մատենադարանի կաթողիկոսական դիվանի, թղթ. 1է-ում որպես վավերագիր 1054 գրանցված այս փաստաթուղթը սակայն պատճեն է առանց նոտարական հաստատման:

Նորահայտ Սեֆյան վավերագրերից մեկն էլ վերաբերում է իրանահպատակ հայության ժառանգության հարցերում գործող շիա իսլամի օրենքին: Ի տարբերություն սուննի իսլամի իրավագիտական դպրոցների, շիա իմամական մահմեդականների շրջանում ժառանգության մասին գործող օրենքի համաձայն՝ մահմեդականը կարող էր ժառանգել իր այլակրոն՝ անգամ հեռու ազգականի ունեցվածքը՝ զրկելով այդ իրավունքից ավելի մոտ ազգականներին¹⁵: Այս օրենքը Իրանում շրջանառության մեջ էր դրվել շահ Աբբաս Ա-ի իշխանության վերջում՝ 1629 թ. նրա հրապարակած հրովարտակով, որի համաձայն «յուրաքանչյուր քրիստոնյա, որ մահմեդականություն էր ընդունում, իրավունք էր ստանում ժառանգելու իր բոլոր ազգականների ունեցվածքը մինչև յոթ պորտ»¹⁶: Այդ հրամանագիրը փաստորեն նոր ուժ էր հաղորդում այլակրոնների ժառանգական խնդիրներին վերաբերող այդ օրենքին և խրախուսում քրիստոնյաների մահմեդականացումը: Որոշ տվյալների համաձայն՝ այդ հրամանագրի հրապարակումից 15 տարի անց, ավելի քան 50000 քրիստոնյա էր մահմեդականացել՝ խուսափելու համար աղքատացումից և ունեզրկումից¹⁷: Իրանում հայերի մահմեդականացումը շարունակում է լայն թափով ընթանալ նաև հետագայում:

Շահ Աբբաս Ա-ի իշխանության շրջանում այս օրենքի գործադրման և նրա ծանր հետևանքների մասին մանրամասն տեղեկություններ է հաղորդում Առաքել Դավրիժեցին: Հստ նրա՝ Իրան բռնագաղթված հայերից ոմանք մահմեդականություն էին ընդունում, «զի տան կաշառս Մահմետականաց» և կացուցանեն սուտ վկայս, և քարշեն զքրիստոնեայս առ դատաւորս Մահմետականս ի դատաստան, և պահանջեն ի քրիստոնէից զոր ինչ և հնարել կարեն», պնդում, թե՛ «ազգական քո եմ, ամենայն ինչք և ստացուածք քո ինձ հասանի, տուր ինձ:

¹³ Մանալ (منال) – Սկզբնաղբյուրներում և վավերագրերում երբեմն ‘մալ և ջահաթ’ (մալոջահաթ) հարկային եզրույթի փոխարեն, հանդիպում է ‘մալ և մանալ’ (մալումանալ) եզրույթը, որից կարելի է ենթադրել, որ ‘մանալ’-ը փոխարինում էր «ջահաթ» կամ «մութավաջեհաթ» եզրույթներին: Սակայն որոշ դեպքերում այն օգտագործվել է իրեն համանիշ «մալի» կամ ընդհանուրապես «մալոջահաթի» իմաստով (Չ. Փափազյան, *հրովարտականեր*, պրակ Բ, էջ 223):

¹⁴ Չ. Փափազյան, *Հրովարտականեր*, պրակ Բ, վավ. 39, էջ 141:

¹⁵ اسعد شيخ الاسلامی، احکام وصیت و ارث ذمی از نظر فقهای اسلامی، مقالات و بررسیها، كله الااليات 168-167، ص. 1355، دانشکده الهیات نشریه گروه تحقیقاتی،

¹⁶ Այս հիմնականագրի մասին տե՛ս *A Chronicle of the Carmelites in Persia and the Papal Mission of the 17th and 18th Centuries*, vol. I, London, 1939, p. 288:

¹⁷ Նույն տեղում:

եւ դատաւորքն ըստ անօրէն օրինաց իւրեանց իրաւացուցանեն զբանս ուրացողաց, թէ որովհետեւ նա եկեալ է յօրէնս Մահմետի, նմա հասանին ամենայն ինչք իւրոց ազգականաց: Եւ այսպէս զրկեալ զողորմելի քրիստոնեայս՝ յափշտակեալ զամենայն ինչս և տան ուրացողացն»¹⁸:

Այդ օրէնքը հետագայում ևս մեկ անգամ վերահաստատվում է շահ Աբբաս Բ-ի իշխանութիւն (1642-1666 թթ.) շրջանում¹⁹՝ ավելի սաստկացնելով նրա ազդեցութիւնը քրիստոնեաների ժառանգութեան խնդիրներում:

Մեծ թիվով պարսկերեն վավերագրեր իրենցից ներկայացնում են դիվան ալ-սադարաթի²⁰ և Երևանի, Նախիջևանի ու այլ վայրերի շարի՝²¹ աստիանների ֆաթիվաներ (վճիռներ)՝ հրապարակված հայերի ժառանգական խնդիրներում այս օրէնքի գործադրման կապակցութեամբ²²: Վավերագրերի տվյալները հնարավորութիւն են տալիս նաև պարզելու, որ եթե զիմմի²³ ժառանգորդները ևս մահմեդականութիւն էին ընդունում նախքան ժառանգութեան բաժանումը, կարող էին վերականգնել իրենց ժառանգական իրավունքը²⁴, այնուամենայնիւ, «եղբայրներից ավագը լինելով հանդերձ, ավելի ուշ մուսուլման դարձածը չէր կարող ավելի վաղ մուսուլման դարձած եղբորից խել ժառանգութեան իրավունքը»²⁵:

Առանձին դեպքերում ավելի վաղ մահմեդականացած ժառանգներից իրենց ժառանգական իրավունքը պաշտպանելու համար նոր մահմեդականացած հայերը հարկադրված էին լինում որոշակի գումար վճարել: Կաթողիկոսական դիվանի վավերագրերից մեկի համաձայն՝ Օրդուբադի շարի՝ դատարանում 1694 թ. քննվում է մի խնդիր, որ ծագել էր մի կողմից շադիդ ուլ-խլամ (նոր մահմեդականացած) Մուհամմադ Ամինի զավակներ Շահիջանի ու Արեզու խանումի և մյուս կողմից՝ Ագուլիսի քրիստոնեայ Գուլնազարի որդի Խոջա Նահապետի դուստր Թա՛րիֆի միջև վերջինիս հորից իրեն հասնող ժառանգութեան շուրջ: Ըստ այդ փաստաթղթի՝ Թա՛րիֆի որդի Առաքելը մահմեդականու-

¹⁸ Առաքել Գավրիթեցի, Գիրք պատմութեանց, աշխ. Լ. Ա. Խանլարյանի, Երևան, ՀեՍՀ ԳԱ հրատ., 1990, էջ 95-6:

¹⁹ *A Chronicle of the Carmelites in Persia*, vol. I, p. 366.

²⁰ Դիվան ալ-սադարաթ (ديوان الصدارة)՝ Սեֆյան շրջանում կրոնական բարձրագույն առաջնորդի՝ սադրի ատյանը:

²¹ Ծար՝ (شرع)՝ Մուսուլմանական գլխավոր, կրոնական, հոգևոր օրենսդրական-դատական խորհուրդ, որին մասնակցում էին տվյալ վայրի բարձրաստիճան հոգևորականները:

²² Հ. Փափագյան, «Սեֆյան Իրանի ասիմիլյատորական ֆաղափականության հարցի շուրջը», *ԲՄ*, № 3, 1956, էջ 88:

²³ Զիմմի (ذمی)՝ Այդպես էին կոչվում քրիստոնեայ և հրեա հպատակները, որոնք ի տարբերություն մուսուլման հպատակների՝ բոլոր հարկերից ու պարտավորություններից բացի, պարտավոր էին վճարել նաև հատուկ գլխահարկ՝ «ջիզյա», որով իրավունք էին ստանում իրենց կրոնը դավանելու:

²⁴ Նույն տեղում, էջ 91:

²⁵ Հ. Փափագյան, *Հրովարտականք*, պրակ Բ, վավ. 16, էջ 102:

թյուն է ընդունում, որից հետո 18 թուման է վճարում իրեն հասնող ժառանգությունը տնօրինելու համար²⁶:

Մեծ թիվով հայեր «կամավոր» մահմեդականություն են ընդունում՝ ազահությունից դրդված կամ էլ մահմեդական դարձած ազգականներից իրենց ժառանգությունը պաշտպանելու նպատակով: Ժառանգության պատճառով տեղի ունեցող հավատափոխության դեպքերը հատկապես շատ էին քաղաքաբնակ ունեցող դասի ներկայացուցիչների՝ առևտրականների ու արհեստավորների շրջանում²⁷: Հայ ունեցող դասի ներկայացուցիչներից շատերն էլ չցանկանալով մահմեդականանալ, հեռանում էին Իրանից: Այդ մասին խոստում վկա է Հայոց կաթողիկոս Աստվածատուր Համադանցու կոնդակներից մեկը²⁸:

Իմամ Ջա'ֆարի օրենքի կապակցությամբ բազմաթիվ բողոքագրեր ու փաստաթղթեր կան պահպանված²⁹: Վավերագրական նյութերում ու այլ աղբյուրներում քիչ չեն նաև տեղեկություններն այն մասին, որ մահմեդականացած հայերը կամ պարզապես մահմեդականներից ոմանք ջանացել են տեր դառնալ իրենց հետ որևէ ազգակցական կապ չունեցող անձանց ժառանգությունը³⁰:

Իմամ Ջա'ֆարի օրենքը հավասարապես կիրառվում էր ինչպես Հայ Առաքելական եկեղեցու հետևորդների, այնպես էլ կաթողիկոսացած հայերի ժառանգության հարցերում: Կաթողիկոս հայրերի զեկուցումներում հստակ ուրվագծվում են այս օրենքի ծանր հետևանքները Նախիջևանի հայ կաթողիկոսների գյուղերում տեղի ունեցող էթնոգրավանական գործընթացներում³¹: Պատահական չէ, որ այդ առթիվ իր բողոքն է ժամանակին արտահայտել Հոռմի Պապ Ալեքսանդր VII-ը շահ Աբբաս Բ-ին ուղղված իր ուղերձում³²:

Մատենադարանի պարսկերեն վավերագրերի տվյալները թույլ են տալիս եզրակացնել, որ Հայոց եկեղեցու վակֆային կալվածքները պաշտպանված էին նոր մահմեդականացած ժառանգների ոտնձգություններից, քանի որ նրանք տեսականորեն համարվում էին անձեռնմխելի ու որևէ կերպ օտարման ենթակա չէին³³: Ճիշտ է, նման հավակնություններ հիշյալ կալվածքների նկատմամբ նոր մահմեդականացած ժառանգները ունեցել են, սակայն շարի' դատական

²⁶ ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 1է, վավ. 1107:

²⁷ Այս մասին տե՛ս Հ. Փափազյան, «Սեֆյան Իրանի ասիմիլյատորական», էջ 92:

²⁸ Մ. Կարապետյան, «Իմամ Ջա'ֆարի օրենքը և արևելահայերը», ՊԲՀ, 1988, թիվ 1, էջ 220:

²⁹ Հ. Փափազյան, «Սեֆյան Իրանի ասիմիլյատորական», էջ 87-88:

³⁰ Ք. Կոստիկյան, հրովարտական, պրակ Գ, վավ. 18: Նման մի դեպք է նկարագրում է Ջաֆարիա Քանաֆեղյան (Ջաֆարիա Քանաֆեղյան, Պատմութիւն, Կոնդակ սուրբ ուխտին Յօհաննու վանից, աշխ. Ա. Վիրաբյանի, Երևան, 2015, էջ 78-79):

³¹ Մ. Կարապետյան, «Հայ կաթողիկեթեմը եւ էթնոգրավանական գործընթացները Նախիջևանում XVII-XVIII դարերում», հետևյալ գրքում՝ Հ. Սահակ Ճեմեմեմեմ, Նախիջևանի հայոց վարժարանը եւ Հոռմը, Վեմեմեմի Ս. Ղազար, 2000 էջ 8-10:

³² A Chronicle of the Carmelites in Persia, v. 1, p. 366.

³³ Հ. Փափազյան, Հրովարտական, պրակ Ա, էջ 120:

ատյանները, որպես կանոն, դրանք մերժել են: Մասնավորապես, Սեֆյան պետության մահմեդական հոգևորականության բարձրագույն դատական ատյանի 1658 և 1684 թթ. որոշումներում մերժվում են նրանց հայցերը էջմիածնին փոխանցված վակֆային կալվածքների նկատմամբ³⁴: Դեռևս 1658 թ. Հակոբ Զուղայեցի կաթողիկոսի ջանքերով հրապարակվում է մահմեդական աստվածաբանների ու իրավագետների կայացրած վճիռը հաստատող՝ շահ Աբբաս Բ-ի հրամանագիրը, որի համաձայն էջմիածնին հանձնված վակֆերի հասույթը նրա տնօրինության տակ է գտնվում, և նրա նկատմամբ նվիրատուների ժառանգները, լինեն քրիստոնյա կամ նոր մահմեդականացած, իրավունքներ չունեն³⁵: Այս ֆաթվայով փաստորեն շեշտվում էր վակֆերի անձեռնմխելիությունը՝ պաշտպանելով դրանք նախկին նվիրատուների մահմեդականացած ժառանգների հավակնություններից:

Այս օրենքի վնասներից և ունեզրկումից իրենց ժառանգներին պաշտպանելու ուղիներից մեկն էլ, ըստ Տեր Հովհանյանցի, դրանք պարզեցված (սուլհնամե - صلح نامه) իր զավակներին փոխանցելն էր, որից հետո «ուրացեալ ընտանին զկնի մահուանն նորա ոչ կարէ առնել զպահանջ ինչ»³⁶: Նման սուլհամեի կնքման մասին նշում կա ջուղայահայ վաճառական Հովհաննես Թուփչիի 1669 թ. գրած կտակում³⁷, որով թերևս, նա փորձել է ապահովել իր ունեցվածքը մահմեդականացած ազահ ազգականների ոտնձգություններից, այդ կերպ փոխանցելով այն իր կնոջը՝ Դադբամին: Նույն նպատակով սուլհամեներով հաճախ ամրացվում էին առքուվաճառքի գործարքները, որոնք հաճախ են հանդիպում հատկապես 17-րդ դարի հայոց վանքերին վերաբերող փաստաթղթերում³⁸:

Ստորև ներկայացվող վավերագրերից մեկը շահ Աբբաս Բ-ի 1658 թ. հրովարտակն է, որ հաստատում է մահմեդական աստվածաբանների ու իրավագետներին՝ այս օրենքի գործադրման որոշ այլ մանրամասնություններ վերաբերող վճիռը՝ ֆաթվան: Ըստ այդ որոշման, նվիրատվության մեկ այլ ձևակերպմամբ, որ կոչվում էր «հոբբե», ստացված եկեղեցական մուլքերը³⁹ ևս չէին կարող վերադարձվել նախկին սեփականատիրոջ ժառանգներին. անկախ նրանից՝ այդ ժառանգները քրիստոնյա էին, թե մահմեդական:

³⁴ ՄՄ, Կաթողիկոս. դիվան, թղթ. 1է, վավ. 1068, թղթ. 1բ, վավ. 181 (այդ վավերագիրը տե՛ս նաև Ք. Կոստիկյան, Հրովարտականք, պրակ Գ, վավ. 51):

³⁵ ՄՄ, Կաթողիկոս. դիվան, թղթ. 1է, վավ. 1068:

³⁶ Յ. Տէր Յովհաննէանց, Պատմութիւն Նոր Զուղայու որ յԱսպահան, Բ. Ա, Բ, Նոր Զուղա, 1880, էջ 209:

³⁷ ՄՄ, Կաթողիկոս. դիվան, թղթ. 4, վավ. 25:

³⁸ Ք. Կոստիկյան, Մ. Խէչո, Շարիաթական նոտարական վավերագրեր, էջ 18, նաև վավ. 2, 3, 5, 11, 13:

³⁹ Մուլք (مُلْك) – Սեփականություն, տիրույթ, ժառանգաբար ստացած կամ դրամով գնած ու սեփականություն դարձրած հող կամ այլ անշարժ կալված:

Փաստորեն, աղբյուրների տվյալները թույլ են տալիս եզրակացնել, որ վերը նշված ժառանգությունն մասին օրենքից պաշտպանվելու միակ ճանապարհը նվիրատվությունն էր, որը կարող էր ձևակերպվել օրինական ժառանգների կամ այլ անձանց ու հաստատությունների անունով արված սուղհնամեի, հոբբե-նամեի կամ վակֆնամեի միջոցով:

ՎԱՎԵՐԱԳՐԵՐԻ ԲՆԱԳՐԵՐ ԵՎ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ Վավերագիր 1

Շահ Թահմասը Ա-ի 1545 թ. հրամանագիրը Սվարանց, Աղաքենդ, Տանձատափ, Կից, Տաթև և այլ ընդամենը 21 գյուղերի պատկանելությունը Տաթևի Սիմեոն (Շմավոն) եպիսկոպոսին հաստատելու կապակցությամբ

Կաթողիկոսական դիվան, թղթ. 1է, վավ. 1044, բնագիր, նորոգված, մեծ. 20,5 x 47,5 սմ, գիր՝ թա՛լիզ:

بسم الله الرحمن الرحيم

يا محمد يا على

[الحکم لله]

ابو المظفر طهماسب بهادور سيوزوميز

[مهر]: بئذ شاه ولايت طهماسب ...

چون محراسیا شماون معروض داشت که محال مفصله ضمن از اعمال الکای ارود ملک شرعی و در تصرف اوست و بدیوان منسوب نشده بنا بر وقوع او را در تصرف آن ممکن دانسته هیچ آفریده بخلاف شریعت غرا در آن مدخل ننماید و هر کس در آن محال زراعت نموده باشد و نماید همیشه از عهده بهره آن بدستور متعارف آنجا بیرون آمده بدو واصل گرداند و بعذر و بهانه موقوف ندارد از مضمون نشان عالیحضرت خاقان جمجاه فردوس مکان علیین آشیان که درین باب صادر شده در نگذردند از جوانب بدین جمله روند و از شکایت که موجب خطاب و عتاب است اندیشه نموده از فرموده در نگذردند و هر ساله حکم مجدد نطلبند. تحریرا فی شهر ربیع الاول 952

[ظهر]

سواری, آقاکنդ, دنزاطاب, داشو, طاتف, کیس, بنونیس, طاس, قراکلیسیاه, شنهر, دستجرد, اناباد,؟, خوطانان, بردی, خوط, حالیزور, کوریس,؟, برناکوت,., مالداش, بوردی, وقدین,؟...

Հանուն ողորմած ու գթառատ Աստծո

Ո՛վ Մոհամմադ, ո՛վ Ալի

Հրամանն [Աստծունն] է

Աբու-ալ-Մոզաֆֆար Թահմասը Բահադուր. Մեր խոսքը

Ինչպես Շմավոն վարդապետը զեկուցեց, ներհնչյալ մահալը⁴⁰, որը

⁴⁰ Մահալ (محل) – Շրջան, գավառ, XVII-XIX դարերում Այսրկովկասի վարչական բաժանման միավորներից է:

Որոտն (Օրոտ) օլֆայի⁴¹ մեջ է, նրա շարի'աթական⁴² մուլֆն է և նրա տնօրինման ներքո է գտնվում, դիվանին⁴³ չի վերագրվում, այնպես որ նրա տնօրինումը պետք է հնարավոր համարել, և թող ոչ ոք, ամենապուստիկ շար'ին հակառակ, այնտեղ մտաֆ չգործի: Եվ յուրաքանչյուր ոք, ով այնտեղ հողագործությամբ զբաղվելիս կլինի, պետք է այնտեղի գործող կարգին համաձայն՝ բահրեշեն, ըստ հայտնի կարգի, մշտապես նրան վնարի, որևէ պատրվակով ու պատճառով չդադարեցնի [վնարումը]: Այս առթիվ հրապարակված Ջամշիդի փառֆին հավասար դրախտաբնակ Նորին Մեծությունն տիրակալի հրամանագրի (նեշանի) բովանդակությունից թող շեղվեն, նրան համապատասխան վարվեն և բողոքներից, որ պատժի պատճառ կարող է լինել, զգուշանան: Թող հրամանից շեղվեն և ամեն տարի նոր հրաման չպահանջեն: Գրվեց 952 թ. ուրբի Ա. ամսին⁴⁴:

[Հակառակ կողմում]

Սվարի (Սվարանց), Աղաֆենդ, Տանձատափ, Տաշու, Տաթև, Կիս (Կից), Բնունիս, Թաս, Ղարաֆիլիսա, Շնհեր, Դաստակերտ, Անապատ, Խոտանան, Բորդի, Խոտ, Հալիզուր (Հալիձոր), Գորիս, Բոնակոթ, ///, Մալղաշ, Վաղադին:

Վավերագիր 2

Շահ Իսմայիլ Բ-ի 1577 թ. հրամանագիրը Ավանիկ, Սուրբ Սարգիս, Մանկանոց և մի քանի այլ գյուղերի պատկանելությունը Ջաքարիա քահանային հաստատելու և այնտեղի հարկերի վճարելու կարգադրությունը

Կաթողիկոսական դիվան, թղթ. 1է, վավ. 1045, բնագիր, նորոգված, մեծ.՝ 26,5 x 58,5 սմ, գիրը՝ նասիթա՝ լիդ:

[مهر]: مهر ديوان اعلى اشرف

امر ديوان اشرف اعلى آنکه چون زكريا مسيحي چخور سعدي و مير تومان ولد كدخدا بابا مهرباب ولد

⁴¹ Օլֆա (الكا) – Հողային այնպիսի տիրույթներ, որոնք, որպես ավատ, տրվում էին բոչվոր ցեղերի պարագլուխներին և բարձրաստիճան գինվորականությանը՝ ամիրներին: Օլֆա ստացող ամիրները պարտավոր էին պահանջված դեպքում որոշյալ ֆանակությամբ զորք տրամադրել կենտրոնական իշխանությանը: Օլֆայի ամիրները ունեին առանձին դրոշակ ունենալու և հանդիսավոր երթերի ու գորաշարժերի ժամանակ հատուկ թմբուկներով թմբկահարելու իրավունք:

⁴² Շարի'աթ (شريعة) – Մուսուլմանական կրոնական օրենքներ, հաստատված նորմեր, որոնցով առաջնորդվում էր հոգևորականների բարձրագույն կրոնական-դատական ատյանը: Այս հաստատությունը հանախ անվանվում էր հենց այդ օրենքների անունով, սակայն սովորաբար այն կոչվում էր «Շար'»: Շարի'աթի կամ Շար'ի հոգևոր ատյաններում էին ֆննվում մեծ մասամբ տնտեսական հարցերի շուրջ ֆաղաֆացիների միջև առաջացած վեճերը:

⁴³ Դիվան (ديوان) – Պետական գործերի ատյան կամ գրասենյակ: Հասկացվում էր հատկապես պետության կամ նրա բարձրագույն օրգանի իմաստով:

⁴⁴ 1545 թ. մայիսի 13-հունիսի 12:

قلی و چیده لازم ولد خواجه بدیوان اعلی آمده عرض کردند که محال مذکورہ ضمن چخور سعد ملک متصرف فیہ شرعی ایشان است که بارث شرعی بدیشان انتقال یافته و قبالات شرعی که مسجل بسجل قضاہ اسلام در دست دارند بدان منوال است بنابراین باید که هیچ آفریده بخلاف شرع انور مانع تصرف مالکان مذکورہ نشوند و بنا مشروع دخل در آب و زمین محال مزبورہ ننماید و هر کس که برضا مالکان محال مذکورہ در اراضی متعلقہ بمواضع مذکورہ زراعت نماید یا در یتاقات آنجا کوسفند نگاه دارند از عہدہ بہرچہ واقعی و یتاقیاسی بدستور معمول آنجا بیرون آمدہ تخلف نورزند و اگر درین باب سخن شرعی و حسابی داشتہ باشند بقضاہ اسلام و حکام کرام آنجا رفع نمایند بعہدہ بیگلریگی چخور سعد کہ امداد شرعی بتقدیم رساند
تحریرا فی روز سہ شنبہ ہفتم شہر ذی قعدہ الحرام سیچقان بیل اربع و ثمانین و تسعمایہ
[ظہر]

اوانیس بروش ... قریۃ سورب سرکیس، قریۃ منکوس و مزرعہ ابانہ سر، مزرعہ ترینیس، قریۃ کوخت نصف، مزرعہ کودیس وانک، قریۃ قزل وانک

[Կնիֆ]. Բարձրագույն դիվանի կնիֆը

Ամենաբարձր դիվանի հրաման եղավ այն մասին, որ Չոխուր Սա'ադի ֆրիստոնյա Ջաֆարիան, Բյադխոդա Բաբայի որդի Միր Թումանը, Դուլիի որդի Մեհրաբը և Խաչեի որդի Չիդասը, բարձրագույն դիվան գալով զեկուցեցին, որ Չոխուր Սաադին կից նշվող մահալը շար'ով իրենց պատկանող մուլն է, որ շար'ի ժառանգությամբ իրենց է փոխանցվել: Իրենց ձեռքին եղած իսլամի դագինների⁴⁵ կողմից հաստատված շարի'աթական կավաձագրերի համաձայն այդպես է: Հետևաբար պետք է, որ ոչ մի արարած ամենալուսավոր շար'ին հակառակ նշյալ սեփականատերերի անօրինմանը շխտչընդոտի և ապօրինաբար հիշյալ մահալի ջրի ու հողի նկատմամբ ոտնձգություն չկատարի: Եվ յուրաքանչյուր ոք, որ նշված մահալի սեփականատերերի համաձայնությամբ այդ վայրերում հողագործությամբ կգրադվի կամ այնտեղի յաթաղներում ոչխար կպահի, պետք է իրական բահրեչեն⁴⁶ ու յաթաղի⁴⁷ համար հարկը վճարի և չհակառակվի: Եթե այս կապակցությամբ շարի'աթով օրինական պահանջ ունենան, իսլամի դագիններին ու այնտեղի ողորմած հախիմների միջոցով այն վերացնեն:

⁴⁵ Դագի (قاضی) – Դատավոր, շար'ի դատական ատյանի պետը, որը նշանակվում էր բարձրաստիճան հոգևորականության շարքերից, որը Շարի'աթի օրենքով ֆննում էր ֆաղաֆացիական ու ֆրեական գործերը:

⁴⁶ Բահրե կամ բահրեչե (بهره, بهره) էր կոչվում հողագործ գյուղացիության կողմից կավաձատիրոջն ու պետությանը վճարվող հողային հարկը, որի պետությանը հատուցվող մասը կոչվում էր «բահրեչե-ե դիվանի» (بهره چه دیوانی), իսկ կավաձատիրոջը հատուցվողը՝ «բահրեչե-ե մալիֆանե» (بهره چه مالکانه): Եզրույթի վերջում ավելացված «չե» փոխաբանությունը մասնիկը նրա բովանդակության մեջ փոփոխություն չի մտցնում և հանդիսանում է զուտ լեզվական երևույթ, ինչպես օրինակ «դաբալչե» (կավաձագիր), «փարվանչե» (հրովարտակ), «վակֆնամչե» (կտակագիր) և այլ բառերում:

⁴⁷ Յաթաղ (یتاق) – Հատկապես մանր եղջերավոր անասունների մակադատեղ՝ նստելու, հանգստանալու կայան բաց դաշտում (Հ. Փափազյան, Հրովարտականեր, պրակ Ա, էջ 116):

Չոխուր Սա՛ադի բեկլարբեկը պարտավոր է շարի՛աթական օգնություն ցուցաբերել: Գրվեց երեհաբթի օրը, ինը հարյուր ութսունչորս սիչլան յըլ (մկան) տարվա զի դաադե ամսի յոթին⁴⁸:

[Հակառակ կողմում]

... Սուրբ Սարգիս գյուղ, Աբանասար մագրա՛ե, Թերնիս մագրա՛ե, Կոխաբ գյուղի կեսը, Կուտիս վանք մագրա՛ե, Գըզըլ վանք գյուղ

Վավերագիր 3

Շահ Աբբաս Բ-ի 1650 թ. հրամանագիրը, որով Վաղարշապատ գյուղի մանալ և ջենս հարկերը հատկացվում են էջմիածնի վանքին

Կաթողիկոսական դիվան, թղթ. 1է, վավ. 1054, պատճեն, մեծ. 27 x 46,5 սմ, գիր՝ շիբասթե:

موضع مهر مبارک شاه عباس ثانی

آنکه چون منال شش دانگ قریه اوچ کلیسا انتقالی طهماسب قلی خان قاجار واقعه در ناحیه کربی ایروان از قرار ثلث حاصل سیچقان بیل بغایه بارس بیل بمقدار یکصد و دوازده خروار و پنج من و سه دانگ و هم جنس حسب الضمن ابوابجمع و بموجب همه ساله بیکلر بیکی چخور سعد مقرر است درینوقت زیده الرهبانین و عمدہ القسیسین العیسویہ فیلقوس خلیفه عرض نمود که بجهه قلت آب که در ناحیه مزبوره بوده مبلغهای کلی از خود خرج نموده نهری که هفت و هشت آسیاب با آن دایر میتوان نمود از نزدیک قارص احداث نموده آب آنرا بناحیه مزبوره آورده که باعث توفیر حاصل در رفاهیت جمعی که در آنجا ساکنند شده و استدعا نمود که منال قریه مزبوره که بموجب همه ساله بیکلربیکی آنجا مقرر است که در عوض حق السعی که نموده که بوظیفه مشارالیه مقررگردد دلالت و شوکتیناه حشمت و جلالت دستکاه عالیجاه نظام الدوله و الاقبال کیخسرو خان بیکلربیکی چخور سعد سرعریضه ولایت سایه سریر خلافت مصریر نوشته و استدعاء آن نموده بود که چون خلیفه مزبور با جمعی کثیر از کشیشان و سیاهکلاهان آرامنه در قریه مزبوره ساکن اند و منال قریه مزبوره که بموجب همه ساله آیالت پناه مشارالیه مقرر است منال در وجه خلیفه و جماعت مزبوره مقرر میشود که صرف معیشت خود نموده بدعای دوام دولت قاهره اشتغال نمایند بنابر این از ابتدای سه ماهه اود بیل منال قریه مزبوره را که آیالت پناه مزبور رضا نامه نوشته بوظیفه خلیفه مزبور شفقت فرمودیم که شوکت آیالت پناه بیکلربیکی آنجا باشند که دایما خلیفه مزبور منال آنرا سال بسال متصرف شده و صرف معیشت خود نماید درینباب قد غن دانسته هر ساله حکم مجدد نطلبد و چون [پر]وانچه بمهر اشرف رسد اعتماد نمایند و جری ذلک. فی ربیع الاول فی 1060

Շահ Աբբաս Բ-ի օրհնյալ կնիքի տեղը

[...]Քանի որ Երևանի Կարպիի նանիայում գտնվող Ուլֆիլիսա գյուղի վեց դանգի⁴⁹ մանալը, [որ կազմում է] բերքի 1/3-ը, որը 12 խարվար⁵⁰, 5

⁴⁸ 1577 թ. հունվարի 26:

ման ու 3 դանգ է⁵¹, նաև ջենսը⁵² մկան տարվանից մինչև հովազի տարվա վերջը Թահմասը Ղուլի Խան Ղաջարի փոխանցմամբ հատկացվել ու արվաթ-ե ջամ⁵³ էր արվել Չոխուր Սա'ադի բեկլարբեկի⁵⁴ ռոնիկին որպես համեսալե⁵⁵: Օրերս հոգևորականների մեջ ազնվագույն և քրիստոնյա վանականների գլխավոր Փիլիպոս կաթողիկոսը զեկուցեց, որ այդ նահիայում⁵⁶ ջրի սակավության պատճառով մեծ գումարի ծախս անելով ջրանցք են կառուցել ու 7-8 ջրաղաց պատեցնող ջուր բերել Կարսի մոտակայքից՝ բերքի առատության և այնտեղ բնակվողների բարօրության համար: Եվ խնդրեց, որ հիշյալ գյուղի մանալը, որ որպես համեսալե ռոնիկ այնտեղի բեկլարբեկին է հատկացվել, ի հատուցում իր ջանքերի՝ իրեն արվի որպես վազիֆե⁵⁷:

Չոխուր Սա'ադի վսեմաշում ու բարեբախտ բեկլարբեկ, հզորության ու փառքի հանգրվան, փառահեղ կառավարիչ ու միջնորդ Քեյխոսրով խանը վեհանձն կաթողիկոսության կրողի խնդրագրի վրա գրել ու խնդրել էր, որ ֆանի որ հիշյալ կաթողիկոսը միաբանների ու հոգևորականների մեծ բազ-

⁴⁹ Դանգ (دانگ) – Կավաժատիրական՝ մուֆային գյուղերից ստացվող ամբողջ եկամուտը կամ ռենտան, որ սովորաբար կոչվում էր «մուլֆ», դիտվում էր որպես մի ամբողջություն և, ծանրության մասն միավոր «միսղալ»-ի նման բաժանվում էր 6 դանգի: Գյուղերի մուլֆերը առուծախի էին ենթարկվում ինչպես ամբողջությամբ, որ կոչվում էր «շեշդանգ – ششدانگ» (վեց դանգ), այնպես նաև մի ֆանի, երբեմն էլ մեկ, կես կամ քառորդ դանգով, որ անվանվում էր «թասուզ»:

⁵⁰ Խարվար (خوار) Կշոի խոշոր միավոր, որ հավասար էր 100 մանի: Եթե նկատի ունենանք, որ յուրաքանչյուր Թավրիզի ման կշռում էր 3000 գրամ, ապա մեկ խարվարը կարող էր կշռել 300 կգ:

⁵¹ Դանգ (دانگ) կշոի միավոր, որ համարժեք էր դիրհեմի 1/6 մասին:

⁵² Ջենս (جنس) բնամթերային հարկ:

⁵³ Արվաթ-ե ջամ⁵³ – (ابواب جمع) էր կոչվում հարկերի հաշվառման այն ձևը, երբ որևէ հարկատու օբյեկտից կամ առանձին գյուղական համայնքից գանձվող բոլոր պետական հարկերը մանրամասնությամբ հաշվվում էին և առանձին-առանձին հարկային մատյաններում գրանցվելուց հետո ի մի էին բերվում և ի վերջո դրամական արտահայտությամբ արձանագրվում, թե որքան հարկ պետք է վճարի և դրանից որքանը՝ որ հարկի հաշվից:

⁵⁴ Բեկլարբեկ (بيگلر بيگ) – Սեֆյան Իրանի սահմանամերձ նահանգներում կամ կուսակալություններում իշխող խաներն ու ամիրները կոչվում էին «բեկլարբեկեր»: Իրանում XVI-XVII դարերում կար 13 բեկլարբեկություն, որոնցից հյուսիսարևմտյան սահմանումն էին գտնվում Ատրպատականի, Ղարաբաղի (Գանձակի), Շիրվանի և Չոխուր Սաադի կամ Երևանի բեկլարբեկությունները:

⁵⁵ Համեսալե (همه ساله) – Այսպես էր անվանվում ռոնիկների հատուցման այն ձևը, ըստ որի ռոնիկ ստացող պաշտոնյան իրավունք էր ստանում, ցմոր տնօրինություն, ամեն տարի նույն վայրի հարկերի հաշվից ստանալու իր ռոնիկի գումարը: Այսպիսի իրավունք ստացող զինվորականներն ու պետական պաշտոնյաները կոչվում էին «համեսալեդար»:

⁵⁶ Նահիե (ناحية) – Գավառ, շրջան: Հոմանիչ՝ «մահալ»:

⁵⁷ Վազիֆե (وظیفه) – Հատուկ պարգև, որ կենսաթոշակի բնույթ էր կրում և շահի կամ խոշոր ֆեոդալների կողմից ի նշան մեծարման ու հարգանքի արվում էր գիտնականներին, գրողներին, անվանի մարդկանց ու հոգևորականներին որպես սպրուտի միջոց (Հ. Փափագյան, Հրովարտականեր, պրակ Բ, էջ 232):

մուրթյամբ այդ գյուղում են բնակվում և հիշյալ գյուղի մանալը վերոհիշյալ կառավարչին է հատկացված, կաթողիկոսին ու այդ համայնքին հատկացվի, որպեսզի ծախսեն իրենց ապրուստի վրա և զբաղվեն հաղթական պետության հարատևման համար աղոթելով:

Հետևաբար կովի տարվա (ուղ յըլ) եռամսյակի սկզբից վերոհիշյալ կառավարիչը համաձայնագիր գրեց և նշված գյուղը հիշյալ կաթողիկոսին որպես վազիֆե շնորհեց, որպեսզի կաթողիկոսը տարեցտարի նրա մանալը տնօրինի և ծախսի իր ապրուստի վրա: Թող սա խիստ հրաման համարեն և ամեն տարի նոր հրամանագիր չպահանջեն: Եվ երբ փարվանչեն⁵⁸ ազնվագույն կնիքով հաստատվի, նրան վստահեն: Գործադրվեց այս 1060 թ. ռաբի' Ա. ամսին⁵⁹:

Վավերագիր 4

Շահ Աբբաս Բ-ի 1658 թ. հրամանագիրը մահմեդական հոգևորականության ֆաթվայի հաստատմամբ, ըստ որի, որպես նվիրատվություն (հոբե) հանձնված գույքը այն նվիրաբերած անձանց մահմեդականացած ժառանգները չեն կարող հետ պահանջել

Կաթողիկոսական դիվան, թղթ. 1է, վավ. 1068, պատճեն, մեծ. 29-39,5 սմ, գիր՝ շիբասիե:

موضع مهر مبارک اشرف

حکم جهانمطاع شد آنکه بموجبی که علمای اسلام امامیه و فقهای کرام اثنی عشریه خلدت میامین افاداتهم بین البریه در ذیل فتوی نموده اند عمل نمایند و از مضمون و مدلول آن عدول و انحراف نورزند و محض شرع انور را قدوه و اسوه دانسته از فرموده تخلف ننمایند به عهده ی وکلای بیکلریبکی چخور سعد که امداد شرعی بتقدیم رسانیده در عهده شناسند. تحریرا شهر رجب المرجب سنه 1068

بسم الله الرحمن الرحيم

صح الجواب فليعمل بمقتضاه على فرض وقوعه

و الله سبحانه تعالى يعلم بحقايق الامور. محل مهر.

علماء اسلام و فقها کرام ذوی الاحترام خلدت ظلال افاداتهم الی یوم القيام چه فرمایند که هرگاه جماعت معینه ارامنه املاک معینه و اشیا منقولہ معلومه خود را هبه صحیحہ شرعیہ نموده باشند بخالد خلیفہ معبد معینه اوچ کنیسه از روی رضا و رغبت تمام در حال نفاذ تصرفات جماعت مذکور املاک و اشیا مذکور را بقبض و تصرف خالد مذکور داده باشند و شرایط شرعیہ در صحت اینمعانی و لزوم آن بینهم متحقق گردیده باشد شرعا در اینصورت هبه ی مذکور که بطریق مذکور از جماعت مذکور بظهور آمد صحیح و شرعی بوده باشد و خالد مذکور را میرسد که حاصل و منافع آنها را تصرف نماید بهر عنوان که خواهد و اراده نماید از تاریخ هبه مذکور مع محقق شرایط الشرعیہ یا نه بینوا و جروا.

هو.

حی و الله تعالی

بلی

⁵⁸ Փարվանչե (քրոնչե) – հրովարտակի տեսակ:

⁵⁹ 1650 թ. մարտի 4-ապրիլի 3:

يعلم حمدالله. محل مهر
 باز بیان فرمایند در صورت مسطور که بعد از تحقیق مقدمات مذکور جماعت مذکور فوت شده باشند
 هر یک از سر ورثه معینه شرعیه درینصورت ورثه ی جماعت مذکور که بعضی جدید الاسلام و
 بعضی ارمنی بوده باشند بعثت ارث جماعت مذکور از املاک مذکور و اشیا مذکور ممنوع و محروم
 بوده باشند بشروط الشرعیه یا نه بینوا توجروا صلی الله علی محمد وآله اجمعین الطیبین الطاهرین
 المصومین الی یوم الدین

هو
 حی
 و الله تعالی
 بلی
 يعلم حرره
 محل مهر

[در حاشیه]

هو
 ذا مع اصله الاصل مطابق نموده
 (مهر): لا اله الا الله الملك الحق المبین عبد صلاح الدین 1064

Արհայական օրհնյալ կնիքի տեղը

Աշխարհասաստ հրաման եղավ այն մասին, որ վարվեն այնպես, ինչպես, որ իմամական իսլամի ուլամաններն⁶⁰ ու օրհնյալ ողորմած ֆակիհները⁶¹, թող նրանց խոսքերը հարատևեն Աստծո արարածների մեջ, ստորև ֆաթվա են հրապարակել, նրա բովանդակությունից չչեղվեն և առաջնորդվելով ամենալուսավոր շար՝ ով՝ հրամանին չհակառակվեն: Չոխուր Սա՛ադի բեկլարբեկը պարտավոր է շար՝ին համապատասխան օգնություն ցուցաբերել: Թող այս իրենց պարտականությունը համարեն: Գրվեց 1068 թ. պաշտելի ուղարկ ամսին⁶²:

Հանուն գրառատ և ողորմած Ալլահի:

Ճիշտ է պատասխանը և թող այն գործադրվի ըստ ստորև գրվածի:

Եվ Ալլահը, փառք Նրան, Բարձրյալն է, Նա է իմանում նշմարությունը:

Ճիշտ է բարձրագույն օրենքը և թող այն հենվի օրենքի պահանջների ու կանոնների վրա և Ալլահն է փառաբանյալ ու ամենագետ, [կնիք]:

Իսլամի ուլամաները և պատվարժան ողորմած ֆակիհները, թող հարատևեն նրանց խոսքերը մինչև Ահեղ Դատաստանի օրը, ինչ են հրամայում հետևյալ հարցի մասին: Եթե հայերի մի խումբ իր հոժար կամքով իր

⁶⁰ Ուլամա (علماء – հոգն. عالم եզ.) (գիտնական, գիտուն) բառի հոգնակին է, որը նշանակում է իսլամական օրենքներին գիտակ:

⁶¹ Ֆակիհ (فقيه) – Ֆիկհի կամ իսլամի օրենսդրության գիտակ անձնավորություն:

⁶² 1658 թ. ապրիլի 4-մայիսի 4:

մուլերն ու գույրը շարի'աթական նշմարիտ հոբբեով ընծայած լինի Ուշ-
 ֆանիսեի ունն հալեդ կաթողիկոսի և հանձնած լինելով նրա տնօրինմանը
 շարի'աթական օրենքների պայմաններով ու պահանջով, ապա այդ դեպ-
 քում նվիրատվության թվականից վերոհիշյալ հալեդը շարի'աթով իրավունք
 ունի՝ այդ հոբբեով ու այդ կերպ ձեռք բերվածի բերքն ու եկամուտները
 տնօրինել այնպես, ինչպես կցանկանա: Շարի'աթի օրենքներով ճիշտ է,
 թե՞ ոչ: Պարզեցե՛ք: Փառք Ալլահին, Մուհամմադին, որը անբիժ բարեպաշտ-
 ների հովանավորն է:

Նա մշտնջենական է: Եվ Ալլահն է բարձրյալ:

Այո:

Փառք Ալլահին: Նա գիտի:

Կրկին ձեռ կարծիքը հայտնեմ հետևյալի մասին՝ վերը նշված պայման-
 ների հետազոտումից հետո, եթե հիշյալ մարդիկ մահանան, և յուրաքանչ-
 յուրը ունենա օրինական ժառանգ, ապա այդ ժառանգները, լինեն նրանք
 շադիդ ուլ-իսլամ կամ հայ, ըստ շարի'աթի օրենքների՝ գրկվա՞ծ են այդ
 մուլերի նկատմամբ իրավունքներից, թե՞ ոչ: Պարզեցե՛ք:


Նա մշտնջենական է: Եվ Ալլահն է բարձրյալ:

Այո:


Փառք Ալլահին: Նա գիտի:

Համապատասխանում է իսկականին:


[Կնիք]. Ջկա Աստված բացի Ալլահից, նրանն է արդար իրավունքը,
 Աստծո ծառա Սելահ ալ-Գին 1064:




1



2



3



4

KRISTINE KOSTIKYAN, HAYKAZ GEVORGYAN
THE RECENTLY DISCOVERED DECREES OF SAFAVID SHAHS IN
MATENADARAN'S ARCHIVE OF THE CATHOLICOSATE

Key words: Safavid, shah, decree, document, catholicos, Muslim, Christian, monastery.

The article discusses the four Safavid decrees discovered during our study of the 755 Persian documents in Matenadaran's Archive of the Catholicosate, which were unknown and not described in any catalogue up to now. The contents of the decrees show their close ties with the decrees and other documents already published by A. Papazyan. Those four documents had remained unknown to him and not included in the two volumes of the Persian Decrees of Matenadaran (vols. 1–2, Yerevan, 1956, 1959). This article contains the Persian texts of those decrees by the Safavid Shahs Tahmasb I, Ismail II, and 'Abbas II, and their Armenian translations. Our study of the decrees has revealed new details in the relationship of Armenian clergymen with the Safavid authorities and a method to protect the property of Dhimmis from the pretensions of heirs who had adopted Islam. It is reflected in the decree of Shah 'Abbas II, which confirms a resolution (فتوی) of Muslim high clergymen. According to the decree and fetva, Muslim heirs had no right upon the property of Dhimmis, if the property had been acquired through donation (هبه).

КРИСТИНЕ КОСТИКЯН, АЙКАЗ ГЕВОРГЯН
НОВЫЕ УКАЗЫ СЕФЕВИДСКИХ ШАХОВ, ОБНАРУЖЕННЫЕ В
КАТОЛИКОССКОМ АРХИВЕ МАТЕНАДАРАНА

Ключевые слова: Сефевидский, шах, указ, документ, католикос, мусульманин, христианин, монастырь.

Статья посвящена источниковедческому анализу четырех Сефевидских указов, выявленных в ходе изучения 755 персидских документов католикосского архива Матенадарана, до настоящего времени неизвестных и не описанных в каталогах архива. Содержание данных указов показывает, что, хотя они тесно связаны с указами и другими документами, уже опубликованными А. Папазяном, однако не были известны ему и не были использованы во время составления сборников первых двух томов *Персидских указов Матенадарана* (Ереван 1956, 1959). В статье представлены персидские тексты Сефевидских шахов Тахмаспа I, Исмаила II и Аббаса II, а также их армянские переводы. В результате исследования выявлены новые детали взаимоотношений армянского духовенства с Сефевидскими властями и один из способов защиты имущества зиммиев от притязаний наследников, принявших ислам, отраженные в указе Шаха Аббаса II, подтверждающем решение (فتوى) мусульманского духовенства. Согласно указу и фетве, принявшие ислам наследники не имели прав на имущество, перешедшее зиммию во владение путем дарения (هبه).

ՎԱՀԱԳՆ ՀԱԿՈՒՅՅԱՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԵՎԱՆԻ ԽԱՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԵՎ ՆՐԱ ՇՈՒՐՋ 1780-ԱԿԱՆՆԵՐԻՆ ԸՍՏ ՂՈՒՂԱՄ ԱԼԻ ԽԱՆԻ ՆԱՄԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ

Բանալի բառեր՝ ազդեցություն, մրցակցություն, դիրքորոշում, հարաբերություն, քաղաքականություն, հավատարմություն, դիվանագիտական գործունեություն:

1783 թ. հունիսի 24-ին Գեորգիևսկի ամրոցում կնքվեց ռուս-վրացական պայմանագիրը, որով Քարթլի-Կախեթի թագավորությունը (Արևելյան Վրաստան) անցավ Ռուսական կայսրության հովանու ներքո: Պայմանագրի վեցերորդ հոդվածով Ռուսական կայսրությունը Քարթլի-Կախեթի թագավորությունը համարում էր իր դաշնակիցը, պարտավորվում պաշտպանել այն թշնամիներին՝ չմիջամտելով երկրի ներքին գործերին¹:

Թվում էր, թե Քարթլի-Կախեթի թագավորությունը վերջնականապես ազատագրվեց թուրքական և պարսկական հարձակման վտանգից: Գեորգիևսկի պայմանագիրը մեծ ոգևորություն առաջացրեց նաև հայ ազատագրական գործիչների շրջանում: Կրկին ի հայտ եկան Արևելյան Հայաստանը Ռուսական կայսրության օգնությամբ ազատագրելու նախագծեր, ռուս-հայկական դաշնակցային պայմանագրի օրինակներ, որոնք պետք է կնքվեին Ռուսական կայսրության օգնությամբ Արևելյան Հայաստանի ազատագրումից հետո²: Այս իրադարձություններում առանցքային դերակատարում ուներ նաև Արարատյան դաշտի մեծ մասն ընդգրկող Երևանի խանությունը:

Գեորգևսկի պայմանագրի կնքումից հետո էլ ավելի սրվեց ռուս-թուրքական մրցակցությունը Հարավային Կովկասում: Երկու կողմերը սկսեցին ակտիվորեն բանակցել տարածաշրջանի մյուս տիրակալների հետ՝ փորձելով հնարավորինս շատ տեղական իշխողների գրավել իրենց կողմը: Այդ նպատակով Ռուսաստանը համագործակցում էր վրաց արքա Հերակլ II-ի հետ: Այս քաղաքականության համար հիմք էր նախապատրաստվել Գեորգիևսկի պայմանագրի երկրորդ հոդվածով, որով Ռուսաստանը երաշխավորում էր ոչ միայն Հերակլ II-ի թագավորության այն ժամանակվա սահմանների ամբողջակա-

¹ **О. Маркова**, *Россия, Закавказье и международные отношения в XVIII веке*, Москва 1966, с. 168-169.

² Այս մասին առավել մանրամասն տե՛ս **Ա. Մնացականյան**, «18-րդ դարում գրված հայ-ռուսական դաշնագրային երկու նախագծերի գնահատման հարցի շուրջ», *ԲՄ* 4, 1958, էջ 139-160:

նությունն ու ապահովությունը, այլ նաև այն տարածքների, որոնք հետագայում կմիանային նրա թագավորությանը³: Հերակլ II-ը ուսաներին առաջարկում էր Հարավային Կովկասում Ռուսաստանի և Արևելավրացական թագավորության ազդեցությունն ուժեղացնելու համար պաշտպանել այն լեզգիների արշավանքներից, օգնել, որպեսզի իր իշխանությունն ամրապնդվի Գանձակում և Երևանում, իսկ ազդեցությունը տարածվի նաև Նախիջևանում⁴:

Օսմանյան կայսրությունն իր հերթին քայլեր էր ձեռնարկում Երևանը հակավրացական կողմից իր մեջ ընդգրկելու ուղղությամբ:

Երևանի խանության համար մրցակցությունն առավել սուր բնույթ ստացավ 1783 թ.: Այդ տարվա նոյեմբերին մահացավ Երևանի Հուսեյն Ալի խանը⁵: Նրան փոխարինեց Ղուլամ Ալի խանը⁶, որի հետ ակտիվ նամակագրական կապեր սկսեցին հաստատել տարածաշրջանի տիրակալները: Մաշտոցի անվան Մատենադարանի արաբատառ ձեռագրերի ֆոնդի № 233 ձեռագրում առկա են Ղուլամ Ալիի տարբեր տիրակալների հասցեագրված նամակների պատճենները: Դրանց մի մասը գրվել են ի պատասխան խանին ուղարկված նամակների և կարևոր ու արժանահավատ տեղեկություններ են պարունակում Հարավային Կովկասում ռուս-թուրքական մրցակցության, մասնավորապես Երևանի խանության շուրջ ծավալվող իրադարձությունների վերաբերյալ:

Ղուլամ Ալի խանը շարունակում է բարեկամական կապեր պահպանել և՛ վրացական, և՛ օսմանյան իշխանությունների հետ: Իր հոր մահվան առթիվ Ղուլամ Ալին ցավակցական նամակ է ստանում նաև վրաց թագուհի Դարեջանից, որի համար շնորհակալական նամակ է ուղարկում նրան՝ նշելով, որ թագուհու խոսքերը շատ են սիրտին իրեն⁷:

Ղուլամ Ալիին որպես խան հաստատելուց հետո, Հերակլ II-ը քայլեր է ձեռնարկում Երևանում իր դիրքերն էլ ավելի ամրապնդելու ուղղությամբ: Երևան է

³ О. Маркова, նշվ. աշխ., էջ 167.

⁴ Նոյն տեղում, էջ 174.

⁵ Հուսեյն Ալի խանը Հերակլ II-ի հարկատուն էր: Տե՛ս Ե. Շահազիզ, *Հին Երևանը*, Երևան 1931, էջ 110:

⁶ Ղուլամ Ալիի՝ խան ընտրվելուց հետո Երևանի հայ հոգևորականությունը և ֆաղափ ավագանին պատվիրակություն են ուղարկում Հերակլ II-ի մոտ՝ նրան որպես խան հաստատելու համար: Տե՛ս Մ. Нерсисян, *Армяно-русские отношения в 18 веке 1760-1800 гг., Сборник документов, том IV*, Ереван 1990, с. 267: Բոտմաշևի՝ Պ. Պոպովիչին գրված զեկուցագրում Ղուլամ Ալին ներկայացվում է որպես Բրդերի առաջնորդ Շամտին աղայի թոռը: Սակայն Սիմեոն Երևանցու Հիշատակարանում առկա տեղեկության համաձայն՝ Ղուլամ Ալին Սուլեյման փաշայի թոռն էր: Տե՛ս Գյուս Քահանա Աղայանց, *Գիվան Հայոց պատմության*, Գիրք Գ, Քիֆլիս 1894 թ., «Սիմեոն կաթողիկոսի հիշատակարան», էջ 195: Իսկ Վ. Գրիգորյանը նշում է, որ Բրդերի առաջնորդ Շամտին աղան Ղուլամ Ալիի մորեղբայրն էր: Տե՛ս Վ. Գրիգորյան, *Երևանի խանությունը 18-րդ դարի վերջում (1780-1800 թթ.)*, Երևան 1958, էջ 88:

⁷ ՄՄ, արաբատառ № 233, էջ 69ա:

ուղարկում Ահմադ սուլթանին, ցուցումներ է տալիս, թե ինչպես վարվի խանը նրա և Երևանի մեծամեծերի հետ: Խանն իր հերթին վալիին պատասխանում է. «հասկացել եմ (Հերակլ II-ին՝ Վ.Հ.) բառ առ բառ և կկատարեմ բոլոր ցուցումները... Միրզա Գուրգենի⁸ ժամանելուց հետո լուրը ստացել եմ նրա միջոցով և հորս մահվանից հետո անցել եմ գործերի կատարմանը»⁹: Ցավոք տեղյակ չենք, թե ով էր Ահմադ սուլթանը և ինչ դեր կարող էր ունենալ Երևանի խանությունում, սակայն Հերակլ II-ի ցուցումները նրա և Երևանի մեծամեծերի հարաբերությունների վերաբերյալ թույլ են տալիս ենթադրելու, որ՝ ա) Ահմադն, ամենայն հավանականությամբ, վրաց արքայի ներկայացուցիչն է եղել Երևանում, բ) Հերակլ II-ը միջամտում էր խանի և Երևանի ազդեցիկ անձանց միջև փոխհարաբերություններին, ինչը չէր անում Հուսեյն Ալի խանի օրոք:

Այս ընթացքում ակտիվ դիվանագիտական գործունեություն էին ծավալում նաև օսմանյան իշխանությունները: Ղուլամ Ալիի մոտ են ժամանում Ախալցխայի, Կարսի, Էրզրումի և Բայազետի փաշաների պատվիրակները՝ իբր հոր մահվան համար ցավակցելու: Սակայն նրանք նպատակ ունեին բանակցել նոր խանի հետ համապատասխան գումարի դիմաց բերդն Օսմանյան կայսրությանը հանձնելու հարցի շուրջ¹⁰:

Այս բանակցությունների արդյունքում Ղուլամ Ալի խանը (չնայած նրան Երևանի խան էր նշանակել Հերակլ II-ը) թուրքամետ դիրքորոշում ընդունեց և սկսեց քայլեր ձեռնարկել Հերակլ II-ի ազդեցությունից դուրս գալու ուղղությամբ: Խանի քաղաքականության վերաբերյալ Երևանում ոռոսական գործակալներից Սահակը գրում է հետևյալը. «նոր խանը ցանկանում է ավելացնել իր ուժերը և նրա՝ Հերակլին ենթակա մնալը կասկածելի է, քանի որ նախկին լուրերը, որ ոռուսական զորքերը առաջ են գալու, հիմա կասկածելի են: Կարծիք կա, որ այդ լուրերը կեղծ են և Հերակլի հրամանով են տարածվել՝ Հերակլին (խանությունը – Վ. Հ.) ենթակա պահելու համար»¹¹: Ղուլամ Ալին սկսում է երկակի քաղաքականություն վարել, ինչը նպաստավոր էր Օսմանյան կայսրության համար: Նոր խանը մի կողմից իր բարեկամությունը և հավատարմությունն է հավաստում վրացական արքունիքին¹², ուղտեր և այլ նվերներ է ուղարկում Հերակլ II-ին,¹³ մյուս կողմից՝ օսմանյան սուլթանին ուղարկած նամակում գրում. «...պատրաստակամ եմ ամեն ինչ անել իսլամի

⁸ Հերակլ II-ի կնիքապահն էր:

⁹ Նույն տեղում, էջ 110ա:

¹⁰ О. Маркова, նշվ. աշխ., էջ 205:

¹¹ М. Нерсисян, նշվ. աշխ., էջ 274:

¹² ՄՄ, արքապատառ № 233, էջ 69ա:

¹³ Վ. Գրիգորյան, Երևանի խանությունը 18-րդ դարի վերջում, էջ 87:

թնամիներին (ավյալ դեպքում խոսքը վրացիների մասին է – Վ. Հ.) ոչնչացնելու համար...»¹⁴:

Ռուսական բանակի գեներալ Պոտյոմկինը Հերակլ II-ին խորհուրդ է տալիս ուշադիր հետևել Երևանի նոր խանի քայլերին, որի երկդիմի քաղաքականության մասին տեղեկացված էր: Ախալցխայի, Բայազետի, Կարինի և Կարսի փառանքերը Ղուլամ Ալին անաջարկում են բերդը հանձնել թուրքերին, մյուս խաների հետ հարձակվել Վրաստանի վրա՝ փոխարենը խոստանալով գումար և անանձնահատուկ շնորհներ սուլթանից¹⁵: Այդ ժամանակ Երևանի խանը սուլթանին ուղղված նամակում նշում է. «Նուրհակալ եմ տեղեկության... և նվերների համար... որոնցից երկու հազար աշրաֆի ոսկին լավագույնն էր վերջին ժամանակներում ...»¹⁶: 1784 թ. հունվարի 15-ին գեներալ Պոտյոմկինը Երևանից լուր է ստանում, որ Ղուլամ Ալի խանը թուրքերից նամակ ստանալուց հետո սկսել է զորքեր հավաքել և իր դիրքերն ամրացնում է¹⁷:

Հերակլ II-ի իշխանությունը շարունակում է թուլանալ Երևանում, փոխարենն աշխուժանում էին թուրքամետ ուժերը: Ռուսական իշխանությունները Հերակլ II-ի հետ սկսում են միջոցներ ձեռնարկել Երևանի թուրքամետ ուժերին ճնշելու համար: Վրաստանում ռուսական իշխանությունների հանձնակատար Բուռնաշևը 1784 թ. ապրիլի 14-ին գեներալ Պոտյոմկինին գրած զեկուցագրում նշում է, որ Երևանի խանի՝ Հերակլ II-ին ուղարկած նվերները քիչ են նախկին խանի կողմից տրված հարկից: Իսկ քրդերի ցեղապետ Շամտին աղան դադարեցրել է Հերակլ II-ին հարկ վճարել¹⁸:

Աղբյուրների հաղորդումների վերլուծությունից պարզվում է, որ Ղուլամ Ալին բավականին հաջող դիվանագիտական գործունեություն է ծավալել: Նա, հավատարմություն հայտնելով օսմանյան իշխանություններին, ոչ թե նվազեցրել է իր իշխանությունը Երևանում և կախվածության մեջ ընկել օսմանյան սուլթանից, այլ ձեռք է բերել ավելին, քան սուլթանի կողմից ուղարկված նվերները: Օսմանյան արքունիք ուղարկած նամակներից մեկում Ղուլամ Ալին գրում է. «...Ֆլանը¹⁹ տեղեկացրել է, որ Չլրի²⁰, Էրզրումի, Ռումի (Օսմանյան

¹⁴ ՄՄ, արքաատառ № 233, էջ 74ա:

¹⁵ Վ. Գրիգորյան, Գիվան հայոց պատմության, նոր շարք, գիրք առաջին, Ղուկաս Կարնեցի, հատոր Ա, 1780-1785, Երևան, 1984, էջ 57:

¹⁶ ՄՄ, արքաատառ № 233, էջ 74ա:

¹⁷ М. Нерсисян, նշվ. աշխ., էջ 303:

¹⁸ Վ. Գրիգորյան, Երևանի խանությունը 18-րդ դարի վերջում (1780-1800 թթ.), էջ 87: Երևանի քրդերը 1765 թ. դարձել էին Հերակլ II-ի հարկատուն: Տե՛ս Գյուլա Քանանա Աղայանց, Գիվան Հայոց պատմության, Գիրք Գ, էջ ՃԶԳ:

¹⁹ Այսինքն՝ ինչ-որ մեկը: Նամակում չի նշվում որևէ անուն:

²⁰ Շրջան պատմական հայաստանի Չլրըր նահանգի համանուն գավառում, Մովսիս Հյուսիս լճի շրջակայքում: Տե՛ս Թ. Հակոբյան, Ս. Մելիք-Բախչյան, Հ. Բարսեղյան, Հայաստան

կայսրության – Վ.Հ.) կողմերի սանջակբեկերի միումիրանի²¹ պաշտոնը տրվել է նվաստիս՝ նամակի հեղինակին...»²²: Օսմանյան կայսրությունը հակավրացական և հակառուսական կողիցիայի մեջ ընգրկում է նաև Ատրպատականի խաներին՝ Խոյի Ահմադ խանի գլխավորությամբ²³: Երևանի խանը Օսմանյան կայսրություն ուղարկած նամակում գրում է. «...նվիրվածությունս եմ հայտնում և երախտապարտ եմ հրամանի համար..., որում նշվում է, որ եթե Վրաստանի և Ռուսաստանի կողմից Իրանի և Ռումի տարածքների, հատկապես Երևանի բերդի ... վրա որևէ հարձակում լինի, ապա շատ խաներ... Ատրպատականի Ահմադ խանի գլխավորությամբ և Ռումի սահմանային փաշայությունների հետ օգնություն կտրամադրեն...»²⁴: Նամակում նշվում է, որ վերոհիշյալ անձինք, բացի Երևանից, պետք է պաշտպանեն նաև Իրանի և Օսմանյան կայսրության սահմանները²⁵: Երևանի նշումը Օսմանյան կայսրությունից և Իրանից առանձին՝ նշանակում է, որ թուրքերն այն դիտում էին որպես Իրանից անկախ իշխանություն և չէին ճանաչում Իրանի որևէ տիրակալի իրավունքներն այդ խանության նկատմամբ:

Շարունակելով ներկայացնել իրադրությունը Երևանում Ղուլամ Ալի խանը գրում է. «... Վրաստան նահանգի տիրակալ Հերակլ խանը հավատարիմ է երկար տարիներ գոյություն ունեցող համաձայնագրին²⁶...»: Նամակում նաև նշվում է, որ ո՛չ վրացական, ո՛չ ռուսական կողմից որևէ ոտնձգություն առաջմ չկա²⁷: Միաժամանակ խնդրում է հրամանագիր շնորհել Օսմանյան կայսրության սահմանային տիրակալներին և Ահմադ խանին, որ անհրաժեշտության դեպքում իրեն անհապաղ օգնություն ուղարկեն և չթերանան այդ

նի և հարակից շրջանների տեղանունների բառարան, Երևան 1998, էջ 257: Չլորն այդ ժամանակ պատկանում էր Ախլցխայի Սուվեյման փաշային:

²¹ Սանջակբեկերը կառավարիչներն էին: Սովորաբար միումիրան էին կոչվում փաշայությունների զինված ուժերի հրամանատարները: Թերևս, այստեղ խոսքը կառավարիչների զորքերի հրամանատարի մասին է:

²² ՄՄ, արաբատառ № 233, էջ 108ա:

²³ ՄՄ, արաբատառ № 233, էջ 112բ: Սա պետք է տեղի է ունեցած լինի այն ժամանակահատվածում, երբ ո՛չ Ալի Մարդան խանը, ո՛չ Աղա Մուհամմադ Խանը և ո՛չ էլ Իրանի գահի հավակնորդներից որևէ մեկը իշխանություն չունեին Ատրպատականում:

²⁴ Նույն տեղում, էջ 112ա-112բ:

²⁵ Նույն տեղում, էջ 112ա:

²⁶ Հերակլ II-ի ներկայացուցիչ Իվանե Մուխրան բեյի և Հուսեյն Ալի խանի միջև 1782 թ. կնքված պայմանագրի մասին է, որի համաձայն Երևանի խանը պետք է Հերակլ II-ին նախկինի պես տարեկան 3000 թուման վճարեր, անհրաժեշտության դեպքում իր զորքով օգնության հասներ, ինչպես նաև Երևանի խաները պետք է այսուհետ, նախքան իրենց իշխանությունը ժառանգելը, հաստատվեին Հերակլ II-ի կողմից: Տե՛ս Վ. Գրիգորյան, *Երևանի խանությունը 18-րդ դարի վերջում (1780-1800 թթ.)*, էջ 73:

²⁷ ՄՄ, արաբատառ № 233, էջ 112բ:

հարցում²⁸: Շարունակելով զարգացնել իր հարաբերությունները թուրքական իշխանությունների հետ՝ Ղուլամ Ալին կարողանում է նոր հաջողությունների հասնել: Սուլթան Աբդուլ-Համիդ I Ղազիի (1774-1789) վեզիր Ազեմին գրած նամակով, շնորհակալություն հայտնելով իրեն ուղարկված գումարի և սամուրե մուշտակի համար, հավաստում է իր հավատարմությունը: Ղուլամ Ալին, գովեստի խոսքեր ասելով Ախալցխայի և էրզրումի վեզիրների, Կարսի և Բայազետի միրմիրանների հասցեին՝ մեծ ուրախություն է հայտնում Անատոլիայի բեգլարբեգությունն իրեն շնորհելու համար²⁹:

Հարկ ենք համարում քննության ենթարկել այս տեղեկությունը, քանի որ այն առաջին անգամ է դրվում գիտական շրջանառության մեջ և մինչ այս հայտնի չի եղել պատմագիտությանը: Բացի այդ, այնքան էլ տրամաբանական չէ այն, որ սուլթանը Ղուլամ Ալին կարող էր հանձնել ամբողջ Անատոլիան: Այնուամենայնիվ, սկզբնաղբյուրների ուսումնասիրումից պարզվում է, որ Անատոլիան Ղուլամ Ալին շնորհելու հրամանի վերաբերյալ նամակ եղել է, քանի որ Ղուլամ Ալին սուլթանին ուղարկած նամակով նշում է, որ որոշ խնդիրների պատճառով անհանգստացած է եղել և, երբ լուր է ստացել, որ սուլթանն իրեն է շնորհել Անատոլիայի բեգլարբեգությունը, մեծ ցնծություն է ապրել³⁰: Չնայած այս տեղեկությանը, Ղուլամ Ալի խանի իշխանությունը, ըստ էության, Երևանից դուրս չի տարածվել, իսկ Անատոլիայի բեգլարբեգությունը միայն թղթով է նրան «պատկանել»:

Ղուլամ Ալիի նման քաղաքականությունից ելնելով ուսսական և վրացական իշխանությունները սկսեցին կտրուկ միջոցներ ձեռնարկել Երևանի խանությունը Հերակլ II-ի ազդեցության ներքո պահելու համար: Գեներալ Պոտյոմկինը Բուռնաշևի միջոցով Հերակլ II-ին խորհուրդ տվեց հետևել նոր խանի քայլերին և վերցնել Երևանը³¹: Արդյունքում Ղուլամ Ալի խանը 1784 թ. հունիսի 7-ին դարձավ դավադրության զոհ³²: Ղուլամ Ալի խանին փոխարինեց Հուսեյն Ալի խանի կրտսեր որդի Մոհամմադը, որի մայրը Հուսեյն Ալի խանի երկրորդ կինն էր: Նոր խանին հաստատելու համար Երևանի մեծամեծերը դիմում են Հերակլ II-ին: Վերջինս հաստատման թուղթն արքայազն Գեորգիի հետ

²⁸ Նույն տեղում, էջ 113ա:

²⁹ Նույն տեղում, էջ 197ա: Կարծում ենք այստեղ շփոթումն է կա Անատոլիա տեղանվան մասով, քանի որ այդպես էին անվանում Փոքր Ասիան: Տե՛ս **Л. Зограбян, Орография Армянского нагорья**, Ереван 1979, с. 14: Ամենայն հավանականությամբ այստեղ խոսքը վերաբերվում է «Արևմտյան Հայաստանի» տարածքին, որը կոչվում էր նաև Արևելյան Անատոլիա: Ուստի ուսումնասիրությունում «Անատոլիա» տեղանվան ներքո մենք նկատի կունենանք Արևմտյան Հայաստանի տարածքը:

³⁰ ՄՄ, արաբատառ № 233, էջ 197բ-199ա:

³¹ **О. Маркова**, указ. соч., с. 205.

³² **Վ. Գրիգորյան**, Գիվան հայոց պատմության, նոր շարք, Գիրք առաջին, Ղուկաս Կարենցի, հատոր Ա 1780-1785, էջ 13:

ուղարկում է Երևան³³: Մոհամմադ խանի մայրը վրացուհի էր, ինչն ընկալվում էր որպես Հերակլ II-ի դիրքերի ամրապնդում Երևանում: Օսմանյան իշխանությունների՝ Երևանում իրենց ազդեցությունը տարածելու քաղաքականությունը Մոհամմադ խանի օրոք ձախողվեց, և խանությունը մնաց Հերակլ II-ի հարկատուն³⁴:

Այսպիսով, Երևանի համար մղվող ոռու-թուրքական մրցակցությունը 1780-ականներին սուր բնույթ կրեց: Օսմանյան իշխանությունները կարողացան նվերների և տարածքներ հանձնելու խոստման շնորհիվ Երևանի Ղուլամ Ալի խանին սիրաշահել և իրենց ազդեցության տակ առնել: Սակայն ոռուսական և վրացական իշխանությունները համատեղ ակտիվ քայլեր ձեռնարկեցին Ղուլամ Ալի խանին չեզոքացնելու և խանությունը Հերակլ II-ի ազդեցության ներքո պահելու ուղղությամբ: Արդյունքում, Ղուլամ Ալի խանը սպանվեց, իսկ նրան փոխարինած Մոհամմադ խանը զերծ մնաց թուրքամետ դիրքորոշումից՝ մնալով Հերակլ II-ի հարկատուն:

VAHAGN HAKOBYAN

THE POLITICAL SITUATION IN THE YEREVAN KHANATE AND AROUND IT IN THE 1780s ACCORDING TO GHULAM ALI KHAN'S LETTERS

Key words: influence, competition, position, relationship, policy, fidelity, diplomatic activity.

After Nadir Shah's assassination, a struggle for the throne started in Iran. The country had no powerful central authority, and the khanates of South Caucasus had semi-independent status in the course of almost half a century. Russia and the Ottoman Empire began to pursue an active policy for spreading their influence in the region and established ties with regional rulers. Both Russian and Ottoman authorities were aware of the importance of Yerevan khanate in the region, so they were trying to spread their influence there. The khans of Yerevan were paying taxes to Heraclius II and tried to maintain a semi-independent position, manoeuvring in their relationship with other powers and avoiding alliance against any power.

The situation changed in early 1780s. After concluding the treaty of Georgievsk, Russia and the Ottoman Empire started implementing active diplomatic move in South Caucasus, while the ruler of Yerevan Ghulam

³³ Լ. Մելիքսեթ-Քեկ, *Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին*, Երևան 2013, էջ 201:

³⁴ Մոհամմադ խանի օրոք Երևանի համար օսմանյան իշխանությունների մղած պայքարի մասին առավել մանրամասն տե՛ս Վ. Գրիգորյան, *Երևանի խանությունը 18-րդ դարի վերջում (1780-1800 թթ.)*, էջ 116-124:

Ali khan established strong ties with Ottoman authorities and adopted pro-Turkish orientation. Ghulam Ali khan's letters sent to Ottoman and Georgian authorities contain important information about the mentioned events. This source made it possible to study the political situation in the Yerevan Khanate and around it in 1780s.

ВААГН АКОПЯН
ПОЛИТИЧЕСКАЯ СИТУАЦИЯ В ЕРЕВАНСКОМ ХАНСТВЕ И
ВОКРУГ НЕГО В 1780-Х ГОДАХ ПО ПЕРЕПИСКЕ ГУЛАМА АЛИ
ХАНА

Ключевые слова: влияние, конкуренция, позиция, отношения, политика, верность, дипломатическая деятельность.

После убийства Надир шаха, в Иране началась борьба за трон. В стране не было сильной центральной власти, и ханства Южного Кавказа почти полвека имели полунезависимый статус. В такой ситуации Россия и Османская империя начали проводить активную политику по распространению своего влияния в регионе и установили связи с региональными правителями. Сознвая важность Ереванского ханства, как российские, так и турецкие власти пытались установить там свое влияние. Ереванские ханы платили дань царю Ираклию II и пытались сохранить свой полунезависимый статус, маневрируя в отношениях с другими державами и избегая входить в союз против какой-либо державы.

Ситуация изменилась в начале 1780-х годов. После заключения Георгиевского договора, Россия и Османская империя приступили к активной деятельности на Южном Кавказе, а правитель Еревана Гулам Али хан установил прочные связи с османскими властями и принял протурецкую позицию. Эти события хорошо освещены в письмах Гулама Али хана, адресованных османским и грузинским властям. Благодаря этому источнику, стало возможным исследование политической ситуации 1780-х годов в Ереванском ханстве и вокруг него.

ՀԱՅԿԱԶ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՈՒՇԱԳՐԱՎ ԴԻՏԱՐԿՈՒՄ ԺԹ. ԴԱՐԻ ՀԱՅԵՐԻ ՄԱՍԻՆ¹

Բանալի բառեր՝ վիճակագրություն, ժԹ. դար, հայերի թվաքանակը աշխարհում, հայերի բնութագիրը, ազգագրական տեղեկություններ, Ռուսաստան, Եվրոպա, Թուրքիա:

Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում Հազարյանների արխիվի ուսումնասիրության ժամանակ մեր ուշադրությունը գրավեց գործերից մեկում պահպանված «*Радыга*» թերթի 1860 թվականի հունվարյան անդրանիկ համարը, ուր գետեղված էր բավական ընդարձակ մի հոդված՝ «*Վիճակագրական և ազգագրական տեղեկություններ Թուրքիայում, Ռուսաստանում և մյուս երկրներում ապրող հայերի մասին*» վերնագրով:

Հոդվածի ներածականում ներկայացվում է հայ ժողովրդի անցած ուղին, նրա պատմության կարևորագույն դրվագները. «Հայերը ժամանակին բնակվում էին իրենց պատմական հայրենիքում, Արարատի շուրջ, Կուր, Արաքս, Տիգրիս, Եփրատ գետերի ավազանում և կազմում էին 15-20 միլիոն: Սակայն, պատմական հանգամանքների բերումով, այժմ տարածված են աշխարհի տարբեր ծայրերում: Տարբեր երկրներում այսպիսի տարածվածությունը քաղաքական և սոցիալական կյանքի բազմազանությունը, բնականաբար, դժվարացնում է նրանց ընդհանուր բնութագիրը տալը»², – կարդում ենք հոդվածում:

Ամբողջության մեջ հեղինակը, որը ներկայացել է որպես Գր. Կ. (այն ժամանակ դա ընդունված ձև էր մամուլում Հ. Հ.), ճշմարտացիության դիրքերից է մեկնաբանել հայոց պատմության հիմնական իրադարձությունները. և այն պնդումը, թե հայերը սեփական հայրենիքը առաջին հերթին լքել են անվերջանալի պատերազմների և թշնամիների կողմից այդ «հարուստ ու բարեբեր» տարածքը ամայացնելու արդյունքում»³, նույնպես ճշմարտություն է: Իհարկե, եթե առաջնորդվենք ներկայիս չափանիշներով, ապա հեղինակի այս նկատառումը առանձնակի նորություն չի պարունակում, սակայն շնորհիվ, որ հոդվածը տպագրված է ռուսերեն լեզվով, և օտար շատ ընթերցողների համար նույնիսկ Հայաստան երկիրն էր անհայտ: Այս տեսակետից, հրապարակումն,

¹ Հոդվածը տպագրվում է գիտական գործունեության 2018 թ. թեմատիկ ֆինանսավորման մրցույթի շրջանակում:

² Մաշտոցի անվան Մատենադարան, Հազարյան արխիվ, թղթապանակ, 108, վավերագիր 11, “Статистические и этнографические сведения об Армянах в Турции, России и других странах,” *Газета Радыга*, 1860, январь, с. 3:

³ Նույն տեղում:

անշուշտ, հայագիտական կարևոր շեշտադրում ունի. օտար ընթերցողին ներկայացվում է այն իրողությունը, որ հայերի հայտնվելը Ռուսաստանում և աշխարհի շատ երկրներում, ամենևին էլ վերջիններիս մեղքը չէ. «Հաճախակի կրկնվող ավերածությունների պատճառով հայերից շատերն իրենց կամքից անկախ սկսեցին լքել սեփական հայրենիքը, չգտնելով նրանում անձի և ունեցվածքի պաշտպանության համար և ոչ մի երաշխիք», – գրում է հոդվածագիրը⁴: Եվ, այդուհանդերձ, հեղինակի նպատակը միայն այս իրողության ընդգծումը չէ. հոդվածում փորձ է արվում որոշակիություն մտցնել հայերի թվաքանակի հարցում: Այսպես, հիմնվելով ֆրանսիացի հայագետ էդ. Դյուլորիեի հաշվարկների վրա, նա գրում է, որ «Օսմանյան կայսրությունում ապրում են շուրջ 2 մլն. 500 հազար հայեր, Ռուսաստանում (Արևելյան Հայաստանի կենտրոնական և հյուսիսային մասեր, Վրաստան, Շիրվանի և Դաղստանի մարզեր, Ռուսաստան և Լեհաստան) շուրջ 1 մլն. 200 հազար, Ավստրիայում (Գալիցիա, Բուկովինա, Տրանսիլվանիա և Հունգարիա) 25 հազար, Պարսկաստանում 150 հազար, Հնդկաստանում և ասիական արշիպելագի կղզիներում 25 հազար հայեր: Ընդհանուր հաշվարկով, հայերի թիվը աշխարհում կազմում է 3 մլն. 900 հազար: Եվ եթե դրան էլ ավելացնենք ևս 100 հազար հայերի, որոնք ապրում են աշխարհի մնացած մասերում, ապա կստացվի, որ ներկայումս (ժՔ. դարի կեսերին՝ Հ. Հ.) 4 մլն հայ է ապրում աշխարհում»⁵: Հեղինակի հաշվումներով, միայն Կոստանդնուպոլսում հայերի թիվը 250 հազար է. ընդ որում, բոլոր այս թվերը նա հենց այնպես չի ներկայացնում. հեղինակը մեկ առ մեկ թվարկում է իր տեղեկությունների աղբյուրները: Ի դեպ, դրանց զգալի մասը եվրոպացի հայտնի աշխարհագիրների երկեր են, ինչպես օրինակ, անգլիացի Ռ. Քրոզոնը⁶, աբբա Բորը⁷, ավստրիացի նշանավոր մարդաբան դոկտոր Լորենց Ռիզլերը⁸ և ուրիշներ: Կամ ասենք՝ հենվելով ֆրանսիացի նշանավոր հայագետ Վ. Լանգլուայի 1856 թ. հրատարակած հոդվածի տվյալների վրա, հեղինակը գրում է, որ, օրինակ, «Զեյթունում կա 3 հազարից ավելի հայկական տուն և 15 հազար հայ, որոնք իրենց մեջ բաժանել են մարզի երեք գյուղերը: Զեյթունցիները քաջ են և մարտական... Լեզվագիտական և պատմագիտական բազում ուսումնասիրություններով արդեն ապացուցվել է, որ քրդական և թուրքմենական որոշ ցեղերի անունները ծագում են հայերից, որոնց մի մասը հետագայում մահմեդականություն է ընդունել: Ուստի, Տավրոսի լեռներում, որտեղ ժա-

⁴ Նույն տեղում:

⁵ Նույն տեղում, էջ 5-6:

⁶ Robert Curzon, *Armenia, a Year at Erzerum*, London, 1854.

⁷ E. Bore, *Almanach de l'Empire Ottoman pour l'année 1849/1950*, Constantinople, 1849/1850.

⁸ R. Rigler, *Die Türkei und Ihre Bewohner*, II Th., Wien 1852.

մանակին Կրիկիայի հայկական պետությունն է եղել, նրա բնակիչները մինչ օրս էլ պահպանել են իրենց լեզվի մաքրությունը, ազգային ինքնատիպությունը, կրոնը, ավանդույթները...»⁹:

Ներկայացնելով Ռուսաստանում ապրող հայերին, հեղինակը համակարծիք է էդ. Դյուլորիեի հետ, համաձայն որի՝ հայերի իրական թիվն այստեղ 1 միլիոն 200 հազար է, թեպետ, ինչպես նկատում է հողվածագիրը, հայազգի հետազոտող Շահնազարյանի կարծիքով այդ թիվը չի գերազանցում 550 հազարը: Որքան նկատում ենք, թվաքանակի հարցում հայ և օտար հետազոտողների հողորդած տվյալների միջև զգալի տարբերություն կա: Այս առթիվ հեղինակը գրում է. «Ռուսական Կայսրությունում հրատարակվող ներքին գործերի նախարարության ամսագրի 1856 թ. հոկտեմբերի համարում տպագրած «Հայլուսավորչական եկեղեցին» հողվածում Ռուսաստանի հայոց թեմի տվյալներով, Ռուսաստանում ապրող հայերի թիվը կազմում է 357.558 մարդ: Սակայն հարկ է նկատել, — գրում է այնուհետև հեղինակը, — որ այստեղ հաշվի չեն առնված հայ կաթողիկոսները, որոնց թիվը զգալի է թե՛ Կովկասում և թե՛ Արիմում, ուստի ներկայացված թիվը չի արտահայտում իրերի իսկական դրությունը: Այդուհանդերձ, — նկատում է հեղինակը, — ներկայացված թվերն արդեն ցույց են տալիս, որ հայերը կայսրությունում զգալի տոկոս են կազմում: Նրանց մեծամասնությունն ապրում է Անդրկովկասում և Նոր Ռուսիայի երկրամասերում, Աստրախանում, ինչպես նաև կայսրության ներքին մարզերում և քաղաքներում»¹⁰: Հողվածում հեղինակն այնուհետև ներկայացնում է այն վայրերը, որտեղ բնակություն են հաստատել հայերը նախապատմական ժամանակներից սկսած: Ներկայիս չափանիշներով, իհարկե, դրանք պարզագույն տեղեկություններ են, սակայն այն ժամանակվա համար, երբ հայերի մասին տեղեկությունները բավական աղքատիկ էին, այս հրապարակումը բազում առումներով գնահատելի է. «Եփրատն ու Տիգրիսն իրենց սկիզբն առել են Հայաստանի լեռներից և այնուհետև հատել նրա սահմանները: Հայաստանի այս մասը ներկայումս պատկանում է Թուրքիային և բաժանված է երեք նահանգի՝ Էրզրումի, Խարբերդի և Դիարբեքի միջև: Ռուսական Հայաստանը, որն ընդգրկում է Անդրկովկասի մարզերը... ձգվում է մինչև Արաքս և Արարատ լեռ, արևմուտքում այն հասնում է մինչև Էրզրումի փաշայություն, արևելքում Մուղանի հարթավայրով դեպի Կասպից ծովի ափեր... Այս տարածքները ժամանակին եղել են այս աշխատասեր և նախաձեռնող ժողովրդի համար հսկայական հարստությունների աղբյուր: Հայերն իջնելով Տիգրիսով և Եփրատով դեպի հարավ, իրենց ձեռներեցության շնորհիվ շենացրել են Նինվեն և Բաբելոնը և այնուհետև տարածվել դեպի Արևելք: Այս ամենն արդեն ապացուցված է. նրանք եղել են հմուտ հողագործներ: ... Հավանաբար, դա էր պատ-

⁹ «Статистические и этнографические сведения об Армянах...», с. 7.

¹⁰ Նույն տեղում:

ճառը, որ 1826-1829 թթ. Քուրքիայից և Պարսկաստանից անցնելով Ռուսաստան, նրանք համոզված էին, որ իրենց ստեղծած արդյունքները կպատկանեն միայն իրենց: ...Մենք նրանց հանդիպում ենք ամենուր: Եվրոպայի գրեթե բոլոր պետությունները այս աշխատասեր և շնորհաշատ մարդկանց համարում են իրենց երկրի արժանի քաղաքացիներ: Ամենուր, որտեղ հանդիպում ենք նրանց, օգտակար և նախաձեռնող քաղաքացիներ են, ամենուր աչքի են ընկնում որպես հմուտ արդյունաբերողներ և առևտրականներ, տոկոս են և ավյունով լի, չնայած իրենց ստացած աղքատիկ կրթությանը... Մենք նրանց հանդիպում ենք Արևելքի շուկաներում Բոմբեյում, Կալկաթայում, Մադրասում, Սիամում, Կենտրոնական Ասիայում, Չինաստանում... Սինգապուրում... Ալեքսանդրիայում և Հաբեշտանում: Ռուսական շուկաներում մենք նրանց տեսնում ենք Նիժնի Նովոռոդում, Օդեսայում, եվրոպականում Լայպցիգում, Մարսելում, Կիվոռոնոյում, մի խոսքով ամենուր, որտեղ եռում է առևտուրը»¹¹:

Ուշագրավ են նաև հեղինակի դիտարկումները ռուսահայերի մասին. այստեղ նա բերում է նշանավոր կովկասագետ Ա. Հաքստհաուզենի¹² հայտնած կարծիքը. «Անդրկովկասի հայերը իրենց ունակություններով և ծավալած գործունեությամբ, լուսավորության հանդեպ ցուցաբերած ձգտումներով անվիճելիորեն առաջին տեղն են գրավում այնտեղ բնակվող ժողովուրդների շարքում: ... չկա մի արհեստ, արդյունաբերական ճյուղ Անդրկովկասի քաղաքներում, որին նրանք վարպետորեն չտիրապետեն... Ես չգիտեմ մեկ այլ ժողովուրդ, որի մոտ ընտանեկան կապերն այդքան ամուր լինեն, որքան հայերի մոտ է: Նրանք իրենց եկեղեցու հավատարիմ զավակներն են և բոլոր երկրների հավատարիմ քաղաքացիներ»¹³:

Հոդվածում առանձին բաժին է նվիրված հայերի մարդաբանական նկարագրությանը: Հեղինակը մեջբերում է դոկտոր Լորենց Ռիգլերի արտահայտած կարծիքը հայերի մասին. «Նրանց հասակը՝ 5 – 5,12 ոտնաչափ է. (դա մոտավորապես 155-170 սմ է՝ Հ. Հ.), մարմնակազմությունը՝ պինդ ու ամուր, գանգի ձևը՝ համաչափ, հազվադեպ՝ բրգաձև, աչքի անկյունագիծը՝ 80-85 աստիճանի սահամաններում, մազերը՝ սև, դեմքի արտահայտությունը՝ սուր, արտահայտիչ քթով (արծվաքիթ), մաշկի գույնը՝ թարմ, շրթունքները՝ լիառատ, ատամները՝ սպիտակ և ցանցառ»¹⁴: Հեղինակն այս հատկանիշներին ավելացնում է նաև ֆրանսիացի մարդաբան Գ. Դյուբուա-դը-Մոնպերեի հետևյալ դիտարկումը. «հայերն ամուր և կարճ պարանոց ունեն, մկանները՝ բավական զարգացած են...

¹¹ Նույն տեղում, էջ 8:

¹² Ազգութայն գերմանացի բարոն Ա. Հաֆստհաուզենը 1857 թ. հրատարակել է *Заказка-ский край* գիրքը, ուր ներկայացված են տեղի ժողովուրդները:

¹³ “Статистические и этнографические сведения об Армянах...”, с. 8.

¹⁴ Նույն տեղում, էջ 9:

ինչ վերաբերում է հայուհիներին, ապա նրանք... ընդհանրապես արտակարգ գեղեցկություն ունեն և եվրոպացի ճանապարհորդների միահամուռ կարծիքով մինչև իրենց ծերությունը սիրում են թանկարժեք զարդեր, մետաքսից պատրաստված գունագեղ զգեստներ, թանկարժեք քարեր, հնդկական գլխաշոր և այլն: Նրանց գլխաշորերը կարված են արտասովոր ճաշակով... մազերը մուգ սև են, աչքերը արտահայտիչ և առույգ են ու դարձյալ սև»¹⁵:

Հրապարակման մեջ հեղինակն, անշուշտ, չի խուսափում նաև անդրադառնալ հայերի բնավորության մեջ տեղ գտած «արատավոր երևույթներին»: Այդ տեսակետից նա նշում է հայերի մեջ նկատվող ավելորդ նյութապաշտությունը, փառասիրությունը և այլն: Սակայն հեղինակն այս երևույթների սեփական բացատրությունն ունի. «Անշուշտ, ասիական դարավոր լուծը չէր կարող իր ազդեցությունը չունենալ հայերի բնավորության որոշ գծերի վրա, ինչը թերևս նկատելի է բոլոր հարստահարված ժողովուրդների մոտ, և արժե՞ արդյոք, այս լուսավորչալներին նախատել այդ արատների համար և մշատապես պարսավել նրանց, ընդունելով մի ամբողջ ցեղի մեղադրելու կերպարանք, ինչպես վարվում են մեզանում որոշ հեղինակներ»¹⁶: Նկատենք, որ հայերի առևտրական ձիրքն ընդգծող շատ հրապարակումներ եղան ռուսական ամսագրերում և թերթերում, որոնք իսկապես նախանձախնդրության զգացումներ էին առաջացնում Ռուսաստանում: Դրանցից մեկն, օրինակ, Պ. Զուբովն էր, որի աշխատության մեջ հայերը բնութագրված են որպես «ծածկամիտ, փառասեր ու շահամոլ, նախընտրում են միայն այն գործերը, որոնցից կարելի է կարճ ժամանակում շահ ստանալ...»¹⁷:

Հայ ժողովրդին տրված գնահատականների առումով «Родыча» թերթի հոդվածագրի դիրքորոշումը, անշուշտ, միանշանակ դրական է. «Ավելի լավ չէ՞ արդյոք, բնավորության այդ անհաճո գծերը վերագրել աղետալի պատմական հանգամանքներին, և փոխարենը՝ ընդգծել հայերի լուսավորական դերը: Մինչդեռ, լուսավորության և կրթության հանդեպ նրանց ձգտումն այս ժողովրդին հատուկ է ինչպես հին, այնպես էլ ներկա ժամանակներում»¹⁸: Հեղինակն այս առումով առանձնացնում է հայերի մասին էր. Դյուլորիեի հոդվածները, դրանք համարելով բավական հաջողված հրապարակումներ: Ավելին, նա ավելորդ չի համարում շարունակել քաղվածներ մեջբերել ժամանակի նշանավոր հայագետներից՝ ցույց տալու համար հայերի մեծ դերակատարությունը Արևելյան քաղաքակրթության զարգացման գործում, ընդգծում նրանց մեծ նվիրվածու-

¹⁵ Նույն տեղում:

¹⁶ Նույն տեղում:

¹⁷ П. Зубов, *Картина Кавказского края, принадлежащего России и сопредельных ему земель в историческом, статистическом, этнографическом, финансовом и торговом отношениях*, СПб, 1835, с. 13.

¹⁸ «Статистические и этнографические сведения об Армянах», ... с. 9.

թյունը քրիստոնեական հավատքին. «Այստեղ եղել են մեծ պատերազմներ հռոմեացիների ու պարթևների միջև, այստեղ են իրենց տիրապետությունները հաստատել հարավցիները Արևելքի հանդեպ, այստեղ շարժվեցին նաև մեծ նվաճողները՝ արաբները, այստեղ շարժվեց նաև նոր եվրոպան խաչակիրների տեսքով, այստեղով անցան մոնղոլ-թաթարները, Չինգիզ խանն ու Թամերլանը: Հարյուրամյակներով այստեղ պայքար է ընթացել մահմեդական տերությունների միջև (նկատի ունի Պարսկաստանն ու Թուրքիան՝ Հ. Հ.), ներկայումս՝ մահմեդական և քրիստոնեական աշխարհների միջև... Այստեղից է սկսվել լուսավորության և քրիստոնեության տարածումը Արևելքում և Ասիայում...», – գրում է նա¹⁹:

Հրապարակման վերջաբանն ամբողջությամբ նվիրված է հայ ժողովրդին սպասող իրադարձությունների դիտարկմանը, իսկ ավելի որոշակի՝ Քրիստոնյա Արևելքի քաղաքակրթական գործընթացներում հայերին վերապահված դերին. «Խնչ դերակատարություն է նախատեսված այս ժողովրդին համաշխարհային պատմական այս հորձանուտում, – հարցնում է հեղինակը: – Այս ժողովուրդը, – ասվում է այնուհետև հոգվածում, – որի պատմությունը գալիս է նախնադարյան ժամանակներից, ազնվացել է, ունի բարձր հոգևոր և մարմնակազմական շնորհներ, անշուշտ, չի ունեցել այնպիսի հզորություն ու բազմաքանակ բնակչություն, որպեսզի տիրեր աշխարհի ճակատագրին: Ընդհակառակը, շատ քիչ են այն փոքրաքանակ ժողովուրդները, որոնք ունենալով հազարամյակների պատմություն, կարողացել են տանել այսքան դժբախտություններ, հարստահարում և զրկանքներ՝ ինչպես հայերը: Այդ ժողովուրդների մեծ մասը կամ չկան, կամ իրենց ներկայիս վիճակով բավական ցածր են կանգնած հայերից»²⁰:

Համաձայնե՞նք, որ զգացական որոշ շեշտադրումներով հանդերձ, հեղինակը բավական իրատեսական գնահատական է տվել հայ ժողովրդի անցած պատմական ուղուն: Առավել ուշագրավն, իհարկե, հրապարակման ավարտն է, ուր հեղինակը ներկայացնում է հայ ժողովրդի հետագայի իր տեսլականը, և այստեղ, անշուշտ, որպես ռուս հեղինակ (նկատենք, որ հրապարակման մեջ բազմիցս շեշտվում է ռուսական կայսրության հոգատար վերաբերմունքը նորանվաճ ժողովուրդների հանդեպ՝ Հ. Հ.) մեծ դեր է վերապահում Ռուսաստանին, որը պետք է իր հովանու տակ վերցնի այս «շնորհաշատ ժողովրդի» ճակատագիրը. «Ներկայումս այս ժողովուրդը կանգնած է իր ճակատագրի սահմանագծին: Նրա երկիրը ազատագրված է ստրկությունից, և նախապայմաններ են ստեղծվել քաղաքակրթ եվրոպա շարժվելու համար: Ուստի, երբ հայացք ենք նետում այս ժողովրդի ներկայիս դրությունը, մեզ մոտ ոչ մի կասկած չի առաջանում հայերի ապագա բարգավաճման հարցում: Նրանց երկիրն այժմ միացած է մի պետության, որը բռնել է համաեվրոպական լուսավորության

¹⁹ Նույն տեղում, էջ 10:

²⁰ Նույն տեղում:

ճանապարհը, նրա ողջ հոգևոր ուժերն այժմ կարող են ազատորեն զարգանալ: Եվրոպան բաց է այս ժողովրդի համար...», – եզրակացնում է հեղինակը²¹:

Այսպես է ավարտվում հայերի մասին ուսուերեն գրված այս հրապարակումը, և համաձայնե՞ք, որ հայերի թվաքանակի մասին հաղորդած տեղեկություններն ու պատմագիտական-ազգագրական բնույթի դիտարկումներն իր ժամանակի համար ակնհայտ հայագիտական արժեք ունեին:

HAYKAZ HOVHANNISYAN

AN INTERESTING ARTICLE ON THE 19th CENTURY ARMENIANS

Key words: statistics, 19th century, number of the Armenians in the world, characteristics of Armenians, ethnographic information, Russia, Europe, Turkey.

A document kept in the Archive Department of Matenadaran (Archive of the Lazarevs, fund 108, file 96) is an article published in the newspaper *Raduga* (*Rainbow*, January, 1860). It is written in Russian and entitled “Statistical and Ethnographic Information about the Armenians in Turkey, Russia, and Other Countries.” The author provides important statistical information about the number of Armenians in the world and makes many noteworthy historical and ethnographic observations about them. The article also contains notes of other Russian authors about the Armenian nation.

АЙКАЗ ОГАНЕСЯН

ЛЮБОПЫТНАЯ ЗАМЕТКА ОБ АРМЯНАХ В XIX ВЕКЕ

Ключевые слова: статистика, XIX век, число армян в мире, характеристика армян, этнографические сведения, Россия, Европа, Турция.

Хранящийся в Матенадаране (архив Лазаревых, фонд 108, дело 96), документ – статья, опубликованная в январском номере газеты “Радуга” за 1860 год, написана на русском языке и озаглавлена “Статистические и этнографические сведения об армянах в Турции, России и других странах”. В статье рассматриваются важные статистические сведения о численности армян в мире и многие заслуживающие внимания исторические и этнографические наблюдения об армянах. В статье приведены также наблюдения других русских авторов об армянском народе.

²¹ Նույն տեղում:

ԷԳՈՒԱՐԳ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՂԱՐԱՔԱՂԻ ԽԱՆՈՒԹՅԱՆ ՄԻԱՑՈՒՄԸ ՌՈՒՍԱՍՏԱՆԻՆ՝ ԸՍՏ ԿՈՎԿԱՍԻ ՀՆԱԳՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՎԱՎԵՐԱԳՐԵՐԻ¹

Քանալի բառեր՝ Ղարաբաղ (Արցախ), խանություն, ռուս-պարսկական պատերազմ, միացում, հայ ժողովուրդ, հնագրական հանձնաժողովի նյութեր, բանակցություններ, պայմանագիր:

XIX դարի սկզբին Ռուսաստանի և Պարսկաստանի միջև ծավալված դիվանագիտական պայքարն ի վերջո հանգեցրեց 1804-1813 թթ. ռուս-պարսկական պատերազմին: Ընդ որում, պատերազմող կողմերն ունեին հստակ ռազմաքաղաքական նպատակներ. եթե Պարսկաստանի համար գլխավոր խնդիրն Անդրկովկասում իր խանությունների պահպանումն էր, ապա Ռուսաստանի համար օրակարգային էր դարձել տարածաշրջանում իր դիրքերի ամրապնդումը՝ նույն այդ պարսկական խանությունների գրավման հաշվին: Բնականաբար, Ղարաբաղը, որպես հակամարտող կողմերի կարևոր նպատակ, դառնում է սկսված ռուս-պարսկական պատերազմի թատերաբեմ: Ծավալված ռազմական գործողությունների արդյունքում Ռուսաստանին հաջողվեց առավելության հասնել և Գյուլիստանի 1813 թ. պայմանագրով իրեն ամրագրել Ղարաբաղի խանությունը:

Ռուսաստանին Ղարաբաղի միացումը արխիվային փաստաթղթերի տեսքով իր արտացոլումն է գտել ռուսական նշանավոր «Կովկասի հնագրական հանձնաժողովի վավերագրեր»² աղբյուրագիտական ժողովածուի մեջ: Նրանում գետեղված նյութերը պատմագիտական կարևոր տեղեկություններ են հաղորդում միացմանը նախորդած և բուն գործընթացին վերաբերող իրադարձությունների մասին, որոնք բազում առումներով ուշագրավ են և նոր երանգներ են հաղորդում մինչ օրս պատմագիտությանը հայտնի փաստերին:

Ղարաբաղի խանության Ռուսաստանին միացման պատմությանը վերաբերող նյութերը գետեղված են ժողովածուի երկրորդ հատորում: Փաստաթղթերի ուսումնասիրությունից ակնհայտ է դառնում, որ թեպետ ռուսական իշխանությունները կարծես թե լուծել էին Ղարաբաղի Իբրահիմ խանի կողմնորոշման

¹ Հոդվածը տպագրվում է ՀՀ ԿԳՆ ԳԿ – ի «Ասպիրանտների հետազոտությունների աջակցության ծրագիր – 2018» շրջանակում:

² «Կովկասի հնագրական հանձնաժողովի վավերագրեր» ժողովածուն (Акты археографической комиссии Кавказа (АКАК) հրատարակվել է Քիֆլիսում, 1866-1904 թթ. տասներկու (վեցերորդ հատորը բաղկացած է երկու մասից) հատորով:

հարցը, այդուհանդերձ, վերջինիս անկայուն պահվածքը լրջորեն մտահոգել է ուսաներին: Իբրահիմ խանի վարած երկդիմի քաղաքականությունը ուսաներին ստիպում էր աշալրջորեն հետևել նրա յուրաքանչյուր քայլին: Եվ որքան ռազմական գործողությունները խորանում էին Ղարաբաղում, այնքան ավելի կոշտ էր դառնում Իբրահիմ խանի հանդեպ ուսական հրամանատարության դիրքորոշումը: Ասվածի ակնառու ապացույցը Կովկասյան կորպուսի գլխավոր հրամանատար Պավել Յիցիանովի և Իբրահիմ խանի միջև ծավալված բուռն նամակագրությունն է, որն ամբողջովին զետեղված ենք գտել աղբյուրագիտական այս ժողովածուում. «Շատ զարմացած եմ, արդեն 6 օր է անցել Գյանջայի ամրոցի գրավումից և ամսից ավելի է, ինչ անպարտելի ուսական զորքերի հետ գտնվում եմ այստեղ... դու, որ այսքան մոտ հարևանությամբ ես գտնվում և պետք է փնտրեիր ուժեղի հովանավորությունը, ինձ մոտ չես գալիս ուղերձով, – ասվում էր Իբրահիմ խանին ուղղված Պ. Յիցիանովի 1804 թ. հունվարի 8-ի նամակում: – Ջևադ խանի (խոսքը Գյանջայի խանի մասին է – է. Հ.) հպարտությունը խեղդվեց արյամբ, բայց ես չեմ խղճում նրան, քանի որ աստ-ծուն հարիր չէ հպարտությունը, սակայն ես ափսոսում եմ նրանց համար, ովքեր ենթարկվեցին նրա կամքին: Ես հուսով եմ, որ դու նրան չես ընդօրինակի և կհետևես ընդհանուր կարգին, երբ թույլը հպատակվում է ուժեղին... Ռուսաստանի ուժը այս երկրամասի կառավարման համար արդեն բավական հայտնի է: Քեզ մնում է ընտրել ճիշտ ճանապարհը»³:

Կովկասի հնագրական հանձնաժողովի վավերագրերում տեղ գտած այս նամակը թույլ է տալիս եզրակացնել, որ այդ պահից էլ մեկնարկում են գլխավոր հրամանատար Պ. Յիցիանովի բանակցությունները Ղարաբաղի խանի հետ, որի նպատակը վերջինիս վրա հոգեբանական ճնշում գործադրելու միջոցով խանությունը Ռուսաստանին խաղաղ ճանապարհով միացնելն էր. «Քանի որ Գյանջան և Գյանջայի տիրույթները արդեն մտել են ուսական կայսրության անձայրածիր տարածքի մեջ, – գրում էր Յիցիանովը, – ապա ես ելնելով իմ կոշտամից և որպես այս երկրամասի գլխավոր հրամանատար, պահանջում եմ, որ դուք վերադարձնեք ձերի երամակը, որը պատկանում էր հանգուցյալ Ջևադ խանին, ինչպես նաև ոչխարների ողջ հոտը, որը պատկանում է տեղի հայերին... Երկրորդ՝ որպես ուսական արքունիքի հանդեպ բարեկամության երաշխիք, դուք պետք է ուղարկեք մելիք Ջումշուդ Բահրամի որդուն և նրա Աստվածատուր թոռանը, քանի որ մելիք Ջումշուդը հաստատվել է Վրաստանում և մշտական բնակությամբ գտնվում է Նորին Մեծություն կայսեր հպատակության տակ: Հուսով եմ, որ իմ պահանջները դուք կշտապեք կատարել, ինչը

³ АКАК, т. II, Тифлис, 1866. Документ 1416: «Письмо кн. Цицианова к Ибрагимхану, от 8-го января 1804 года – Ганджа», с. 696.

ձեզ երջանկության առիթ կդառնա: Եվ վերջապես, երաշխավորելով ձեր ուղին դեպի Նորին Մեծության Կայսեր հպատակություն, սպասում եմ ձեզանից հավաստիացում այն կարգի սահմանման համար, որի հիման վրա դուք կընդունվեք մեր կողմից»⁴:

Ինչպես նկատում ենք, Ղարաբաղի խանին ուղղված ռուսական հրամանատարի ուղերձը վերջնագրի տեսք ուներ, ինչը բնականաբար պայմանավորված էր տարածաշրջանում ռուս-պարսկական հարաբերությունների անհամեմատ սրացումով: Եվ թեպետ պատասխան նամակում Իբրահիմ խանը փորձել է ինչոր կերպ մեղմել գլխավոր հրամանատարի զայրույթը, սակայն Պ. Յիցիանովը 1804 թ. փետրվարի 4-ի պատասխան նամակում ավելի կտրուկ էր դրել իր պահանջը. «Ձեր նամակը ես ստացա, որը սակայն էական ոչինչ չէր պարունակում, բացի պարսկական ոգուն հատուկ նենգությունից: Ոչ գործնական առաջարկ, ո՛չ գրավոր հավաստիացում, առանց ստորագրության և կնիքի, ինչը ես չեմ ընդունում, և դրա համար դու կհատուցես արյամբ, ինչպես Ջևադ խանը: Ես ձեր հպատակությանը և ենթակայությանը չեմ ձգտում, քանի որ ձեր խոստումներին հավատում եմ այնքան, որքան կարելի է հավատալ քամուն... ձեզանից պահանջում եմ միայն Փյանջայի անասնահոտի վերադարձը: Դուք կարող եք սպասել Բաբա խանի օգնությանը, իսկ ես քեզ կայցելեմ առանց հրավերի: Ես գիտեմ, – շարունակում է այնուհետև Պ. Յիցիանովը, – որ երբ կանգնած էի Փյանջայի տակ, դու դողում էիր ինչպես տերևը ծառի վրա, այլապես այդպես չէիր պատասխանի: ... Սակայն հավատացեք, որ Փյանջայի տակ եղած գործն անգամ բավական է, որ քեզ լիովին կործանեմ... Հավատացեք, որ քո ամրոցի գրավումը ռուսների համար բավական հեշտ կլինի... Մի խոսքով եթե երկու շաբաթից Փյանջայի անասնահոտը չվերադարձվի և մեղիք Ձումշուզի որդի Աստվածատուրը իր թոռան հետ միասին Փյանջայում չլինի, ես ոչ թե դաժան նամակներով եմ քեզ դիմելու, այլ կստիպեմ ինձ ենթարկվել...»⁵:

Իբրահիմ խանի այս պահվածքն, իհարկե, ռուսական կառավարությունը չէր ներելու և անպայման դիմելու էր ուժային միջոցներով հարցը լուծելուն: Խանին «պատժելու» գործը հանձն է առնում ռուսական բանակի հանրահայտ գնդապետ Պ. Կարյագինը: 1804 թ. մարտի 14-ին Յիցիանովին ուղղված գնդապետի գեկուցագրում կարդում ենք. «Մայր կիսանկիչն իր ջոկատով բարեհաջող վերադարձել է. անասնահոտը վերադարձնել չհաջողվեց, քանի որ Իբրահիմ խանը ուղեկալներ էր դրել և կրակում էին նույնիսկ հեռու տարածությունից, ողջ հոտը քշել են լեռները: Հաջողվեց միայն Շուշիից հանել հայերի 250 ընտանիք...»⁶:

⁴ Նույն տեղում:

⁵ АКАК, т. II, документ 1417: “Письмо кн. Цицианова к Ибрагим-хану, от 4-го февраля 1804 года, N 79”, с. 696.

⁶ АКАК, т. II, документ 1418: “Рапорт полк. Карягина кн Цицианову, от 14-го марта 1804 года, N 48. –Елисаветополь”, с. 697.

Այդ ընթացքում գեներալ Պ. Յիցիանովը շարունակում է սպառնալ Իբրահիմ խանին՝ համոզված լինելով, որ թշնամու դեմ պետք է գործել նույն կերպ. «Ես չպետք է քեզ պարսիկներից պաշտպանության տակ առնեի, որոնք իրենց սովորության համաձայն կհանեին քո աչքերը կամ կկտրեին քիթը կամ ականջը, թեպետ, կրկնում եմ. ես քեզ պետք է հանձնեի նրանց ձեռքը և հետո նրանցից հետ վերցնեի Շուշին, սակայն հետևելով մեր միապետ ինքնակալի անսահման ներողամտությանը... ներում եմ քեզ անցյալիդ համար...», – գրում էր Յիցիանովը Իբրահիմ խանին ուղղված 1804 թ. մայիսի 26-ի նամակում:

Կովկասի կառավարչապետն այս անգամ արդեն նոր պահանջներ է դնում Իբրահիմ խանի առջև՝ պահպանել անսասանելի հավատարմություն, ընդունել իր կողմից ուղարկած իշխանավորներին, Շուշիի ամրոցը տրամադրել ռուսական ջոկատին՝ այնտեղ տեղակայվելու համար և որպես հպատակ՝ ռուսական կառավարությանը հանձնել 10 հազար շերվոնեց⁷: Այս պահանջները կատարելուց հետո միայն Պ. Յիցիանովը խոստանում է թույլատրել նրան և նրա ժառանգներին շարունակել ղեկավարել Ղարաբաղի խանությունը: Նամակի վերջում Պ. Յիցիանովի խոսքում արդեն ակնհայտ սպառնալիք կար. «...դու այլ ճանապարհ չունես... երջանիկ կլինես, եթե պահպանես հավատարմությունը: Եվ այդ ամենը ես պահանջում եմ գրավոր»⁸: Հավելենք, որ Իբրահիմ խանի այս անհանգստության պատճառը իշխանությունը կորցնելու իրական վտանգն էր: Բնականաբար, այդ ամենը քաջ գիտակցում էին նաև ռուսական իշխանությունները. «Շուշիի Իբրահիմ խանը, սարսափելով պարսկական զորքերի ներխուժումից, իմ մոտ սուրհանդակ էր ուղարկել մեր տիրակալին հպատակության հայտնելու ցանկությունը և իրեն պաշտպանելու խնդրանքով խոստանալով մշտապես պահպանել հավատարմություն...», – ասվում էր իշխան Ա. Չարտորիյսկուն ուղարկած Պ. Յիցիանովի 1804թ. մայիսի 29-ի գեկուցագրում⁹:

Այդ ընթացքում, դեպքերն, իհարկե, զարգանում էին հօգուտ ռուսական քաղաքականության. սկսված ռուս-պարսկական պատերազմում ռուսական բանակները տպավորիչ հաղթանակներ տարան: Իբրահիմ խանի վրա ճնշումն օրեցօր գնալով ուժեղանում էր, թեպետ խանը վերջին պահին, իր սովորության համաձայն, փորձում էր խուսանավել ռուսական և պարսկական միջամտություններից: Նա, բնականաբար, գիտակցում էր, որ հպատակության ընդունումից հետո պարսկական արքունիքը բացատրություն էր պահանջելու իրենից: Ուստի, այդ հանգամանքը նկատի առնելով, ռուսական արքունիքն էլ իր հերթին ուշի-ուշով հետևում էր Իբրահիմ խանի յուրաքանչյուր քայլին, որպեսզի

⁷ АКАК, т. II, документ 1420: “Письмо кн. Цицианова к Ибрагим-хану, от 26-го мая 1804 года, N 261”, с. 697.

⁸ Նույն տեղում:

⁹ АКАК, т. II, документ 1421: “Письмо Цицианова к кн Чарторийскому, от 29-го мая 1804 года, N 297”, с. 697.

վերջինիս ձեռնարկած գործողություններն անհետևանք չմնան: Կարևոր այդ գործը հանձնարարվել է մայր Դ. Լիսանևիչին, որը պարբերաբար տեղեկություններ էր հաղորդում ռուսական հրամանատարությունը Իբրահիմի ձեռնարկած գաղտնի քայլերի մասին: Այդպիսի մի հաղորդագրություն նա ուղարկել էր գնդապետ Կարյագինին, որն էլ շտապել էր այն հաղորդել Պ. Յիցիանովին. Կովկասյան կորպուսի հրամանատարը պատասխան նամակում գրում էր. «Մայր Լիսանևիչի գեկույցի մասին առայժմ ոչինչ ասել չեմ կարող, քանի որ այն բավականին համառոտ է, սակայն հաղորդեք նրան, որ նա հանգամանորեն ու մանրամասն գրի, թե ինչու՞ է Իբրահիմ խանը իր ավագ որդու՝ Մամեդ Հասանաղայի հետ միասին գտնվում է Արաքսին մոտ գյուղերում և թե արդյո՞ք դա չի նշանակում Բաբա-խանի բանագնացների հետ գաղտնի բանակցում»¹⁰:

Ասվածից դժվար չէ կուսել, թե ինչ է ակնարկում Կովկասի կառավարչապետը Իբրահիմ խանի հարցում: Ավելին, Պ. Կարյագինին ուղղված նամակում Յիցիանովին արդեն բացահայտ գրում է հպատակության հաջորդ հանգրվանի՝ Շիրվանի խանության մասին. «Հանձնարարում եմ աշխատել, որ նամակագրություն սկսեք Շիրվանի Մուստաֆա խանի հետ և մեր բանագնացների միջոցով նրան ներշնչեք, որպեսզի նա փնտրի Ռուսաստանի հովանավորությունը... և որ այդ հպատակությունը նրան կարող է բերել բարեկեցություն Շիրվանի խանության հետագա սերունդների համար: Այս ամենը նրան հաղորդեք բանավոր, այլ ոչ թե գրավոր, և ամեն ինչի մասին տեղեկացրեք ինձ»¹¹:

Այն, որ սկսված պատերազմում Պ. Յիցիանովին ուզում էր որքան հնարավոր է անարյուն ընթացք տալ Ղարաբաղի խանի հպատակության գործընթացին, երևում է հնագրական հանձնաժողովի վավերագրերում գետեղված և Իբրահիմ խանին ուղղված հետևյալ նամակից. «Ես անհապաղ կգնամ Ելիզավետպոլ և այնտեղ պատիվ կունենամ հանդիպելու քեզ հետ... որպեսզի Ելիզավետպոլում քեզ ընդունեմ և գրկեմ որպես իմ եղբոր»¹²: Նամակից ակնհայտ երևում է, որ Պ. Յիցիանովը որոշակի վերապահություններ հանդերձ և հաշվի առնելով Երևանի բերդի գրավման անհաջող ելքը, փորձում էր սիրալիր վերաբերմունքով իր կողմը գրավել Իբրահիմ խանին և արագացնել նրա ռուսական հպատակության ընդունումը: Բնականաբար, մայր Դ. Լիսանևիչը Պ. Յիցիանովին արդեն հաղորդել էր Իբրահիմ խանի և պարսից շահի բանագնացների հետ ունեցած հանդիպումների մասին, ուստի շատ չանցած, կառավարչապետը նամակով Իբրահիմին տեղեկացնում է դրա անհաճո հետևանքների մասին. «Նա-

¹⁰ АКАК, т. II, документ 1430: “Предписание кн. Цицианова полк. Карягину, от 26 февраля 1805 года, N 110”, с. 700.

¹¹ նույն տեղում, էջ 701:

¹² АКАК, т. II, документ 1433: “Письмо кн. Цицианова Ибрагим-хану, от 14-го марта 1805 года, N 162”, с. 701.

մակը, որը տեղեկացնում է ինձ Բաբա-խանի բանագնացի՝ Ֆիրմանով սիրաշահելու մեծամեծ խոստումներով ձեր մոտ գալու մտադրության մասին... սակայն ձեր կողմից ուղարկված բանագնացի միջոցով կրկին համոզվելով Նորին Մեծությանը ձեր հավատարմության և նվիրվածության մեջ... ցանկանում եմ, որ ձեր նամակով տեղեկացնեք այն պատասխանի մասին, որը պատրաստվում էք ուղարկել Բաբա-խանի բանագնացին ... անցնելով Նորին Մեծության հովանավորության և հպատակության տակ, դուք չեք կարող առանց մեզ նախնական ծանուցման և համաձայնության որևէ բանակցություն վարել ուրիշ երկրների և հարևան տիրակալների հետ...»¹³:

Նամակի վերջում Պ. Յիցիանովը, ներկայացնելով իր պահանջները պարսից շահին, կրկին «հասկացնում է» Իբրահիմին, որ պետք է արագացնել հպատակության ընդունումը. «...եվ եթե նա (պարսից շահը՝ Է. Հ.) չկատարի իմ պահանջները, ապա ես նրա համար սահման կհաստատեմ Կուր և Արաքս գետերը, թույլ չեմ տա անցնել այդ սահմանը և նրան հանգիստ կթողնեմ միայն այդ սահմանների մեջ: Ահա իմ պատասխանը, որը կարող էք հաղորդել Բաբա-խանի բանագնացին և Նորին Մեծության հովանավորության և հպատակության ձեր մտադրության մասին, որի մասին դուք վստահեցնում էք ինձ: Միևնույն ժամանակ պատիվ ունեմ տեղեկացնելու ձեզ, որ ես արդեն չորրորդ օրն է, ինչ ելիզավետպոլում եմ և սպասում եմ Ձեզ հետ հանդիպմանը՝ վերջնական պայմանագիրը ստորագրելու համար»¹⁴:

Ղարաբաղի Իբրահիմ խանին ուսուսական հպատակության մղելու Պ. Յիցիանովի ջանքերն, ի վերջո, հաջող ավարտ ունեցան: 1805 թ. ապրիլի 7-ին ուսուսաց կայսերն ուղղված գեկուցագրում գեներալ Պ. Յիցիանովն արդեն ներկայացնում էր Ղարաբաղյան իր «առաքելության» արդյունքները. «Շուշիի Իբրահիմ խանը, որի մասին ես արդեն պատիվ եմ ունեցել հանգամանորեն ներկայացնել Նորին մեծությանը, ձգտում է համառուսական հովանավորության և հպատակության, արդեն համաձայնել է իմ բոլոր առաջարկությունների հետ, ժամանել է ելիզավետպոլի սահմանագիծ և միայն սպասում է իմ այնտեղ ժամանմանը, որպեսզի հանդիսավորությամբ Նորին մեծությանը հավատարմության երդում տա: Ինձ ուղարկած նամակում նա արդեն հաստատել է իր համաձայնությունը առաջարկների առթիվ և միաժամանակ, ցանկություն է հայտնել իր որոշ մտադրությունների մասին անձամբ հաղորդել մեր հանդիպման ժամանակ, որն իմ կարծիքով, կվերաբերի իրենից պահանջվող հարկերը պակասեցնելուն, թեպետ իմ կարծիքն այն է, որ դա անհնարին է, քանի որ այստեղի սովորությունների համաձայն, հպատակությունը և կախվածությունը ենթա-

¹³ АКАК, т. II, документ 1434: “Письмо кн. Цицианова Ибрагим-хану, от 25-го апреля 1805 года, N 279”, с. 702.

¹⁴ Նույն տեղում:

դրում է հարկատվություն, որպեսզի որոշ շահով լրացվի Վրացական աղքատիկ գանձարանը»¹⁵:

Ձեկուցագրից շատ շանցած՝ 1805 թ. մայիսի 9-ին, իշխան Ա. Չարտորիյուկուն գրած նամակում Պ. Յիցիանովն արդեն հաղորդում էր, որ չորս գումարտակով դուրս է եկել Ելիզավետպոլից Ղարաբաղի Իբրահիմ խանի հետ հանդիպելու համար և ավարտել նրա կողմից ռուսական հովանավորություն ու հպատակություն ընդունելու գործողությունը. «... նա համաձայնեց տեսակցություն ունենալ Քյուրակչայ գետի մոտ ... հետագայում կհաղորդեմ նրա հետ ունեցած իմ տեսակցության արդյունքների մասին»¹⁶: Իսկ Ալեքսանդր կայսերն ուղղված մայիսի 22-ի նամակում, երբ արդեն կայացել էր Իբրահիմ խանի հպատակության ընդունման պաշտոնական արարողությունը (Ղարաբաղի Իբրահիմ խանը ռուսական հպատակություն ընդունեց 1805 թ. մայիսի 14-ին՝ է. Ն.), Կովկասյան կորպուսի հրամանատարն իր զեկույցին հանդիսավոր տեսք էր տվել. «Պատիվ ունեմ նորին Մեծությանը հանձնել Շուշիի բերդի բանալիները և Ղարաբաղի Իբրահիմ խանի հետ կնքված պայմանագիրը՝ ողջ ընտանիքով և Ղարաբաղի տիրույթով նորին Մեծությանը հավերժ հպատակության ընդունման մասին, երդումով իմ ներկայությամբ: Համարձակվում եմ շնորհավորել նորին Մեծությանը Ռուսական կայսրության նոր ընդարձակման առթիվ... »¹⁷:

Ահա այսպիսի հանդիսավորությամբ Պ. Յիցիանովը զեկուցում է ռուսաց թագավորին՝ Ղարաբաղի նվաճման կապակցությամբ, սակայն պատմագիտական առումով առավել քան կարևոր է զեկույցի շարունակությունը. «Ղարաբաղի տիրույթների սահմանները ձգվում են հյուսիսից Կուր գետով մինչև Շաքիի խանություն, իսկ մի մասը Շամախիի խանության հետ սահմանով, արևելքում այն հասնում է Արաքսի ափերը, մինչև Ղարաբաղի և Նախիջևանի խանություններ և վերջապես, արևմուտքից մի մասով սահմանակից է Գարանի գետի շրջանում Ելիզավետպոլի օկրուգին և մյուս մասով՝ Երևանի տիրույթներին Գեոքչա կամ Սևազ(ն)ա լճով»¹⁸: Իսկ այժմ զեկույցի առավել ուշագրավ մասը. «Այս տիրույթի ժողովրդագրությունը ներկա դրությամբ բավականին տարբերվում է անցյալ ժամանակներից, քանի որ մինչև Աղա-Մուհամմեդ խանի արշավանքը և Ղարաբաղի իշխանության անկումը, միայն հայերն այստեղ կազմում էին 40 հազար տուն (ընդգծումը մերն է է. Ն.): Ուստի ես մտադիր եմ Շիրվանի Մուստաֆա խանից ետ բերել այնտեղ փախած հայկական 8 հազար ընտանիքներին (ընդգծումը մերն է է. Ն.), ... չեմ ուզում բռնության դիմել, քանի որ խանը

¹⁵ АКАК, т. II, документ 1433: “Всеподданнейший рапорт кн. Цицианова, от 7-го апреля 1805 года, N 8”, с. 701.

¹⁶ АКАК, т. II, документ 1435: “Отношение кн. Цицианова к кн. Чарторийскому, от 9-го мая 1805 года, N 298”, с. 702.

¹⁷ АКАК, т. II, документ 1436: “Всеподданнейший рапорт кн. Цицианова, от 22-го мая 1805 года, N 19”, с. 703.

¹⁸ Նույն տեղում:

հրաժարվում է նրանց հետ ուղարկել, սակայն երբ առիթը ստեղծվի, ապա Ղարաբաղի խանություն կբերեմ նաև այդ բնակիչներին»¹⁹: Դժվար չէ կուսհել, որ Պ. Յիցիանովը, որը բնավ չի «փայլել» հայերի հանդեպ ունեցած իր բարյացակամ վերաբերմունքով, իրապես շահագրգռված էր Ղարաբաղի հայերին իրենց բնակության նախկին տարածքները վերադարձնելու և բնակեցնելու խնդրում, քաջ գիտակցելով հայերի դերակատարությունը, նորանվաճ այս տարածքի հետագա զարգացման հեռանկարների իմաստով: Ի դեպ, ուշագրավ է նաև այն փաստը, որ Շիրվանի Մուստաֆա խանն էլ իր հերթին չի համաձայնել հայերի նման ստեղծագործ ժողովրդին թույլատրել տեղափոխվելու Ղարաբաղ: Այդուհանդերձ, որքանով նկատելի է վավերագրից, միայն Ղարաբաղի և Շիրվանի խանություններում (վերջինիս հայությունը նույն Արցախից գնացածներ էին է. Հ.) ապրում էր գրեթե 50 հազար հայ ընտանիք. համաձայնենք, որ խոսքը հայության մի սովորական գանգված մասին է, որն այստեղ ապրել է դարեր ի վեր:

Ի դեպ, Ֆյուրակչայում Իբրահիմ խանի հպատակության փաստը մինչ օրս էլ ադրբեջանցի պատմաբանները բացատրում են ոչ այլ կերպ, քան որպես Ռուսաստանի զավթողական քաղաքականության հետևանք: Ավելին, նրանք այս փաստն օգտագործում են՝ մեկ անգամ ևս ընդգծելու Արցախի՝ ադրբեջանական տարածք լինելը: Այս քաղվածքը Ադրբեջանի գիտությունների ակադեմիայի Բակիխանովի անվան պատմության ինստիտուտի հաղորդագրությունից է. «XVIII դարի վերջին, XIX դարի սկզբին Ռուսաստանի զավթողական քաղաքականությունը Հարավային Կովկասում, այդ թվում նաև Ադրբեջանում, ուժեղացավ... Այդ իրադրության մեջ Իբրահիմ խանը ռուսական բանակի հրամանատար Պ. Յիցիանովի հետ կնքեց Ֆյուրակչայի պայմանագիրը, որի համաձայն, Ղարաբաղի խանությունը, որպես բացառապես մահմեդական-ադրբեջանական տարածք, հպատակվեց Ռուսաստանին: Ֆյուրակչայի պայմանագիրը, որն արտահայտում է պատմական իրականությունը, միևնույն ժամանակ հանդիսանում է ամենից հավաստի փաստաթուղթը, որն ապացուցում է Ղարաբաղի պատկանելիությունը, ինչպես նաև նրա կեռնային մասի պատկանելիությունը Ադրբեջանի ժողովրդին»²⁰: Ներկայացվածն այլ կերպ չես որակի, քան պատմական իրողության հերթական խեղաթյուրում:

Այսպիսին է Ղարաբաղի՝ Ռուսաստանին միացման պատմությունը լուսաբանող փաստաթղթերի հիմնական բովանդակությունը, որոնք տեղ են գտել Կովկասի հնագրական հանձնաժողովի հրատարակած վավերագրերում: Կասկածից վեր է, որ այդ վավերագրերը պատմագիտական կարևորությունից զատ, անվիճելի ապացույցներ են պարունակում ադրբեջանական պատմագիտության ներկայիս խեղաթյուրումներին հակադարձելու խնդրում:

¹⁹ Նույն տեղում:

²⁰ St'u "Karabakh: Этимология, территория и границы", կեկտոբնային կայք՝ http://www.azerbaijan.az/portal/Karabakh/History/history_r.html.

EDUARD HOVHANNISYAN
THE ANNEXATION OF THE KARABAKH KHANATE TO RUSSIA
ACCORDING TO THE ACTS OF THE CAUCASIAN
ARCHAEOGRAPHIC COMMISSION

Keywords: Karabakh (Artsakh), Khanate, Russian-Persian War, accession, Armenian nation, materials of the archeographic commission, negotiations, agreement.

The military and political situation of the early 19th century in Karabakh and the Russian-Persian War of 1804–1813 have been reflected in the *Acts of the Caucasian Archaeographic Commission*. Many archival documents in the *Acts* provide important historical details about the annexation of the Karabakh Khanate to Russia and the steps taken by the Russian government to fulfil this purpose. Many of these documents are not only of significant historical importance but also contain undeniable evidence of misinterpretation of facts of the history of the Armenian Karabakh by Azarbaijanian historians.

ЭДУАРД ОГАНЕСЯН
ПРИСОЕДИНЕНИЕ КАРАБАХСКОГО ХАНСТВА К РОССИИ В
АКТАХ КАВКАЗСКОЙ АРХЕОГРАФИЧЕСКОЙ КОМИССИИ.

Ключевые слова: Ключевые слова: Карабах (Арцах), ханство, русско-персидская война, присоединение, армянской народ, материалы археографической комиссии, переговоры, договор.

Сложившиеся в Карабахе в начале 19-го века военно-политическая ситуация и русско-персидская война 1804-1813 гг. нашли отражение на страницах собрания “Акты Кавказской археографической комиссии (АКАК)”. Многочисленные архивные документы в “Актах” сообщают важные подробности присоединения Карабахского ханства к России и шагов, предпринятых российским правительством для достижения этой цели. Многие из этих документов имеют не только подчеркнутую историческую важность, но и содержат неоспоримые доказательства искажения азербайджанскими историками фактов истории армянского Карабаха.

ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՍՄԻԿ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ՀԱՅԱՏԱՌ ՊԱՐՍԿԵՐԵՆ ԶԵՌԱԳԻՐ ԱՎԵՏԱՐԱՆՆԵՐԻ (ՄՄ 8492, ՄՄ 3044) ՏԱՌԱԴԱՐՁՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ

Բանալի բառեր՝ պարսկերեն, հայերեն, Շիրվան, հայատառ, Ավետարան, գրություն, ավանդական, հնչյունական, ուղղագրություն:

ՄՄ 8492 և ՄՄ 3044 հայատառ պարսկերեն ձեռագիր Ավետարանների տառադարձման հիմքում ընկած են հայերենի ավանդական և պարսկերենի հնչյունական գրությունների սկզբունքները: ՄՄ 3044 ձեռագիրը, ինչպես վկայում է գրիչ տեր Միքայելը¹, ՄՄ 8492 ձեռագիր մատյանի ընդօրինակությունն է և արտագրվել է 1780 թ. Գանձակում: Սկզբնագիրը՝ ՄՄ 8492 ձեռագիր մատյանը, չորս Ավետարանների պարսկերեն թարգմանությունն է՝ հավելված նախաբանով, որը պարսկերեն Համաբարբառի նախաբանի հայատառ գրությունն է²: Գրվել է մեսրոպատառ ժԸ դարի սկզբին (1717-1721 թթ.) Շամախիում: Երկու ձեռագիր մատյաններն էլ պահվում են Մաշտոցյան Մատենադարանի ձեռագրաֆոնդում³: Քննարկվող բնագրերը տարածաժամանակային առումով միմյանց մոտ լեզվական նյութ են ներկայացնում և փաստում, որ այդ ժամանակաշրջանում պատմական Շիրվանի տարածքի հայ բնակչության առօրյա հաղոր-

¹ ՄՄ 3044, էջ 141ա. «որ ի ՌՄԻԸ (1228) ես տեր Միքայիլս գրեցի օրինակի լուսաչհոքի հաքիմ Յակոբին (Հ. Կ. ՄՄ 8492 –ի գրիչը) որ գրեալ էր ի քաղաք Շօշ (Հ. Կ. Իրանի Իսֆահան քաղաքի մասին է խոսքը: Սակայն ՄՄ 8492-ի գրիչ Հաքիմ Յաղուբը նշում է հիշատակարանում, որը ինքը սերում է Իսֆահանից, բայց Ավետարանները թարգմանել է Շամախիում (մանրամասն տե՛ս Հ. Կիրակոսյան, «Մաշտոցյան Մատենադարանի հայատառ պարսկերեն երկու ձեռագիր Ավետարանների հիշատակարանների մասին (ՄՄ 3044, ՄՄ 8492)», էջմիածին, 2018 (Ե), էջ 47-62) ի վաղուց ժամանակի յառաջ ժամօվ. սա մեք գրեցաք սբ ավետարանս ի քաղաքն Գանձայ ի հայրապետություն հայոց տեառն Սիմիօնի և ի տունս աղունք տեառն Իսրայիլի, որոյ լիշատակը օրհն[ու] եղիցի»:

² *A Unified Gospel in Persian*, ed.: **M. Hassanabadi, R. Jahani and C. Jahani**, English preface by **R. Crellin**, (Studia Iranica Upsaliensia 33), Uppsala 2018, pp. 49-89.

³ Նկարագրությունները տե՛ս՝ ՄՄ 8492, *Յուզակ Ձեռագրաց*, Բ. Բ, Երևան 1970, սյ. 756, ՄՄ 3044, *Յուզակ Ձեռագրաց*, Բ. Ա, Երևան 1965, սյ. 927: Նաև՝ **R. Gulbenkyan**, “The Translation of the Four Gospels into Persian,” *Nouvelle Revue de science missionnaire*, CH-6405 Immensee, 1981, p. 70, fn. 196; Հ. Ս. Անասևան, *Հայկական Մատենագիտություն*, Բ. Բ, Երևան, 1976, սյ. 539-540: Սույն ուսումնասիրությունը կատարվել է հիմնականում ՄՄ 8492 ձեռագրի հիման վրա, բացառությամբ մի քանի համեմատությունների, որի համար օգտագործվել է ՄՄ 3044-ի լեզվական նյութը:

դակցման, նաև՝ միջէթնիկ շփման լեզուն պարսկերենն էր, իսկ գրավոր լեզվի արձանագրման միջոց էր մեսրոպատառ գիրը, որը, տվյալ դեպքում, կատարում էր նաև հայ էթնիկ-կրոնական միջավայրը պահպանելու գործառույթ: Հայատառ պարսկերեն այս բնագրերի տառագարծության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այդ շրջանում հայերենի կանոնական ու ընդհանրական դարձած ուղղագրությունը⁴ գործածվել է հայ գրիչների կողմից պարսկերեն լեզվանյութի գրություն համար: Ըստ էության, պարսկերենի հնչյունական և հայերենի ավանդական գրությունների համակցությամբ տառագարծված բնագրերը թույլ են տալիս փաստագրական նյութ ձեռք բերել ժԸ դարի հայերենի ուղղագրության և Արևելյան Այսրկովկասում խոսվող պարսկերենի հնչյունաբանության ուսումնասիրության համար⁵:

Ա. ՉԱՅՆԱՎՈՐՆԵՐԻ ՏԱՌԱԳԱՐԶՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Արաբապարսկական գրին հատուկ տառային արտացոլում չունեցող կարճ ձայնավորները՝ ա, է, օ, քննարկվող բնագրերում միջբաղաձայնային դիրքում տառագարծվել են որպես երկար հնչյուններ, ինչը բնորոշ է պարսկերեն խոսակցական լեզվին, դանդաղ խոսքին և, ըստ ամենայնի, այդպես հնչել է պարսկախոս հայ բնակչության շուրթերից, այսինքն՝ պատմականորեն կարճ և երկար ձայնավորները տառագարծվել են նույնակերպ, քանի որ ունեցել են արտասանական մերձավորություն: Բացի սա, հայերենում երկար/կարճ ձայնավորների հակադրություն չկա, ինչը և արտացոլված է գրային համակարգում, և որի հետևանքով, կարճ հնչյունները հաճախ կրճատվել են միջանկյալ դիրքում, կամ արտասանվելով Ձ արտահայտվել են ը տառով⁶: Հաճախագեպ են պարսկերեն խոսակցական լեզվին բնորոշ կարճ հնչյունների անկայունության գրասկզբումները:

1. Կարճ ա՝

⁴ Հայերենի ժԸ դարի ուղղագրական կանոնների մասին տե՛ս Ս. Վ. Գյուլբուրադյան, *Հայերենի ուղղագրության պատմություն*, Երևան, 1973, էջ 178-198, նույնի՝ «Հայերենի XVIII դարի ուղղագրության մասին», *ՊԲՀ*, № 1, 1973, էջ 84-96:

⁵ ՄՄ 3044 և ՄՄ 8492 բնագրերում հաճախագեպ են գրության տարբերակներ, որի հետևանքով գրության կանոններ վերհանելիս դժվարություններ են առաջանում, օրինակ՝ պրսկ. *anšir* («թուգ») բառը. հմմտ. ՄՄ 8492, էջ 106ա, ՄՄ 3044, էջ 771բ (Մարկ. ԺԱ 13) *անճիր*, ՄՄ 8492, էջ 25բ (Մատթ. 7:16) *անջիր*, ՄՄ 8492, էջ 138ա, ՄՄ 3044, էջ 90ա (Գկ 6:44) *ինջիր*:

⁶ Նման արտասանությունն ու տառագրությունը կապված է նաև պարսկերենի ներքին հնչյունական զարգացումների հետ: Կարճ *a* հնչյունի արտասանական զարգացումն ու փոփոխման փուլերը ժԸ-Ի դարերի ընթացքում տեղի են ունեցել ներքին և արտաքին ազդեցությունների հետևանքով. *ā* -ի արտասանական շարժը դեպի **e*, **o* և միջանկյալ փուլը՝ *ā* > *ə* (ձ. Կ. որն էլ հյ. բնագրերում արտահայտվել է ը տառով), այնուհետև > *a/e* և թյուրփական հետագա շերտի ազդեցության մասին տե՛ս Ա. Pisowicz, *Origins of the New and Middle Persian Phonological Systems*, Nakł. Uniwersytetu Jagiellońskiego, 1985, pp. 92, 87-101: Նշենք, որ միջին հայերեն բնագրերում ևս, պարսկերեն *-a-* ն տառագրվել է *-ը-* տառով:

1.1 Տառադարձվել է ը: Բացի վերոնշյալ պատճառներից, հայտնի է, որ պարսկերեն բանավոր խոսքում հնչող ը -ն կարճ ա հնչյունի ենթահնչյունն է շեշտված դիրքում երկար -ա- հնչյունով վանկից առաջ՝

բն. ընթախտամ – ժամանակակից պարսկերեն (այսուհետ՝ ժ. պ.) andāxtam «զցեցի»⁷,

բն. մինըհանտ – ժ. պ. minahānd «դնում են»,

բն. նրհատ – ժ. պ. nahād «դրեց»,

բն. զրբ/պան – ժ. պ. zabān «լեզու» և այլն:

1.2 Մնացյալ դեպքերում այն տառադարձվում է ա՝

բն. ավալ – ժ. պ. avval «առաջին»,

բն. անդիշայ – ժ. պ. andiše «միտք»,

բն. ազ – ժ. պ. az «-ից»,

բն. աստ – ժ. պ. ast «է» օժանդակ բայը,

բն. դազապ – ժ. պ. yazab «զայրույթ» և այլն:

2. Կարճ է՝

2.1 Բառակազմում տառադարձվել է -ի, արաբական ծագման բառերում ետ-ընթաց առնմանման արդյունքում պայմանավորված թյուրքական ազդեցությամբ.

բն. իշթիալ - ժ. պ. eštiāq «ցանկություն»,

բն. իննիլ/ինջիլ - ժ. պ. enjīl «Ավետարան» և այլն:

2.2 Բառակազմում տառադարձվել է -ը, արաբական ծագման բառերում պայմանավորված հաջորդ վանկի երկար -ա- /-ā-/ ձայնավորի ազդեցությամբ նախորդ վանկի -է հնչյունի վրա > -ը-, ետընթաց առնմանմամբ⁸

բն. ընթըհան - ժ. պ. emtehān «Ֆննություն»,

⁷ Խոսակցական պարսկերենում այս բայն օգտագործվում է նաև՝ *endāxtan* ձևով:

⁸ Միջին հայերենում փոխվել էր *ե* ու է ձայնավորների տարբերակման հիմքը՝ բաց կամ փակ լինելու հատկանիշը, և դրանք, շատ հաճախ, գրության մեջ փոխարինում էին մեկը մյուսով, տե՛ս է. Աղայան, (խմբ.), *Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության* (այսուհետ՝ ԱՄԳՀՊ), հ. Ա, Երևան, 1972, էջ 27: Միջին դարերից եկած *ե* - է տառերի շփոթված այդ գրությունը ժԸ դարի հայերենում կանոնակարգված տեսք էր ստացել բառակազմում *յե*- հնչյունակապակցությունը գրվում է *ե*- տառով, իսկ *ե* հնչույթը՝ է տառով: Հայերեն է, ե տառերի ուղղագրության և հնչյունական արժեքների տարածամասակյա մանրամասն ֆննությունը տե՛ս Վ. Կատվայան, *Հայ բարբառագիտության հարցեր*, Երևան, 2014, էջ 121-200: *ե* ու է ձայնավորների տառային ավանդական խառնաշփոթը հաճախ արտացոլվել է ֆննարկվող ձեռագրերում, որտեղ հանդիպում ենք երբեմն դրանց ոչ հետևողական տառադարձման ու գրության տարբերակների, հմմտ. բն. փե/էղամբար – ժ. պ. peyyambar «մարգարե», բն. մունե/էնտ – ժ. պ. mānand «մման», և այլն: Սակայն, հայերենի *ե* – է ուղղագրության նշված կանոնակարգված գրությունը բնագրերում հիմնականում պահպանվում է:

⁹ Ձայնավորների ներդաշնակության երևույթը հատուկ է նաև Շամախիի բարբառին, այսինքն՝ լեզվական այն միջավայրին, որտեղ թարգմանվել են Ավետարանները՝ ՄՄ 8492, տե՛ս Ռ. Բաղդամյան, *Շամախիի բարբառը*, Երևան, 1964, էջ 30-31:

բն. ընթրհայ - ժ. պ. entehā «վերջ, ավարտ»,

բն. ըրթրմաս - ժ. պ. eltemās «աղաչանք» և այլն:

2.3 Բայական նախամասնիկների ու բայաձևերի առաջնավանկի -է- ձայնավորը նույնպես տառադարձվում է -ը՝

բն. բրդահաա – ժ. պ. bedahad «տա»,

բն. նըվիշտանա – ժ. պ. neveštand «գրեցին»,

բն. բընգըրիա – ժ. պ. benegarid «նայեք»,

բն. բըխունիա – ժ. պ. bexānid «կարդացեք» և այլն¹⁰:

2.4 Պարսկերենի անցյալ դերբայի -է (-eh) վերջավորությունը տառադարձվում է -ա, որն արտացոլում է նաև նոր պարսկերենի վաղ շրջանի արտասանությունը: Ըստ ամենայնի, ժԸ դարում անցյալ դերբայի վերջավորությունը շարունակել է հնչել որպես -ա, ինչը պարսկերենում ավարտված է համարվում ժԶ դարում, սակայն կենդանի է նաև իրանական ժամանակակից մի շարք լեզուներում ու բարբառներում՝

բն. փարայ ֆանդայ – ժ. պ. parākande «ցրված»,

բն. դար մանդայ – ժ. պ. dar mānde «հետ մնացած» և այլն:

2.5 Պարսկերենում բայանուն կազմող -էշ (< դաս. պ. -iš, մ. պ. -iš /-išn < հ. պ. * -šna) վերջածանցը տառադարձվում է -իշ, հնարավոր է (՛) շփական շ -ից առաջ, այսպես՝

բն. բախիշ – ժ. պ. baxšēš «նվիրաբերություն»,

բն. ասայիշ – ժ. պ. āsāyēš «հանգստություն»,

բն. ոավիշ – ժ. պ. raveš «շարժում, ընթացք» և այլն:

2.5.1 -էշ- > -իշ- գրությունը վկայված է նաև հետևյալ բառերում՝

բն. ֆըրիշթայ – ժ. պ. ferešte «հրեշտակ»,

բն. նըվիշթայ – ժ. պ. nevešte «գրած» և այլն:

2.6 -է- տառով է գրվել պարսկերենի բառամիջի -էյ- /-ey-/ երկբարբառը¹¹: Այս երևույթը բնորոշ է եղել ժԸ դարի խոսակցական պարսկերենին¹², մինչդեռ ժամանակակից լեզվում այն հնչում է -էյ-, այսպես՝

բն. փէդայ – ժ. պ. peydā «ակնհայտ»,

¹⁰ Հմմտ. ժԸ դարի հայերեն ձեռագրերում ը տառի կիրառությունները բայի նախամասնիկի -ից հետո՝ կը կարգացվի, կը շինվի, կը հասկացնենք և այլն, տե՛ս Գյուլբուրադյան, «Հայերենի XVIII դարի ուղղագրության մասին», էջ 88:

¹¹ Հնարավոր է, գրաբարյան է գրի էջ հնչյունական արժեքի դրսևուման հետքերն են (?):

¹² A. Pisowicz, *Origins of the New and Middle Persian Phonological Systems*, p. 59: Պիսովիչը ֆնմարկել է նաև -ai- → -ai-/-ei-/-e- → /ey/ պատմական զարգացումը՝ ժԳ-Ի դարերի ընթացքում և, թերևս, -է- տառադարձությունը համապատասխանում է ժԸ դարում երկբարբառի -ai- > -e- զարգացման փուլին (նույն տեղում, էջ 89): Նշենք, նաև բնագրերում արաբական ծագման բառերի նման տառադարձությունը պարսկերենի ընդհանուր կանոնին հետևելու արդյունք է:

բն. փեփար – ժ. պ. peykar «իրան, մարմին, տեսք»,

բն. փեվաստա – ժ. պ. peyvaste «անընդհատ»,

բն. ֆեզ – ժ. պ. feyz «իջնելը»,

բն. դէր¹³ – ժ. պ. yejr «ուրիշ»,

բն. դեսար – ժ. պ. qeysar «կայսր» և այլն:

2.7 -e/-a կարճ հնչյունների անկայունությունը գրական և ամենօրյա խոսակցական պարսկերենին բնորոշ երևույթ է, որը հանդիպում է նաև ձեռագրերի գրություն մեջ.

բն. ֆեսի – ժ. պ. ke/asi «ումն, մեկը»,

բն. մադէր – ժ. պ. mādar «մայր»,

բն. բարադէր/բըրադէր – ժ. պ. barādar «եղբայր»,

բն. վէ – ժ. պ. va/e «և», և այլն:

2.8 Բառասկզբում ye երկհնչյունի արժեք ունի ե- տառը, որն արդեն ժԸ դարում հայերենում սովորական գործառույթ ուներ՝

բն. եֆ – ժ. պ. yek «մեկ»,

բն. եգանայ – ժ. պ. yegāne «միակ»,

բն. եգանեգի – ժ. պ. yegānegi «միակություն» և այլն:

2.9 -իա- երկբարբառը ժԸ դարի հայերենում գրվում է -եա- տառակապակցությամբ և այս կանոնով է պայմանավորված բնագրերում պարսկերենում -ya- հնչող, սակայն -ia- (Շ) գրությունն ունեցող հնչակապակցության համար -իեա- հնչախմբի գրությունը, ինչպես նաև՝ հայերենում բառավերջի բաղաձայնական խմբից և շեշտակիր վանկում ա ձայնավորից առաջ միայն ե գրվելու կանոններով¹⁴.

բն. իեայնի – ժ. պ. ya'ni «այսինքն»,

բն. գուփեանտ – ժ. պ. guyand «ասեն»,

բն. դարիեայ – ժ. պ. daryā «ծով»,

բն. բիայիեամ – ժ. պ. beāyam «գամ» և այլն:

3. Կարճ օ՝

3.1 ժԸ դարի հայերենի ուղղագրական կանոնների համաձայն՝ օտար, փոխառյալ բառերի օ հնչյունը տառագարծվել է օ տառով բառի բոլոր դիրքերում¹⁵: Քննարկվող հայաստան բնագրերում իրանական ծագման բառերում բառասկզբի և բառամիջի դիրքերում այս կանոնը պահպանվել է՝

բն. օֆտատ – ժ. պ. oftād «ընկավ»,

բն. գօֆտ – ժ. պ. goft «ասաց»,

¹³ Հանդիպում է նաև դէր ձևով՝ ՄՄ 3044, էջ 73բ, սակայն՝ ՄՄ 8492, էջ 109բ նույնը՝ դէր:

¹⁴ Տե՛ս Վ. Կատվայան, «Հայ բարբառագիտության հարցեր», էջ 221:

¹⁵ Ս. Վ. Գյուլբուրդյան, «Հայերենի XVIII դարի ուղղագրության մասին», էջ 86:

բն. սօխան – ժ. պ. soxan «խոսք»,
բն. ոսխ – ժ. պ. rox «երես»
բն. սբօֆ – ժ. պ. sabok «թեթև»,
բն. փօր – ժ. պ. por «լիք»,
բն. ֆօշտանտ – ժ. պ. koštand «սպանեցին»
բն. ֆօթ – ժ. պ. fot «մահ» և այլն:

3.2 Բառամիջի դիրքում -օ- հնչյունը -ու է տառադարձվել հետևյալ բառերում, ընդ որում, արտացոլելով վաղ նոր պարսկերենի (այսուհետ՝ վ. ն. պ.) արտասանությունը, որը պահպանվել էր ԺԸ դարի Շիրվանի պարսկերենում՝

բն. խուդա – ժ. պ. xodā, վ. ն. պ. xudā «աստված»,
բն. խուդայվանտ – ժ. պ. xodāvand, վ. ն. պ. xudāvand «տեր»,
բն. ֆունանդ – ժ. պ. konand, վ. ն. պ. kunand «անեն»,
բն. ֆուշա – ժ. պ. košā, վ. ն. պ. kušā «տեղ, որտեղ»,
բն. դու – ժ. պ. do «երկու», վ. ն. պ. du:

3.3 Արաբական ծագման բառերում -օ- հնչյունը արտացոլում է դասական արաբերենին հատուկ արտասանությունը և գրվում է ու, որը վկայում է, որ պարսկերենի բանավոր տարբերակներում տեղի չէր ունեցել դրանց արտասանության պարսկականացումը՝

բն. մոդադամայ – ժ. պ. moqaddame «մախաբան»,
բն. մոխտայսար/մոխտասար – ժ. պ. moxtasar «համառոտ»,
բն. սուրխանի – ժ. պ. soriāni «սարերեն»,
բն. մոխալբֆաթ – ժ. պ. moxālefat «անհամաձայնություն»,
բն. մոդաթ – ժ. պ. moddat «ժամանակ, պահ»,
հմմտ. նաև՝

բն. լօղազ – ժ. պ. loqaz «խոսք»:

4. Կարճ օ, է, ա՝

4.1 Այս կարճ ձայնավոր հնչյունները ձայնորդ -x- ից առաջ գրվում են -ը-, որը բացատրվում է նաև պարսկերենի հնչյունական կանոնով, ըստ որի, վ. ն. պ. չի հանդուրժել բառասկզբի դիրքում ձայնավորագուրկ բաղաձայնական խումբ և տեղի է ունեցել կամ նախահավելվածային կամ միջբաղաձայնային ձայնավորի (anaptyxis) ավելացում, ինչը ժառանգել է նաև ժամանակակից պարսկերենը: Մակայն պարսկերենի բանավոր տարբերակներում այդ ձայնավորները չեն ունեցել հստակ արտասանություն և հնչել են օ, հմմտ.՝

բն. սրուդե – ժ. պ. sorude «երգ, երաժշտություն»,
բն. շրա – ժ. պ. čerā «ինչու»,
բն. բրայ – ժ. պ. barāy «համար»,
բն. ֆրու – ժ. պ. forū «ներքև, ցածր»,
բն. գրու – ժ. պ. gerd «կլոր»,
բն. աֆրիա – āfarid «ստեղծեց»,
բն. ֆրըշայ / ֆրիշա – ժ. պ. ferešte «հրեշտակ»,

բն. գրրբֆտ – ժ. պ. gereft «վերցրեց»,

բն. ֆրրբստատ – ժ. պ. ferestād «ուղարկեց»,

բն. բրֆրրբբանիտ – ժ. պ. befaribānid «կախարդեմ, խաբեմ» և այլն:

4.2 Արաբական ծագման բառերում -լ- ձայնորդից առաջ նույնպես գրվել է ը-

բն. հասըլ – ժ. պ. hāsel «արդյունմ»,

բն. ջալըլ – ժ. պ. jalil «շֆեղ»,

բն. վըլայիեաթ – ժ. պ. velāyyat «նահանգ, տարածք, իշխանություն» և այլն¹⁶:

5. Երկար շրթնայնացած ա՝

5.1 Այս հնչյունը տառադարձվել է բառասկզբում երբեմն՝ օ-, սակայն հիմնականում -ա, բառամիջում և բառասկզբում երբեմն՝ -ու, սակայն հիմնականում՝ -ա: -ā- < -u- անցումը ձայնորդներից առաջ բնորոշ է պարսկերեն խոսակցական լեզվին՝ սկսած ժէ դարից:

բն. օվարդայ – ժ. պ. āvarde «բերած»,

բն. ապ – ժ. պ. āb «ջուր»,

բն. օմատ – ժ. պ. āmad «եկավ»,

բն. օնան – ժ. պ. ānān «նրանմ»,

բն. աթաշ – ժ. պ. ātaš «կրակ»,

բն. մունէնտ – ժ. պ. mānand «նման»,

բն. ֆըդում – ժ. պ. kodām «որ»,

բն. ուն – ժ. պ. ān «այն» և այլն:

6. Երկար ու և ի՝

6.1 Այս հնչյունների գրույթունը հիմնականում նույնական է ժամանակակից պարսկերենի արտասանության հետ՝

բն. իման – ժ. պ. imān «հավատ»,

բն. նիֆրին – ժ. պ. nefrin «անեծք»,

բն. զըմին – ժ. պ. zamin «գետին, հող»,

բն. թիզթար – ժ. պ. tiztar «ավելի սուր»,

բն. բուզ – ժ. պ. ruz «օր», սակայն՝ բն. roze - ժ. պ. ruze «պահմ»,

բն. փիշ – ժ. պ. piš «մոտ»,

բն. մի- – ժ. պ. mi- բայական նախամասնիկը,

բն. գունայգուն – ժ. պ. gunāgun «բազմապիսի» և այլն:

7. Ը-ի գրությունը ստ հնչյունախմբից առաջ՝

Միջին հայերենում ընդունված էր գաղտնավանկի, ինչպես նաև բառասկզբի ստ կապակցությունից առաջ լավող ը-ն գրել: Այս ավանդույթը գլխավորապես շարունակվում է նաև ժԸ դարի հայերենի ուղղագրական կանոններ:

¹⁶ Մետրոպատառ սույն բնագրերում հանդիպում է կարճ ձայնավորների բացթողում փղմբր – փեյ-դամբար, խոթայ – խոդայ: Նման բառերի վրա գրիչները դեղ են համատոտագրման նշաններ:

րում¹⁷, և մենք այն արձանագրել ենք քննարկվող հայատառ պարսկերեն բնագրերի հետևյալ բառամիավորներում, ընդ որում, նաև բառամիջի դիրքում՝

- բն. դանըստայ – ժ. պ. dāneste «խմացած»,
- բն. ըստատ – ժ. պ. setād «կանգնեց»,
- բն. ըստատանտ – ժ. պ. setādand «կանգնեցին»,
- բն. սանկըստան – ժ. պ. sangestān «բարբարոս»,
- բն. նըշըստան – ժ. պ. nešastan «նստել»,
- բն. մի թվանըստ – ժ. պ. mitavanest «կարող է»:

Բ. 3 ԿԻՍԱԶԱՅՆԸ

Հայատառ պարսկերեն քննարկվող բնագրերում յ տառի գրուկթյունը բավերջում կատարվում է ըստ հայերենի ավանդական ուղղագրության՝ հավելվելով բառավերջի ա, ո ձայնավորներին, իսկ մնացյալ դեպքերում՝ համաձայն պարսկերենի հնչյունական կանոնների:

1. Բառերը, որոնք վերջավորվում են ա-ով և ո-ով ամփոփվում են վանկափակ յ-ով՝

- բն. ֆըրոյ – ժ. պ. foru «ներքև»,
- բն. Եսայ – ժ. պ. 'Isa «Հիսուս»,
- բն. դունիայ – ժ. պ. donyā «աշխարհ»,
- բն. աշխարայ – ժ. պ. āškārā «բացահայտ»,
- բն. փարդայ – ժ. պ. parde «վարագույր»,
- բն. համայ – ժ. պ. hame «բոլորը»¹⁸ և այլն:

1.1. Պարսկերենի -է (-eh) անցյալ դերբայի վերջավորուկթյունը արտասանվել է -ա և բնագրերում տառադարձվել է -ա- ով ու ամփոփվել -յ ով՝

- բն. նըգայ դաշտայ – ժ. պ. negāh dāšte «պահպանած»,
- բն. շնիտայ – ժ. պ. šenide «լսված»,
- բն. լարզանդայ – ժ. պ. larzande «դողացող» և այլն:

2. -Յ- տառով է ամփոփվում նաև պարսկերենի na- ժխտական նախամասնիկը՝ բաղաձայնով ու ձայնավորով սկսվող բայահիմքերից առաջ: Ընդ որում, ժամանակակից պարսկերենում -յ- կիսաձայնը հավելվում է միայն ձայնավորով սկսվող բայահիմքերից առաջ՝ լրացնելով հորանջը: Բնագրերում ժխտական նախամասնիկը գրվում է առանձին և ենթարկվում է -ա ձայնավորով վերջացող բառերը -յ կիսաձայնով ամփոփելու սկզբունքին՝

- բն. նայ գուզաշթ – ժ. պ. nagozāšt «թույլ չավեց»,

¹⁷ Ս. Վ. Գյուլբուդաղյան, «Հայերենի XVIII դարի ուղղագրության մասին», էջ 87:

¹⁸ Այս բառի -e վերջավորությունը հատուկ է միայն ժամանակակից պարսկերենին: Վաղ նոր և խոսակցական պարսկերեններին, տաշիկերենին, հորասանի բարբառներին և այլն հատուկ է -a վերջավորությունը, հմմտ. օր. տաշ. hama, որը ծագումնաբանորեն հանգում է *a-ին:

բն. նայ թվանատ – ժ. պ. natavanad «շի կարող»,

բն. նայ շովանտ – ժ. պ. našavand «չեն լինի» և այլն:

3. Պարսկերենում կոկորդային -հ ով ավարտվող բառերը քննարկվող բնագրերում ամփոփվում են -յ կիսաձայնով. տեղի է ունենում -հ -ի անկում, որը հատուկ է խոսակցական պարսկերենին¹⁹ և -յ -ի հավելում՝

բն. գայ – ժ. պ. gāh «ժամանակ»,

բն. դայ – ժ. պ. dah «տասը»,

բն. գրոյ – ժ. պ. goruh «խումբ»,

բն. նրգայ – ժ. պ. negāh «հայացք», և այլն:

4. Յ- կիսաձայնը հավելվում է պարսկերենի հոգնակիակերտ -ān վերջավորությունից առաջ և -ā²⁰, -ī, -ū ձայնավորներից հետո: Պարսկերենում՝ -e, բնագրերում՝ -ա, ձայնավորից հետո ունենք -gān վերջավորությունը, որը բացատրվում է տարածամանակյա կտրվածքով, այսինքն՝ նման բառերում վերականգնվում է պատմական արմատային բառավերջի -g- հնչյունը, որը վերադառնում է միջին պարսկերենի գոյականակերտ -ag վերջավորությանը > ժ. պ. -e: Բնագրերում այս երևույթը հետևողականորեն պահպանված է, ընդ որում, հիմնականում գրվել է նաև վանկափակ գործառույթ ունեցող -յ- կիսաձայնը՝

բն. ֆրըրջայգան – ժ. պ. fereštēgān «հրեշտակներ»,

բն. սրթարայգան – ժ. պ. setāregān «աստղեր»,

բն. բէշայգան – ժ. պ. baččegān «երեխաներ»,

բն. բիգանըգան – ժ. պ. bigānegān «օտարներ»,

բն. եգանեգան – ժ. պ. yegānegān «միակներ» այլն:

¹⁹ Ընդ որում, բնագրերում խոսակցական պարսկերենին (այսուհետ՝ իս. պ.) հատուկ բառավերջի -r-, -d-, -st-ի անկում գրանցված չէ, և արձանագրված է միայն -s-ի անկումը, այսպես՝ բն. դիկար – ժ. պ. digar – իս. պ. dige, բն. ալար – ժ. պ. agar – իս. պ. age, բն. սստ – ժ. պ. ast – իս. պ. -e, և այլն: Այս նյութը թույլ է տալիս նկատելու, որ ժամանակագրերեն բառավերջյան այս անկումները ավելի ուշ են տեղի ունեցել, քան բառավերջի -s-ի անկումը, որը Պիսովիչը նկատել է հակառակ ժամանակագրական դասավորությամբ, տե՛ս A. Pisowicz, *Origins of the New and Middle Persian Phonological Systems*, p. 63: Բնագրերում հանդիպում է բառավերջի -ստ հնչյունախմբի -տ-ի անկում մի քանի դեպքերում, օր.՝ բն. դուս դաշտ – ժ. պ. dust dāšt «սիրեց», երբեմն նաև՝ բն. սս – ժ. պ. ast «է» օժանդակ բայի համար (արձանագրել ենք մեկ դեպք):

²⁰ -ā- ից հետո ոչ ստուգաբանելի (non étymologique) -y- -ի հավելումը արձանագրվել է նաև վ. ն. պ. տեֆսերում, մասնավորապես այն բառերում, որոնք ինֆնուրոյն միավորներ են հավելված վերջածանցներով, օրինակ՝ *judāyegāna* «առանձին կերպով» < *judā(y)* «առանձին» < մ. պ. *yutāk* + *-gāna* վերջածանցը կամ *xudāyvand* «Տեր» բառը, որը ոչ ճիշտ ձևով ընկալվել է *xudā(y)-* + *-vand* կառուցվածքով և հավելվել է -y կիսաձայնը, մինչդեռ հայտնի է այս բառի ստուգաբանությունը՝ վ. ն. պ. *xudāvand* < *x^vatāvan-* կամ *x^vatāvani-*, տե՛ս Lazard, G., *La langue des plus anciens monuments de la prose persane*, Paris, Librairie C. Klincksieck, 1963, p. 173: Նշենք, որ վերջինս հայաստան ֆինաբկվող բնագրում նույնպես տառադարձվել է -յ կիսաձայնով՝ *խուդայվանտ* «տեր» նշանակությամբ (մինչդեռ «Աստված» բառի համար թարգմանիչը օգտագործել է *xudā* ձևը):

4.1. Նույն երևույթը տեսնում ենք նաև ենթակայական դերբայի բն. -ան- դայ (մ. պ. -*andag* > ն. պ. -*andeh*) վերջավորությամբ կազմված գոյականա- կան կիրառություն ունեցող միավորների -*gān* հոգնակիակերտ վերջավորու- թյունը ստացած բառերում՝

- բն. դառանդայգան – ժ. պ. *dārandegān* «ունեցողները»,
- բն. դահանդայգան – ժ. պ. *dahandegān* «ավողները»,
- բն. ֆունանդայգան – ժ. պ. *konandegān* «կատարողները» և այլն:

Գ. OW ԵՐԿԲԱՐԲԱՌԸ

Այս երկբարբառը վաղ նոր պարսկերեն տեքստերում արձանագրվել է նա- խորդող կարճ *a-* ի նշանով (ֆաթհա) և, ըստ ամենայնի, կարդացվել է՝ *naw* «նոր», *jaw* «գարի», *rawzi* «օր»²¹: Սակայն Պիտովիչն այն համարում է *ow* հնչյունախումբ՝ կարճ *o* + *w* կազմով, որտեղ *w*-ն *v* հնչյունի ենթահնչյութն է²²: Քննարկվող հայատառ բնագրերում միջբաղաձայնային *ow* երկբարբառը տառադարձվել է օվ՝

- բն. սովգանա – ժ. պ. *sowgand* «երդում»,
- բն. դովդայ – ժ. պ. *γowγā* «աղմուկ, խառնաշփոթ»,
- բն. մովն – ժ. պ. *mowj* «ալիք»,
- բն. նով – ժ. պ. *now* «նոր» և այլն:

Դ. ԿՈԿՈՐԴԱՅԻՆ EYN ՀՆՉՅՈՒՆԸ

Այս հնչյունը, որը կոկորդային դադար է և արձանագրվում է արաբական ծագման բառերում, բնագրերում ունի սույն գրությունները.

1. Հետևյալ բառերի բառասկզբի դիրքում տառադարձվել է այ՝

- բն. այնասուր – ժ. պ. ‘*anāsor* «տարր»,
- բն. այհրա – ժ. պ. ‘*ahd* «պայմանավորվածություն»:

1.1. Հիմնականում տառային արտահայտություն չի ստացել բոլոր դիրքերում՝

- բն. ալամ – ժ. պ. ‘*ālam* «աշխարհ»,
- բն. աալ – ժ. պ. ‘*adl* «արադարություն»
- բն. շրոյ – ժ. պ. *šoru* ‘«սկիզբ»,
- բն. ասայ – ժ. պ. ‘*asā* «ձեռնափայտ» և այլն:
- բն. մարուֆ – ժ. պ. *ma‘ruf* «հայտնի»,
- բն. մազամ – ժ; պ. *mo‘azzam* «վսեմ, հարգարժան»,
- բն. մարուֆ – ժ. պ. *ma‘ruf* «հայտնի»,
- բն. բադ – ժ. պ. *ba‘d* «հետո» և այլն:

²¹ Lazard, *La langue des plus anciens monuments de la prose persane*, p. 192.

²² Pisowicz, “Origins of the New and Middle Persian Phonological Systems”, p. 24-27.

Ե. ԻԶԱՖԵՏԻ ՏԱՌԱԴԱՐՁՈՒՄԸ

Պարսկերենի շարահյուսական՝ որոշիչ-որոշյալ, հատկացուցիչ-հատկացյալ, կապը իրականացվում է կապական հնչյունի միջոցով՝ իզաֆետով, որը բնագրերում չունի հետևողական արտացոլում:

1. Բաղաձայնից հետո լսվող իզաֆետային -e հնչյունը չի տառադարձվել, ինչպես և հատուկ է պարսկերեն գրավոր խոսքին, այսպես՝

բն. ավագ ու – ժ. պ. āvāz(-e) u «նրա խոսքը, նրա ձայնը»,

բն. թիր ինչան – ժ. պ. tir(-e) inšān «նրանց սուրը» և այլն:

2. Զայնավորից հետո տառադարձվել է -յի /yi/՝

բն. քնարհայի զըմին – ժ. պ. kenārḥā-ye zamin «եռկրագնդի կողմերը»,

բն. խանայի իբրայիմ – ժ. պ. xāne-ye Ebrāhim «Իբրահիմի տունը» և այլն:

Զ. ԲԱՂԱԶԱՅՆՆԵՐԻ ՏԱՌԱԴԱՐՁՈՒՄԸ

Քննարկվող հայատառ պարսկերեն բնագրերում բաղաձայնների գրության ժամանակ կիրառվել են դեռևս միջին հայերենի շրջանից ավանդված ուղղագրական կանոնները: Այդ շրջանում գոյություն են ունեցել սկզբնագիր աղբյուրներ (օրինակ՝ Կոստանդին Երզնկացու տաղերը և այլն), որտեղ գործածվել է քառաստիճան բաղաձայնական համակարգ²³: Սույն բնագրերում պարսկերենի ձայնեղները բառասկզբի դիրքում արտահայտվել են հայերենի ձայնեղ տառերով, այսինքն՝ b-, g-, d-, j- հնչյունները՝ համապատասխանաբար բ-, գ-, դ-, ջ- տառերով, իսկ բառամիջի և բառավերջի դիրքերում՝ պարզ խուլերի միջոցով, այսինքն՝ համապատասխանաբար՝ -պ-, -կ-, -տ-, -ճ- տառերով²⁴: Կարծում ենք, այստեղ գործ ունենք ձայնեղների դիրքային բնույթի տարբերության՝ շնչեղություն և ոչ շնչեղության հակադրության հետ: Խուլ տառերով արտահայտված բառամիջի և բառավերջի ձայնեղները պահպանում էին իրենց ձայնեղության արժեքը և տարբերվում էին ձայնեղ տառերով արտահայտված բառասկզբի ձայնեղներից վերջիններիս շնչեղությամբ: Այսինքն՝ բառասկզբում ձայնեղները շնչեղ են, արտահայտված ձայնեղ տառերով, իսկ բառամիջում և բառավերջում՝ պարզ ձայնեղներ են՝ արտահայտված պարզ խուլերով²⁵: Հայատառ

²³ ԱՄԳՀՊ, էջ 123: Գ. Ջահուկյանը հայերենի նոր շրջանի (ԺԸ դար) երևանի խոսվածքում ևս նշում է բաղաձայնական համակարգի քառաստիճանությունը, որի դեպքում շնչեղ-ձայնեղները ոչ թե ինֆնուրույն հնչույթներ են, այլ հնչույթների դիրքային տարբերակներ, տե՛ս Գ. Ջահուկյան, Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը, Երևան, 1969, էջ 53:

²⁴ ԺԸ դարի հեղինակներից ևս օտար բառերի գրության ժամանակ օգտագործել են այս սկզբունքը՝ օտար ձայնեղների դիմաց հայերեն խուլերը, տե՛ս Ս. Վ. Գյուլբուրադյան, «Հայերենի XVIII դարի ուղղագրության մասին», էջ 91:

²⁵ Նույն գրության օրինակներ արձանագրված են նաև ԺԶ-ԺԷ հայ փիլիսոփա-աստվածաբան Հովհաննես Մրհուզի/Ջուղայեցու հայատառ պարսկերեն բառգրքի մի շարք նկերում,

պարսկերեն տեքստերի հնչյունական այս տառադարձությունը թույլ է տալիս ենթադրել, որ գրիչը օգտագործել է ուղղագրական կանոնները, որոնք հատուկ էին նոր Զուղայի բարբառին, սակայն Շիրվանի պարսկերենի ձայնեղների շարքը պահպանում էր իր հնչյունական արժեքը²⁶:

1. Բառամիջում և բառավերջում -գ- → -կ-՝

բն. դիկար – ժ. պ. digar «ուրիշ»,

բն. ակար – ժ. պ. agar «եթե»,

բն. անկապին – ժ. պ. angabin «մեղր»,

բն. բրզօրկթար – ժ.պ. bozorgtar «ավելի մեծ»,

բն. թանկ – ժ. պ. tang «նեղ»,

բն. սանկ – ժ. պ. sang «հար»,

բն. մակար – ժ. պ. magari «մի թե» և այլն:

1.1. Բառասկզբում գ → գ՝

բն. գրոյ – ժ. պ. goruh «խումբ»,

բն. -գան – հոգնակիակերտ ցուցիչ,

բն. գարտանատ – ժ. պ. gardānad «դարձնի» և այլն:

2. Բառամիջում և բառավերջում -բ- → -պ՝

բն. քրթապ – ժ. պ. ketāb «գիրք»,

բն. սապապ / սաբաբ – ժ. պ. sabab «պատճառ»,

բն. պուտ – ժ. պ. bud «էր», բն. պուտանտ – ժ. պ. budand «էին»²⁷,

բն. նայ պաշատ – ժ. պ. nabāšad «չլինի»,

բն. իպլիս / իբլիս – ժ. պ. iblis «սատանա»,

բն. խապ – ժ. պ. xāb «հուն»,

բն. պաշատ – ժ. պ. bāšad «լինի»,

բն. զրբան/զրպան – ժ. պ. zabān «լեզու»,

բն. աֆտապ – ժ. պ. aftāb «արեգակ» և այլն:

2.1 Բառասկզբի դիրքում բ- → բ՝

բն. բայ – ժ. պ. bā «-ով»,

բն. մի բինամ – ժ. պ. «տեսնում եմ»,

տե՛ս՝ Հ. Միրզոյան, «Հայ բառարանագրության չգնահատված հուշարձան», Բե՛շ, 1 (103), 2001, Երևան, էջ 129-142:

²⁶ Հմմտ. բառասկզբի ձայնեղների շնչեղացման երևույթը նոր Զուղայի բարբառում և բ՛, գ՛, դ՛, ձ՛, ջ՛ շարքը. «Հին Հայերենի պայթուցիկ բաղաձայնները կրում են զանազան փոփոխություններ. թրթռում բաղաձայնները բառասկզբում, բառամիջում և բաղաձայնից հետո դառնում են շնչեղ թրթռում, անգականից յետոյ և օտար բարբառների մեջ՝ մնում են թրթռում, իսկ բաղաձայնից յետոյ դառնում են խոլ կամ շնչեղ թրթռում, իսկ բառավերջում դառնում են շնչեղ, խոլ», տե՛ս Հր. Աճառեան, Քննութիւն նոր-Զուղայի բարբառի, Երևան, 1940, էջ 167, նաև՝ Վ. Տ. Սուֆրասեան, Բառարան նոր Զուղայի բարբառի, ձեռագիր տարբերակ:

²⁷ Բացառություն կարելի է համարել budan «լինել» օժանդակ բայի անցյալ կատարյալի ձևերը, որտեղ բառասկզբի դիրքում ունենք բ- → պ- գրությունը:

բն. բիայիեատ / պիայիեատ – ժ. պ. «գա»,

բն. բըսիար – ժ. պ. besyār «շատ»,

բն. բանդայ – ժ. պ. bande «ծառա»,

բն. բունիադ – ժ. պ. bonyād «հիմք»,

բն. բարաբաթ – ժ. պ. barakat «շնորհ» և այլն:

3. Բառամիջում և բառավերջում - դ- → -տ-՝

բն. շօտան – ժ. պ. šodan «լինել»,

բն. մունկնտ – ժ. պ. mānand «նման»,

բն. ընտախտայ – ժ. պ. andāxte «զգած»,

բն. օմատան – ժ. պ. āmadan «գալ»,

բն. դահատ – ժ. պ. dahad «տա»,

բն. շօվատ – ժ. պ. šavad «լինի»,

բն. աֆրիտ – ժ. պ. āfarid «արարեց»,

բն. ֆարտ – ժ. պ. kard «արեց»,

բն. բընգիրանտ – ժ. պ. benegarand «նայեն» և այլն:

3.1. Բառասկզբում և բառամիջում -դ- → -դ-՝

բն. անդիշայ – ժ. պ. andiše «միտք»,

բն. դար – ժ. պ. dar «մեջ»,

բն. ադամ – ժ. պ. ādam «մարդ»,

բն. դիտ – ժ. պ. did «տեսավ»,

բն. դել – ժ. պ. del «սիրտ» և այլն:

4. Բառամիջում և բառավերջում -ջ- → -ն-՝

բն. Իննիլ – ժ. պ. enjil «Ավետարան»,

բն. խարըն – ժ. պ. xārej «դուրս»,

բն. մօվն – ժ. պ. mouj «այլիք»,

բն. թունար – ժ. պ. tojār «վանառականներ»,

բն. թանօպ – ժ. պ. tajob «զարմանք» և այլն:

4.1 նակ՝ -ջ- → -ջ-

բն. բօրջի – ժ. պ. borji «մի աշտարակ»,

բն. ունջայ – ժ. պ. ānjā «այնտեղ»,

բն. մօվջուպ – ժ. պ. movajeb «հարկավոր» և այլն:

4.2 Բառասկզբի դիրքում ջ- > ջ-

բն. ջայ – ժ. պ. jāy «տեղ»,

բն. ջայհաթ – ժ. պ. jehat «պատճառ»,

բն. ջրհան – ժ. պ. jehān «աշխարհ» և այլն:

5. Արձանագրվել են հետևյալ բառերը, որտեղ շնչեղ խուլ շ –ն ձայնեղացել

է և գրվել -ջ՝

բն. ջար/ջհար/ջայհար – ժ. պ. čahār «չորս»,

բն. ջարսատ – ժ. պ. čahārsad «չորս հարյուր»:

Ինչպես տեսնում ենք, այս տեղաշարժը կատարվում է միայն *čahār* «չորս» բառամիավորի դեպքում, որի ձայնեղ ջ-ով տարբերակը դրա արաբականացված ձևն է, որը գործածական է նաև ժամանակակից խոսակցական հայերենում:

6. Խոսակցական պարսկերենում նկատվող խուլ շփական + շնչեղ խուլ պայթական՝ մասնավորապես *ft*, *xt*, *st*, *št* հնչյունախմբերի փոխարեն *ֆտ*, *խտ*, *շտ*, *ստ* գրույթյունները պայմանավորված են հայերենի կանոնով, ըստ որի՝ միակ դիրքը, որտեղ խուլերը պահպանում էին իրենց որակը, խուլ սուլականների ու շչականների հարևանությունը է, և միջին շրջանի բազմաթիվ բնագրերում այս կանոնով են բացատրվում օտար շնչեղ խուլ պայթականը պարզ խուլ տառով արտահայտելու գրույթյունները²⁸: Հայատառ բնագրերում *շտ*, *ստ*, *ֆտ*, *խտ* հնչյունախմբերի գրույթյունները ևս բացատրվում են այս կանոնով՝

- բն. *qoft* – ժ. պ. *gof* «ասաց»,
- բն. *našt* – ժ. պ. *rāst* «հիշտ»,
- բն. *ast* – ժ. պ. *ast* «է»,
- բն. *šekast* «կտրեց»,
- բն. *košt* «սպանեց»,
- բն. *dāštam* «ունեի»,
- բն. *āmuxtam* «սովորեցի»,
- բն. *šenāxt* «համաչեց» և այլն:

7. Պարսկերենի շնչեղ պայթական *t* հնչյունը տառադարձվում է հայերենի համապատասխան *թ* տառով՝

- բն. *tamām* «ամբողջ, վերջ»,
- բն. *qeymat* «արժեք»,
- բն. *Beyt-al-Moqaddas* «Երուսաղեմ»,
- բն. *tavānad* «կարողանա»,
- բն. *bātel* «անվավեր»,
- բն. *giti* «աշխարհ» և այլն:

7.1 Ածականի համեմատական աստիճանի *-tar* վերջածանցից առաջ բավերջի ձայնեղ պայթականները խլացել են, իսկ ձայնեղ շփականները՝ պահպանվել: Ընդ որում, հիմնականում այս ձևույթը գրվում է առանձին և ընկալվելով առանձին բառ՝ բառասկզբի *թ*- շնչեղ հնչյունի պահպանմամբ՝

- բն. *zudtar* «ավելի շուտ»,
- բն. *bozorgtar* «ավելի մեծ»,
- բն. *bolandtar* «ավելի բարձր» և այլն:

8. Պարսկերենի շնչեղ *փ*, *ֆ*, *չ* հնչյունները տառադարձվել են հայերենի համապատասխան շնչեղ խուլերով՝

- բն. *kenār* «կողմ, ափ»,
- բն. *čāp* «ձախ»,

²⁸ Տե՛ս ԱՄԳՀՊ, էջ 115:

- բն. եֆ – ժ. պ. yek «մեկ»,
 բն. աշֆարայ – ժ. պ. āškārā «հայտնի»,
 բն. փադիշայան – ժ. պ. pādešāhān «արքաներ»,
 բն. ֆի/ե – ժ. պ. ke «որ»,
 բն. թարիֆ – ժ. պ. tārik «խավար»,
 բն. շաշմ/շասմ – ժ. պ. čašm «աչք» և այլն:

9. -ղ հետնալեզվային հնչյունը պարսկերենում ունի երկու տարբեր ենթահնչյութներ՝ հետնալեզվային, խուլ պայթական ք և հետնալեզվային ձայնեղ շփական չ: Իրանց արտասանությունը էական նշանակություն չունի բառի մաստնների համար, սակայն ոճային տարբեր մակարդակներում շոշափելի են: Քննարկվող հայատառ պարսկերեն բնագրերում այս ենթահնչյութների տառադարձումը որևէ տարբերակիչ հատկանիշ ցույց չի տալիս և տառադարձվում են հայերեն ղ տառով, որը հետնալեզվային ձայնեղ շփական հնչյուն է, այսպես՝

- բն. խալղ – ժ. պ. xalq «ժողովուրդ»,
 բն. դում – ժ. պ. dom «ցեղ»,
 բն. բադի – ժ. պ. bāqi «այլ, ուրիշ»,
 բն. աղազ – ժ. պ. āyāz «սկիզբ»,
 բն. փեղամբար – ժ. պ. peyγambar «մարգարե»,
 բն. ղրսաս – ժ. պ. qesās «պատիժ» և այլն²⁹:

10. Խոսակցական պարսկերենում հետնալեզվային ձայնեղ ղ և շփական խ հնչյունների հակադրությունը շնչեղ խուլի ու սուլականի հարևանությունը կարող է չեզոքանալ, ինչը բնագրերում արձանագրվում է հետևյալ բառերում՝

- բն. վախթ/տ – ժ. պ. vaqt «ժամանակ»,
 բն. նօխ/ղթայ – ժ. պ. noqte «կետ»,
 բն. մախսուտ – ժ. պ. maqsud «նպատակ»,
 բն. հախ – ժ. պ. haqq «իրավունք»³⁰,
 բն. թախեխ – ժ. պ. tahqiq «ուսումնասիրում, ստուգում»,
 բն. մաշխուլ – ժ. պ. mašyul «զբաղված» և այլն:

11. Խոսակցական պարսկերենում հիմնականում վերացել է բաղաձայնից առաջ ջ – ժ հակադրությունը, որը բնագրերում պահպանված ենք գտնում հետևյալ օրինակում՝

- բն. սուժդե – ժ. պ. sajde «երկրպագություն»³¹:

12. -հ- → -խ- հնչյունափոխություն ձեռագրում արձանագրվել է միայն արաբական ծագման մի քանի բառերում՝ պայմանավորված, ըստ ամենայնի,

²⁹ Ուշադրության է արժանի պրակ. *taraqi* «ան» բառի տառադարձումը՝ ՄՄ8492, էջ 159ա. «թարախիկ» և ՄՄ3044, էջ 100բ. «թարախիկ» (Ղուկ. 13:19):

³⁰ Բառը գործածված է նաև «Աստված» նշանակությամբ Հախ սըփան ու թալայ կապակցության մեջ:

³¹ Խոսակցական լեզվում նույնպես այս հատկությունը ֆիչ է համդիպում, և ջ – ժ համարվում են նույն հնչյունի ենթահնչյութները, տե՛ս A. Pisowicz 1985, 31:

հայերենի բարբառներում հ - խ համապատասխանության գործընթացներով³²:
Կարծում ենք, Շամախում ձեռագիր Ավետարանները գրող Հին Ջուղայից սերող գրչի³³ մայրենի բարբառախոսության արդյունքն է, որի հարազատ բարբառի ձայնավորության հիմնական գիծը հայերենի հ հնչյունը խ-ով արտահայտելն էր և համարվում է խ-ախոս Թավրիզի բարբառի ենթաբարբառը³⁴

բն. զախմաթ – ժ. պ. zahmat «նեղություն, անհանգստություն»,

բն. ուխմաթ – ժ. պ. rahmat «սիրալիրություն»,

բն. ուխմ fում – ժ. պ. rahm kon «ողորմիր»,

բն. խոշխալ – ժ. պ. xoshāl «ուրախություն» (ընդ որում, արաբական ծագման է միայն երկրորդ բաղադրիչը, հմմտ. պրսկ. xoš «լավ», արաբ. ḥāl – «վիճակ»),

բն. ուխլաթ – ժ. պ. rehlat « վախճան» և այլն:

13. Հայատառ բնագրերում հնչհավելում արձանագրվել է հետևյալ դեպքերում՝

13.1. մր- խմբում բ-ի հավելում՝

բն. ամբր – ժ. պ. ‘amr «հրաման»³⁵:

13.2 -Յ- հնչհավելում է տեղի ունենում հ-ից առաջ դիրքում՝

բն. միխայհանտ – ժ.պ. mixāhand «ցանկանում են»,

բն. ֆրայհամ – ժ. պ. farāham «հավաքում»,

բն. ջայհար – ժ.պ. čahār «չորս»,

բն. ջայհաթ – ժ. պ. jehat «պատճառ» և այլն:

14. Բառասկզբի šk- հնչյունախումբը գրվել է uf-, ենթադրելի է, որ այդպես էլ արտասանվել է՝

բն. սֆանջայ – ժ. պ. šekanje «տանջանք»:

14.1. š → s տեղաշարժ է հանդիպում է ՄՄ 3044 բնագրի շամ «աչք» (ն. պ. čašm) բառի գրության մեջ, հմմտ. ժ. պ. čašm:

15. Պարսկերենի ձայնորդները՝ m, l, n գրվել են համապատասխանաբար մ, ր, ն տառերով:

16. Պարսկերենի r հնչյունի գրությունը բավականին խառն է, երկգրություններով և ոչ օրինաչափ. արտահայտվում է k՝ ր, k՝ n տառերով՝

բն. ոուզ – ժ. պ. ruz «օր»,

³² Վ. Կատվայան, «Հ-ի հնչյունների համապատասխանությունը հայերենի բարբառներում», ՊԲՀ № 3 (163) 2007, էջ 163-172:

³³ Տե՛ս Հ.Կիրակոսյան, «Մաշտոցյան Մատենադարանի հայատառ պարսկերեն երկու ձեռագիր Ավետարանների հիշատակարանների մասին (ՄՄ 3044, ՄՄ 8492)», էջ 53:

³⁴ Հ. Աճառեան, «Հայ բարբառագիտություն. – Ուրուագիծ եւ դասատրություն հայ բարբառների (Բարբառագիտական ֆառախով)», էմինեան ազգագրական ժողովածու, հ. Ը, Մուկուա – Նոր-Նախիջեան, 1911, էջ 88:

³⁵ Հմմտ. Շամախիի բարբառում՝ հրմբարդ – հպարտ, ամբօլ – ամուլ, Ռ. Բադրամյան, Շամախիի բարբառը, էջ 65:

բն. բայ – ժ. պ. *rā* ետադրությունը
 բն. բաֆտան – ժ. պ. *raftan* «գնալ»,
 բն. բար – ժ. պ. *bar* «վրա»,
 բն. արաֆ – ժ. պ. *atrāf* «կողմերը»,
 բն. հարաֆաթ – ժ. պ. *ḥarakat* «շարժում»,
 բն. խար/ն – ժ. պ. *xar* «ավանակ»,
 բն. փառ ֆայի – ժ. պ. *par-e kāhī* «շյուղ»,
 բն. բառայգան – ժ. պ. *barrehā* «գառնեք» և այլն:

17. Մեսրոպատառ բնագրերում հանդիպում են գրության ձևեր, որոնք արտացոլում են հայերենում դրանց արդեն փոխառյալ հնչյունակազմը՝

17.1 բն. հունարմանդ թար – ժ. պ. *honarmandtar* «ավելի տաղանդավոր». բառը հայերեն բարբառներ է մտել թուրքերենի միջոցով՝ հունար:

17.2 բն. դել – ժ. պ. *dīn* «դեւ, շար ոգի», հյ. < միջին պարսկերեն *dēv* և «շար ոգի» նշանակությամբ հանդիպում է Սուրբ Գրային ավանդության մեջ³⁶:

16.3 բն. հեչ – ժ. պ. *hič* «ոչինչ», հմմտ.՝ վ. ն. պ. *hēč* > հյ. բարբառներ թուրքերենի միջնորդությամբ՝ հեչ:

16.4 բն. մէլիս – «ժողով, հավաքույթ», հմմտ.՝ վ. ն. պ. *maǰles* > հյ. բարբառներ թուրքերենի միջնորդությամբ՝ մէլիս: Նաև՝ բն. մէլիսիան – «հյուրեր»:

16.5 բն. մէլեֆ – «իշխան, կալվածատեր», հմմտ.՝ վ. ն. պ. *mālek* > հյ. բարբառներ թուրքերենի միջնորդությամբ՝ մէլեֆ և այլն:

Այսպիսով, ՄՄ 8492 և ՄՄ 3044 մեսրոպատառ պարսկերեն բնագրերի գրիչները հայերենի տառանշաններն ու դրանց հնչյունական արժեքները հաջողված կերպով օգտագործել են ժԸ դարում Արևելյան Այսրկովկասում խոսվող պարսկերենի հնչյունական արժեքներն արտահայտելու համար: Բնագրերի գրության սկզբունքների ուսումնասիրությունը երևան է հանում այդ ժամանակաշրջանի հայերենի ուղղագրական կանոններին և ժամանակի Շիրվանի խոսակցական պարսկերենին բնորոշ հատկանիշները:

³⁶ Հ. Աճառեան, Հայերենի արմատական բառարան, հ. 1, Երևան 1971, էջ 658:

HASMIK KIRAKOSYAN
THE TRANSCRIPTION RULES OF THE ARMENO-PERSIAN
HANDWRITTEN GOSPELS OF MATENADARAN (M 8492, M 3044)

Key words: Persian, Armenian, Shirvan, Armenian script, Gospel, writing, traditional, phonetic, orthography.

Codices M 8492 and M 3044 contain the Gospels in Persian translated from Armenian; they were written in the 18th century in Shamakhi and Gandzak, probably for the use of Persian speaking Armenians. The Persian texts are in Armenian script, based on the principles of traditional Armenian orthography and Persian phonetic system. The combination of these two principles provides us with documentary material for studying the 18th century Armenian orthography and the phonology of Persian spoken in historical Shirvan. The transcription of Persian phonemes and their phonetic values in Armenian letters are presented in the following tables:

The transcription of vowels and their phonetic values:

New Persian	Armenian	Mss Persian
a	ը, ա	ə, a
ā	ա, օ, ու	a, o, u
e	է/ե, ի, ը, ա	e, i, ə, a
u	ու	u
i	ի	i
o	օ, ու, ը	o, u, ə

The transcription of consonants and their phonetic values:

New Persian	Armenian		Mss Persian	
	Initial position	Intervocalic and final positions	Initial position	Intervocalic and final positions
g	գ	կ	g' (aspirated)	g
b	բ	պ	b' (aspirated)	b
d	դ	ա	d' (aspirated)	d
ǰ	ջ	ճ	ǰ' (aspirated)	ǰ

r	n (not always)	r	r (trilled, not always)	r
eyn	այ (not always)	ճ	ճ	ճ
ք	ղ		զ	
յ	ղ		զ	
հ	հ /in some Arabic words խ/x		հ/x	
h	հ, յ, ճ		հ, յ, ճ	
m, n, l	մ, ն, լ		մ, ն, լ	

The diphthongs

New Persian	Armenian	Mss Persian
ow	ոլ	ov
ey	է/ե, իյ	ē, iy

Groups of phonemes

New Persian	Armenian	Mss Persian
ye	ե	ye
ft	ֆտ	ft
xt	խտ	xt
st	ստ	st
št	շտ	št

АСМИК КИРАКОСЯН
ПРАВИЛА ТРАНСКРИПЦИИ АРМЕНОГРАФИЧЕСКИХ
ПЕРСИДСКИХ РУКОПИСНЫХ ЕВАНГЕЛИЙ МАТЕНАДАРАНА
(М 8492, М 3044)

Ключевые слова: персидский, армянский, Ширван, армянское письмо, Евангелие, письменность, традиционное написание, фонетический, правописание.

Рукописи №№ 8492 и 3044 Матенадарана содержат Евангелия на персидском языке в переводе с армянского, записанные армянскими буквами в 18-ом веке в Шамахе и Гандзаке. Армянская транскрипция персидских текстов основана на принципах традиционной армянской орфографии и персидской фонетической системы. Сочетание этих двух принципов предоставляет ценный материал для изучения армянского правописания 18-ого века и фонетики персидского, распространенного в то время в Ширване. Армянская транскрипция персидских фонем и их фонетическое значение, выраженное армянскими буквами, представлены в следующих таблицах:

Гласные, их армянская транскрипция и фонетическое значение:

Новоперсидский	Армянские буквы	Рук. Перс.
a	բ, ա	ə, a
ā	ա, օ, ու	a, o, u
e	է/ե, ի, ռ, ա	e, i, ə, a
u	ու	u
i	ի	i
o	օ, ու, ռ	o, u, ə

Согласные, их армянская транскрипция и фонетическое значение:

Новоперсидский	Армянские буквы		Рук. Перс.	
	В начальной позиции	В срединной и конечной позиции	В начальной позиции	В срединной и конечной позиции
g	գ	կ	g' (придыхательный)	g
b	բ	պ	b' (придыхательный)	b
d	դ	տ	d' (придыхательный)	d

յ	չ	ֆ	յ' (придыхательный)	յ
ր	ռ (не всегда)	ր	ր (дрожащий, не всегда)	ր
eyn	այ (не всегда)	օ	օ	օ
ք	ղ		զ	
յ	ղ		զ	
հ	/в некоторых араб. словах u/x		h/x	
h	ֆ, յ, օ		h, y, օ	
m, n, l	մ, ն, լ		m, n, l	

Дифтонги

Новоперсидский	Армянские буквы	Рук. Перс.
ow	ու	ov
ey	է/ե, իյ	ē, iy

Группы фонем

Новоперсидский	Армянские буквы	Рук. Перс.
ye	ե	ye
ft	ֆտ	ft
xt	խտ	xt
st	ստ	st
št	շտ	št

ՉԵՌԱԳՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ

ԼՈՒՍԻՆԵ ՍԱՐԳՍՅԱՆ

ԲԵՌԼԻՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԳԱՐԱՆԻ ՀԱՅԵՐԵՆ ՄԱՆՐՈՒՍՄՈՒՆՔԸ (ԺԴ. դար)*

Բանալի բառեր՝ Ավագ Ծաղկող, Սարգիս մետրոպոլիտ, Ներսես Շնորհալի, Այունիք, Սուլթանիե, հնագրություն, մանրանկարչություն, պատկերագրություն, ոճ:

Բեռլինի Պետական գրադարանի Արևելյան ձեռագրերի բաժնում (այսուհետ՝ Բեռլ.) պահվող հայերեն խազագրչալ Մանրուսմունքը (Հ^մ 279) միջնադարյան հայ հոգևոր երաժշտության կարևոր վկայություններից մեկն է: Այն սույն հավաքածուի հայերեն ամենահին մատյանն է¹: Ձեռագիրը գիտական շրջանառության մեջ է դրել Ն. Քարամյանցը 1888 թվականին՝ կազմելով Բեռլինի այն ժամանակ Արքայական գրադարանի հայերեն ձեռագրերի ցուցակը²: Հեղինակը մատյանի ֆիզիկական հատկանիշները նկարագրելուց հետո համառոտ ներկայացնում է բովանդակությունը և բերում հատվածներ հիշատակարաններից: Այժմ ձեռագրի թվային պատճենը Ն. Քարամյանցի ցուցակի տեղեկությունները լրացնող համառոտ նկարագրության հետ միասին հասանելի է Բեռլինի Պետական գրադարանի էլեկտրոնային կայքում³: Ավելորդ չենք համարում այս նկարագրություններին ավելացնել մատյանի պրակահաշիվը, որպեսզի ձեռագրի ֆիզիկական նկարագրությունն ավելի ամբողջական դառնա: Այսպես՝ թ. 139⁴, պրակ՝ Ա.-ԺԲ.Մ12 (Ժ.13, ԺԲ.6): Հիշատակարանների մի մասը,

* Ներկա աշխատությունը հոդվածագիրը ներկայացրել է ակադեմիկոս Լևոն Խաչիկյանի ծննդյան 100-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովում, որը կայացավ 2018 թ. հունիսի 28-30-ը՝ Մաշտոցի անվան Մատենադարանում:

¹ N. Karamianz, *Verzeichnis der armenischen Handschriften (der Königlichen Bibliothek zu Berlin)*, Berlin, 1888, p. 27, B. Brentjes, “Armenische Miniaturen in Sammlungen der DDR”, *The Second International Symposium on Armenian Art, Collection of Reports*, v. IV, Yerevan, 1978, p. 7.

² N. Karamianz, նշվ. աշխ., էջ 25-27:

³ Թվային պատճենը տե՛ս հետևյալ հղմամբ՝ http://orient-digital.staatsbibliothek-berlin.de/receive/SBBMSBook_islamhs_00004092:

⁴ Հիշատակված երկու նկարագրություններում 138 մագաղաթե թերթ է համարակալած, վերջին՝ 139-րդ թերթը, որը մեջտեղից հորիզոնական գծով հատված է, մենք ներառում ենք թերթակալման մեջ, քանի որ այն վերջին՝ ԺԲ. պրակի մաս է կազմում և ոչ թե պատահիկ պահպանակի դեր է կատարում ձեռագրի համար:

ինչպես նշեցինք, տպագրել է Ն. Քարամյանցը⁵, ապա Գ. Հովսեփյանը տպագրել է հետագայի մի հիշատակարան (1452 թ.), որը վրիպել էր նախորդի ուշադրությունից⁶, մենք կավելացնենք միայն այն հիշատակարանները, որոնք նախկինում չեն տպագրվել:

Հիշատակարաններ ստացողի՝

49ա «Զմեծ մետրապոլիտոն⁷ Սիրնեաց՝ զտէր Սարգիս, զստացաւոյ Տետրակիս, յիշեցէ՛ք ի Քրիստոս»:

123ա «Զերջանիկն տէր Սարգիս՝ զստացող Տետրակի, յիշեա՛յ ի Քրիստոս Յիսուս, որում փառք»:

135ա «Յիշատակարան Տետրակիս, զի յետոյ գրեցաւ...»:

Հիշատակություն հետագայի՝

1ա «Բարեխիղճ և բարեգութ Ալլահի անունից» արաբերեն գրությունն է՝
بِسْمِ اللَّهِ الرَّحْمَنِ الرَّحِيمِ

Ձեռագրի սկզբում և վերջում կան հավելագրություններ: Ստորև համառոտ ներկայացնում ենք դրանք:

1բ «Անբաժանելի և ընամագոյ... բանաւոր հաւտի», «Փառք քեզ, որ յանէից գոյացուցեր...», «Փառք քեզ, որ տեսչութեամբ...», «Տէր երկ[նաւոր], ալելուա...»:

2ա հիշատակարանից ցած՝ «Փառք Հաւր և Որդոյ...» և «Յո՛յց մեզ, Տէ՛ր, զողորմութիւնս...»⁹:

136բ-137ա «Զարթի՛ր, ընդէ՛ր ննջես...: Վասն ի գիշերի...: Վասն ի վերուստ...: Յիշեա՛, Տէ՛ր, և ողորմեա՛»:

137բ «Անբաժանելի և ընամագոյ... բանաւոր հաւտի» (նույնն է 1բ էջի հավելագրության հետ):

138ա «Ամենակալ ես, Տէ՛ր զաւրութեանց... Տէ՛ր ամենակալ, ի քում արքայութեանդ», «Ալլելուա...»¹⁰:

⁵ Նույն տեղում, էջ 26-27:

⁶ Գ. Եպս. Յովսէփեան, «Ազիզբէկենի եւ նրանց շինարարական գործը (պատմա-հնագիտական ուսումնասիրութիւն)», *Քանբեր Հայաստանի գիտական ինստիտուտի*, գիրք Ա. եւ Բ., Վաղարշապատ, 1921-2, էջ 196:

⁷ *Մետրապոլիտ* – արքեպիսկոպոս մայրաքաղաքի: Հայտնի է, որ Սյունիքի առաջնորդներն են պատիվ ունեցել լինել մետրապոլիտ հայոց, տե՛ս Գ. Աւետիքեան, Խ. Սիւրմէլեան, Մ. Աւգերեան, նոր բառգիրք հայկազեան լեզուի (այսուհետ՝ ՆԲՀ), Վենետիկ, 1836, հ. Բ., էջ 253:

⁸ Ընթերցումը՝ միջնադարագետ, արաբագետ էսթեր Պետրոսյանի:

⁹ Ըստ Ն. Քարամյանցի՝ 1-ին և 2-րդ թերթերն ի սկզբանէ դատարկ են եղել, և ավելի ուշ մի ձեռք 1բ էջում գրել է հավելագրությունը, իսկ 2ա էջում սեփականատեր Մանվել Եպիսկոպոսն է թողել իր հիշատակարանը, որին հաջորդում է առավոտյան պատարագի աղոթքը, տե՛ս N. Karamianz, նշվ. աշխ., էջ 26:

¹⁰ Ըստ Ն. Քարամյանցի՝ այս էջի գրիչը նույնն է 1բ էջի գրչի հետ (տե՛ս նույն տեղում, էջ 27), սակայն, առանձին տառաձևեր ուսումնասիրելով (մասնավորաբար՝ Թ, Մ, Ք, Բ, Դ տառերը), դժվարանում ենք համաձայնել այս տեսակետի հետ, տե՛ս աղյուսակ 4:

Մանրուսմունքներում նման բովանդակությամբ հավելումներ բուն բնագրից առաջ կամ հետո հաճախ են հանդիպում¹¹, ինչպես օրինակ ՄՄ 591 Մանրուսմունքում (1352 թ., Սուրխաթ), որտեղ, սակայն, ձեռագրի նկարագրողը «Անբաժանելի..., Փառք...» (2բ-3ա) հավելագրությունները դիտարկում է որպես գրչափորձ¹²: Գրչափորձ համարելը կարծում ենք մի փոքր վիճելի է, քանի որ եթե ունենք մեկ, երկու և ավել ձեռագրեր, որտեղ նմանատիպ հավելումներ հանդիպում են, ուրեմն արդեն գործ ունենք որոշակի օրինաչափության հետ¹³:

Համաձայն գրչության ժամանակի հիշատակարանի՝ մատյանը 1337 թվականին ընդօրինակել և նկարագրող է Ավագը, Սյունիքի մետրոպոլիտ Սարգսի պատվերով (49ա, 123ա, 135ա): Ընդ որում. «Գրեցաւ և յանգ ելեալ աւարտեցաւ Տետրակս¹⁴ յետ Երգարանիս...», ապա «...երջանիկ մետրապօլիտն և արհիական գլուխն այսմ նահանգիս՝ տէր Սարգիս, խնդրօղ լեալ զկնի Երգարանիս...» (135ա) տողերը հուշում են, որ այս Մանրուսմունքից առաջ գրիչը մի Երգարան է ընդօրինակել:

Հնագրության ուսումնասիրությունը

Դեռևս 2015 թ. «Բանբեր Մատենադարանի» հանդեսում լույս տեսած հոդվածում անդրադարձել ենք այս ձեռագրի գրչությանը՝ համեմատելով ձեռագրացուցակներից մեկ հայտնի ԺԴ. դարում Ավագ անունը կրող այլ գրիչների և մանրանկարիչների մատյանների հետ: Հնագրության համեմատական ուսումնասիրությունը թույլ տվեց հաստատել, որ հիշատակարանում հիշատակվող Ավագը ԺԴ. դարի ինը այլ ձեռագրերից մեկ հայտնի դպիր, ապա սարկավագ և վարդպետ Ավագ Ծաղկողն է (տե՛ս աղյուսակ 1)¹⁵, բացառությամբ 136 և 137

¹¹ Գիտարկումը՝ արվեստագիտության քեկնածու, երաժշտագետ Արուսյակ Թամրազյանի:

¹² Տե՛ս Օ. Եգանեան, Ա. Զէյթունեան, Փ. Անթաբեան, Ա. Քէօշկերեան, Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Բ., խմբագրութեամբ Ա. Մնացականյանի, Օ. Եգանեանի, Ա. Զէյթունեանի, Երևան, 2004, էջ 1417:

¹³ Ինչպես օրինակ՝ ՄՄ 763 – «Փառք Հար և Որդոյ...» (4բ), «Ամենակալ ես, Տէ՛ր գորութեանց, որ...» (331բ), ՄՄ 7125 – «Անբաժանելի և ըհամագոյ...» (3ա), «Փառք Հար և Որդոյ...» (3բ), ՄՄ 9554 – «Զարթի՛ր, ընդէ՛ր ննջես...» (303բ), «Վասն ի վերոյ...» (313բ), ՄՄ 766 – «Անբաժանելի և ըհամագոյ...» (172ա), «Զարթի՛ր, ընդէ՛ր ննջես...» (173բ), ՄՄ 767 – «Անբաժանելի և ըհամագոյ...» (112բ), «Փառք քեզ...» (113ա), նաև Եղմ. 2430, 2ա, տե՛ս Ն. արբեպ. Պողարեան, Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Յակոբեանց, հ. ութերորդ, Երուսաղեմ, 1977, էջ 71:

¹⁴ Տետրակ բառը բացատրվում է իբրև չորս ծախվով բուրբ, գրիչով չորս անկյուններով, տե՛ս Մ. Ավգերեան, Գր. ձեղալեան, Առձեռն բառարան Հայկազեան լեզուի, Վենետիկ, 1865, էջ 782, նաև որպես խաղտետր, երգեր ժամագրքի, տե՛ս ՆԲՂ, հ. Բ., էջ 870:

¹⁵ Առաջարկվող աղյուսակում տեսանելի են առանձին տառաձևեր՝ Վ, Զ, Զ, Ծ, Թ, Ե և Վ միացումը, որոնցով առանձնանում է Ավագի գիրը: Հիմնականում համեմատությունը կատարում ենք 1337-40 թթ. գրված մատյանի հետ, որպեսզի մեր ուսումնասիրությունը ավելի ճշգրիտ լինի, քանի որ տարիների ընթացքում գրչի ձեռագիրը կարող էր մասամբ փոփոխության ենթարկվել:

թերթերի, որոնք գրվել են մեկ այլ գրչի ձեռքով (տե՛ս աղյուսակ 2), թեպետ 135բ և 136ա էջերի միջև բնագրի ճշգրիտ հաջորդականությունը խախտված չէ¹⁶: Ըստ Ն. Քարամյանցի՝ 136ա էջից շարունակվում է ընկած էջի արտագրությունը երկրորդ ձեռքով¹⁷: Չի բացառվում նաև, որ հիմնական գրիչը՝ Ավագը, տվել է կաղապարը, և հետո մեկ ուրիշը շարունակել է¹⁸: Վերջինս նաև հեղինակն է 136բ և 137աբ էջերում գրված հավելագրությունների (տե՛ս աղյուսակ 3): Հիշատակարանում այս գրիչը առանձին տողեր ջնջել է և ավելացրել իրենը, որտեղ հիշատակում է «արհիական գլուխ, ռաբունապետ տեր»՝ Ներսեսին, ով, ըստ Գ. Ալիշանի, հաջորդել է Սարգիս մետրոպոլիտին¹⁹, իսկ ըստ Լ. Խաչիկյանի՝ եղել է վերջինիս աթոռակիրը²⁰:

Ուշագրավ է, որ այս մատյանում Ավագն իր անունը ստորագրում է վ-ով, փոխարեն ւ-ի (Ավագ՝ և ոչ Աւագ), ինչը պատահական զուգատիպություն չէ, քանի որ նույն կերպ նրա անունն ավելի հաճախ հիշատակվում է նաև այլ մատյաններում²¹: Ի դեպ, այս Մանրուսմունքում, նաև ՄՄ 212 Ավետարանում, որ Ավագը գրել, ծաղկել և կազմել է հենց 1337-40 թթ., դպիր և սարկավագ հոգևորական աստիճանները, կամ վարդապետ կոչումը գրչի և ծաղկողի անվան կողքին բացակայում են, ի տարբերություն գրիչ և մանրանկարիչ Ավագից մեզ հայտնի մյուս ձեռագրերի: Հիշատակարանի շարադրանքի կառուցվածքը և նրա բովանդակությունը՝ հանձին հիշատակվող անձանց, ևս հարում է Ավագից մեզ հայտնի մյուս հիշատակարաններին: Կրկին համեմատությունն անենք նույն 1337-40 թթ. ընդօրինակած Ավետարանի (ՄՄ 212) հետ: Այսպես՝ «...ձեռամբ անհիմաստ և անարհեստ փցուն գրչի և ոսկենկար ծաղկի՝ Ավագի...» (ՄՄ 212, 310ա), «Ավագ մեղապարտ, յետին և անարհեստ փծուն գրիչ» (Բեռլ. 279, 135բ), «մեծ իշխանաց իշխանին և մեծահաւատ բարեպաշտին պարոն Բուրթելին..., նաև պարծանաց սիրալիր հարազատին իւրոյ՝ պարոն Իւանէի...», «... եւ յիշխանութեան զօրացելոյն... մեծ իշխանաց իշխանին՝ պարոն Բուրթելին, հօր վերասացեալ զարդու զաւակին՝ պարոն Պեշգենին՝ ստացողի աստուածային գանձուս, եւ ի վերատեսչութիւն եպիսկոպոսութեան տեառն Սարգսի մետրապօլտի, ի դպրապետութեան մեծն հռետորին Եսայեա» (ՄՄ 212, 310աբ), «...մեծ սպարապետին Հայոց և Վրաց պարոն Բուրթելին և

¹⁶ Լ. Սարգսյան, «Մանրանկարիչ Ավագը (կյանքը և ձեռագրական ժառանգությունը)», *ԲՄ* 22, 2015, էջ 80-1, աղյուսակ IV, Գ 1-2:

¹⁷ N. Karamianz, նշվ. աշխ., էջ 27:

¹⁸ Ձեռագրագիտական դիտարկումների համար շնորհակալություն եմ հայտնում պատմական գիտությունների դոկտոր Գևորգ Տեր-Վարդանյանին:

¹⁹ Գ. Ալիշան, *Սիսական, տեղագրութիւն Սիւնեաց աշխարհի*, Վենետիկ, 1893, էջ 21:

²⁰ Լ. Խաչիկյան, «Սյունյաց Օրբելյանների Բուրթելյան նյութը», *ԲՄ* 9, 1969, էջ 191:

²¹ ՄՄ 7650, 25ա, 180բ, 354ա, Եղմ. 1941, 15ա, 156ա, 245բ, ՄՄ 212, 310ա, 311ա, ՄՄ 7631, 6ա, 17ա, 260բ, 261ա, ՄՄ 6230, 26բ, 303բ, 432բ, Բրիտ. Գրադ. 5304, 2ա, և այլն:

զաւակաց իւրոց՝ Պեշքէնի և Իվանեի, եւ ի լուսաւոր վարժապետութեան մեծին եսայեա» (Բեռլ., 279, 135բ):

Հիշատակարանում ձեռագրի գրչութեան վայրի վերաբերյալ որևէ տեղեկութիւն չկա: Ըստ Ն. արքեպիսկոպոս Պողարյանի²² և Կլ. Մուլթաֆյանի²³ ձեռագիրը ընդօրինակվել է Սուլթանիեում (Իրան): Ինչպես գիտենք, 1337 թվականից առաջ և հետո Ավագն ակտիվ է եղել Սուլթանիեում և Թավրիզում ընդօրինակելով մեզ հայտնի վեց մատյան²⁴: Ա. եպիսկոպոս Մկրտչյանը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ ձեռագիրը գրվել է Սյունյաց Սարգիս մետրոպոլիտի պատվերով և ստացողն էլ նա է, եզրակացնում է, որ մատյանը Սյունիքում է ընդօրինակվել²⁵: Ստացողի Սյունյաց մետրոպոլիտը լինելու հանգամանքը, կարծում ենք, բավարար չէ մատյանի գրչութեան վայրը Սյունիքում տեղորոշելու համար, մասնավորապես, ինչպես կտեսնենք հետո, Սարգիս եպիսկոպոսը 1337 թ. ուխտի է մեկնած եղել Երուսաղեմ:

Ձեռագրի նկարագրական համակարգը

Ձեռագրի նկարագրողումները բաղկացած են էջով մեկ արված մանրանկարից, որտեղ ներկայացված են երկու հոգևորականի դիմանկարներ (2բ, տե՛ս ներդիր, նկ. 1), ապա մեկ կիսախորանից, որը հարգարում է «Երգ զկնի Տէր, եթէ շրթանցն ի Տեառն ներսիսէ կաթողիկոսի: Յիշեսցուք ի գիշերի...» բնագրի սկիզբը (3ա): Մատյանի հետագա նկարագրողումները ներկայացնում են ութ ճակատագրողներ՝ «Թագաւորք ապաշխարութեան: Թագաւոր յաւիտեան...» (9բ), «Կարգ գիշերութեան ալելուաց: Ալելուա... Ողորմութեամբ Տեառն լի...» (19ա), «Հարցնափառեր ապաշխարութեան: Հա՛յր երկընաւոր, որ առաքեցեր զմիածին Որդի քո...» (36բ), «Կարգ ժամամտերու ճաշոյ: Որ ի Հաւրէ առաքեցար...» (49բ), «Ալելուք ճաշոյ կարգաւ: Ալելուիա... Եկա՛յք ցընծասցուք ի Տէր...» (72ա), «Խոնարհեսցուք Աղուհացիցն: Խոնարհեսցո՛յ զունկն քո...» (98ա), «Մեսեդիք Ծննդեան Տեառն: Տէր, ասացի...» (112բ), «Ուղիցիք կարգաւ, Ուղիղ եղիցին աղավթք իմ...» (123բ) մասերի համար: Ճակատագրողներից բացի, ձեռագիրն ունի լուսանցային ձևավորումներ՝ բուսական նախշերի, թռչունների տեսքով և հանգուցազիր ու թռչնազիր գլխատառեր գրեթե յուրաքանչյուր նոր գլխի համար:

Գեղարվեստական հարդարանքի այս համակարգը (բացառությամբ 2բ թերթի դիմանկարի) հանդիպում է տարբեր գրչակենտրոններում ընդօրինակված համաժամանակյա հայերեն մանրուսմունքներում: Բերենք մեզ հասանելի մի քանի օրինակ՝ ՄՄ 8623 (1312 թ., Սիս, Կիլիկիա), Վնտկ. 734 (1313 թ.

²² Ն. աբեգյու. Մովսէս (Պողարյան), Հայ նկարողներ (ԺԱ.-ԺԳ. դար), Երուսաղեմ, 1989, էջ 71:

²³ Cl. Mutafian, *L'Arménie du Levant (XIe-XIVe siècle)*, T. I, Paris, 2012, p. 711.

²⁴ Լ. Սարգսյան, նշվ. աշխ., էջ 75:

²⁵ Ա. եպո. Մկրտչյան, Սյունյաց մետրոպոլիտական աթոռը Օրբելյանների իշխանութեան ժամանակաշրջանում, Երևան, 2013, էջ 115:

Դրազարկ, Կիլիկիա)²⁶, եղմ. 2438 (1328 թ. Ակներ, Կիլիկիա)²⁷, Փարիզ, Ֆրանսիայի հայկական թանգարան 51 (1324 թ., Բլրցի անապատ, Կիլիկիա)²⁸, Վնտկ. 2152 (1326 թ., Ջորոյ վանք, Տուրուբերան)²⁹, ՄՄ 7125 (1330 թ., Կիլիկիա), ՄՄ 9554 (1337 թ., Կոպրտառա վանք, Կիլիկիա), ՄՄ 764 (1339 թ., Եկեղեցի գավառ), Վնտկ. 661 (1339 թ., Եկեղեցի գավառ)³⁰, ՄՄ 758 (1351 թ.), Հալեպ, Քառասուն Մանկանց եկեղեցու գրադարան 7 (1336 թ., Կիլիկիա)³¹:

Վերոնշյալ պատկերը թույլ է տալիս ասել, որ գրիչ և նկարիչ Ավագը հետևել է կիլիկյան գրչակենտրոններում ստեղծված մանրուսմունքների նկարազարդման համակարգին: Իսկ վերջինիս ձևավորումը, անշուշտ, պայմանավորված է բնագրի բովանդակության ավարտուն խմբագրությամբ:

Ինչպես նշեցինք, մատյանի նկարազարդումը սկսվում է երկու հոգևորականի դիմանկարով: Նրանք ներկայացված են ամբողջ հասակով կանգնած, դիմահայաց, ձեռքերում Գիրք պահած: Խաչազարդ եմիփորոնով և շուրջառով հանդերձանքը վկայում է նրանց բարձր հոգևոր աստիճանի պատկանելության մասին³²: Ձախ կողմի հոգևորականը, որն աջով օրհնում է, գլխին կրում է ակնազարդ խույր՝ պսակված խաչով, իսկ մյուսը՝ սրածայր վեղար և լուսապսակ: Ուլքեր են այս հոգևորականները: Երկրորդի ինքնության շուրջ մասնագետները տարակարծիք են. մեծամասնությունը ենթադրում է, որ պատկերված է ձեռագրում հիշատակվող տեր Ներսեսը (նաև բաբունապետ և արհիական գլուխ³³, թ. 136ա)³⁴, իսկ ըստ Գ. Հովսեփյանի՝ Ներսես Շնորհալին է (1166-73 թթ.) պատկեր-

²⁶ Ս. վրդ. Ճեմնեմեան, Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի վենետիկ, հ. Գ., Վենետիկ, 1993, էջ 1079-1086:

²⁷ Թվային պատճենը տե՛ս հետևյալ հղմամբ՝ <https://www.loc.gov/resource/amedmonastery.00271074153-jo/?sp=6>

²⁸ Տե՛ս <http://bvmm.irht.cnrs.fr/mirador/index.php?manifest=http://bvmm.irht.cnrs.fr/iiif/22707/manifest>

²⁹ Ս. վրդ. Ճեմնեմեան, Մայր ցուցակ..., էջ 1091-94:

³⁰ Նույն տեղում, էջ 1101-04:

³¹ Ձեռագրի ներկայիս վայրը հայտնի չէ, իսկ թվային պատճենը տեսնելու հնարավորություն եմ ունեցել 2017 թ. Հիլլ թանգարանում և ձեռագրերի գրադարանում աշխատելու ընթացքում (Միներտա, ԱՄՆ):

³² Քրիստոնեական արվեստում տարածում գտած հագուստի այս ձևը հայ արվեստում հայտնի է թե՛ մանրանկարչության, թե՛ որմնանկարչության ժ-Գ-Ժ-Գ. դդ. բազում օրինակներով:

³³ Արհիական գլուխ = արհիգլուխ – արհեպիսկոպոսական գլուխ, տե՛ս ՆԲՀԼ, հ. Ա., էջ 364:

³⁴ Գ. Ալիշան, նշվ. աշխ., էջ 20, այստեղ նաև մանրանկարի արտանկարն է հանդիպում (ներդիր 20 և 21 էջերի միջև), Մ. արհեպ. Աղավնունի, «Մարգիս արհեպիսկոպոս Սիմեոն Նվարաբեկի (1337)», Միոն, 1938, թիվ 9 (Սեպտեմբեր), էջ 275, Լ. Խաչիկյան, նշվ. աշխ., էջ 191, Լ. Zakarian, “Un Artista Anti-Unitore del XIV secolo”, Roma – Armenia, a cura di Cl. Mutafian, Roma: Biblioteca Apostolica Vaticana, 1999, p. 179, Ա. Լալիս. Մկրտչյան, նշվ. աշխ., էջ 115:

ված³⁵: Կարծում ենք՝ Գ. Հովսեփյանի տեսակետն ավելի համոզիչ է: Բերենք մի քանի փաստարկ դրա օգտին. ա) դիմանկարի վերևում «տէր Ներսէս երգող» մակագրութունն է, իսկ մենք գիտենք, որ Ներսես Գ. Կլայեցի կաթողիկոսը բացի Շնորհալի անունից նաև երգող և երգեցող կոչումն է ունեցել, ինչպես ավանդում է Սամուել Անեցին³⁶, բ) լուսապսակի առկայությունը ցույց է տալիս, որ սրբադասված անձնավորություն է պատկերված³⁷: Այս հանգամանքը նույնպես չի խոսում այն տեսակետի օգտին, որ պատկերված է ըստ ընկալման, արքեպիսկոպոս Ներսեսը, գ) հայերեն Մանրուսմունքներում ոչ հաճախ, սակայն հանդիպում է Ներսես Շնորհալու պատկերը, օրինակ՝ ՄՄ 9554, 2ա (1337 թ., տե՛ս ներդիր, նկ. 2), Վնտկ. 2149, 2բ (1340 թ., տե՛ս ներդիր, նկ. 4)³⁸, ՄՄ 591, 3բ (1352 թ., Սուրխաթ, Ղրիմ, տե՛ս ներդիր, նկ. 3)³⁹, Եղմ. 2495 (տեղ և ժամանակ անհայտ)⁴⁰ մատյաններում, դ) թե՛ մեր քննելիք ձեռագրում, թե՛ վերոնշյալ օրինակներում այս դիմանկարը հանդես է գալիս Ներսես Շնորհալու հեղինակած «Երգ գկնի՛ Տէր եթէ շրթանցն: Յիշեսցուք ի գիշերի...» բնագրի հետ: Նկատենք, որ թվարկածս բոլոր օրինակներում Ներսես Շնորհալին լուսապսակ է կրում: Նրա հայրապետական հանդերձանքը հիշեցնում է Հակոբ Երկրորդ Անարվազեցու հագուստը Սարգիս Պիծակի նկարազարդած Աստվածաշնչում (ՄՄ 2627, 422բ), որտեղ տեսնում ենք հայրապետի գլուխը ծածկող ճերմակ սրածայր վեղար, ինչպես մեր մանրանկարի դեպքում է:

³⁵ Գ. Յովսեփյան, «Մխիթար Անեցի գրիչ եւ նկարիչ (գործածութեամբ Գլաճորի նկարիչ Աւագ դպրի)», Հասկ հայագիտական տարեգիրք, Ա. տարի, Անթիլիաս-Լիբանան, 1948, էջ 207, նույնի՝ Խաղբակեանք կամ Պոռշեանք հայոց պատմութեան մէջ, մասն երկրորդ, Երուսաղեմ, 1942, էջ 244:

³⁶ ՆԹՀ, Հ. Ա., էջ 673, Գ. Ալիշան, Շնորհալի ու պարագայ իւր, Վենետիկ, Ս. Ղազար, 1873, էջ 3, 85:

³⁷ Հայ արվեստում երբեմն հանդիպում են օրինակներ, երբ լուսապսակով են պատկերվում աշխարհիկ և հոգևոր դասի առանձին ներկայացուցիչներ, ինչպես օրինակ, ըստ Մնացականյանի, Սյունյաց Հովհաննես եպիսկոպոսը Բղենո նորավանքի բարձրաբանդակներից մեկում, տե՛ս Ստ. Մնացականյան, Հայկական աշխարհիկ պատկերաբանդակը, Երևան, 1976, էջ 98-100, նկ. 36: Կարծում ենք՝ նման օրինակները բացառիկ են, և պետք չէ դրանք դիտարկել իբրև պատկերագրական օրինաչափություն, այլպես, եթե նույն տրամաբանությամբ առաջնորդվենք, ապա մեր մանրանկարի դեպքում լուսապսակով պետք է պատկերվեր նաև Սարգիս մետրոպոլիտը:

³⁸ Ս. Վրդ. Չեմենեան, նշվ. աշխ., էջ 1103-06:

³⁹ Այս Մանրուսմունքն ունի նաև լուսանցային բազմաթիվ պատկերներ: Ձեռագրի նկարագրությունը տե՛ս Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց..., հ. Բ., էջ 1415-18:

⁴⁰ Ձեռագիրը բաղկացած է երկու մասից՝ Մանրուսմունք և Տոնացույց: Ըստ Ն. Պողարյանի նկարագրության՝ էջ 4-ում կամարի տակ վարդապետի դիմանկար է պատկերված կանգնած, տե՛ս Ն. արեպյա. Պողարեան, Մայր ցուցակ ձեռագրաց..., էջ 171: Դատելով մանրանկարի տեղադրությունից և նկարագրությունից՝ կարող ենք ասել, որ ամենայն հավանականությամբ Ներսես Շնորհալին է այստեղ պատկերված:

Մյուս հոգևորականը, որ հանդես է գալիս Շնորհալու կողքին՝ նրանից ձախ, ձեռագրի ստացող Սարգիս մետրոպոլիտն է: Առաջինն այս մասին հիշատակում է Ղ. Ալիշանը⁴¹: Ղ. Ալիշանի և այլոց հետ համակարծիք ենք նաև մենք: Այս մանրանկարը Սարգիս մետրոպոլիտից մեզ հայտնի առայժմ միակ դիմանկարն է⁴²: Ակադեմիկոս Լ. Խաչիկյանը «Բանբեր Մատենադարանի» հայագիտական հանդեսում 1969 թ. տպագրած «Սյունյաց Օրբելյանների Բուրթելյան ճյուղը» հոդվածում քննություն է առնում և վերանայում Սյունյաց մետրոպոլիտների հաջորդական կարգը և արձանագրում, որ 1326 թ. Սարգիսը հիշատակված է որպես Վաղազնի վանահայր, 1333 թ. որպես «աթոռակալ» և արքեպիսկոպոս Սյունիքի⁴³: Այս տվյալները հիշատակվում են 1333 թվականին Վայոց Ձորում Վերին Նորավանքում գրված Ավետարանում (ՄՄ 5651)⁴⁴, և մեկ այլ Ավետարանում գրված Պղնձահանքում (Նոր Ջուղա, Հ^մր 402)⁴⁵: Եվս մեկ կարևոր ձեռագիր կա, որ տեղեկություններ է հաղորդում Սարգիս մետրոպոլիտի մասին: Դա 1306 թ. Կիպրոսի Ճիպս գյուղում գրված Սաղմոսարանն է (Եղմ. 1033), որտեղ հետագայի՝ 1337 թ. հիշատակարանում Սարգիսը հիշատակվում է որպես «...մետրապոլիտս մեծ Հայոց, մանաւանդ տանս Սիւնեաց, եւ պոստոֆրոնտէս»⁴⁶ սուրբ հայրապետանոցիս Տաթևոյ, եւ աշխարհիս Սիսակայ»⁴⁷: Հիշատակարանից տեղեկանում ենք նաև, որ Սարգիսը 1337 թ. ուխտի է գնացել Երուսաղեմ, որտեղ և ստացել է հիշյալ Սաղմոսարանը (էջ 60)⁴⁸: Կարևոր տեղեկություններ են հաղորդվում նաև Սարգիս մետրոպոլիտի ընտանիքի անդամների, հոր՝ Հասանի, որ Սյունյաց իշխանաց տնից է սերում, մոր՝ Վախախի, եղբոր՝ Իվանեի, որ Որոտան երկրի ամիրան է, և եղբորորդու՝ Նորընծա քահանա Հովհաննեսի մասին: Վերջինս նշանավոր Հովհան Որոտանցին է⁴⁹:

⁴¹ Ղ. Ալիշան, *Սիսական...*, էջ 21:

⁴² Սյունյաց այս մետրոպոլիտին պետք չէ շփոթել Օրդուբազարի բուրեպիսկոպոս Սարգսի հետ, որին Ավագը հիշատակում է մի շարք մատյաններում (ՄՄ 7650, 353բ, Եղմ. 1941, 156ա, ՄՄ 4429, 148բ, Վնտկ. 935, 449ա), բացի ՄՄ 212 Ավետարանից, որտեղ հիշատակվող Սարգիսը Սյունյաց մետրոպոլիտն է (310բ):

⁴³ Լ. Խաչիկյան, նշվ. աշխ., էջ 179, 189-91:

⁴⁴ Լ. Խաչիկյան, *ԺԳ. դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ*, Երևան, 1959, էջ 257:

⁴⁵ Ս. Տէր-Աւետիսեան, *Յուցակ հայերէն ձեռագրաց Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքի*, Վիեննա, 1970, էջ 71, Լ. Խաչիկյան, «Սյունյաց Օրբելյանների...» էջ 191:

⁴⁶ *Պոստոֆրոնտէս (պոստոֆրոնդէս)* որպես առաջին խոհական խնամակալ, և՛ վարժապետ, և՛ վարդապետ, իմաստասեր, տե՛ս ՆԲՀԼ, Հ. Բ., էջ 661: Հայր Ղ. Ալիշանն այս հունարենից փոխառյալ բառը մեկնում է իբրև «հոգացող», տե՛ս Ղ. Ալիշան, նշվ. աշխ., էջ 19, նույնը՝ Մ. արքեպ. Աղավնունի, նշվ. աշխ., էջ 277:

⁴⁷ Ն. Եպս. Պողարեան, *Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Յակոբեանց*, հ. չորրորդ, Երուսաղեմ, 1969, էջ 48:

⁴⁸ Մ. Եպիս. Աղանունի, *Միաբանք եւ այցելութի հայ Երուսաղեմի*, Երուսաղեմ, 1929, էջ 452-3, նույնի՝ «Սարգիս արքեպիսկոպոս...», էջ 276, Ն. Եպս. Պողարեան, *Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Յակոբեանց*, հ. չորրորդ, Երուսաղեմ, 1969, էջ 48-9, Ա. Եպս. Մկրտչյան, նշվ. աշխ., էջ 114:

⁴⁹ Մ. արքեպ. Աղավնունի, նշվ. աշխ., էջ 277, Լ. Խաչիկյան, նույն տեղում, էջ 191:

Չբ էջի մանրանկարում պատկերված անձանց ինքնությունը պարզելուց հետո կարևոր ենք համարում նաև անդրադարձը մանրանկարչին: Նախապես ասենք, որ դեռևս 1978 թ. Հայ արվեստի միջազգային երկրորդ սիմպոզիումում զեկուզելիս գերմանացի գիտնական Բուխարդ Բրենտիեսը նկատել է, որ Չբ էջի մանրանկարը համեմատաբար կոպիտ է և չի համեմատվի հանդիպակաց տիտղոսաթերթի (Յա) հարդարանքի հետ, և գուցե մի ուրիշ ձեռք է այստեղ աշխատել, ապա հավելում է, որ ճակատագրաբար (9բ, 19ա, 36բ, 49բ, 72ա, 112ա, 123բ)⁵⁰ ավելի լավ մանրանկարչի ձեռքով են արվել: Հեղինակը, ենթադրաբար, նաև լուսանցապատկերներն է (10բ, 20բ, 38բ) վերագրում Յա էջի նկարչին⁵¹:

Երբ կողք-կողքի ենք դնում Չբ և Յա էջերի նկարազարդումները, նկատում ենք, որ իսկապես, դրանք նույն ձեռքի գործերը լինել չեն կարող, քանի որ կատարման արվեստով խիստ տարբեր են միմյանցից: Հարց է ծագում, թե ո՞ր մանրանկարների հեղինակն է հիշատակարանում հիշատակվող գրիչ և ծաղկող Ավագը, և ո՞ր մանրանկարը կամ մանրանկարներն են այլ հեղինակի պատկանում:

Մանրուսմունքում պատկերված հոգևորականների դիմանկարները համեմատելով մանրանկարիչ Ավագի այլ ստեղծագործությունների հետ, տեսնում ենք պատկերագրական որոշ ընդհանրություններ. ՄՄ 7650 Ավետարանում հոգևորականների դիմանկարների հետ՝ պատկերված Ահեղ դատաստանի մանրանկարում (տե՛ս աղյուսակ 5), բայց ո՞ճի տեսանկյունից զգալի տարբերություն է նկատելի, ինչը վկայում է այլ ձեռքի միջամտության մասին: Դիմագծերի հաղորդումը՝ ընդգծված այտոսկրեր, դեպի վար պատկերված ակնաբիբեր, կարմրով գունավորված շուրթեր, բավական տարբեր է համեմատվող օրինակներից⁵²: Հաշվի առնելով, որ ստեղծագործողի ոճը տարիների ընթացքում կարող է հասունանալ և փոփոխվել, ավելորդ չենք համարում նաև համեմատությունը ՄՄ 212 Ավետարանի մանրանկարների հետ: Առանձին մանրանկարներից դիմահայաց պատկերված կերպարներ ընտրելուց և քննվող օրինակի հետ համեմատելուց հետո ավելի համոզիչ է դառնում այլ նկարչի մասնակցության մասին վերոնշյալ տեսակետը (տե՛ս աղյուսակ 6): Չի բացառվում, որ մանրանկարիչ Ավագը կարող էր անել մանրանկարի գծապատկերը, իսկ մեկ այլ նկարիչ՝ գունավորել: Ավագից մեզ հասած ձեռագրերի ուսումնասիրությունը թույլ է տալիս նկատել նման օրինակներ: ՄՄ 4429 և Վնտկ. 925 Աստվածաշնչերում մանրանկարներն անավարտ են. առաջինի դեպքում Ավագը հասցրել է միայն գծանկարներն անել, իսկ երկրորդի դեպքում՝ մասամբ նաև գունավո-

⁵⁰ Հեղինակն այստեղ թվարկում է յոթը, և չի նշում 98ա էջի հակասագրադր, որի մարդակերպ և գլխատառը, մեր կարծիքով՝ նույնպես մյուս նկարչի գործն է, տե՛ս B. Brentjes, նշվ. աշխ., էջ 8:

⁵¹ Նույն տեղում:

⁵² Նշենք, որ երկու մանրանկարներն էլ պահպանվածության տեսանկյունից գրեթե նույն՝ ոչ բավարար վիճակում են մեզ հասել: Առանձին հատվածներում ներկը մասամբ թափված է:

րել: Եղմ. 1941 Ավետարանում մանրանկարների մի մասը Ավագի, իսկ մի մասն էլ Մխիթար Անեցու ստեղծագործություններն են: Ունենք նաև օրինակներ, երբ Ավագը ընդօրինակել է մատյաններ, իսկ հետո դրանք ավարտին են հասցրել և նկարազարդել այլ նկարիչներ (ՄՄ 7631, ՄՄ 6402)⁵³: Իսկ ինչպե՞ս բացատրել Ջբ էջի մանրանկարում «գԱվագ նկարիչ յիշեա՛յ/յիշեցէ՛ք» մակագրության առկայությունը: Հնարավոր է երկու բացատրություն. գուցե երկրորդ նկարիչը պահել է նախորդի, այն է՝ հիշատակարանում հիշատակվող գրիչ և ծաղկող Ավագի անունը, կամ էլ այս նկարչի անունը նույնպես Ավագ է եղել⁵⁴:

Փորձենք հասկանալ, թե ինչ հարազատություն ունեն Մանրումունքի մյուս նկարազարդումները Ավագից մեզ հայտնի ձեռագրերի հետ: Տիտղոսաթերթի, ճակատազարդերի (9բ, 19ա, 36բ, 49բ, 72ա, 112բ, 123բ) և լուսանցապատկերների ձևավորումները, դրանցում կիրառված զարդանախշերը, բնագրում հանդիպող թուշնագիր և բուսական գլխատառերը, ծանոթ են մեզ Ավագի այլ մատյաններից (տե՛ս աղյուսակ 7): Զուգահեռները չեն վերաբերում միայն նույն կաղապարների կիրառմանը (ինչպես օրինակ՝ Ա, Վ, Լ, Հ, Տ տառերի դեպքում), քանի որ ԺԳ. դարում արդեն ձևավորված էին գլխատառերի, զարդանախշերի այնպիսի կաղապարներ, որոնք հաճախ նաև տարբեր դպրոցներում ձեռագրից ձեռագիր նույնությամբ կրկնվում են, այլև նկատի ունենք դրանց կատարման եղանակը: Գլխատառերը շարունակող տողի ոսկեգրությունը, ապա հաջորդ տողը կարմիր թանաքով գրելը մի սկզբունք է, որ Ավագը կիրառել է նաև այլ մատյաններում:

Հնդհանրացնելով մեր ասելիքը Բեռլինի Պետական գրադարանի Հ² 279 Մանրումունքի վերաբերյալ, կարող ենք նկատել, որ բովանդակությամբ և գեղարվեստական ձևավորմամբ այն համապատասխանում է դարաշրջանից մեզ հայտնի հայերեն մանրումունքների կառուցվածքին, միևնույն ժամանակ լրացնում է այն որոշ մանրամասներով, ինչպիսին ստացողի դիմանկարն է Ներսես Շնորհալու դիմանկարի կողքին: Մանրումունքի հնագրության և նկարչության ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ խազագրչալ այս մատյանն ընդօրինակել և նկարազարդել է ոչ միայն ձեռագրում հիշատակվող գրիչ և ծաղկող Ավագը: Այլ ձեռքի կամ ձեռքերի միջամտությունն ակնհայտ է հիշատակարանում և հավելագրություններում, նաև Ջբ և 98ա էջերի մանրանկարներում:


⁵³ Առավել մանրամասն այս մասին տե՛ս Լ. Սարգսյան, նշվ. աշխ., էջ 73-88:

⁵⁴ Վերջին ենթադրությունը պակաս հավանական է թվում, քանի որ Ավագ անունը ժամանակին այնքան տարածված չէ, ինչպես օրինակ՝ Սարգիս կամ Գրիգոր:


ԱՂՅՈՒՄԱԿՆԵՐ

Աղյուսակ 1


Քեղ. 279, 135ա




ՄՄ 212, 308բ



Քեղ. 279, 135բ




ՄՄ 212/310ա




Աղյուսակ 2

Քեղ. 279, 135բ




Քեղ. 279, 136ա




Աղյուսակ 3


Ֆեոլ. 279, 136ա




Ֆեոլ. 279, 137ա



Ֆեոլ. 279, 136բ




Ֆեոլ. 279, 137բ




Աղյուսակ 4


Ֆեոլ. 279, 1բ




Ֆեոլ. 279, 138ա



Ֆեոլ. 279, 1բ




Ֆեոլ. 279, 138ա



Աղյուսակ 5

Բեռլ. 279, 2բ



ՄՄ 7650, 27ա



Աղյուսակ 6

Բեռլ. 279, 2բ



ՄՄ 212, 213ա, 278բ



Աղյուսակ 7


Քեղ. 279, 3ա



ՄՄ 212, 153ա




Քեղ. 279, 118բ



ՄՄ 212, 35ա



Քեղ. 279, 72բ



Վնակ. 935, 37ա



ՄՄ 212, 96ա



Բեռլ. 279, 10բ



ՄՄ 212, 245բ, 57ա



LUSINE SARGSYAN
AN ARMENIAN SONG-BOOK (MANRUSMUNK') OF THE 14TH
CENTURY IN THE BERLIN STATE LIBRARY

Key words: Avag, Metropolitan Sargis, Nersēs Shnorhali, Siwnik', Sult'anie, palaeography, miniature, iconography, style.

The scribe and miniaturist Avag was a celebrated medieval Armenian artist, whose artistic heritage is preserved in ten manuscripts. One of them is the Song-Book currently kept at the Department of Christian Orient in the Berlin State Library (Ms. or. oct. 279). The manuscript was copied in 1337 and the commissioner was Metropolitan Sargis of Siwnik' (135r-v). In 1452 was owned by Bishop Manuēl (2r). The exact place where the manuscript was copied is not indicated in the colophon; it could be Sult'anie near Tabriz, since in 1337 Avag was active there.

By its content and miniatures, this manuscript corresponds to the Armenian Manrusmunk's known since the 14th century, but has some additional details such as the portrait of the commissioner Metropolitan Sargis on the folio preceding the title page (2v). Next to his portrait, another clergyman is depicted. Experts have different opinions about his identity; most of them suppose that it is Bishop Nersēs mentioned in the colophon. However, a careful analysis of the caption alongside the portrait, as well as an iconographic and codicological study allowed us to suppose that the portrayed person is Saint Nersēs Shnorhali.

Furthermore, the palaeography and miniatures of the manuscript suggest that not only Avag (mentioned in the colophon) but also another scribe and

painter has worked on it. The interference of the other hand (or hands) appears in the colophon and supplements, as well as in the miniatures on pages 2v and 98r.

ЛУСИНЭ САРГСЯН
АРМЯНСКАЯ КНИГА МАНРУСМУНК ИЗ БЕРЛИНСКОЙ
ГОСУДАРСТВЕННОЙ БИБЛИОТЕКИ (XIV ВЕК)

Ключевые слова: Аваг, митрополит Саргис, Нерсес Шнорали, Сюник, Султание, палеография, миниатюра, иконография, стиль.

Одной из известных фигур средневекового армянского искусства XIV столетия является писец и миниатюрист Аваг, из художественного наследия которого до нас дошли десять рукописей. Одна из них – Манрусмунк, Певческий сборник, хранящийся, в Отделе восточных рукописей Берлинской государственной библиотеки под номером 279. Рукопись была переписана в 1337 году по заказу митрополита Сюника Саргиса (л. 135 л-об), а позднее, в 1452 году, ее владельцем стал епископ Мануэл (л. 2 л). Колофон не содержит данных о месте создания рукописи, однако исследователи придерживаются мнения, что манускрипт был создан недалеко от Табриза, в Султание, где в 1337 году мастер Аваг развивал активную деятельность.

По содержанию и художественному оформлению, рукопись соответствует структуре армянского Манрусмунка, известного уже в 14-м веке, в то же время она дополнена отдельными элементами, такими как портрет первого владельца, митрополита Саргиса, расположенного перед титульным листом (л. 2 об). Рядом с митрополитом изображен другой священнослужитель, о личности которого у исследователей нет единого мнения. Большинство считает, что здесь изображен упомянутый в колофоне епископ Нерсес. Однако детальный анализ сопровождающей надписи, а также иконографические и кодикологические особенности позволили нам выдвинуть предположение об изображении здесь святого Нерсеса Шнорали.

Изучение палеографии и живописи данной рукописи дает возможность утверждать, что кроме упомянутого в колофоне мастера Авага, над ней работал и другой (или другие) писец и художник. Следы вмешательства других лиц заметно по колофону и дополнительным записям, а также по стилю миниатюр (л. 2 об и 98 л).

ԳԱՅԱՆԵ ԹԵՐԶՅԱՆ

ՀԱՂԲԱՏԻ ԳՐԶՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԸ

Բանալի բառեր՝ Մատենադարան, ձեռագիր, Ավետարան, գրիչ, ստացող, հիշատակարան, Դավիթ Քոբայրեցի, Վարդան Արևելցի:

Հաղբատի գրչության կենտրոնը Ժ-ԺԲ դդ.

Ժ-ԺԱ դարերը ենթադրաբար կարելի է համարել Հաղբատի գրչության կենտրոնի ծաղկման ժամանակաշրջան, սակայն ձեռագրերը մեզ չեն հասել, ուստի այդ դարերի գրչության կենտրոնի մասին շատ քիչ բան գիտենք: Բայց այլ վայրերում գրված մի շարք ձեռագրերից և հայ պատմագիրներից տեղեկանում ենք, որ այս ժամանակ արդեն մեծ հռչակ էր վայելում Հաղբատի դպրոցը, մատենադարանը՝ շնորհիվ Հովհաննես Սարկավագի, որի գործունեության շրջանում մեծ զարգացում ապրեց նաև Հաղբատի գրչության կենտրոնը: Նա ջանք չէր խնայում գտնելու թարգմանչագիր հին ձեռագրեր և դրանք սրբագրելու, լրացնելու և ընդօրինակելու: Դրա վառ ապացույցներն են Սաղմոսարանի և Կյուրեղ Երուսաղեմացու «Կոչումն ընծայության» գրքի ճշգրիտ օրինակները, որոնցից հետագա դարերում օգտվել են բազմաթիվ գրիչներ. «Ես՝ Յովհաննէս նըւստ Գառնեցի... ճանապարհ արարեալ գնացի ի մայրաքաղաքն մենաստանից ի Հաղբատ եւ գտի գթած ի թարգմանչացն սաղմոսարան, զոր առեալ վարդապետին /// Յովհաննու, որ Սարկաւագ կոչիր... Եւ նա սերմանեաց զայս ուղիղ եւ զուղորդ սաղմոս» (ՄՄ 5298, 2բ-3ա): Հետևաբար կարելի է վստահաբար ասել, որ այդ դարաշրջանում Հաղբատում ընդօրինակվել են տասնյակից ավելի ընտիր ձեռագրեր:

Հստ պատմիչներ Ստեփանոս Տարոնեցու, Սամուել Անեցու և այլոց՝ Հաղբատը հիմնադրվել է Սանահնից տաս տարի հետո, 976 թ., Աշոտ Գ Ողորմած թագավորի կնոջ՝ Խոսրովանու թագուհու ջանքերով: Ինչպես Սանահնում, այնպես էլ Հաղբատում միաբանություն հաստատվեց, որի անդամներն ապրում էին ըստ «կանոնին սահմանադրութեան Սրբոյն Բարսղի, որոց երկոցունց տեղեացն անուանք Հաղբատ և Սանահին հանդէպ միմեանց, միակրօնք ի տան Աստուծոյ՝ արանց 500-ից»¹:

Հաղբատի գրչության կենտրոնի պատմության մասին տեղեկանում ենք 999 թ. Սիմեոն գրչի ընդօրինակած «Մեկնութիւն թղթոյն Պօղոսի, Եփրեմի և Յովհաննու Ոսկեբերանի առաքելոյց» (Վնտկ. 953) ձեռագրի գլխավոր հիշատակարանից:

¹ Ստեփանոս վարդապետի Տարօնեցոյ, Պատմութիւն Տիեզերական, Փարիզ, 1859, էջ 167-168:

Միմեոն գրչին, սակայն, առաջին անգամ հանդիպում ենք Սանահնում, որտեղ 972 թ. ընդօրինակել է Բարսեղ Կեսարացու «Յաղագս ճգնավորաց» գիրքը: Այնուհետև նրան տեսնում ենք որպես Հաղբատի առաջին վանահայր. «Եւ առաջնորդ Սանահնի՝ Յովհաննէս գիտնական այրն Աստուծոյ, իսկ Հաղբատոյ՝ Միմէոն ճգնագգեաց ծառայն Քրիստոսի»²: Հայր Միմէոնի անվանը հանդիպում ենք նաև Հաղբատի Ս. Նշանի հյուսիսային պատի արձանագրութեան մեջ. «Ի Նն. (991) թևակ(անութեանս) Միմեոն հայր եւ Տիրանուն երեց շինեցար զեկեղեցիս փրկութեան Սիբատա եւ Գուրգենա»³: Ըստ Ա. Մաթևոսյանի՝ այս Տիրանուն երեցը վերոնշյալ ձեռագրի կազմող Տիրանունն է, ում Միմէոնը խնդրում է «անմոռաց ունել»⁴:

Ինչպես վերը նշեցինք, ձեռագիրն ընդօրինակվել է 999 թ. Հայոց Սարգիս Ա. կաթողիկոսի և Սենեքերիմի թագավորութեան օրոք «ձեռամբ Միմեոնի վարդապետի և նուաստ կրանաւորի»⁵: Սա համարվում է թղթյա երկրորդ հայկական հնագույն ձեռագիրը⁶. «Գրողն աղքատ քարտէս կոչէ, որպիսի հնութեամբ հայ գիր ի թղթի վերայ՝ ոչ գիտեմք այլուր յայտնեալ, և զի նորաձեւ իմն են և տառքն, զորս գրողն խոնարհութեամբ անհեղեղ գիր համարի»⁷:

Ձեռագրի ստացողը նույն Միմէոն գրիչն է, որը մանկությունից ցանկանում էր ունենալ եփրեմ Ասորու Հին ու Նոր կտակարանների մեկնությունը: Նա շատ ջանք է թափել, երկար ժամանակ տեղից-տեղ գնացել, և վերջապես գտել է այդ մեկնության ստույգ և հին օրինակը: Դրանով չբավարարվելով, նա զանազան տեղերից փնտրել-գտել է նաև Հովհան Ոսկեբերանի համառոտ մեկնությունը. «Եւ գրեցաւ գիրս տեառն եփրեմի՝ որպէս յառաջն ասացի՝ յԱղբագ գաւառի ի տանն Արծրունեաց, եւ զերկրորդ գիրքս՝ ի Կոգովիտ գաւառն՝ ի տանն Բագրատունեաց եպիսկոպոսարանի»⁸: Միմէոն գրիչն այն կտակել է իր սերունդներին. «զի նոր կտակ կարգեցի այնոցիկ, որք զկնի իմ վայելեն զսա և լուսաւորին: Բայց, ավաղ, թէ և յանգիտաց անկեալ ի ձեռս անարգաբար և ընդ վայր հարկանի... Այլ դու, ով այր դու Աստծո, գիտեայ զինչ է սա և ուսիր, և ծանիր զաշխատությունս իմ և մի ապախդ առնէր զվաստակդ իմ, զոր ձրի վայելես զկնի իմ»⁹:

² Նույն տեղում, էջ 168:

³ Կ. Ղաֆադարյան, Հաղբատ, Երևան, 1963, էջ 141-142:

⁴ Տե՛ս Ա. Մաթևոսյան, «Հաղբատի գրչության կենտրոնը», էջմիածին, 1971, էջ 44:

⁵ Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, յօրինեց Հ. Սահակ վրդ. Ճեմճեմեան, Բ. Ը., Վեներիկ, 1998, էջ 403-4:

⁶ Թղթյա առաջին հնագույն ձեռագիրն է ՄՄ 2679 (981 թ.):

⁷ Ղ. Ալիշան, Այրարատ բնաշխարհ Հայաստանեայց, Վեներիկ, 1890, էջ 497:

⁸ Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, Բ. Ը., էջ 405:

⁹ Նույն տեղում, էջ 406:

Ձեռագիրը, գրչությունից որոշ ժամանակ անց, հայտնվում է Անիի արքունի գանձարանում, որտեղ անուշադրության մատնված վիճակում այն գտնում է Սարգիս վարդապետը¹⁰ և թողում հիշատակագրություն. «Յամի յորում էր Հայ թուականս ՆՂ (1041) եւ վճարեցաւ ի մարդկանէ արքայն Հայոց մեծիմաստն Յովհաննէս, գտի ես՝ Սարգիս վարդապետ, զգիրս զայս յարքունական տան գանձուն, անգեալ յանկեան միում, անայցելու թափառեալ թաւալէր յաճին յատակին, եւ գրեթե լացի լռելեան, իսկ իմ հագեցեալ խնամով ի գրանոցին, եւ ըստ սովորական մեր ախորժակացս զյոքունս բացեալ ի բանսն բերկրեի եւ սա զատուցեալ յնկերացն կայի կարաւտ ձեռին առ ինքն կարկառելոյ, զոր ապա առեալ իմ ընդ իս տարա, հանել ի բանդէն: Արդ, մաղթեմ ձեզ ապագայիցդ աղաւթիւք զիս յիշեսջիք, որք ի գիրս յայս հայիք եւ վերձանէք»¹¹: Ապա, 1154 թ. ձեռագիրը ստանում է Գրիգոր Տուտեորդին և իր ձեռքով կազմում: 1378 թ. Աթանասն ու իր եղբայրը գնում են ձեռագիրը և Խաչատուր երեցի ձեռքով նվիրում Մեծ վարդապետ Հովհաննէս Որոտնեցուն. «որ ունի զվիճակս Հաղթատայ եւ է սպասաւոր սուրբ Նշանին... եւ զանարժան ծառայից ծառէս զԽաչատուր էրէցս, որ էս բարի բանիս միջնորդ եղայ, յիշեցէք ի Քրիստոս»¹²: Ժէ. դ. գրված մի այլ հիշատակարանից ենթագրում ենք, որ ձեռագիրն այդ ժամանակ գտնվել է Թադեոս առաքյալի վանքում. «Իգնատիոս նուաստ ոգի, մեղօք լցեալս Յամթեցի, եկի ի վանքն սրբազանի, Առաքելոյն Թադէոսի, ի ծառայութիւն իմոյ վեհի, Իսահակայ վարդապետի»¹³: Այսպիսով, երկար դեգերումներից և բազում նշանավոր տերեր ունենալուց հետո, ձեռագիրն իր վերջին հանգրվանն է գտնում Վենետիկի Մատենադարանում:

Կարինեան ցուցակում 1535 թվահամարի տակ մի հնագույն Շարակնոցի մասին գտնում ենք հետևյալ գրությունը. «Գրեալ ի մագաղաթի ի վանս Հաղթատայ ի Հայրապետութեան Պետրոսի Ա. Գետադարձ կաթողիկոսի, ի Յովհաննէս գրչէ ի թուին Հայոց ՆԿԸ-1019, ունի զյիշատակարան»¹⁴: Կարինեան ցուցակի այս համարը համապատասխանում է արդի ՄՄ 1577 ձեռագրին (ԺԳ դ.): էջմիածնի մատենադարանում օգտագործվող այս նույն ցուցակի օրինակի միևնույն էջի լուսանցքում Սահակ վարդապետ Ամատունին տվել է հետևյալ ծանոթագրությունը. «Ծայրէ ծայր յիշեալ Շարականը շրջեցի, թերթեցի, բայց և այնպէս չգտայ ո՛չ Պետրոս Գետադարձ հայրապետի անունը և ո՛չ ՆԿԸ թուա-

¹⁰ Սարգիս վարդապետ Անեցին եղել է ԺԱ. դ. Անիի կաթողիկոսարանի նշանավոր վարդապետներից մեկը, մատենադարանապետը, Գրիգոր Մագիստրոսի ուսումնակիցն ու բարեկամը (տե՛ս Կ. Մաքևոյան, *Անի*, էջմիածին, 1997, էջ 45, 113):

¹¹ *Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ*, հ. Ը., էջ 407:

¹² Նույն տեղում, էջ 408:

¹³ Նույն տեղում:

¹⁴ Գ. Շահնազարեան, *Մայր ցուցակ ձեռագիր մատենից գրադարանի Սրբոյ Աթոռոյն էջմիածնի, Թիֆլիս*, 1868, էջ 174:

կանը, որի մասին պետք է ենթադրել կամ այսպիսի Շարական եղել է, սակայն ժամանակին փոխարինուել է սորա հետ, և կամ թէ ցուցակ կազմողի սխալանց արդիւնք է դա»¹⁵:

Ներսէս վրդ. Տեր-Միքայելյանը նույնպես եկել է այն եզրահանգման, որ 1019 թ. գրված ձեռագիրը չի կարող լինել ՄՄ 1577, և որ կա՛մ այդպիսի ձեռագիր եղել է Կարինեան ցուցակը կազմելու ժամանակ, բայց մի քանի տարի հետո կորել է և փոխարինվել մեկ այլ Շարակնոցով և կա՛մ, ինչը հողվածի հեղինակն ավելի հավանական է համարում, շփոթմունք է եղել և այդպիսի հնագույն Շարակնոց չի եղել¹⁶: Մենք հակված ենք այն կարծիքին, որ այդպիսի ձեռագիր եղել է, և ինչ-ինչ պատճառներով անհետացել, այլապես Կարինեան ցուցակի կազմողը չէր կարող հորինել գրչության թվականը, ընդօրինակության վայրը և Պետրոս Գետադարձի ու գրչի անունները:

Արդեն ԺԲ դ. Հաղբատը հայտնի էր իր մեծ գրադարանով, ուր կարելի էր գտնել տարբեր բովանդակության ձեռագրեր: 1173 թ. Բարսեղ Կեսարացու ճառերն ընդօրինակած Սարգիս գրիչը հետևյալն է գրում. «քանզի թէ յանփոյթ առնելոյ առաջնոյն և թէ ի չպատահելոյ ժամու դիտաւորի, ոչ գրեալ և ոչ ստացեալ ումեք զայս գիրս, ամենափարթամ գանձարանս այսմ ուխտի ոչ ունէր զսա, որոյ թերութիւն զիւրն խնդրէր լրումն»¹⁷:

ԺԲ. դ. Հաղբատի գրչության կենտրոնից մեզ է հասել մոտ վեց ձեռագիր՝ ՄՄ 777, ՄՄ 2606, ՄՄ 5602, Վնտկ. 251, Վնտկ. 352 և Վնտկ. 452:

Վնտկ. 251 ձեռագրի գրչության թվականը ցուցակում դրված է ԺԲ. դ. (1169-1173 թթ. ընթացքում)¹⁸: Սարգիս գրիչը Հաղբատում ընդօրինակել է Բարսեղ Կեսարացու ճառերը: Նրա մասին կենսագրական տվյալներ չկան, բացի նրանից, որ եղել է Հաղբատի վանքի միաբան: Նա իրեն կոչում է «նուաստ գրիչ և տխմար և յետին աշակերտի եկեղեցւոյ սրբոյ ուխտիս»՝ խնդրելով. «չլինել մեղադիր տգիտութեան իմոյ և յիշատակի թերեւս արժանի համարել զիս»¹⁹: Այդ ժամանակ վանքի վանահայրն էր Բարսեղ արքեպիսկոպոսը, որն «ըստ կանխանկատ գիտութեան վերնոյ դիտմանն՝ եկեալ ի գաւառէն Խաչենոյ, եղև ըստ աջողելոյ Հոգւոյն Աստուծոյ վերատեսուչ համայն քրիստոնեից Հայոց»²⁰, իսկ կաթողիկոսը՝ Ներսես Շնորհալին (հետևաբար ձեռագիրը ստեղծվել

¹⁵ Ներսէս վրդ. Տեր-Միքայելյան, «Էջմիածնի Մատենադարանի հնագույն ձեռագիր շարականները», *Արարատ*, 1909 (10-11), էջ 866:

¹⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 864-872:

¹⁷ Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ Ե-ԺԲ դդ., էջ 207:

¹⁸ Ըստ Հ. Ահաոյանի՝ ձեռագիրն ընդօրինակվել է 1172 թ., տե՛ս Հ. Ահաոյան, *Հայոց անձնանունների բառարան*, հ. Ա, Երևան, 1942, էջ 395:

¹⁹ Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանի Մխիթարեանց ի Վենետիկ, հ. Բ., յօրինեց Հ. Բարսեղ վ. Սարգսեան, Վենետիկ, 1924, էջ 1268:

²⁰ նույն տեղում, էջ 1267:

է մինչև նրա մահը՝ 1173 թ.): Ձեռագիրը ընդօրինակվել է Բարսեղ եպիսկոպոսի պատվերով, հիշատակվում է նաև կազմողի՝ Հովսեփ վարդապետի անունը:

ԺԲ. դ. Հաղբատի նշանավոր վարդապետներից է Դավիթ Քոբայրեցին: Նա հեղինակ է մի շարք գործերի (մեկնություններ, լուծմունքներ և այլն), աշակերտն է եղել Վարդան Հաղբատեցու և Պետրոս վարդապետի: Նրա ծննդյան և մահվան թվականները հայտնի չեն: Ըստ Լ. Մելիքսեթ-Քեկի՝ նա մահկանացուն կնքել է Լոռու ժողովից առաջ. «Ուրեմն՝ 1205 թվականը համոզված կարելի է ընդունել իբրև նրա մահվան թվական»²¹: Թաղված է Հաղբատում:

Մաշտոցի անվան Մատենադարանում է պահվում Դավիթ Քոբայրեցու երկու ձեռագիր, որոնցից մեկի (ՄՄ 5602) հեղինակն ու գրիչն է նա: Բնագիրն է «Մեկնություն ճառից Գրիգորի Աստուածաբանի եւ Գրիգորի Նիւսացույց»: Ձեռագիրը գրվել է 1178 թ., գրչության վայրը, ինչպես Գարեգին Հովսեփյանն է ենթադրում. «պետք է լինի Հաղբատում, յամենայն դէպս Լոռուում»²²:

Դավիթ Քոբայրեցու երկրորդ ձեռագիրը (ՄՄ 2606) Մխիթար Գոշի «Մեկնություն մարգարեությունների» գործն է, ընդօրինակել է 1198 թ., հավանաբար Հաղբատում²³: Ձեռագրի առաջին գրիչը Առաքյալն է, ապա շարունակել է Դավիթ Քոբայրեցին. «զի անպարապ եղեալ իմոյ անձին ի ժամանել եւ գրոշմել զսա, այլ եւ այլ ոմն տխմարաց ետու գծել եւ ապաշաւ ունիմ, թեպէտ եւ ուղղեցի յետոյ: Արդ, որք ընդարիւնակէք, ընդ ախմարացն գիծս զգուշութեամբ հայեցարո՛ւք եւ ուղղեցէ՛ք՝ զոր ինչ սխալ գտանի»²⁴:

1195 թ. Խաչատուր աբեղան Հաղբատում ընդօրինակել է մի ձեռագիր՝ Վնտկ. 452²⁵: Նա Հաղբատի միաբան էր, Վարդան Հաղբատեցու աշակերտը, որի վարքը համառոտ ներկայացնում է հիշատակարանում: Ձեռագրի նախագաղափար օրինակը նա վերցրել էր Դավիթ վարդապետից²⁶ և շարադրել «ի շահ աւգտութեան մանկանց եկեղեցոյց», անարվեստ և անվարժ գրով, «զի սէր փափագանացս ստիպեալ հարկեցոյց զիս եւ կարիս առաւել յորդորեաց, մանաւանդ համբաւ իմաստիցն Եփրեմի, որ ոչ միայն ինձ, այլ եւ ամենեցուն է

²¹ Ասոն Մելիքսեթ-Քեկ, «Վարդապետք Հայոց հիւսիսային կողմանց» և նրանց ինքնությունը, Ս. էջմիածին, 2016, էջ 196:

²² Գարեգին Ա. կաթողիկոս, Յիշատակարանք Ձեռագրաց, Կ. Ա, Անթիլիաս, էջ 469:

²³ Տե՛ս Ա. Մաթևոսյան, Հաղբատի գրչության կենտրոնը, էջ 46:

²⁴ Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, Կ. Ը, խմբագրութեամբ Գեորգ Տէր-Վարդանեանի, Երևան, 2013, էջ 682:

²⁵ Ձեռագիրը բովանդակում է եփրեմ Ասորու գործերը, մինչև 1714 թ. գտնվել է Հաղբատում, այնուհետև 1831 թ. եփրեմ վրդ. Սենթեանցն այն ուղարկել է Վենետիկ:

²⁶ Ըստ Անատյանի՝ սա Դավիթ Քոբայրեցին է, որը Հաղբատում ունեցել է Խաչատուր անունով աշակերտ. տե՛ս Հ. Անատյան, Հայոց Աձնանունների բառարան, Կ. Բ, Երևան, 1944, էջ 40:

ցանկալի, առաջնոցն եւ վերջնոց, որ եւ այժմս են»²⁷: Մեկ այլ տեղում գրիչը դժգոհում է նյութից. «գրեցի գիրս զայս խոշոր եւ անյարմար՝ յանպիտան նիւթի», ինչպես նաև «Գիրս խոշոր է, նիւթս տկար, գրաւղս ապիկար, ձեռնս անկար, միտքս խաւար ու լոյս չտայր»²⁸: Որպես իր հոգևոր հայր հիշատակում է Պետրոս ծերունուն, ինչպես նաև իր ուսումնակից և հոգևոր եղբայրներին՝ Սարգսին, Հովսեփին և Միքայելին:

Մեկ այլ ձեռագիր (Ժողովածու, Վնտկ. 352), ընդօրինակվել է Հաղբատում ժԲ դարում²⁹: Գրչության թվականն անհայտ է, սակայն քանի որ տեր Բարսեղը առաջնորդ է եղել 1173-1189 թթ. ընթացքում և գիրն էլ հին բոլորգիր է, Ա. Մաթևոսյանը հիշատակարանը զետեղել է ժԲ դարի բաժնում³⁰: Ընդօրինակողն է Գրիգոր գրիչը՝ Հաղբատի առաջնորդ տեր Բարսեղի օրոք: Նա նաև ստացողն է, որ բազում փնտրտուքներով գտել և ի մի է հավաքել սուրբգրային մեկնությունները. «սկիզբն արարուք զԱրարածոց մեկնութիւնն, զոր ոմն ի վարդապետաց եկեղեցւոյ համառոտեալ էր: Ընդ նմին եւ զՂեւտականն... զի այլ լաւ ոչ գտաք արինակ, զի թեպէտեւ շատ ի խնդիր եղաք»³¹: Ձեռագիրը Հաղբատավանքի աշակերտների համար դասագիրք է ծառայել:

ԺԲ դարից մեզ է հասել մեկ այլ ձեռագիր ևս՝ ՄՄ 777, որի գրչության վայրը Ա. Մաթևոսյանը համարում է Հաղբատը³²: Ժողովածու է, որ բովանդակում է մասնավորապես Հովհաննես Սարկավագի գործերը: Գրիչն անհայտ է, հավանաբար՝ ուխտի միաբան: Գրչից մեզ է հասել հետևյալ հիշատակարանը. «Այս բանք քերդողականք ասացեալ մեծի պուէտիկոսին Սարկաւագին, որ ի տիեզերահոչակ ուխտին Հաղբատ, գտի ես նուաստ ոմն ի մանկունս եկեղեցւոյ: Արդ, մի՛ ոք յանդգնեալ իշխեսցէ յաւելուլ կամ պակասեցուցանել ի բանից կամ ի տանց եւ յարուեստից, զի եւ մեք ոչ իշխեսցաք յաւելուլ եւ պակասեցուցանել՝ զոր ինքնին իւրով ձեռամբն գրեալ էր: Եւ ըստ այսմ արինակի էր կտակն, յորում էր սա, սկիզբն եւ կատարածն եղծեալ: Եթե գտցես ուրեք՝ զբովանդակն գրեա եւ զմեզ յիշեա ի Տէր»³³:

²⁷ Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, Բ. Ը, յօրինեց Ս. Ճեմճեմեան, Վեներիկ, 1998, էջ 252:

²⁸ Նույն տեղում, էջ 253:

²⁹ Ձեռագիրը 1858 թ. բերվել է Սուրբ Ղազար Ներսես վրդ. Սարգիսեանի ձեռքով:

³⁰ Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ Ե-ԺԲ դդ., էջ 315:

³¹ Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանի Մխիթարեանց ի Վենետիկ, Բ. Ը, յօրինեց Ս. Ճեմճեմեան, Վեներիկ, 1996, էջ 126:

³² Տե՛ս Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ Ե-ԺԲ դդ., էջ 322:

³³ Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, Բ. Գ, կազմեց՝ Ս. Եգանեան, Երևան, 2007, էջ 684:

Հաղբատի գրչութեան կենտրոնը ժ. Գ. դ.

ժ. Գ. դ. կարելի է համարել Հաղբատի գրչութեան կենտրոնի համար լավագույն ժամանակաշրջաններից մեկը, որից մեզ համեմատաբար շատ մոտ տասն ձեռագիր է հասել՝ ընդօրինակված 1207-1296 թթ.:

ժ. Գ. դ. Հաղբատում ընդօրինակվել է մի Շարակնոց՝ ՄՄ 1577, Հովհաննես գրչի ձեռամբ, ուխտի առաջնորդ տեր Աստվածատուր արքեպիսկոպոսի օրոք: Հիշատակարանում թվականի տեղը բաց է թողնված: Ոսկեանն այն թվագրում է 1283 թ.³⁴: Հայտնի են Հովհաննես գրչի ծնողների՝ հոր՝ Սայինի, մոր՝ Նուխի, եղբայրների՝ Սամուելի, Մանուելի, Հովհաննեսի, եղբորորդու՝ տեր Բարդուղիմեոս նորընծա արքեպիսկոպոսի, որ ձեռագրի ստացողն է, նրա եղբայրների՝ Կարապետի և Հերապետի և իրենց մոր՝ Հոռոմոսի անունները: Հիշատակում են վանքի միաբանների անունները. տեր Դանիել վարպետ, տեր Մարտիրոս, տեր Գրիգոր, տեր Մանուել, տեր Մկրտիչ, տեր Խաչատուր, տեր Կարապետ եկեղեցապանի, Հովհաննես գրչի աշակերտ տեր Ներսես և այլք:

ՄՄ 194 ձեռագիրը՝ «Մասունք Աստուածաշնչի», ընդօրինակվել է 1207 թ. Հաղբատում³⁵: Գրիչն Առաքել քահանան է, ստացողը՝ Յունան քահանան: Գրչի մասին կենսագրական տվյալներ չկան, միայն հայտնի է, որ սպասավորել է Հաղբատի վանքում Հովհաննեսի առաջնորդության օրոք. «Գրեցաւ խոշորագիր գրով գիրքս այս ձեռամբ նուստ եւ ամենամեղ քահանայի Առաքելոյ ի սուրբ եւ ի հոշակաւոր ուխտս ... (քերուած՝ «Հաղբատ»), ընդ հովանեաւ Սրբոյ Նշանիս եւ մարտ լուսոյ Կաթողիկէի, // (254ա) յառաջնորդութեան սուրբ հայրապետիս մերո տեառն Յոհանիսի, ի թուիս Հայոց ՈԾՁ (1207)»: Ձեռագիրը ընդօրինակել է ստույգ և ճշգրիտ օրինակից. «Թեպէտ և ես ախմար էի, զի ոչ մտահաճութեամբ է ընտրեալ, այլ ի բազում աւրինակաց ընտրեալ և վկայեալ ի գիտնականաց եկեղեցւոյ»³⁶, 254ա թերթում մանր գրով ավելացնում է գրիչը: Ստացողը Հունան քահանան է, որը խնդրում է հիշել իր ծնողներին և եղբայրներին: 1209 թ. նրա պատվերով ձեռագիրը կազմել է Սուքիասը³⁷:

³⁴ Հ. Ոսկեան, Գուգարքի վանքեր, Վիեննա, 1960, էջ 231:

³⁵ Գրչութեան վայրը ջնջված է, և Ա. Մաթևոսյանը ձեռագրի գրչակենտրոն է համարում Հաղբատը:

³⁶ Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Ա., կազմեցին՝ Օ. Եգանեան, Ա. Զեյթունեան, Փ. Անթարջան, Երևան, 1984, էջ 835:

³⁷ Հետագայում ձեռագիրը մի քանի ստացող է ունեցել: 1332 թ. այն ստանում է Գաստակերտի սուրբ ուխտի միաբան Սարգիս արեղան և նվիրում սուրբ Ստեփաննոս Նախավկայի ուխտին: Հիշատակարանում հիշատակվում է Սարգիս արեղայի հորեղբոր՝ Գրիգոր ֆանանայի և իր եղբայրների՝ Խոնգաղեղի և Սիրականի անունները: Հետագայում Տիմոթեոսը ձեռագիրը նորից նվիրում է Հաղբատի վանքին, որտեղ մնացել է հավանաբար մինչև 1720 թ., ապա բերվել Սբ. էջմիածին:

Հաջորդ ձեռագիրը, որ ընդօրինակվել է 1211 թ., Հաղբատի նշանավոր Ավետարանն է³⁸ (ՄՄ 6288): Գրիչը Հակոբն է, նրա մասին կենսագրական տվյալներ չկան: Նա մի քանի փոքրիկ հիշատակություններ է թողել, որոնցից մեկում դժգոհում է ցրտից՝ «Մ, հոր ցուրտս նեղեաց»³⁹, մյուսում հիշատակում է Սահակ ստացողի անունը, որն աշակերտել է Հաղբատի վանքում. ծնունդով Անի քաղաքից՝ Ռովմանոսի և Կատայի որդին, նրա եղբայրներն էին Իպատոսն ու Առաքելը: Հիշատակվում են նաև Սահակի հոգևոր ծնողի՝ Սարգսի, ինչպես նաև Հակոբոսի ու Վարդի անունները, որոնք, հավանաբար, Հաղբատի միաբաններից են եղել: Ձեռագիրը գրվել է Հաղբատի առաջնորդ Հովհաննեսի, Հայոց Լևոն Բ թագավորի, Վրաց Գեորգի թագավորի ու Զաքարեի սպարապետության օրոք. «յորոց յաւուրս ժամանակաց յոլովս կատարեաց Աստուած յաղթութիւն ի բազում տեղիս»⁴⁰:

Հիշատակարանից կարելի է ենթադրել, որ Սահակ ստացողը ձեռագիրը նվիրել է իրենց ընտանիքի կառուցած Արջուառճի սուրբ ուխտին. «զբովանդակ գոյք ծնողաց մերոց և եղբարց ծախեցաք և շինեցաք զաստուածաբնակ սուրբ եկեղեցիքս մերոց, և աւանդեցաք զսուրբ Աւետարանս յԱստուծոյ սուրբ եկեղեցիս, որ շինեցաւ ի մէնջ ի վանս Արջուառճի, որպէսզի սուրբ եկեղեցաւս և սուրբ Աւետարանաւս մեք և ծնաւղքն մեր և եղբարք և ազգականաք զտաք ողորմութիւն է Քրիստոսէ Աստուծոյ մերոյ»⁴¹:

Ձեռագրում բազմաթիվ հիշատակագրություններ են թողել Մարգարե ծաղկողը, Հովհաննեսը և Մխիթար Քոբայրեցիները. վերջինս որոշ սրբագրումներ է արել բնագրի մեջ և լուսանցքներում լրացնելով գրչի աչքից վրիպած բառերը. «զՄխիթար Քոբայրեցի յիշեա ի Քրիստոս, աղաչեմ, զուղղիչ»⁴²:

Ձեռագիրը կազմել է Հոռոմոսի վանքում Աբրահամը «հրամանաւ հաւր Մխիթարայ»⁴³:

³⁸ Ձեռագիրը նշանավոր է իր մանրանկարներով՝ երկու տերունական, չորս ավետարանիչների մանրանկարներ, տասը խորան, կիսախորաններ, լուսանցազարդեր: Ձեռագիրը Արջուառճի ուխտում երկար չի մնում: 1223 թ. Սարգիս Բ Բագրատունի և Մխիթարը գնում են Ավետարանը և ընծայում Գանձասարի Մեծկողմանց եպիսկոպոսարանին, որտեղ այն մնում է երկար ժամանակ: 1323 թ. տեղի վանականը գնում է հնացած և մաշված Ավետարանը և կազմել տալիս Ստեփաննոս Բ Բագրատունիին: 1383 թ. ձեռագիրը Մովսես Բ Բագրատունիի ջանքերով նորից կազմվում և նորոգվում է Սարգիս Բ Բագրատունիի կողմից: Մեկ այլ հիշատակարանի համաձայն՝ 1497 թ. պարոն Ուլախաթունը հնացած ձեռագիրը կրկին նորոգել է տալիս Տիրավախին:

³⁹ ԺԳ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, կազմեց Ա. Մաթևոսյանը, Երևան, 1984, էջ 68:

⁴⁰ Նույն տեղում., էջ 71:

⁴¹ Նույն տեղում:

⁴² Նույն տեղում, էջ 68:

⁴³ Նույն տեղում, էջ 72:

Հաղբատի Ավետարանը հատկապես նշանավոր է իր մանրանկարներով: Ձեռագիրը նկարազարդվել է Անիի Բեխենց վանքում Մարգարեի ձեռքով (իր վանահայր եղբայրիկին նա պատկերել է խորաններից մեկի լուսանցքում), որը նաև լրացումներ է կատարել ձեռագրում ու մի շարք հիշատակարաններ թողել, ուստի և իրեն անվանում է գրիչ և մանրանկարիչ⁴⁴:

Վնտկ. 5 ձեռագիրը Տոնապատճառ է, ընդօրինակվել է 1218 թ. Հաղբատի վանքում: Գրիչն իր մասին կենսագրական տեղեկություններ չի հաղորդում, միայն հայտնում է, որ քահանա է, և խնդրում շնորհադրել իրեն «խոշորագրութեան», այսինքն՝ անփույթ գրի և սխալների համար, քանզի. «անվարժ էի այսմ արհեստ»⁴⁵, իսկ մի այլ տեղ՝ «Իսկ ես որչափ կարացի, շարագրել ջանացի»⁴⁶: Բացի հիմնական հիշատակարանից, գրիչը թողել է մի շարք հիշատակագրություններ. «Աւաղ կորուծիւն մտացս, զի պակասեաց բանս»⁴⁷, «Ողորմեա Տէր Յիսուս տուողի դեղոյս»⁴⁸, հիշատակում է նաև այդ օրը մահացած ոմն սարկավագի, ինչպես նաև ստացողներ Ստեփանոս վարդապետին և նրա եղբայր Սարգսին: Գրչութեան աշխատանքներին իր օժանդակությունն է բերել նաև Սարգիս վարդապետը. «Ես՝ Սարգիս վարդապետս, որ մեծաւ աշխատութեամբ հաւաքեցի զսա»⁴⁹, հավանաբար սա վերոնշյալ Ստեփանոսի եղբայր Սարգիսն է:

Գլխավոր հիշատակարանից տեղեկանում ենք, որ ձեռագիրը ընդօրինակվել է Հաղբատի առաջնորդ Հովհաննեսի օրոք և Իվանեի սպարապետության ժամանակ: Հայտնի է նաև, որ ձեռագրի ստացող Ստեփանոսը և նրա եղբայր Սարգիսը եղել են Իգնատիոս վարդապետի աշակերտները «սնեալ եւ վարժեալ առ ոտս սրբոյ Նշանիս Հաղբատայ»⁵⁰:

Հաջորդ ձեռագիրը ժողովածու է (ՄՄ 1912), ընդօրինակվել է 1220 թ. Հաղբատում⁵¹ երեք գրիչների ձեռքով, ուխտի առաջնորդ Հովհաննեսի ժամանակ⁵²: Առաջին մասի գրիչը (1ա-203բ) Մխիթարն է: Նրա մասին կենսագրա-

⁴⁴ Նույն տեղում, էջ 70:

⁴⁵ Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, Կ. է, յօրինեց Ս. Ճեմճեմեան, Վենետիկ, Ս. Ղազար, 1996, էջ 13:

⁴⁶ Նույն տեղում, էջ 14:

⁴⁷ Նույն տեղում:

⁴⁸ Նույն տեղում, էջ 13:

⁴⁹ Նույն տեղում, էջ 16:

⁵⁰ Նույն տեղում:

⁵¹ Բաղկացած է Ա և Բ ձեռագրերից, երկուսի գրչության վայրն էլ Գ. Հովսեփյանը ենթադրաբար համարում է Հաղբատը, գրիչներին էլ ժամանակակից (Գ. Հովսեփյան, *Յիշատակարան ձեռագրաց*, Կ. Ա, Անթիլիաս, 1951, էջ 810): Ա. Մաթևոսյանը նույնպես, հետևելով Հովսեփյանին, գրչության վայրը համարում է Հաղբատը (*ԺԳ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ*, էջ 124):

⁵² Այս թվականին Հաղբատի վանքի վանահայր է հիշատակվում Հովհաննես Բ Խաչենցին:

կան տվյալներ չկան, հիշատակվում են միայն Սարգիս քահանայի, Մկրտիչի և Բռնավորի անունները: Երկրորդ մասի⁵³ գրիչներն են Մարտիրոսը (204ա-273բ) և Կիրակոս փրկիստփան (274ա-324բ)⁵⁴: Մարտիրոս գրչի մասին նույնպես կենսագրական տվյալներ չկան. հայտնի է միայն նրա հորեղբոր՝ Սահակի անունը: Ձեռագրում հիշատակվում են նաև տեր Հովհաննեսի, նրա եղբոր՝ Վարդապետի, ոմն Կէրիոյնի անունները: ԺԸ դարում խաչատուր երեցը հավաքել է ձեռագրերը և կազմել լրացնելով պակաս մասերը:

Հաղբատում 1243 թ. ընդօրինակվել է նաև Դավիթ Անհաղթի «Սահմանք Իմաստասիրութեան» գործը (ՄՄ 1747): Գրիչն է Հովհաննես կրոնավորը, պատվիրատուն Հաղբատի սպասավոր. «գաստուածաշնորհ» և «պատուական վարդապետ»⁵⁵ Պետրոսն է, որը նաև հանդես է գալիս որպես ձեռագրի կազմող:

Հաղբատում 1252 թ. ընդօրինակված մեկ այլ ձեռագրի հիշատակարան պահվում է Եղմ. 3851 ձեռագրում⁵⁶: Ձեռագիրը բովանդակում է Հովհաննես Ավետարանչի Հայտնությունը, գրիչը Վարդանն է: Պատվիրատուն՝ Սարգիսը, որն ընդօրինակել է տվել նաև «զպատմութիւն զդարձ գերութեան անուանի եւ մեծագար ամենագով եւ աստուածունակ կենսակիր Սուրբ Նշանին»⁵⁷: Ձեռագիրը ընդօրինակվել է Հայոց Կոստանդին Ա. կաթողիկոսի և Հաղբատի առաջնորդ Համազասպի օրոք՝ ի հիշատակ Սարգսի, իր ծնողների և եղբայրների, ինչպես նաև իր որդի Սուքիասի:

Հաղբատի հետ է կապված Վարդան Արևելցու անունը: Ուսումնասիրողները կարծում են, որ նա պետք է ծնված լինի 1197-1200 թթ. ոչ ուշ, հավանաբար Գանձակում, և մահացած՝ 1265-1271 թթ. միջև: Ըստ Օրմանյանի՝ Վարդան Արևելցին մահացել է 1271 թ. և թաղվել Հաղբատում⁵⁸, սակայն Վարդանի աշակերտ Տիրացու գրիչը 1267 թ. ընդօրինակված ձեռագրում հիշատակում է նրան որպես արդեն մահացածի. «Հոգւոյն երջանիկ հայր(ն) մեր եւ հասարակաց՝ Վարդան վարդապետն (՞) յառաջին հեղինակացն ի մերումս բացափայ-

⁵³ Բ ձեռագիրը բովանդակում է Տարոնի պատմությունը և Հայ ժողովրդի պատմության տարբեր դրվագներից հատվածներ:

⁵⁴ Գ. Հովսեփյանն այս երկու գրիչների միմյանց ժամանակակից լինելը փաստում է նաև նրանով, որ Մարտիրոսի ձեռքով գրված Հովհան Մամիկոնյանի պատմության մի հատվածն էլ գրված է Կիրակոսի ձեռքով, մինչդեռ այդ հատվածի նախընթաց և հետընթաց մասերը Մարտիրոսինն են (Գ. Հովսեփյան, նշվ. աշխ., էջ 810):

⁵⁵ Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Ե, կազմեց Ս. Եգանեանը, Երևան, 2009, էջ 1074:

⁵⁶ Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Յակոբեանց, հտ. 11, կզմ. Նորայր արքեպս. Պողոսեան, Երուսաղէմ, տպ. Սբ. Յակոբեանց, 1991, էջ 294-295: Ձեռագիրը բովանդակում է Տրապիզոնի գյուղերի ու վիհակների նկարագրությունը, որտեղ տեղ է գտել նաև Հաղբատում ընդօրինակված այս ձեռագրի համառոտ նկարագրությունը և հիշատակարանը:

⁵⁷ Նույն տեղում, էջ 295:

⁵⁸ Տէ՛ս Մ. Օրմանյան, Ազգապատում, հ. Բ, գլուխ 1146:

լեալ ժամանակի, յամենեցունց ոգիս արեգակածագ փայլմամբն շողիւք լուսաւորել՝ ըստ բացման աշաց եւ ականջաց ներքին մարդոյն՝ արանց միանգամայն եւ կանանց, մեծաց եւ փոքր(ո)ւնց, եկեղեցականաց եւ աշխարհականաց, եւ ամենայն չափու հասակի, նաեւ աւտար ա[զգ]եաց եւս: Եւ այսպէս երկար ժամանակ ի ծերութիւն հասե(ա)լ պայ[մա]ն բարի քաղաքաւարութեամբ կեցեալ՝ ըստ կամացն Աստուծոյ՝ ի զարդ [եկեղեց]ո եւ պարծանս ուղղափառ հաւատացելոց, փոխեց դ (՞) եկեղեցականաց հանգիստն արդարոց. յիշատակ նորա արհնութեամբ եղիցի առաջի Աստուծոյ» (ՄՄ 4139, 488բ):

1265 թ. Հաղբատում Վարդան Արևելցին Կիրակոս վարդապետի պատվերով գրել է «Մեկնութիւն Երգո երգոյս»՝ հայոց Կոստանդին Ա. կաթողիկոսի, Հեթում արքայի և վանքի առաջնորդ տեր Հովհաննեսի օրոք⁵⁹:

ՄՄ 2604 ձեռագրի հիշատակարանից տեղեկանում ենք, որ 1295 թ. Հաղբատի առաջնորդ տեր Հովհաննեսը սրբագրել է Վարդան Արևելցու «Մեկնութիւն Հնգամատենի» գործը, իսկ նրա եղբորորդի Սարգիս քահանան «որ ի վարժ կր[թութեան] բանի է պարապեալ»⁶⁰, գրչին է շնորհել այդ ձեռագրի օրինակը:

Հաղբատից մեզ հասած հաջորդ ձեռագիրը Վարդան Արևելցու Տոնապատճառն է՝ ՄՄ 4139 (1267 թ.): Գրիչներն են՝ Հովսեփը և Տիրացուն⁶¹: Հովսեփ գրչի մասին կենսագրական տվյալներ չկան, միայն Տիրացու գրչի հիշատակարանում պահպանվել է հետևյալը. «զորդիացեալ եղբայրն իմ և զհոգեշնորհ զՅովսէփ մանուկ տիւք և սուրբ զարիւք (՞), որ զառաջնաբաժին գրոցս աշխատեալ գրեաց, յիշեցէք ի Տէր» (ՄՄ 4139, 280բ), մի այլ տեղում՝ «աշխատող գրոցս և զհոգոյ եղբայրն իմ Յոսէփ» (ՄՄ 4139, 438): Տիրացու գրիչը Վարդան Արևելցու աշակերտն էր, ծնունդով Վանանդ գավառից, գրչությամբ էր զբաղվել նաև Խոր Վիրապում, Հաղբատ էր եկել Հովհաննես հռետորի առաջնորդության օրոք: Համառոտ կերպով ներկայացրել է իր ուսուցչի վարքը (նա ընդօրինակել է նաև ՄՄ 1119, ՄՄ 1190, նոր Զուղայի 358 ձեռագրերը): Հիշատակարանում պահպանվել են Կաղաբերի և Մուլուքի անունները, որպես. «եկեղեցա-

⁵⁹ Հիշատակարանի նախագաղափար օրինակը պահպանվել է ՄՄ 1419 և ՄՄ 4834 ձեռագրերում:

⁶⁰ Ժե դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, էջ 310:

⁶¹ Մատենադարանի համառոտ ձեռագրացուցակում (Յուզակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, կազմեցին՝ Օ Եգանյան, Ա. Զեյթունյան, Փ. Անթարյան, հ. Ա. Երևան, 1965, էջ 1156) Հովսեփ և Տիրացու գրիչներից բացի կա նաև երրորդ Գրիգոր գրչի անունը: Հավանաբար ցուցակի հեղինակները Գրիգորի անունը գրելիս հիմնվել են հետևյալ երկու հիշատակարանների վրա. 386ա «Յիշեա ի Տէր գյոզնամեղ գր[իչս] աղաչեմ» և 438ա «Յիշեա ի Տէր գաշխատող գր[ոցս] և զհոգոյ եղբայրն իմ Յոսէփ», որտեղ գր[իչս] և գր[ոցս] բառերը Գրիգոր են կարդացել: Հովսեփ գրիչը գրել է մինչև 134բ թերթը, և մինչև վերջ շարունակել Տիրացուն:

սէրք, աղքատասէրք և աւտարասէրք, այլեւ պատւիրանապահ՝ Աստուծոյ... արժանի յիշատակման եւ արժանի ողորմութեան եւ աւրհնութեան Աստուծոյ»⁶²:

1281 թ. Հաղբատում ընդօրինակվել է մի ժողովածու (ՄՄ 1324), որի գրիչներն են Հովհաննեսը, Բարսեղը և Աբրահամը: Հովհաննեսի մասին կենսագրական տվյալներ չկան, միայն հայտնում է, որ ծեր է, տկար, աչքի լույսը պակասած, իսկ մեկ այլ հիշատակարանում «յոյժ հեղիմ յաւրինակէս եւ այն զի պակասել ի լուսոյ եւ տկար մարմնով եւ անցեալ զաւուրբք» (ՄՄ 1324, 202բ):

Ձեռագրի հաշորդ գրիչն ու ստացողը Բարսեղ վարդապետն է, որն իր գիրը համարում է «խոշոր և անյարմար»⁶³: Ի հիշատակ Բարսեղ վարդապետի՝ Սբ. Բարսեղ Կեսարացու տոնի օրը ուխտի միաբանները պարտավորվում են անխափան պատարագ մատուցել: Հայտնի են նաև Բարսեղ վարդապետի եղբոր՝ Գոգիկի, ինչպես նաև Սահակի, Մարկոսի, Աբրահամի, Սարգսի և Դավթի անունները: Ձեռագրի վերջին մասի գրիչն Աբրահամն է: Նրա հետ հիշատակվում է նաև ոմն Վարդան, ով «շատ սպասաւորութիւն արար»⁶⁴:

Հետագայի հիշատակարանը գրվել է 1400 թ. Բագարատ գրչի ձեռքով, դառը և նեղ ժամանակ, երբ Լենկթեմուրը երրորդ անգամ էր արշավում երկրի վրա՝ քանդելով բազում եկեղեցիներ: Հիշատակվում է նաև Գրիգոր րաբունին՝ որպես «յոյս ապաստանի»⁶⁵:

1298 թ. Հաղբատի միաբան Գրիգոր աբեղան ընդօրինակել է մի Աստվածաշունչ⁶⁶:

Հաղբատի գրչության կենտրոնը ժն դարում

ԺԳ դ. Հաղբատի գրչության կենտրոնից ձեռագրեր չեն պահպանվել, թեև, անկասկած, այս դարում ևս շարունակվել է ձեռագրերի ընդօրինակությունը, սակայն ինչ-ինչ պատճառներով դրանք մեզ չեն հասել⁶⁷:

ԺԵ դ. Հաղբատում նորից գրչության կենտրոնը ծաղկում է, այս դարից մեզ է հասել շուրջ 12 ձեռագիր: Դարասկզբին գրված մի ձեռագրի մասին հիշատակում է Փիրղալեմյանը: Դա Գրիգոր Տաթևացու՝ Մատթեոսի Ավետարանի մեկնությունն է, ընդօրինակել է 1410 թ. Աբել գրիչը, «ի վանս Սարկա-

⁶² Նույն տեղում, 488բ:

⁶³ Նույն տեղում, 356բ:

⁶⁴ Նույն տեղում, 442բ:

⁶⁵ Նույն տեղում, 215բ:

⁶⁶ Ա. Մաթևոսյան, «Հաղբատի գրչության կենտրոնը», *Էջմիածին*, 1971, էջ 47:

⁶⁷ 1317 թ. Գլաձորի գրիչ Սարգիսը Ոսկեփորիկի ընդօրինակության ժամանակ հիշատակում է իր հոգևոր եղբորը՝ Դավիթ Հաղբատեցուն: Վերջինս, հավանաբար ԺԳ դ. Հաղբատի գրչության կենտրոնի հետ ինչ-որ կապ ունեցող անձնավորություն է: Տե՛ս Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Վենետիկի, հ. Բ, էջ 857:

ւագայ»⁶⁸: Հավանաբար սա Հաղթատի վանքն է: Հաղթատում ընդօրինակված մեկ այլ ձեռագրի հիշատակարանում պահպանվել է հետևյալը. «գրեցաւ գիրքս այս... ընդ հովանեաւ Սուրբ Նշանիս և Սուրբ Կաթողիկէիս և Սուրբ Գերեզմանիս Սարկաւագ վարդապետիս»⁶⁹: Փաստորեն միջնադարում Հաղթատավանքը կոչել են նաև Սարկավագի անվամբ:

Հաջորդ ձեռագիրը Շարակնոց է, ընդօրինակվել է 1437 թ.⁷⁰ Հաղթատում⁷¹ «ի վարդապետութեան մեծ ընթացումս և քաջ հոգևորիս Յովհաննէս վարդապետիս, ի յառաջնորդութեան տէր Զաքարէի, ձեռամբ յոքնամեղ, փծոն և անարհեստ գրչի Մարտիրոսի սուտանուն աբեղայի»⁷²: Մարտիրոս գրչի մասին կան կենսագրական որոշ տվյալներ: Նա եղել է Խոցաղեղի և Խոնդիկի որդին, որպես աբեղա սպասավորել է Հաղթատի վանքում: Հիշատակվում են նաև նրա հորեղբայր տեր Հունանը, եղբայր Սարգիսը և նրա կին Մամբանը, ինչպես նաև իր քույր Ուստիանը, ում մասին գրիչը նշում է. «միամտութեամբ սպասաւորեաց մեզ»⁷³: Ձեռագրի ստացողը նույն Մարտիրոս գրիչն է:

1438 թ. Հաղթատում ընդօրինակվել է նաև մի ճաշոց՝ Հովհաննէս գրչի ձեռամբ: Պատվիրատուն Աստվածատուր երեցն է, որ «բազում ժամանակաց այրի, ի Կոստեւոց երկրէն, ի գեղջէն Արծնոյ... յայս դառն և կսկծալի ժամանակիս, կարի աղքատութեամբ և չքաւորութեամբ ետու գրել զգիրքս ի յօտար երկիրս Վրաց, ի ձեռս Յոհաննէս քահանայի»⁷⁴: Ձեռագիրն ընդօրինակվել է տեր Զաքարիայի առաջնորդության և վրաց Ալեքսանդրի թագավորության, Օրբելյանների ցեղից Բեշքենի պարոնության օրոք:

Ձեռագրում պահպանվել է պատմական նշանակություն ունեցող մի հիշատակարան, որտեղ նկարագրված են երկրում թշնամու գործած սոսկալի ավերածություններն ու սպանողը, երբ «որդի մեծի խորագմին Թամուրին՝ Շահուլի կոչեցեալ, չորս անգամ բազում հեծելօք, անգութ և անագորոյն և անողորմ և ծարաւի արեան քրիստոնէից՝ երեկ (= եկն) ի վերայ աշխարհիս Թավրիզոյ, որ բազում և անասելի աւեր ած ի վերայ աշխարհիս Հայոց»⁷⁵: Դրա հետևանքով

⁶⁸ Ղ. Փիրղալեմեան, *Նօտարք Հայոց*, Կ. Պոլիս, 1888, էջ 35: Փիրղալեմյանը ձեռագիրը տեսել է էջմիածնում և արտագրել հիշատակարանը:

⁶⁹ Ժե դարի Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մաս Ա. (1401-1451), կազմեց Լ. Խաչիկյանը, Երևան, 1955, էջ 475:

⁷⁰ Խաչիկյանի (էջ 201, 475) և Փիրղալեմյանի (էջ 52) մոտ հիշատակարը կրկնվում է թե՛ ՊԿԶ. (1417) և թե՛ ՊԶԶ. (1437) թվականների տակ:

⁷¹ *A Catalogue of the Armenian Manuscripts in the British Museum*, F. C. Conybeare, London, 1913, p. 96.

⁷² Ժե դարի Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մաս Ա, էջ 475:

⁷³ Նույն տեղում, էջ 476:

⁷⁴ Ղ. Փիրղալեմեան, *Նօտարք Հայոց*, էջ 115:

⁷⁵ Նույն տեղում:

ժողովրդի մի մասը սրով է կոտորվում կամ գերի է տարվում, մյուսներն էլ սովամահ են լինում կամ գազաններից հոշոտվում, երկիրն ամայանում է, վանքերը փակվում, պատարագներն ու ժամերգությունները դադարում, իսկ եկեղեցու սրբությունները հափշտակվում. «Եւ մեծ սուգ և ողբ և տրտմութիւն և կսկիծ հասաւ Հայոց եկեղեցեաց. և եղաք որպէս հինն Իսրայէլ՝ կոխան և այսպէս կատականաց ամենայն ազգաց, և այս ամենայն հասաւ և եկն ի վերայ մեր վասն ծովացեալ և անառակ և անդարձ և անզեղչ մեղաց մերոց»⁷⁶: Փիր-ղալեմյանը 1866 թ. ձեռագիրը տեսել է Վանի Սուրբ Աստվածածին եկեղեցում և արտագրել հիշատակարանը:

1441 թ. Հաղբատում ընդօրինակված մեկ այլ Ավետարանի՝ ՄՄ 6862-ի գրիչն անհայտ է⁷⁷: Ձեռագիրը գրվել է դառը և անբարի ժամանակում, «յորում սաստկացեալ էր սուրն իսմայելացոց ի վերայ մեր հալածանաւք, ըստ յառաջատես տեսլեանն սրբոյն Սահակայ, որ և տատանեալ ծփիմք ամենաներհակ արկածիւք ի ներքուստ և արտաքուստ, որ ափշութիւն տեսականի և մինչնումն գործոյս»⁷⁸: Այդ տարի Ջահնշահ խանը հարձակվում է Վրաստանի վրա, որովհետև վրացիները չէին հնազանդվում Թավրիզի խանին: Վրացիները փախչում են Ափխազք, իսկ այնտեղ մնում են Վրաստանում բնակվող հայերը: Թշնամին հարձակվում է հայերի վրա և քարկոծելով ու սրով սպանում մոտ 5000 մարդ՝ մայր ու մանուկ և 60-ից ավել քահանա ու կրոնավոր, շատ եկեղեցիներ հիմնահատակ քանդում: Յավոք, պատմական այս կարևոր հիշատակարանի հաջորդ թերթերը, որոնց մեջ հավանաբար եղել է նաև գրչի անունը, թափված են:

1455 թ. Հաղբատից մեզ է հասել մի Ավետարան (ՄՄ 6683)⁷⁹, որի գրիչը Գրիգոր աբեղան է: Ձեռագիրն ընդօրինակվել է Գրիգոր Ժ. կաթողիկոսի, ուխտի առաջնորդ տեր Աստվածատուրի և Ջիհանշահ խանի օրոք՝ «յիշխանութեան այլադաւան սեռի, որ յահէ և յերկեղէ նոցա մաշեալք և հալածական լինէաք փախստեալք և մոլորեալք, գերեալք և տատանեալք, ի յառաւել խստութենէ հարկապահանջութեան և ի յլրովութենէ գերելոցն և ի չքաւորութենէ ըն-

⁷⁶ Նույն տեղում:

⁷⁷ Կազմի արձաթե խաչի վրա կա հետևյալ հիշատակարանը. «Սուր խաչ յիշատակ Խարզագին եւ իւր դստերն՝ Մեռոնի է, թվին ՌՁԴ ամի (1635)»: Ձեռագիրը 1485 թ. ստացել են Մուրադա աղան և նրա կին Թամարը, ի վայելում իրենց զավակների՝ տեր Առափել ֆահանայի, Մաթեոսի, Դուլիկի, Վարդանի, Շերանի և այլոց: 1556 թ. ձեռագիրը ստանում են Շուտոսք գյուղաբաղաբի առաջնորդ Եղիա աղան և Կարապետ աղան. «ի հիշատակ վաստակոց եւ հալալ ինչից եւ վայելումն զաւակաց» (ՄՄ 6862, 86բ), ինչպես գրում է գրիչ Իսրայելը: 1716 թ. ձեռագիրը գնում է պարոն Վարդանը տեր Աստվածատուր կաթողիկոսի հայրապետության և նահանգի առաջնորդ Հովսեփ Աստվածաբան վարդապետի օրոք. «ի դուռն Ամենափրկիչ սուրբ եկեղեցոյն»: Ձեռագրի վերջին ստացողը Թադեոս ֆահանան է:

⁷⁸ Ժե դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Ա, էջ 514:

⁷⁹ Ուրպես ձեռագրի հետագա ստացող հանդես է գալիս Միրում սարկաազը (247բ), իսկ վերջին ստացող՝ տէր Մատթեոս ֆահանան (252ա):

չից ոչ կարէր օգնել եղբայր եղբօր և ոչ ողորմէր ազգս ազգիս»⁸⁰: Գրիգոր արեւելան այս հալածանքների պատճառով փախչում և գալիս է Հաղբատի վանք, որտեղ նրան սիրով ընդունում է վանքի առաջնորդ Աստվածատուրը: Գրիգոր գրիչն արդեն զառամյալ ծերունի էր, երբ ձեռնարկեց այս Ավետարանի ընդօրինակութունը «անարժան ձեռք, մեղուցեալ հոգւով, խաւարեալ մտաւք, անարհեստ գրչօք, լրբենի դիմօք»⁸¹: Ստացողը Ամիրբեկ ծերունին է, հիշատակվում են նաև ստացողի կնոջ՝ էլիսաթունի, զավակների՝ Զուլալ-Խաթունի և Սադաղի անունները:

Ձեռագիրը հարուստ է մանրանկարներով: Աստղիկ Գևորգյանն այն համարում է ժե դ. Հաղբատի մանրանկարչական արվեստի լավագույն օրինակներից մեկը: Նրա կարծիքով մանրանկարիչը «Հաղբատի շնորհալի վարդապետներից է, ընդօրինակել է Սսի օրինակից»⁸²: Իսկ ըստ Ա. Մաթևոսյանի՝ մանրանկարիչը ձեռագրի գրիչն է: «Ավետարանը ծաղկել է գրիչը և ավետարանիչների նկարների խորքում պատկերել Հաղբատի վանքերի գմբեթներն ու կամարները»⁸³:

Հաջորդ ձեռագիրը ճաշոց է, ընդօրինակվել է 1458 թ. Հաղբատում (ՄՄ 6260): Ձեռագրի գրիչներն են Հովհաննեսը և Դանիելը, վերջինս ներկայանում է որպես «զսակաւ աշխատող»⁸⁴, քանզի գրել է միայն վերջին 564ա-9բ թերթերը: Ձեռագիրը ընդօրինակվել է Գրիգոր Ժ. կաթողիկոսի և Հաղբատի առաջնորդ տեր Աստվածատուրի օրոք: Հովհաննես գրիչը խնդրում է անմեղադիր լինել իրեն, քանզի «ծեր եմ և ծանրացեալ, աչքս ի լուսոյ է պակասել և դողդոջ մատունս ի գրելոյ»⁸⁵: Ձեռագրի ստացողներն են Հովհաննես քահանան՝ «Ամրակուեց առաջնորդ» (ՄՄ 6260, 323բ, 371ա) և Ջանազիզ վարպետը, հիշատակվում են նաև ստացողի հոր՝ Դավթի, մոր՝ Խէրիսաթունի, կնոջ՝ Մինա-Խաթունի, որդիների՝ Մկրտչի, Աստվածատուրի անունները, ինչպես նաև մյուս որդին՝ Հովհաննես ավագ երեցը. «որ ջերմեռանդ սըրտիւ եւ եռափափագ սիրով սկսնուլ ետ եւ ոչ հաս ի վերջին գիծ տառիս, եղիցի յիշատակ նորա ի սմա եւ ի վայելումն Սամուէլ քահանային եւ Մկրտիչ սարկաւագին» (ՄՄ 6260, 563ա): Ձեռագրի օրինակը շնորհել է տեր Հովհաննեսը, որ Ա. Մաթևոսյանի կարծիքով Սանահինի առաջնորդ Հովհաննես Սարկավագն է⁸⁶, իսկ որպես մանրանկարիչ հիշատակվում է Մանուէլը (ՄՄ 6260, 1ա, 198ա), որը ձեռագրեր է մանրա-

⁸⁰ Ժե դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Բ (1451-1480), կազմեց Լ. Խաչիկյանը, Երևան, 1958, էջ 51:

⁸¹ Նույն տեղում:

⁸² Տէս Ա. Գլորգեան, Անանուն հայ մանրանկարիչներ, մատենագիտութիւն, IX-XVII դդ., Գանիրէ, 2005, էջ 196:

⁸³ Ա. Մաթևոսյան, Հաղբատի գրչության կենտրոնը, էջ 48-49:

⁸⁴ Ժե դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Բ, էջ 99:

⁸⁵ Նույն տեղում, էջ 98:

⁸⁶ Ա. Մաթևոսյան, Հաղբատի գրչության կենտրոնը, էջ 49:

նկարել նաև Տիրխիսում (ՄՄ 5784 և ՄՄ 6806), Կիկեթում (ՄՄ 7986): Նրա նկարազարդած մեկ այլ ձեռագիր էլ պահվում է էջմիածնի մատենադարանում (209)⁸⁷: Ըստ Աստղիկ Գևորգյանի՝ Մանուելը ձեռագիրը նկարազարդելիս օգտվել է Հովհաննես Սանահնեցուց⁸⁸ և իսկապես Հովհաննես Սանահնեցու և Մանուելի նկարների միջև առկա են ոճական նմանություններ: Ձեռագրի հիշատակարանը կարևորվում է նրանով, որ գրիչը տեղեկություն է հաղորդում Հաղբատի վանքի կրոնավորների մասին. «ի յաւուրս և ի ժամանակս յայս կան բազում կրանաւորք և աղաւթարարք՝ տէր Դուկաս, տէր Աստուածատուր փակակալ, Տիրատուր, Գրիգոր, Պետրոս, Գաւրգի, Յովհանէս, Մխիթար, Ներսէս, Յովանէս, Ոհանէս, Վարդան, Հայրապետ, Դաւիթ, Աբրահամ, Արթուր»⁸⁹:

Էջմիածնի մատենադարանում պահվող թ. 29 Ավետարանն ընդօրինակել է Վարդան արեղան Հաղբատում, 1488 թ.⁹⁰: Նրա մասին կենսագրական տվյալներ չունենք, միայն հայտնի է, որ եղել է Հաղբատի սուրբ ուխտի միաբան: Պատվիրատուն է հոնթիսաթունը ի հիշատակ իր ծնողների՝ Ջանբաղչի և Ազիզմելիքի, հանգուցյալ եղբոր՝ Հովհաննես քահանայի և մյուս եղբայրների՝ Մկրտչի և Մարտիրոս երեցի, Բարսեղի և Ղազարի, հորեղբոր՝ Սիմեոնի և որդու՝ Դուկասի: Հիշատակվում են նաև հոնթիսաթունի կենակից Դովթաթարը և նրա ծնողներ Հարազիզն ու Հեսանիսաթունը, եղբայր Շանչը և այլ ազգականներ: Պատվիրատուն «ի յոժար կամոք» այն նվիրել է իր եղբորորդուն՝ նորընծա Մարտիրոս քահանային: Ձեռագիրն ունի նաև նկարողի և կազմողի անանուն հիշատակարան, որից հետո կա հետևյալ հիշատակագրությունը. «Ընդ նմին [յիշեցէք] զՎաղթանկն, որ կողին աշխատեցաւ»⁹¹:

1494 թ. Հաղբատում հաշատուր արեղան Հովհաննես վանահոր առաջնորդություն ժամանակ ընդօրինակել է մի Շարակնոց⁹²:

Նույն՝ 1494 թ. Հաղբատում ընդօրինակվել է նաև մի Մաշտոց (ՄՄ 8357)⁹³, Հայոց Սարգիս Գ. կաթողիկոսի և վանքի առաջնորդ տեր Հովհաննեսի

⁸⁷ Ձեռագիրն ընդօրինակվել է 1463 թ., գրիչը Դավիթ արեղան է, վայրը հայտնի չէ, ենթադրաբար նշվում է Հաղբատը՝ հավանաբար հիմնվելով ձեռագրում հիշատակվող Դուկաս Հաղբատայ արհեստիպոսի անվան վրա:

⁸⁸ Տե՛ս Ա. Գեորգեան, Հայ մանրանկարիչներ, մատենագիտություն, IX-XIX դդ., Գահիրե, 1988, էջ 361:

⁸⁹ Ժե դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Բ, էջ 96:

⁹⁰ Հետագայում՝ 1640 թ., որպես ձեռագրի վերջին ստացող հիշատակվում է Ամիրը և իր ընտանիքը, որպես առաջին նորոգող՝ Ջուրապը, իսկ 1720 թ., որպես վերստին նորոգող և կազմել տվող՝ Նիկողայոսը:

⁹¹ «Յուցակ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի նոր ստացված ձեռագրերի», էջմիածին, 1950, նոյեմբեր-դեկտեմբեր, էջ 84:

⁹² Հ. Ոսկեան, Գուգարքի վանքեր, էջ 240:

⁹³ Ա. ձեռագիրն ընդօրինակվել է Հաղբատում՝ 1494 թ., Բ-ի գրչության վայրն անհայտ է, ընդօրինակվել է ԺԸ դ.:

օրոք: Ձեռագրի գրիչը ոմն աբեղա է, պատվիրատուն՝ Հակոբ քահանան, հիշատակվում են նաև Հակոբ քահանայի կնոջ՝ Թանկագիզի, զավակներին՝ Էրէմիի, Անանիի, Հովագեղի, Հազարգեղի, Ամիրի, դուստրերին՝ Շիրագի և Շուշանի, մոր՝ Շամամի, եղբոր՝ Հէրպետի անունները:

1498 թ. Հաղբատում ընդօրինակվում է Մաշտոց Ձեռնագրութեան (ՄՄ 1084): Գրիչը Փիլիպպոս եպիսկոպոսն է, ձեռագիրն ընդօրինակվել է Հայոց Սարգիս Գ. կաթողիկոսի օրոք, «յորս էաք փախուցեալ ի յանաւրինաց վասն դառնութեան ժամանակիս եւ ի ծանր հարկապահանջութենէ»⁹⁴: Հիշատակարանի հետևյալ հատվածից կարելի է ենթադրել, որ պատվիրատուն Սարգիս կաթողիկոսն էր և այն ընդօրինակվել էր Սբ. Էջմիածնի միաբանութեան համար. «Ով սուրբ հայրապետ եւ անուանակիր սրբոյն Սարգսի զաւրայվարին եւ սրբասնունս եպիսկոպոսք, եւ սիրողք սրբութեան քահանայք, եւ սարկաւագունք, եւ անմահութեանց արժանաւորք դպիրք, եւ ժողովուրդք, յերես անկեալ աղաչեմ զհանդիպող եղբայրքդ սուրբ Էջմիածնի աթոռոյդ՝ յիշել ի սուրբ յաղաթն ձեր զնուաստ ոգի Փիլիպպոս եպիսկոպոս՝ սակաւ աշխատող տառիս»⁹⁵:

Ժե դարավերջին Հաղբատում գրչութեամբ էր զբաղվում նաև Մկրտիչ գրիչը: Նա Հաղբատի միաբան էր, որդին էր Խաչատուր քահանայի և Մերհիկի: Նրանից մեզ է հասել երկու Ավետարան: Մեկն ընդօրինակվել է 1498 թ. «ի հայրապետութեան տեառն Սարգսի, ի յառաջնորդութեան սուրբ ուխտիս տէր Իգնատիոսին, ... ի խնդրոյ խոճայ Կարապետին եւ իւրայնոցն ամենեցուն»⁹⁶: Մյուսը՝ ՄՄ 6822, 1499 թ., Հայոց Սարգիս Գ. կաթողիկոսի օրոք, «որ յայսմ ամի ի հարկէ անօրինացն երեկ ի Հաղբատս»⁹⁷: Որպես ուխտի առաջնորդներ հիշատակվում են տեր Ստեփաննոս, տեր Իգնատիոս և տեր Հովհաննէս արքեպիսկոպոսները: Տեր Իգնատիոսը հիշատակվում է նաև որպես «արհեստակոպոս քաջ քարտուղարս, որ ուսոյց մեզ զարուեստ գրչութեան, որ մարմնօր պիտոյիւք կառաւարէր զմեզ»⁹⁸, իսկ Կարապետը հիշատակվում է որպես գրչի «զհոգևոր վարպետն» և «հայր վանացն»⁹⁹: Կարելի է ենթադրել, որ սա 1494 թ. Հաղբատում ընդօրինակված Շարակնոցի գրիչն է: Ծաղկողը տեր Հովհաննէսն է, մեկ այլ Հովհաննէս դպիր հիշատակվում է որպես թուղթ կոկող և սպասավոր, նաև Կոստանդ դպիրը և Վրդանէս կուսակրոն տնտես աբեղան, վերջինս

⁹⁴ Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Գ, կազմեցին՝ Ա. Քեօշկերեան, Կ. Սուքիասեան, Յ. Քեօսէան, Երևան, 2008, էջ 270-271:

⁹⁵ Նույն տեղում, էջ 270:

⁹⁶ Հիշատակարանը պահպանվել է ՄՄ 6273 ձեռագրում, տե՛ս նաև Ժե դ. Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Մասն Գ (1481-1500), Երևան, 1967, էջ 262: Ձեռագիրը գտնվել է Վանի Տիրամուր եկեղեցում:

⁹⁷ Ժե դ. Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Գ, էջ 280:

⁹⁸ Նույն տեղում, էջ 280-281:

⁹⁹ Նույն տեղում, էջ 280:

«քաղցրահամ կերակրով զմեզ ճաշակեաց»¹⁰⁰, ինչպես նաև «զհանիկն իմ Հուսնիշատն, որ բազում աշխատութեամբ անոյց մեզ»¹⁰¹: Ձեռագրում պահվել է նաև Դավիթ րաբունապետի անունը:

Հաղբատի գրչության կենտրոնը ժէ-ժԹ դդ.

Ժէ դարում Հաղբատից մեզ է հասել մեկ ժողովածու՝ Եղմ. 519: Ձեռագրի գրիչը Հակոբ քահանան է տեր Հայրապետի որդին: Գրիչը հիշատակում է իր որդիներին՝ հանգուցյալ Կոստանդինոսին, Ոսկանին, Աբգարին և դստերը՝ Փարասբեին, իր հարազատներին՝ Ազիզ փաշեի, հանգուցյալ եղբայրներին՝ տեր Մեսրոպի, Մանասեի և այլոց անունները: Հակոբ երեցը վաղուց է ցանկացել ունենալ այս մեկնությունները, քանի որ «ոչ գոյր աժմուստ յարկեզ տանս Աստուծոյ Հաղբատ, վասն որոյ աշխատեցա», և խնդրում է անմեղադիր լինել «խոշոր և պակաս» գրի համար, քանզի «աւրինակն յոյժ նուաստ էր, եւ անիմաստ գրչի ծրած նիշ»: Հիշատակվում է նաև Հովհաննեսի անունը, որն իր օգնությունն է ցուցաբերել ձեռագրի գրչության աշխատանքներին՝ «խազ քաշելով, ճարըւար քաշելով, կարմիր գրի աշխատանք առել»¹⁰²: Ստացողը նույն Հակոբ երեցն է:

Հաղբատում ընդօրինակված Վնտկ. 452 ձեռագրում (1195 թ.) կա 1714 թ. գրված հետևյալ հիշատակարանը. «Ես մեղաւոր եւ անարժան սարկաւագ Մարտիրոսս գրեցի, որ կոչի Հախպատեցի, օվ ոք կարդաք, մի բերան ողորմի ասէք, Աստուած ձեզ ողորմի: Թվին ՌՃԿԳ (1714) ի յամս»¹⁰³, ինչից կարելի է ենթադրել, որ ժէ. դ. Հաղբատի վանքում Մարտիրոս գրիչ է եղել, սակայն նրա ընդօրինակված ձեռագրեր մեզ հայտնի չեն:

ԺԸ դ. Հաղբատից մեզ մի քանի ձեռագիր է հասել: 1826 թ. ընդօրինակվել է Պետրոս Բերթումյանի Քարոզգիրքը (ՄՄ 3747): Ձեռագիրն ունի մի քանի անանուն գրիչներ, որպես ձեռագրի ցանկերը կազմող և սրբագրիչ հանդես է գալիս Հովհաննես Արիմեցին: Ստացողը Սիմեոն արքեպիսկոպոս Բզնունեանն է:

Այս շրջանի գրիչներից հայտնի է Հովհաննես Արիմեցին, նրանից մեզ է հասել երկու ձեռագիր: Նոր Զուղայի Ս. Ամենափրկիչ վանքի թանգարանում են պահվում Հաղբատի ու Սանահնի վանքերին նվիրված նրա երկու գործերը: Նրա կենսագրության մասին քիչ բան գիտենք: Եղել է վարդապետ, կաթողիկոսի հետ այդ թվականներին եկել է Հաղբատ, և առիթից օգտվելով, կարողացել է գրել Հաղբատավանքի պատմությունը: Հովհաննես Արիմեցին իրեն անվանում է Եփրեմ կաթողիկոսի աշակերտը:

¹⁰⁰ Նույն տեղում, էջ 281:

¹⁰¹ Նույն տեղում, էջ 280:

¹⁰² Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հ. երկրորդ, կզմ. ն. Պողարեանը, Երուսաղեմ, 1967, էջ 523:

¹⁰³ Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, հ. Ը, էջ 254:

1827 թ. Հաղբատում Հովհաննես Արիմեցին գրել է «Պատմութիւն հուշակաւորի վանից Հաղբատայ Սուրբ Նշանի» գործը¹⁰⁴: Ձեռագիրը, որ բովանդակում է Հաղբատի պատմութիւնը՝ սկզբից մինչև 1827 թ., գրվել է Հայոց եփրեմ Ա. կաթողիկոսի, ուխտի առաջնորդ Ներսես արքեպիսկոպոսի և Վրաստանում Հայոց հոգևոր գործերի ծայրագույն կառավարիչ Ալեքդանդր Նևսկոյի օրոք¹⁰⁵:

Արիմեցու հաշորդ՝ «Պատմութիւն վանացն Հաղբատայ, Սանահնի եւ արձանագրութիւնք այլոց վանօրէից» գործը գրվել է 1827 թ. Հաղբատում¹⁰⁶: Ստացողը նույն Հովհաննես Արիմեցին է:

1827 թ. Զաքարիա վրդ. Գուլասպեան Բեհբուդեանցը Հաղբատի Սուրբ Նշան վանքում հեղինակել է 22 թերթանոց մի Տաղարան՝ Անտոն արքեպիսկոպոսի համար¹⁰⁷:

Հաղբատից մեզ հասած հաշորդ և, հավանաբար, վերջին ձեռագիրը (ՄՄ 6457) «Արիստակես Լաստիվերտցու Վասն անցից անցելոյ» գործն է՝ ընդօրինակված 1840 թ.: Գրիչն ու ստացողը Հովհաննես Երզնկյանցն է:

Այսպիսով, Հաղբատի գրչութիւն կենտրոնից նշանակալից ձեռագրական ժառանգութիւն է պահպանվել: Առավել արդյունավետ գործունեութիւն շրջաններ են եղել ԺԳ և ԺԵ դարերը: Տեղում գրված հիշատակարաններն արժեքավոր տեղեկութիւններ են պահպանել վանքի և երկրամասի պատմութիւն ու մշակութի վերաբերյալ:

¹⁰⁴ Մայր Յուցակ ձեռագրաց Նոր-Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանաց թանգարանի, ձեռ. ք. 239:

¹⁰⁵ Տէս Յուցակ ձեռագրաց Նոր-Ջուղայի Ս. Ամենափրկչեան վանաց թանգարանի, Կ. Բ, կազմող Լ. Մինասեան, Վիեննա, 1972, էջ 77, ձեռ. ք. 239:

¹⁰⁶ Նույն տեղում, ձեռ. 251: Ձեռագիրը բովանդակում է Հովհաննես Արիմեցու տարբեր ժամանակներում գրված գործերը, որոնք 1873 թ. Ամենափրկիչ վանքում ի մի են հավաքվում և պահվում վանքի մատենադարանում:

¹⁰⁷ Յուցակ հայերէն ձեռագրաց Նոր-Քայազետի, ձեռ. ք. 6., կզ. Հ. Աճառեանը, Վիեննա, 1924, էջ 52:

ՀԱՂԲԱՏԻ ԳՐՉՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՁԵՌԱԳՐԵՐԸ

Ա. ՁԵՌԱԳՐԱՑՈՒՅԱԿՆԵՐ

Մաշտոցի անվան Մատենադարան

	Ձևագրի թվանանոթ	Բովանդակություն	Ժամանակ	Գրիչ	Մտվող	Կազմող	Ստացող	Նիստ, թերթերի քանակը, չափերը
1.	194	Մատունի Աստուածաշնչի	1207թ.	Առաքել Բահանա	—	—	Յունան Բահանայ	Թուղթ, 392, 25,3 x15,8
2.	777	Ժողովածոյ	ԺԳ դ.	—	—	—	—	Թուղթ, 131, 25x17
3.	1084	Մաշտոց Ձեռնադրու- թեան	1498 թ.	Փիլիպոս Լայիսկո- պոս	—	—	—	Թուղթ, 98 17,5 x12,8
4.	1324	Ժողովածոյ	1281թ.	Յոհան, Բարսեղ, Աբրահամ	—	—	Բարսեղ վարդա- պետ	Թուղթ, 475, 25 x16,5
5.	1577	Շարակնոց	ԺԳ դ.	Յովան- նէս Գրչապետ	—	—	Տէր Բարդո- ղիմէոս	Մագաղաթ (և թուղթ 10 թերթ, ժՁ- ժէ), 347, 13 x8,6
6.	1747	Դավիթ Ան- յաղթ, Սահ- մանի Իմաս- տասիրութեան	1243 թ.	Յոհաննէս Բահանայ	—	Պետրոս վարդա- պետ	Պետրոս վարդա- պետ	Թուղթ, 123, 16,8x12
7.	1912*	Ժողովածոյ	Ա. 1220 թ., Բ. ԺԱ դ.	Ա. Միլի- թար, Բ. Մարտի- րոս, Կի- րակոս	—	Ա. Խա- չատուր Երէց	Բ. Յով- հաննէս արեւպս	Ա. Թուղթ, 203+2-1, 25,5x16,5, Բ. Թուղթ, 121, 25,5x16,5
8.	2606	Միսիքար Գօշ, Մեկնութիւն մարգարէու- թեանն Երե- միայ	1198 թ.	Առաքել, Դավիթ	—	Վար- դան վրդ.	Դավիթ (գրիչ)	Թուղթ, 257, 26x17
9.	3747	Պետրոս Բերթումեան, Քարոզգիրի	1826 թ.	—	—	—	Սիմէօն Բզնու- նեանց	Թուղթ, 209, 35x21,5
10.	4139	Տօնապատեալ	1267թ.	Յովսէփ, Տիրացու Գրիչ, Գրիգոր	—	—	—	Թուղթ, 489, 25 x17

11.	5602	Գափք Քորայրեցի, Մեկնութիւն ճառից Գրիգորի Աստուածաբանի եւ Գրիգորի Նիսացոյ	1178 թ.	Գափք Քորայրեցի	—	—	—	Թուղթ, 272, 17x13
12.	6260	Ճաշոց	1458թ., ժե դ.	Յոհաննէս Բահանայ /Ա/, Գահինկ /Բ/	Մանուկ եպիսկոպոս	—	Ջանագիգ վարպետ /Ա/	Թուղթ, 569, 31x21
13.	6288	Աւետարան	1211թ.	Յակովբ, Մարգարէ	Մարգարէ գրիչ /ժողովման վայրը՝ Հոռոմոս/	Աբրահամ /1211/, Ստեփանոս Բահանայ /1325/, Տիրաւա՞Բ /1497/	Սահակ վարդապետ	Մագաղաթ, 360, 30x22
14.	6457	Արիստակէս Լաստիվերոցի, Վասն անցից անցելոց	1840 թ.	Յոհաննէս Երզնկեանց	—	—	Յոհաննէս Երզնկեանց	Թուղթ, 150 21x11
15.	6683	Աւետարան	1455 թ.	Գրիգոր Երէց	—	—	Ամիրբէկ. Ելիսաթուն	Թուղթ, 251, 19,5x15
16.	6822	Աւետարան	1499 թ.	Մկրտիչ արեղայ	Տէր Յովհաննէս	—	—	Թուղթ, 317, 18,5x13
17.	6862	Աւետարան	1441թ.	—	—	—	—	Թուղթ, 303, 18,5x13,7
18.	8357	Մաշտոց	1494 թ.	ոմն արեղայ /Ա/	—	—	Յակոբ Բահանայ /Ա/	Թուղթ, 101, 17,3x13,2

Երուսաղեմի սրբոց Յակոբյանց վանք

	Ձեռագրի թվանամարը	Քոլանդավորքին	Ժամանակ	Գրիչ	Մակիդ	Կազմող	Ստացող	Նիսի, բերքերի քանակը, չափերը
1.	519	Ժողովածոյ	ժէ ?	Յակոբ Երեց որդի տէր Հայրապետի	—	—	Յակոբ Երեց	Թուղթ, 528 22X15X5
2.	3851 ¹⁰⁸	Գիրք Յայտնութեան	1252	Սարգիս	—	—	Սարգիս Սա- մուխյանց Երեց	Թուղթ, 243

Վենետիկի Միսիթարյան մատենադարան

	Ձեռագրի թվանամարը	Քոլանդավորքին	Ժամանակ	Գրիչ	Մակիդ	Կազմող	Ստացող	Նիսի, բերքերի քանակը, չափերը
1.	5 /1206	Տօնապատեան	1218	—	—	—	Երկու եղբայր- ներ՝ Ստեփան- նոս եւ Սարգիս վարդապետներ	Թուղթ, 424 25X35
2.	251 /314	Հաստումն (ճառից Ս. Բարսղի), ԻԱ.	1173	Սարգիս	—	Յուսէփ վարդապետ	Բարսէղ (Եպս. Անոյ), ապա միաբան Հաղ- բատայ վա- նաց, ապա Կնեսագ Նիկողոս Արղուբեան եր- կայնաբագուկ	Թուղթ, 262, 37,5X28
3.	352 /1218	Ժողովածոյ	ժԲ	Գրիգոր	—	—	—	Թուղթ, 402 12,5X21
4.	452 /1552	Եփրեմ Ասորի, նաև (Ե-ԺԳ դ. Յիշատակա- րաններ, էջ 286)	1195	Խաչատուր արեղայ	—	—	նոյն Խաչատուր արեղայ	Թուղթ, 318 17,5X26,5

¹⁰⁸ Այս ձեռագիրը բաղկացած է մի քանի ձեռագրերից, որոնք ընդօրինակվել են տարբեր վայրերում, սա Գ ձեռագիրն է:

5.	953 /1600	Մեկնութիւն թղթոյն Պօ- ղոսի Առաքելոյ Եփրեմի եւ Յվհաննու Ոսկերեանի	999	Սիմեոն	—	Տիրանուն	Սիմեոն	Թուղթ, 450 11x18,2
----	--------------	---	-----	--------	---	----------	--------	------------------------------

Նոր-Ջուղայի ս. Ամենափրկիչ վանք

	Ձեռագրի թվահամարը	Բովանդակութիւն	Ժամանակ	Գրիչ	Ծաղկող	Կազմող	Ստացող	Նիւթ, թերթերի համարը, չափսը
1.	1/239	Պատմութիւն հոշա- կաւոր վանից Հաղ- թատայ սուրբ Նշանին	1827	Յովհաննէս վարդապետ Փօթիչանցի Դրիմեցի	—	—	—	Թուղթ, 96, 25,5x20x5
2.	532/251	Պատմութիւն վանացն Հաղթատայ, Սանանի եւ արձանագրութիւն այլոց վանօրէից, Յով- հաննէս եպիսկոպոս Սուրենեան	1827	Յովհաննէս եպիսկոպոս Սուրենեան	—	—	Յովհաննէս եպիսկոպոս Սուրենեան	Թուղթ, 224, 21,8x17

Մայր արքոս սուրբ Էջմիածնի մատենադարան

	Ձեռագրի թվահամարը	Բովանդակութիւն	Ժամանակ	Գրիչ	Ծաղկող	Կազմող	Ստացող	Նիւթ, թերթերի համարը, չափսը
1.	29	Աւետարան	1488	Վարդան արեղա	—	—	Խոնքիխարոն	Թուղթ, 257 21X16X7

ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ԳՐԱԳԱՐԱՆ

1.	47.	Շարակնոց	1437	Մարտիրոս	—	—	Գրիչ՞	—
----	-----	----------	------	----------	---	---	-------	---

Բ. ԱՅԼ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

Փիրղալեմյան Ղևոնդ

	Ձեռագրի թվանամարը	Բովանդակության բովանդակություն	Ժամանակ	Գրիչ	Ծավալով	Կազմով	Ստացող	Նիսի, բերքերի քանակը, չափսը
1.	ՄՄ 6273	Աւետարան	1498	Մկրտիչ արեղայ	—	—	խոնայ Կարապետ	—
2.	Նոտարի Հայոց	Գրիգոր Տաթևացի, Մատթեոսի Աւե- տարանի Մեկնություն	1410	Աբել	—	—	—	—
3.	Նոտարի Հայոց	Հաշոց	1438	Յոհաննէս Բնն.	—	—	Աստուածա- տուր	—

**Հ. Անադյանի Նոր Բայազետի եկեղեցիներում մասնավոր անձանց մոտ տեսած և
նկարագրած ձեռագրերի**

	Ձեռագրի թվանամարը	Բովանդակության բովանդակություն	Ժամանակ	Գրիչ և նկարիչ	Ծավալով	Կազմով	Ստացող	Նիսի, բերքերի քանակը, չափսը
1.	6	Տաղարան	1827	Զամարիա վրդ. Գուլասպետան	—	—	Անտոն արքայակ.	Թուրք, 22

Հիշատակարաններ

	Ձեռագրի թվանամարը	Բովանդակության բովանդակություն	Ժամանակ	Գրիչ	Ծավալով	Կազմով	Ստացող	Նիսի, բերքերի քանակը, չափսը
1.	—	Մեկնություն Երզն ¹⁰⁹ երգոյս	1265	Վարդան Արևելցի	—	—	—	—
2.	—	Աստուածաշունչ ¹¹⁰	1298	Գրիգոր արք.	—	—	—	—
3.	—	Շարակնոց ¹¹¹	1494	Խաչատուր արեղայ	—	—	—	—

¹⁰⁹ Նախագաղափար օրինակը տե՛ս ՄՄ 1419 և ՄՄ 4834 ձեռագրերում:

¹¹⁰ Մեսրոպ արք. Տեղ-Մովսիսյան, ցուցակ, Աստվածաշունչ, Մատենադարան անտիպ ձեռագրացուցակներ:

¹¹¹ Հ. Ոսկեան, Գուգարքի վանքեր, Վիեննա, 1960, էջ 240:

GAYANE TERZIAN
THE SCRIPTORIUM OF HAGHBAT

Key words: Matenadaran, manuscript, Gospel, scribe, commissioner, colophon, Davit‘ K‘obayrets‘i, Vardan Arewelts‘i.

The Monastery of Haghbat was founded in 976 by Khosrovanush, the wife of Ashot III the Merciful. Soon a scriptorium was created here. Scribe Simeon was the first prior and he himself copied the first manuscript in 999, namely, *St. Paul’s Epistles and Commentary on them* by John Chrysostom and Ephrem the Syrian; it is considered the second oldest Armenian manuscript on paper. The 13th and 15th centuries were very productive for the Haghbat scriptorium. The *History of Armenia* by Aristakēs Lastiverts‘i copied by Yovhannēs Erznkeants‘ in 1840 is the last manuscript copied in the scriptorium.

The total number of surviving manuscripts copied in Haghbat up to the 19th century is thirty-seven. Nineteen are kept in Matenadaran, four in the Mekhitarist collection in Venice, two in the Saint James Monastery of Jerusalem, one in Ejmiatsin, two in the Holy Saviour Cathedral in New Julfa, and one in the British Library. Information on seven more manuscripts copied in Haghbat may be drawn from the study by P‘irghalemean and from various catalogues.

ГАЯНЕ ТЕРЗЯН
СКРИПТОРИЙ АХБАТА

Ключевые слова: Матенадаран, рукопись, Евангелия, писец, заказчик, памятная запись, Давид Кобайреци, Вардан Аревелци.

Монастырь Ахбат был основан в 976 году усилиями царицы Хосровануш, жены царя Ашота III Милосердного. Вскоре здесь был создан скрипторий. Писец Симеон стал первым настоятелем Ахбатского монастыря, а в 999 году он завершил свою первую рукопись: “Послание апостола Павла, с толкованиями Ефрема (Сирина) и Иоанна Златоуста”, которая считается второй самой древней рукописью на бумаге. XIII-XV века считаются самыми плодовитыми в истории Ахбатского монастыря. В 1840 году писец Оганес Ерзнкянц скопировал *Историю Армении* Аристакаеса Ластиверци, последнюю работу скриптория.

В целом из работ Ахбатского скриптория до XIX века насчитывается около 37 дошедших до нас рукописей, основная часть которых хранится в Матенадаране имени Маштоца (19 рукописей), четыре в собрании Мхитаристов в Венеции, две в монастыре св. Якова в Иерусалиме, одна в Эчмиадзине, две в музее монастыря Святого Спаса в Новой-Джюльфе, одна в Британской библиотеке. Информация о семи рукописях, скопированных в монастыре Ахбат, почерпнута нами из труда Пирхалемяна и других источников.

ՄԻՋՆԱԳԱՐՅԱՆ ԲՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԴՈՆԱՐԱ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՀՈՎԱՍԱՓ ՍԵՔԱՍՏԱՑԻՆ «ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ԹԱԳԱՒՈՐԻՆ» ԶՐՈՒՅՅԻ ԿԱՑԱՆԵՐԻ ՀԵՂԻՆԱԿ

Բանալի բառեր՝ բժշկարան, մարդակազմություն, միջնադարյան տաղերգություն, կաֆա, զրույց, մանրանկարչություն, ժամանակագիր, գրիչ-ընդօրինակող:

Ուշ միջնադարում, երբ բուն Հայաստանում քաղաքական ծայրահեղ անբարենպաստ իրավիճակի հետևանքով հնարավորություններ չկային գիտություն և մշակույթի զարգացման համար, հայ գիտական միտքն իր զարգացումն ապրեց բուն Հայաստանից դուրս՝ հայկական գաղթօջախներում, մասնավորապես պատմական Փոքր Հայքի մայրաքաղաք Սեբաստիայում: ԺԶ-ԺԷ դարերում այստեղ վերածնունդ ապրեց հայ բժշկական մշակույթն իր ամենատարբեր ընդգրկումներով. այստեղ երևակվել են բժշկության թե՛ տեսական և թե՛ կիրառական արտահայտությունները:

Ի մասնավորի, տեսական բժշկության բնագավառի մի ինքնատիպ ստեղծագործություն է սեբաստահայ բժշկական մշակույթի՝ ժամանակագրական առումով առաջին ներկայացուցիչ Հովասափ Սեբաստացու «Բժշկարան ընտրեալ տարրական մախցի» բնագիտական երկը:

Հովասափ Սեբաստացու՝ միջնադարյան հայ մշակույթի ԺԶ դարի առաջին կեսի բազմաշնորհ այս մատենագրի գրչական, նկարչական, պատմագրական, բանաստեղծական ժառանգությունը ԺԹ դարի 60-ական թվականներից գտնվել է հայ բանասիրության քննության շրջանակներում:

Կենսագրական սուղ տեղեկություններ են հայտնի Հովասափի մասին. դրանց միակ աղբյուրը նրա իսկ ստեղծագործություններն են: Հիմք ընդունելով Հովասափ Սեբաստացու բանաստեղծություններում առկա մի քանի տվյալ՝ Գարեգին Հովսեփյանը ենթադրում է, որ նա ծնվել է 1508-1513 թվականների միջև¹: Այստեղ որոշ տեղեկություններ կան Հովասափի հոր՝ Թադեոս քահանայի, եղբոր, մոր և կնոջ մասին: Ըստ այդ տեղեկությունների՝ Հովասափի ուսումնառության գործում մեծ դեր է ունեցել հայրը՝ Թադեոս քահանան, ով, վարպետ գրիչ լինելուց բացի, ակնհայտ բանաստեղծական ու նկարչական ունա-

¹ Գ. Յովսեփեան, «Յովասափ Սեբաստացի», Արարատ, 1918, էջ 227-229:

կուլթյուններով օժտված մարդ էր: Նրանից էլ Հովասափը ստացել է նկարչական ու բանաստեղծական իր առաջին նկրտումները²:

Սկսած 1865 թ. Հովասափի Սեբաստացու բազմաբնույթ մատենագրական ժառանգությունն անդրադարձել են անվանի հայագետներ Ղ. Փիրղալեմյանը³, Գ. Հովսեփյանը⁴, Ն. Մառը⁵, Հ. Մանանդյանն ու Հ. Աճառյանը⁶, Ա. Չոպանյանը⁷, Ֆրեդերիկ Մուրատը⁸, Մակլերը⁹ և այլք, որոնք, ըստ արժանվույն գնահատելով Հովասափի նկարչական և բանաստեղծական բեղմնավոր գործունեությունը, գիտական շրջանառության մեջ են դրել այդ հեղինակի ստեղծագործությունները:

Հովասափի բանաստեղծական ժառանգությունն ուսումնասիրության հարուստ նյութ է հանդիսացել նաև նոր ժամանակի ուսումնասիրողների համար: Մասնավորապես պետք է նշել բանասիրական հանգամանալից քննության

² Հովասափն իր ընդօրինակած «Յայսմաուրֆ»-ներից մեկի հիշատակարանում գովեստի շուրջ խոսքեր է գրում հոր մասին.

«... Այլ փարտողիդ էր և գոված,

Ի յարուեստ է ի ծաղկողաց,

Յօրինիչ ոսկոյ և լաճվարդաց,

Եւ էր պատճառ բազում բարեաց» (ՄՄ 6273, ք. 237բ):

«Ի յարուեստ է ի ծաղկողաց, յօրինիչ ոսկոյ և լաճվարդաց...»՝ արվեստով «գրագիր» կամ «փարտողիդ», այսինքն ձեռագրերի գրիչ:

³ Ղ. Փիրղալեմյանի 1865 թ. հայտնած տեղեկությունը հայր և որդի Սեբաստացիների ընդօրինակած մի շատ արժեքավոր «Յայսմաուրֆ»-ի վերաբերյալ Հովասափ Սեբաստացու՝ գրիչ լինելու մասին առաջին վկայությունն է. «Արդ գրեցաւ սա ի թուականիս Հայոց ՋՂԲ (1543), ի ֆաղափին Սեբաստիոյ, առ ոտս Սրբոյ Աստուածածնին և սուրբ Լուսաուրչին, ձեռամբ Քաղեոս ֆահանայի և մեղսաներկ անձին Յովասափ սարկաւագի... դարձեալ աղաչեմ... յիշեցիք ի Քրիստոս զստացող գրոցս ընդ նմին զանարժան... գրիչս Յովասափ սարկաւագ և զժնողս իմ զՔաղեոս ֆահանայն (այս և հետագա ընդգծումները մերն են – Գ.Կ.) և զգծագրիչ ի սկզբանէ գրոյս մինչև ի Կիրոյին և հրամանքն Աստուծոյ ժամանեալ և ոչ եհաս յաւարտումն գրոյս և փոխեցաւ առ Քրիստոս» (ՄՄ 6273, էջ 237բ-238ա): Այս եզակի ձեռագիր հուշարձանը, որը պահվում էր Ամասիայի ս. Հակոբ վանքում, ոչնչացվել է 1915 թ. եղեռնի ժամանակ: Բարեբախտաբար, Հովասափի ինքնագիր այս «Յայսմաուրֆ»-ի ոչ ընդարձակ նկարագրությունը կա Փիրղալեմյանի հավաքած և մշակած մի «ժողովածու»-ի մեջ (ՄՄ 6273):

⁴ Գ. Յովսեփեան, «Յովասափ Սեբաստացի», *Արարատ* 1918, էջ 226-280 (ընդարձակ ուսումնասիրություն, որին կցված է 18 բանաստեղծություն):

⁵ Н. Марр, «Из летней поездки в Армению», Отдельный оттиск из *Записок восточного отделения императорского русского археологического общества*, СПб, 1891, с. 11-12.

⁶ Յ. Մանանդեան, Հայոց նոր վկաներ, Վաղարշապատ, 1903, էջ 373:

⁷ Ա. Չոպանեան, Հայ էջեր, Փարիզ, 1912, էջ 32-35, նաև А. Tchobanian, *La Roseaie d'Arménie*, t. II, Paris, 1923, p. 135-149; t. III, 1929, p. 137-146:

⁸ Ֆրեդերիկ Մ., «Նշանագիրք իմաստնոց», *ՀԱ*, Վիեննա, 1903, էջ 5-9, 144-146, 333-335:

⁹ F. Macler, *Notices de manuscrits arméniens*, Paris, 1913, p. 109-118.

արդյունքը՝ Վ. Գևորգյանի «Հովասափ Սեբաստացի, Բանաստեղծութիւններ» մենագրութիւնը¹⁰ և Հ. Սիմոնյանի «Հայ միջնադարյան կաֆաներ» գիրքը¹¹: Ուսումնասիրողների համոզմամբ Հովասափ Սեբաստացին, շարունակելով հայ միջնադարյան քնարերգութեան ավանդույթները, զարգացրել ու մի նոր աստիճանի է բարձրացրել այն: Ավելին՝ նրա բանաստեղծութիւնները գնահատվում են որպէս միջնադարյան հայ տաղերգութեան բարձրարժէտ գործեր, ուր շոշափվում են իր ժամանակի անհատի խոհերն ու մտորումները՝ հաճախ հասնելով փիլիսոփայական ընդհանրացումների¹²: Ուշագրավն այն է, որ Հովասափը՝ որպէս բանաստեղծ, այնքան հմուտ էր, որ իր տոմարագիտական բնույթի հինգ քերթվածները գրել է չափածո: Դրանցում արտահայտվել են նրա տոմարագիտական-աստղաբաշխական լուրջ գիտելիքները, ինչպէս նաև հայկական և այլ ժողովուրդների տոմարական գրականութեան քաջատեղյակութիւնը¹³: Գ. Հովսեփյանը դրանք բարձր է գնահատել. «...մի ուրիշ ժամանակակցի այդպիսի գործեր այնքան նշանաւոր է համարուել, որ տարեգրութեան նիւթ է դարձել»¹⁴:

Հովասափ Սեբաստացի ստեղծագործողին բնութագրելու համար հարկ է թող որ հպանցիկ, խոսել նաև նրա գործունեութեան այլ բնագավառների մասին: Այսպէս՝ Հովասափը հայտնի է նաև որպէս ժամանակագիր՝ Սեբաստիայի ժՁ դարի պատմութեանն ակնատես՝ պատմաժամանակագրական գործի հեղինակ¹⁵: Բացի այդ՝ Հովասափը հայտնի է նաև որպէս թարգմանիչ¹⁶ և ընդօրի-

¹⁰ Հովասափ Սեբաստացի, *Բանաստեղծութիւններ*, աշխ. Վ. Գևորգյանի, Երևան, 1964:

¹¹ Հ. Սիմոնյան, *Հայ միջնադարյան կաֆաներ*, Երևան, 1975:

¹² Հովասափ Սեբաստացու բանաստեղծություններից մի քանիսը՝ որպէս միջնադարյան հայ աշխարհիկ պոեզիայի լավագույն նմուշներ, տեղ են գտել 1940 թ. Մոսկվայում հրատարակված «Մաղկափայլ» մեջ (*Антология армянской поэзии*, Москва, 1940, с. 290-292):

¹³ Գրանց են՝ 1. «Վասն երկոտասան կենդանակերպիցն եւ աշխարհաց նոցին ոտանաւոր» (նկարագրում է կենդանաշրջանի տասներկու համաստեղությունները), 2. «Վասն է մոլական աստեղացն եւ բլնութեանն» (գրում է յոթ մոլորակների անվանումները չորս լեզուներով՝ հայերեն, թուրքերեն, լատիներեն, հունարեն), 3. «Ոտանաւոր վասն տումարական արհեստին, եթէ ուստի ըսկսաւ տումարն եւ քննումն լրմանց, ի նոյն Յովասափ Սեբաստացոյ» (տումարի համառոտ պատմություն), 4. «Վասն տումարին ոտանաւոր Հոմայեցոց, արհեստ եւ մակացոսին» (տալիս է եկեղեցական տարբեր տոների որոշման կանոնները), 5. «Ոտանաւոր անփոփոխ եղանականացն» (գրում է զարմանային և աշմանային գիշերահավասարի, ինչպէս նաև ամառային և ձմեռային արևադարձների օրերի մասին) (ՄՄ 1661, թթ. 5ա-6ա, 6ա-9ա, 81բ-83բ, 83բ-87ա, 87ա-89ա):

¹⁴ Գ. Յովսեփեան, «Յովասափ Սեբաստացի», էջ 229-230:

¹⁵ Հովասափ Սեբաստացին իր ընդօրինակած՝ Սեբաստիային վերաբերող ավանդական ժամանակագրությանը կցել է նաև իր օրերի ժամանակագրությունը (տե՛ս Վ. Հակոբյան, *Մանր ժամանակագրութիւններ*, Երևան, հ. 1, 1951, էջ 165-173, հ. 2, 1956, էջ 116): Իբրև ժամանակագիր, գուցե և դեպքին ակնատես, Հովասափն անտարբեր չէր կարող մնալ այնպիսի մի զարհուրելի եղեռնագործության հանդեպ, որպիսին Կոկնայի նահատակու-

նակող: Հովասափի ընդօրինակած ձեռագրերի թվում առանձին հետաքրքրություն է ներկայացնում հայ թարգմանական գեղարվեստական արձակի դասական թարգմանության՝ Կեղծ Կալիսթենեսի «Աղեքսանդր Մակեդոնացու պատմության» 1535 թ. ձեռագիրը՝ իր իսկ շքեղ նկարազարդումներով¹⁷:

Արվեստաբանների ակնդետ ուշադրությունն է արժանացել նաև Հովասափ Սեբաստացու նկարչական արվեստը: Միջնադարյան հայ մանրանկարչության և գրչության արվեստի լավագույն գիտակ Գ. Հովսեփյանի բնորոշմամբ՝ Հովասափ Սեբաստացին իբրև նկարիչ հետաքրքրական է իր պարզությամբ, ինքնուրույնությամբ և ընտրած նյութերով, հատկապես այն նկարները, որոնք կապված են վկայաբանությունների հետ, ինչպես Հովսիմոսի, Երինե կույսի,

թյունն էր և գրում է «Ոտանաւոր նոր վկային Քրիստոսի Կոկնային, որ նահատակեցաւ ի Սեբաստիայ» չափածո վկայաբանությունը (տե՛ս **Յ. Մանանդեան** **Հ. Անառեան**, *Հայոց նոր վկաները*, էջ 373-375): Այս վկայաբանությունը մտաւ է գործել նաև Գրիգոր դպիր Վարագեցու ժամանակագրության մեջ. «թվին ԶԶԵ (1536) զԽօնայ, Կոզչայն նահատակեցին ի Սևաստ» (*Դիվան Հայոց պատմության*, Գիրք Ժ, Թիֆլիս, 1912, էջ 62):

¹⁶ Արդյո՞ք Հովասափը գիտե՞ր օտար լեզուներ: Այս առումով ուշագրավ է նրա ինֆնագիր ձեռագրում տեղ գտած մի անանուն գրույց, ուր պատմվում է Մարիամ Մագդաղենացու ֆարոզությունը Ֆրանսիայում: Զրույցի վերջում կարդում ենք Հովասափի մակագրությունը. «Յովսի ԻԸ (28) գրեցի» և շարունակությունը. «... գոր և Քրիստոս մեծապես պատւեաց զօր հանկատեան նորա պարակցութեամբ դասիմ հրեշտակամ, որ[ոց] աղապիմն ողորմի ըստացողի գրոցս մեղապարտ Յովասափ գրչի, և կարդացողաց և լսողաց, և քարվանդեցաւ պատմութիւնս ի լատին գրոց» (Bl Ms or. 805, 304v, **J. Assfalg & J. Molitor**, *Verzeichnis der orientalischen Handschriften in Deutschland, Armenische Handschriften*, Wiesbaden, 1962, S. 100):

¹⁷ Բեռլինի Պետական գրադարան, Ms or. 805, ժողովածու, 1535 թ., Սեբաստիա: Գրիչ, ծաղկող և ստացող՝ Յովասափ սարկապ Սեբաստացի: Խորագիր. «[Պ]ատմութիւն Մեծի Աշխարահակալի Աղեկսանդրի Մակեդոնացու: Կեանք վարուց ֆաշութեան մինչ ի վաղնան նշանօք» (թթ. 3բ-103բ): Որին հետևում է Հովասափ Սեբաստացու չափածո հիշատակարանը.

«Եւ գգրող այսմ գրի
Ես Յովասափ մեղամ ի լի.
Որ ես ի յիմ ժամանակի
Զգործեցի մաս մի բարի:

Զ (900) թուականիս,
ԶԳ (83) անլորդի
գրեալ եղև բանն գործի
թագաւորին Աղեկսանդրի:
Սեբաստիայ այս ֆաղափի
առ ոտն սուրբ Լուսաւորչի:

Փառք տանք արհնենք գնայր և գորդի
Թէ ինչ բանք ստեղծեալ է յաշխարհի» (թ. 103բ):

Զեռագիրը պարունակում է նաև Հովասափի տաղերի ժողովածուն (**J. Assfalg & J. Molitor**, op. cit., S. 93-100):

Ներսէս Մեծի, որոնց նվիրված կաֆաներ է գրել և զարդարել բովանդակութեան համաձայն երևակայական նկարներով: Պատմական այս նկարչութիւնը նրանով է արժանի ուշադրութեան, որ դա սկիզբն է հայ միջնադարյան աշխարհիկ մանրանկարչութեան¹⁸: Նույն ձեռագրում Մուշեղ Մամիկոնյանի քաջագործութեանն ու մահվանը նվիրված իր պատմական քերթվածը Հովասափը նկարազարդել է ինքնատիպ պատկերներով, որտեղ երևում են գրական նյութին համահունչ արտահայտչական ձևեր գտնելու հմտութիւնն ու նկարչի վառ երևակայութիւնը¹⁹ (տե՛ս ներդիր, նկ. 1, 2, 3, 4):

Այսուհանդերձ, Հովասափ Սեբաստացու բազմաժանր մատենագրական ժառանգութիւնն ուսումնասիրողների քննութեան շրջանակներից դուրս էր մնացել նրա հեղինակած «Բժշկարան ընտրեալ տարրական մախցի» բնագիտական երկը, երբ ակադ. Լ. Խաչիկյանը 1971 թ. գիտական շրջանառութեան մեջ դրեց վերոնշյալ ստեղծագործութիւնը՝ այն բնութագրելով որպէս միջնադարյան հայ բժշկագիտութեան մի արժեքավոր ստեղծագործութիւն²⁰: Մեծանուն գիտնականին հաջողվել էր հայտնաբերել Հովասափի բժշկարանի երկու ձեռագիր ընդօրինակութիւն, ուր նշված է հեղինակի անունը²¹ և լեզվական խմբագրման ենթարկված մի փոփոխակ, որ ժէ դարի սեբաստահայ բժիշկ Բունիաթ Սեբաստացին ազուցել է Ամիրդովլաթ Ամասիացու «Օգուտ բժշկութեան» երկի իր խմբագրութեան մեջ, որպէս տեսական-կազմախոսական մի հավելյալ

¹⁸ Գ. Յովսէփեան, «Յովասափ Սեբաստացի», էջ 259-260:

¹⁹ Բով. 805, րթ. 11ա, 157ա, 210ա, 220բ, 225բ, 230ա, 232ա, 243ա:

²⁰ Լ. Խաչիկյան, «Հայ բնագիտական միտքը 14-18-րդ դարերում», ՊԲՀ, 1971, № 2, էջ 32: Ի դեպ, միջնադարյան հայ բժշկագիտությունն ուսումնասիրողները բարձր են գնահատել այս երկը՝ այն դիտելով որպէս անհեղինակ բժշկարան (Ղ. Օգանեսյան, *История медицины в Армении*, ч. 3-ая, Е., 1964, с. 21-26, Ա. Կոնյան, *Բժշկագիտութիւնը Հայաստանում XI-XIV դարերում*, Երևան, 1968, էջ 74-76, 84-87, 126-127, Ա. Տեր-Պողոսյան, *Բիոլոգիական մտքի զարգացումը Հայաստանում*, Երևան, 1960, էջ 401-414:

²¹ Դրանցից մեկը ՄՄ 7049 ձեռագիրն է (*Յուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի*, հ. Բ, կազմեցին Օ. Եգանյան, Ա. Զեյթունյան, Փ. Անթարյան, Երևան, 1970, էջ 450), հիշատակարան. «Բայց մե՛ք անպիտան ծառայս ձեր մեղայաբար Յովասափ անուն սարկաւազ Սեբաստացի կամեցայ զ[ը]նտիրն հաւաքել և բացայայտել փոքր ի շատէ ի գրոց իմաստայսիրականաց և բժշկական զամէնայն ցեղ ցաւոց ըստացումն, զեփելն, զտորեղն, զամէնայն դեղոց և ինամ ածել ցաւածին: Եւ նայ, որ ըստեղծաւոյն է տայ զառողջութիւն և նմայ փառք և պատիւ յաւէտ և յափտէանս անըսպար յափտէնից ամէն» (րթ. 88ա-88բ): Իսկ մյուսը Զմմառի վանքի Մատենադարանի Անտոնյան հավաքածուի հ^տ 212 ձեռագիրն է (*Յուցակ հայերէն ձեռագրաց Զմմառի վանքի Մատենադարանին*, հ. Բ., «Անտոնեան հավաքածոյ», կազմեցին Ն. Ալիսեան, Հ. Ոսկեան, Վիեննա, 1971, էջ 209): Արդ՝ հեղինակային հիշատակարանը. «Բայց մե՛ք անպիտան ծառայս ձեր մեղայաբար Յովասափ անուն սարկաւազ Սեբաստացի կամեցայ զընտիրն հաւաքել և բացայայտել փոքր ի շատէ ի գրոց յիմաստասիրական և բժշկական զամէնայն ցեղ ցաւոց ըստածումն զեփելն զտորեղն զամէնայն դեղոց և ինամ ածել ցաւածին»:

բաժին՝ «Եւ մարդակազմութիւն մի այլ գրոցն» վերտառութեամբ²²: Երջանկահիշատակ Լ. Խաչիկյանի հանձնարարութեամբ և ղեկավարութեամբ մենք իրականացրինք «Բժշկարան ընտրեալ տարրական մախցի» բնագրի հրատարակութիւնը բժշկագիտական-բնագրագիտական վերլուծութեամբ²³: Պարզվեց, որ բժշկարանը փոքրածավալ, բայց ինքնատիպ ստեղծագործութիւն է, որի հիմքում ընկած են Ամիրգովլաթ Ամասիացու «Օգուտ բժշկութեան» երկասիրութեան առաջին՝ «Ուսումն բժշկութեան» տեսական բաժինը, նույն հեղինակի «Անգիտաց անպէտ» դեղաբառարանի առաջաբանը, միջնադարյան տարբեր բնույթի ձեռագիր ժողովածուներում հանդիպող «Ի շորից գոյացեալ ասի մարդ, զի շորք պատճառք են եղելութեան» բնաբանով անհեղինակ գործը և ԺԳ դարի հանրագետ-փիլիսոփա Գրիգոր Տաթևացու «Գիրք հարցմանց» աշխատութեան հինգերորդ՝ «Յաղագս լինելութեան մարդոյն» վերնագրով տիեզերագիտական-բնագիտական հարցերին առնչվող բաժինը: Բժշկարանի այդօրինակ քաղվածական բնույթն, անշուշտ, չի նսեմացնում այդ գործի գիտական նշանակութիւնը, քանի որ հեղինակն իր ձեռքի տակ եղած աղբյուրները ստեղծագործաբար օգտագործելով, համակարգված ձևով շարադրել է որոշակի բժշկական հարցադրումների մասին արդէն իր թող որ ազդեցութիւն կրած, տեսակետները՝ դրանով իսկ հարստացնելով հայ միջնադարյան բժշկական մատենագրութիւնը: Եվ հենց Հովասափի այս բժշկական ստեղծագործութիւնը առիթ տվեց մեզ հետամուտ լինել հայկական ծագման միջնադարյան անհեղինակ «Պատմութիւն Հայոց թագաւորին» զրույցի մեջ տեղ գտած կազմախոսական բնույթի կաֆաների հեղինակի հարցին:

Ինչպէս վերը նշեցինք, Հովասափն ի սկզբանէ հայ միջնադարյան դպրութեանը հայտնի էր որպէս կաֆաների հեղինակ: Կաֆան հայ միջնադարյան քնարերգութեան յուրատիպ և տարածված բանաստեղծական ժանր է, որն ուսումնասիրողների համոզմամբ նպաստել է միջնադարյան հայ գրականութեան աշխարհականացմանը²⁴: Ներթափանցելով մի շարք թարգմանական և բուն հայկական զրույցների մեջ (Աղեքսանդր Մակեդոնացու, Պղնձե քաղաքի, Փահլուլ թագավորի, Մանկան և աղջկա, Հայոց թագավորի պատմութեան) կաֆաները նպաստել են այդ զրույցների հայկականացմանն ու ժողովրդականացմանը²⁵: Մեծ է կաֆաների ազդեցութիւնը Հովասափ Սեբաստացու քերթվածների վրա թեմատիկ-գաղափարական առումով: Գ. Հովսեփյանի համոզմամբ, Հովասափի խրատական և հոգևոր բնույթի կաֆաների մեջ իր բովանդակու-

²² Լ. Խաչիկյան, տե՛ս նույն տեղում:

²³ Տե՛ս Գ. Կարապետյան, «Հովասափ Սեբաստացու «Բժշկարան ընտրեալ տարրական մախցի» բնագիտական երկը», ԲՄ, 15, 1986, էջ 288-316:

²⁴ Տե՛ս Հ. Սիմոնյան, Հայ միջնադարյան կաֆաներ, էջ 29:

²⁵ Տե՛ս նույն տեղում:

թյամբ ամենից տպավորիչը «Աշխարհիս սահմանն է հանց» նշանավոր քերթվածն է, որն ըստ էութեան, ծավալուն մի կաֆայաշարք է, որտեղ արծարծվում է աշխարհի ունայնութեան և «հոգևոր բարքերի» հավիտենականութեան գաղափարը: Ըստ Գ. Հովսեփյանի՝ «... հենց միայն այս աշխատութեան համար Յովասափը իւր տեղը պիտի ունենայ մեր միջնադարյան տաղասացների շարքում»²⁶:

Հմտորեն տիրապետելով կաֆաների արվեստի յուրահատկություններին՝ Հովասափն իր ընդօրինակած պատմություններն ու գրույցները հարստացրել է իր հորինած մեծարժեք կաֆայաշարքերով, որոնք հիմնականում ներհյուսված են արձակ ստեղծագործության առանձին դրվագներին, վերաշարադրում, վերապատմում են նախընթաց հատվածի բովանդակությունը, և, բխելով բնագրի տվյալ հատվածի իմաստից, դարձյալ կապվում նրա հետ: Այս առումով առավել ուշագրավ է բարձրարվեստ կաֆաների այն շարքը, որ Հովասափը ներմուծել է 1535 թ. Սեբաստիայում իր ընդօրինակած և շքեղ նկարազարդած «Պատմութիւն Աղեքսանդրի Մակեդոնացույ»²⁷ օրինակի մեջ: Հովասափին հաջողվել է աշխարհիկ բովանդակությամբ ստեղծագործությունների հետևու-

²⁶ Գ. Յովսեփեան, «Յովասափ Սեբաստացի», էջ 240:

²⁷ Հունաստանում, Ք. ծ. ա. 2-րդ – Ք. ծ. 3-րդ դարերում հրապարակ է հանվել գրական-ժողովրդական ծագում ունեցող մի երկ՝ «Աղեքսանդր Մակեդոնացու պատմությունը», որը կարճ ժամանակ անց թափանցել է Արևմտաֆի և Արևելքի շատ ժողովուրդների գրականության մեջ: Հեղինակն անհայտ է, վերագրել են հենց «Պատմության» մեջ հիշատակվող՝ արշավանմանում Աղեքսանդրին ուղեկցող, նրա պաշտոնական տարեգիր Կալիսթենեսին (Ք. ծ. ա. 370-327 թթ.): Սակայն երկում առկա հեփիաթային հրաշապատում տարրը և այլ հանգամանքներ հանգեցրել են հետազոտողներին այն եզրակացության, որ «Պատմություն»-ը մ.թ. 3-րդ դարի գործ է, ուստի և ներկայացվում է Կեղծ-Կալիսթենես (Pseudo-Callisthenes) պայմանական անունով (տե՛ս Պատմութիւն Աղեքսանդրի Մակեդոնացույ, Հ. Սիմոնյանի աշխ., Երևան, 1989, էջ 9): Ուսումնասիրողների կարծիքով՝ Աղեքսանդրի պատմության հայերեն թարգմանությունը, որը համարվում է հայ թարգմանական գեղարվեստական գրականության անդրանիկ հուշարձանը, կատարվել է Ե դարի 80-ական թվականներին: Թարգմանության «հաւանական» հեղինակը, ըստ Հ. Տաշյանի, Մովսես Խորենացին է, իսկ ժամանակը՝ 486 թվականը (տե՛ս Յ. Տաշեան, Ուսումնասիրութիւնք Ստոյն Կալիսթենեսայ Վարուց Աղեքսանդրի, Վիեննա, 1892, էջ 72, 77): Հայ դպրության արշալույսին, Աղեքսանդրի պատմության հայերեն թարգմանությունը կարելի է համարել մեր հին մատենագրության «միակ հեթանոսական գրքի թարգմանությունը» (տե՛ս Ա. Սուբրեան, «Հումերական բառգիրք եւ հումերական տող», Բազմավէպ, 1877, էջ 15-16): Թարգմանական այս հուշարձանը դարերի ընթացքում խմբագրվել է (այն մեզ է հասել երկու խմբագրությամբ, նաև բանավոր տարբերակով) և համարվել տարբեր հեղինակների՝ նրա դրվագներին հյուսած հատուկ երգերով կաֆաներով, ինչպես նաև աշխարհիկ թեմաներով նկարազարդումներով: Այդ հեղինակներն են Ֆրիկը, Խաչատուր Կեչառեցին, Գրիգորիս Ախարամարցին, Զաֆարիա Գնունեցին, Հովասափ Սեբաստացին: Բազմաբնույթ են Հովասափ Սեբաստացու ստեղծագործական առնչումները գրական-գեղարվեստական այս հուշարձանի հետ: Նա ոչ միայն ընդօրինակել, այլև իր ընդօրինակած ձեռագիրը հարստացրել է պատմական բնույթի նոյն նկարազարդումներով և ուշագրավ կաֆայաշարքով (տե՛ս Պատմութիւն Աղեքսանդրի Մակեդոնացույ, Հ. Սիմոնյանի աշխ., էջ 18):

Թյամբ կաֆաներ ներմուծել նաև իր մշակած վարքաբանական ու վկայաբանական գործերի մեջ՝ մասնավորապես, Ներսես Մեծի ու Երինե կույսի վկայաբանությունների, դրանք հարստացնելով նյութին համապատասխան մանրանկարներով²⁸: Կաֆաների հորինումը գրեթե միշտ զուգակցվել է համապատասխան գրույցների²⁹ ու պատմությունների՝ Հովասափի մշակման ու ընդօրինակման աշխատանքներին, և դրանք ոչ միայն հարստացնում են բնագիրը, այլև առավել ցայտուն դարձնում գրույցի քարոզած գաղափարներն ու մտքերը:

Միջնադարյան հայ մատենագրությունը նույնպես հարուստ է թե՛ թարգմանական, թե՛ բուն հայկական ծագման տարբեր բնույթի գրույցներով, որոնց մի մասը հագեցված է կաֆաներով: Մասնավորապես հետաքրքրական է «Պատմութիւն Հայոց թագաւորին» խորագրով գրույցը, որում տեղ են գտել կազմախոսական բնույթի կաֆաներ: Ուսումնասիրողների կարծիքով այս գրույցի և՛ բնագիրը, և՛ կաֆաները զուտ հայկական ծագում ունեն, ի տարբերություն Աղեքսանդրի, Պղնձե քաղաքի, Փահլուլ թագավորի և Մանկան ու աղջկա պատմությունների, որոնք տարբեր լեզուներից կատարված թարգմանություններ կամ փոխադրություններ են³⁰: Ուշագրավն այն է, որ այդ կաֆաները նկատելի առնչություններ ունեն Հովասափ Սեբաստացու «Բժշկարան ընտրեալ տարրական մասցի» երկի կազմախոսության բաժնի նույնանուն հատվածների հետ:

«Պատմութիւն Հայոց թագաւորին» ուսուցողական-իմաստասիրական գրույցի համառոտ բովանդակությունը հետևյալն է. հայոց թագավորներից մեկն իր մերձավորներից պահանջում է բացատրություններ տալ մարմնի տարբեր մասերի և օրգանների կազմության, դերի և նշանակության վերաբերյալ: Եվ նրանք թագավորին հաջորդաբար ներկայացնելով մորթված ոչխարի օրգանները (ուղեղը, սիրտը, լյարդը, թոքը, փայծաղը, երիկամները), բնութագրում են նրանց գործառույթները կաֆաների ձևով: Այդ նյութով են պայմանավորված մեզ հետաքրքրող կաֆաները, որոնց շարքը բաղկացած է տասնհինգ միավորից: «Պատմութիւն Հայոց թագաւորին» գրույցի երեք գրչագրում

²⁸ Հ. Սիմոնյան, *Հայ միջնադարյան կաֆաներ*, էջ 209:

²⁹ «Զրույցը» գեղարվեստական արձակի այն ժանրն է, որն ունի բարոյա-խրատական, պատմա-հեռոսական, կրոնա-դավանաբանական ուսուցողական բովանդակություն և ծառայում է որևէ կոնկրետ նպատակի՝ հայրենասիրության, մարդասիրության, արդարադատության, անկաշառության, ի հակադրություն պարծենկոտության, արհամարհանի, ուխակալության: Ժողովրդի դարավոր իմաստությունն իր մեջ ամփոփող այդ անսպառ գանձարանը մշտապես ստեղծագործական ակունք է հանդիսացել տարբեր ժամանակաշրջանների գրողների համար: Տե՛ս Ա. Մրապյան, *Հայ միջնադարյան գրույցներ*, Երևան, 1969, էջ 214-220:

³⁰ Տե՛ս Հ. Սիմոնյան, *Հայ միջնադարյան կաֆաներ*, էջ 196:

(ՄՄ 8076, ՄՄ 723, ՄՄ 841) տեղ է գտել տասնհինգ կաֆա, առանց հեղինակային պատկանելության վերաբերյալ որևէ նշումի: Ահա դրանց ցանկը.

1. Հիմն գեմ ամուր պիտի
2. Ծոճրակն է յիշողական
3. Աչքն է, յորժամ իր տեսանէ
4. Պարտիս ականջդ կապել
5. Քիթն է շատ վնաս բերէ
6. Զբերանդ ամուր պանէ
7. Մի զձեռքդ մեկնէր ի տեղ
8. Մի ըզբարտիդ կամփն առնել
9. Թոքն է պղղամի տունըն
10. Լերդն է մարդու մարմին
11. Փածեղն է գունովն սև
12. Զինչ, որ արտափին սէր կա
13. Լեղին զագրալի համով
14. Բուշտն խիստ նագուկ իրք է
15. Ոտքն է, որ քարէ զմարդն³¹:

Ինչպես տեսնում ենք, կաֆաներն ըստ բովանդակության բաժանվում են երկու խմբի՝ նկարագրական և իմաստասիրական: Իմաստասիրական կաֆաներն առավելապես ունեն խրատական բնույթ, նրանց մեջ բացակայում են բժշկական շեշտադրումները:

Ծանոթանանք դրանցից մեկի հետ.

«Կայր թագաւոր մի Հայաստան և ուներ իմաստուն սընընդակիցք իւր և կամեցաւ օր մի փորձել զիւր սնընդակիցքն և զիշխանքն:

Օր մի հրամայեաց թագաւորն, թէ գնացիք զենեցիք ոչխար մի և գոր ի յինքն վատ զօդուածք կայ, առ իս բերիք: Գնացին զենեցին ոչխար մի, և էառ մէկ մի գլըղուղն և երեւ առ թագաւորն..., գնաց մէկ այլ զծեծրակն երեւ..., գնաց մէկն այլ, զաչքն երեւ: Ասէ թագաւորն.

– Ի՞նչ պեղծ կայ ի յաչքն:

Ասեն.

– Աչքն է, որ կու տեսանէ և ցանկայ, զմարդ զերթ արբած առնէ, զբանականութիւնն տանէ: Աչքն է, որ կու տեսնու և մատնէ, երբ իրք մի տեսնու և ցանկա զամէնն, զգայութիւնն ի հետ իւրն կու քաշէ և զմարդ յիմարեցուցանէ:

Աչիւն յորժամ իրք տեսնու, զգայութիւնն ի հետ կու տանի,

Շարժէ զցանկութիւն մարդոյն և ի մեղաց տունն կու տանի.

³¹ ՄՄ 723, քք. 242ա-246աբ:

Վանց տեսանելոյն շատ մեղփ ի վերայ մարմնոյն կու բանի,
Պատճառ է նա շատ մեղաց, թէ լինիս դու իւրն գերի»³²:

Ինչ վերաբերում է նկարագրական կաֆաներին՝ դրանք ներկայացնում են համապատասխան օրգանի կազմությունն ու նրա գործառույթը:

Բերենք մի օրինակ.

«Գնաց մէկն զթոփն երեւ: Ասէ թագաւորն.

– Ի՞նչ պեղծ կայ ի թոփն:

Ասեն.

– Թոփն է տուն պղամի ու մաղասի. զի յինքն կու ժողովի, և ծերութիւն
աւնէն ի պղամն է, և թէ պղամն չէր, նա չէր ծերանայր: Եւ ասէ.

Թոփն է պղամի տունն ու մաղասն առ ինքն ժողովի,

Ու այլ իրփ չուզենայ, առ ինք, բայց միայն նա հողմ ու փամի,

Զերթ փոփս դարբնի է նա, որ փամոյն առ ինքն տայ տեղի,

Շուտ ծերացընէ զմարմինն, յերբ պղամըն առ ինքն ժողովի»³³:

*Երկար ժամանակ հայ բանասիրութեան մեջ ճշգրտված չի եղել խնդրո
առարկա զրուցի և նրանում գտած կաֆաների հեղինակի հարցը: Այն հանգա-
մանքը, որ զրուցի վեց նկարագրական կաֆաները (Թոփին, Լարդին, փայ-
ծաղին, երիկամին, լեղապարկին և միզապարկին վերաբերող) առնչվում են
Ամիրդովլաթ Ամասիացու «Յգուտ բժշկութեան» երկասիրութեան մարդակազ-
մութեանը վերաբերող բաժնի հետ, ուսումնասիրողներին առիթ է տվել կար-
ծելու, որ կաֆաների հեղինակը կարող էր լինել Ամիրդովլաթ Ամասիացին³⁴:*

*Ի սկզբանե, մեզ համար վիճելի էր այս կարծիքը հետևյալ նկատառում-
ներով: Ամիրդովլաթ բժշկապետը միջնադարի այն երջանիկ մատենագիրներից
է, ում ստեղծագործություններն ազդեցութեան լայն շրջանակներ ու տարածում
են ունեցել և որի գրեթե բոլոր գործերն ամբողջականորեն հասել են մեզ³⁵:
Այսուհանդերձ, Ամասիացու ամենատարբեր բնույթի ստեղծագործությունների
թվում, լինեն դրանք տոմարագիտական, դեղագիտական, աղթարական, թե
զուտ բժշկական, չի հանդիպում կաֆայատիպ որևէ ստեղծագործություն կամ*

³² ՄՄ 841, քթ. 113ա, 113բ-114ա:

³³ Նույն տեղում, ք. 115բ:

³⁴ Հ. Սիմոնյան, նշվ. աշխ., էջ 201:

³⁵ Ամիրդովլաթ մեծ բժշկապետի ստեղծագործությունները դարերի ընթացքում ունեցել են հարյուրավոր ընդօրինակություններ, որոնք պահվում են Մաշտոցյան Մատենադարանում և մի շարք այլ երկրների գրապահոցներում (միայն Մատենադարանում հանգրվան են գտել հարյուրից ավելի ընդօրինակություն), տե՛ս Յուզակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, կազմեցին՝ Օ. Եգանյան, Ա. Զեյթունյան, Փ. Անթաբյան, հ. Ա, Երևան, 1965, էջ 1447, հ. Բ, Երևան, 1970, էջ 1256:

թեկուզ հիշատակում այդ մասին: Այդօրինակ հիշատակումներ բացակայում են նաև նրա աշխատութիւնների հետագա ընդօրինակողների մոտ:

«Պատմութիւն Հայոց թագաւորին» գրույցի հեղինակն, ամենայն հավանականութեամբ, ժՁ դարի բանաստեղծ-մատենագիր Հովասափ Սեբաստացին է, ում ստեղծագործութիւնները բազմաթիւ թելերով առնչվում են կաֆաների հետ: Նկատի ունենալով այն հանգամանքը, որ ի լրումն իր բազմաբնույթ մատենագրական գործերի, Հովասափը հեղինակել է նաև բնագիտական ուղղվածութեան մի երկ՝ «Բժշկարան ընտրեալ տարրական մախցի», որը վկայում է նրա լուրջ բնագիտական ընկալումների մասին, ենթադրում ենք, որ «Պատմութիւն Հայոց թագաւորին» գրույցի մեջ տեղ գտած կաֆայաշարքի հեղինակը նույնպէս Հովասափ Սեբաստացին է: Մեր հետագա հետազոտութիւնները հաստատեցին այդ վարկածը: Մատենագրարանի «Պատմութիւն Հայոց թագաւորին» գրույցի երեք գրչագրերից մեկում (ՄՄ 723, թ. 246բ) հայտնաբերվեց Հովասափի հեղինակութիւնը հավաստող չափածո հիշատակարան, որը հետևում է գրույցի ավարտին.

«Ձեռքս փրտեայլ ի հող դառնա՛յ,
 Զտառըս Ձեզ յիշատակ մընայ,
 Եւ գոր ընթեռնուն ողորմիս տա՛յ,
 Եւ գծողիս ով ոք է սա՛յ:
 Զեղկելի հողո՛ւ, ըզմտոք պըղտորս,
 Զմարմնով հըղտորս՝ զՅովասափ ծողոս
 Յիշեցէ՛ք ի մաքրափայլ յաղօթս Ձեր
 Եւ դուք յիշեալ լիջի՛ք ի Քրիստոսէ Ամէն»:

Նման չափածո հիշատակարաններ Հովասափը կցել է նաև մի շարք այլ ստեղծագործութիւնների, մասնավորապէս՝ «Աղեքսանդրի պատմութեան» իր ընդօրինակած ձեռագրում (տե՛ս վերը), իսկ մյուս երկու (կրկին Հովասափի ձեռքով գրված և նկարագարոված) ձեռագիր մատյաններից մեկը՝ «Ամասիայի ս. Հակոբ եկեղեցու Յայսմաւուրքն» է, արդ՛ հիշատակարանը.

«Ով մանկունմն նոր Սիոնի,
 Եւ քահանայքդ ցանկալի,
 Յորժամ կարդայք ի յատենի,
 Զսուրբ մատեանս այս սխրալի,
 Դուք յիշեցէ՛ք ի լի սրտի,
 Եւ զիս մեղօֆս եղկելի,
 Յովասափ անուն պարսաւելի,
 Որ եմ խոցեալ նեախի շարի
 Եւ դեկերեալ կամ ի մարմնի» (ՄՄ 6273, թթ. 237բ-238ա):

Երրորդը Վիեն. 172 «Ոսկեփորիկ-Հաւաքածոյ» ժողովածուի հիշատակարանն է.

«Անբարբառ բարեխաւսութեամբ,
Ամենայաղթ և Աստուածընկալ սուրբ նշանին,
Ողորմեա Քրիստոս Աստուած,
Մեղապարտ գրչիս և ստացողի Յովասափի,
Եւ ծնողաց իւրոց տէր Թաղէոսին և Շահփաշափն
Գրել ՋՂԱ. (1542) ձեռամբ Յովասափ գրչի»³⁶:

«Պատմութիւն Հայոց թագաւորին» գրույցի կաֆայաշարքի Հովասափի հեղինակութունը ստույգ հավաստող հիշատակարանի առկայության փաստից բացի մենք վերոհիշյալ կաֆայաշարքը համադրեցինք Հովասափի հեղինակային բժշկարանի մարդակազմության բաժնի համապատասխան գլուխների հետ: Պարզվեց, որ կաֆաների՝ տվյալ օրգանի բնախոսական գործառույթներին վերաբերող դատողութունները ակնառու ընդհանրութուններ ունեն Հովասափի բնագիտական երկի բնախոսական բնութագրումների հետ: Ահա մի քանի օրինակ.

Պատմութիւն հայոց թագաւորին	Բժշկարան ընտրեալ տարրական մախցի
<p>Կաֆա Թոճըն է պլղամի տունըն Ու մաղասն առ ինճըն ժողովէ. Այլ իրճ չուզենայ առ ինճն, Բայց միայն նա հողմ ու քամի Ձերթ փոխա դարբնի է նա, Որ քամոյն առ ինճն տայ տեղի, Շուտ ծերացնէ զմարմինն Յերբ պլղամն առ ինճըն ժողովի:</p>	<p>Վասն ստըղծման թոճին ... Ձթոճին միսն կակուղ և թըթն միս է արեւ և մէջն փուննայ, նորա համար է, որ ինճն քամու տուն է, և սարվազն է: ... Թոճն արգիլած պու- խար կապի, պիտի որ թոճն զայն հանէ և ի տեղն հով բերէ և թէ որ չըբերէ, նա ի ժ[ա]մուն սպանանէ զմարդն այն պատճառովն, որ պու- խարնին ի ներս մնա:</p>
<p>(ՄՄ 841, ք. 115բ)</p>	<p>(ՄՄ 7049, քք. 103ա-103բ)</p>
<p>Կաֆա Փածեղն է գունովըն սև Ու շինած յախոռի նըման. Ձինչ այրած արիւն կենայ, Յինճն առնու զամէն ի լըման. Երբ առաւելու առ ինճն, Երակնին իւր խիստ ուռենայ.</p>	<p>Վասն ստեղծման փածղանըն ... Որ ինճն զարիւնին մրուրն յինճն բաշէ և սէվտա առնէ և իր կերակուրն այն մրուր արիւն է: Եւ հանց գիտացիր, որ փայծեղն մարմին մի է ցանցառ և մէջն փունն փունչ, և ինճն</p>

³⁶ 3. Տաշեան, Յուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա, էջ 488:

<p>Ղաթի ու սատայ բերէ, Ու առնէ զմարդն խումրի նման: (Նույն տեղում, թ. 116ա)</p> <p>Կաֆա Լեղին զագրելի համով Ու լի է նա մաղձ ու մաղաս, Յորժամ ինքն մաղձով լինի, Վերացնէ զինչ որ կայ հաւաս, Տրտմութիւն շատ ցաւ բերէ, Կու ածէ մարդոյ նա վրնաս...</p> <p>(Նույն տեղում, թ. 117ա)</p>	<p>այնոր համար, որ թանձր արիւնն յինքն փաշէ և ինքն անձինն <i>ախոռն</i> է: (Նույն տեղում, թ. 102ա)</p> <p>Վասն սարդձման լեղոյն ... Զպաղլամին զպեղծն և զսուրն և զլեղին ի ստամոքէն ի դուրս հանէ: Զմարդն ի մէծ զահմէթէ պահէ և զանձն թըթևացնէ: Եւ զօրութիւն լե- ղոյն այն է, որ զսափրան յարեմէ բաժանէ և յինքն փաշէ և յիստիկէ:</p> <p>(Նույն տեղում, թ. 104ա)</p>
---	---

Այս ընդհանրութիւնները թույլ են տալիս ենթադրել, որ «Պատմութիւն Հայոց թագաւորին» գրուցի կաֆայաշարքի հեղինակ հարկ է համարել Հովասափ Սեբաստացուն: Ավելին՝ քննվող գրուցում բնագրի և կաֆաների աղերսները ենթադրում են նրանց միաժամանակյա ստեղծումը: Ակնհայտ է, որ կաֆաներն այստեղ բնագրի անքակտելի մասն են և կարևոր դեր ունեն գրուցի կառուցվածքում, սա էլ առիթ է տալիս կարծելու, որ թե՛ կաֆաների և թե՛ գրուցի հեղինակը նույն ստեղծագործողն է, այս դեպքում՝ Հովասափ Սեբաստացին: Հավելենք, որ ոչ միայն «Պատմութիւն Հայոց թագաւորին» գրուցը, այլև Հովասափի տոմարագիտական շափածո գործերն ունեն ուսուցողական բնույթ և, շատ հավանական է, օգտագործվել են կրթօջախներում:

Վերոշարադրածից բխում է, ժՁ դարի առաջին կեսի սեբաստահայ գիտական մշակույթն ունեցավ յուրօրինակ մի ստեղծագործող, որի բազմաժանր մատենագրական ժառանգութիւնը բնորոշում է նրան որպէս տաղանդավոր բանաստեղծ-տաղերգուի, արհեստավարժ ընդօրինակող գրչի, տոմարագետի, նկարչի և, վերջապէս, բնագետի, որի բժշկագիտական ժառանգութեան շնորհիվ ավելի ստույգ և ամբողջական դարձավ սեբաստահայ բժշկական դպրոցի իրողութեան փաստը:

DONARA KARAPETYAN
YOVASAP‘ SEBASTATS‘I AS THE AUTHOR OF THE KAFAS IN THE
HISTORY OF THE ARMENIAN KING

Key words: medical book, anatomy of the human body, versification, tale, miniature, chronicler, copyist of manuscripts.

Yovasap‘ Sebastaci was one of the active participants in the cultural and scientific life of the Armenian community of Sebastia of the XVI

century. Since the 60s of the 19th century, his multi-genre literary heritage has become a subject of philological study. In 1971, Acad. L. Khachikyan found out that Yovasap' is also the author of the previously unstudied scientific work *An Excellent Medical Book for the Cardinal Humours*. Khachikyan found two manuscripts containing the *Medical Book*, in which the name of the author was indicated.

By studying the work from the medical point of view, we have characterized it as a very peculiar example of medieval Armenian medical thought. Also, our acquaintance with this work allowed us to raise the question about the authorship of the anonymous *History of the Armenian King*, which includes *kafas* on natural philosophy. The article argues that the author of the *History* is Yovasap' Sebastaci.

ДОНАРА КАРАПЕТЯН
ОВАСАП СЕБАСТАЦИ – АВТОР КАФ ИЗ СКАЗА
“ПОВЕСТВОВАНИЕ ОБ АРМЯНСКОМ ЦАРЕ”

Ключевые слова: лечебник, строение человека, средневековое стихосложение, кафа, сказ, миниатюра, летописец, переписчик рукописей.

Овасап Себастанци – один из активных участников культурной и научной жизни армянской общины Себастии XVI в. С 60-х годов XIX столетия его многожанровое литературное наследие становится предметом изучения филологов. В 1971 г. акад. Л. Хачикян установил, что Овасап является также автором до того неисследованного естественнонаучного сочинения *Отменный лечебник кардинальных влаг*. Ему удалось обнаружить две копии “Лечебника”, в которых было указано имя автора. Исследовав памятник с точки зрения истории медицины, мы охарактеризовали его как весьма своеобразное творение армянской средневековой медицинской мысли. Знакомство с этим произведением позволило нам поставить вопрос и об авторстве анонимного армянского сказа *Повествование об армянском царе*, в который включены кафы естественнонаучного содержания. В статье приводятся полученные на основании филологического и историко-медицинского анализа доводы в пользу того, что автором сказа является Овасап Себастанци.

ԿԱՐԻՆԵ ՄՈՍԻԿՅԱՆ

ՆԵՄԵՍԻՈՍԻ «ՅԱՂԱԳՍ ԲՆՈՒԹԵԱՆ ՄԱՐԴՈՅ» ԵՐԿՐ ՀԱՅ ՄԻՋՆԱԳԱՐՅԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Քանալի բառեր՝ մարդու բնություն, բնափիլիսոփայություն, բժշկագիտություն, միջնադար, բնագիր, Գրիգոր Նյուսացի, Հովհան Որոտնեցի, Հովհաննես Երզնկացի:

Միջնադարի ամբողջ ընթացքում գիտության զարգացման համար մտահոգ այրերը ջանում էին համակարգել և ամբողջացնել նախորդ հարյուրամյակներում կուտակված գիտելիքները՝ ստեղծելով հանրագիտարանային բնույթի ստեղծագործություններ, որոնք հակիրճ ներկայացնում էին անտիկ մշակույթի գիտափիլիսոփայական հիմնական մտեցումները:

Հայաստանում ևս այս շրջանը նշանավորվեց հին գիտելիքի հենքով ազգային մշակույթի ստեղծմամբ: «Բնական գիտությունների զարգացումն իր հետ բերում էր ընդհանրապես մտածողության բնականացում և բանականացում: Եվ հայ իմաստասերները տեսական որևէ հարց քննարկելիս, լինի դա բարոյագիտական, թե սոցիալ-քաղաքական, փիլիսոփայական, թե աստվածաբանական, գրեթե առանց բացառության, կարևոր տեղ էին տալիս բնական-բնագիտական փաստերին, իրենց հարցադրումները փորձում էին հիմնավորել բնության օրենքներով, օգտագործել բնագիտական նոր գիտելիքները»¹: Ընդհանրապես, միջնադարյան (այդ թվում հայ) գիտական մտածողության բնորոշ գծերից է բնական գիտությունների և փիլիսոփայության փոխադարձ կապը: Այսպես, Ե. դարի հայ փիլիսոփաների երկերն ակնհայտորեն ի ցույց են դնում դրանց հեղինակների ընդարձակ ծանոթություններն իրենց ժամանակի բնափիլիսոփայական, բնագիտական-կենսաբանական, ինչպես նաև բժշկական գիտություններին: Եվ հետագայում նույնպես, հայ ինքնատիպ մշակույթի բոլոր բնագավառների ու մասնավորապես բնագիտության և բժշկության զարգացման ընթացքի վրա զգալի ներգործություն է ունեցել փիլիսոփայությունը: Այս առումով հայ միջնադարյան գիտության զարգացման համար առանձնահատուկ դեր ունեն հունարենից հայերեն թարգմանված երկերը, հատկապես, եկեղեցու հայրերի հեղինակած, որոնք ձևավորվել են անտիկ մշակույթի շրջանակներում՝ օգտագործելով վերջինիս ձևերն ու մեթոդները: Հայրաբանական գրականությունը աշխարհիկ մշակույթը մեկնաբանում էր քննական և համեմատա-

¹ **Հ. Ղ. Միրզոյան**, XVII դարի հայ փիլիսոփայական մտքի քննական վերլուծություն, Երևան, 1983, էջ 20-21:

կան մեթոդով: Հենց այսպիսի եղանակով ստեղծված մի արժեքավոր աշխատություն է Նեմեսիոս Եմեսացու (Գ. դար) «Յաղագս բնութեան մարդոյ» երկը², որը միջնադարում վերագրվել է Գրիգոր Նյուսացուն: Կիրառելով ինչպես անտիկ փիլիսոփաների և գիտնականների, այնպես էլ եկեղեցու հայրերի՝ գիտություն մեջ ներդրած լավագույն ավանդույթները, Նեմեսիոսը փորձել է վաղ բյուզանդական շրջանի փիլիսոփայությունն ու բնագիտական գիտելիքը միաձուլել քրիստոնեական գաղափարախոսության հետ և համակարգել մարդու մասին հայտնի ուսմունքները:

«Յաղագս բնութեան մարդոյ» երկը շափազանց կարևոր դեր է խաղացել նաև հետագայում սկզբնավորված հայ ինքնուրույն բժշկաբնագիտական մատենագրության զարգացման, ճիշտ ընկալման և գնահատման համար: Որպես տեսական հիմնավոր գիտելիքների աղբյուր, այն հաճախ է հայտնվել հայ բժշկապետերի ուշագրության կենտրոնում և լրացրել գործնական բժշկությունը վերաբերող մատյանները, ինչպես վաղ շրջանում, երբ կատարվել է երկի հայերեն թարգմանությունը, այնպես էլ ուշ միջնադարում՝ խնամքով և ճշգրտորեն ընդօրինակվելով տարբեր գրիչների ջանքերով:

Նեմեսիոս Եմեսացու երկի հայերեն թարգմանության բժշկագիտական նշանակությունը չէր նվազում նաև ուշ շրջանում, «քանի որ շնորհիվ միջնադարյան բժիշկների էմպիրիզմի, ֆիզիոլոգիան ոչ մի առաջընթաց ի հայտ չէր բերում, և Նեմեսիոսը երկար ժամանակ այս գիտական ոլորտում միակ հեղինակությունն էր»³: Նմանատիպ կարծիք է հայտնում նաև Ավ. Գ. Տեր-Պողոսյանը. «Նեմեսիոսի այս գրվածքը, որ նման հարուստ բովանդակություն ունի և ներկայացնում է մարդու անատոմիան, ֆիզիոլոգիան, ինչպես և հոգեբանությունը՝ ժամանակի գիտության համաձայն, պետք է որ շատ կարևոր նշանակություն ունեցած լինի մեր գիտական գրականության մեջ: Մեզ հայտնի է միայն մարդու անատոմիան ու ֆիզիոլոգիան, որ թարգմանվելուց հետո ամենայն հավանականությամբ որպես դասագիրք է ծառայել հայ դպրոցներում և դարերով սնունդ եղել հայ ընթերցողներին: Ուրիշը, ո՛չ նրանից առաջ, և ո՛չ էլ նրանից հետո ամբողջ երեք դար, մեր գրականությունը չի ունեցել: Նույնպիսի նշանակություն է ունեցել անշուշտ և Նյուսացու աշխատությունը, և երևի այդ է պատճառը, այլև այն հանգամանքը, որ Նյուսացին որպես Կեսարացու եղբայր՝ ավելի հայտնի ու հարգի է եղել հայերի մեջ, քան Նեմեսիոսը, ուստի և

² Նեմեսիոսի փիլիսոփայի Եմեսացու Յաղագս բնութեան մարդոյ, Վեներիկ, 1889 (այսուհետ՝ շարադանքի մեջ՝ Նեմ.):

³ Л.А. Оганесов, «Медицина и врачи в Армении в древности и в средние века» (գեկուցում՝ կարդացված Կայսերական տաբեկան հանդիսավոր նիստում), *Кавк. Медиц., Общество*, 2-ого мая, 1913 г., с. 8-9:

սրա գրվածքը Նյուսացուն են վերագրել, լավագույն դեպքում այդ երկու գրվածքները շփոթել են միմյանց հետ»⁴:

Իսկապես, բնագրի գրչագրերի մեծ քանակը և բազմաթիվ այլ ձեռագրերում «Բնութեան» առանձին հատվածների և նույնիսկ ամբողջական գլուխների մեջբերումը, բազմաթիվ լուծմունքներն ու մեկնությունները խոսում են այն մասին, որ այս երկը մի տեսակ մարդաբանության դասագիրք էր միջնադարյան Հայաստանում: Եվ բոլորովին էլ պատահական չէ, որ թարգմանության համար ընտրվել էր այդպիսի նեղ մասնագիտական բովանդակությամբ մի գիրք, որը կարող էր հետաքրքրություն ներկայացնել հիմնականում բժիշկների համար: Միջնադարյան հայ բժիշկները շեշտված պրակտիկներ էին, և խուսափում էին սեփական դիտարկումներն անել տեսական բժշկության ոլորտում: Մարդու մասին տեսական գիտելիքների այս ամբողջական, համակարգված, մեծաքանակ մեջբերումներով հագեցած շտեմարանը պարզապես գտածո էր նրանց համար:

Ընդհանրապես, միջնադարյան մատենագրական ժառանգությանը բնորոշ են բազմաթիվ, բազմահեղինակ և բազմաբովանդակ մեջբերումները: Յուրաքանչյուր հեղինակ փորձում է ներկայացնել իրենից առաջ ստեղծված բնագրերի հարասացությունների ամբողջությունը՝ նպատակ ունենալով պահպանել դրանք ապագայի համար: Դրանցում հատկապես կարևոր է յուրաքանչյուր օգտագործված բնագրի ճշգրիտ վերականգնումն ու վերաիմաստավորումը, դրա նախնական բովանդակության պահպանումն ու հետագա մեկնությունները: Իսկ Նեմեսիոսի երկն ինքնին մեծաքանակ մեջբերումների և դրանց ձևավորած խտացված գիտելիքի հավաքատեղի է, որտեղ դրանց հեղինակները ներկայացված են հանվան է, նաև նրանք, որոնց աշխատանքները կորսված են:

«Բնութեան» երկի ազդեցությունը հայ հեղինակների վրա տեսանելի է դեռևս նախքան նրա Ը. դարում արված հայերեն թարգմանությունը: Օրինակ, Պետրոս Սյունեցի եպիսկոպոսը կամ Պետրոս Քերթովը, որն ապրել է Զ. դարի կեսերին, իր «Հարցմունք յաղագս մարմնաւորութեանն Տեառն զանազանք՝ Վաչագանի Աղուանից իշխանի ընդ Պետրոսի Սիւնեաց եպիսկոպոսի և իմաստասիրի» երկով ներկայանում է ակնհայտորեն քաջատեղյակ ոչ միայն հույն փիլիսոփայությանը, այլև հույն գիտությանն՝ ընդհանրապես, և հույն բժշկական-կենսաբանական գիտություններին՝ մասնավորապես⁵: Գ. Տեր-Մկրտչյանը նկատում է, որ նա ծանոթ է նաև Գրիգոր Նյուսացու «Ի մարդոյն կազմութիւնն տեսութիւն» և Նեմեսիոսի «Յաղագս բնութեան մարդոյ» աշխատություններին:

⁴ Ավ. Գ. Տեր-Պողոսյան, Բիոլոգիական մտքի զարգացումը Հայաստանում հնագույն ժամանակներից մինչև XVIII դարը, Երևան, 1960, էջ 198:

⁵ Ավ. Տեր-Պողոսյան, նշվ. աշխ., էջ 132-134, տե՛ս Գ. Տեր-Մկրտչեան, Պետրոս Սյունեաց եպիսկոպոս, Վաղարշապատ, 1902, էջ 3-5:

Այսպես, ժէ. հարցման մեջ «Եւ վասն մարդոյն ուսիր ի մարդոյ կազմութեան եւ բնութեան» պատասխան խոսքերը նա իրավամբ ակնարկ է ընդունում հիշյալ գրվածքների մասին⁶: Ավ. Տեր-Պողոսյանը մեջբերում է «սրտմտութեան» սահմանումը, որտեղ Պետրոս Այունեցին բառացիորեն կրկնում է Նեմեսիոսին՝ «Եւ բարկութիւն եռանդն է զսրտին արեանն ի վերածխութենէ մաղձոյ»⁷: Հմմտ.՝ Նեմեսիոսի մոտ. «Սրտմտութիւն է եռանդն շուրջ զսրտին արեանն ի վերածխութենէ մաղձոյ կամ ի պղտորմանէ եղեալ» (Նեմ. էջ 98 / 19.[1]⁸): Դավիթ Անհաղթն (է. դար) այս նույն սահմանումը տալիս է ավելի հակիրճ. «Բարկութիւն է եռանդն զսրտին արեանն»⁹:

Դավիթ Անհաղթն ու Նեմեսիոս եմեսացին նույն կերպ են սահմանում նաև մարդուն՝ հնարավոր է, դարձյալ օգտվելով նույն աղբյուրներից (հիշենք, որ Դավիթ Անհաղթի երկերը ևս գրվել են հունարեն, և դրանց ու Նեմեսիոսի հայերեն թարգմանությունների բառապաշարի նմանությունը նույնքան ուշագրավ է, որքան բովանդակային առնչությունները. երկուսն էլ հունաբան թարգմանանիշների ձեռքի գործ են). «Մարդ է կենդանի բանաւոր, մահկանացու, մտաց և մակացութեան (մի տեղ էլ՝ հանճարոյ) ընդունակ»¹⁰: «Ասելով կենդանի, զատոյց յայնց, որք ոչ են կենդանի... ասելով բանաւոր, որոշեաց յանբանիցն, իսկ մահկանացուն՝ յանմահիցն, իսկ մտաց և մակացութեան ընդունակ ասելով, որոշեաց զնա յաներևութից և յանմահկանացուաց արարածոց, որք և յաւերժական հարսունք անուանին, որք և բնութեամբ ունին զգիտութիւն և ոչ ուսանելով, բայց միայն մարդն բնաւորեցաւ ընդունել ըստ ազգողականին զգիտութիւն»¹¹: Նեմեսիոսի երկում այս սահմանումը հետևյալ տեսքն ունի. «Վասն որոյ եւ զմարդն սահմանեն՝ կենդանի բանաւոր, մահկանացու, մտաց եւ մակացութեան ընդունակ: Կենդանի, վասն զի եւ մարդն էութեամբ է շնչաւոր եւ զգայական: Քանզի այս է սահման կենդանւոյն: Իսկ բանաւոր, զի որոշեսցի յանբանիցն: Եւ մահկանացու, զի զատցի յանմահիցն կենդանեաց: Իսկ մտաց եւ մակացութեան ընդունակ, վասն զի ի ձեռն ուսմանց առլինին ի մեզ արուեստք եւ մակացութիւնք, ունին եւ զաւրութիւն ընդունական եւ մտաց եւ արուեստից, իսկ զներգործութիւնն՝ ստացեալ յուսմանց: Եւ ասեն զայս առդնել ի սահմանն

⁶ Ավ. Տեր-Պողոսյան, նշվ. աշխ., էջ 133-134, Գ. Տեր-Մկրտչեան, նշվ. աշխ., էջ 3-5:

⁷ Տե՛ս Ավ. Տեր-Պողոսյան, նշվ. աշխ., էջ 134:

⁸ Այս կերպ նշում ենք նաև շուտով հրատարակվելիք մեր պատրաստած բնագրի գրվածք և պարբերությունը:

⁹ Դավիթ Անյաղթ, *Սահմանք իմաստասիրութեան*, առաջաբանն ու ծանոթագրությունները Ս. Ս. Արևշատյանի, Երևան, 1960, էջ 62: Քեպեա միտքն ի սկզբանէ Արիստոտելինն է՝ ὅργη τί ἐστίν· ὁ μὲν γὰρ ὄρεξιν ἀντιλυπήσεως ἢ τι τοιοῦτον, ὁ δὲ ζέσιν τοῦ περὶ καρδίας αἵματος καὶ θερμοῦ. (Arist. *De anima* 403.a.30): Եվ ամենայն հավանականությամբ նրանք երեքն էլ օգտվել են այս սկզբնաղբյուրից:

¹⁰ Դավիթ Անյաղթ, *Սահմանք իմաստասիրութեան*, էջ 26, 36:

¹¹ Նույն տեղում, էջ 36:

յետոյ, ամբողջ գորով եւ առանց այսորիկ սահմանին, այլ վասն զի եւ հարսունս եւ այլս ոմանս ազգս դիւաց ասեն ոմանք բազմաժամանակեացս, սակայն ոչ անմահս, զի եւ ի սոցանէ ի բաց որոշեսցեն զմարդն, յաւելին՝ զմտաց եւ զմակացութեան ընդունակն: Քանզի ոչ ոք ի նոցանէ ուսանի ինչ, այլ բնութեամբ գիտէ զոր ինչ գիտէն, ասեն» (Նեմ. էջ 20 / 1.[14]):

«Սրբոց վարդապետացն Հայոց Մովսէսի եւ Դավթի Հարցմունք ընդ երկաբնակ շարափառան» երկը, որն ըստ Ն. Ակինեանի գրվել է ժ. դարի սկզբներին¹², իսկ Կ. Կոստանեանցի կարծիքով ժԲ. դարից հետո¹³, Մովսէս Խորենացու և Դավիթ Անհաղթի մասին պատմող աշխատություն է: Այնտեղ տեղ գտած բանավեճերից մասնավորապես՝ Յոբնաղի դեմ Մովսէսի, Դավթի և Աբրահամի վարած վիճաբանության հատվածում, որն ըստ Ֆ. Կոնիբերի թարգմանված է հունարենից 576 թ.¹⁴, նույնպես կան բավական ընդհանրություններ «Բնութեան» գրքի հոգու մասին ճառի հետ¹⁵: Մովսէսի և Յոբնաղի երկխոսության ընթացքում Մովսէսն ասում է. «Տէս, զի անմիաբանք են հինք ամենայն յաղագս անձինն»¹⁶: Հմմտ.՝ «Գրեթէ անմիաբան է հնոցն ամենեցունց, որ յաղագս անձինն է բան» (Նեմ. էջ 26 / 2.[1]):

Կամ «Դիմոկոռատոս եւ Էպիկորոս եւ ամենայն ստուրկեանց ժողովքն մարմին ասեն զանձն տարբերեալ յէութենէ նորա»¹⁷: Հմմտ.՝ «Քանզի Դիմոկոռատոս եւ Էպիկորոս եւ ամենայն ստոյրկեանցն իմաստասիրացն ժողով մարմին ասեն զանձն, եւ նոքա նոյնք, որք մարմին ասեն զանձն, տարբերին յէութին նորա» (Նեմ. 26 / 2.[1]): Նույն հակիրճությամբ և նույն հերթականությամբ նշվում են Արիստոտելի «Հոգու մասին» երկից վերցված մյուս տեղեկությունները՝ «Էպիկորեանքն հոգի ասեն ջերմային եւ հրային... Եւ Կոլտաս՝ արիւն... Իպպոն՝ ջուր... Դիմոկոռատէս՝ հուր, քանզի ասէ, թէ գնդատեսակ ձեւք անհատիցն բաղկացեալ՝ հուր եւ աւղն, անձն կատարեն... Եւ Թաղէս ասաց զանձն՝ մշտաշարժ եւ ինքնաշարժ... [Պիւթագորաս]՝ թիւ զինքն շարժող ըստ թուոյ յաւգաւորի... [Արիստոտելէս]՝ կատարութիւն անձին մարմնոյ բնաւորականի, գործարանա-

¹² Տէս Ն. Ակինեան, Դավթ Հարքացի Անհաղթ փիլիսոփայ, կեանքն ու գործերը, Վիեննա, 1959, էջ 35:

¹³ Տէս «Սրբոց վարդապետաց Հայոց Մովսէսի եւ Դավթի Հարցմունք ըստ երկաբնակաց», Արարատ, 1879, Գ. 4, էջ 180-189, Գ. 5, էջ 218-219:

¹⁴ Տէս «Սրբոց վարդապետաց Հայոց Մովսէսի եւ Դավթի Հարցմունք ըստ երկաբնակաց», ՀԱ, 1903, էջ 155: Տէս ՄՀ, հատոր ԺԷ, Երևան, 2016, Յաւելում, էջ 618: Քննական բնագիրը կազմել է և առաջաբանի հեղինակն է Գ. Մուրադյանը, ով նաև տողատակերում նշել է զուգահեռները Նեմեսիոսի և այլ երկերի հետ:

¹⁵ Նույն տեղում, էջ 677:

¹⁶ Նույն տեղում:

¹⁷ Նույն տեղում:

կանի զարուկեամբ կենդանարար ունողի... [Գինարքոս]՝ յողաւորութիւն չորից խառնուածոցն...»¹⁸:

Հմմտ.՝ «Քանզի ստոյիկեանքն հոգի ասեն զնա՝ ջերմային եւ հրային, իսկ Կոէտիաս՝ արին, Իպպոն իմաստասէր՝ ջուր, Դիմոկոնտոս՝ հուր (քանզի գնդատեսակ ձեւք անհատիցն՝ բաղդատեալք հուր եւ աւգ՝ անձն կատարեն)..... Նախ թաղէս ասաց զանձն մշտաշարժ եւ ինքնաշարժ, իսկ Պիւթագորաս՝ թիւ գինքն շարժող¹⁹ ըստ թուոյ յաւդաւորի, իսկ Արիստոտէլէս՝ կատարունութիւն առաջին՝ մարմնոյ բնաւորականի, գործարանականի, զարուկեամբ կենդանութիւն ունողի, իսկ Գինարքոս՝ յաւդաւորութիւն չորիցս տարերցս...» (Նեմ. 26 / 2.[1]):

Է. դարի հայ գիտության մեկ այլ ականավոր ներկայացուցիչ՝ Անանիա Շիրակացին, որին Մ. Աբեղյանը համարում էր բնական գիտությունների հիմնադիրը հայ իրականության մեջ²⁰, նույնպես մեջբերումներ է անում Նեմեսիոսի երկից՝ վերլուծելով դրանք: Օրինակ՝ «Տիեզերագիտութիւն» աշխատության հինգերորդ գլխում, որտեղ քննարկվում են երկնային լուսատուները, նա անդրադառնում է ճակատագրին՝ կրկնելով Նեմեսիոսի մտքերը (չնայած բառացի նմանություններն աննշան են).

Նեմեսիոս.	Շիրակացի.
«Ուրեմն անտեղիք են աւրէնք , աւելորդք՝ դատաստանք , որք պատժեն զվնասակարս: Արտաբոյ բանի են պարսաւք եւ գովք, ոչ ինչ յաւգուտ աղաւթք, ամենեցունց ըստ նակատագրի եղելոց: Արտաբսի եւ նախախնամութիւնն՝ հանդերձ բարեպաշտութեամբ, առ ի մարդոյ գործարան միայն գտանելոյ՝ ի վերուստ շրջաբերութեանն, զի յայաս-	«Թէ այդպէս իցէ, ապա աւելորդ են օրէնք, որ դնեն սահման և պատուիրան, զոր ինչ արժան է գործել և զոր ինչ ոչ: Աւելորդ են դարձեալ և դատաստարք, որ պատուեն զբարեգործն, և առնեն զպատիժս չարագործացն արդար դատաստանօք, քանզի ըստ բախտից ծննդոցն ժպրհութիւն և չարութիւն գողոյն իւրեանց կամացն, և ոչ անօրինութիւն

¹⁸ Նույն տեղում, էջ 677-678:
¹⁹ Ոչազբավ է հատկապէս այս հատվածի նմանությունը՝ և՛ «Բնութեան» հայերեն քարգմանության մեջ, և՛ նշված բնագրում այստեղ պակասող արտահայտություն կա, որը կիսատ է թողնում միտքը. Πλάτων δέ, ούσίαν νοητήν ἔξ ἑαυτῆς κινήτην (Nem. 1987, p. 17. 3, «Իսկ Պլատոնը՝ իմանալի գոյ՝ ինքն իրենից շարժվող), որի վերջին հատվածին՝ κατ’ ἀριθμῶν ἐναρμόνιον-ին համապատասխանող «ըստ թուոյ յաւդատրի» խոսքերը դարձել են Պյութագորասին վերաբերող խոսքերի շարունակություն (հմմտ. ΠΛΑΤΩΝ, τ. 4, Ο ΖΑΚΟΝΑΧ, κη. 10, 894c):
²⁰ Տե՛ս Անանիա Շիրակացի, Մատենագրություն, առաջաբանը, քարգմ. և ծնթ. Ա. Գ. Աբրահամյանի և Գ. Բ. Պետրոսյանի, Երևան, 1979, էջ 3: Նաև՝ Մատենագիրք Հայոց, հ. Գ., 2005, էջ 589-791:

<p>մանէ շարժիլ առ գործսն ոչ միայն, որ ինչ մարմնոյ են, այլ եւ անձին իմացուածոց...» (Նեմ. էջ 125-126 / 34.[1]):</p>	<p>սպանողին իւրով յօժարութեամբն, զի ոչ թէև կամէր արգելոյ զձեռս իւր ի սպանելոյ, կարէր ապրել ի շարիսն գործելոյ. զի բնութիւն ծննդեանն իւրոյ հարկ առնէր նմա գալ ի գործ սպանութեան»²¹:</p>
---	--

Ակնհայտ է, որ Շիրակացին օգտվել է Նեմեսիոսից, թեպետ այս մտքերը վերագրում է Բարսեղ Կեսարացուն՝ իր բավական ծավալուն վերլուծությունը եզրափակելով «Ջայս՝ Բասիլիոս» խոսքերով²²: Իսկ մեկ այլ տեղում նա գրում է. «Ձի լինելութիւն իցէ սկիզբն ապականութեան, և ապականութիւն դարձեալ անդրէն իցէ սկիզբն լինելութեան: Ձի այսմ անվնաս հակառակութենէ՝ աշխարհ առցէ զտևողութիւն»²³: Հմմտ. Նեմեսիոսի մոտ. «Ուստի եւ զայլոյ զլինելութիւնն այլում ապականութիւն գոլ ասէ, և զայլոյ ապականութիւնն այլում լինելութիւն... Եւ այսու եղանակաւ մնայ մշտնջենաւորապէս ամենայն եւ տեւէ առ ի յէիցս լինելութիւն...» (Նեմ, էջ 64 / 5.[6]):

Ինչ վերաբերում է Ը. դարի փիլիսոփա, աստվածաբան, բնագետ Ստեփանոս Այունեցուն, ապա նա ոչ միայն ծանոթ է եղել Նեմեսիոսի երկին, այլ թարգմանել է այն հայերեն՝ Դավիթ Հյուպատոսի օժանդակությամբ: Ձի կարելի, իհարկե, բացառել նաև Գրիգոր Նյուսացու անվան հեղինակության հանգամանքը, որին վերագրված է եղել ստեղծագործությունը: Բանն այն է, որ Նյուսացու անձն ու գործը, դավանաբանական խնդիրներ արծարծող նրա թղթերն ու ճառերը հաճախ են հիշատակվում հայ միջնադարյան ինքնուրույն մատենագրության բազմաթիվ հուշարձաններում: Այդպես էլ Նեմեսիոսի այս ստեղծագործության հետքերը հաճախակի հանդիպում են միջնադարյան հայ գրականության մեջ տարբեր դարերի գրչագրերում՝ բազմաթիվ հիշատակումների ու բառացի մեջբերումների ձևով, երբեմն իբրև Նյուսացու գործ՝ նրա մյուս ստեղծագործությունների շարքում, հաճախ էլ՝ առանց հեղինակի անունը նշելու:

Բազմաթիվ են նաև պատճառները («պատճառք գրոցս»), լուծմունքներն ու մեկնությունները, ինչպես առանձին աշխատությունների ձևով, այնպես էլ՝ Նեմեսիոսի երկի բնագրի գրչագրերի լուսանցքներում: Լուսանցային լուծմունքները հաճախ կրկնվում են տարբեր գրչագրերում: Հետազոտողների կարծիքով դրանց հեղինակը Գևորգ Սկևացին (ԺԳ. դար) է՝ հայ միջնադարյան գիտության մեկ այլ կարկառուն ներկայացուցիչ: Գարեգին վ. Զարբհանալյանը

²¹ Անանիա Շիակացի, Տիեզերագիտություն և տոմար, աշխ. Ա. Աբրահամյանի, իմբ. Հ. Աճայան, Երևան, 1940, էջ 28:

²² Նույն տեղում, էջ 29:

²³ Նույն տեղում, էջ 31:

գրում է. «Մեր մէջ՝ մանաւանդ առ հին նախնիս՝ սակաւաթիւ են բուն ուսումնական երկը կամ անոնց փոխադրութիւնք, որով և զգալի՝ ոչ այնչափ ճոխութիւն լեզուիս ի ճշգրիտ բացատրութիւն այսպիսի նիւթոց: Նեմեսիոսի անուամբ մեզ հասած այս երկասիրութիւն՝ մեծապէս կրնայ օժանդակիլ ի ընդ զայս պակաս: Մեր նախնիք Հուծմունք մ' ալ յօրինած են այս երկասիրութեան, որ յոմանց Գրիգորի Սկեռացոյ ընծայուած է»²⁴:

Մեկնությունների նպատակը բնագրի անհասկանալի մասերը մեկնաբանելն է կամ պարզապէս՝ սեփական կարծիքը հայտնելը: Իրանք ընդհանուր բովանդակութեան լայնածավալ վերլուծություններ են կամ առանձին հասկացությունների, սահմանումների և եզրույթների բացատրություններ:

1987 թ. Լեյպցիգում հրատարակված «Բնութեան» հունարեն քննական բնագրի²⁵ ներածականում Մորենո Մորանին հանգամանորեն անդրադառնում է ինչպես երկի հայերեն թարգմանությանը, այնպես էլ դրա բազմաթիվ հայերեն մեկնություններին ու լուծմունքներին: «Այս թարգմանությունը, — գրում է նա, — հույն թարգմանիչների բնագրերում մեծաթիվ և նաև խիստ էական սխալների բնալի է, սակայն շատ հաճախ մատուցում է նաև ընտիր մեկնաբանություններ, որոնք հունարեն ձեռագրերում կամ այլ վկայություններում ապարդյուն պիտի փնտրենք... Հունարեն բնագիրը, մեկնությունները այնքան ճիշտ են արտացոլված հայերեն թարգմանության մեջ, որ կարելի է վստահաբար ասել, որ այն հաճախ կարող է գործածվել հունարեն բնագրի փոխարեն» (*Nem 1987*, pp. X-XI): Ուստի հարկ է խելամտորեն և շրջահայաց կերպով քննել, ինչպես հայերեն բնագրերը, այնպես էլ հայ մեկնիչների գրած մեկնություններն ու լուծմունքները և «բացահայտել, թե ինչ են դրանք իրենցից ներկայացնում» (նույն տեղում):

Նեմեսիոսի երկի հայերեն թարգմանության գրչագրերն աչքի են ընկնում ոչ միայն առատութեամբ և հնութեամբ, այլև միջնադարյան մշակութային հուշակավոր կենտրոններում (Պղնձահանք, Լով, Կապոս, Գլաձոր, Մեծքար և այլն) և նշանավոր գրիչների կողմից ընդօրինակվելու իրողութեամբ: Որպես գրիչներ, ստացողներ, վերականգնողներ կամ մեկնիչներ հանդես են գալիս մեր մատենագրության ոչ շարքային անուններ՝ Գրիգոր Բջնեցի, Հովհաննես Սարկավագ, Սիմեոն Պղնձահանեցի, Եսայի Նչեցի, Վարդան Կիլիկեցի, Գևորգ Սկեռացի և ուրիշներ:

²⁴ Գ. Զարբհանալեան, *Մատենադարան հայկական թարգմանութեանց նախնեաց* (Դ-ԺԳ. դար), Վեներիկ, 1889, էջ 164:

²⁵ **Nemesius Emesenus**, *Nemesii Emeseni De natura hominis*, **Moreno Morani** (ed.), Leipzig: BSB B.G. Teubner Verlagsgesellschaft, 1987 (այսուհետ, հղումը տեխստում *Nem 1987*):

Երկի ստեղծման հանգամանքներին վերաբերող հիշատակումներ կան բազմաթիվ հիշատակարաններում: Ինչպես նկատում է Կիմ Մուրադյանը, հիշատակարանի ժանրին հատուկ հնարավորության ու կատարողի կարողության շրջանակներում դրանցում գնահատվում էին ինչպես գործը, այնպես էլ նրա հեղինակը, երբեմն նաև արծարծվում էին հայոց ինքնուրույն մատենագրության հետ ունեցած առնչակցության բնույթն ու շրջանակները: Այդ հաղորդումներն իրենց պարզունակ ու հաճախ կրկնվող բովանդակությամբ փաստորեն հույն մատենագիրների գործունեության, նրանց գրական վաստակի և դրանց հայերեն թարգմանությունների մասին առաջին գնահատականներն էին²⁶: Օրինակ, մեզ հետաքրքրող երկի և Նյուսացու մի շարք երկերի հայերեն թարգմանությունների մասին մի հիշատակարան պահվում է ՄՄ 2708 գրչագրում. «Շնորհօք և ողորմութեամբ բարերարին Աստուծոյ յանկ եկեալ աւարտեցաւ տառս հոգեպատում, այսինքն՝ բանք սրբոյն Գրիգորի Նիւսացոյ, որք են Բնութեանն, Կազմութեանն և Կուսութեանն, և Մեկնութիւնք ժողովողին և երգ երգոցին, ի Կոստանդնուպօլիս մայրաքաղաքի, ուր կայի ի գործ նուիրականութեան սրբոյ և լուսակերտի աթոռոյս էջմիածնի, որ և ի դառնալս աստ՝ ի սուրբ Աթոռոյս, աստէն կազմեալ ետու ի ՌՄԼԹ. թուոչ մերում» (ՄՄ 2708, թ. 225բ)²⁷:

Եվ այսպիսիք բազմաթիվ են:

Մեկ այլ արժեքավոր հիշատակում ենք գտնում Գրիգոր Մագիստրոսի «Առ Կիրակոս յոյն դպիրս» թղթում. «Բայց և եթէ զբոլորիցն կամիցիս համառօտ գտանել, զի մի՛ յաչածու խոնջմամբ տարակուսեսցիս տարախոհական մտածութեամբ, աղէ, առ ընթերցի՛ր ուշեղապէս յոքնակուռ վերծանութեամբ զԳրիգորին Նիւսեան ծայրագոյն մատեանս, զԿազմութեանն և զԲնութեանն, և յայնմ գտցես բաւականապէս շատացեալ: Քանզի մեր ոչ է սովորութիւն գողաբար զայլոցն իմաստութիւն խորթս մեզ ստեղծանել, բայց սուղ ինչ զտարախոհութեան քո անտեղութիւն յայտնեցից քեզ»²⁸:

«Բնութեան» գրքից մեջբերումները բավական հաճախակի են միջնադարյան տարբեր հեղինակների աշխատություններում: Հաճախ դրանք սահմանման նշանակություն ստացած ոչ մեծ հատվածներ են, որոնք բերվում են ասելիքը հիմնավորելու, փաստարկված ներկայացնելու, քննարկվող նյութի մասին ամբողջական պատկերացում ստեղծելու, այն հնարավոր պարզության հասցնելու, բովանդակությունից ելնելով որոշակի շեշտադրումներ կատարելու նպատակով: Երբեմն էլ Նեմեսիոսի միտքը խմբագրվում-վերաձևակերպվում է,

²⁶ Տե՛ս Կ. Մուրադյան, Գրիգոր Նյուսացին հայ մատենագրության մեջ, Երևան, 1993, էջ 40:

²⁷ Տե՛ս նույն տեղում, էջ 43:

²⁸ Գ. Մուրադյան, «Գրիգոր Մագիստրոսի Թուղթք եւ չափաբերականք», ՄՀ, ժԶ. հ., ժԱ. դար, Երևան, 2012, էջ 347:

հայ հեղինակի հայեցողությամբ կատարվում են բնագրային հատվածների տեղափոխություններ, իսկ անհրաժեշտության դեպքում բնագիրը լրացվում է սեփական կամ աստվածաշնչյան կամ էլ այլ մտածողների մտքերով: Պատահում է նաև նեմեսիոսի հակիրճ որևէ սահմանման շուրջ, որը բերվում է իր անփոփոխ բառակազմով, կառուցվում են մանրամասն վերլուծությունների շղթաներ՝ իրար հետ կապակցված տարբեր հատվածների համադրմամբ:

Հունական մշակույթի ազդեցությունը Հայաստանում շարունակում էր նկատվել նույնիսկ արաբական բուռն ազդեցության շրջանում, երբ բժշկության որոշ գիտական, թեպետ և արհեստավարժ բժիշկներ չէին (Գրիգոր Մագիստրոս, Գրիգոր Տաթևացի և այլն), շարունակում էին լինել մաքուր հելլենականներ, երբեք չէին հիշատակում արաբ գիտնականներին և արաբական մշակույթի ազդեցությունից բացարձակապես ազատ էին: Կարևոր է, որ նշված երևույթը տեղի էր ունենում այն ժամանակ, երբ հունական գիտությունն իբրև մշակութային գործոն, ամբողջ աշխարհում արդեն լիովին պատմություն էր դարձել²⁹:

ԺԲ. դարում ապրած Ալավկա որդի Դավիթը, որը Հովհաննես Սարկավազ վարդապետի ժամանակակիցն ու լծակիցն էր և գիտնականի անուն ու հուշակունք, ժամանակի բժշկա-կենսաբանական միտք ներմուծեց մի նոր ուղղություն՝ սաղմնաբանական-բնախոսական: Նա թողել է «կանոնների» մի գիրք կամ «կանոնական օրենսդրություն», որտեղ զետեղված կանոնները թվով 98-ն են³⁰: Դրանք ունեն մասամբ կենսաբանական, բայց հատկապես պատմական խոշոր նշանակություն³¹: Բժշկական թեմաներով նրա կանոնները նկատելի ընդհանրություններ ունեն «Բնութեան»՝ «Յաղագս սերմնականի կամ ծննդականի» գլխի հետ:

<p>Նեմեսիոս. «Գործարանն սերմնականին գաւրութեան՝ նախ՝ երակքն եւ շնչերակքն... Քանզի ելանէ նախ ի ձեռն բազում շրջագայութեան ի գլուխն, եւ դարձեալ ի գլխոյն իջանէ ընդ երկուս երակս եւ ընդ երկուս շնչերակսն... Այսոքիկ երակք եւ շնչե-</p>	<p>Դավիթ. «Արդ մի ի նոցանէ ծննդական սերմն է՝ յերկուս երակս գոլով. յուղոյն բաժանեալ գրիկամբքն իջանէ և ընդ ողնաշարն առ ի միջօքն մտանէ ի ներքս անդ յերկամունսն: Իբր թէ հասանի անդ և պարզի և անտի իջանէ յերկաւ-</p>
---	--

²⁹ Տե՛ս Լ.Ա.Оганесян, *История медицины в Армении с древнейших времен до наших дней*, ч. I, Ереван, 1946, с. 182:

³⁰ Ա. Աբրահամյան, «Դավիթ Ալավկա որդու կանոնները», *էջմիածին*, 1952, Թ-Ժ. էջ 48-57, ԺԱ-ԺԲ. էջ 56-57, 1953, Ա. էջ 56-62, Բ. էջ 53-60, Գ. էջ 51-63:

³¹ Ավ. Տեր-Պողոսյան, նշվ. աշխ., էջ 256:

րակք լինին գնդակաձեռ իմն մանուած առ մասնամբքն, ուրանաւր սպիտակաթոյրն հիւք մտանէ եւ անկանի յիւրաբանչիւր ոք յեղկուրեացն » (Նեմ., էջ 104-105 / 24.[2]):	Իսն որպէս թէ եփոց» (ՄՄ 648, կանոն 76) ³² :
---	--

Նեմեսիոս եմեսացու «Յաղագս բնութեան մարդոյ» երկը կարևորել է նաև Հովհաննես Սարկավագը (1047-1129): Նա ոչ միայն վերանորոգել է այս աշխատության 1047 թ. ընդօրինակված՝ եղմ. 1862 հնագույն գրչագիրը³³, այլ «Նուրբ» կոչվող գրքերի շարքում՝ Դավիթ Անհաղթի, Պրոկղի, Հերմեսի, Արիստոտելի, Փիլոնի, Դիոնիսիոսի, Նյուսացու, Կեսարացու, Նազիանզացու գրքերի հետ միասին, խմբագրել է այն³⁴:

Տաթևի բարձրագույն դպրոցի և նրանից սերած մյուս ուսումնական հաստատությունների նշանավոր վարդապետները՝ Հովհան Որոտնեցին (1315-1386), Գրիգոր Տաթևացին (1346-1409) և նրանց բազմաթիվ աշակերտները նույնպես վերաշարադրում էին նախորդ դարերում հայերեն գրված ինքնուրույն և թարգմանական գիտական գրականության մեջ ամբարված բնագիտական ուշագրավ տեղեկությունները՝ դրանք դարձնելով լայնածավալ վերլուծությունների և իմաստասիրական տարբեր հասկացությունների վերարժարժման աղբյուր: Իր դասախոսություններում Հովհան Որոտնեցին, աստվածաբանական և փիլիսոփայական խնդիրներից բացի, քննարկել է նաև բնագիտական բազմաթիվ հարցեր³⁵: Բավական ծավալուն են Հովհան Որոտնեցու անդրադարձները Նեմեսիոսի երկին, ինչը հատկապես նկատելի է «Ո ստեղծ առանձին զսիրտս նոցա», «Արդարութիւն Տեառն ուղիղ է եւ ուրախ առնէ զսիրտս, պատուիրանք Տեառն լոյս են եւ լոյս տան աչաց, երկիւղ Տեառն սուրբ է եւ մնայ յաւիտեան», «Ի սկզբանէ, Տէ՛ր, զերկիր հաստատեցեր, և գործք ձեռաց քոց երկինք են» և աստվածաբանական իմաստասիրական այլ ճառերում³⁶ իբրև հեղինակ նշելով Գրիգոր Նյուսացուն՝ «որպէս ասէ Գրիգորիոս» կամ «որպէս ասէ Գրիգոր Նիւսեայ» և այլ նմանատիպ հղումներով: Այդպիսի ընդգրկուն մեջբերումներ Նեմեսիոսից կատարում է նաև Հովհաննես Երզնկացին (1225-

³² Նույն տեղում, էջ 256:

³³ Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, Կազմ. Նորայր եպիս. Պողարեան, Հատ. 2, Երուսաղէմ, 1975, էջ 255:

³⁴ Տէ՛ս Ն. Ալիմեան, Մատենագրական հետազոտություններ. քննություն եւ բնագիր, հատ. Ա., Վիեննա, 1922, էջ 39:

³⁵ Տէ՛ս Լ. Խաչիկյան, «Հայ բնագիտական միտքը 14-18-րդ դարերում», ՊՐՀ, 1971/2, էջ 23-24:

³⁶ Սուրբ Հովհան Որոտնեցի, Մեկնողական-իմաստասիրական ճառեր, բնական բնագրերը, առաջաբանն ու ծանոթագրությունները Ա. Մինասյանի, Ս. Էջմիածին, 2009 (այսուհետ հղումը շարադրանքի մեջ՝ Որոտնեցի և էջը):

1293): Որոտնեցի-Նեմեսիոս առնչակցությունը բավականաչափ վերլուծված է Սեյրան Զաքարյանի մի հոդվածում³⁷: Իսկ Հովհաննես Երզնկացու և Նեմեսիոսի աղերսները հանգամանորեն ներկայացված են Արուսյակ Թամրազյանի «Էսսեներ և ուսումնասիրություններ» գրքում³⁸:

Երզնկացին համադրում է Նեմեսիոսի երկի իմաստային ընդհանրություններ ունեցող տարբեր հատվածներ՝ որոշակի համակարգի բերելով դրանք, միևնույն ժամանակ բառակազմը թողնելով անփոփոխ: Նա բավական հաճախ և առանձնակի հետաքրքրություններ է անդրադառնում մարդու խառնվածքի մասին նեմեսիոսյան վերլուծություններին³⁹:

Նեմեսիոս.	Երզնկացի.	Որոտնեցի.
<p>«Արդ զի՛արդ բնաւորականի իմն շարութիւնի եւ առափնութիւնի հետեւին մարդկան: Այս ճշմարտապէս ի մարմնոյն խառնուածոյ լինի, քանզի՛ որպէս բնութեամբ առողջ եւ հիւանդոտ էն ի խառնուածէն, այսպէս ոմանք բնութեամբ դառնամաղձեայք եւ բարկացողք են, այլ՛ վախողք, այլ՛ ի վայր բերեալք» (Նեմ. էջ 37 / 2.[12]): «Եւ լինին շարքն ախտք անձին ի ձեռն երիցս այսոցիկ. ի շար հրահանգից, յանուսումնութենէ և ի շար ունակութենէ: Քանզի ոչ բարտք վարժեալք ի մանկութենէ՛ որպէս զի կարող գոյ յախթկու լինել ախտիցն, յանչափութիւն նոցա անկանիմք: Իսկ յանուսումնութենէ շար դատումն բուսեալ ի խոհեցողականի անձին, որպէս զի կարծել զշարսն պիտանիս գոյ եւ զպիտանիսն շար: Դարձեալ լինի ինչ եւ ի շար ունակութենէ մարմնոյ, վասն զի Բնատրական իմն շարութիւնք եւ առափնութիւնք հետեւի մար-</p>	<p>«Եւ լինին շարքն ախտք անձին ի ձեռն երիցս այսոցիկ. ի շար հրահանգից, յանուսումնութենէ և ի շար ունակութենէ: Քանզի ոչ բարտք վարժեալք ի մանկութենէ՛ որպէս զի կարող գոյ յախթկու լինել ախտիցն, յանչափութիւն նոցա անկանիմք: Իսկ յանուսումնութենէ շար դատումն բուսեալ ի խոհեցողականի անձին, որպէս զի կարծել զշարսն պիտանիս գոյ եւ զպիտանիսն շար: Դարձեալ լինի ինչ եւ ի շար ունակութենէ մարմնոյ, վասն զի Բնատրական իմն շարութիւնք եւ առափնութիւնք հետեւի մար-</p>	<p>«Եւ լինին շարքն ախտք անձին՝ ի ձեռն յերիցս այսոցիկ. ի շար հրահանգից, յանուսումնութենէ և ի շար ունակութենէ: Քանզի ոչ բարտք վարժեալք ի մանկութենէ՛ որպէս զի կարող գոյ յախթկու լինել ախտիցն, յանչափութիւն նոցա անկանիմք: Իսկ յանուսումնութենէ՛ շար դատումն բուսեալ ի խոհեցողականին անձին, որպէս զի կարծել զշարսն պիտանիս գոյ, և զպիտանիսն շարս: Լինին ինչ և ի մարմնոց շար ունակութենէ, քանզի բարկացողք են դառնամաղձոտքն, և վայրաբերք՝ որ ջերմ են և</p>

³⁷ Տե՛ս Ս. Զաքարյան, «Նեմեսիոս Եմեսացի և Հովհաննէս Որոտնեցի (փիլիսոփայական առնչություններ)», *Քե՛Հ. Հայագիտություն*, 2017 № 3 (24), էջ 3-19:

³⁸ Տե՛ս Ա. Թամրազյան, *Էսսեներ և ուսումնասիրություններ*, Երևան, 2013, էջ 66, 67, 69, 71, 72, 73, 87, 88, 89, 90, 92, 94, 132, 133, 138, 166, 362, 347, 362, 374:

³⁹ Տե՛ս Յովհաննէս Երզնկացի, *Մատենագրութիւն*, հատոր Ա, աշխ. Ա. *Տեր Սրապյանի, է. Բաղդասարյանի*, Երևան, 2013 (այսուհետ՝ Երզնկացի, հատի վերնագիրը և էջը):

<p>որպէս զի կարող գոյ յաղթկու լինել արիւնքն, յանշարտութիւն նոցա անկանիմք: Իսկ յանուսումնութենէ շար դատումն բուսեալ ի խոհեցողականին անձին, որպէս զի կարծել զչարսն պիտանիս գոյ եւ զպիտանիսն՝ շարս: Լինին ինչ եւ ի մարմնոյ շար ունակութենէ, քանզի բարկացողք են դառնամաղձոտքն, եւ վայրաբերք, որ շերմն են եւ խոնատուտ խառնուածովն: Եւ բժշկելի է զչար սովորութիւնն սովորութեամբ բարեալ, իսկ զանուսումնութիւնն՝ ուսմամբ եւ մակացութեամբ, իսկ զչար ունակութիւնն՝ ողջացուցանելի է մարմնապէս փոխադրելով զնա, որպէս կարողութիւն է, ի միջինն խառնուած պատրաստութեամբ եւ կրթութեամբ եւ դեղովք, թէ եւ այսոցիկ պէտք լինիցին» (Նեմ. էջ 91-92 / 16.[2]):</p>	<p>դոյն ի խառնուածոյ մարմնոյն: Զի որպէս բնութեամբ առողջք եւ հիւանդոտք են ի խառնուածոյն, այսպէս ուսմամբ բնութեամբ դառնամաղձեալք են, այլք՝ երկշոտք եւ վայրաբերք... Արդ, բժշկելի է զչար սովորութիւնն սովորութեամբ բարոյ, իսկ զանուսումնութիւնն՝ ուսմամբ եւ մակացութեամբ (Երզնկացի, Ի ՄԲ. սաղմոս, էջ 293):</p>	<p>խոնատուտ խառնուածովն: Եւ բժշկելի է զչար սովորութիւնն՝ սովորութեամբ բարեալ, իսկ զանուսումնութիւնն՝ ուսմամբ եւ մակացութեամբ, իսկ զչար ունակութիւնն՝ ողջացուցանելի է մարմնապէս, փոխադրելով զնա, որպէս կարողութիւն ի միջինն խառնուած պատրաստութեամբ եւ կրթութեամբ եւ դեղովք, թէ եւ այսոցիկ պէտք լինիցին» (Ռոտմեցի, էջ 91-92)⁴⁰:</p> <p>«Յանկութիւնն ըստ այլ յեղանակի տարրոշի ի շորս հանդերձ ինքեամբ, քանզի յէսն են ինչ՝ որ բարի են, եւ են ինչ՝ որ շար են, եւ են ինչ՝ որ աստէն մերձ են, եւ են ինչ՝ որ ակնկալիք: Իսկ ակնկալիք բարի ցանկութիւն, իսկ աստէն մերձն՝ հեշտութիւնն, դարձեալ ակնկալիք շար երկիւղ, իսկ անդէն մերձն՝ տրամութիւն, վասն որոյ արիւնքն ի շորս տարամիտի, այսինքն՝ ի ցանկութիւնն եւ ի հեշտութիւնն, յերկիւղ եւ ի տրամութիւն: Իսկ բարի եւ շար</p>
---	--	---

⁴⁰ [Եռամեծի եւ երիցս երանեալ բազմերջանիկ եւ տիեզերալոյս մեծ հոնտորի եւ անյաղթ փիլիսոփայի հայոց մեծաց Յովհաննու Ռոտմեցոյ արարեալ մեկնութիւն բանին, որ ասէ. «Ո ստեղծ առանձին գոյիտս նոցա» (Սաղմ.ԼԲ. 15)]:

	<p>ասեմք կամ զարդարև էսն, կամ զկարծեցեալսն: Եւ լինեն շար ախտք անձինն յերից՝ ի շար հրահանգից, յանուսումնութենէ և ի շար ունակութենէ: Ի շար հրահանգից՝ իբր ոչ բարիոք վարժեալք ի մանկութենէ, որպէս զի կարող գոյ յաղթող լինել ախտից յանշափութիւն նոցա անկանիմք: Իսկ յանուսումնութենէ շար դատումն բուսեալ ի խոհեցողական անձին, մինչ զի կարծել զչարն պիտանի, և զպիտանին՝ շար: Լինի և ի մարմնոյ շար ունակութեանց խառնուածոց շարն, քանզի բարկացողք են դառնամաղձեայքն և վայրաբէրք, որ ջերմ են և խոնատու ի խառնուածոք: Եւ բժշկելի է զչար սովորութիւնն՝ բարի սովորութեամբ և զանուսումնութիւնն՝ ուսմամբ և մակացութեամբ, իսկ զչար ունակութիւնն՝ ի ձեռն դեղոց փոխադրելի է ի միջին խառնուած (Որոտնեցի, էջ 221-222)⁴¹:</p>
--	--

⁴¹ [Յովհաննու Որոտնեցոյ՝ քաջ հոեւորի և արդիւնաբան Բաբունապետի, արարեալ ի բան Մարգարէին, որ ասէ. «Արդարութիւն Տեառն ուղիղ է և ուրախ առնէ զսիրտս, պատուիրանք Տեառն լոյս են և լոյս տան աչաց, երկիւղ Տեառն սուրբ է և մնայ յափտեան» [Սաղմ. ԺԸ.9]:

Նեմեսիոսյան դատողություններով է երզնկացին քննարկում և հիմնավորում աշխարհում մարդու տեղի, դերի, նրա բանականության, ներքին մղումների և տվայտանքի, սրտմտականի, ցանկականի, վախի, հեշտության և այլ հոգեկան երևույթների մասին հարցերը:

<p>Նեմեսիոս.</p> <p>«Ի միջասահմանս անբանին եւ բանականին բնութեան մարդն կարգեալ, եթէ ի մարմինն կոյս շեղեսցի եւ զմարմնոյսն առաւելագոյնս սիրեսցէ՝ զանասնոցն առընկալցի յինքն վարս, եւ ընդ նոսայ եղիցի թուակից, եւ հողեղէն կոչեսցի՝ ըստ Պաղոսի ձայնին և լուիցէ, թէ՛ «Հող էիր եւ ի հող դարձցիս», եւ «Հաւասարեաց անասնոց անմտից եւ նմանեաց նոցա»: Իսկ եթէ ի բանականն տարցի՝ արհամարհեալ զմարմնականսն ամենայն հեշտութիւնս, զաստուածայինսն եւ զսիրելիսն Աստուծոյ ընտրեսցէ կեանս եւ զնախկինսն մարդոյն, եղիցի որպէս երկնատրն, ըստ ասացելոյն, թէ՛ որպէս հողեղէնն, նոյնպէս եւ հողեղէնն, եւ որպէս երկնատրն, նոյնպէս եւ երկնատրն» (Նեմ. էջ 14 / 1.[7]):</p>	<p>Երզնկացի.</p> <p>«Միջասահման կարգեցաւ բանականին եւ անբանի, թէ մարմինն կոյս շեղեսցի եւ զմարմնոյն նախապատուեսցէ զվարս, ընդ անասունսն համարեալ լիցի, իսկ եթէ ի բանականն տարցի, արհամարհելով զանասնական հեշտութիւնս, եղիցի որպէս երկնատրն եւ զհոգեղինացն ժառանգեսցէ զտեղի՝ ի դաս լուսեղինացն, յորմէ անգեալ նոքա խաւարեցան (Երզ., Ի ԼԴ. Սաղմոսն, էջ 275): <i>Մեկ այլ տեղում.</i> «Արդ, եղեւ որ շաղկապէ զերկաբանչիւր բնութիւնս մարդն՝ միջասահման բանականի եւ անբանի բնութեան կարգեալ, զի եթէ ի մարմինն կոյս շեղեսցի եւ զմարմնոյսն առաւելագոյնս սիրեսցէ՝ զանասնոցն առընգալցի յինքն վարս, եւ ընդ նոսայ եղիցի թուակից, եւ հողեղէն կոչեսցի՝ ըստ Պաղոսի ձայնին, եւ լուիցէ. «Հող էիր, եւ հող դարձցիս», եւ հաւասարեսցի անասնոց անմտից եւ նմանեսցի նոցա: Իսկ եթէ ի բանականն տարցի եւ արհամարհեսցէ զմարմնականսն ամենայն հեշտութիւնս՝ զաստուածայինսն եւ զսիրելիսն Աստուծոյ խնդրեսցէ կեանս, եւ զնախկինսն մարդոյն եղիցի, որպէս երկնատրն, ըստ ասացելոյն, թէ՛ «որպէս հողեղէնն, նոյնպէս հողեղէնն, եւ որպէս երկնատրն, նոյնպէս եւ երկնատրն»: Եւ է բանականին բնութեան գլուխ փաղշը եւ ի բաց դառնալ ի շարեաց, եւ փոխիլ եւ զհետ երթալ բարեաց (Երզնկացի, Վասն ննջ., էջ 509):</p>
---	--

Երզնկացուն ակնհայտորեն հետաքրքրում են նաև մարմնակազմական և բնախոսական հարցեր: Թե ինչ դեր են կատարում օրգանիզմում սիրտը, ուղեղը, լյարդը, երակներն ու շնչերակները, զգայական և շարժողական նյարդերը: Որտեղ է գտնվում մարմնի կենդանական զորույթյան կամ կամային շարժումների ակունքը: Եվ այստեղ նույնպես նեմեսիոսը հանդես է գալիս իբրև հեղինակություն, որը թեև ներկայացնում է գալենյան-հիպոկրատյան մոտեցումները այս հարցերի շուրջ, բայց դա անում է այնքան հիմնավոր, համակարգված, հասկանալի և, ամենակարևորը՝ հակիրճ:

<p>Նեմեսիոս.</p> <p>«Եւ ի միասին բաժանին, որպէս երեւին միմեանց, որպէս երեւս այսոսիկ՝ երակ, շնչերակ, ջիղ, յերիցն սկզբանց, որք կարգաւորեն զկենդանին. ի գլխոյն՝ ի սկզբանէն շարժութեանն եւ զգայութեանն՝ ջիղ, ի լերդէն՝ յսկզբանէն արեան եւ կերակրականին՝ երակ, ամանն արեան, իսկ ի սրտէն՝ յսկզբանէն կենդանականին՝ շնչերակն, աման շնչոյն: Եւ ի միասին գոլով, զառ ի միմեանց ազտութիւնն ընդունին, քանզի եւ երակ կերակուր բաշխէ ջիղն, եւ շնչերակն հաղորդեցունէ զերակն շերմութեան բնատրականի եւ շնչոյն կենդանականի: Ուստի ոչ զշնչերակ է գտանել առանց նուրբ արեան, եւ ոչ զերակ՝ առանց շնչոյ շոգետեսակի» (Նեմ. էջ 103-104 / 23.[2]):</p>	<p>Երզնկացի.</p> <p>«Ուստի՞ իցէ հիմն շարժութեան մարմնոյս, կամ անողական ստրագաւորութիւն, և կամ կենդանական շերմութեանն աղբիւր: Որ եւ զերիսս գայտոսիկ յերից սկզբանց տեսանեմք, որք են երակք եւ շնչերակք եւ ջիղք: Ի լերդէն ի սկզբանէ արեան՝ կերակրական երակ, աման արեան: Իսկ ի սրտէն ի սկզբանէ կենդանականին շնչերակն, աման շնչոյ, եւ ի միասին գոլով երիցս սոցա, զա՛ն ի միմեանց ազտութիւն ընդունին: Երակ կերակուր բաշխէ ջիղ, եւ շնչերակ հաղորդեցունէ զերակ շերմութեան՝ բնատրական եւ շնչոյ կենդանականի, ուստի ոչ է շնչերակ առանց նուրբ արեան, եւ ոչ երակ՝ առանց շնչոյ: Իսկ որ ի գլխոյն ի խելապատակէ անտի, ըստ յարժարութեան եւ ըստ յարձակման շարժութեան եւ ըստ յարձակման շարժութիւն, որոյ սկիզբն է խելքն եւ ուղեղն, որ է մասն խելացն: Իսկ գործարանք ստրագաւորեալ ջիղ, եւ շաղկապ, եւ մկունքն, որ ի մարմնոյ եւ ի ջրուտ նետարդից, որով շարժի ձեռն ի գործ, եւ ոտն յընթացս, եւ այլ ամենայն մասունք մարմնոյ...» (Երզն., Սքանչելի եղև, էջ 173- 174):</p>
<p>Նեմեսիոս.</p> <p>«Եւ առաքին զգայականն եւ կակղագոյնն ջիղքն՝ ի միջնոյն եւ գառաջնոյ կուսէ խելացն փո-</p>	<p>Երզնկացի.</p> <p>«Զգայական եւ կակուղ ջիղքն ի միջնոյ եւ յառաջնոյ կուսէ խելացն փորուածոյ առաքին: Իսկ խստա-</p>

<p>րուածոյ, իսկ խստագոյնն էւ շարժողականն՝ յետուստ կուսէ փորուածին եւ յողինն ուղղոյ... Եւ որպէս զգայարանս կրկինս առաք, այսպէս եւ զելս ջղացն կրկինս ունիմք, քանզի իւրաքանչիւր յաղողինն զգոյցս ջղացն առաքէ յիւրմէ՝ մի յաջ կոյս մարմնոյն եւ մի յահեակ» (Նեմ., էջ 108 / 26.[2]):</p> <p>Նեմեսիոս. «Մարմնոյ եւ հոգոյ (յարադրութեամբ մարմնոց եւ ջլաց եւ այլոցն) բարեխառնութիւն զարութիւն է, եւ ջերմոյ եւ ցրտոյ, ցամաքի եւ խոնափ բարեխառնութիւն առողջութիւն է, իսկ բարեչափութիւն անդամոց՝ հանդերձ վայելուչ գունով, գեղեցկութիւն առնէ մարմնոյ» (Նեմ., էջ 37 / 2.[11]):</p>	<p>գոյնն էւ շարժողականն՝ ի յետուստ կուսէ փորուածոյն եւ յաւետ խստագոյնն՝ յողանէն: Եւ կրկին են սոքա. զգայականն էւ շարժականն՝ յաջ եւ յահեակ...» (Երզ. Սեանչեղի եղեւ, էջ 174):</p> <p>Երզնկացի. «Որք մակացութեան բժշկական արհեստին են հմտութեամբ վարժեալք, յաղագս մարդկային մարմնոյ զարութեան եւ առողջական կենաց եւ գեղեցկութեան կերպարանի այսպիսի իմն բնախառն սահմանաւորէն բացայայտութեամբ, եթէ մարմնոյ եւ հոգոյ յարադրութեամբ մարմնոց եւ ջլաց եւ այլոց բարեխառնութիւն՝ զարութիւն է, ջերմոյ եւ ցրտոյ, ցամաքի եւ խոնափ բարեխառնութիւն առողջութիւն է, իսկ բարեչափութիւն անդամոց՝ հանդերձ վայելուչ գունով, գեղեցկութիւն առնէ մարմնոց» (Երզնկացի, Ի ԾԲ. Սաղմ. էջ 287-288):</p>
<p>Նեմեսիոս. «Կամ թէ մանկանացու կազմեցաւ՝ կարող գոյով յառաջադիմութենէն կատարեալ աման լինել, այսինքն՝ զարութեամբ անմահ լինել: Իսկ վասն զի ոչ էր նմա յագուտ նախ քան զկատարումն գիտել զիր բնութիւնն, հրաժարեցոյց զնա նաշակել ի փայտէն գիտութեան... Ոչ կամէր Աստուած գիտել նմա նախ քան զկատարումն, զիր</p>	<p>Երզնկացի. «Իսկ ումանք ասեն՝ եթէ մանկանացու կազմեցաւ, կարող գոյով ի յառաջադիմութենէն կատարեալ անմահ լինել, այսինքն է՝ զարութիւնն ունելով անմահ լինել: Իսկ վասն զի ոչ էր յագուտ նախքան զկատարումն զիր բնութիւնն գիտել, հրաժարեցոյց զնա նաշակել ի փայտէն գիտութեան, զի ոչ կամէր Աստուած նախքան կատարումն</p>

<p>բնութիւնն, զի մի գիտացեալ զինքն կարաւոտ բազմաց, մարմնականացն պիտոյից հոգ տարցի՝ թողեալ զհոգւոյն խնամակալութիւնն... Իսկ նորա ստունգանեալ, եւ գիտացեալ զինքն՝ ի կատարմանէն ի բաց ընկաւ, եւ եղեւ ընդ մարմնականամբ պիտոյիւք» (Նեմ., էջ 15-16 / 1 [9]):</p>	<p>գիտել զիւր բնութիւնն, զի մի գիտացեալ կարաւոտ բազմաց մարմնական պիտոյից հոգ տարցի, թողեալ զհոգւոյն խնամակալութիւնն: Իսկ նորա ստունգանել եւ գիտացեալ զինքն, ի կատարմանէն ի բաց անկաւ եւ եղեւ ընդ մարմնական պիտոյիւք» (Երզնկացի, Վասն ննջ., էջ 510):</p>
---	---

Որոտնեցու հայացքների վրա Նեմեսիոսի երկի ազդեցութիւնն ակնառու է հոգու բնութիւնն առնչվող հարցերի քննարկման ժամանակ (տե՛ս Որոտնեցի, էջ 77-84):

<p>Նեմեսիոս. «Բայց Ենոմիոս սահմանեաց զանձն՝ էտրփին անմարմին՝ ի մարմնի ստացեալ, ընդ նմին զգեցեալ համանգամայն զամենայն ինչ: Արդ, «զէտրփին անմարմին» ի նշմարտութենէն էտո, բայց զ՝«ի մարմնի ստացեալն»՝ յԱրիստոտելի վարդապետութենէն, ոչ ածեալ զմտաւ, որ եւ սուրն էր, թէ ի նոյն ժողովեալ փորձի զանհպելիսն» (Նեմ. էջ 42-43 / 2.[18]):</p>	<p>Որոտնեցի. «Ենոմիոս հերձուածող ասաց՝ զհոգի էտրփին անմարմին ի մարմնի ստացեալ: Զորս հանդիմանէ Գրիգորիոս, թէ՛ զէտրփին անմարմին ի նշմարտութենէն էտո, բայց զի ի մարմին ստացեալ զհոգի՝ յԱրիստոտելէ և ի ստոյիկեանց վարդապետութենէն էտո» (Որոտնեցի, էջ 99):</p>
<p>Նեմեսիոս. «Քանզի ոչ հպի ի մարմին անձն: Քանզի թէ հպի, յայտ է թէ առընթեր կայ նորա: Եւ եթէ այս է, ոչ բոլորովին կայ առընթեր (Քանզի անկար է մարմնոյն բոլորովին կայ առընթեր), եւ եթէ այսպէս՝ ոչ է բոլորն կենդանի անձնատր... Իսկ եթէ բոլորն է անձնատր եւ ո՛չ հպի, և ո՛չ մարմին է անձն: Բայց կենդանին բոլորն անձնատր է, ո՛չ ուրեմն հպի, եւ ո՛չ մարմին է անձն» (Նեմ, էջ 32 / 2. [7]):</p>	<p>Որոտնեցի. «Մարմին յորժամ հպի ի մարմին՝ յարադրութեամբ հպի, և յոր կողմն յարադրի, զագղումն ի յայն կողմն միայն ներգործէ, իսկ այլ ամենայն մասունք բոլորովին թափուր մնան յագղմանէ նորա: Իսկ հոգի ոչ այսպէս, այլ յորս մերձենայ՝ զբոլորս հոգևորէ, յորս դիւրին է քեզ տեսանել ի տունկս, յանասուն կենդանիք և ի մարդ: Ապա ուրեմն, ոչ է մարմին հոգի»:</p>

<p>Նեմեսիոս. «Եթէ մարմին է անձն, որպէս եւ իցէ, թէ եւ նրբագոյն, զի՞նչ դարձեալ է, որ շարունակէ գնա: Քանզի ցուցաւ ամենայն մարմին կարաւտ շարունակողի, եւ այսպէս յանբաւութիւն, եւ հանդիպեսցի անմարմնոյն» (Նեմ, էջ 28 / 2.[2]):</p>	<p>Ռոտմեցի. «Կարի նրբագոյն իցէ, սակայն մարմին զի՞նչ դարձեալ, որ շարունակէ գնա, քանզի ցուցաւ՝ ամենայն մարմին կարօտ շարունակողի և շաղկապողի, և այս յանհունս, մինչև հանդիպեսցի անմարմնոց»:</p>
--	--

Տարրերի կազմութեան, որակների հարաբերակցութեան, փոխարկումների, միավորման և իբրև պարզ մարմին դրանց նեմեսիոսյան քննարկման անդրադարձները բավական հաճախադեպ են և՛ Ռոտմեցու և՛ Երզնկացու երկերում⁴²: Բացի այդ՝ «Յովհաննու Ռոտմեցույ ասացեալ ի բան Մարգարէին Դաւթի, որ ասէ «Ի սկզբանէ, Տէ՛ր, գերկիր հաստատեսցեր, և գործք ձեռաց քոց երկինք են» [Սաղմ. ՃԱ. 26]» ճառում տարրերի քննարկման ժամանակ հենց նեմեսիոսից քաղված հատվածներում հանդիպում են ընդմիջարկությունների ձևով տրված լուծմունքներ. «Քանզի նմանեցուցանէ երկրի զկիրքիկոն ձևն, որ է քառակուսի, զի անշարժագոյն է քան զայլս ուղղագծից ձևոց, իսկ ջրոյ՝ զկուսայեղոռնն, որ է քսանանիստ, իսկ զպիռամիդէսն՝ հրոյ ձևով: Ասի ոմանց, քսան շափ պարզ լինել ջուր, քան զերկիր, և ութ շափ օդ, քան զջուր, ըստ այսմ՝ երեքապատիկ նուրբ լինել հուր, քան զօդ, վասն այն ջուրն քսանանիստ, և օդն ութանկիւնի, և հուրն եռանգիւնի ասի}: Իսկ յօգտաեղոռնն օդոյ, որ է դիրաշարժագոյն, քան զջուր և յամրագոյն, քան զպիռամիդէսն: Յայսոսիկ ձևոց անէ զցուցուած երիցուց այսոցիկ ի միմեանց փոխարկիլ, բայց երկրի ոչ կրել զայս, քանզի գերիսս զայսոսիկ՝ զպիռամիդէսն և զոքտաեղոռնն և զկուսայեղոռնն, յիսկալինեաց եռանկիւնեացն ասէ գոլ հաստատիլ ձևով: Իսկալինն սանդուխ ասի ըստ հոռոմին գերդ երեքոտնի գրակալ է, երբ պիտի ժողովեն զոտներն, նա ցածնայ, երբ պիտի բարձրացնեն ի հոռոմնու եկեղեցիքն կու լինի}: Բայց զկիրքիկոնն ի հաւասարակողից եռանկիւնեաց. արդ որ ինչ իսկալինեաց եռանկիւնից հաստատեցաւ, այսոցիկ կարէ լուծանիլ և դարձեալ ժողովիլ և ի միմեանս փոխարկիլ, իսկ կիրքիկոնն ոչ լուծեալ և ոչ այլոցն կար գոլ փոխարկիլ ձևով: Իսկ Պղատոն ի Տիմէի տրամաբանութիւնն ասէ, թէ հանգիտէ և անհանգիտէ երկուցն մի բաղկացութիւն, որ լինի երեք: Դարձեալ, կիրքիկոնն վեց տափարակ ունի, իսկ վեցին կողմունքն երեք են: Դարձեալ յայլմէ, և զի եռակի տարրորոշ է ամենայն մարմին⁴³» (էջ 131. տե՛ս նեմ, էջ 64-65 / 5. [7]):

⁴² Տե՛ս Ռոտմեցի, էջ 128-134, Երզնկացի, «Սեանշէլի եղև», էջ 178, Ի ՄԲ. Սաղմոս, էջ 288, Վասն ննջ., էջ 513:

⁴³ Տե՛ս Պղատոնի իմաստասիրի Տրամախօսութիւնք, Վենետիկ, 1877, էջ 127:

Որոտնեցին շարունակում է վերլուծությունները նաև Նեմեսիոսի արծարծումներից դուրս՝ փորձելով պարզել, թե ինչու են տարրերը հատկապես չորսը՝ ոչ ավելի և ոչ պակաս, հանգեցնելով դա շորս թվի խորհրդապաշտական նշանակությանը (քանի որ առաջին 4 թվերի գումարը հավասար է 10-ի և այլն) (Որոտնեցի, էջ 135)⁴⁴:

Որոտնեցին ունի նաև մարդու նեմեսիոսյան սահմանումը, որի մասին խոսեցինք վերևում. «Մարդն է կենդանի բանաւոր, մահկանացու և մտաց և հանճարոյ ընդունակ: Իսկ եթէ զբոլորն ի մասանց ծանիցուք, ասէ Գրիգոր Նիւսեայ, թէ մարդն ի մարմնոյ և ի հոգոյ իմանալոյ գեղեցիկ կազմեաց» (տե՛ս Նեմ., էջ 9 / 1.[1]). (Որոտնեցի, էջ 184)⁴⁵:

Եվս մեկ օրինակ՝ սահմանումներ Աստծո, Հարկի, Բախտի, Ինքնամատուցի, Նախախնամության վերաբերյալ:

Նեմեսիոս	Որոտնեցի
<p>«Այլ Աստուծոյ գործ է էութիւն եւ նախախնամութիւն, իսկ հարկի՝ միշտ նոյնատիպակ ունողացն զշարժութիւնն, իսկ ճակատագրի՝ ի հարկէ ի ձեռն նորին կատարիլն (Բանգի եւ սա հարկիւն է), իսկ բնութեան՝ լինելութիւն, աճումն, ապականութիւն, տունկի եւ կենդանիք, բախտի՝ պակասն եւ անակնկալիքն (Բանգի սահմանեն զբախտ՝ դիպումն եւ ընթացակցութիւն երկուց պատճառաց՝ ի յաժարութենէ զսկիզբն ունողաց ա՛յլ ինչ, քան զոր բնատուրեցան կատարողաց, որպէս գերեզման փորելով՝ գանձ գտանել: Քանզի ո՛չ որ եղն, այնպէս եղ, որպէս զի նմա գտանել, եւ ո՛չ որ փորեացն, այնպէս փորեաց, որպէս զի գանձս գտցէ, այլ ոմն՝ զի յորժամ կամեսցի՝ աոցէ, իսկ ոմն՝ զի գերեզման փորեսցէ: Եւ դիպաւ</p>	<p>«Աստուծոյ գործ է էութիւն կամ նախախնամութիւն: Իսկ Հարկի՝ միշտ գնոյն օրինակ ունողաց, որպէս ձեռն ցրտացուցանել և հոյ ջեռուցանել, երկնի և արեգական ընթացք, և այլ սոյնպիսեաց միշտ գնոյն օրինակի շարժի ունողաց: Իսկ ճակատագրի՝ ի Հարկէ՝ ի ձեռն նորին կատարիլ, իսկ բնութեան՝ լինելութիւն և աճելութիւն, ապականութիւն՝ որպէս տունկի և կենդանիք: Բախտի՝ պակասն և անակնկալիք, քանզի սահմանեն զբախտ՝ դիպումն և ընթացակցութիւն երկուց պատճառաց, զյօժարութիւն երկուց այլ և այլ սկսմամբ, իսկ կատարումն նոցունց հակառակ սկզբանց, որպէս գերեզման փորելով՝ գանձ գտանել, քանզի որ եղն անդ՝ վասն այն եղ, զի ինքն աոցէ, իսկ որ եզիտն ոչ վասն գանձ</p>

⁴⁴ Յովհաննու Որոտնեցոյ ասացեալ ի բան Մարգարէին Դապի, որ ասէ «Ի սկզբանէ Տէր գերկիր հաստատեցեր և գործ՝ ձեռաց քոց երկինք են» (Մաղմ. ՃԱ. 26):

⁴⁵ Մեծ Բարբուսայետին Յովհաննու Որոտնեցոյ ասացեալ ի բանն առաքելական, որ ասէ «նայեցարուք ընդ առաքելսն և ընդ քահանայապետ խոստովանութեան մերոյ ընդ Յիսուս, որ հաստարիմ է արարչին իւրոյ» (Եբր. Գ. 1) :

<p>այլ ինչ, քան զոր ինչ կամէինն երկոյնեան), իսկ ինքնամատոյցն՝ անշնչիցն եւ կամ անբանիցն դիպմունք, առանց բնութեան և արուեստի» (Նեմ., էջ 135 / 38.[1]):</p>	<p>գտանելոյ փորեաց, այլ վասն գերեզման փորելոյ՝ երկոցունցն յօժարութեան հակառակն դիպեցաւ: Իսկ ինքնամատոյցն՝ անշնչիցն դիպմունք առանց բնութեան և արուեստի (Որոտանեցի, էջ 112):</p>
--	--

Համընկնումները բազմաթիվ են:

Իր աշխատութիւններէ, և հատկապէս՝ «Հարցմանց գրքի» մեջ, տիեզերագիտական, կազմախոսական, կենդանաբանական ու բնագիտական հարցեր է քննարկել նաև Գրիգոր Տաթևացին⁴⁶: «Հարցմանց գրքի» երկու ընդարձակ հատորներ նվիրված են բույսերի, կենդանիների և մարդու կազմութեան ու բնութեան հարցերին: Հարց ու պատասխանի ձևով ներկայացված իր ծավալուն երկում բնագիտական հարցերի պատասխանները Տաթևացին դիտարկում է միջնադարյան Հայաստանում մեծապէս պահանջված անտիկ բնափիլիսոփայութեան դրույթների ներքո, որպէս հիմնավորում ներկայացնելով Բարսեղ Կեսարացու, Գրիգոր Նյուսացու, Նեմեսիոս Եմեսացու, Անանիա Շիրակացու, Հովհաննէս Երզնկացու և օտարազգի ու հայ նշանավոր այլ գիտանական-վարդապետների տեսակետների համադրումը: Մեջբերումներն այստեղ բառացի չեն, այլ հակիրճ, իմաստային կարճ վերլուծութիւններով ձևով:

Երրորդ հատորի Գ. պրակում (Գիրք հարցմանց, էջ 150) Տաթևացին գրում է. «Իսկ Նիւսացին Գրիգոր ի Բնութեան գիրս՝ ի վերջին դասուց հրեշտակացն ասէ անկեալ»: Չորրորդ հատորի ԺԶ. պրակում տարրերի մասին խոսելիս նա խորհուրդ է տալիս. «Եւ զայլ յերկար քննութիւն տարերաց գտցես ի գիրս Նիւսացույն որ վասն Բնութեան մարդոյ» (Գիրք հարցմանց, էջ 190):

Մի քանի առնչակցութիւն.

<p>Նեմեսիոս. «զի իսկզբանն ոչինչ յայլոցն կենդանեաց իշխէր վնասել զմարդն, այլ էին նորա ամենայն ծառայք եւ հնազանդեալք եւ հաւանեալք նմա, ցորճան իշխան էր իւրոցն ախտիցն եւ անբանութեանն, որ ի նմա: Իսկ յորժամ ոչն յաղթեաց իւրոցն ախտից, այլ յաղթեցաւ ի նոցանէ, յաղթեցաւ իրաւամբք եւ յարտաբուստ»</p>	<p>Տաթևացի. «զի ցորճան իշխէր ինքն ի վերայ անասնական մասանց իւրոց՝ որպէս ասացաք, իշխէր եւ ի վերայ արտաբին անասնոց եւ գազանաց, իսկ յորժամ ապստամբեցին նեֆինքն բանականին Տեառն իւրեանց՝ ապստամբեցին եւ արտաբինքն մարդոյն Տեառն իւրեանց: Ուստի յայտ է, որք վերստին յաղ-</p>
--	--

⁴⁶ Գրիգոր Տաթևացի, Գիրք հարցմանց, Երուսաղէմ, 1993 (այսուհետ հղումը շարադրանքի մէջ՝ Գիրք հարցմանց և էջը):

<p>գազանացն: <Քանզի> ի ներս եմնուտ ընդ մեղացն եւ որ առ ի նոցանէն վնաս: Եւ զի այս ճշմարիտ է, յայտ է յորոց առաքինութեամբն անցին ընդ կենցաղս: Քանզի առանց մարտի զաւրագոյնք երեւեցան քան զգազանացն վնասակարութիւնն, որպէս քան զառիժունսն՝ Դանիէլ, եւ Պատրոս՝ քան զիժին խաճանումն» (Նեմ, էջ 24 / 1.[18-19]):</p>	<p>թեն ախտիցն՝ որք յինքեանս, այսինքն՝ ցասման եւ ցանկութեան. յաղթին եւ հնազանդին նոցա արտաքին գազանք եւ անասունք: Որպէս Դանիէլ առիժուցն յաղթեաց, եւ Պատրոս՝ իժին» (Գիրք հարցմանց, հատ. 4, պր. ԾԳ., էջ 220):</p>
---	--

Այն հարցին, թե ինչու՞ «մարդն յետոյ արարաւ».

<p>Նեմեսիոս. «յետոյ ասաց զմարդն լինել, ոչ միայն՝ զի ամենեցունց վասն նորայ եղելոց, պատշաճ էր նախ զառ ի պէտս նորայ պատրաստել, եւ այսպէս զնա, որ վարէրն նոքաք, ածեալ յառաջ, այլ զի իմացականին եղելոյ էութեան եւ դարձեալ երեւելոյս պարտ էր լինել ումեք շաղկապ երկաքանչիւրիցն, զի մի՛ իցէ ամենայն եւ կրակից ինքեան, եւ մի՛ ատար ինքն ինքեան» (Նեմ, էջ 14 / 1.[6]):</p>	<p>Տաքևացի. «Կամեցաւ Աստուած՝ թագաւոր ստեղծանել զմարդն. ըստ այնմ թէ՛ զամենայն ինչ հնազանդ արարեր ի ներքոյ ոտից նորա: Կարգաւոր էր նախ պատրաստել զարձունիս որ է երկինք եւ երկիր. եւ զգահոյս որ է դրախտն. եւ զսպասատրք և որ են կենդանիքն. եւ զմեծութիւնս տնկոց եւ բուսոց. մանաւանդ ոսկոյ ու ականց ի սիրտ երկրի գանձել, եւ սպա թագաւորին բնակիլ... Ոչ արար նախ զմարդն, զի մի՛ արարչակից գիտասցէ զինքն ոչ գոյիցն, եւ անկցի հպարտութեամբ. այլ գործող գոյիցն, զի կացցէ պահպանութեամբն. որպէս ասէ գիր՝ գործել զնա եւ պահել: Եւ այս իսկ է գործն, այսինքն՝ վայելել հոգով յիմանալիսն, եւ մարմնով ի զգալիսս. պարտ էր նախ գոյանալ նոցա, եւ սպա գործողին եւ վայելողին» (Գիրք հարցմանց, հատ. 5, պր. Բ., էջ 230):</p>
---	---

Նման են Նեմեսիոսի և Տաքևացու մոտեցումները մարդու և աշխարհի ազգակցութեան, մարդու ուղղագնաց կեցվածքի մասին (Գիրք հարցմանց,

հատ. 5, պր. Գ. և Դ., էջ 231-233, Հմմտ.՝ Նեմ. էջ 23-24, 1.[17-18]): Մարդկանց արտաքին տեսքի տարբերություններին, որոնք Նեմեսիոսը պայմանավորում է նախախնամություններով, անդրադառնում են և՛ Տաթևացին, և՛ Որոտնեցին:

Նեմեսիոս.	Տաթևացի.	Որոտնեցի.
<p>«Զմտաւ ամեալ զպատճառն, գոցէ նախախնամութեան սակս զտարբերութիւն կերպիցն՝ այլ եւ այլ իւրաքանչիւր ուրով: Քանզի տե՛ս, զի եթէ նոյն կերպարան պահէր ամենեցունց՝ անվրէպ նմանութեամբ, ո՛րքան ինչ շփոթումն իրաց լինէր, ո՛րքան անգիտութիւն եւ խաւար ունէր զմարդն՝ ոչ զիւրն ճանաչելով եւ ոչ զատարն, կամ զթշնամին կամ զվատթարն՝ ի սիրելոյն եւ ի պիտանւոյն որոշեալ, քանզի ամենայն ինչ լինէր նշմարտապէս խառնակ իր՝ ըստ Անաբասագորայ: Եւ այսորիկ այսպէս գոլով, ոչ ինչ արգելոյր ընդ քերց կամ ընդ մարց լինել եւ յափշտակել եւ ոչ այլ ինչ շար գործել յայտնապէս, թէ առ ժամն միայն խոյս տայր, քանզի ոչ ոք զնա ճանաչէր յետ այնորիկ: Ոչ արդեմ ո՛չ արեւն եւ ո՛չ քաղաքաւարութիւն կարգիր, ո՛չ հարբ եւ ո՛չ որդիք զմիմեանս</p>	<p>«Այժմ տեսցումք, թէ զի՞նչ է շահն աննման պատկերաց, զի բազում վնաս էր լինելոց՝ թէ անհատք ոչ էին որոշեալ դիմօք: Նախ՝ զի ոչ ոք ճանաչէր զհայր կամ զեղբայր իւր. այլ եւ զեղ հայր գիտէի, եւ դու զայլ ոմն եղբայր. եւ լինէր մեծ շփոթումն: Երկրորդ՝ զի ոչ հարազատ որդին սեպհականէր զժառանգութիւնս հօր. այլ օտարն ի մեծութիւն հասանէր, եւ իւրն չհատրութեամբ տառապէր: Երրորդ՝ զի ոչ գիտէին զանդրանիկն ժամանակաւ, եւ ոչ զկրտսերն. եւ լինէր փոփոխումն վիճակաց նոցին. որպէս Յակոբ էառ զանդրանկութիւնն Եսաւայ. եւ Եփրեմ զՄանասէին... Չորրորդ՝ զի ոչ ճանաչէր այր զկին իւր, եւ ոչ կին զայր իւր, եւ լինէր անօրէն խառնակումն... Հինգերորդ՝ զի թէ ոք գողանայր եւ սպանանէր, զանմեղն դատապարտէին. եւ լինէին ամենեւին անօրէնութիւն... ոչ երեւէր</p>	<p>«Զի ի մի և նոյն տեսակ այսֆան թիւ բազմութիւն անհատից ծնանին և ոչ նմանին միմեանց կերպարանօք կամ ձայնիւ. զոր թէ ոչ էր այսպէս կազմեալ նախախնամութիւնն Աստուծոյ՝ բազում և անթիւ շարիս սերմանեալ լինէր, ընդ մայրս և ընդ քերցս անկանել, և ոչ կարէին ճանաչել զհայր կամ զմայր, և ոչ լինէր ընտրութիւն շարի և բարւոյն, և այլ բազում ոճիրս գործեցեալ լինէր առանց ընտրութեան» (Որոտ., էջ 103):</p>

<p>գիտելին, եւ ո՛չ այլ ինչ էր հաստատուն մարդկան, քան զի որպէս կոյր իմն լինէր մարդն: Բայց միայն ի հասակէ եւ ի մեծութենէ, այլ ո՛չ ինչ հանաչիւր: Այսման բարութեան եղև մեզ պատճառ նախախնամութիւն՝ զանազաներով զկերպարանս մարդկան հանապազ, եւ ամենայն ուրէ՛ք եւ ոչ ի միում ժամանակի յառնելոյն զայս նուագեալ» (Նեմ. էջ 147-148 / 41.[7]):</p>	<p>բարեկամն եւ թշնամին. Սիրելին եւ ատելին... զի եւ բանական մարդ՝ քան զանբան կենդանիս տգէտ լինէր. վասն զի ամենայն կենդանի ունի բնական հանաչումն իւրոց եւ օտարաց...» (Գիրք հարցմանց, հատ. 5, Պր. 2., էջ 238):</p>	
---	---	--

Սիմեոն Զուղայեցին (Ժէ. դար) կարծում էր, որ բնության զարգացման վերաբերյալ գոյություն ունի երկու հիմնական տեսակետ: Դրանցից առաջինի կողմնակիցներն «ասացին չլինել նախախնամութեան յէակս որոց քաջագոյն պատահեն Փիլոն և սուրբն Գրիգոր (իմա՝ Նեմեսիոս), զորոց զբանս առ ձեռն ունելով՝ բաւական համարեսցուք»⁴⁷, իսկ երկրորդի պաշտպանները՝ սկսած հին հունական ատոմիստներից, ընդունում են նախախնամության ու ներքին նպատակադրվածության գաղափարը: Օրինակ՝ Պրոկղոս Դիագոխոսը: Վերջնականապես շներժելով երկրորդ տեսակետը, որոշ տատանումներով, Սիմեոն Զուղայեցին ընդհանուր առմամբ պաշտպանում է առաջինը: Դա երևում է այն բանից, որ քննադատական ոչ մի խոսք չասելով Փիլոնի և Նեմեսիոսի մասին, ընդհակառակը, մասամբ ծիծաղելի է համարում այդ հարցում Պրոկղոսի թույլ տված հակասությունները⁴⁸:

Իսկ Ստեփանոս Լեհացին (Ժէ. դար) յուրովի է ներկայացնում ներգործության և ախտի համեմատության նեմեսիոսյան վերլուծությունը:

<p>Նեմեսիոս. «Արամտութիւն՝ ներգործութիւն է սրտմտատեսականին. իսկ ախտ՝</p>	<p>Լեհացի. «Ներգործութիւն բարկութեան քստ որում է քստ բանի, է բնական</p>
---	--

⁴⁷ Սիմեոն Զուղայեցի, Գիրք տրամաբանության, Կ.Պոլիս, 1794, էջ 170:

⁴⁸ Տե՛ս Զ. Ղ. Միրզոյան, XVII դարի հայ փիլիսոփայական մտքի քննական վերլուծություն, Երևան. 1983, էջ 205:

<p>երկուցն մասանց անձին և մարմնոյս մերոյ ամենայնի, յորժամ ի արտմտութենէ բունաբար ածիցի առ գործն. քանզի յայլմէ յայլում եղև շարժութիւնն, զոր աստեմն գոլ ախտ. եւ ըստ այլ յեղանակի. ներգործութիւն ախտ ասի՝ յորժամ իցէ արտաբոյ բնութեան, քանզի ներգործութիւն՝ է ըստ բնութեան շարժութիւն, իսկ ախտ՝ արտաբոյ բնութեանն: Արդ և ըստ այսմ բանի՝ ներգործութիւն յորժամ ոչ ըստ բնութեան շարժիցի՝ ասի ախտ» (Նեմ. գլ. 16, էջ 90):</p>	<p>մարդոյ, բայց ըստ որում է արտաբոյ կարգի բանականութեան, է ընդդէմ բնութեան մարդոյ» (Ստեփանոս Լեհացի, Բանմ... ՄՄ ձեռ. Հ^մ 110, էջ 386բ)⁴⁹:</p>
---	--

Եվս մեկ աշխատություն, որը մեծ ճանաչում ուներ միջնադարյան հայ բժշկական աշխարհում և, կարելի է ասել՝ կիսում էր Նեմեսիոսի երկի ճակատագիրը, քանի որ նույնպես անհիմն կերպով վերագրվել էր Գրիգոր Նյուսացուն, անհայտ հայ հեղինակի «Յաղագս բնութեան մարդոյ (կամ յաղագս կազմութեան մարդոյ)» ի շորից գոյացեալ...» գրվածքն է: Այն մեզ է հասել մի քանի տասնյակ ընդօրինակություններով: Ի տարբերություն ուշ միջնադարի բժշկական երկերի, որոնք գրված են միջին հայերենով, այս աշխատանքը դասական գրաբարով է, որից այդ շրջանի հայ բժիշկները քիչ էին օգտվում: Այն իր ժամանակաշրջանի բժշկական երկերի տիպիկ օրինակ է և հնարավորություն է տալիս հետևել մի շարք կարևոր բժշկական հասկացությունների զարգացման ընթացքին: «Այս աշխատանքը մեծ հետաքրքրություն է ներկայացնում, քանի որ այն հայ բժշկական գրականության ամենավաղ ստեղծագործություններից է, որում շարադրված են այդ շրջանի սաղմնաբանական գիտելիքների հիմունքները»⁵⁰, սակայն նրա թե՛ հեղինակային պատկանելիության, և թե՛ ժամանակաշրջանի մասին կարծիքները հակասական են: Ըստ Լ. Հովհաննիսյանի՝ աշխատությունը պատկանում է ինչ-որ հայ բժշկի, հավանաբար, Զ.-Լ. դարերի, որն իր փոքրիկ երկը վերագրել է Գրիգոր Նյուսացուն՝ դրան մեծ հեղինակություն տալու ակնկալիքով: «Անցնելով Գրիգոր Նյուսացուն վերագրված հակիրճ անատոմիային, մենք պետք է նշենք, որ միջնադարի հայ բժիշկներն այս գրքին մեծ նշանակություն էին տալիս, դատելով մեզ հասած

⁴⁹ Նույն տեղում, էջ 297:

⁵⁰ Գ. Գ. Арутюнян, *Гинекология и акушерство в Армении в древние и средние века*, Ереван, 1974, ст. 63.

ընդօրինակությունների մեծ քանակից (միայն Մատենադարանում մոտ 30 օրինակ, մինչև 18-րդ դար): Ակնհայտ է, որ այն շատ հանրաճանաչ էր, ինչը չէր երբերում նաև հայերեն լեզվով բավական մեծ քանակի կազմախոսական գրքերի գոյության փաստով, որոնք գրվել էին ավելի ուշ շրջանի բժիշկների կողմից: Այս երկի հեղինակի մասին մենք արդեն ասել ենք, որ այն պատկանում է հին հայ բժիշկ-կոմպիլատորներից մեկին, քանի որ այն չի կրում թարգմանական երկի ոչ մի նշան»⁵¹: Մա մարդու մարմնակազմության և հիմնական բնախոսական ուղղվածությունների մասին այդ շրջանի բժշկությանը հայտնի նյութի խիստ սեղմված վերաշարադրանք է: Գրչագրերի մեծ մասում այն վերնագրվում է. «Վասն կազմութեան մարդոյ՝ մեծին Գրիգորի Նրևացւոյն, համառօտեալ բաղդատաբար. «Ի շորից գոյացեալ ասի մարդն, զի շորք պատճառք են եղելութեան ամենայն գոյիցս...» »:

Լևոն Խաչիկյանը կարծում է, որ այս երկի հեղինակը Հակոբ Արիմեցին է (1360-1426) «Գևորգ Երզնկացի անվանի վարդապետի սանը, որ ժե. դարի 10-ական թթ. տոմարագիտական և բնագիտական հարցերի մասին դասախոսություններ է կարդացել Մեծոփի դպրոցում»⁵²: «Հակոբ Արիմեցու աշխատություններից մի քանիսը, մասնավորապես վերոհիշյալ «Ի շորից գոյացեալ զմարդն» սկսվածքով բնագիտական ուշագրավ գրվածքը, ձեռագրերում պահպանվել է առանց հեղինակի անվան: Տողերիս գրողին հաջողվել է պարզել, որ հեղինակը Հակոբ Արիմեցին է⁵³»: Վերլուծելով Հակոբ Արիմեցու բնագիտական հայացքներն ընդհանրապես, Լևոն Խաչիկյանը գրում է. «Վերլնթաց զարգացող բնական շղթայի օղակները շաղկապված են միմյանց. բնության մեջ նույնիսկ պահպանվել են փոխանցման վիճակի գոյաձևեր, օրինակ՝ մագնիս քարը, որ անշունչ առարկա է, բայց քարշողական գորությունը հաղորդակցվում է բույսերի հետ, կամ խեցեմորթը, որ ծովի հատակին քարի վրա աճած ծառ լինելով, միաժամանակ կենդանի էակ է և այլն (հմմտ.Նեմ. էջ12 / 1.[5]): Կամ, որ շորս տարրերն են ընկած բոլոր գոյերի հիմքում, դրանք մշտնջենավոր են՝ «ոչ առաւելուն երբեք և ոչ նուազին... զի նորոյն լինելութիւն ապականութիւն գործէ հնոյն. և ապականութիւն հնոյն՝ լինելութիւն գործէ նորոյն. և ըստ ամենայնի մնան մշտնջենաւորապէս, ոչ առաւելեալ և ոչ նուազեալ»⁵⁴ (Հմմտ. Նեմ. էջ 64 / 5.[6])⁵⁵: Անտիկ բնագիտության այս տվյալները մատչելի էին հայ գիտ-

⁵¹ Л. А. Оганесян, *История медицины в Армении с древнейших времен до наших дней*, ч. I, Ереван, 1946, ст. 169.

⁵² Լ. Խաչիկյան, նշվ. աշխ., էջ 27:

⁵³ Նույն տեղում, էջ 27, ծան. 4:

⁵⁴ Նույն տեղում, էջ 29:

⁵⁵ «Եւ այսու եղանակաւ մնայ մշտնջենաւորապէս ամենայն, տևէ առ ի յիցս լինելութիւն, ոչ առաւելեալ երբեք և ոչ նուազեալ: Ուստի և զայլոց զլինելութիւնն՝ այլում ապականու-

նականներին Նեմեսիոս եմեսացու «Յաղագս բնութեան մարդոյ» աշխատությամբ, որ թարգմանվել էր հայերեն VIII դարի սկզբներին»⁵⁶: Այնուհետև Աստուհետե Աստուհետե Կոնստանդինոս անդրադառնում է նաև «Յաղագս բնութեան մարդոյ. ի շորից գոյացեալ...» աշխատությանը. «Դրիմեցու «Յաղագս բնութեան մարդոյ» աշխատությունը հարուստ ու բազմազան նյութեր է պարունակում կազմախոսության, բազմազան ֆիզիոլոգիայի, մարդու զգայարանների բնախոսական գործունեության և հարակից հարցերի մասին: Ա. Ս. Կծոյանը իր «Բժշկագիտությունը Հայաստանում XI-XIV դարերում» (Երևան, 1968) արժեքավոր ուսումնասիրության մեջ, բացահայտել է ձեռագիր այս աշխատության պատմագիտական նշանակությունը, տեղյակ չլինելով, որ նրա հեղինակը Հակոբ Դրիմեցին է»⁵⁷:

Սակայն այս երկի Մատենադարանում առկա գրչագրերի մեր ուսումնասիրությունն ի հայտ բերեց ԺԳ. դարի առնվազն երեք ընդօրինակություն (ՄՄ 5611, ՄՄ 5443, ՄՄ 3710), և ևս երեքը, որոնք գրվել են ԺԳ. դարի սկզբին՝ ՄՄ 8132 (1301 թ.), ՄՄ 5077 (1311թ.), 1098 (1320 թ.), այսինքն՝ նախքան Հ. Դրիմեցին:

Ահա մի քանի առնչակցություն Նեմեսիոսի երկի հետ.

<p>Ի շորից. «Գործարանք սերմանն երկու երակք ի գլխոյն, որք ի վայր կոյս իջանեն յերկամունսն, և երթան ի յարունսն միաւն լի արեամբ, և միան՝ լի փոլ, և յորժամ հասանէ երակ արեանն ի յարանսն, արիւնն ի սերմ դառնայ, յորժամ մերձաւորութեամբ անկանի սերմն յարգանդ կնոջն, զարէն սերմանցն, որ յերկիր լինի սերման կնոջն, իբրև զխախաց կաթին առն սերմն» (ՄՄ 5611, էջ 112ա):</p>	<p>Հմմտ. Նեմ. էջ 104-105 / 24.[2] տե՛ս վերը:</p>
<p>Նեմեսիոս. «Վասն զի զգայութեանցս սկզբունս եւ արմատս գառաշոյ կուսէ փորուածս խելացն ասեմք գոլ, եւ իմացողականին՝ գմիջինն,</p>	<p>Ի շորից. «Իսկ գլուխն երիս փորուածս ունի. ի միջի փորուածին խելքն է, որ իմանայ, այսինքն ըղեղն, իսկ ի վերջին փորուածին յիշողութիւնն, և</p>

թին՝ գոլ ասէ, և զայրոց ապականութիւնն՝ այլում լինելութիւն. ոչ միայն ըստ անձին՝ որպէս և յառաջագոյն ասացեալ է, այլ և ըստ մարմնոյ»:

⁵⁶ Լ. Խաչիկյան, նշվ. աշխ., էջ 29:

⁵⁷ Լ. Խաչիկյան, նշվ. աշխ., էջ 29, ծան. 8:

եւ յիշողականին՝ գյետուստն կուսէ, կարեւոր է ցուցանել, թէ այսօրիկ այսպէս են, զի մի՛ թուեսցուք անբանապէս հաւատալ ասացելոցս: Եւ բաւական ցուցումն է ի նոցունց ի մասնկանցն ներգործութենէ առնլի: Քանզի գառաջնով կուսէ փորուածոցն, ըստ որ ինչ եւ է յեղանակի վնասեցելոց, զգայարանն **խափանին**, բայց իմացականն մնայ տակաւին ամբողջ: Իսկ միջնոյն փորուածոյն միայնոյ կրեցելոյ ինչ՝ իմացումն սխալէ, բայց զգայարանն պահեն զըստ բնութեանն զգայութիւն: Իսկ թէ եւ առաջինն եւ միջին փորուածն կրեն ինչ, իմացուածն՝ հանդերձ զգայարանաւն, հատանին: Իսկ թէ յետուստ կուսէ կրէ ինչ՝ յիշումն միայն կորնչի, զգայութեանն եւ իմացականին ոչ ինչ վնասեցելոյ» (Նեմ., էջ 84 / 13.[3]):

յառաջին փորուածին լոյս երակֆ աչացն, արդ եթէ միջին փորուածին հանդիպին ցամ, խելն պակասէ, և իմացն բառնայ, իսկ յիշողութիւնն առաւելու, զի խելն յորժամ առողջ լինի, իմացն բազում լինի և միտն ընդ իմացեալսն զբաղեալ, և ի յիշողութիւնն սակաւ լինի, իսկ յորժամ խելն **վնասի** և յիւր գործոյն **խափանի**, այսինքն յիմանալոյ, միտն թողեալ զխելսն ի յիշողութիւնն պարապէ և յիշողութիւնն առատանայ, և այդ ի մաղասա կաթիցն է յայտ, զի յիշողս առաւել լինին, քան զոր յառաջն էին, և զամենայն ինչ որ ի յողջութեանն գործել էին, յիշեն, և առատ խօսին, իսկ խելաւ և շատիմաց մարդիկ սակաւախաւաք լինին, վասն զի ամաչէ և պատրաստ կա խաւաիցն, և ամաւթն և պատրաստութիւնն և պատկառանք կապ լինի լեզուին, իսկ յորժամ ի խելացն թեթև լինի, միտն ի յիշողութեանն կոյս ընթանայ զբանն արագ յիշէ և լեզուն առատ խաւսի և անամաչ. իսկ եթէ առաջին փորուածին հանդիպեցաւ, լուսերակն պակասին և տեսանելին խափանին, յայնժամ միտն լուսաւորին, և իմացն յորդին, և յիշողութիւնն առատանայ, զի աչն քան զամենայն զգայութիւնն, առաւել առ ինքն ձգեն զմիտսն և խափանեն յայլ զգայութիւնցն, և այս անտի է յայտ, քանզի յորժամ զարմանալի ինչ իր տեսանէ կամ գեղեցիկ, թողեալ զամենայն զգայարանսն թափուր ընդ գեղեցկութիւնն բեւեռի, և ընդ այն զբաղեալ մտացն յայլ ի զգայութիւնսն ոչ ժամանէ, վասն այսորիկ ի խափանել տեսարանին, ազատին միտք ի

	<p>նորա ծառայութենէն, և յայլ իմացն պարապին, և առաւել իմանա և տեսանալ լինի, և յայտ ի յաչի կայիցնէ, զի բազումք ի նոցանէ զարմանալի գործս գործեն մտացն տեսութեամբն, քանզի աչն մտացն դէտ էր, զի զոր աչն տեսանէր, միտն զայնս իմանայր, իսկ միտն աչացն դէտ ոչ կարէ լինել, զի զոր միտն իմանայ աչն զայն տեսանել ոչ կարէ» (ՄՄ 5611, էջ 116բ-117ա):</p>
<p>Նեմեսիոս. «Եւ անձն թէ կերակրի, յամարմնոցն կերակրի, քանզի ուսմունք կերակրեն զնա: Եւ ոչինչ մարմին յանմարմնոյ կերակրի» (Նեմ, էջ 29 / 2.[3]):</p>	<p>Ի չորից. «Քանզի ոգին անմարմին է, և յանմարմնոյ կերակրի, որպէս ասէ պղատոն, եթէ կերակուր նորա ուսմունք են, և բերան ոգոյն լսելիքն, որով ընդունի զնաշակումն բանից և ուսմանց» (ՄՄ 5611, էջ 117աբ):</p>

Հայ բժշկապետերի (Ամիրդովլաթ Ամասիացի, Հովասափ, Ասար, Բունիաթ Սեբաստացիներ, Գրիգորիս...) ստեղծագործութիւններում մարդու բնութեան քննարկումները դրսևորվում են առավելապես այս երկի ձևակերպումներով՝ առաջնայնությունը տարվ կազմախոսական և բնախոսական ծանոթություններին, զանց առնելով փիլիսոփայական վերլուծությունները:

Առնչակցություններն, իհարկե, լիովին չեն վերհանված և կարող են մանրակրկիտ ու հանգամանալի հետազոտություն, քանզի բնագրերի ամենուր ի հայտ եկող փոխթափանցվածությունը, դրանց շարունակական հղումներն ու վերլուծական համադրումներն անընդհատ ի ցույց են հանում նախնական բնագրի նորանոր շերտեր՝ ստիպելով նորովի դիտարկել այն, այլ կերպ արդեն գիտակցելով նրա տողատակերում թաքնված իմացաբանական, խորհրդաբանական և ալլաբանական իմաստները և դարերի մեջ ձգվող ու ճշգրտվող նրա թելերի գոյատևման անհրաժեշտությունը:

KARINE MOSIKYAN
NEMESIUS OF EMESSA'S ON THE NATURE OF MAN IN MEDIEVAL ARMENIAN LITERATURE

Key words: natural philosophy, medical science, Middle Ages, text, Gregory of Nyssa, Yovhan Vorotnets'i, Yovhannēs Erznkats'i.

The Armenian version of the book *De Natura Hominis* (*On the Nature of Man*) by the 4th century Greek philosopher Nemesius of Emesa has often attracted the attention of medieval Armenian natural philosophers and physicians as a source of fundamental theoretical knowledge. Traces of this work can be found in the writings of well-known authors, such as Gevorg Skevrats'i, Grigor Magistros, Yovhan Vorotnets'i, Grigor Tat'evatsi, Yovhannes Erznkats'i, Simeon Jughayets'i et al. There are many parallels between Nemesius' work and other texts, which need detailed study. The article, in particular, argues that the anonymous treatise *On the Nature of Man*, beginning with "It is said that man came into being from four [elements]..." («Յաղագս բնութեան ծարրոյ. Ի շորից գոյացեալ ասի ծարրն...») and obviously influenced by Nemesius, which had been ascribed to Yakob Ghrimets'i (14th-15th cc.), is in fact an earlier writing, because we have found copies of this text from the 13th-14th centuries.

КАРИНЕ МОСИКЯН
ТРАКТАТ НЕМЕСИЯ ЭМЕССКОГО “О ПРИРОДЕ ЧЕЛОВЕКА” В
СРЕДНЕВЕКОВОЙ АРМЯНСКОЙ ЛИТЕРАТУРЕ

Ключевые слова: натурфилософия, медицинская наука, средневековье, текст, Григорий Нисский, Ован Воротнеци, Ованнес Ерзнкаци.

Армянский перевод трактата «О природе человека» древнегреческого философа 4-го века Немесия Эмесского, как фундаментальный источник теоретических знаний, часто оказывается в центре внимания средневековых армянских натурфилософов и врачей. Следы влияния этого трактата мы находим в работах таких известных авторов, как Геворг Скеврати, Григор Магистрос, Ованес Воротнеци, Григор Татеваци, Ованес Ерзнкаци и др. Связи различных текстов с этим трудом довольно многочисленные и нуждаются в подробном исследовании. В статье, в частности, показано, что анонимный трактат “О природе человека” («Յաղագս բնութեան ծարրոյ») с зачином “Говорят, что человек возник из четырех [элементов]...” («Ի շորից գոյացեալ ասի ծարրն...»), в котором явно усматривается влияние Немесия, и который раньше приписывался Акопу Крымеци (14-15-й вв.), на самом деле более раннее произведение, так как нам удалось обнаружить списки XIII и XIV веков.

ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ

ՄԻՀՐԱՆ ՄԻՆԱՍԵԱՆ

ԱՐՐԱՀԱՄ ԱՐՔ. ՔԻԻԲԷԼԵԱՆ-ԵԿԷՆԵԱՆԻ ԱՆՏԻՊ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՆ ՈՒ ՊԱՏՄԱԿԱՆ ԳՐԱՌՈՒՄՆԵՐԸ (1816-1829)

Բանալի բառեր՝ ժամանակագրություն, Աբրահամ-Քերովբէ Արք. Քիւբէլեան-Եկէնեան, Հալէպ, Սիւս, Կիլիկիոյ կաթողիկոսութիւն, Կ. Պոլիս, հայ կաթողիկ համայնք, Օսմանեան կայսրութիւն:

ՄՈՒՏՔ

ԺՔ. դարասկզբի հալէպահայ մշակութային ծանօթ դէմքերէն է տեղւոյն հայ կաթողիկ համայնքի առաջնորդ Աբրահամ Արք. Քիւբէլեան-Եկէնեանը (Քիլիս, 1786 – Հալէպ, 1832), որ իր եկեղեցականի պարտաւորութիւններուն առընթեր, զբաղած է նաեւ գրականութեամբ: Ան աւանդ ձգած է հայերէն եւ արաբերէն լեզուներով բաւական հարուստ ինքնագիր եւ թարգմանական ժառանգութիւն մը, որ ցարդ մեծ մասամբ կը մնայ անտիպ:

Բացի իր գրական տասնեակ գործերէն, մեզի հասած է նաեւ Քիւբէլեանի մեծարժէք ձեռագրերը¹, որուն էջերուն խառնիխուռն ձեւով արձանագրած է հայերէն եւ արաբերէն լեզուներով զինք հետաքրքրող զանազան նիւթեր. ձեռագրերուն մէջ կան օրինակ, Հալէպի 1819-1820 թուականներու հարիւրմէկօրեայ ժողովրդային ապստամբութեան մանրամասն օրագրութիւնը, յղած նամակներու պատճէնները կամ ամփոփումները, համայնքի վարժարաններուն ու համայնքային կեանքին առնչուող տեղեկութիւններ, իր եւ հարազատներուն վաճառականական եւ նիւթական գործառնութիւններու արձանագրութիւնները, իր գիրքերու ցանկը, իր եւ այլոց բանաստեղծութիւններու ընդօրինակութիւնները եւ այլն:

Քիւբէլեան, բազում նիւթերու կողքին, ձեռագրերու զանազան էջերուն, կատարած է նաեւ ժամանակագրութեան տեսքով պատմական դէպքերու գրառումներ: Բաւական խորին գրաբարով գրուած հետագայ ժամանակագրու-

¹ Ձեռագրերը այժմ ունի 122 թերթ, բայց էջերու թուագրումէն կը պարզուի, որ նախապէս ունեցած է առնուազն 192 թերթ, կամ անկի: Ժամանակի ընթացքին բազմաթիւ թերթեր պոկուած են անկէ: Ծաւալը՝ 21,5 x 30,5 սմ.: Կը պահուի Հալէպի հայ կաթողիկ առաջնորդարանի դիւանատան մէջ:

թիւնը հրատարակութեան կու տանք նոյնութեամբ, առանց որեւէ միջամտութեան, հաւատարիմ մնալով հեղինակի ոճին ու բառամթերքին:

Ժամանակագրական բնոյթի այս գրառումները կ'ընդգրկեն տարբեր վայրերէ հասած լուրեր եւ ականատեսի ու ականջալուրի վկայութիւններ, որոնց մէկ մասին անմիջական մասնակիցը կամ ականատեսը եղած է ան:

Ժամանակագրութեան մէջ ներկայացուած դէպքերը ունին աշխարհագրական բաւական ընդարձակ տարածք, թէեւ անոնց հիմնական թատերաբեմը Հալէպն է, բայց կան նաեւ տեղեկութիւններ Կոստանդնուպոլսէն, Սիսէն, Պէյրութէն, Ալյիթապէն, Եւրոպական երկիրներէ եւ այլ վայրերէ:

Ձեռատետրի գրառումները միշտ չէ, որ տրուած են ժամանակագրական յաջորդականութեամբ. որոշ նիւթեր արձանագրուած են խառնիխառն. նման գլուխներ հրատարակութեան տուած ենք նոյնութեամբ, առանց մասնատելու եւ ժամանակագրական կարգով դասաւորելու. իսկ անոնք որոնք առանձին վերնագրով տուած են որոշ տարուայ մը դէպքերը, ապա ձեռատետրի զանազան էջերէն հաւաքած ու մէկտեղած ենք զանոնք եւ դասաւորած ժամանակագրական կարգով:

Ժամանակագրական բնոյթի այս նիւթերէն բացի, ձեռատետրէն քաղած ենք նաեւ պատմական որոշ հետաքրքրութիւն ներկայացնող երկու այլ գրառումներ եւս. առաջինը՝ «Գործակալութիւնք իմ 1817» վերնագրով եւ նոյն թուականին վերաբերող իր աշխատանքներու ամփոփ պատկերը, որմէ վերցուցած ենք ընդհանրական հետաքրքրութիւն ներկայացնող բաժիններ, զանց առնելով այն մասերը, որոնք կը վերաբերին իր նիւթական գործառնութիւններուն, զանազաններու նշանտուր-պսակներուն եւ նմանօրինակ դէպքերու. երկրորդը՝ «Պատմութիւն հալածանաց յունաց ի Բերիա 1818» խորագրով գրառումը, որ թէեւ կը խօսի Հալէպի յոյներուն մասին, բայց այնտեղ կան նաեւ տեղւոյն հայութեան վերաբերող բազմաթիւ հետաքրքրական յիշատակութիւններ:

Քիւբէլեանի այս գրառումները արժէք կը ստանան մանաւանդ անով, որ իր ընդգրկած ժամանակահատուածէն հալէպահայութեան մասին պատմական այլ յուշարձաններ գրեթէ չեն հասած մեզի, եւ հայկական կարեւոր այդ գաղթօճախի ժԹ. դարասկզբի պատմութիւնը ընդհանրապէս կը մնայ քիչ ծանօթ:

Հրատարակուող ժամանակագրութեան պատմական արժէքին ու բերած նորութիւններուն մասին տանք օրինակ մը միայն.

Բաբգէն Աթոռակից կաթողիկոս Կիւլեսէրեան, չորս տարբեր աղբիւրներու վրայ հիմնուելով, Կիլիկիոյ Կիրակոս Ա. Մեծն Աջապահեան կաթողիկոսի մահը հրահանգող Սուլթան Մահմուտ Բ.ի հրովարտակի ստացման եւ Կաթողիկոսի ձեռքակալման քանի մը հաւանական թուականներ նշած է, բայց չէ կրցած

հասնիլ վերջնական արդիւնքի². մինչդեռ հոս հրատարակուող ժամանակագրութեան մէջ այդ թուականը տրուած է շատ յստակ՝ Յունուար 1819:

Հետաքրքրական ու եզակի են նաեւ հալէպահայութեան թուաքանակի մասին Քիւբէլեանի արձանագրած թիւերը, որոնք հիմնուած են իր իսկ կատարած մարդահամարի տուեալներուն վրայ: Նոյնքան հետաքրքրական են պետական վերնախաւի շահատակութիւններուն եւ քրիստոնեայ համայնքներու հանդէպ անոնց կատարած և յաճախակիօրէն ու ամէն առիթով կրկնուած կողոպուտներուն նկարագրութիւնները:

Քիւբէլեան իր գրառումներուն մէջ եղած է բծախնդիր, յաճախ, երբ թիւ մը կամ տեղեկութիւն մը չէ կրցած ունենալ իր տրամագրութեան տակ, ապա ձեռատետրին մէջ անոր տեղը ձգած է դատարկ՝ ապագային ամբողջացնելու նպատակով:

Կը յուանք, որ առաջին անգամ գիտական շրջանառութեան մէջ դրուած այս նիւթերը կը նպաստեն արեւմտահայութեան ու մանաւանդ հալէպահայութեան որոշ ժամանակահատուածի մը պատմութիւնն ու եկեղեցական կեանքը աւելի խոր ու համակողմանիօրէն ճանշնալու եւ ուսումնասիրելու:

Ժամանակագրութիւնը հրատարակութեան կու տանք նոյնութեամբ, առանց որեւէ միջամտութեան: Աւելցուցած ենք կէտադրական նշաններ միայն, զորս շատ քիչ գործածած է հեղինակը. բացած ենք նաեւ յապաւումները, որոնք այնքան բազմաթիւ են: Մեր յաւելումները առած ենք անկիւնաւոր փակագիծերու մէջ՝ [], իսկ ձեռատետրի էջահամարները երկու գծի՝ | | մէջ: «Խ» նախդիրէն առաջ դրուած ապաթարցները անտեսած ենք եւ զեղշած:

Հեղինակի կենսագրութիւնն ու գործերուն ցուցակը տալ աւելորդ նկատեցինք, որովհետեւ այլ առիթներով ըրած ենք այդ մէկը իր գործերէն մեր կատարած մէկէ աւելի հրապարակումներու ժամանակ³, միայն ըսենք, որ հրատար-

² Բարզէն Ա. Աթոռակից կաթողիկոս, Պատմութիւն կաթողիկոսաց Կիլիկիոյ (1441-էն մինչեւ մեր օրերը), Անթիլիաս, տպարան Դպրեվանոց, 1939, էջ 547-552:

³ Հալէպի 1819-1820 թուականներու համաժողովրդական ապստամբութեան իր արաբերէն եւ մասամբ հայերէն օրագրութիւնը արաբերէն առանձին հատորով Պետրոս Արք. Միւրթեանի համահեղինակութեամբ հրատարակած ենք հետեւեալ վերնագրով՝ ثورة الحلبيين على الوالي خورشيد باشا العثماني (1820-1819) يوميات المطران أبراهام كويليان (Հալէպցիներու ապստամբութիւնը նահանգապետ խորշիտ փաշայի դէմ (1819-1820) – Աբրահամ Արք. Քիւբէլեանի օրագրութիւնը, مهران ميناسيان بطرس مراياتي ومهران ميناسيان, Հալէպ, 2008, 240+8 էջ, իսկ չափածոյ գործերէն հրատարակած ենք երեւ անգամ. Ա. «Ողբ ի վերայ Բերիա փառաբանին», Հասկ հայագիտական տարեգիրք, Անթիլիաս, նոր շրջան, Թ., 1997-2001, էջ 417-421: Բ. «Երկու անտիպ ներքող ձօնուած Կիլիկիոյ Կիրակոս Ա. Մեծն եւ Եփրեմ Բ. Աշապահեան կաթողիկոսներուն», Հասկ հայագիտական տարեգիրք, նոր շրջան, Ժ., 2002-2006, էջ 219-232: Գ. «Աբրահամ Արք. Քիւբէլեան-Եկէնեանի զոյգ բանաստեղծութիւնները, նուի-

րակուող ժամանակագրութեան շրջանին, մինչեւ 1825, ան կը գտնուէր Հալէպ, իսկ անկէ ետք, մինչեւ 1831՝ Լիբանանի Զմմառու հայ կաթողիկ վանքը: Աւելցնենք նաեւ, որ հոն, ուր հեղինակը պատահած դէպքի մը վայրը չէ նշած, ընդհանրապէս ան նկատի ունեցած է Հալէպ քաղաքը:

Արժէ յիշել նաեւ, որ հեղինակը, հաւատարիմ ժամանակի հայ կաթողիկ կղերի սովորութեան, «ուղղափառ» բառով կը հասկնայ միայն կաթողիկները, իսկ «հերետիկոս» եւ «հերձուածող» բառերով՝ ոչ կաթողիկները:

Տողատակերուն տուած ենք ամփոփ ծանօթագրութիւններ, մանաւանդ արաբերէն ու թրքերէն բառերու եւ եզրերու բացատրութիւններ:

|թերթ 21ա| Իրբ ազգի

Եկն թուրք Կոստանդնուպօլսոյ՝ ծանօթութիւն ամբաստանութեան հերետիկոսաց. 1816, Դեկտեմբեր 13:

Գրեաց թուրք խոնայ Յակոբեան Կուրենլի առ Մաթէոս աղայ վասն ազգին. 1816, Դեկտեմբեր 28:

Առին վկայական մեր ազգն յայլոց ազգաց՝ արդարացուցիչ յամբաստանութեանց հերետիկոսաց, 1817, Յունիսար 1:

Թագեալ վէֆիլն⁴, զի ոչ կարէր վնարել զպարտս ազգին. եւ ոչ ոք ի մեծամեծաց կամի կառավարել զազգն, [1817], Յունիսար 11:

Ժողովեցան ի գիշերի մեծամեծք ազգին եւ հանին զհաշիւն եւ ետուն ժողովել Յովսէփ Թէրուզին զտոյժն⁵:

Բաժանեցան ազգն ի կողմանէ հաշուին, զի փոքունք ո՛չ կամեցան զհետ երթալ մեծամեծաց, զի անհաւասարութիւն արդարութեան կայր ի բաշխոյմն յոյժ յոյժ, եւ բազմաց բազում ծանրութիւն լինէր, եւ ամբաստան եղեն տէրութեան ընդդէմ պարապներուն⁶:

րուած Հալէպի 1813ի ժողովրդական ապստամբութեան», *Հայկազեան հայագիտական հանդէս*, Պէյրութ, Լ., 2010, էջ 395-408:

Իսկ Պետրոս Ծ. Վրդ. Միրաբեանի եւ մեր «Հալէպի հայ կաթողիկէ դպրոցները 19րդ դարուն սկիզբը» յօդուածը մեծ մասամբ հիմնուած է այս ձեռատետրի տուեալներուն վրայ (տես՝ *Աւետիք*, Պէյրութ, նոր շրջան, 54րդ տարի, թիւ 1-3, Յունուար-Մարտ 1986, էջ 78-82 եւ թիւ 4-6, էջ 149-157):

⁴ Արաբերէն՝ փոխանորդ. ֆրիստոնեայ համայնքներու ներկայացուցիչը պետական իշխանութիւններու մօտ, որ տուրքերու գանձում կը կատարէր համայնքի անդամներէն ու կը յանձնէր պետութեան:

⁵ Նկատի ունի այն գումարը, որ իշխանութիւններու կողմէ կը գանձուէր ժողովուրդէն անհիմն ու անարդար «մեղք»ի համար: Աւելի վար կը գործածէ բառին արաբերէն տարբերակը՝ «ներիմա»:

⁶ «Պարա՛պ»՝ հրովարտակ (արաբերէն): Հոս նկատի ունի սուրբանական «պարա՛պ»՝ հրովարտակ ստացած օսմանեան կայսրութեան ֆրիստոնեաներու այն խաւը, որ յիշեալ

Յետ երկուց ատուց փետր/ար 6 սադրանփութամբ հերետիկոսաց պաշարեցան տունի քահանայից ուղղափառաց եւ բանտեցան ի մերոց Տէր Գրիգոր⁷ եւ ի մատոնեաց Տէր Նասրալլա⁸ եւ յասորոց Տէր Գաբրիէլ Շէհնէ:

Եկեն թուղթ մեծամեծաց ազգի ի Կոստանդնուպօլսոյ լինել աներկուն յերեսաց հերետիկոսաց եւ մի՛ երկնչիլ. [1817, Փետր/ար] 12:

Կալան զքահանայս յունաց ի տանց հարկանելով, զի պատարագէին ի տունս, եւ չորս օր ի բանտ մնացին, եւ եղև տուգանի ի վերայ այդր ինն հազար դահեկան, եւ մեր ազգ հանեցան տալ յայդմանէ զչորորդ մասն, [1817], Փետր/ար 13:

Եկն թուղթ ի Կիրակոս Պատրիարզէն⁹ հերետիկոսաց յորդոր սիրոյ եւ սպառնալիք մարմնաւորք անհնազանդից, [1817], Մարտ:

Եկեն ֆերմանի վեց հերետիկոսաց՝ շտալ ընդունաւեայ անուամբ օտարականի գտոյծս. եւ մնացեալ ֆերմանի վասն այլոց իրաց:

Թուֆենեֆի պաշին¹⁰ դարձոյց զԱնտոն Ֆարայ հին վեֆին եւ ժողովեաց զմնացեալ տոյժն ի փոքունց մեծամեծ վնասոյք եւ տառապանօք:

Մեծաւորն նզովեաց զվեֆին մեծ նզովիւք վասն զի զրպարտեաց զմեծաւոր արարել զանիրաւ տեֆթար¹¹, աղաչեցաւ զմեծաւորն լուծանել զվեֆին եւ արձակեաց դնելով զպաշխարումն:

հրովարտակին շնորհի կ'ունենար առանձնաշնորհեալ դիրք ու զերծ կը մնար համայնքը պատուհասած անարդար տուրքերու մասնակցելէ, բան մը, որ յանախ կը յարուցէր նոյն համայնքի անդամներու եւ հոգեւոր պետերու արդար դժգոհութիւնը: Իրենց վաճառականական գործառնութիւններուն մէջ նոյնիսկ անոնք կ'ունենային առանձնաշնորհեալ դիրք եւ նուազ տուրք կը վճատէին, քան միւս վաճառականները: Քիրէլեան նոյն բարը, աւելի վար, պիտի գրէ նաեւ «պեռաթ» եւ «պեռաթնի» ձեւերով:

⁷ Նկատի ունի Հալէպի հայ կաթողիկ համայնքի մեծաւոր՝ Գրիգոր Խոտայ վարդապետը: Ան անդամակցած է Անտոնեան միաբանութեան եւ կուսակրօն քահանայ ձեռնադրուած 1798-ին: Աւելի ետք, 1828-ին, հայ կաթողիկներու դէմ շղթայագերծուած հալածանքներու շրջանին, սուլթանական հրովարտակով արտոնուած է Երուսալէմ: Մահացած է Հալէպ, 1836-ին (**Միւրաթեան-Միմասեան, Հալէպցիներու ապստամբութիւնը...**, էջ 135):

⁸ Բնիկ հալէպցի Տէր Նասրալլա Ալուայ, որ 1809-ին իր եղբօր՝ Տէր Շոմրալլայի հետ ընդօրինակած է *کتاب مختصر الشريعة* խորագիրով արաբերէն ձեռագիր մը (**Paul Sbath, Bibliothèque de Manuscrits Paul Sbath, Բ.**, Գահիրէ, 1928, էջ 26): Ալուայ գերդաստանը կը սեռի ծագումով պարսկահայ հալէպցի Արոսիներու գերդաստանէն:

⁹ Նկատի ունի Մեծի Տանն Կիլիկիոյ Կիրակոս Ա. կաթողիկոս Աջապահեանը, Մեծն անուանեալ (1797-1822): Շինարար կաթողիկոս, որ նորոգած է մայրավանքի Սբ. Սոփիա եկեղեցին, պարսպապատած է վանքը, կառուցած է նոր եկեղեցի, եւ այլն: Թունաւորումով սպաննուած է Գօզան Օղլիներէն: Իր մասին մանրամասն տես **Քարգէն Ա. Աթոռ. կաթողիկոս, Պատմութիւն կաթողիկոսաց...**, էջ 541-592:

¹⁰ *Թուֆենեֆ* կամ *թիւֆենեֆ*. Թրքերէն՝ հրացան, նի՛ թրքերէնի մէջ արհեստ ցոյց տուող մասնիկ, պաշի՛ մեծաւոր, գլխաւոր, հետեւաբար թիւֆենեֆի պաշի՛ հրացանակիր զինուորներու մեծաւոր: Թիւֆենեֆները օսմանեան բանակի առանձին զօրաբաժիններէն էին: Յիշեալ թուականին Հալէպի թիւֆենեֆի պաշին կը կոչուէր Սարը Չիշմէ:

եղև ժողով ազգի, եւ գլուխ նորա Հաննայ Չելեպի Պալիթ, եւ եղև կարգադրութիւն հիսապի¹² եւ տուժից, ոչ հաւանեցան այնմ կարգադրութեան, եւ ոմանք պաշտպանեալ եղեն առ մեծամեծս ֆաղափի:

Մուհասելն¹³ ստիպեաց առնուլ գիր դրամն, եւ ի սարայն¹⁴ կալան զհերետիկոս ֆահանայս վասն մնացեալ դրամոց, եւ մեր մեծաւոր գնաց ի տուն մուհասելին՝ ժողովել յազգէ եւ կալեալ եղև միումն ի պաշտպանելոյն, իսկ պաշտպանող նորա զայրացաւ եւ խօսեցաւ ընդ մուսալիմին¹⁵ առնուլ ի հայոց զվեց հազար դահեկան, զոր շնորհեալ էր հայոց ճէլալուպին փաշայ¹⁶ ի տուգանաց անցելոց՝ յերթալ ի Բերիոյ:

Լոր եղև, թէ փախեաւ մեծաւորն ի Բերիոյ, եւ կալեալ եղին ոմանք եւ եղան ի շղթայս, սկսան ժողովել զտուգանս եւ թողին ֆահանայից ժողովել զերկու հազար երկու հարիւր յապատամբելոց անտի, եւ գնացին ամենայն ֆահանայք ի միասին ի տունս նոցա՝ աղաչելով եւ թախանձելով ժողովեցին զրեթէ 2100 դռուշ:

Կնֆեցին ոմանք յազգէ ի թեմեսուկ¹⁷ 4000, եւ կնֆեցաւ տուն նոցա, զի ո՛չ վնարեցաւ վաղվաղակի:

¹¹ Տեֆթար կամ տեֆթէր, արաբերէն՝ տետրակ, տումար: Հոս նկատի ունի ֆրիստոնեայ (եւ հրեայ) համայնքներուն կողմէ պետութեան վճարուելիք ոչ իսլամներու յատուկ «խարան»ի տուրքի հաւաքման համար պատրաստուած յատուկ տումարը: Պետութեան առջև համայնքը միասնաբար պատասխանատու կ'ըլլար իր անդամներու վնարելիք տուրքին: Անոր մեծաւորները իրենց համայնքակիցները կը բաժնէին երեք խումբի, ըստ անոնց նիւթական կարողութեան ու գանձումները կ'ընէին համաձայն այդ դասակարգումին: Այսպիսի բաժանումն ու տուրքերու գանձման եղանակը յաճախ վէճերու առիթ կու տար համայնքի զաւակներուն մէջ:

¹² Արաբերէն՝ հաշի:

¹³ Արաբերէն՝ հարկահաւաք, հաւաքիչ:

¹⁴ Արաբերէն՝ պալատ, ապարանք, մեծ տուն, նաեւ՝ կառավարչատուն:

¹⁵ Կամ մուղասալլէմ. պետական այն պաշտօնեան, որ կը ստանձնէր նահանգի մը իշխանութիւնը, մինչեւ նորանշանակ նահանգապետին ժամանումը: Ան ֆաղափ կը դրկուէր կամ նորանշանակ նահանգապետին կողմէ, կամ՝ նոյն ֆաղափի մեծամեծներէն մէկը կ'ըլլար ու կը նշանակուէր նահանգապետէն եւ կամ՝ կը նշանակուէր ուղղակի սուլթանական պալատէն: Նոր նահանգապետի ժամանումէն ետք մուղասալլէմը կը վարէր փոխ նահանգապետի պաշտօն ու կը փոխարինէր զայն, երբ ան բացակայէր ֆաղափէն:

¹⁶ Ճապպար Զատէ Մուհամմէտ ճէլալուտտին փաշա, բնիկ պոզաուֆցի: Եղած է նահանգապետ՝ Սերաստիոյ, Տիարպէֆիւրի, Կարնոյ, Ատանայի, եւ այլնի, իսկ 1812-1813՝ Հալեպի: Այս միջոցին ան սպաննած է ենիչէիներու 18 մեծաւորներ, որոնք պատուհասած էին ֆաղափը: Եղած է բռնատէր ու շարագործ, այն աստիճան որ բազմաթիւ հալէպցիներ իրմէ փախչելով լիւթ են ֆաղափը ու ապաստանած այլուր: Իր Հալեպ հասնելէն առաջ, տեղոյն ենիչէիները լսելով իր ժամանման մասին, որպէս նախազգուշական ֆայլ, իրենց հարստութիւնը պահ դրած են տեղոյն եւրոպացի վաճառականներուն մօտ: Մահացած է 1846-ին (Միւրաբեան-Մինասեան, Հալէպցիներու ապստամբութիւնը..., էջ 113):

¹⁷ Արաբերէն՝ մուհակ:

Պահեցան ֆահանայֆ յերկիւղէ ֆանի ինչ ատուս ի տունս աշխարհակա-
նաց:

ժողովեցաւ դրամն մեծաւ տուգանօֆ, եւ ոմանֆ եղեն հերետիկոսֆ:

|22բ| Գործակալութիւնֆ իմ 1817

Գաղարեցուցաֆ զդպրատուն ներսի ֆաղաֆի՝ ըստ հրամանի մեծատ-
րին. 1817, յուն/ար 1:

Սկսայ թարգմանել զկոնդակն վասն Եղբայրութեան Մտին Յիսուսի.
1817, յուն/ար 2:

Սկսայ ուսուցանել զարապերէն պատրի Լուիսին. յուն/արի 8:

Ետու զթուղթ հիսապին պսակին տղին Անտոն Սայեղին եւ սկսայ ըն-
թեռնուլ զսարֆն¹⁸. [1817, Յուն/արի] 22:

Ետու Տէր Մանէլի¹⁹ 24 պատարագ 35.5 [ղոռչի] փոխանակ գրոց, զոր
էաւ յինէն. յուն/ար 25:

Գնեցի զիրս ֆոանսիզ 60 ղոռչ:

Թարգմանեցի Տօնաթօյի զթուղթ յիտալերէ[ն] յարաբացոց:

Ասացի տօնել զաւետիսն ի շորեֆշաբթի յարութեան, յետոյ դարձեալ
ասել շառնել, զի միայն ասորիֆ այնպէս արարին:

Եկն ոմն՝ առնուլ յԱնթապ զհալածելն վասն ուղղափառութեան զԳաբ-
րիէլ, եւ շրողի երթալ, ինդրելով յեկողէն հոնեթ²⁰, եւ ուխտ թէ յԱնթապ յայսմ
հետէ ո՛չ լինիցի կոխ ընդ ուղղափառաց, եւ ով ոֆ բանայ զայն վէն, պար-
տական լինիցի ուխտին²¹:

Գրեցի կանոն վասն ֆահանայից եւ վասն ազգի ի սկզբան մեծատու-
թեան Տեառն Գրիգորի:

Գրեցի կանոն Կուսանաց Եղբայրութեան մերոյ ազգի:

Որոշեցի զթիւ ուղղափառաց եւ հերետիկոսաց. ուղղափառֆ եղեն 714
եւ հերետիկոսֆ 1134:

¹⁸ Արաբերէն՝ ֆերականութիւն:

¹⁹ Նկատի ունի Հալէպի հայ կաթողիկ համայնքի ֆահանսաներէն Տէր Մանուէլ Զատիֆեանը, որ աւելի ետֆ կոչուած է Տէր Գրիգոր: Քահանայ ձեռնադրուած է 1814-ին ու վախճանած՝ 1831-ին: Հալէպի մէջ իր սեփական երկոմուկէս բնակարանները կտակած է Զմմառու Վան-
ֆին: Մտերիմներէն էր Քիւրէլեանի, որ յանախ յիշած է զայն իր ձեռատետրին մէջ, մանա-
ւանդ որ անոնֆ վանատականական գործառնութիւններ ալ ունեցած են իրարու հետ (Մի-
րաբեան-Մինասեան, Հալէպցիներու ապստամբութիւնը..., էջ 135):

²⁰ Արաբերէն՝ փաստ, ստացական, հոս՝ խոստումնագիր: Աւելի վար պիտի գործածուի
մուրհակ, պաշտօնական փաստաթուղթ իմաստով:

²¹ Քիւրէլեան 1817-ին նոյն Գաբրիէլին գրած է նամակ մը ու այդ առիթով ձգած է այսպիսի
յիշատակութիւն. «Թուղթ Գաբրիէլի յԱնթապ միսիթարել վասն փորձանաց, զոր կրեաց ի
հերետիկոսաց» (ձեռատետրը, թերթ 94բ):

|20բ| Դիպուածք 1817

Դորդեցոյցին հանդիսիւ եղանակել յովի ճամբին²² յայսմ ատուր ի մինարէն, զի յիրաբանչիւր օր ծախսի առ այն 36 դրուշ:

Առաքեաց ոմն տանիկ ի Կոստանդնուպօլսոյ՝ շինել զպօղոտայս Բերիոյ իւր ծախսով ի տանէ Ֆալահին, եւ առաքեաց 500 ֆակ²³, եւ յանձնեալ ամեն փալիոզ²⁴ Անգղիոյ գլեկար պողոտայ նորոզ շինեաց, զի գրթեաց երիվար նոցա ի ճանապարհի:

Տէր Միխայէլ²⁵ որդի մեծի Տէր Միխայէլի արաբկերցոյ, սկսաւ առնել զֆրիստոննէական վարդապետութիւն ըստ հերետիկոսաց սկզբանց հայերէն եւ արաբերէն:

Եկին ոմանք ի Կոստանդնուպօլսոյ օրթայֆ²⁶ ենկչերիֆ²⁷ պաշտպանել ֆաղաֆն ի կողմանէ թագաւորին, եւ ունի իշխանութիւն ապաստան լինելոյ այլոց:

Եղեւ պատուէր ի դֆսէ, զի ի կիրակես եւ ի շաբաթու եւեթ ելցեն կանայֆ միայն ի պարտէզս, իսկ արք յերկուշաբաթի:

Մեծաւորն Տէր Նիկողայոս Նահասեան նեղացեալ յոյժ յանկարգութենէ ազգին, երդուաւ ոչ ես լինել մեծաւոր, իջեալ ի մեծաւորութենէ առաջի վկայից:

Վիրաւորեցին կանայֆ զմիմիանս ի պարտէզի կոռով, եւ եղեւ հրաման չելանել յայնմ հետէ կանանց ի պարտէզ:

Գնաց եպիսկոպոսն յունաց հերձուածօղ ի Կոստանդնուպօլիս՝ կոչեցեալ ի պատրիարզէն:

Եղեւ հրաման ի դատաւորէ ամենայնի, որ զգեցեալ է զկապուկ, հանել, եւ ամենայն ֆահանայֆ Բերիոյ հանին, բաց ի մառոնեաց, որոց պաշտպանեաց կոնսոյն ֆոանսիզոյ:

Եկն Սիմոն եպիսկոպոս²⁸, յողջոյն գնացին ֆահանայֆ ուղղափառաց, եւ կշտամբեաց զնոսա, եւ ասէ բերեալ կոնդակ ի Կոստանդնուպօլիս:

²² Թրքերէն ուլու՝ մեծ, ճամբ՝ մզկիթ:

²³ Քոստիլը դրամական միաւոր մըն էր, որուն արժէքը կը փոխուէր ըստ վայրի ու ժամանակի: Հալէպի մէջ ան կ'արժէր 500 դրուշ:

²⁴ Հիպատոս:

²⁵ Տէ՛ս Արտաազդ արք. Սիւրմէան, Պատմութիւն Հալէպի հայոց (Քննական) 1355-1908, Գ., Փարիզ, տպարան Արաբ, 1950, էջ 765 (1822), 770 (1838) եւ այլն, ուր յիշած է նոյն ժամանակաշրջանէն Տէր Միխայէլ անունով ֆահանայ (ֆահանանէ՛ր) մը:

²⁶ Օրթա կամ օրթու, օրտու՝ պարսկերէնէ փոխառեալ թրքերէն, որ սկզբնապէս նշանակած է զօրանոց, ապա ստացած է զօրագունդ իմաստը, ինչպէս հոս: Հալէպի արաբերէն բարբառին մէջ այժմ կը գործածուի շարագործներու խումբի իմաստով:

²⁷ Սկստի ունի ենիչերիներու գունդը: Աւելի վար նոյն բառը պիտի գործածէ «ենկիչերիֆ» եւ «ենկնարիս» ձեւերով:

Դարձա՛մ ի դատուխս²⁹ միջնորդութեամբ խավանայ³⁰ Նահում Հասունի³¹:

Եկեն թուղթ՛ ի պատրիարգէն Ստյ՝ սպառնալեաց եւ անձկութեան ազատութեան ուղղափառ ֆահանայից, եւ մեր ֆահանայֆ գրեցին թուղթս խոնայ Նասրի Տելլալին ի Կոստանդնուպօլիս. 1818:

Մեռաւ խոնայ Պետի Անէմի, եւ երդմամբ սպառնացաւ ախորել զՏէր Քերովբէ³², եւ եղեւ մահն նորա յետ երից ատուց, եւ ունէր պարտս առ ֆահաւալեսա 1200 ֆակ, եւ ջնջեցաւ ամենայն, եւ այս այր ահագին թջնամի էր ուղղափառաց եւ պաշտպան հերետիկոսաց. Օգոստոս:

Եկն թուղթ ի Կոստանդնուպօլսոյ պատրիարգէն, զի հաւասար տումար արացեան հերետիկոսք եւ ուղղափառք, զի հերետիկոսք տային միայն զշրորդ մասն տուգանաց եւ ասէին. որ ոք կամի շտալ ինչ, զնասցէ աղօթել յեկեղեցիս նոցա:

Եկն խաթ շերիֆ³³ յունաց՝ շմնալ ոք, որ ո՛չ աղօթէ ընդ իւր եպիսկոպոսի, եւ որ տուն պատարագ եղիցի, կործանեսցի հիմնովին ամենեւին:

Եկն ֆերման՝ ունել եւ սպանանել զպատրիարգ Ստյ՝ իբրեւ ապստամբութիւն առնէ ընդ Քօզան Օղլիին³⁴. 1819, յուն/ար:

Յարեան ֆաղաֆացիք ընդդէմ փաշայի, եւ մնաց մուհեսէրէ³⁵ 100 օր:

²⁸ Բնիկ բալուեցի, առաջնորդ Հալէպի՝ 1794-1818: Վարդապետական գաւազան ստացած է հաւանաբար 1773-ին: Ունի անտիպ տաղ մը՝ «Քան առ Որդին միածին, յօրինեալ ի Սիմէոն վարդապետէ Բալվըցոյ» խորագիրով, իսկ իր աշակերտը՝ Յովհան Դպիր Եղեսացին ունի իրեն ձօնուած կրկին անտիպ այլ տաղ մը՝ «Գովասանական ոտանատր առ հոգեւոր ծնօղն իմ սրբասուն Սիմէոն Արեւիկոսկոպոսն» (Մեսրոպ Վրդ. Քէլիշեան, *Յուցակ հայերէն ձեռագրաց Ձմմառի վանքի մատենադարանին*, Վիեննա, Մխիթարեան տպարան, 1964, ձեռ. 157, թերթ 137ա-138բ եւ 107բ-109ա):

²⁹ Հաւանաբար ըսել կ'ուզէ «հատուշս» բազում տուներ, բնակարաններ:

³⁰ Պարսերէնէ փոխառեալ արաբերէն պատուանուն՝ մեծաւոր, իմաստուն, վաճառական, տանտուէր իմաստներով: Գործածուած է իսլամական աշխարհի ոչ իսլամ (քրիստոնէայ եւ հրեայ) տղամարդոց համար:

³¹ Հալէպի հայ կաթողիկ համայնքի ծանօթ դէմքերէն: Հայրն է արաբագիր հայ մեծանուն բանաստեղծ, խմբագիր եւ ֆաղաֆական գործիչ Ռըզալլահ Հասունի (Հալէպ, 1825 - Լոնտոն, 1880):

³² Նոյնինքն այս ժամանակագրութեան հեղինակը՝ Աբրահամ Արք. Քիւրէլեան, որուն ասագանի անունը եղած է Աբրահամ, 1809-ին կոստանդնուպոս ֆահանայ ձեռնադրուելով ստացած է Քերովբէ անունը, իսկ 1823-ին եպիսկոպոս ձեռնադրուելով՝ վերադարձած է ասագանի անունին:

³³ Կայսերական հրովարտակ:

³⁴ Քօզան Օղլի կամ Քօզանեան, Դօզանեան՝ Կիլիկիա տեղակայուած ըմբոստ եւ շարագործ ձորապետներ: Կիլիկիոյ Եփրեմ Ա. Աշապահեան կաթողիկոս զիրենք կոչած է «մարդադէմ գազաններ», որոնք պատուհաս եղած են Կիլիկիոյ Սբ. Աթոռին (Քարգէն Ա. Աթոռակից կաթողիկոս, *Պատմութիւն կաթողիկոսաց...*, էջ 505):

³⁵ *Մուհեսէրէ* կամ *մուհասարա*, արաբերէն՝ պաշարում: Ակնարկութիւնը կ'երթայ Օսմանեան կառավարութեան դէմ հալէպցիներու հարիւրմէկօրեայ ժողովրդական ապստամբութեան (11/23 Հոկտեմբեր 1819 – 19/31 Յունուար 1820), խորշիտ փաշայի նահանգապետութեան

Յարեան անթափացիք ընդդէմ փաշայի, եւ եղեւ անագին պատերազմ մինչեւ ի վեց ամիս, եւ յետոյ թագաւորն գրեաց փաշային՝ չուել յԱնթապայ, եթէ ո՛չ հասցէ զգլուխ նորա, յետ ուրն ամսաց պատերազմի եղեւ հաշտութիւն:

Ի Հիւմա³⁶ եղեւ պատերազմ ընդ արաբացոց, եւ անկան ի ֆաղաֆացոց 6000:

[26ա] Գիպուածք 1817

Արաբացիք հարին զմասն ինչ ի կարաւանէ Բաբելովնի եւ առին զոյս զին նոցա աւելի քան 200000 դահեկան, Փետր/չարի 20:

Եկն ֆերման, թէ թերհիւման³⁷ ֆոանկաց մի՛ կարող լինիցեն ունել զաւիրս ստացուած, եւ որդիք ֆոանկաց, որ ծնանին յարեւելեան մօտէն, տայցեն խարն³⁸:

Գրեցին եւ թուեցին զամենայն արու ֆրիստոնեայ ի տասնամենի, եւ ի վեր, եւ էր թիւ ազգաց.

հայոց 2101, յունաց, ասորոց, մատոնեաց ³⁹:

Եկն ոմն եպիսկոպոս հայոց, երբ ֆերման՝ առնուլ զմասն եկեղեցոյն մատոնեաց՝ պատճառանօք, թէ վարձս ունին իւղ առնուլ ի մատոնեաց ամի ամի, եւ փաշայն շընկալաւ զդատն հայոց, զի ի նմին ամի զնոյն դատ արարին հայք, եւ ծախ[ս]եցին մատոնիք 100 ֆակ, եւ առաֆեցին հայք բերել զպատրիարզն Ստոյ, որ թափառական շրջի ի ֆաղաֆս յերեսաց Քօզան Օղլինի, զոր թագաւորն կամի սպանանել:

Եղեւ դատաստան հայոց հերետիկոսաց եւ մատոնեաց՝ առնուլ զմասն եկեղեցոյն մատոնեաց, եւ փաշայն եղեւ ի կողմն մատոնեաց եւ բարկացաւ հայոց եւ սպառնացաւ նոցա, եւ անարգեցան⁴⁰:

շրջանին, որ պաշարած էր ֆաղաֆը ու անխնայ ուրբակոծելով ննչած էր շարժումը, որուն ընթացքին ֆաղաֆացիք տուած են 3-4 հազար նահատակ, իսկ բանակէն ինկած է մօտաւորապէս 1500 զինուոր: Փաշան ֆաղաֆին վրայ արձակած է 25-31 հազար ռումբ:

³⁶ Նկատի ունի Սուրիոյ պատմական Համա ֆաղաֆը, որ կը գտնուի Հալէպէն հարաւ արեւմուտք:

³⁷ Արաբերէն՝ թարգմանիչ: Նկատի ունի հիւպատոսարաններու թարգմանիչները, որոնք ընդհանրապէս ֆրիստոնեաներ կամ հրեաներ կ'ըլլային եւ իրենց պաշտօնին շնորհիւ կը ստանային որոշ առանձնաշնորհումներ, ինչպէս օրինակ՝ զերծ կը կացուցուէին տուրք վճարելէ եւ կ'ունենային դիւանագիտական անձեռնմխելիութիւն: 1793-ին Հալէպի թարգմաններուն թիւը գնահատուած է 1500-ով: Քննութենէ մը ետք պարզուած է, որ անոնցմէ վեցը միայն իսկական թարգմաններ էին, իսկ մնացեալները այդ կոչումը ստացած էին կաշտոնով: Աւելի ետք, այս վերջիններէն գանձուած է երկար տարիներու իրենց հետնեալ պարտքերը՝ տասը հազար օսմ. ոսկի, որմէ խուսափած էին իրենց առանձնաշնորհեալ դիրքին շնորհիւ (الأب فردينان توتل اليسوعي, وثائق تاريخية عن حلب), Գ., Պէյրութ, 1950, էջ 22):

³⁸ Կամ *խարան*՝ ֆրիստոնեաներէն ու հրեաներէն գանձուող տարեկան գլխահարկ:

³⁹ Թիւերուն տեղերը պարսպ ձգուած են:

|21ա| Յամին 1818

Եղեն Բոնապարտ⁴¹ ամենայն ազգաց՝ Գ. [3] յունաց, Բ. Բ. [երկու երկու] այլոց, մեր ազգի Ֆաթիմալայ Քապլան եւ Յովսէփ Պետրոսեան⁴², խոնայ Յովսէփ Պալիթ կարծէր՝ լաւ եւս լինէր, թէ ոմն հերետիկոս կայցէ:

|24ա| Լուրբ եկեալ այլուստ

Այր ոմն ի մեծամեծաց տանկաց, կարով ի Կոստանդնուպօլիս լուաւ, թէ դոմն Բերիոյ պարտս թողեալ ի վերայ դատաւորին Բերիոյ 2000 ֆաակ, եւ այրն ասէր վեզիրին. «Այս դրամք լաւ եւս լինի, թէ յարժունիս երթիցեն, զի այն ժեղալէտտին դոմն անիրաւեալ է ի Բերիա յոյժ»: Եւ վեզիրն ասէ. «Գրեա՛ թուղթ՝ յայսմ իրի առաջարկել ի թագաւորին»: Եւ յորժամ թագաւորն ընթերցաւ զթուղթն, գրեաց ստորեւ. «Որ զայս թուղթ գրեաց, երթիցէ յաֆստրս»: Եւ եղև այնպէս:

Կամէին առաքել զոմն յաֆստրս ի մեծամեծաց, եւ ո՛չ ոք կարելով պաղատել վասն նորա, կանայք աֆստրելի առնն ազատեցին զտիկիսն սիրելի՝ թագաւորին աղաչել. եւ իբրեւ զայն արար, ել լուրեայն թագաւորն ի սենեկէ անտի՝ հրաման աֆստրել զտիկիսն եւ գլխատել զայրն:

Եղև լուր, թէ փաշայն ունիցի զբացարձակ իշխանութիւն առնելոյ զոր ինչ եւ կամիցի՝ առանց հրամանաց:

Եղև լուր, թէ հան սեֆեր⁴³ ֆոսակաց եւ մոսկոֆոս ընդդէմ տանկաց:

Եկն լուր, թէ մոսկոֆն եկն յԱֆէն⁴⁴ եւ էսո զայն, եւ Սուլեյման փաշայն փախեալ յերուսաղէմ:

Եղև լուր, թէ երկու ֆահանայք՝ Տէր Կարապետ եւ Տէր Տյիմոթէուս աֆստրեալ եղեն ի հերետիկոսաց Տիգրանակերտի, բազում անարգանօք:

⁴⁰ Ակնարկութիւնը կ'երթայ Հալէպի հայ առաքելական համայնքի եւ տեղոյն մատոնիներու միջեւ ծագած վեճին, երբ հայ առաքելական համայնքին կողմէ դիմում եղած է սուլթանական պալատ՝ որ մատոնիներ տարիներէ ի վեր չեն վճարած հայոց սեփականութիւնը եղող մատոնիներու Սք. Եղիա եկեղեցոյ շէնքի վարձքը՝ տարեկան մէկ կենդիմար ձէք: Հալէպի մէջ տեսնուած դատը շահած են մատոնիները: Այս դատէն ետք, անոնք յաջողած են սեփականացնել նոյն եկեղեցոյ դրան վրայ գտնուող եւ մինչ այդ հայոց պատկանած խուցը եւս (**Սիրամէան**, *Պատմութիւն Հալէպի...*, էջ 759-761):

⁴¹ Քոնա կամ խոնա, թրքերէն՝ մեծ, պաշ թրքերէն՝ գլուխ, հետեւաբար *քոնապաշի*՝ մեծաւոր, ղեկավար, վայրի մը երեսելին: Քոնապաշիները ֆրիստոնեայ համայնքներու ներկայացուցիչներն էին կառավարութեան մօտ ու կը պաշտպանէին իրենց համայնքներու իրաւունքները, ձեռով մը դառնալով միջնորդներ՝ կառավարութեան ու համայնքի միջեւ:

⁴² Յանախ յիշատակուած է հեղինակի ձեռատետրին մէջ որպէս անոր մտերիմներէն մէկը: Անոնք վաճառականական գործառնութիւններ ալ ունեցած են իրարու հետ, ինչպէս՝ մետաքսի վաճառականութիւն, հիսուածեղէնի գործ, եւ այլն:

⁴³ Արաբերէն ծագումով թրքերէն՝ պատերազմ:

⁴⁴ Աֆֆա՝ պատմական ֆաղաք Միջերկրականի արեւելեան ափին, Պաղեստինի հիւսիսը:

եղև լուր, թէ Տէր Միքայէլ Մարին ասորի, որ գնայ ի Հոռվմ՝ դիտել զանձն՝ լատին իցէ թէ ասորի, ընկալաւ զպատիւ ի Սբ. Ժողովոյն, զի յանձնարարական թուղթս ունէր ընդ իւր աստի առ այլուստ, եւ այն առ Սբ. Ժողովն, եւ եղև նմա իշխանութիւն պատարագել լատին հանդերձիւք ի տուն Աննելոյի⁴⁵ եւ դնել զգնանապարհ խաչի ի տան Աննելոյի, եւ լինել ներողութեանց, որոյ գան ի քրիստոնէական վարդապետութեան, զոր ունի շինել յեկեղեցին ասորաց:

Լուր եղև, թէ ժողովեցան ամենայն հերձուածող եպիսկոպոսք յունաց՝ ի Կոստանդնուպոլիս ժողով առնել:

Լուր, թէ անհնարին հերձուած եղեալ է ի Կոստանդնուպոլիս՝ ի մէջ արքացոց եւ գոլէնցոց⁴⁶ վասն հաղորդակցութեան ընդ հերետիկոսաց, եւ իսկապէս զօրացեալ կան հերետիկոսք:

Լուր եղև, թէ ասորեալ եղեն ի Կոստանդնուպոլսոյ Յակոբ Թնկըր Օղլի⁴⁷ եւ Անտոն Տավուս Օղլի⁴⁸: 1818:

Լուր եղև՝ դարձան ասորեալքն 2000 ֆակով⁴⁹:

Լուր եղև, թէ թագաւորք քրիստոնէից ժողովեցան միաբան ի կառավարութիւն, զի հրամանաւ թագաւորին տանկաց յոյն վարեցին զֆոնանկս ի Յարութենէ⁵⁰ եւ հարին զնոսա եւ խորտակեցին զթագաւորական զարդն

⁴⁵ Աննելօ Տորիֆէլօ՝ Սպանիոյ Հալէպի հիպատոսը, որ նախապէս եղած է տեղւոյն Վերետիկի հիպատոսի վաճառականական գործառնութիւններու պատասխանատուն: Հալէպ հաստատուած է 1780ականներուն ու պարապած է վաճառականութեամբ: Մահացած է անդ, 1841-ին (**Միքայէլ-Մինասեան**, *Հալէպցիներու ապստամբութիւնը...*, էջ 167):

⁴⁶ «Աքքացի»ները Միսիթար Աքքահօր յաջորդներն են՝ միսիթարեանները, իսկ գոլէնցիք Հոռվի Ուրբանեան գոլէնի շրջանաւարտները:

⁴⁷ Ամիրա Յակոբ Թնկըր օղլու կամ Թընկըրեան (1755-1835) Կ. Պոլսոյ հայ կաթողիկ համայնքի մեծաւորներէն, բնիկ անկիւրիացի վաճառական եւ սեղանաւոր: 1818-ին սուլթանի հրահանգով ասորուած է Լիմնոս կղզի: 1827-1831-ին եւս ասորուած է: Ժամանակակից մը անոր 1818-ի ասորին մասին արձանագրած է հետեւեալը. «...յանկարձ ի 14 ամսոյս [Փետրուար 1818] կալան գրեցրեան Յակոբ աղայն եւ զՏավուտեան Անտոն աղայն... լսելի եղև եւ հաստատեցաւ, թէ հրովարտակն արհունի պարտաւորէ զնոսա առաջնորդ եւ զօրավիզ ազգային շփոթութեան, եւ ի 15 նորին ամսոյ՝ առաքեցին յաֆուրս, զմին ի Բատոս եւ զմիւս յԵրվանիս եւ ան եւ սարսափումն կալաւ զամենեւին...» (**Հ. Եփրեմ Վ. Պօղոսեան**, *Գույումճեան եւ Թընկըրեան գերդաստանները*, Վիեննա, Միսիթարեան տպարան, 1951, էջ 55-56: Նոյն գիրքին մէջ, էջ 44-56, կայ Թընկըրեանի եւ Անտոն Տավուտեանի զոյգ ասորներուն մանրամասն նկարագրութիւնը):

⁴⁸ Անտոն Տավուս Օղլի կամ Տավուտեան՝ Կ. Պոլսոյ հայ կաթողիկ համայնքի մեծաւորներէն, բնիկ անկիւրիացի սեղանաւոր, որ կ'ապրէր Կ. Պոլիս: Եղած է պետութեան եպարհոսին զլխաւոր դրամատէրը: 1818-ին սուլթանի հրամանով ասորուած է Ռոտոս կղզի:

⁴⁹ Ասորեալները Կ. Պոլիս վերադարձած են Հոկտեմբեր 1818-ին (**Պօղոսեան**, *Գույումճեան եւ Թընկըրեան...*, էջ 56):

⁵⁰ Նկատի ունի Երուսաղէմի Սբ. Յարութեան Տաճարը, որ մեծամասնութեամբ կը պատկանէր հայ, յոյն եւ լատին եկեղեցիներուն:

եկեղեցոյ նոցա, եւ թագաւորք ֆոանկաց խնդրեցին ի տանկաց թագաւորէն՝ թոյլ առնել ֆրիստոնէից ունել զոր կրօն որ կամիցեն ազատօրէն:

Լուր եղեւ, թէ ել միտի⁵¹ վասն ֆթախտտի 32000 դահեկանս վասն շրշակայ տեղեացս:

Լուր եղեւ, թէ պատրիարզն յունաց ետ թագաւորին 18 հազար ֆսակ եւ հինգ հարիւր ֆսակ եւ էառ զգերեզմանն Քրիստոսի ի ձեռաց ֆոանկաց:

ժողով եղեւ ֆրիստոնէայ թագաւորաց, եւ միաբանեցան վասն բազում իրաց, ընդ որս մի՛ ոք ստիպեալ եղիցի յուրանալ կամ պահել զկրօն ինչ, այլ իւրաքանչիւր թողցի յիւր ազատութեան:

Սպանեալ եղեւ երեւելին ընդ ամենայն աշխարհի Գրիգոր աղա Տիւզ Օղլի⁵² եւ եղբայր նորա եւ այլք երկու⁵³, վասն զի պարտական գտան տարապ խանայի⁵⁴ 36 հազար ֆսակ, եւ գտան ի տան նոցա անօթք պատարագի 1000 ֆսակով եւ տեղի պատարագելոյ, եւ եղեւ հալածումն ուղղափառաց սաստիկ ի Կոստանդնուպօլիս, ւստրեալ եղեւ: Եկան եւ հինգ ֆահանայք ուղղափառաց ի ժամանակի Պօղոս Պատրիարգի. 1829:

Եկն լուր, թէ ոմանք յաբբացոց վիճաբանեցան ընդ հերետիկոսաց եւ յաղթեցին նոցա, եւ մեծամեծք հերետիկոսաց բաժանեցան ի վերայ միմիանց, յետ այսորիկ երեք հարիւր անձինք գրեցին զիւրեանց անուանս եւ զհանգամանս եւ զտեղիս եւ զարուեստս, եւ ի նոցանէ ֆանի մի անձին գնացին առ պատրիարզն եւ ասին. «Ահաւասիկ մեք պատրաստ եմք մեռանիլ կամ ւստրիլ կամ յաւար հարկանիլ: Ինչ կամիս առնել, արա՛ վաղվաղակի, մեք մեզեան այսչափ անձինք եկաք առ քեզ: Արա՛ զինչ կամիս, մեք ուղղափառ եմք»: Եւ ուր ուրեմն գնացին մեղմացուցանելով զնոսա, եւ լուր եղեւ, թէ ուղղափառք Կոստանդնուպօլսոյ կամին առնել զինքեանս ազգ առանձինն եւ պատրիարգարան առանձինն՝ խաթ շերիֆով:

Եկն լուր յամին 1820՝ կալան զԳրիգոր Չելչայի Տիւզ Օղլի վեբիլ տէրապխանայի՝ հոչակեալն ընդ ամենայն աշխարհի, ասար հարին գտուն նորա, յորում գանձ բազմազան, եւ սպանին զրպարտանօք անհաւատարմութեան:

⁵¹ Արաբերէն՝ արֆունի ստացուածք, արֆունիքէն գրաւուած:

⁵² Գրիգոր աղա Տիւզ Օղլու կամ Գրիգոր Չելչայի Տիւզեան (1774-1819): 1812-ին յաջորդած է հօրը՝ որպէս սուլթանական փողերանոցի պետ:

⁵³ Գրիգոր Տիւզեանի հետ ձերբակալուած եւ 4 Հոկտեմբեր 1819-ին գլխատուած է անոր եղբայրը՝ Սարգիս Չելչայի Տիւզը (1777-1819), իսկ երկրորդ եղբայրը՝ Միխայել Չելչայի Տիւզն (1786-1819) ու եղբօրորդին՝ Մկրտիչ Չելչայի Տիւզը կախաղան բարձրացուած են: Անոնց կողմին, նոյն ընտանիքէն ձերբակալուած են նաեւ բազմաթիւ ուրիշներ. ընդամենը մօտ 40 հոգի: Հոս տրուած տեղեկութիւնները կը հաստատուին այլ աղբիւրներու վկայութիւններով եւս, ինչպէս օրինակ՝ Վահան Գ. Զարդարեանի *Յիշատակարան*-ով (Բ. հատոր, Կ. Պոլիս, տպագրութիւն Օսմ. գործակցական ընկերութեան, 1911, էջ 314-321):

⁵⁴ *Տարպ խանէ*՝ փողերանոց, դրամահատարան:

Եկն լուր յամի 1821, Մայիս 9՝ բերին գեղբարս Գրիգորի Տիւզ Օղլի եւ եղին ի տարախանէ, եւ սպանեալ եղեւ տէվլէթ թերեխման⁵⁵ յոյն եւ եղին ի տեղի նորա զոմն հայ ուղղափառ ի տանէ Սեղբոսեան:

[25ա] Պատմութիւն հալածանաց յունաց ի Բերիա. 1818⁵⁶

Ի գարնանամուտ այս տարույ, ի 14 օր Մարտի ամսոյն եկն ի Կոստանդնուպօլսոյ ձերասիմոս⁵⁷ եպիսկոպոս Բերիոյ եւ պատուիրեալ էր նմա պատրիարզն՝ Յերթալ ֆո ի Հալապ՝ մի՛ մտանել ի ֆաղաֆն եւ մի՛ ի դարպասն, այլ ի ճանապարհէ անտի անասերիւր երթիցես առ դոմսն Խորշուտ փաշայ⁵⁸ եւ տացես նմա զարժունի հրամանս, որ ընդ ֆեզ, եւ պատրիարզն առաքեալ էր ընդ նմա գերկու լրտեսս՝ տեսանել, թէ որպէս ունի վնարել գիրսն:

Եւ եպիսկոպոսն եկն եմուտ յիր դարպաս, եւ գնացին յամենայն ազգաց յողջոյն նոցա, ո՛չ ընկալան սովորական պատիւ ի նմանէ, եւ ո՛չ պարգևս ընկալաւ ի նոցանէ, եւ յերեկոյեան պահու ժողովեաց զմեծամեծս յունաց եւ հանեալ եցոյց նոցա խաթ շերիֆ, յորում սաստիկ արժունի հրամանն այս է. «Լուսֆ, թէ ի կողմանս Ծուրայ եւ Ծայթանու⁵⁹ եւ Դամասկոսի եւ Բերիոյ յայտնեցան ոմանֆ ապականիչֆ, որք ջանան դարձուցանել գոյնս ի ֆոնանկութիւն, այնպիսիֆ ախորեալ եղիցին. եւ այլն»: Եւ սկսաւ եպիսկոպոսն լալով ասել, թէ՛ «Քահանայֆ կաթոլիկ յունաց ամենեքին ախորեալ

⁵⁵ *Տէվլէթ թերեխման՝ պետութեան [գլխատր] թարգման: Ժամանակակից պատմիչը յիշեալ դէպքը նկարագրած է այսպէս՝ որպէս թուական յիշելով 1 Ապրիլ 1821. «Արժունի թարգման պէզառնէն եւ եօթն երեւելի անձինք ընդ նմին գլխատեցան» (Աւետիս Պերպլեւեան, Պատմութիւն հայոց, Կոստանդնուպօլիս, տպագրութիւն Պօղոս Քիրիշեան եւ Ընկ., 1871, էջ 463):*

⁵⁶ Քերպլեւեան ունի նոյն դէպքին նուիրում հայերէն բանաստեղծութիւն մը եւս՝ «Վասն հալածանաց որ եղեւ ի Բերիա յամին 1818» խորագրով (ձեռատետրը, թերթ 81ա):

⁵⁷ Նկատի ունի յոյն ուղղափառներուն ձերասիմոս Թուրքմանի եպիսկոպոսը, որ վերոյիշեալ դէպքերէն ետք, 6 Մարտ 1819-ին լրաց է Հալէպը ու մեկնած Երուսաղէմ, ապա անցած է Կ. Պոլիս, ուրկէ անելի ետք ախորում է Յունաստան:

⁵⁸ Խորշուտ կամ Խորշիտ Ահմէտ փաշա՝ ազգութեամբ վրացի: Ծնած է Թիֆլիս մօտաւորապէս 1758-ին: Եօթը տարեկանին առեւանգուելով՝ վաճառուած ու տարուած է Կ. Պոլիս, ու քանի մը «տէր»եր փոխելէ ետք, շնորհուած է իր ազատութիւնը: Վարած է պետական բազմաթիւ կարեւոր պաշտօններ. եղած է կուսակալ Եգիպտոսի, Մոռայի, Պոսնիայի, Սելանիկի, Ռումելիի եւ այլն. վարած է նաեւ օսմանեան կայսրութեան Մեծ վեզիրի (վարչապետ) պաշտօնը 1812-1815: Իր Հալէպի նահանգապետութեան օրերուն է, որ ծագած է 1819-1820 թուականներու ժողովրդական մեծ ապստամբութիւնը, զոր ննչած է բրտօրէն: 1821ի թուրք-յունական պատերազմին եղած է օսմանեան բանակի գլխատր հրամանատար եւ բնութեամբ վերջ տուած է պատերազմին: Կոտորած է հազարատար յոյներ: Ու անհա այս առիթով է որ Վիքթոր Հիլօ գրած է իր նշանատր տողերը՝ «...Ասկէ թուրքեր անցած են»: Ի՛նք է նաեւ որ ննչած է Ռումելիի եւ սերպերու ժողովրդական ապստամբութիւնները (Միրաբեան-Մինասեան, *Հալէպցիներու ապստամբութիւնը...*, էջ 57-58):

⁵⁹ Ներկայ անուանումով՝ Սուր եւ Սայտա՝ պատմական զոյգ ֆաղաֆներ կիբանանի հարար (Տիրոս եւ Սիդոն), Միջերկրականի արեւելեան ափին, Պէրսիոյն յաջորդաբար 90 եւ 40 ֆմ. հարաւ:

եղիցին, այլ վասն սիրոյ բարեկամութեան զեկուցի ձեզ, զի զանխոյ վախիցեն, մի՛ ո՛ք ի յունաց մտցի յեկեղեցիս մատոնեաց, ասորոց, հայոց, եւ մի՛ ո՛ք մտցին յեկեղեցիս ֆռանկաց, որ զխցեալ զգեցեալ գլխարկ եւրոպացոց, եւ մի՛ ո՛ք խոստովանեսցի առ այլ ազգս: Փաթեայք մի՛ ելցեն արտաքոյ քան զՊապ Իլ Նասր⁶⁰, եւ մի՛ ո՛ք յայլոց ազգաց քահանայից մտցէ ի տունս յունաց, ամենայն տուն յոր պատարագ եղիցի, ի հիմանց տապալեսցի, եւ տանուտէրն մահու մեռանիցի: Մեծաւորն յունաց հորի Պուրս հայաթ⁶¹, որովհետեւ պաշտպանեալ էր ի շէխ իսլամէն⁶², երթիցէ ի Կոստանդնուպօլիս»:

Այս ամենայն եղեւ, զի ի հիւանդութեան էր խոնայ Նասրի Տէլլալ ի Կոստանդնուպօլիս, յայնժամ Ապտալլա Տէլլալ անկաւ յոտս եպիսկոպոսին եւ սկսաւ պաղատիլ զիջուցանել զեպիսկոպոսն, եւ չեղեւ հնար, եւ եպիսկոպոսն հրամանաւ եւ սպառնալեօք յազդ արար մատոնեաց եւ ասորոց՝ շխոտովանել եւ շընդունել զո՛ք ի յունաց յիւրեանց եկեղեցին:

Դարձեալ ժողովեցան իշխանք յունաց, աղաչեցին զեպիսկոպոսն վասն քահանայից եւ ուր ուրեմն եպիսկոպոսն ասէ՝ «Համբերեմ մինչեւ ցոյքն օր, զի քահանայք փութասցեն ելանել ի Բերիոյ», այնպէս խոստացաւ: Եւ քահանայք յունաց թագեան, եւ մեր քահանայք յերկիրէ թագեան եւ ի բաց բարձին ի տանց իւրեանց զպատկերս եւ զխորանս եւ զամենայն վերաբերեալս սրբութեան: Եւ եպիսկոպոսն երբեք ի մուսալիմէն դուլլօֆ⁶³ նստիլ ի դարպասն, զի մի՛ ո՛ք ազատօրէն մտցէ եւ ելցէ: Եւ յերկրորդ ատուր ել առ վաշայն, եցոյց նմա զգիրն եւ էջ դաասօֆ⁶⁴ եւ արար ուրախութիւն թմբկօք եւ այլն: Փութացան քահանայք փախչել, եւ յերեկոյեան պահու եկն լուր եպիսկոպոսին ի դատաւորէն՝ մի՛ առնել ինչ առանց խնդրելոյ զխորհուրդ, եկն լուր ի դատաւորէն քահանայից՝ Մի՛ երթայք, մինչեւ հրաման տացի ձեզ, եկն լուր քահանայից ի դֆսէն՝ Մի՛ երթայք, մինչեւ ասացից ձեզ:

Յետ երկուց ատուրց եկն ի Կոստանդնուպօլսոյ ի Նասրի Տէլլալէն պատաղեցուցանել եւ յապաղեցուցանել զիրսն, մինչեւ ինքն գրեսցէ նոցա:

⁶⁰ Պապոյ Նասր՝ հին Հալէպի դռներէն, որ կառուցուած է անոր պարիսպին վրայ: Կոչուած է նաեւ Խըտրի՝ Սք. Գէորգի դուռ: Հալէպի եւրոպացիներն ու լատին կրօնատուները ընդհանրապէս բնակած են քաղաքի պարիսպներէն ներս, եւ հոս, երբ հեղինակը կ'ըսէ, թէ բարիները չպէտք է Պապոյ Նասրի դռնէն անդին անցնին, ապա ըսել կ'ուզէ, որ անոնք պէտք է մնան պարիսպէն ներս, չթափանցեն անկէ դուրս գտնուող քրիստոնէական թաղամասերը եւ զբաղին քաղաքով:

⁶¹ Վախճանած է Հալէպ, Փետրուար 1839-ին (الأب يوسف قوشاقجي (تحقيق) اخبار حلب كما كتبها /نعوم بخاش في نقاتر الجمعية, Հալէպ, 1985, էջ 93):

⁶² Իսլամներու հոգեւոր պետը, որուն նստավայրն էր Կ. Պոլիսը:

⁶³ Գուլլօֆ. քրէտէն՝ պահակ: Գործածուած է նաեւ պահականոց իմաստով:

⁶⁴ Գալվասս՝ բարապան. համբայ բանալու համար մեծաւորի առջեւէն քալող մարդ, որ կ'ունենար իրեն յատուկ պաշտօնական զարդարուն տարազը:

Եկն լուր ի պատրիարզէն առ եպիսկոպոսն. «Փութա՛ վաղվաղակի կատարել զհրամանս թագաւորին, եթէ ոչ՝ առաքեցէ նմա հատաբի մուպաշեր⁶⁵ խոնական»։ Եւ քանակայն սկսան շրջիլ ի տունս՝ հրաժարական ողջոյն տալով, կոչեաց դատաւորն զեպիսկոպոսն, ասէ. «Թուղթ թագաւորին մեզ խօսի եւ դիսի եւ մեզ եկեալ է, քեզ չէ փոյթ, եւ ո՛չ դու դատաւոր»։

Դարձեալ գրեալ են, թէ սինլիֆոր յունաց պատարեալ եղեն ի քանակայն յից, եւ այս ժողովուրդ ո՛չ է սինլիֆոր, այլ մեծապատիւ իշխանն. ամենայն քաղաքն կախեալ է զնոցանէ, ի վանառ յառս եւ ի տուրս, յարժունի ինչս, ի մահսս, ի կապալս, ի ներս եւ յարտաքս, որք ծանօթ են ամենայն մեծամեծաց եւ փոքունց՝ իշխանաց եւ քաղաքապետաց, ո՛չ ինչ նոր տեսեալ եղել ի նոցանէ ի սկզբանէ հետէ»։ Եւ ամենայն քաղաքապետք խոստացան կնկել զվկայութիւն, թէ ի ժամանակէ նախահարց մերոց գիտեմք զայսոսիկ հնագոյնս։ Ասէ. «Դարձեալ գրեալ է ի թղթի՝ քանակայն քաղաքեալ եղիցեն, ո՛վ են այն քանակայն. գուցէ դուք իցէք, զի ո՛չ տեսանեմք ի նոսա զիր ինչ, յորոց գրեալ են զնոցանէ»։

Քաղաքն խոռովեցաւ, եւ իշխանն յունաց զցայգ եւ զցերեկ |25բ| ժողովս առնէին, եւ միջնորդ կացուցին զՊետրոս աղայ Աբել Օղլի սարաֆպաշի անկիրացի⁶⁶ եւ զերեւելի հաբիմ պաշին⁶⁷ ի քրիստոնէից, եւ դատաւոր քանիցս անգամ կոչեաց զեպիսկոպոսն առ ինքն։ Եւ պատճառէր հիւանդ գոյ, զայլ ոք առաքէր, եւ շնչիւն եւ երկիտ է յամենեսին։ Եւ սկսան այլ ասել, թէ հայք եւս ունին առնել զայսպիսի ինչ, եւ զային լուրք միաբանութեան հայոց ընդ

⁶⁵ Հառաքի. արաբերէն՝ արագաշարժ, մուպաշեր՝ դատարանի բարապան, դատարանի կողմէ առաքուած պաշտօնեայ։

⁶⁶ Սարաֆ, արաբերէն՝ սեղանաւոր, լուսնայափոխ, պաշ. քրեւէն՝ գլուխ, մեծաւոր, սարաֆ-պաշի՝ սեղանաւորներու կամ լուսնայափոխներու մեծաւոր։ Յիշեալ հայագրի Պետրոս աղայ Աբել Օղլին (Աբելեան) այդ օրերու Հալեպի ամէնէն ազդեցիկ անձնատրութիւններէն էր, որուն միջնորդութեան դիմուած է կարեւոր հարցերու լուծում որոնելու ժամանակ։ 1819-ին, քաղաքի պաշարման եւ պատերազմական գործողութիւններու առեւ, քաղաքի իսլամ կրօնաւորներուն հետ ներկայացած է նահանգապետ հորշիտ փաշային՝ հաշտութեան խնդրանքով։ Քիւրդեանի հետ ունեցած է մտերիմ կապեր եւ յանախ նիսպապէս օգնած է անոր։

Հետաքրքրական է, որ ֆրանսացի ճանապարհորդ Լուիս Տամուազո իր ուղեգրութեան մէջ նկարագրած է Պետրոս աղայի թամբուած ձիով «հրէտ» (զնդախաղ) խաղալը. թէ ինչպէս անոր ձիւն բախած է այլ ձիու մը եւ երկու խաղացողներն ու անոնց ձիերը վիրաւորուած են, եւ թէ ինչպէս Տամուազոն ինք է որ բուժած է զանոնք։ Տամուազոն Պետրոս աղային գնած է նաեւ ազնուացեղ ձի մը, զոր կոչած է «սառաֆ» (**Միւրաքեան-Մինասեան**, *Հալեպցիներու ապստամբութիւնը...*, էջ 60)։

⁶⁷ Հաբիմ, արաբերէն՝ բժիշկ. պաշ, քրեւէն՝ գլուխ, մեծ, մեծաւոր, հաբիմ պաշի՝ բժիշկներու մեծաւոր։ Ապրիլ 1818-ին Հալեպի հաբիմպաշին էր լեհ մը՝ Ճիանանդօնիօ Դոսելլի, որ մտերիմն էր տեղոյն նահանգապետին։ Աւելի ետք, ան կորսնցնելով անոր բարեկամութիւնը, հազիւ փրկուած էր անոր սահմանած մահապատիժէն (الإكسرخوس أكايوس كوسا), *شهداء حلب*, Հարիսա (Լիբանան), 1933, էջ 64, 200)։

կաթոլիկաց ի Կոստանդնուպօլսոյ, եւ թէ պատրիարզ Սսոյ ունի քանի ինչ ատուց յետոյ գալ ի Բերիա՝ կատարել զմիաբանութիւն. եւ այլն, եւ այլն, եւ այլն, եւ այլն: Գնացին քահանայք յունաց՝ 14 քահանայ, եւ եղև սուգ մեծ, եւ գնացին թոյլտուութեամբ եպիսկոպոսին ի Լիբանան:

Եղև ժողով առ յոյնս, ստիպել եպիսկոպոսն մուծանել զամենայն յոյնս յեկեղեցին, զի այսպէս հրաման եղև ի բողոքիս, ապա թէ ո՛չ, սպառնայ սպանանել զբազումս ի յունաց: Եւ սկսան ի նորոյ ոմանք մտանել յեկեղեցին, եւ ստիպել եպիսկոպոսն զազգն կնիել թողթ, բերել զքահանայս ի մօտաբաղաք ինչ եւ վիճել ընդ նոսա, հանել կամ հանեցուցանել, զի մտցին յեկեղեցին եւ ամենայն ազգն ընդ նոսա: Եւ ո՛չ հանեցան ազգն կնիել զմուրհակն, յամին 1818 Նոյեմբեր 21 գնացին կոնստանդնուպօլսոյ առ փաշայն եւ խնդրեցին ի նմանէ հրաման՝ բերել զքահանայս ի լեռնէ⁶⁸:

Եւ 25 Նոյեմբերի առաքեցին յոյնք զոմն անուն ճրնի լեռնն՝ բերել զքահանայս ի լեռնէ անտի: Ետուն պիանք⁶⁹ քահանայք, թէ ո՛չ դառնան, մինչեւ կալեալ իցէ նոր խաթ շերիք ընդդէմ առաջնոյն, մինչեւ մէն մի իւրաքանչիւր ունիցէ ի ձեռս ֆերման արձակման, մինչ չե խոստացեալ եպիսկոպոսն գրով, թէ չմիանայ նոցա բան ընդ նիւթոց հաւատոյ եւ հաղորդակցութենէ: Յետ այսորիկ յոյնք հրաման առին ի դիւն 300 քակով մտանել յեկեղեցին յունաց, այլ աղօթել ուր եւ կամիցեն, եւ եղև օր հանդիսատր յեկեղեցին մատոնեաց, զի համանգամայն մտին աղօթել անդր, եւ եպիսկոպոսն ձերասիմոս ո՛չ տոկացեալ անարգանաց եւ երգիծական երգոց ոմն կանանց ի պողոտայս, հրաման էառ ի փաշայէն յերթալ յերուսաղէմ ու փախեալ ի Կոստանդնուպօլիս:

|21ա| 1819

Սկսան հերետիկոսք ջանալ տալ ուղղափառաց զԱստուածածնայ եկեղեցին, զի օգնական լինեցեն նոցա ընդդէմ մատոնեաց, եւ ի պաշտպանութիւն պատրիարզին Սսոյ:

|26ա| Գիպուածք 1819

Չափեցին զեկեղեցին մատոնեաց եւ հայոց, եւ Քառասուն Մանուկն երեւեցաւ 4, եւ յաւելին աւելի քան զհոնեթն, եւ փաշայն զայրացեալ գրեաց ի Կոստանդնուպօլիս՝ տալ մատոնեաց զվերնատուն մի եւ զնոյն կանգունս ի հայոց:

Ըմբռնեալ եղև պատրիարզն Սսոյ Կիրակոս ի Գերմանիկն՝ արժունի հրամանաւ, իբր զի միաբանեալ է ընդ Քօզան Օղլին եւ ապստամբեցուցեալ

⁶⁸ Նկատի ունի Լեռնալիբանանը, ուր մեկնած էին յոյն կաթոլիկ քահանաները:

⁶⁹ Աւրաբերէն *պիան* կամ *պայան*՝ յայտարարութիւն, պաշտօնական խօսք, խոստում:

զգէյթունցիս, եւ ջանայր Գրիգոր եպիսկոպոս եկեալ ի Կոստանդնուպօլսոյ՝ տալ ուղղափառաց զԱստուածածնի եկեղեցին:

Փախեան երկու եպիսկոպոս հայոց յերկիւղէ փաշային եւ մատոնեաց:

Գրէ թուղթ Կիրակոս պատրիարհ աղաշանաց՝ խնդրելով օգնութիւն եւ ողորմութիւն յուղղափառաց վասն ազատելոյ ի դառնակսկիծ մահուանէ:

Ուղղափառք արարին զտումար հասարակ ընդ հերետիկոսաց 1500 դրուշ, եւ բաժին հերետիկոսաց եղև 1016 դրուշ:

Հրաման եղև յունաց՝ աղօթել ուր եւ կամիցեն:

Կին մի հրեայ ծնաւ զերկուս ի միասին՝ կպեալս որովայն ընդ որովայն:

1819

Եկն կասեան⁷⁰ եպիսկոպոսն լատինաց Կանտոլֆի՝ բնակիլ ի Բերիա, եւ ընկալեալ եղև ի յուղղափառաց մեծաւ հանդիսի, գրեթէ երեք մասն քրիստոնէից ելին ընդ առաջ նորա՝ արք եւ կանայք բացագոյն ի քաղաքէ, եւ ծնաւ կին մի ի բազմութեան անդ՝ արտաքոյ քաղաքի, յանապատն:

Գնաց Պետրոս աղա սատաֆպաշի Աբել Օղլի յերուսաղէմ մեծ հանդիսի եւ դարձաւ եւ ել ի մեր վանօրայս ի Լիբանան՝ ի դառնալն:

Փաշայն կալաւ զմեծամեծս հրէից՝ պատնատանօք շինելոյ նոցա տունս ի վերայ պարսպին, ասէ՛ կամ տալ զտունս զայնոսիկ, կամ նոր պարսպ կանգնել առաջի նոցա, եւ էառ դրամ ի ծածուկ:

Երեւեցաւ յերկինս որոտնատր աստղ ի Յունիսի:

Եկն նոր մանսիպ⁷¹ փաշային՝ մնալ ի Բերիա, եւ կամեցաւ բերել զՍանուր ջուրն⁷² ի հեռատր գրեթէ 12 ժամ հանապարհ, եւ ինքն գնաց տեսանել զգործն զօրօք եւ կահիւք:

Արար կասեան ժողովս վասն իրաց մատոնեաց, եւ էր Տէր Գրիգոր եւ Տէր Քերովրէ, եւ չեղև հնար:

Գնաց կասեան տրտում ի Բերիա, զի եղև նմա անպատուութիւն, եւ չեղև լսելի:

⁷⁰ Պապական նուիրակ լատին կրօնատր: Ակնարկութիւնը լազարիստ Լուիս Կանտոլֆի Պիամոնդիի մասին է, ազգութեամբ իտալացի, որ 1782-1797 գտնուած է Զմիւտնիա, ապա եղած է Լիբանանի Անթուրա վանքի մեծատր եւ իշխան Պաշիր երկրորդ Ալ Շահապիի մտերիմը: Եպիսկոպոս ձեռնադրուած է 1787-ին (الأب فردينان توتل اليسوعي...، وثائق تاريخية، Գ., Պէյրութ, 1960, էջ 122-123):

⁷¹ Արաբերէն՝ պաշտօն:

⁷² Սանուր՝ գետ, որ կը բխի Այնթապի մօտակայ լեռներէն, Հալէպէն հիւսիս: Ընդհանուր երկարութիւնը մօտ 100 կմ է, որուն 45-ը կը հոսի Սուրիոյ տարածքին: Հալէպի նորանշանակ նահանգապետ Խորշիտ Փաշան որոշած է Սանուրի ջուրը հասցնել Հալէպ, որուն համար սանմանած է նոր տեսակի տուրք, որուն դէմ ժողովրդային դժգոհութիւնը յանգեցուցած է 1819-1820 թուականներու հարիւրմէկօրեայ ապստամբութեան եւ քաղաքի պաշարումին ու աներումին (Միքայէլեան-Մինասեան, Հալէպցիներու ապստամբութիւնը..., էջ 11):

|21ա| 1820

Եղև Գերիմայ ի վերայ ազգին 200 ֆակ, վասն զի ոմանք զէն ամբար-
ձին ընդդէմ փաշայի⁷³ եւ այլ բազում Գերիմայք:

|11ա| Եկեալ լուրք յայոց ֆաղաֆաց. 1821

Եկն լուր, թէ Աղեֆսանդր պեկ Ուլանի եւ Պուղտանի ապստամբեցաւ ի
թագաւորէն տանկաց եւ սկսաւ առնուլ ֆաղաֆա, եւ ի Կրեաթ շիաբանեցան
ընդ նմա, եւ սպան զամենայն եղեալս անդանօր ի հայոց, ի հրէից եւ ի
տանկաց: Եւ զԿոստանդնուպօլիս կամեցաւ առնուլ, զիւր գրեաց ոմանց ի
Կիրակի Զատկին հուր արկանել ի չորս կողմանս ֆաղաֆին, եւ ինքն յար-
ձակեցցի եւ, իբրեւ թագաւորն ելցէ ի շիջուցանել զհրդեհն, սպանին զնա
յոյնք: Ի վեր երեւեցաւ դան, առ թագաւորն կոչեաց զպատրիարք յունաց եւ
ասէ նմա երաշխատր լինել ազգին իւրոյ: Ետ պատասխանի, թէ ո՛չ կարէ լի-
նել երաշխատր, կոչեաց զպատրիարք հայոց, եւ պատրիարգն երաշխատր
եղև բովանդակ ազգին հայոց յերկուց կողմանց յամենայն տեղիս, իսկ
պատրիարգն յունաց նզովեաց զպեկն հրապարակաւ եւ ի բազում տեղիս
առաքեաց զկոնդակ նզովից: Իսկ Կոստանդնուպօլիս առհասարակ զէն
առին յանձինս ի փոքունց մինչև ի մեծամեծս, եւ թագաւորն ի մեծամեծաց
դրան զոմանս սպան եւ զոմանս աֆտրեաց եւ արգել ամենեւին շուծանել
կամ հանել թուղթ նամակաց ի ֆաղաֆն, եւ յետոյ կախեաց զպատրիարք
յունաց եւ զերեւելի եպիսկոպոսս եւ գրեաց զանուանս ամենայն յունաց, որք
ի Կոստանդնուպօլիս. եւ էին անելի ֆան 200000 այր, եւ սկսաւ սպանանել ի
զլիատրաց նոցա բազումս:

Եկն լուր՝ հոչակեցին յոյնք զթագաւոր զոմն եւ նշանս ունէր երեք...⁷⁴, եւ
որք ի Մօսայ էին սպանին զամենայն տանիկս, եւ խորշուտ փաշայ սպան ի
սոցանէ 9000 այր: Եւ ի Կոստանդնուպօլիս ոչ ոք կարէր արտաքս ելանել, եւ
անհնարին թանկութիւն, լիւր⁷⁵ հացի 12 դոուշ, եւ ենկիչերիք եւ ֆաղաֆացիք
յարեան ի վերա միմիանց եւ սպանանէին, զոր եւ կամէին: Եւ ասեն 800
պատերազմական նաւ յունաց ի ծովու եկին յոյնք ի Զմիւռնիա, առին զե-
ղեալ անդ յոյնս, դարձեալ եկին առնուլ, յարեան ֆաղաֆացիքն, սպանին
զֆաաիւն⁷⁶, զմիւսելիմն եւ զայլս եւ շթողին զյոյնս ելանել ի Կիպրոս: Բազում

⁷³ Ակնարկութիւնը կ'երթայ 1819-1820 թուականներու հալէպցիներու հարիւրմէկօրեայ ժողովրդային ապստամբութեան, որուն մասնակցած էին նաեւ հալէպահայեր:

⁷⁴ Բնագրի մէջ երեք տառ կայ, որոնք հայերէն չեն, սակայն դժուար է որոշել, թէ ինչ լեզուով

են՝ :

⁷⁵ Կշիռքի միատր, որուն արժէքը փոխաւած է ըստ վայրի ու ժամանակի: Ընդհանրապէս կը կշռէր 2.28-2.55 ֆլկմ., իսկ Հալէպի լիւրը՝ 3 ֆլկմ.:

⁷⁶ Բալամական օրէնքի՝ շերիի դատատր:

գորականք ելին տանկաց եւ սպանանին եպիսկոպոս յունաց, եւ ֆոանկաց նախ բազմացան ի ծովու, եւ փաշայ Աֆէին հրամայեաց ի հիմանց ֆակել զվանս կարմելիթեանց որ անդ, եւ եղ զֆոնսօլ ֆոանսաց ի դիպահոջ: Եւ թագաւորն յունաց գրէ թագաւորին տանկաց զԿոստանդնուպօլիս. «Կամիմ ես՝ զայն ֆեզ ո՛չ պարգեւեցի եւ ոչ վանառեցի, իմ է ժառանգութիւն նորա»։ Գրեաց թագաւորն տանկաց՝ ամենայն ֆաղաֆաց յօգնութիւն հասանել զօրօֆ ի Կոստանդնուպօլիս: Եւ սկսաւ լինել ի վերայ ֆաղաֆաց անհնարին տոյժ տուգանի ի պաշար: Այլ փաշայ Բերիոյ միջնորդութեամբ Գրիգորի Տաւուտօղլի ստոաֆ ո՛չ եհան զօր ի ֆաղաֆէ, այլ գրէ նորոգ ի Կոստանդնուպօլիս հրաման առնուլ այլազգ տնօրինել, խնդրեաց 1500 ֆսակ ի ֆրիստոնէից, այլ այժմ թոյլ ետ մինչեւ զալ պետաթնայ. եւ յորժամ եկն պետաթնի, թէ թագաւորն ոչ կամի զօրս փաշայի, խնդրեաց եւ էստ տուգանս առանձին ի պարաթից եւ առանձին ի հպատակաց⁷⁷ ֆսակ:

Յամին 1823 եկն լուր ի Կոստանդնուպօլսոյ, թէ եղեւ սաստիկ հողմ՝ մինչեւ թոուցանել զմինարայս Սուլթան Սելիմ նամին եւ հրկիզութիւն 40000 տանց, եւ երկրաշարժութիւն՝ մինչեւ փլուցանել զամենայն ֆարաշէն տեղիս ֆաղաֆին:

Գարձեալ Գաղղիայ եւ Սպանիայ ընդ միմիանս պատերազմին, անէմ⁷⁸ ընդ տանկաց, հապաշ ընդ եգիպտացիս, յոյնք ընդ տանկաց:

Եկն լուր ի յապրիլի 29, թէ Մոսկովն սեֆեր բացեալ է ընդ տանկաց եւ թէ զանձարան թագաւորին տանկաց դատարկացեալ է:

[11բ] Ի սմին ամի, յամսեան Փետր/արին առաքեցին անգղիացիք՝ ֆննել եւ խնդրել զաւերեալ տունս աղֆատաց եւ զվնասն եղեալ առ նոսա եւ պատրաստեցին դրամ՝ շինել տալ զտունս նոցա եւ օգնել կարօտելոց, գրեցաք զհամար այնպիսի տանց աւելի ֆան հարիւր, եւ ցուցաք պալիօզին, եւ ինքն ասէ՝ զնացէ ընդ դրամաբաշխական արդարութեամբ:

Յամին 1826 լուաք, թէ թագաւորն սպան զենկնարիս ի Կոստանդնուպօլիս, ել կալեաց զհայս ի տեղի նոցա, եւ ասէ ոք, թէ երբ 10080 հայ ի կողմանց պարսից առ ինքն:

Յամին 1827 եղեւ ժանտախտ ի Բերիա եւ, ասեն, մինչեւ ի Յունիս մեռեալ 30000 անձինք, դարձեալ եղեւ պատերազմ ի մէջ տանկաց եւ յունաց ի Մօսայ, եւ մեռան յերկուց կողմանց 14000:

Յամին 1827, յօգոստոս 24 եկն լուր, թէ եկն ի Պերոստ նաւ պանտերայի⁷⁹ թագաւորաց Եւրոպիոյ, եւ վաղվաղակի իջեն յայն գոնստիք հանդերձ ընտանեօք եւ զնացին, եւ ֆրիստոնեայք փախեան ի ֆաղաֆէն, եւ ասեն՝ եկին 50 նաւ ի Կիպրոս, եւ 250 նաւ ի Կոստանդնուպօլիս ի ֆոանկաց՝ խնդրել զվերջին պետաթնի ի թագաւորէն տանկաց՝ հաշտել ընդ յոյնս կամ

⁷⁷ Թիփն տեղը պարսապ ձգուած է:

⁷⁸ Նկատի ունի պարսիկները:

⁷⁹ Իտալերէն bandiera-էն փոխառեալ թրֆերէն՝ դրօշ:

պատերազմեցեն ընդ նմա Մոսկոֆն, ինկլիզն եւ ֆրանսիզն, եւ յոյն յանցեալ ամի եկին, պատերազմեցան ընդ Պերուս, այլ անձրեւ եւ հողմք ո՛չ ներեցին առնուլ եւ մնալ ի քաղաքի, եւ այս ի շաքարն աւագ արեւմտեաց, եւ էին 24 նաւ, նոյնպէս 5 նաւ եկին յայս ամի ի Յունիսի, եւ այրեցին նաւի առաջի Պերուսայ եւ կողոպտեցին զայլ նաւ:

Լուսիք, թէ Սելլա աւան մերձ յԵւրոկեայ երկրաշարժութեամբ սուգաւ ամենեւին յերկիր, նոյնպէս այլ աւան մերձ ի Կարին:

Յամին 1828 լուր եղեւ, թէ եղեալ է պատերազմ ի մէջ տանկաց եւ չորից քրիստոնեայ թագաւորաց մերձ Կոստանդնուպոլսոյ, եւ եկն նաւ օսմանեան 1200 զինուորաց վիրաւորելոց ի Դրապլոս՝ բժշկութիւն եւ դարման գտանել:

|21ա| 1821

Վերացեալ եղեն ֆոնապաշֆ ազգաց, եւ մեր ֆոնապաշն պահեալ բազում տառապանս կրեաց:

1821

Գնաց մեծաւորն՝ փախուցեալ ի վանս վասն իրաց ներիմայից եւ անկառավարութեան ազգին:

|20բ| Յամին 1822

Եկն լուր ի Բաբելովնէ՝ Նոյեմբեր 20, թէ եղեւ որոտումն անհնարին եւ անլուր եւ կայծակումն անհնարին եւ խաւարումն, եւ ամպք բարձրացեալք հասին մինչեւ ի տանիս:

Յեգիպտոս Նեղոս գետս առատացաւ յոյժ եւ արար վնաս բազում արտաբոյ կարգի:

Ի Դամասկոս եղեւ ժանտախտ:

Ի Կոստանդնուպոլիս ⁸⁰:

Ի Բերիա եւ ի Դամասկոս եղեւ ժանտախտ, մեռան ի Դամասկոս 30000, ի Բերիա 100000:

Յամին 1827, Սեպտեմբեր 26 եկն լուր, թէ գաղղիացիք եւ յոյն առին զՍայտա եւ սպանին զամենայն տանիկ, եւ թէ նեմսէ՞⁸¹ միաբանեալ են ընդ մուրիպեանց⁸², անգղիացիք եւ մոսկովք ընդդէմ Քուրֆիստանի եւ Կոստանդնուպոլսոյ, գաղղիացիք եւ յոյն ընդդէմ Արապիստանի եւ Եգիպտոսի:

|21բ| 1822

Յառաջին ատու Օգոստոսի եղեւ ընդ երեկս երկրաշարժութիւն անհնա-

⁸⁰ Շարունակութիւնը ձգուած է պարապ:

⁸¹ Նկատի ունի աստրիացիք:

⁸² Նկատի ունի մարոնցիները:

րի[ն], եւ կործանեցան երեք մասունք քաղաքի⁸³, եւ մեռան ի փլատակի 20000 ոգիք, եւ փախեան ամենայն քաղաքացիք արտաքին քաղաքի գիշերայն եւ մնացին գրեթէ երեք ամիս, եւ ո՛չ դադարէր շարժն, յետոյ սկսան շինել տունս ի գերանաց արտաքին քաղաքի եւ բնակիլ:

[23բ] Լուրք եկեալ այլուստ

Ի Պետրոս յամին 1827, Հոկտեմբեր 26 եկն նա գաղղիական եւ նեմսէի, եմոտ անդր երեք ժամ ֆոնսօլն Լօրիլլայ, եւ եղեւ լուր, թէ հաշտեցեալ են յոյնք ընդ տանիկս, այլ ի նմին գիշերի արար ֆոնսօլն ժողով ֆոնանկաց, եւ ի նմին գիշերի ընդ անձրեւով փախեան ամենայն ֆոնանկք, եւ ֆոնսօլն եղեւ անյայտ, զի ֆոնանկ[ք] պատերազմ բացին ընդ տանիկս:

Եկն լուր ի Կոստանդնուպօլիս, թէ պատրիարզ ասորոց ճրնոս Սայետար⁸⁴ զայրացեալ յերկուց եպիսկոպոսաց իւրոյ վասն լինելոյ ուղղափառ եւ գնաց ի Կոստանդնուպօլիս վասն հանելոյ ֆերման ընդդէմ նոցա եւ ուղղափառ հայոց, զի գնացեալ են ի Մերտին, իսկ պատրիարզ հայոց ասէ՝ մի՛ բանար զբերանդ, զի հնար չէ բանալ զայսպիսի ինչ առաջի դոսն: Յամին 1827, Հոկտեմբեր 28:

[51ա] [1822]

Կալան գեպիսկոպոս ասորոց եւ մատոնեաց վասն բանի պսակի եւ թաղմանց եպիսկոպոսի յունաց:

Առաւելցին յաքտուս զՆոհման էֆէնտի⁸⁵:

Մեռաւ պատրիարզ Սոյ, եւ եկն Սիմովն Եպիսկոպոս՝ առնուլ զկնիքս ընտրութեանց նոր պատրիարգի:

[20բ] 1828

Եղեւ հալածումն մեծ ի Կոստանդնուպօլիս ի թագաւորէ յառուս Կարապետ պատրիարգի⁸⁶, որք հալածեցին զուղղափառս ի քաղաքէ, եւ ցրուեցին 70 քահանայս եւ ստիպեցին զուղղափառս մտանել յեկեղեցիս, յետ աքսորելոյ զամենայն անկիրացիս ի Կոստանդնուպօլսոյ 5000:

⁸³ Նկատի ունի Հալէպը:

⁸⁴ Ասորիներու պատրիարք Ինզնատիոս-ճրնոս Սայետար Ե. (1819-1837):

⁸⁵ Նկատի ունի Հալէպի «էշրաֆ»ներու դասակարգի մեծաւոր Նու՛ման Ալշրայյէֆը, որ այդ պաշտօնը վարած է 1816-1822: Սպաննուած է նահանգապետ Պահրամ փաշայի կողմէ 1822-ին՝ 1819-1820ի ժողովրդական ապստամբութեան մասնակցած ըլլալու ամբաստանութեամբ, բայց կարծիք յայտնուած է նաեւ որ անոր սպաննութեան իսկական պատճառը եղած է նահանգապետին կողմէ իրեն «պարտ»ի գումար տալու առաջարկը մերժած ըլլալը (**Միրաբեան-Մինասեան, Հալէպցիներու ապստամբութիւնը...**, էջ 83):

⁸⁶ Կարապետ արք. Պալաթեցի (1783-1850), միաբան Երուսաղէմի սրբոց Յակոբեանց միաբանութեան: Պատրիարք Կ. Պոլսոյ 1823-1831: Վարած է նուիրակի ու առաջնորդի պաշտօններ: Հեղինակն է *Լապտեր հոգևոյ խորագրով* հատորին (Ա. տիպ՝ Կ. Պոլիս, 1826):

MIHRAN A. MINASSIAN

**THE UNPUBLISHED CHRONOGRAPHY AND HISTORICAL NOTES
BY APRAHAM ARCHBISHOP KOUPELIAN-YEGENIAN (1816-1829)**

Key words: *Chronography*, Apraham-Kerovpe Archbishop Koupelian-Yegenian, Aleppo, Sis, the Catholicosate of Cilicia, Constantinople, Armenian Catholic community, Ottoman Empire.

Apraham Archbishop Koupelian-Yegenian (Kilis 1786 – Aleppo 1832), the prelate of the Armenian Catholic community, was a poet, translator, and author of religious books. He wrote equally well in Armenian and Arabic. Of special historic importance is his detailed diary about the one-hundred-and-one days of the Aleppo revolt from 1819-1820; it was published in Arabic in a single volume in Aleppo in 2008.

This publication (with an introduction and detailed annotations) contains a previously unpublished chronography and notes on the history of Aleppo written by Archbishop Koupelian and found in his notebook (which is kept in the archive of the Armenian Catholic prelacy in Aleppo). This chronographic work includes information from different regions, as well as eyewitness and auricular witness accounts; he himself was part (or had witnessed some) of these events.

The events presented in the chronography include a quite vast region, although their main stage is Aleppo; there is also information from Constantinople, Sis, Beirut, Aintab, European countries, etc.

Besides this chronography, two other writings of historical content, extracted from the notebook, are also included in this publication. The first mentions the works that the author has carried out in 1817, while the second describes the persecution of Greeks in Aleppo in 1818.

МИРАН А. МИНАСЯН

**НЕОПУБЛИКОВАННЫЕ ХРОНИКА И ИСТОРИЧЕСКИЕ
ЗАМЕТКИ АРХИЕПИСКОПА АБРААМА КЮПЕЛЯНА-ЕГЕНЯНА
(1816-1829)**

Ключевые слова: Хроника, архиепископ Абраам-Керовбе Кюпелян-Егенян, Алеппо, Сис, Киликийский католикосат, Константинополь, католическая армянская община, Османская империя.

Архиепископ Абраам Кюпелян (Килис 1786 – Алеппо 1832), глава армянской католической общины Алеппо, был поэтом, переводчиком и автором религиозных книг. Он писал как на армянском,

так и на арабском языке. Особо ценен его подробный дневник народного восстания в Алеппо в 1819-1820 гг., длившегося сто один день, изданный на арабском отдельной книгой в Алеппо в 2008 г.

Настоящая публикация, снабженная предисловием и подробным комментарием, представляет *Хронику* и относящиеся к истории Алеппо записи архиепископа Кюбеляна, найденные в его записной книжке, хранящейся в архиве армянского католического прелатства в Алеппо.

Эти записки хронологического характера включают известия из различных мест, свидетельства очевидцев и участников событий, среди которых часто оказывался он сам.

События, представленные в *Хронике*, имеют обширную географию: хотя главным местом их действия является Алеппо, однако есть также сведения из Константинополя, Сиса, Бейрута, Айнтапа, европейских стран и т.д.

Кроме *Хроники*, публикация включает также два небольших сочинения исторического содержания; в первом автор перечисляет свои дела за 1817 год, а во втором описывает гонения на греков в Алеппо в 1818 г.

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՇԱՌՂ ՌԸՆՈՒ

ՄԱՇՏՈՅ ԾԻՍԱՐԱՆԻ ՆՇԱՆԱԿԱԼԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ՝ ԳԷՈՐԳ ՏԷՐ-ՎԱՐԴԱՆԵԱՆԻ ԱՇԽԱՏԱՍԻՐՈՒԹԵԱՄԲ, ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ, 2012 թ.*

1905 թ. սկսած Հայ եկեղեցու ծիսակարգի պատմական ուսումնասիրության մեկնարկն ու սկզբնաղբիւրը եղել է Ֆ. Կ. Կոնիբերի հրատարակած *Rituale Armenorum* աշխատությունը¹, ուր հեղինակն անդրադարձել է հայոց ծիսակարգին եւ ծիսական բնագրերին՝ տալով նաեւ նրանց մեծ մասի թարգմանությունները: Անգլիացի հայագետը որպէս սկզբնաղբիւր օգտագործել է այդ ժամանակաշրջանում Եւրոպայի եւ Հայաստանի մատենադարաններում՝ Վենետիկի Սուրբ Դազար կղզու Մխիթարեան միաբանությունում, Վատիկանի գրադարանի տարբեր հաւաքածոներում, Լոնդոնի Բրիտանական թանգարանում եւ Օքսֆորդի Բոդլէյեան գրադարանում, Փարիզի ազգային գրադարանում, Վիեննայի Մխիթարեան միաբանությունում եւ, վերջապէս՝ Էջմիածնի Մայր Աթոռում պահուող ձեռագրերը: Իր աշխատության համար Կոնիբերն ընտրել է այս տարբեր հաստատություններում պահպանուող ձեռագրերից տասնինը, որոնք նա ուսումնասիրել է տեղերում կամ էլ իրեն ուղարկուած նկարագրություններով: Այս ձեռագրերի հիման վրայ Կոնիբերի արած նշանակալի աշխատանքը մինչ օրս շարունակում է մնալ Հայ եկեղեցու ծիսակարգին վերաբերող բնագրերի ուսումնասիրության համար հիմնարար մի աշխատություն՝ բացառություններով մկրտության ծէսի եւ ճաշոցի, որոնք հետագայում լուրջ ուսումնասիրությունների, հրատարակությունների եւ թարգմանությունների առարկայ են եղել²: Այդուհանդերձ, աւելի քան հարիւր տարի առաջ ստեղծուած այլ աշխատությունների նման, Կոնիբերի գիրքը եւս ժամանակի ընթացքում հնացել է:

* Զեկուցում՝ 2016 թ. յունուարին ներկայացուած Deutsche Forschungsgemeinschaft-ի հովանաւորութեամբ Քէլոնի համալսարանի կազմակերպած Արեւելեան եկեղեցիների՝ Մկրտութեան խորհրդին վերաբերող միջազգային գիտաժողովին: Ֆրանսերէնից թարգմանեց Ամալիա Շահումեան, խմբագրեց՝ Շահէ ծ. վ. Անանեան:

¹ Տե՛ս, F. C. **Conybeare**, *Rituale Armenorum Being the Administration of the Sacraments and the Breviary Rites of the Armenian Church...*, Oxford, 1905 (այսուհետ՝ Կոնիբեր. այս գրքից մեջբերումները կնշնեն շարադրանքում):

² Հմտ. G. **Winkler**, *Das Armenische Initiationsrituale* (*Orientalia Christiana Periodica*, 217), Roma, 1982. Ch. **Renoux**, *Le Lectionnaire de Jérusalem* (*Patrologia Orientalis* [PO désormais], tome 35, n° 163; tome 36, n° 168; tome 44, n° 200; tome 48, n° 214; tome 49, n° 221, Paris-Louvain, 1969-2004):

Այդ տասնինը ձեռագրերի եւ, յատկապէս, հայերէն Մաշտոցի հնագոյն երկու ձեռագրերից մէկի՝ Թ.-ժ. դդ. գրուած Սուրբ Ղազարի 2^ր 457 ձեռագրի (Վնտկ. 320*) նրա ներկայացումն ու թարգմանութիւնն այլեւս չեն կարող բաւարար համարուել: Գէորգ Տէր-Վարդանեանի 2012 թ. հրատարակած՝ հայկական ծիսարանին վերաբերող բնագրերի՝ «Մայր Մաշտոց»³ վերնագրուած առաջին հատորը նորոգում է մեր գիտելիքները հայկական ծիսական ականդոյթի վերաբերեալ բացառութեամբ Հաղորդութեան ծէսի եւ Ճաշոցի:

Եւ իսկապէս, որոշ ծէսեր ու գլուխներ, որոնք առկայ են Վնտկ. 457 ձեռագրում, Կոնիբիրն անտեսել էր: Օրինակ, իր աշխատութեան 26րդ էջում հեղինակը մանրամասն չի նշում, որ եկեղեցու նաւակատիքի ժամանակ դուռն օձուում է միւռոնով, ինչն առկայ է Սուրբ Ղազարի ձեռագրում (տե՛ս ԳՏՎ, էջ 135-136): Կոնիբիրն իր ներածութեան X էջում հպանցիկ անդրադառնում է միւռոնի օրհնութեանը, սակայն նա չի տալիս գլխի (այդ հատուածի վերնագրի) անգլերէն թարգմանութիւնը, որը վերաբերում է Սուրբ միւռոնի օրհնութեան ծէսին եւ պատմականօրէն շատ կարեւոր է (տե՛ս, ԳՏՎ, էջ 360). սրան մենք դեռեւս կանդրադառնանք: Ընդհանրապէս նշում է նաեւ սկիհի եւ մաղզմայի օրհնութեան նկարագրութիւնը (Կոնիբիր, էջ 36, եւ ԳՏՎ, էջ 163): Սրանք ընդամենը մանրամասներ են, բայց նաեւ այդպիսիք շատ աւելի են: Սակայն Կոնիբիրն արած՝ Վնտկ. 457 ձեռագրի նկարագրութեան եւ բնագրերի անգլերէն թարգմանութեան ամենամեծ թերութիւնն այն է, որ նա մի կողմից ներկայացնում է Թ.-ժ. դդ. հայկական այս ամենահին Մաշտոցի տուեալների եւ աւելի ուշ շրջանի Մաշտոցների տրամադրած տեղեկութիւնների խառնուրդ, միւս կողմից՝ այս սկզբնաղբերի տարբեր ծէսերի ներքին դրսեւորումներին աւելացնում է նրանց վերաբերող պատմական տեղեկութիւններ: Եթէ մինչ Գէորգ Տէր-Վարդանեանի ձեռնարկած աշխատանքի աւարտը Կոնիբիրն աշխատութիւնը շատ կարեւոր էր հայկական ծէսերի ուսումնասիրութեան համար, ապա այժմ այն ընկալում է որպէս տարբեր ժամանակաշրջանների ծիսական եւ պատմական վաւերագրերի բանաքաղութիւն: Բնագրերի այս հաւաքածուն խառնաշփոթ է ստեղծում եւ աղաւաղում Վնտկ. 457 բացառիկ ձեռագրի իրական պատկերը: Վերջում մենք որոշակիօրէն կանդրադառնանք յատկապէս ծիսական բնագրերի հրատարակման հարցին:

* Հեղինակն օգտագործել է ձեռագրացուցակի համարը՝ 320, որ տարբեր է բուն՝ 457 գոյհա-համարից. այս շարադրամբում ամենուր գրուած է վերջինս՝ Վնտկ. 457 – Խմբ.:

³ Մայր Մաշտոց, հտ Ա., Գիրք Ա. Ըստ հնագոյն երկաթագիր ձեռագրերի եւ համեմատութեամբ Աստուածաշունչ մատեանի. Բնագրական եւ կանոնացանկային յանդիմանով, աշխատ.՝ Գէորգ Տէր-Վարդանեանի, Ս. էջմիածին, 2012, 924 էջ (այսուհետեւ՝ ԳՏՎ. այս գրքից մէջբերումները կնշուեն շարադրամբի մէջ):

Ա. Գէորգ Տէր-Վարդանեանի հրատարակած Մաշտոցը

Մայր Մաշտոց⁴ կոչուող հայկական ժողովածուների բնագրերի ամբողջութեանը վերաբերող շարքի առաջին հատորը 2012 թ. լոյս է ընծայել Մայր Աթոռ Ս. Էջմիածնի կաթողիկոսութեան հրատարակչութիւնը: Նրա հեղինակ պարոն Գէորգ Տէր-Վարդանեանը, լինելով Երեւանի Մատենադարանի Գլխավոր ավանդապահը, հնարաւորութիւն է ունեցել տեղում ուսումնասիրելու հայկական ձեռագրերի ամենահարուստ հաւաքածուի նմուշները, որոնց հոյակապ կերպով մեզ հաղորդակից է դարձնում իր աշխատութեան մէջ: Ստորեւ տալիս ենք այս հատորի համառօտ նկարագրութիւնը, յաւելելով նաեւ մեր մտորումները հայկական ծէսի պատմութեան, Մաշտոցի եւ նրա մէջ ժողովուած բազմաթիւ արարողութիւնների բնագրերի հաւանական ծագման վերաբերեալ:

Առաջին մաս. Ներածութիւն

Մաշտոց ժողովածուի պատմութեանը նուիրուած եւ 81 էջ կազմող նախաբանը սկսում է (էջ 11) Գ. Տէր-Վարդանեանի հրատարակութեան հիմնական երկու սկզբնաղբիւրների՝ Թ.-Փ. դդ. ամենահին երկու ձեռագրերի՝ Վնտկ. 457 եւ ՄՄ 1001 ձեռագրերի յիշատակութեամբ, որոնցից վերջինը յայտնի չի եղել Կոնիբիրին, եւ որոնց մանրամասն նկարագրութիւնը տրուած է գրքի 50-67 էջերում: Գ. Տէր-Վարդանեանի նախաբանի մեծ մասը նուիրուած է հայկական աշխարհում Մաշտոցի ունեցած դերին: Այս Մաշտոցի տարբեր արարողութիւնների մասին Ե. դարից ի վեր, ինչպէս նաեւ աւելի ուշ ժամանակաշրջանի տարբեր հայ հեղինակների գրած հաղորդումները շատ կարեւոր եւ մինչ այժմ անյայտ՝ նոր տեղեկութիւններ ունեն հայկական ծիսակարգի եւ նրա ամբողջութեան վերաբերեալ: Եւ իսկապէս, այսպիսով մենք արձանագրում ենք այս կամ այն դարում գոյութիւն ունեցող ծիսական կարգեր, որոնք չէինք կարողանում թուագրել: Այսպիսով մեզ են ներկայացւում հայկական ծիսակարգի ամբողջութիւնը կազմող ծէսերը՝ տարբեր դարաշրջաններում, եւ դրանց յաջորդական զարգացումը: Գ. Տէր-Վարդանեանը Մաշտոցի արարողութիւնների իր ուսումնասիրութիւնը հասցնում է մինչ մեր օրերը՝ հայեացք ձգելով հրատարակուած Մաշտոցների կամ էլ դարերի ընթացքում կատարուած թարգմանութիւնների վրայ, ինչպէս նաեւ այդ ժողովածուին վերաբերող վերջերս արուած այնպիսի հրապարակումների եւ ուսումնասիրութիւնների վրայ, ինչպիսիք են Կոնիբիրի, Հայր Սահակ Ճեմճեմեանի եւ Տիկին Գ. Վինկլէրի աշխատութիւնները՝ ուսումնասիրութիւններ, որոնք վերաբերել են այս երկու հին ձեռագրերում նկարագրուած ծիսակարգի ամբողջութեանը կամ էլ այս կամ այն ծէսին:

Բազմաթիւ ծիսակատարութիւնների մասին Հայաստանի, ինչպէս նաեւ Հայկական Կիլիկիայի եկեղեցական գործիչների եւ պատմիչների հաղորդումներն ինքնին վկայում են հայոց ծիսակարգում աղօթքների հարստութեան մա-

⁴ Մենք կօգտագործենք նաեւ Մաշտոց եւ Ծիսարան եզրերը:

սին արդէն վաղ շրջանում մինչեւ թ. դարում Մաշտոց ծիսական ժողովածուի ի յայտ գալը, որն ամբողջացնում է այդ ժամանակ գոյութիւն ունեցող եւ Ս. Հաղորդութեան խորհրդին չվերաբերող ծէսերը: Ժողովման այդ աշխատանքը նախաձեռնել է Մաշտոց եղիվարդեցի կաթողիկոսը, որը մահացել է 899 թ.: Նա վճռել է մի գրքի մէջ հաւաքել իր ապրած ժամանակաշրջանում գոյութիւն ունեցող ծէսերն ու բնագրերը, որոնք ցրուած էին տարբեր ձեռագրերում: Մաշտոց կաթողիկոսի այս նախաձեռնութեան շնորհիւ այս ժողովածուն ստացել է նրա անունը՝ Մաշտոց: Նրա նախաձեռնութեան արդիւնքը մեզ յայտնի է թ.-ժ. դարերի հնագոյն երկու՝ Վնտկ. 457 եւ ՄՄ 1001 ձեռագրերով: Այս երկու յուշարձաններում հաղորդութեանը չվերաբերող ծիսական արարողութիւնները բաշխուած են ըստ բաժինների, որոնք, ի տարբերութիւն մնացածների, կոչում են կանոններ, օրհնութիւններ կամ էլ աղօթքներ, որոնցից քառասունեօթն առկայ է Վնտկ. 457, իսկ երեսուներեքը՝ ՄՄ 1001 թերի ձեռագրում: Գ. Տէր-Վարդանեանի աշխատութեան ներածութեան վերջին մասը (էջ 67-81) նուիրուած է Մաշտոցի որոշ արարողութիւնների յաւելումներին (մենք դրանց կանգրագանանք), որոնք արուել են աւելի ուշ շրջանի ձեռագրերում, ինչպէս նաեւ դրանց վերաբերող յաւելեալ տեղեկութիւններին:

Մենք քաջ գիտակցում ենք, որ Գ. Տէր-Վարդանեանի Մաշտոցի հրատարակութեան առաջին հատորի ներածութեան մեր սեղմ վերլուծութիւնն ամբողջական չէ: Եւ իսկապէս, այս ութսունմէկ էջերը, ինչպէս նաեւ վերջում (էջ 654-737) յաւելուած տեղեկութիւնները Մաշտոցի պատմութեան վերաբերեալ այնքան հարուստ նիւթ են պարունակում, որ այլեւս հնարաւոր չէ այդ բնագրերից որեւէ մէկն ուսումնասիրել առանց դիմելու այս աշխատութեանը:

Երկրորդ մաս. Մաշտոցի բնագրերը

Գ. Տէր-Վարդանեանի կատարած թ.-ժ. դարերի երկու ամենահին Մաշտոցների՝ Վնտկ. 457 եւ ՄՄ 1001 ձեռագրերի մանրակրկիտ հրատարակութիւնը բացայայտում է, առաւել քան դա արել էր Կոնիբիթի հրատարակութիւնը, բազմաթիւ տեղեկութիւններ, որոնք վերաբերում են, ինչպէս մեզ է թւում, Մաշտոց ժողովածուի բազմաթիւ ծիսական գործառնութիւնների ակունքներին: Նշենք, որ Վնտկ. 457-ի 36 եւ ՄՄ 1001 ձեռագրի 27 ծիսական կարգերը ներկայացուած են Կանոն եզրով՝ յունարէնից փոխառուած ΚΑΝΩΝ բառով, որը, ինչպէս գիտենք, ընդգրկում է, որոշ բացառութիւններով, 439 թ. առաջ ստեղծուած Երուսաղէմի Ճաշոցի⁵ հայկական տարբերակի ծիսական տարուայ բոլոր արարողութիւնները, իսկ Մաշտոցի մնացած արարողութիւնները վերնագրուած են «աղաւթք» կամ «աւրհնութիւն» բառերով: Մի կողմից «կանոն»-ի, իսկ միւս կողմից «աղօթք»-ի կամ «օրհնութեան» տարբերակումը մեր կար-

⁵ Տե՛ս Ch. Renoux, նշվ. աշխ., էջ 210-369:

ծիքով նշանակալի է հայկական Մաշտոցի որոշ բնագրերի ծագումնաբանութեան տեսակէտից: Այստեղ «կանոն» եզրը օգտագործում է այնպիսի կարեւոր ծէսերի համար, ինչպիսիք են եկեղեցու օծումը, քահանայի եւ վանականի ձեռնադրութիւնները, քահանայի եւ եպիսկոպոսի յուղարկաւորութիւնը, մինչդեռ «աղաւթք» կամ «աւրհնութիւն» են կոչում պակաս կարեւոր այնպիսի ծէսերը, ինչպիսիք են Աղի օրհնութիւնը, Հացի օրհնութիւնը՝ Ս. Հաղորդութեան խորհրդից դուրս, հաղորդութիւն տալուց առաջ այն սեղանի օրհնութիւնը, որի վրայ դրուելու է հացը եւ այլն: Այստեղ «աղաւթք» եւ «աւրհնութիւն» եզրերով ընդգծուած՝ առկայ է ծիսականութեան նուազում եւ աճ, որը, անկասկած, իր վաղ շրջանում չգիտէր Հայ եկեղեցին, կամ միգուցէ Երուսաղէմի եկեղեցին, որտեղից պէտք է որ սկիզբ առնէին «ΚΑΝΩΝ»ները՝ Մաշտոց ժողովածուի ամենահին բնագրերը:

Եւ իսկապէս, յատկանշական է, որ Գ. Տէր-Վարդանեանի հրատարակած Մաշտոցի վեց կանոններում Աստուածայայտնութեան օրը Զրօրհնէքի, Աւագ Հինգշաբթի օրուայ Ոսնյուայի, Եկեղեցու նաւակատիքի, Խաչի ու Գերեզմանի օրհնութեան արարողութիւններում⁶, որպէս աղօթք, երգասացութիւն եւ ընթերցանութիւն ծառայող բնագրերը սկսում են հետեւեալ բանաձեւով «Այս կանոն կատարի»: Նոյն բանաձեւն օգտագործուած է Երուսաղէմի Ճաշոցում եւ նոյն օրերին, երբ տօնում են Աստուածայայտնութեան, Խաչի օրհնութեան խորհուրդները (սեպտեմբերի 13-14)⁷: Հարկաւոր է արձանագրել նաեւ «նաւակատիք»⁸ եզրի կիրառութիւնն ինչպէս Մաշտոցում, այնպէս էլ Երուսաղէմի Ճաշոցում՝ մի դէպքում նոր եկեղեցու օրհնութեան կապակցութեամբ, միւս դէպքում՝ սեպտեմբերին՝ Խաչի տօնի կապակցութեամբ: Եւ այս երկու ծիսական ժողովածուներում Մաշտոցում եւ Ճաշոցում⁹, ըստ *Itinerarium Egeriae*-ի¹⁰ եւ Երուսաղէմի Ճաշոցի¹¹ նախատեսուած է, որ Խաչի տօներն ու եկեղեցու օծման արարողութիւնները տեւելու են ութ օր:

Նաեւ նկատենք, բայց դա մեզ պակաս կարեւոր է թւում, քանի որ չկար աւետարանական յարմարեցուած մէկ այլ հատուած, նոյն Յովհաննու Աւետարանի Ժ. 22 ընթերցումը նախատեսուած է էւ Մաշտոցում եկեղեցու նաւակատիքի ծէսի համար, էւ Երուսաղէմի Ճաշոցում՝ սեպտեմբերին Խաչի տօնի համար¹²: Նմանապէս, Յովհաննու ԺԳ. 1 հատուածը, որն առկայ է Մաշտոցի

⁶ Տէ՛ս ԳՏՎ, էջ 168, 204, 275, 342 եւ 398:

⁷ Տէ՛ս Ch. Renoux, նշվ. աշխ., էջ 212-215; 360-361 և 362-363:

⁸ Տէ՛ս ԳՏՎ, էջ 97. Ch. RENOUX, նշվ. աշխ., էջ 360-361:

⁹ Տէ՛ս ԳՏՎ, էջ 135. Ch. RENOUX, նշվ. աշխ., էջ 362-363:

¹⁰ Տէ՛ս Pierre Maraval, *Egerie, Journal de voyage (Itinéraire)*, introduction, texte critique, traduction, notes, index et cartes (Sources Chrétiennes, n° 296), Paris, 1982, էջ 316-319:

¹¹ Ch. Renoux, նշվ. աշխ., էջ 214-215:

¹² Տէ՛ս ԳՏՎ, էջ 99. Ch. Renoux, Ibidem, էջ 362-363 :

Ոսնլուայի կանոնում¹³, վկայուած է Երուսաղէմի Ճաշոցի վրացական տարբերակում Աւագ Հինգշաբթի օրուայ Ոսնլուայի ծէսի համար¹⁴:

Մաշտոցի կանոններից մէկին Վնտկ. 457 ձեռագրի Մկրտութեան ծէսի երուսաղէմեան ծագման մասին վարկածը առաջադրել է Մարիո Ֆերէյրա Լագէսը¹⁵ դեռեա 1971 թ. *Didaskalia* պարբերականում: Այն իր ծանրակշիռ հաստատումն է ստացել 2008 թ.: Դա 314-335/6 թթ. Երուսաղէմի եպիսկոպոս Մակարիոսի՝ Հայերին ուղղուած թուղթն է, որի վաւերականութիւնը երկար ժամանակ կասկածի տակ էր առնուած եւ որի՝ Սուրբ Քաղաքի բարձրաստիճան եկեղեցական գործիչ լինելու փաստը վճռական կերպով վերահաստատել է պարոն Աբրահամ Տէրեանը¹⁶: Մակարիոսը, արձանագրելով իր եւ հայոց եկեղեցիների Մկրտութեան եւ Հաղորդութեան ծէսերի միջեւ եղած տարբերութիւնները, Նիկիայի ժողովի առիթով Սուրբ Քաղաք այցելած հայ եպիսկոպոսների միջոցով այդ ժամանակաշրջանի հայոց եկեղեցու Վրթանէս կաթողիկոսին (327-342) է ուղարկել իր եկեղեցու ծէսերի նկարագրութիւնը: Կասկածից վեր է, որ Մակարիոսը հայկական եկեղեցուն որպէս ծիսական մողէլ կարող էր առաջարկել միայն իր՝ Երուսաղէմեան ծիսակարգը: Մաշտոցի կապը Երուսաղէմեան ծիսակարգի հետ, հայկական ծիսական տարուայ Ճաշոցի այդքան ակնյայտ կախումը կարելի կլինէր ճշգրտել հայկական ծէսի մկրտութեան արարողութեան միջոցով: Գ. Տէր-Վարդանեանի երկու ամենահին Մաշտոցների հրատարակութեան ճշգրտութիւնը եւ, ի տարբերութիւն Կոնիբիրի հրատարակութեան, և նրա՝ այլ ձեռագրերի հետ համեմատութիւնից եւ ծէսերի մասին պատմական տեղեկութիւններից գերծ լինելը, պայծառ լոյսի ներքոյ եւ մանրամասն կերպով ներկայացնում է Մկրտութեան ծէսերին վերաբերող մի հին գրուածք:

Կարելոր է նաեւ նկատել այն եկեղեցաբանական ընկալումը, որ ներկայացնում են Մաշտոցի այս երկու հնագոյն օրինակների կանոնների յաջորդականութիւնները: Եւ իսկապէս, համապատասխան կանոնների յաջորդականութիւնը դրանցում ներկայացնում է քրիստոնեայի կեանքի տարբեր փուլերն այնպէս, ինչպէս այն պատկերացնում էր Հայ եկեղեցին իր ակունքներում, կամ էլ Երուսաղէմի եկեղեցին: Քրիստոնէական կեանքը, իր յաջորդական ծիսական տարբեր դրսեւորումներով, սկսում է Քրիստոսի եկեղեցու հետ կապից: Ահա թէ ինչու Մաշտոց ժողովածուն այնպէս, ինչպէս այն ներկայանում է այս երկու ձեռագրի՝ Գ. Տէր-Վարդանեանի հրատարակութեամբ, սկսում է այն ծէսերից,

¹³ Տէ՛ւ Մ. Tarchanischvili, *Le Grand Léctionnaire de l'Église de Jérusalem (Ve-VIIIe siècle)* (Corpus scriptorum Christianorum Orientalium, vol. 189), Louvain, 1959, n° 641 (LG) եւ ԳՏՎ, էջ 399:

¹⁴ Տէ՛ւ LG, n° 641:

¹⁵ Տէ՛ւ Մ. F. Lages, «The Hierosolymitain Origin of the Catechetical Rites in the Armenian Liturgy», *Didaskalia* I 1971, էջ 233-250:

¹⁶ Տէ՛ւ Ա. Terian, *Macarius of Jerusalem, Letter to the Armenians, AD 335*, New York, 2008.

որոնք կապ ունեն «եկեղեցի» կոչուող շինութեան հետ, իսկ յետոյ գալիս են այս նոյն վայրում կատարուող տարբեր ծիսական կարգերը: Համապատասխանաբար, Մաշտոցը սկսում է եկեղեցու առաջին քարի հիմնարկէքի արարողութեամբ: Դրանից յետոյ հերթականութեամբ գալիս են նոր եկեղեցու նաւակատիքի արարողութիւնը, ծէսին անհրաժեշտ բոլոր նիւթական տարրերի՝ եկեղեցու դռան, մկրտութեան աւազանների, բեմի, սկիհի եւ մաղզմաչի, հաւատացեալներին ժամերգութիւններին հրաւիրող ժամահարների եւ, վերջապէս, աղօթքների եւ աստուածաշնչական ընթերցումների համար նախատեսուած ծիսական գրքերի օրհնութիւնը: Միայն այս օրհնութիւններից յետոյ, երբ քարից կառուցուած եկեղեցին սրբազործուած է իր նիւթականութեան մէջ եւ որն ունի նաեւ ծիսական արարողութեան համար անհրաժեշտ բոլոր պարագաները, յայտնում են կենսավիճակ սահմանող ծէսերը՝ Մկրտութիւնը, Պսակադրութիւնը, Վանական կարգի ընդունումը, Միւռոնի օրհնութիւնը եւ, վերջապէս, քահանաների եւ եպիսկոպոսների յուղարկւորութեան ծէսերը: Մենք տեսնում ենք, որ քարից կառուցուած եկեղեցուց՝ Քրիստոսի եկեղեցու պատկերից եւ քրիստոնէական կեանքի վայրից է, որ կախուած է Մաշտոցի կանոնների հերթականութիւնը. եկեղեցում է, որ ծնում, ապրում եւ մահանում է քրիստոնեան: Ծէսերի այս նշանակալից հերթականութիւնը, որը պարզորոշ կերպով լուսաբանուած է Գ. Տէր-Վարդանեանի հրատարակութեան մէջ, կարծես թէ բնորոշ է Մաշտոց ժողովածուին¹⁷: Ոչ Ը. դարի Բարբերինիի Հմր 336 յունարէն Աղօթագիրքը (*Euchologium*), ո՛չ Մեթիւ Բլէքի հին *Rituale Melchitarum*-ը¹⁸, ո՛չ էլ աւելի ուշ շրջանի բիւզանդական ու լատին ծիսարանները նման հերթականութիւն չունեն: Իհարկէ, պէտք է հաշուի առնել հին վրացական ծէսը, քանի որ այս երկու՝ հայկական եւ վրացական եկեղեցիների ծիսական աղբիւրները սկիզբ են առնում նոյն երուսաղէմեան ակունքից: Դժբախտաբար վրացական Աղօթագրքերի՝ ձեռագրացուցակներում առկայ թերի նկարագրութիւնները, ինչպէս նաեւ մինչ այժմ վրացական Աղօթագրքի հազուադէպ ուսումնասիրութիւնների հրապարակումները հնարաւորութիւն չեն տալիս նշմարելու վերջինիս իրական դիմագիծը: Տիկին Թինաթին Շրոնցը, որը նախաձեռնել է այս ծիսական գրքի բնագրերի ուսումնասիրութիւնը, վստահ էմ, մի օր կ'լուսաբանի այս հարցը. դա մեր ցանկութիւնն է:

Գ. Երբորդ մաս

Գ. Տէր-Վարդանեանի գրքի «Յաւելուածներ» խորագրով երրորդ մասը (էջ 491-737) երկու առումով լրացնում է մեր գիտելիքները Մաշտոցի հին աղբիւր-

¹⁷ Յովհաննէս Երուսաղէմացուն վերագրուող եկեղեցուն նուիրուած հառը (տե՛ս **M. Van Esbroeck**, «Une homélie sur l'Eglise attribuee a Jean de Jerusalem», *Le Muséon* 86, 1973, p. 283-304) որեւէ կապ չունի Հայկական Միսարանի ծագրի հետ:

¹⁸ **Matthew Black**, *Rituale Melchitarum, a Christian Palestinian Euchologion*, edited and translated, Stuttgart, 1938.

ների վերաբերեալ: Քահանաների եւ եպիսկոպոսների յուղարկաւորութեան շատ ծաւալուն ծէսը, որը հրատարակուել է ժԲ. եւ ժՁ. դդ. ձեռագրերի հիման վրայ, բացայայտում է Գ. Տէր-Վարդանեանի քննական մտահոգութիւնը՝ աւելի ուշ շրջանի բնագրերը սահմանազատելու Վնտկ. 457 ձեռագրում առկայ նոյն կանոնից: Աւելի ուշ շրջանի՝ գերեզմանին վերաբերող այս բնագրերը հնարաւորութիւն են տալիս նաեւ ծանօթանալու թաղման ծէսերի զարգացմանը եւ տեսնել դրանց փոփոխութիւնները, քանի որ դրանք այդուհետ տեսնուծ էին ութ օր, եւ դրանց աստուածաշնչեան ընթերցումների թիւը գնալով աճում էր:

Գ. Տէր-Վարդանեանի հրատարակած երրորդ՝ մկրտութեան ծէսի, եկեղեցական ձեռնադրութիւնների եւ այլ ծիսական արարողութիւնների համար անհրաժեշտ՝ Միւռոնի օրհնութեան կանոնը գալիս է լրացնելու հայկական ծիսակարգի պատմութեան բացթողումներից մէկը: Հայ ժողովրդի համար մինչ այժմ էլ շատ հարազատ այս արարողութեան՝ Միւռոնի օրհնութեան գոյութիւնը վկայուած է միայն մէկ գրչի կողմից՝ Սուրբ Վնտկ. ձեռագրի 30րդ գլխում, որը բաց է թողել Կոնիբիրը. մի գլուխ, որն ընդգծում է ծէսի հնութիւնը, հանդիսաւորութիւնն ու որ այն վերապահուած է միայն Կաթողիկոսին: Ահա այդ շարադրանքը. «Կանոն խորհրդածութեան Սուրբ Իւղոյն, զոր Միւռոնն կոչեն: Բայց մենք ոչ իշխեմք գրել, զի մի՛ անհնազանդ գտանիցիմք Սուրբ Լուսաւորչի աթոռոյն եւ մեծի հայրապետին մերոյ»: Ուստի՝ Թ.-Ժ. դդ. այս ձեռագրի ընդօրինակման ժամանակաշրջանում գոյութիւն ունէր միւռոնի օրհնութեան բնագիր, որն այս գրիչը չէր համարձակուած ընդօրինակել: Գ. Տէր-Վարդանեանն իր գրքի երրորդ մասում այն հրատարակել է ըստ Մատենադարանում պահուող ժԵ. եւ ժԷ. դդ. ձեռագրերի, որն, անկասկած, ամենահին յայտնի բնագիրն է, քանի որ մինչ ժԵ. դար գործում էր դրա տարածման գաղտնիութեան օրէնքը: Ուստի, միւռոնի օրհնութեան բնագիրը հայոց եկեղեցու ամենաբարձրաստիճան սպասաւորի՝ կաթողիկոսի իրաւասութիւնն էր, որովհետեւ միւռոնն օգտագործուած էր միայն նրա կողմից կատարուող եկեղեցական ձեռնադրութիւնների համար: Կոնիբիրը, Վնտկ. 457 ձեռագիրը քննելիս, այս ծէսը հպանցիկ նշել է իր առաջաբանի X էջի 29-րդ կէտում, սակայն չի յիշատակել, ինչպէս նաեւ չի թարգմանել նախորդող կարեւոր յանձնարարականը, որը յղում է կատարում աւելի հին բնագրի, որից ընդօրինակուել է Վնտկ. 457 ձեռագիրը: Գ. Տէր-Վարդանեանի՝ Վենետիկի Մխիթարեանների այս ձեռագրի ամբողջական հրատարակութիւնը մեզ կարեւոր տեղեկութիւններ է տրամադրում հայկական ծիսակարգի պատմութեան վերաբերեալ:

Չորրորդ մաս

Գ. Տէր-Վարդանեանի գրքի վերջին մասը ներկայացնում է Մաշտոց ժողովածուի հին եւ նոր ձեռագրերի բովանդակութեան տպաւորիչ աղիւսակներ: Հեղինակը դրանցում տալիս է բոլոր աղօթքների եւ աստուածաշնչական ընթերցումների ամբողջական ցանկերը, իսկ յետոյ՝ իւրաքանչիւր կանոնում

դրանց առանձին ցանկը: Եւ վերջապէս, աշխատութիւնն աւարտուում է 1512 թ. մինչեւ 2008 թ. հրատարակուած Մաշտոցների եւ նրանց հատուածների ցանկով:

Մայր Մաշտոցի այս առաջին հատորի բովանդակութեանը նուիրուած մեր համառօտ ակնարկը հպանցիկ կերպով է ներկայացնում Գ. Տէր-Վարդանեանի կատարած աշխատանքի ծաւալը՝ ո՛չ միայն 47 կանոնների, օրհնութիւնների եւ աղօթքների հրատարակութեան, այլեւ հայկական Մաշտոցի պատմութեան նրա հետազօտութեան, այն պարունակող ձեռագրերի եւ Մաշտոցի տարբեր հատուածներին հայ հեղինակների անդրադարձների տեսակէտից: Հայ եկեղեցու այս ծիսական գրքին վերաբերող ցանկացած քննութեան համար այսուհետ անհրաժեշտ է լինելու օգտագործել այս առաջին հատորը:

Բ. Գ. Տէր-Վարդանեանի հրատարակութեան առանձնայատկութիւնը

Գ. Տէր-Վարդանեանի հրատարակութեան այս հպանցիկ նկարագրութիւնն անկատար կլինէր, եթէ մենք չիշատակէինք այս հատորի առանձնայատկութիւնները: Քանի որ այս հրատարակութեան հիմքը հանդիսացող Թ.-Ժ. դարերի երկու՝ Վնտկ. 457 եւ ՄՄ 1001 ձեռագրերի կանոնները գրեթէ միշտ նոյնական են, ապա հեղինակն այն ներկայացնում է այնպէս, կարծես լինի մէկ բնագիր: Այդուհանդերձ, հեղինակը հոգ է տանում դրանք տարբերակելու բոլոր այն դէպքերում, երբ դրանք տարբերուում են որոշ, քիչ քանակութեամբ բնագրերի մէջ (աղօթքներ եւ աստուածաշնչական ընթերցումներ)՝ դրանք տեղադրելով մէկը միւսի ետեւից իրենց կանոնաւոր տեղերում ընթացող ծէսի շրջանակում¹⁹: Համապատասխանաբար յղումներում յայտնուում են երկու բնագրերի միջեւ եղած թեթեւակի տարբերութիւնները, ինչը հնարաւորութիւն է տալիս արագ կարգալու ե՛ւ մէկի, ե՛ւ միւսի՝ Վնտկ. 457 (Վնտկ. 320) եւ ՄՄ 1001 ձեռագրերի շարադրանքը, կարծես դրանք մէկ բնագիր լինեն: Այսպիսով, Գ. Տէր-Վարդանեանի հատորում երկու ձեռագրի իւրաքանչիւր կանոնը ներկայացւած է յստակ ձեւով, եւ դրանց ընթերցողը կարող է նկատել նոյն դարաշրջանի երկու բնագրերի ե՛ւ միասնականութիւնը, ե՛ւ նուազագոյն տարբերութիւնները: Իր հրատարակութեամբ Գ. Տէր-Վարդանեանը ճանապարհ է բացում բազմաթիւ պատմական ուսումնասիրութիւնների համար. ա) տեղական ծէսերի ուսումնասիրման հնարաւորութիւն, քանի որ շնայած բնագրերը մեծ մասամբ նոյնական են, սակայն եւ առանձին տարբերութիւններ ունեն, օրինակ՝ Մկրտութեան կանոնում, բ) թէ որտեղ են օգտագործուել Վնտկ. 320 եւ ՄՄ 1001 երբեմն տարբերուող բնագրերը, ինչն, իհարկէ, հնարաւոր չէ պարզել: Հարկ է նկատել, որ Թ.-Ժ. դդ. նախորդող դարաշրջանում Հայ եկեղեցում կատարուող միեւնոյն ծէսի միաձեւութիւնը կանոն չէր:

¹⁹ Տե՛ս ԳՏՎ, էջ 158. Աւետարանական ընթերցումը՝ Մատթ. ԻԱ. 23-32, յատկանշական է ՄՄ 1001 ձեռագրին, միա՛ Վնտկ. 457 ձեռագրում համապատասխանում է՝ Ղուկ. ԺԹ. 1-10:

Գ. Տէր-Վարդանեանի՝ Մաշտոցի երկու հնագոյն ձեռագրերի հրատարակութիւնը հետաքրքիր է մէկ այլ կարեւոր առումով: Հայկական ծիսական գրքի քսանվեց կանոնները պարունակում են Աստուածաշնչից վերցուած ընթերցումներ եւ բազմաթիւ հատուածներ: Եթէ հաշուի չառնենք աստուածաշնչական ընթերցումներին նախորդող սաղմոսները, գիրքը պարունակում է Աստուածաշնչի տարբեր գրքերից քաղուած 198 հատուած: Չնայած բնագրերի այս պատկառելի թուին, Գ. Տէր-Վարդանեանը չի վարանել մեծացնելու իր հատորի ծաւալը, այդ 198 աստուածաշնչական հատուածներն ամբողջութեամբ ներառնելով կանոնների բնագրերի համապատասխան տեղերում, այլ ոչ թէ տալով դրանց սկիզբն ու վերջը՝ ինչպէս արել է Կոնիբիրը: Հին եւ Նոր Կտակարաններից քաղուած այդ հատուածներին վերաբերող յղումներում Գ. Տէր-Վարդանեանը նշում է ոչ միայն երկու ձեռագրերում եղած աստուածաշնչեան ընթերցումները, այլեւ դրանք համեմատում է Յովհաննէս Զօհրապեանի 1805 թ. տպագրած հայերէն Աստուածաշնչի բնագրի առաջին քննական հրատարակութեան բազմաթիւ տարբերակների հետ²⁰: Մաշտոցի երկու ամենահին ձեռագրերի աստուածաշնչական ընթերցումները համեմատելով այս քննական բնագրի հետ՝ Գ. Տէր-Վարդանեանը ձեռնամուխ է եղել աստուածաշնչական ուսումնասիրութիւնների համար մեծ խիստ կարեւոր շատ դժուար գործի, քանի որ Զօհրապեանի կազմած շարադրանքը արտացոլում է Աստուածաշնչի ու շրջանի հայերէն տարբերակը, որը զգալի կերպով կրում է Վուլգատայի եւ բիզանդական բնագրերի ազդեցութիւնը: Չնայած այս վերապահումներին, արդեօք հնարաւոր կլինի՞ Մաշտոցի աստուածաշնչեան բնագրերի ակունքները փնտրել Զօհրապեանի տարբերակին մերձեցող բնագրի մէջ: Դա երկարատեւ աշխատանք կպահանջի: Առաջին քայլը պէտք է լինէր (եթէ, իհարկէ, ամենուր երուսաղէմեան ծէսի հետքերը նշմարելը մեր քմահաճոյքը չէ) Մաշտոցի բնագրերը Կիւրեղ Երուսաղէմացու «Կոչումն ընծայութեան» երկի, ինչպէս նաեւ, անկասկած, Երուսաղէմի ճաշոցի հայերէն թարգմանութեան հետ համեմատելը: Այս ենթադրութիւնները ներկայ ակնարկի սահմաններից դուրս են: Նշենք միայն, որ Գ. Տէր-Վարդանեանի հատորը բացայայտում է աստուածաշնչական նոր ընթերցումներ, որոնց ուսումնասիրութիւնը մէկ անգամ եւս ցոյց կտայ Աստուածաշնչի քննութեան համար հին ծիսական բնագրերի ուսումնասիրութեան կարեւորութիւնը:

Մաշտոցի երկու ամենահին ձեռագրի աստուածաշնչեան բնագրերի ամբողջական հրատարակութիւնը վերջապէս մեզ նիւթ է տրամադրում ծիսական

²⁰ ԳՏՎ, էջ 88, եզեկիէլ Խ. 3-10. էջ 87, ծնթ. 22. էջ 88, ծնթ. 18, 24. Գ. Թագաւորաց Ե., 1-6, 9-14, էջ 139-141, Զօհրապի հրատարակութեան տարբեր բնագրեր. Սողոմոնի աղօթքը ընծայման ժամանակ շարունակվում է Զօհրապի բնագրից դուրս եւ հասնում մինչեւ Գ. Թագաւորաց Ը. 53, տե՛ս ԳՏՎ, էջ 38, 130, կամ 218. եւ այլն:

Ճաշոցների պատմութեան ուսումնասիրման համար: Եւ իսկապէս, ընթերցուածների ընտրութիւնն ու դրանց ծաւալը երբեմն տարբեր են Վնտկ. 457 եւ ՄՄ 1001 ձեռագրերում, չնայած որ երկուսն էլ նոյն ժամանակաշրջանի՝ Թ-ժ. դարերի ձեռագրեր են: Այս տարբերութիւնները շատ չեն, սակայն այստեղ հնարաւոր չէ դրանք թուարկել: Ընդգծենք միայն, որ, հետեւաբար, այդ ժամանակաշրջանում չկար ծիսակատարութեան ժամանակ ընթերցուող աստուածաշնչեան հատուածների անփոփոխ ցանկ: Նոյն հետեւութիւնը կարող ենք անել բազմաթիւ Սաղմոսների ընտրութեան, ինչպէս նաեւ եպիսկոպոսների եւ քահանաների աղօթքների խմբագրման եւ ծաւալի դէպքում: Արդեօք այս տարբերութիւնները մեզ չէ՞ն դրդում մէկ անգամ եւս մտածելու տարբեր վայրերում կատարուած ծիսական արարողութիւնների մասին, թէ՞ միգուցէ ծիսական կարգը կատարողներն իրական ազատութիւն էին վայելում: Այսպիսով այս բացառիկ ծիսագիտական ասպարէզում Գ. Տէր-Վարդանեանի հրատարակութիւնը բազմաթիւ հետազոտութիւնների ճանապարհ է բացում:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹԻՒՆ

Պէտք է ողջունել եւ այս հատորը հրատարակելու համար երախտագիտութիւն յայտնել Գ. Տէր-Վարդանեանին: Սա գիտական իրադարձութիւն է Մաշտոցի ճանաչման հարցում, որ հետազոտութիւնների լայն ասպարէզ է բացում հայկական ծիսակարգի եւ նրա բնագրերի պատմութեան ուսումնասիրման համար: Այս հրատարակութիւնը ներկայացնում է Թ-ժ. դարերի երկու ամենահին Մաշտոցների՝ Վնտկ. 457 եւ ՄՄ 1001 ձեռագրերի բնագրերի ամբողջական ճշգրիտ հրատարակութիւնը: Հատորի հիմնական մասում սահմանափակուելով միայն նոյն դարաշրջանի այս երկու՝ Թ-ժ. դդ. ծիսական բնագրերի ճշգրիտ հրատարակութեամբ, Գ. Տէր-Վարդանեանն անաղարտ կերպով ի ցոյց է դնում այն յաջորդական իրադարձութիւնները, որ ընդգծում են քրիստոնեայի կեանքի ընթացքը Թ-ժ. դարերում, եւ, ենթադրաբար, հայոց մկրտութեան արարողութեան ձեւաւորումից շատ առաջ, քանզի Գ. դարի երոսաղէմի Մակարիոս եպիսկոպոսն անձանօթ չէ քրիստոնէական ինքնութեան հիմնական ծիսակարգին այնպէս, ինչպէս այն նշում է հայոց եկեղեցում:

Մաշտոցը հրատարակութեան պատրաստողը նաեւ մեթոդաբանութեան դաս է տալիս հին ձեռագրերում պահպանուած որոշ ծիսական բնագրերի, Մաշտոցների եւ Ճաշոցների հրատարակութեան հարցում: Դրանց շարադրանքները չի կարելի խառնել, ինչպէս արել է Կոնիբիրը, աւելի ուշ շրջանի ձեռագրերի հետ, քանի որ դրանցից իւրաքանչիւրը ծիսակարգի պատմութեան որոշակի փուլ է ներկայացնում: Ամբողջութեամբ հրատարակուած՝ Վնտկ. 457 եւ ՄՄ 1001 նոյն դարաշրջանին պատկանող ձեռագրերի միջեւ եղած եւ վերը յիշատակուած տարբերութիւնները հնարաւորութիւն են տալիս նշմարելու ծէսերի կատարման ասպարէզում այդ ժամանակ գոյութիւն ունեցող ազատութիւնը:

տարբերություններ, որոնք կարծես թէ վկայում են տեղական ծիսակարգերի գոյութեան մասին: Դժբախտաբար երկու ձեռագրի շատ սեղմ յիշատակարաններն այս ենթադրութեան պատասխանը չեն տալիս:

Մէկ վերջին հարց: Չնայած երկու ձեռագրի միջեւ եղած աննշան տարբերություններին, գուցէ կարելի՞ էր եզրակացնել, որ երկու Մաշտոցների մի քանի կանոններ ծագում են երուսաղէմեան ծիսակարգից, ինչն այնքան զգալի է հայկական ճաշոցում եւ Շարակնոցներում: Սակայն նախկինում նկատուած մի քանի նմանություն դեռեւս բաւարար կռուան չեն նման կախման մասին խօսելու համար: Գ. Տէր-Վարդանեանի գերազանց հրատարակութեան՝ աւելի խորաքնին ընթերցանությունն ու ուսումնասիրությունը վստահաբար այլ հետեւությունների կյանգեցնեն: Այդժամ հայկական Մաշտոցը կներկայացնի ծիսական մի հին աղբիւր (սակայն սա ընդամէնը վարկած է), որը, քրիստոնէական եկեղեցիների վրայ շատ զօրաւոր ազդած՝ Սուրբ Քաղաքի ծիսակարգի հետ ունեցած իր կապերի շնորհիւ, միգուցէ հնարաւորութիւն կտայ լուսաբանելու Արեւելեան որոշ եկեղեցիների Ծիսարանների պատմությունը:

Աւարտում ենք՝ մէկ անգամ եւս մեր երախտագիտությունը յայտնելով պարոն Գէորգ Տէր-Վարդանեանին՝ մեզ աշխատանքի անփոխարինելի գործիք տրամադրելու համար:

ԳԷՈՐԳ ՏԷՐ-ՎԱՐԳԱՆԵԱՆ

ՀԱՅ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԵԱՆ ՄԻ ՆՈՐ ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ

**ՊՕՂՈՍ ԽԱԶԱՏՐԵԱՆ, ՀԱՅ ՀԻՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ,
ԼՐԱՅՐԵՅ ԵՒ ԽՄԲԱԳՐԵՅ ԱՐՇԱԿ ԲԱՆՈՒԶԵԱՆ, ԵՐԵՒԱՆ, «ՏԻԳՐԱՆ ՄԵԾ»
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹԻՒՆ, 2016, ԻԶ., 613 էջ¹**

Մեզ յայտնի է այս գրքին վերաբերող առնուազն երեք հրապարակում. նախ՝ երկիրց տպագրուել է գրքի սկզբում գետեղուած «Առաջաբան»ը (էջ է-Թ.²), որի հեղինակը մեր երկրի առաջին նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանն է³, որ նաեւ կանգնած է նոյն այս գրքի յղացման ակունքներում, ապա լրագրային բաւական ընդարձակ գրախօսութիւն է հրապարակել գրականագէտ, բանասիրական գիտութիւնների դոկտոր, պրոֆեսոր Վանո Եղիազարեանը⁴, ի վերջոյ, թուցիկ է մակերեսային անդրադարձ ունի նաեւ գրականագէտ ակադեմիկոս Ս. Սարինեանը⁵:

Այսպիսով, արձանագրելով հանդերձ, որ գիտական հանրութիւնն ընդհանուր առմամբ գիտէ այս գրքի մասին, անհրաժեշտ ենք համարում այն ներկայացնել նաեւ «Բանբեր Մատենադարանի» պարբերականի ընթերցողին⁶, միաժամանակ հրապարակելով նաեւ մեր գնահատականը, որ, անշուշտ, կրկին դրուատական է, բայց եւ մանրամասների մէջ էականօրէն տարբեր է նախորդների անդրադարձներից:

Լեւոն Տէր-Պետրոսեանի առաջաբանի աւարտը «Պօղոս Խաչատրեան... տիպար... մտաւորականին... նուիրուած երախտագիտութեան շատ համեստ

¹ Տիրոգոսաբերքի դարձերեսին մանրամասներ կան՝ «Աշխատասիրութեամբ՝ Պօղոս Մկրտիչի Խաչատրեանի, առաջաբանը՝ Լեւոն Յակոբի Տէր-Պետրոսեանի, խմբագրեց եւ լրացրեց Արշակ Ռուբէնի Բանուչեանը, Երեւան, 2016, 640 էջ»:

² Հայերէն գրերի թուային արժէք-համարներով մեր շարադրանքի մէջ յիշատակում ենք գրքի նախաբանային մասի՝ I-XXVI ձեւով գրուած էջահամարները:

³ «Երախտատու հայագէտի նոր աշխատութիւնը» խորագրով տե՛ս «Չորրորդ իշխանութիւն» թերթի 2016 թ. հոկտեմբերի 8ի համարում. համացանցային հրատարակութիւն տե՛ս՝ <http://bit.ly/2tXOY6H> (15 մարտի 2018 թ.):

⁴ Վանո Եղիազարեան, «Պօղոս Խաչատրեանի կազմած հայագիտական մատենագիտութիւնը», Ազգ օրաբերք, 28 հոկտեմբերի 2016, Հ՛ւր 40 (հմմտ. <http://www.azg.am/AM/2016102824>՝ 15 մարտի 2018 թ.):

⁵ Սերգէյ Սարինեան, «Պօղոս Խաչատրեան», Հայ հին գրականութեան մատենագիտութիւն, Երեւան, «Տիգրան Մեծ», 2016, 614 էջ, ՊՔԶ, 2016, Հմր 3, էջ 218-219:

⁶ Այս շարադրանքը ծրագրել էինք գրքի յոյս տեսնելուն պէս, բայց տարբեր զբաղմունքների պատճառով յետաձգուեց, սակայն վստահ ենք՝ հիմա էլ ոչ կամ ուշացած չէ:

տուրք է», իսկ սկիզբը մեր խնդրոյ առարկայ մատենագիտութեան նախապատմութիւնն է: 1989 թ. աշնանը «ծանր վիրահատութիւնից յետոյ Փարիզում ապաքինուելու շրջանում, շուրջ երեք ամիս» Տէր-Պետրոսեանն ապրել է իր մուսալեռցի ազգական՝ «Մխիթարեան սան, բանաստեղծ, բանասէր եւ թարգմանիչ Զուլալ Գազանճեանի բնակարանում» եւ տեսել, որ նա զբաղուած է «իր ուսուցիչ Կիրեղ վրդ. Քիպարեանի «Պատմութիւն հայ հին գրականութեան» գրքի լրացուած վերահրատարակութեան պատրաստման աշխատանքով, որը նախաձեռնել էր Ներսէս վրդ. Տէր-Ներսէսեանի գործակցութեամբ»: Առաջին անգամ 1944 թ. հրատարակուած իր գիրքը Քիպարեանը հետագայում «տասնեակ տարիներ շարունակաբար խմբագրել ու լրացրել» է, սակայն իր կեանքի ընթացքում (1891-1979 թթ.) վերատպել չի հասցրել: Վերահրատարակութեան պատրաստուած մեքենագրութիւնը տեսնելով՝ Լ Տէր-Պետրոսեանը նկատել է, «որ Քիպարեանի գրքի ենթաբաժիններին կցուած մատենագիտական ցանկերն անկատար ու հնացած են, հետեւաբար կարիք ունեն լրացման՝ մանաւանդ 1944 թուականից յետոյ հրատարակուած ուսումնասիրութիւններով»: Ապա յուշել է, որ մատենագիտութիւնը շարունակելու համար «ամենայարմար թեկնածուն հայ հին եւ միջնադարեան մատենագրութեան լաւագոյն գիտակ Պօղոս Խաչատրեանն է», յետոյ Զ. Գազանճեանը երեւանում ստացել է «Պօղոսի սիրալոծար յանձնառութիւնը» (էջ է.). նրա աշխատանքի շնորհիւ էլ 1992 թ. ի վեր Քիպարեանի գրքի երկրորդ հրատարակութեան⁷ մատենագիտական մասերը մեզ համար դարձան միջնադարի շատ հեղինակների եւ գրական հարցերի վերաբերող իսկապէս հիանալի տեղեկատու-մեկնակէտ:

Պ. Խաչատրեանի կազմած ցանկերը, բնականաբար, դասաւորուել են ըստ Քիպարեանի գրքի կարգի՝ մեր մատենագրութեան ժամանակագրական-տեսակային նրա նախընտրած ընթացքի. հետագայում նա մտադիր է եղել իր արածն անշատել Քիպարեանի գրքից եւ առանձին տպագրել մատենագիտութիւնների համար ընդունուած՝ այբբենական կարգով, բայց վաղահաս մահը խանգարել է, աւելի նորերս Խաչատրեանի որդիներ Սիմոնը եւ Արմէնը, ցանկանալով իրագործել իրենց հօր անկատար մնացած նուիրական գործը, խորհրդակցել են Տէր-Պետրոսեանի հետ, իսկ նա առաջարկել է «մատենագիտական ցանկերի խմբագրման, վերադասաւորման եւ անցած քսաներեք տարիներին լոյս տեսած նիւթերով հարստացման պատասխանատու աշխատանքը» վստահել Արշակ Բանուշեանին, որի արած բաւական ծաւալուն աշխատանքի շնորհիւ եւս այժմ ունենք մեր խնդրոյ առարկայ գիրքը: Եւ Լ. Տէր-Պետրոսեանը չի «կասկածում,

⁷ Զ. Կիրեղ վրդ. Քիպարեան, Պատմութիւն հայ հին գրականութեան, Վենետիկ, Ս.Ղազար, 1992, 670 էջ, 1 դիմանկար (տիտղ. դարձերեսին՝ Զեռագիրներու դասաւորում եւ խմբագրութիւն՝ Զ. Ներսէս Տէր-Ներսէսեան, Զուլալ Գազանճեան, Մատենագիտութիւն՝ Պօղոս Խաչատրեան (Երեւան):

որ այն արժանի տեղ է զբաղեցնելու հայկական մատենագիտական հրատարակութիւնների պատկանելի գանձարանում՝ հաւասարապէս օգտակար լինելով թէ՛ համալսարանական ուսանողութեան եւ թէ՛ մասնագէտների համար» (էջ Ը.):

Այժմ տեսնենք, թէ Ա. Բանուշեանը ի՞նչ է արել եւ ինչպէ՛ս.

Նախ. քանի որ առաջին՝ 1944 թ. տպագրի մէջ Քիպարեան վարդապետն «իր գրքի իւրաքանչիւր գլխին աւելացրել էր սեղմ եւ համառօտ մատենագիտութիւն՝ յղելով միայն իր կարեւորած հրատարակութիւններն ու ուսումնասիրութիւնները» (էջ ԺԵ.), ուրեմն Պ. Խաչատրեանը, «առաջնորդուելով միայն գրքի կառուցուածքով եւ յիշատակուած մատենագիրների անուններով (շուրջ 173)»⁸ (էջ ԺԵ.), աւելացել է թէ՛ 1944-ից առաջ տպուած եւ Քիպարեանի անտեսած գրականութիւնը եւ թէ՛ դրանից յետոյ, ընդհուպ մինչեւ 1991-ին հրատարակուած նիւթը⁹: Իսկ Ա. Բանուշեանն արել է հետեւեալը. «մատենագիտական յօդուածները քաղել եւ դասաւորել ենք այբբենական կարգով, խմբագրել եւ միօրինակութեան բերել բոլոր յղումները: Նոր մատենագիրների անուններ չենք աւելացրել, քանի որ հայ մատենագրութեան բոլոր հեղինակները մէկ հատորի մէջ անհնար կլինէր տեղաւորել, իսկ ներկայ հրատարակութիւնը կլինէր բոլորովին այլ, հեղինակին անհարազատ հրատարակութիւն» (էջ ԺԵ.). ապա գրացանկերը լրացրել է 1993-2015 թթ. տպագրուած նիւթով. «Մեր կողմից աւելացրել ենք մատենագիրների կենսագրական նախադրութիւններ»¹⁰ եւ լրացրել միայն 1992 թ-ից յետոյ լոյս տեսած հրատարակութիւնների եւ ուսումնասիրութիւնների մատենագիտական տուեալները» (էջ ԺԶ.), այլեւ՝ «Սոյն մատենագիտութիւնը 2015 թ-ի վերջին, ըստ էութեան, պատրաստ էր հրատարակութեան» (էջ Ի.)¹¹:

Քիպարեանի դասագրքի թելադրանքով «Պ. Խաչատրեանը կազմել է նաեւ առանձին ժողովածուների («Գիրք թղթոց», Շարակնոց եւ այլն) եւ հայ գրականութեան պարբերաշրջանների (Մաշտոցեան, Յունաբան, Միաբանող եղբայրներ եւ այլն) մատենագիտութիւններ»¹², որոնք՝ այբբենական հերթականութեամբ, մատենագիրների հետ միասին, գետեղել ենք նոյն շարքում» (էջ ԺԵ.):

⁸ Մենք հաշուել ենք մատենագիրների ճիշտ 170 անուն:

⁹ Քիպարեանի գրքի երկրորդ «Տպագրութիւնը սարստեցաւ 1992ի սեպտեմբերին Ս. Ղազարի Մխիթարեան տպարանին մէջ, Վենետիկ»։ Ենթադրելի է, որ նրա պատրաստում-աւարտումը եղել է գոնէ 1991ի վերջին:

¹⁰ Իսկ «Նախադրութիւնները շարադրելիս օգտագործած գրականութիւնը (հանրագիտարաններ, կենսագրական բառարաններ, յօդուածներ եւ այլն) յղուած է «ուսումնասիրութիւններ» բաժնում» (էջ ԺԶ.):

¹¹ Ներածական շարադրանքին յաջորդում են անհրաժեշտ-պարտադիր ցանկերը՝ «Հապատումներ» (իմա՝ «Յապատումներ») էջ ԻԱ-ԻԳ., եւ «Համառօտագրութիւններ» էջ ԻԵ-ԻԶ.:

¹² Առարկայական խնդիրների վերաբերող յօդուածները հետեւեալ 14ն են՝ գրքի փակագծուած էջահամարներով հանդերձ. Աշխարհացոյց (40), Գանձարան (64), Գիրք թղթոց (70), Դաշանց թուղթ (128), Մաշտոցեան շրջան (242), Միաբանող եղբայրներ (268), Յա-

Նկարագրական միաւորները խմբաւորել է «հրատարակութիւններ», «թարգմանութիւններ», «ուսումնասիրութիւններ» բաժիններում, դասաւորել ըստ տպագրութեան թուականների: Միեւնոյն հեղինակի մէկից աւելի ուսումնասիրութիւնների յղումները՝ վերահրատարակութիւնների եւ գրախօսականների հետ միասին, զետեղուած են նրա առաջին հրատարակումից յետոյ: Յղումներում նշուած չեն հրատարակուած գրքերի որոշ մանրամասներ (հրատարակչութիւնների անուններ, էջերի քանակ եւ այլն)» (էջ ԺԵ-ԺԶ): Եւ ընթերցողին առաջարկում է զեղչուած այս մանրամասները գտնել գրադարանների համացանցային քարտարաններում եւ ընդհանրական մատենագիտութիւնների մէջ. բայց սա սխալ վարմունք է՝ ընթերցողն ինչո՞ւ պէտք է գրքին կամ յօդուածին վերաբերող տեղեկութիւնները գտնի բազմաքայլ փնտրտուքով¹³: Հետագայ շարագրանքում (էջ ԺԷ.) թուարկուած են օգտագործուած՝ հետազօտական եւ ընդհանուր-մատենագիտական աշխատութիւններ:

Շատ հետաքրքիր է, որ մեր միջնադարին եւ յատկապէս մատենագրութեանը վերաբերող ընդհանրական մատենագիտութիւններն իրար չեն բացառում. մէկի հրատարակումով միւս(ներ)ն ինչ որ տեղ, անշուշտ, «հնանում» է(են), սակայն շարունակում են պահպանել ինչ-ինչ այլ արժանիք-արժէքներ, ուստի եւ անգործածելի չեն դառնում. այս ասելով՝ նկատի ունենք յատկապէս Միքայէլ Միասարեանցի¹⁴, Գարեգին վ. Զարբհանալեանի¹⁵, Արսէն վ. Ղազիկեանի¹⁶ մատենագիտութիւնները, եւ, ի վերջոյ, Յակոբ Անասեանի կոթողային

ճախապատում (328), Յունաբան շրջան (379), Նախամաշտոցեան շրջան (400), Շարական (431), Շուշանիկի վկայաբանութիւնը (437), Վիպական երգեր (515), Տպագրութիւնը մեր մէջ (521), Քնարերգակ բանաստեղծութեան շրջան (533):

¹³ Օրինակ՝ էջ 370՝ կայ. «ՄԻՄՈՆԵԱՆ Գ. Ս., Յովյաննէս քարկաւազը եւ իր «Մեկնութիւն տումարիս Հայկազնեայ»-ն, Եր., 2013» (այսպէս՝ վրիպակներով): Ընթերցողը կարող է մտածել, թէ սա ծաւալուն գիրք է, մինչդեռ 30 էջանոց տետր է՝ «Միմոնեան Գայիանէ Միմոնի, Յովհաննէս Սարկաւազը եւ իր «Մեկնութիւն տումարիս հայկազնեայ»-ն, ԻԵ. 00.01 «Կրօնի տեսութիւն եւ պատմութիւն (կրօնագիտութիւն)» մասնագիտութեամբ պատմական գիտութիւնների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախօսութեան սեղմագիր, Երեւան, 2013, 30 էջ»:

¹⁴ **М. М. Миансаров**, *Bibliographia Caucasica et Transcaucasica, Опыт справочнаго систематическаго каталога печатным сочинениям о Кавказе, Закавказье и племенах, эти края населяющих*, составил М. Миансаров, том 1, отдел I и II, С. Петербург, 1874-1876, XLII, 804 стр.

¹⁵ **Զարբհանալեան Հ. Գ.**, Հայկական մատենագիտութիւն (այբուբենական ցուցակ տպագրութեան գիտէն մինչեւ առ մեզ եղած հայերէն հրատարակութեանց), Վենետիկ, Մխիթարեան տպարան, 1883, ԺԶ., 734 էջ:

¹⁶ Հայկական նոր մատենագիտութիւն եւ հանրագիտարան հայ կեանքի, կազմեց Հ. Արսէն Ղազարոս Ղազիկեան, առաջին հատոր. Ա-Մ, Վենետիկ, ի տպ-ի Սրբոյն Ղազարու, 1909-1912, Լ., 2080 սիւն, Բ. մասն՝ 3 եւ 5 գրեր, 306 սիւն:

աշխատանքը¹⁷, որ հեղինակը կարողացաւ հասցնել ընդամէնը «Գերմանոս Կոստանդնուպոլսեցի» յօդուածին (այսինքն՝ Ա գրի սկզբից սկսեց եւ Գ տառի վերջին չհասաւ): Նոյնպէս հետաքրքիր է, որ սրանցից յետոյ երեւան եկած մասնական, աւելի ճշգրիտ՝ ուսումնական¹⁸ նպատակագրում ունեցող մատենագիտութիւնները եւս անուանացանկի, ժամանակագրական ընդգրկումների, ստեղծման միջավայրի¹⁹ եւ զանազան այլ պատճառներով մէկը միւսին չեն բացառում. այս դէպքում էլ նկատի ունենք ժամանակագրօրէն միմեանց շարունակող՝ Ռոբերտ Թոմսոնի²⁰ եւ Գէորգ Բարդակչեանի²¹, ապա եւ Պօղոս Խաչատրեանի (մեր խնդրոյ առարկայ) մատենագիտութիւնները: Իսկ սա նշանակում է, որ թէ՛ ուսումնասիրողները եւ թէ՛ ուսանողները պարտաւոր են իրենց փնտրտուքի համար հաւասարապէս օգտագործել թէ՛ թուարկուած եւ թէ՛ չիշատակուած բոլոր ընդհանրական եւ մասնական²² մատենագիտութիւնները, նաեւ՝ տարբեր հեղինակների ու խնդիրների վերաբերող ուսումնասիրութիւնները. այսինքն՝ յատկապէս հետազօտական նպատակներ ունեցողների համար

¹⁷ **Յ. Ս. Անասեան**, Հայկական մատենագիտութիւն, Ե-ժԸ. դդ., հտ. Ա., Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1959, ՃԺԵ., 5 չմ. էջ, 1228 սիւմ, հտ. Բ., Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1976, ԻԲ., 5 չմ. էջ, 1546 սիւմ, հտ. Գ., Երևան, «Ձանգակ-97» հրատ., 2004, 392 էջ:

¹⁸ Մեր կարծիքով գիտական պէտք է համարել միայն այն մատենագիտութիւնները, որոնք ներկայացնում են մատենագրին կամ մատենագրական երեւոյթին վերաբերող նաեւ ձեռագիր նիւթի ֆինական պատկերը, այսինքն՝ այդպիսին է, օրինակ՝ Յ. Անասեանի մատենագիտութիւնը: Այդպիսին է նաև ունիթոններին նուիրուած հետեւեալ աշխատութիւնը՝ **M.A.Oudenrijn**, *Linguae haicanae scriptores ordinis praedicationis fratrum unitorum et ff. armenorum ord. S. Basilii citra mare consistentium quotquot huc usque innotuerunt*, Bern: A. Francke Ag. Verlag, 1960:

¹⁹ Եւրոպայում կամ ԱՄՆ-ում ստեղծուած մատենագիտութիւններում յաճախ բացակայում են Հայաստանում տպուած նիւթերը, եւ հակառակը՝ դրսում տպուած շատ բաներ մեզ անմաշելի են մնում:

²⁰ **R. W. Thomson**, *A Bibliography of Classical Armenian Literature to 1500 AD*, Brepools-Turnhout (Belgique), 1995, 324 p.: Հեղինակն այն շարունակել է «Supplement to *A Bibliography of Classical Armenian Literature to 1500 AD*. Publications 1993-2005», Le Muséon, vol. 120, issue 1-2, 2007, pp.163-223:

²¹ *A Reference Guide to Modern Armenian Literature, 1500-1920*, With an Introductory History, Compiled and with an Introduction by **Kevork B. Bardakjian**, Wayne State University Press, Detroit, 2000, 714 p.

²² Սեդա Մարաբեանի կազմած այդպիսի մի ցրիւ կամ ըստ բաժինների բաշխուած մատենագիտութիւն առկայ է Լեւոն Բաբայեանի եռամասն հետեւեալ գրքի մէջ. տե՛ս 1) **Քաբայեան Լեւոն Յովնանէսի**, *Դրուագներ Հայաստանի վաղ ֆէոդալիզմի դարաշրջանի պատմագրութեան (V-VIII դարեր)*, Երևան, 1977, 409 էջ. 2) նոյնի՝ *Դրուագներ Հայաստանի զարգացած ֆէոդալիզմի դարաշրջանի պատմագրութեան (IX-XIII դարեր)*, Երևան, 1981, 391 էջ. 3) նոյնի՝ *Դրուագներ Հայաստանի XIV-XVIII դարերի պատմագրութեան*, Երևան, 1984, 292 էջ (երեւն էլ՝ ՀՍՄՀ ԳԱ. Պատմ. ին-տ., ԳԱ հրատ.):

այս բոլոր մատենագիտութիւնները կարող են սոսկ մեկնակէտի²³ դեր ունենալ, հետազօտողը մատենագիտական տեղեկոյթի ամբողջականութեան պէտք է հասնի իր լրացուցիչ փնտրտուք-աշխատանքով²⁴:

Վերջին անհրաժեշտութիւնը թեւադրուած է առաջին հերթին նրանով, որ ներկայ ժամանակներում անթերի, կատարեալ մատենագիտութիւն կազմելը գրեթէ անհնար է հետեւեալ հիմնական պատճառներով.

ա. Եթէ անգամ հաւատանք, որ մեր գոնէ Ազգային գրադարանը կանոնաւոր ստանում է Հայաստանում եւ սփիւռքում տպուած հայերէն ու հայկական բոլոր գրքերը (սփիւռքի մամուլի ստացման մասին շասենք), ապա օտարների հայագիտական հրատարակութիւնների կանոնաւոր ստացումն անհաւատալի է.

բ. Հայաստանի (Արցախը հետը) ամէն համալսարան (բարձրագոյն ուսումնական հաստատութիւն) կամ նոյն հաստատութեան ամէն բաժին (Ֆակուլտէտ) համարեա միշտ «հայագիտական հանդէս» կամ գրեթէ նման անունով սեփական պարբերական կամ տարեգիրք է հրատարակում. դրանք որպէս կանոն բաժանորդագրութիւն չունեն եւ չեն վաճառում (որովհետեւ բաժանորդագրութեան եւ գրավաճառական համակարգեր չկան): Սրանց տպաքանակը շատ յաճախ չափազանց փոքր է, եւ կարծես նախատեսուած են միայն ներքին սեփական սպառման համար²⁵.

գ. Գրական-գիտական արժէք ունեցող նիւթեր հրատարակում են երբեմն նաեւ օրաթերթերում, այլ կերպ ասած, առօրեայ մամուլի մէջ²⁶, սակայն սրա թղթային տեսքը հոգեվարքի մէջ է, իսկ համացանցային տարբերակի ճակատագիրը՝ յեղեղուկ (մի օր կան, մի ուրիշ օր հանում են):

Սրանցից բացի՝ կայ էական մի այլ հանգամանք եւս. հետազօտական խնդիր չունեցող՝ սոսկ մատենագիտութիւն կազմելու նպատակով աշխատող մարդը յաճախ գրքի կամ յօդուածի խորագրից այն կողմ չի գնում գործը չի կարդում, ուստի եւ իր խնդրի առարկայ անունը (բառը) խորագրի մէջ չտեսնելով, այն արձանագրելու մասին մտքով չի անցկացնում. եւ սա երբեմն էական վրիպումներ է առաջացնում:

²³ Ռ. Թումսոնի մատենագիտութեան՝ այդպիսին լինելու մասին մանրամասն տե՛ս մեր գրախօսութիւնը՝ ՊՔՀ, 1997/1, էջ 269-275:

²⁴ Ըստ որում, պէտք է փնտրել նաեւ առօրեայ օրաթերթային մամուլի գոյութիւն ունեցող մատենագիտութիւնների մէջ:

²⁵ Մեր օրերում գիտականութեան տեսակետից շատ յաճախ խիստ կասկածելի է անգամ ասանդոյթ եւ համբաւ ունեցող պարբերականների հրատարակուած նիւթերի որակը. բայց նկատի ունենանք, որ մատենագիտութիւնները որակ չեն պարգում, այլ արձանագրում են առկան՝ փաստը:

²⁶ Օրաթերթերում տպուած գիտական բնոյթի նիւթերի մատենագիտական մշակում մեր իրականութեան մէջ վերը յիշատակուած՝ իր յայտնի «Հայկական մատենագիտութիւն կամ հանրագիտարան հայ կեանքի» կոթողային գործում արեւ է երեւի թէ միայն Արսէն վ. Ղազիկեանը:

Այս ամէնի հիման վրայ վստահ ենք, որ թէ՛ մենք եւ թէ՛ ուրիշ որեւէ մէկը վրիպումների կամ մատենագիտական միաւորների պակասների համար իրաւունք չունենք յանդիմանելու կամ մեղադրելու Պօղոս Խաչատրեանին կամ Արշակ Բանուշեանին. պէտք է գոհ եւ շնորհակալ լինենք այն ամէնի համար, ինչ մեզ տրուած է կամ ինչ որ ունենք այս մարդկանց աշխատանքի շնորհիւ: Եւ աւելին, եթէ գիտենք եւ կարող ենք, պարտաւոր ենք իրենց արածին աւելացնել մեզ յայտնի այլ նիւթեր.

Այդ իսկ մտահոգութեամբ այստեղ արձանագրում ենք Յովհաննէս Սարկաւազին վերաբերող՝ մատենագիտութեան (էջ 364-370) մէջ բացակայող, մեզ յայտնի որոշ միաւորներ (ըստ ժամանակագրական կարգի).

1. **[Պողարեան] Ն[որայր]. վրդ. Մովսէս**, «Յովհաննէս Սարկաւազ վարդապետի մէկ նոր շարականը (Նշխարք նախնեաց)», *Սիոն*, 1941/Գ-Դ., էջ 74-75.
2. **Պետրոսեան Գարեգին Բ.**, «Յովհաննէս Սարկաւազի «Անկիւնատր թուեր»-ը», *ՀՄՄՌ ԳԱ Տեղեկագիր*, 1946, Հ^մ 4, էջ 23-42.
3. **Շահագիգ Երուանդ**, «Համառօտ տեղեկութիւններ հայոց շարականների մասին», *էջմիածին*, 1948/Ա-Բ., էջ 67-72, Գ-Դ., էջ 27-41 (բվնդ.՝ նաեւ Հ^մ Գ-Դ., էջ 38-9՝ Յովհաննէս «Սարկաւազ» վարդապետ).
4. **Աբրահամեան Աշոտ**, «XII դարի հայ գիտնական Յովհաննէս Սարկաւազի կենսագրութեան շուրջ», *էջմիածին*, 1949/Ե-ԺԲ., էջ 45-55.
5. **Աբրահամեան Աշոտ**, «Յովհաննէս Սարկաւազի բանաստեղծութիւնները (ուսումնասիրութիւն, բնագրեր)», *էջմիածին*, 1950/Թ-Ժ., էջ 60-66.
6. **Աբրահամեան Աշոտ**, «Յովհաննէս Սարկաւազի մաթեմատիկական աշխատութիւնը.- Յովհաննէսի «Յաղագս անկիւնատր թուոց» աշխատութեան ձեռագրերի նկարագրութիւնը (սխեմա, ուսումնասիրութիւն, բնագրեր)», *էջմիածին*, 1950/Գ-Դ., էջ 563-58, Ե-Զ., էջ 33-42.
7. **Աբրահամեան Աշոտ**, «Յովհաննէս Սարկաւազի պատմական աշխատութիւնները», *էջմիածին*, 1950/է-Ը., էջ 56-60.
8. **Աբրահամեան Աշոտ**, «Յովհաննէս Սարկաւազ վարդապետ եւ հայ տոմարը», *Հասկ*, 1951, էջ 282-284.
9. **Յովհաննէս Սարկաւազ վարդապետ**, «Շարական Վարդանանց [ձաշու]», *Հասկ*, 1953, յատկութեամբ.
10. **Աբրահամեան Աշոտ**, «Յովհաննէս Սարկաւազ Իմաստասէրի գիտական մատենագրութիւնը (Անթիլիասի կաթողիկոսարանի Կիւպէնկեան սրահում կարդացած հայագիտական դասախօսութիւնների շարքից)», *էջմիածին*, 1955/Զ., էջ 27-36.

11. **Երեմեան Արամ**, «Միջնադարեան հայ կոմպոզիտորներ», *Սիրոն*, 1956/Բ-Գ., էջ 66-69, Գ., էջ 106-108, Է-Ը., էջ 187-189, 203-207, Թ., էջ 230-233, 244-248, Ժ-ԺԱ., էջ 277-280 (բվնդ.՝ Ստեփանոս Սիրնեցի, Սահակադուխտ, Խոսրովիդուխտ, Յովհաննէս Սարկաւագ վարդապետ (1045-1129 թթ.), Գրիգոր Պահլաւունի, Ներսէս Շնորհալի (1102-1173 թթ.), 12-13-րդ դար՝ Ներսէս Լամբրոնացի, Գրիգոր Սկետացի. 13-րդ դար՝ Յովսէփ, Յովասափ, Ստեփաննոս, Յովհաննէս Երզնկացի (1250-1326 թթ.)).
12. **Երեմեան Արամ**, «Միջնադարեան հայ կոմպոզիտորներ», *Սիրոն*, 1957/Ա-Բ., էջ 26-30, Ժ-ԺԱ., էջ 276-279, ԺԲ., էջ 320-322 (բվնդ.՝ Գրիգորիս, Սամուէլ վարդապետ, Վարդան վրդ. Արեւելցի, Թորոս, Մանուէլ, Վահրամ Բահանայ, Սահակ վարդապետ, Սարգիս, Յովհաննէս, Սարկաւագ).
13. **Տէր-Ներսէսեան Հ. Ներսէս**, «Օրացոյցի 200ամեակին առթիւ 1757-1957», *Բազմավէպ*, 1957/Ա-Բ., էջ 1-5 (բվնդ.՝ Հայկական տոմարը, Անդրէաս Բիզանդացիի աղիաակները, Անանիա Շիրակացիի տոմարի կազմման ծրագիրը, Յովհաննէս Սարկաւագ Իմաստասէրի անշարժ տոմարը, Յովսէան տոմարի գործածութիւնը).
14. **Գրիգորեան Գէորգ Հ.**, «Յովհաննէս Սարկաւագ Իմաստասէրի փիլիսոփայական եւ բարոյագիտական հայեացքները», *Էջմիածին*, 1959/Ա., էջ 46-53.
15. **Բաղալեան Հայկ Ս.**, «Յովհաննէս Իմաստասէրի տոմարի շուրջ», *Էջմիածին*, 1970/Գ., էջ 40-46.
16. **Պողոսեան Նորայր եպս.**, *Հայ գրողներ. Ե-Ժէ. դար*, Երուսաղէմ, 1971, էջ 210-214՝ «Յովհաննէս Սարկաւագ վարդապետ (շ. 1050-1129)».
17. **Արեւշատեան Աննա**, «Անիի երաժշտական մշակոյթը եւ նրա հետ կապուած շարականագիրները», *Բազմավէպ*, 1995/Ա-Գ., էջ 203-218 (բվնդ.՝ Պետրոս Գետադարձ կթղ., Գրիգոր Մագիստրոս, Ստեփանոս Ապարանեցի, Սարգիս վրդ. Սեւանեցի, Յակոբ Սանահնեցի, Յովհաննէս Սարկաւագ, Յովհաննէս Իմաստասէր).
18. **Միրումեան Կարլէն**, «Յովհաննէս Սարկաւագի գրական ժառանգութիւնը որպէս փիլիսոփայական-էսթետիկական մտքի աղբիւր», *Հայկազեան հայագիտական հանդէս*, Ժէ. հատոր, 1997, էջ 311-329 (Բնակ է «Բան իմաստութեան» երկը եւ «Ղետնդեանց» շարականը).
19. **Յովհաննէս Սարկաւագ**, «Աղօթք Որդուն», «Քրիստոնէայ Հայաստան» *երկշաբաթաթերթ*, 1999, Նոյեմբեր, Բ., Հ^մ 22 (66), էջ 5.
20. **Անթապեան Փայլակ**, *Յովհաննէս Սարկաւագ իմաստասէր*, Երեւան, Երեւանի պետ. համալս. հրատ., 2001, 112 էջ.

21. **Բրուսեան Գրիգոր**, «Հայոց դարձի թուականի մասին», *Հանդէս ամսօրեայ*, 2001/1-12, էջ 181-229 (բվնդ՝ Ըստ Անանիա Շիրակացու, Աստղիկի, Յովհաննէս Սարկաւագի, Սամուէլ Անեցու, Յակոբ Ղրիմեցու որոշ հաղորդումների՝ Հայոց դարձի թուականը համարում է 298-300 թթ.)
22. **Յովհաննէս Սարկաւագ**, «Խրատ՝ ուղղուած եկեղեցուն զինուորագրուածներին, աշխարհաբարի վերածեց Մարթա Արաբեանը», *«Քրիստոնեայ Հայաստան» երկշաբաթաթերթ*, 2004, Մարտ, Ա., Հ^մ 5 (169) էջ 5, 6.
23. **Մաթեոսեան Կարէն**, «Յովհաննէս Սարկաւագի գործունէութիւնն Անիում», *էջմիածին*, 2005/է.-Ը., էջ 59-72.
24. **Սիմոնեան Գայիանէ, Վարդանեան Ռաֆիկ**, «Յովհաննէս Սարկաւագի «Մեկնութիւն տոմարի Հայկազնեայ» տոմարական ժողովածուն», *ԵՊՀ Աստուածաբանութեան ֆակուլտէտ, Տարեգիրք*, Ա., Երեւան, ԵՊՀ հրատ., 2006, էջ 58-97.
25. **Սիմոնեան Գայիանէ**, «Յովհաննէս Սարկաւագ Իմաստասէր (զիտամանկավարժական աշխատանքների ֆունդիւն. դասաւանդման մեթոդիկա)», *ԵՊՀ Աստուածաբանութեան ֆակուլտէտ, Հայ աստուածաբան, Բ.*, Երեւան, ԵՊՀ հրատ., 2008, էջ 189-211.
26. **Սիմոնեան Գայիանէ**, «Յովհաննէս Սարկաւագի ՇԼԲ. (532)-ամեայ զատկացուցակները», *ԵՊՀ Աստուածաբանութեան ֆակուլտէտ, Տարեգիրք*, Զ., Երեւան, ԵՊՀ հրատ., 2011, էջ 48-85.
27. **Սիմոնեան Գայիանէ**, «Յովհաննէս Սարկաւագի «Ազգաց կանոնները», *ԵՊՀ Աստուածաբանութեան ֆակուլտէտ, Տարեգիրք*, է., Երեւան, ԵՊՀ հրատ., 2012, էջ 49-57.
28. **Սիմոնեան Գայիանէ**, «Յովհաննէս Սարկաւագի անշարժ տոմարի ուսումնասիրութիւնների պատմութիւնից», *ԵՊՀ Աստուածաբանութեան ֆակուլտէտ, Տարեգիրք*, է., Երեւան, ԵՊՀ հրատ., 2012, էջ 217-235.
29. **Սիմոնեան Գայիանէ, Վարդանեան Ռաֆիկ**, «Յովհաննէս Սարկաւագի տոմարական ժառանգութեան մէջ առկայ թուկանութեան համակարգերը», *ԵՊՀ Աստուածաբանութեան ֆակուլտէտ, Տարեգիրք*, Ը., Երեւան, ԵՊՀ հրատ., 2013, էջ 48-65.
30. **Օհանջանեան Աննա**, «Յովհաննէս Սարկաւագի «Լուծումն բանիցն Աստուածաբանի» լուծումն-մեկնութիւնը», *ԵՊՀ Աստուածաբանութեան ֆակուլտէտ, Տարեգիրք*, Ը., Երեւան, ԵՊՀ հրատ., 2013, էջ 66-85.
31. **Սիմոնեան Գայիանէ**, «Յովհաննէս Սարկաւագի աստուածաբանական ու բարոյախրատական երկերը», *ԵՊՀ Աստուածաբանութեան ֆակուլտէտ, Տարեգիրք*, Թ., Երեւան, ԵՊՀ հրատ., 2014, էջ 34-51.

32. **Սիմոնեան Գայիանէ**, «Յովհաննէս Սարկաւազի գրական երկերն՝ իբրև հեղինակի կենսագրութեան սկզբնաղբիւր», *ԵՊՀ Աստուածաբանութեան ֆակուլտետ, Տարեգիրք, Ժ.*, Երևան, ԵՊՀ հրատ., 2015, էջ 72-91.
33. **Արամեան Մեսրոպ քնյ**, *Աշխատութիւններ*, հտ. Ա., Երևան, «Այբ» կրթական հիմնադրամ, 2016, էջ 275-469՝ «Յովհաննէս Սարկաւազի «Յաղագս նշանակի հաւատոյ նիկիականն ՅԺԸ.-իցն» ժողովածուն».
34. **Յովհաննէս Սարկաւազ Իմաստասէր**, *Տաղեր եւ հոգեւոր երգեր*, աշխատասիրութեամբ՝ բանասիրական գիտութիւնների դոկտոր, պրոֆեսոր *Վանո Եղիազարեանի*, Երևան, Արմաւ, 2017, 84 էջ:

Ինչպէս տեսնում ենք, այս յաւելումները վերաբերում են մատենագիտութեան միաժամանակ երեք կազմողներին՝ թէ՛ 1944, թէ՛ 1991 եւ թէ՛ 2015 թթ. նախորդող տարիներին: Եւ սրանք մեզ յայտնի են ըստ էութեան պատահմունքով. այսինքն՝ յատուկ փնտրումներ չենք արել, բերել ենք միայն մեր ներկայ զբաղմունքին՝ Սարկաւազ վարդապետին վերաբերող եւ միայն ներկայ պահին մեզ յայտնի յաւելեալ նիւթերը: Գրեթէ վստահ ենք, որ նոյն պատկերն է լինելու ցանկացած այլ հեղինակի կամ հարցի դէպքում. օրինակ՝ մեր խնդրոյ առարկայ մատենագիտութեան մէջ կայ Փաւստոս Բուզանդին վերաբերող 85 պարբերութիւն, այսինքն՝ նոյնքան մատենագիտական միաւոր, մինչդեռ ունենք 1995 թ. շուրջ կազմուած դեռեւս նախնական մի աշխատանք, որի մէջ կայ նոյն Փաւստոսին վերաբերող 280 մատենագիտական միաւոր (ձեռագրական նիւթը չհաշուելով):

Այսպէս լինելով հանդերձ՝ վստահ ենք, որ մեր յաւելումներով եւս Սարկաւազ վարդապետին վերաբերող մատենագիտութիւնն անթերի չէ. ամբողջացմանը ձգտելու ենք «Մատենագիրք Հայոց» շարքի համար այս հեղինակի գրական վաստակի հատորը պատրաստելու ընթացքում (գործն արդէն սկսել ենք եւ բաւական առաջ տարել):

Գրքի ուղղագրութեան հարցը ճիշտ լուծում է ստացել. «Մատենագիտութիւնը հրատարակում է մաշտոցեան ուղղագրութեամբ, ինչպէս որ կազմել է Պ. Խաչատրեանը» (էջ ԺԶ.), սակայն, ցաւօք, թէ՛ առաջաբանում եւ թէ՛ բուն մասում ցաւալիօրէն շատ վրիպումներ²⁷ կան. տպագրելուց առաջ շարադրանքն արժէր անցկացնել աւելի հմուտ մի հայեացքի տակով:

²⁷ Մի փոքր շարք. «Հապատումներ» (նիշտը՝ «Յապատումներ»), «հանձնելու», «հենց» (էջ ԺԱ.), «հենքի բացահայտմանը» (ԺԲ.), «կրտսէր» (ԺԳ.), «հետմահու», «լրացած», «Երբէք», «իրէն», «մեկ» (ԺԴ.), «հարաբերութիւններում», «տեսակետներն» (ԺԵ.) «տեսակետներին», «առաջնորդելով», «կլիներ» (երկիցս), «ներկա» (ԺԶ., Ի.), «խայտաբղետ» (ԺԷ.), «Այսպէս» (ԺԸ.), «դասակարգած» (ԺԹ.), «հենք» (Ի.). եւ այլն: Բովանդակային վրիպակ կայ Պ. Խաչատրեանի մի հրատարակութեան խոբագրի մէջ՝ «Ընտրանի հայ եկեղեցական մատենագիտութեան» (էջ ԺԲ.). պէտք է լինէ՝ «մատենագրութեան»:

Մի նկատում եւս. մատենագիտական նոր հրատարակութիւնների գոյութիւնը եւ դրանք օգտագործած լինելն²⁸ արձանագրելուց յետոյ Բանուշեանը գրել է. «Մի շարք հայերէն եւ յատկապէս օտարալեզու հրատարակութիւնների եւ պարբերականների տուեալներ, որոնց բնօրինակները հասանելի չեն եղել, քաղել ենք միջնորդաւորուած (այլեւայլ հրատարակութիւններից, առցանց շտեմարաններից): Մատենագիտական բոլոր յղումները ստուգել ենք՝ խուսափելու համար տպագրական վրիպակներ վերարտադրելուց» (էջ Ժէ.): Արժէր այսպիսիք՝ շտեմած կամ միջնորդաւորմամբ արձանագրուած միաւորներն օժտել որեւէ զատող նշանով, ասենք՝ նման դէպքերում գրեթէ սովորաբար կիրառուող աստղանշանով*:

Աւարտենք. Լեւոն Տէր-Պետրոսեանն իրաւացի է՝ մենք ունենք «մատենագիտական հրատարակութիւնների պատկառելի գանձարան» (էջ Ը.), որ մեր գիտութեան զարգացման կարեւորագոյն նախահիմք-ազդակներից մէկն է: Այդ գանձարանի արժէքների մէջ կան այնպիսի միաւորներ, որոնք գործածուելու են տեւականօրէն եւ ծառայելու են բազմատեսակ նպատակների. այստեղ ներկայացուած մատենագիտութիւնը եւս վստահաբար գանձարանային այդպիսի մնայուն եւ առաջնակարգ արժէք է, ուստի նրա ստեղծողների եւ իրականացմանը նպաստած մարդկանց նկատմամբ պէտք է միշտ երախտապարտ լինենք. բոլորի վարձքը կատար:

²⁸ Յուսանք, որ իր նկարագրութիւններն արել է ոչ թէ ըստ այդ հրատարակութիւնների, այլ իր համար դրանք ունեցել են սոսկ մեկնակէտի դեր, այսինքն՝ նրանց յուշումով տեսել եւ նկարագրել է իր ցանկագրած բուն նիւթերը:

ՄԱՀԱՆՈՍԱԿԱՆ

ԱՐՄԻՆԷ ՔԷՕՇԿԵՐԵԱՆ (1932 - 2018)



Նախնիները դաշտային Կիլիկիայի Ադանա քաղաքից են: 1915-ի ցեղասպանությունները զոհ գնացած երկու գերդաստանների մեկական վերապրողներից 1919-ին կազմուում է մի նոր ընտանիք, որ քիչ անց (Կիլիկիայի երկրորդ դատարկումի ժամանակ) դարձեալ բռնում է հարկադիր գաղթի ճանապարհը:

Մինաս և էօֆենի Քէօշկէրեանների ընտանիքը որոշ դեգերումներից յետոյ (Կիբանան, ապա Կիպրոս) հաստատուում է Եգիպտոսի Աղեքսանդրիա քաղաքում, որտեղ էլ 1932 թ. դեկտեմբերի 1-ին ծնուում է երկրորդ դուստրը՝ Արմինէն: Դպրոցական կրթութիւնը ստացել է ծննդավայրի Գալուստեան վարժարանում: Իսկ 1948 թ. աշնանը Եգիպտոսից Հայաստան ներգաղթող հայրենադարձների երկրորդ խմբի հետ ընտանիքը տեղափոխուում է Երևան: Ներգաղթին յաջորդած մի քանի տարիները եղել են ծանր փորձութիւններով յագեցած մուսլ մի ժամանակ, որն իր հետքը թողեց բազմաթիւ հայրենադարձ ընտանիքների ճակատագրում և աշխարհայեացքում: Հէնց առաջին տարում մահանում է հայրը, դրան աւելանում է երկու տարուց աւելի ընտանիքի անդամներից ոչ մէկի աշխատանք չունենալը (այդ ընթացքում ապրուստի միակ միջոցը եղել է իրենց բերած տան պարագաներն ու անձնական իրերը «սև շուկայում» վաճառելը): Այդ տարիներին մայրն ու աւագ քոյրը հնարաւոր ամեն ինչ արեցին՝ 16-ամեայ աղջնակին կեանքի դժուարութիւններից հեռու պահելու համար:

Այդուհանդերձ, հակառակ բոլոր դժուարութիւններին, Արմինէն ընդունուում է Երևանի Պետական համալսարանի բանասիրութեան բաժինը: Համալսարանը 1954-ին աւարտելուց յետոյ երիտասարդ բանասէրը մի քանի տարի աշխատուում է Երևանի շերամապահական կայանում (մի կարճ ժամանակ էլ՝ կինոթատրոնում իբրև գանձապահ-տոմսավաճառ): Իսկ 1959-ից աշխատանքի է անցնում Մաշտոցի անուան Մատենադարանում: Սկզբում աշխատուում էր մա-

մուլի բաժնում իբրև գրատար, իսկ որոշ ժամանակ անց տեղափոխում է մատենագրութեան բաժին: Հէնց այստեղ էլ անուանի հայագէտ Ասատուր Մնացականեանի ղեկավարութեամբ նա սկսում է իր գիտահետազոտական գործունէութիւնը, որի բազմաթիւ պտուղներն այսօր անբաժանելի մասն են հայ միջնադարեան գրականութեան հետազոտութեան անդամատանի:

Աս. Մնացականեանի յանձնարարութեամբ Արմինէ Քէօզկէրեանը սկսում է զբաղուել հայ միջնադարեան գրականութեան՝ մինչ այդ շատ անբաւարար ուսումնասիրուած և բազմաթիւ անպատասխան հարցերով ծանրաբեռնուած մի բնագաւառով: Խօսքը «Գանձարան» ժողովածուների և դրանց մէջ տեղ գտած «գանձ» կոչուած բանաստեղծութիւնների մասին է: Վաստակաշատ գիտնականի հմուտ ղեկավարութեամբ կատարուած բազմամեայ աշխատանքը տալիս է անսպասելի նոր արդիւնքներ. բացայայտում են Գանձարան ժողովածուների ստեղծման, դրանց կազմման սկզբունքները, գանձ, տաղ, մեղեդի և փոխ անուններով յայտնի բանաստեղծական միաւորների առնչութիւնները և այլ յարակից հարցեր:

1972-ին Արմինէ Քէօզկէրեանը պաշտպանում է թեկնածուական ատենախօսութիւն: Յետագայում իր այս աշխատանքը որոշ փոփոխութիւններով հրատարակուում է իբրև առանձին գիրք՝ Գրիգոր Նարեկացի, Տաղեր և գանձեր (Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1981, այս բնագիրը յետագայում ընդգրկուեց Մատենագիրք հայոց մատենաշարի ԺԲ հատորում, Անթիլիաս-Լիբանան, 2008): Այս գրքում գանձարանների ընդհանուր օրինաչափութիւնների բացայայտումից ու բացատրութիւնից զատ առաջին անգամ հրատարակուած են Ս. Գրիգոր Նարեկացու 6 յայտնի և 4 մինչ այդ անյայտ գանձերի, 21 տաղերի (և փոխերի) գիտաքննական բնագրերը:

Քանի որ գանձարանների և հէնց գանձ անունով յայտնի բանաստեղծութիւնների յետագայ զարգացումը սերտօրէն կապուած է եղել Ս. Ներսէս Շնորհալի հայրապետի հետ, Ա. Քէօզկէրեանը իր յետագայ ուսումնասիրութիւնները շարունակում է հէնց այդ ուղղութեամբ: Իր բացայայտած սկզբունքները կիրառելով Ներսէս Շնորհալու գանձերի ու տաղերի ուսումնասիրման գործում, Ա. Քէօզկէրեանը գիտականօրէն դասակարգում, կարգաւորում է մեծանուն հեղինակի բանաստեղծական ժառանգութեան այս մասը: Այդ աշխատանքի արդիւնքն է լինում Ա. Քէօզկէրեանի յաջորդ գիրքը՝ Ներսէս Շնորհալի, Տաղեր և գանձեր (Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1987, այս բնագիրն ընդգրկուած է Մատենագիրք հայոց մատենաշարի ԻԱ հատորում, Երևան, 2018): Այստեղ էլ ներկայացուած են Ս. Ներսէս Կլայեցու յայտնի և նորայայտ 4 գանձերն ու 102 տաղերն ու փոխերը, տրուած են դրանց գիտաքննական բնագրերը: Ընդ որում, գանձերն ու տաղերը ներկայացուած են իրենց նախնական հեղինակային կար-

գով դասաւորուած՝ գանձ-տաղ-փոխ բանաստեղծական միաւորների գանձարանային (հեղինակային) փոխդասաւորութեան և առնչութիւնների պահպանումով:

1983 թ. կեանքից հեռանում է իր գիտական ղեկավարը: Մեծավաստակ գիտնականը ի շարս այլ գործերի թերի էր թողել նաև իր ամենանշանակալի աշխատութիւնը՝ նուիրուած հայ միջնադարեան հայրէնների հաւաքմանն ու գիտական ուսումնասիրութեանը: Անասելի մեծ ծաւալի աշխատանքը հրատարակման համար ընդունելի վիճակի հասցնելու համար անհրաժեշտ էր կատարել բազմաթիւ լրացումներ, շտկումներ, ճշգրտումներ և այլն: Բնականաբար, ուսուցչի աշխատանքի ամբողջացումը պիտի կատարէր նրա աշակերտներից մէկը, և ամենայարմար թեկնածուն այս դէպքում Արմինէ Քէօշկերեանն էր: Նա ամբողջ երկու տարի նուիրեց ուսուցչին իր երախտիքը մատուցելուն, և այս անխոնջ տքնութեան արդիւնքը եղաւ Ա. Մնացականեանի «կարապի երգի» լոյս ընծայումը՝ Ասատուր Մնացականեան, Հայրէններ (Երևան, «Նաիրի» հրատ., 1994):

Եղեռնից մազապուրծ տարագիր հայի ճակատագիրը Արմինէ Քէօշկերեանի կենսագրութեան մէջ եղաւ թէ՛ սկիզբ, թէ՛ ընթացք, և թէ՛ վերջ: Ընտանեկան հանգամանքների բերումով 1988-ին նա տեղափոխուեց Կանադա ու մինչև կեանքի վերջ ապրեց Մոնրեալում: Սակայն սիրած գործի նկատմամբ նուիրումը նրան ուղեկից եղաւ նաև օտարութեան մէջ: Հայ Առաքելական Եկեղեցու Կանադայի թէմի առաջնորդարանում աշխատելու հետ մէկտեղ նա նաև աւարտին հասցրեց գանձարաններին նուիրուած իր բազմամեայ հետազոտութիւնը, որի արդիւնքը եղաւ իր վերջին մենագրութիւնը՝ «Գանձարանային մշակոյթ» վերտառութեամբ (Երևան, «Եասոն» հրատ., 2008): Այս աշխատութեամբ վերջնական պարզաբանում է տրուած «Գանձարան» ժողովածուների ծագման, զարգացման, կառուցուածքային օրինաչափութիւնների, ինչպէս նաև՝ բուն գանձարանային մշակոյթի պատմութեան հիմնական հարցերին:

Արմինէ Քէօշկերեանի գիտական վաստակը, անշուշտ, միայն նշուածով չի սահմանափակուում: Բնականաբար, ամեն հետազոտութեան ընթացքում ի յայտ են գալիս (երբեմն՝ բոլորովին տարբեր բնագաւառից) նոր, անսպասելի արդիւնքներ: Այսպէս էլ իր «գանձարանային» պրպտումների ընթացքում նա ի յայտ է բերում Գրիգոր Տաթևացու Սաղմոսաց մեկնութեան մի նոր համառօտ տարբերակ, որ, ամենայն հաւանականութեամբ, հեղինակը ստեղծած պիտի լինէր իր ուսանողների համար (Գրիգոր Տաթևացի, Մեկնութիւն սաղմոսաց. համառօտ տարբերակ, աշխատասիր. Արմինէ Քէօշկերեանի, Երևան, «Զուարթնոց» հրատ., 1993): Իսկ Մոնրէալի առաջնորդարանում աշխատելու տարիներին (մասամբ՝ նաև դրանից յետոյ) նա արտերկրի հայ պարբերական մամուլում լոյս է ընծայում բազմաթիւ յօդուածներ՝ նուիրուած հայ մշակոյթի տարբեր բնագաւառների և առհասարակ հայ հասարակութեանը յուզող տարբեր հարցերի: Այս յօդուածների հիմնական մասը (17 յօդուած) յետագայում ամփո-

փուլեցին առանձին ժողովածուի մէջ (Արմինէ Քէօշկէրեան, Յօդուածներ (1990-2005), Մոնրէալ, 2011):

Վերջին անգամ 2015-ի գարնանը Հայաստան այցելելուց շուրջ կէս տարի անց արագ զարգացող հիւանդութեան հետեանքով Արմինէ Քէօշկէրեանը տեղափոխուեց հիւանդանոց, ուր և մնաց մինչև վերջ: Կեանքից հեռացաւ իր ծննդեան 86-րդ տարեդարձից մէկ ամիս առաջ՝ 2018 թ. նոյեմբերի 1-ին:

Վերջաբանի փոխարէն.

Ասատուր Մնացականեանի հայրէնների հատորի վրայ աշխատելիս մի հայրէնի վրայ էր սևեռուել, որ իրեն շատ էր դուր եկել: Այն ժամանակ ես չէի ընկալում, թէ յատկապէս ի՞նչն էր իրեն գրաւել բանաստեղծական այդ տողերի մէջ: Այսօր այս տողերը շարագրելիս յանկարծ հասկացայ, որ իր կեանքի պատկերն էր տեսել դրա մէջ...

Յոր ժամ ի մօրէդ ելար,

Դու լայիր, 'ւ ամեն խնդային.

Հանց մաքուր ել յաշխարհէս՝

Ամեն լան, նայ դու ծիծաղիս...

Գրիգոր Բրուտեան

ՌՈՔԵՐՏ ՌԻ. ԹՈՄՍՈՆ
(24 ՄԱՐՏԻ, 1934, ԼՈՆԴՈՆ – 20 ՆՈՅԵՄԲԵՐԻ, 2018, ՕՔՍՖՈՐԴ)



Ռոբերտ Ուիլիամ Թոմսոնի վախճանի լուրը, որ տասնմեկ օր առաջ ստացած կաթվածի հետևանք էր, ցնցեց: Նրա անխոնջ աշխատասիրությունն ընդհատվեց նախադասություն կեսին: Մի էլեկտրոնային նամակ անպատասխան մնաց՝ հակասելով նրա սովորական ճշտապահությանը, և դա անհանգստացնող էր: Չէ՞ որ, ինչպես ինքն էր մի անգամ ասել, թոշակի գնալուց հետո մեկ բան էր միայն փոխվել. հիմա նա առավոտյան լրագրերն ավելի հանգիստ էր ընթերցում:

Թոմսոնի գրչի տակից ելած գրքերի և հոդվածների անդադար հոսքը դրա վառ ապացույցն է: Դա նկատելի էր նաև այն խանդավառության մեջ, որով նա շարունակում էր մասնակցել սեմինարների և գիտաժողովների: Բոլորովին վերջերս, նա, իր օքսֆորդյան հանդերձանքով, արևելագիտության մագիստրոսի քննություն էր ընդունում համալսարանում: Թոմսոնի համար դա իսկական վայելք էր, և նա կատակում էր իր սպիտակ փայլը կորցրած վերնաշապիկի մասին, ասելով, որ եթե իրեն նորից կանչեն, ապա պետք է նորը գնել: Ծնկի հետ կապված խնդիրը վիրահատության անհրաժեշտություն առաջացրեց, և նա որոշ ժամանակ ձեռնափայտով էր շրջում, սակայն շուտով դրա կարիքն այլևս չկար: Վերջին տարիներին նա նաև հանձն էր առել կնոջ՝ Ջուզիթի խնամքը, ում հետ ամուսնացած էր 1962 թվականից: Ռոբերտի պատկառելի ժառանգության բոլոր գրքերը ձեռնված են Ջուզիթին՝ *uxori dilectae* («սիրելի կնոջ») լատիներեն մականգրությամբ, բացի մեկից՝ Թովմա Արծրունու «Արծրունյաց տան պատմության» իր՝ ծանոթագրություններով օժտված թարգմանությունից, որը նա նվիրեց իրենց զավակներին՝ Ջասպերին և Քրիսպինին:

Ռոբերտ Թոմսոնն ավարտել է Քեմբրիջի համալսարանի դասական բանասիրության բաժինը և մեկ տարի անցկացրել Ստամբուլի Հայքի հունական աստվածաբանական քոլեջում: Այդտեղից նա մեծ շրջայց է կատարել Թուրքիայում, այցելելով Անի, նաև անձամբ մասնակցելով Տրապիզոնի Սուրբ Սոֆիայի տաճարի որմնանկարների վերականգնմանը:

PhD-ն ստացել է Քեմբրիջից՝ Աթանաս Ալեքսանդրացու հայերեն և ասորերեն թարգմանությունների ուսումնասիրության համար: Արդյունքում, Լուվենի Peeters հրատարակչությունը 1965-ի և 1977-ի միջև Corpus Scriptorum Christianorum Orientalium (CSCO) մատենաշարում շորս հատորով լույս ընծայեց այդ բնագրերը (ևս շորս լրացուցիչ հատոր պարունակում են Աթանասի երկերի ասորերեն տարբերակների անգլերեն թարգմանությունը): Թոմսոնն արդեն գրաբար էր սովորել 1958 թ. Վիեննայում, իսկ 1960-1961 ուսումնական տարում, Վաշինգտոնում, որտեղ նա «Դամբարթոն Օաքս» (Dumbarton Oaks) բյուզանդագիտական կենտրոնի կրտսեր գիտաշխատող (junior fellow) էր, պրոֆ. Սիրարփի Տեր-Ներսիսյանը քաջալերեց նրան մտնել հայագիտության ասպարեզ: Հաջորդ գիտական աստիճանը նա ստացավ Լուվենում պրոֆ. Ժերար Գարիտի ղեկավարությամբ՝ արևելյան քրիստոնյա ազգերի լեզուների (հայերեն, արաբերեն և վրացերեն) գծով: 1963-ից սկսեց գրաբար դասավանդել Հարվարդի համալսարանում, իսկ 1969-ին դարձավ այդ համալսարանի՝ հայագիտության առաջին «Մաշտոցյան պրոֆեսորը», այդ պաշտոնում մնալով մինչև 1992 թ.: 1979 թ. ընտրվեց Դամբարթոն Օաքսի ավագ գիտաշխատող, իսկ 1984-1989 թթ. այդ հաստատության տնօրենն էր:

1992 թ. Թոմսոնը դարձավ Օքսֆորդի համալսարանի հայագիտության «Գյուլբենկյան պրոֆեսոր» և այդ պաշտոնը զբաղեցրեց մինչև 2001 թ. թոշակի գնալը: 1995 թ. ընտրվեց Բրիտանական ակադեմիայի անդամ: Իր ստացած պարգևների թվում նշենք «Սուրբ Սահակ և Սուրբ Մեսրոպ» շքանշանը, որով նրան պարգևատրեց Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ը՝ «հայ ժողովրդի պատմության գիտական ուսումնասիրման բնագավառում մեծ ծառայություն մատուցելու համար»: Եղել է ամերիկյան «Հայագիտական ընկերակցության» (Society for Armenian Studies) վարչության և «Հայագիտական ուսումնասիրությունների միջազգային ընկերակցության» (Association Internationale des Etudes Arméniennes) կոմիտեի հովանավոր անդամ (patron member):

Անգնահատելի է Ռոբերտ Թոմսոնի հայագիտական վաստակը և դրա կապը մի շարք հարակից բնագավառների հետ, ինչպիսիք են հայրաբանությունը, վաղ քրիստոնեության ու արևելյան քրիստոնեության ուսումնասիրումը, նաև բյուզանդագիտությունը: Այս ասպարեզներում աշխատողների, ինչու չէ՞ նաև բուն հայագետների համար Թոմսոնը բացահայտեց հայ պատմագրության և աստվածաշնչյան մեկնությունների ողջ հարստությունը՝ խորագետ ծանոթագրություններով օժտված անզուգական թարգմանությունների շարքով, ակադեմիական լայն շրջանառության մեջ դնելով քրիստոնեական մի բարդ ավանդույթի գործեր, որոնք երկար ժամանակ փակ գիրք էին ոչ հայագետների համար: Գրեթե միանձնյա ջանքերով նա մատչելի դարձրեց 13-րդ դարին նախորդող հայ պատմագրությունը՝ հատ ու կենտ բացառություններով (որոնք մեծ մասամբ գերազանց կերպով լրացրել էին ուրիշները), այնպիսի ծանոթա-

գրություններով, որոնք ուշագրություն են հրավիրում բնագրերի գրական առանձնահատկություններին և աստվածաբանական խնդիրներին:

Նրա տեսակետները երբեմն վեճեր են հարուցել, հատկապես Հայոց Պատմահայր Մովսես Խորենացուն ութերորդ դարով թվագրելու առթիվ (այս կարծիքը նա հայտնել է առաջին անգամ 1978 թ. հրատարակված իր թարգմանության առաջաբանում և չի հրաժարվել իր տեսակետից 2006 թ. երկրորդ հրատարակության մեջ):

Թոմսոնի առավել քան կեսդարյա, առաջին հայացքից հեշտ ու ջանքեր չպահանջող գիտական աշխատանքը բացառիկ է ինչպես իր խորությունով, այնպես էլ լայն ընդգրկումով: Նրա գործերից շատերը հայագիտության մեջ շրջադարձային են: 1960-ականներին մի շարք հոդվածներ և Աթանասի ասորերեն տարբերակների առաջին հատորները լույս ընծայելուց հետո, 1970 թ. Թոմսոնը հրատարակեց ս. Գրիգորի Վարդապետության անգլերեն թարգմանությունը, սպառիչ առաջաբանով և մանրամասն ծանոթագրություններով: Դա այն օրինակելի նմուշը դարձավ, որը կանխորոշեց նրա հետագա մոտեցումը բնագրերին: Այս երկարաշունչ բնագիրը, որ Ազաթանգեղոսի պատմական երկի գրեթե կեսն է կազմում, թույլ է տալիս թափանցել հինգերորդ դարի հայ աստվածաբանական մտքի ծալքերի մեջ: Ազաթանգեղոսի պատմության մնացած մասը, որում հայոց դարձը նկարագրված է ասես ականատեսի գրչով (մինչդեռ այն գրվել է 460-ական թթ.), Թոմսոնը թարգմանեց և հրատարակեց 1976 թ., սկիզբ դնելով պատմագրական երկերի հրատարակումների շարքին, որոնց իրականացումը տևեց մոտ երեսունհինգ տարի: 1978 թ. հետևեց Մովսես Խորենացու «Պատմութիւն Հայոց Մեծաց»-ը, ապա Եղիշեի «Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին»¹ (1982), Թովմա Արծրունու «Պատմութիւն տանն Արծրունեաց»-ը (1985), «Անանուն զրուցագիր՝ կարծեցեալ Շապուհ Բագրատունի» (“Anonymous Story-Teller, also known as Pseudo-Šapuh”) (1988-1989), Վարդան Արևելցու «Հաւաքումն պատմութեան» (1989) և Ղազար Փարպեցու «Պատմութիւն Հայոց»-ը (1991):

1970-ականներին Թոմսոնը նույնքան ակտիվ դասախոսում էր: Նրա սեղմ գրված և լայն տարածում ստացած գրաբարի դասագիրքը (Introduction to Classical Armenian), որ պարունակում է քերականություն, վարժություններ, բնագրերի ընտրանի և բառարան, հրատարակվեց 1975 թ., իսկ խմբագրված տարբերակով՝ 1989 թ. (վերատպվեց 1993 և 1998 թթ.): Դա անգլերեն այդօրինակ միակ աշխատությունն է, և ուսանողների սերունդներ են նրա օգնությունով առաջին անգամ ծանոթացել գրաբարին: 1977 թ., պրոֆ. Գևորգ Բար-

¹ Եղիշեի երկի համդեպ Թոմսոնի վերաբերմունքը ևս միանշանակ չի ընդունվել հայագիտության մեջ, քանի որ նա այս պատմիչին էլ էր համարում ոչ թե հինգերորդ դարի, այլ ավելի ուշ հեղինակ (խմբ.):

դակշյանի հետ համատեղ, նա հրատարակեց ժամանակակից արևմտահայերենի դասագիրք՝ ևս մի գործիք, որ բավարարեց ակադեմիական ուսուցման հրատապ պահանջը:

Մի շարք լեզուների տիրապետելը թույլ է տվել Թոմսոնին համեմատական ուսումնասիրություններ ձեռնարկել և այդու հստակեցնել մեր պատկերացումները վաղ քրիստոնեական գրականության մասին: 1983 թ., Բրիչիթ Քենդալի հետ համագործակցությամբ նա հրատարակեց ուշ անտիկ փիլիսոփա և Ալեքսանդրիայի դպրոցի ներկայացուցիչ Դավիթ Անհաղթի «Սահմանք իմաստասիրութեան» երկի՝ հունարենից հայերեն թարգմանության ծանոթագրված անգլերեն թարգմանությունը: Հաջորդ հունաբան թարգմանությունը, որ գրվեց Թոմսոնի ուշադրությունը, Դիոնիսիոս Արեոպագացու երկերն էին, որոնց քննական բնագիրն ու անգլերեն թարգմանությունը հրատարակվեց երկու հատորով (CSCO, 1987): Որպես տիեզերագիտության հանդեպ հետաքրքրության արդյունք և Բարսեղ Կեսարացու «Վեցօրեայք»-ի հայ իրականության մեջ հայտնվելը բացատրելու գործիք, Թոմսոնը հրատարակեց այդ երկի ասորերեն տարբերակի բնագիրն ու անգլերեն թարգմանությունը, դարձյալ երկու հատորով (CSCO, 1995): Սրան՝ 2012 թ. հետևեց մի ուսումնասիրություն՝ Saint Basil of Caesarea and Armenian Cosmology, որը պարունակում է երկի հայերեն տարբերակի անգլերեն թարգմանությունը և հայ հեղինակների տիեզերագիտական հայացքների վրա նրա ազդեցության քննությունը:

Վերադառնալով պատմագրությանը, 1996 թ. Թոմսոնը հրատարակեց մեկ այլ կարևոր աշխատություն՝ Rewriting Caucasian History. The Medieval Armenian Adaptation of the Georgian Chronicles. The Original Georgian Texts and the Armenian Adaptation: Էջի վերին կեսում ներկայացնելով վրացերեն ժամանակագրությունների հայերեն տասներեքերորդ դարի մշակումը, իսկ ստորինում՝ իր թարգմանությունը վրացերենից, գիրքը հրաշալի կերպով ցույց է տալիս, թե ինչպես են հայերը վերաշարադրել վրացերեն սկզբնագիրը՝ կրճատելով այն և լրացնելով հայկական նյութերով:

Օքսֆորդի բյուզանդագետ-պատմաբան Ջեյմս Հովարդ-Ջոնսթոնի (James Howard-Johnston) և նրա այն տարիների աշակերտ Թիմ Գրինվուդի (Tim Greenwood) հետ համագործակցության արդյունքը եղավ յոթերորդ դարի պատմիչ Սեբեոսի երկի երկհատոր թարգմանությունը՝ Թոմսոնի գրական և Հովարդ-Ջոնսթոնի պատմական ծանոթագրություններով (1999):

Անցյալ դարի իննսունականներին հրատարակվեց նաև Թոմսոնի հոդվածների կարևոր մի ժողովածու՝ «Հայ գրականության և քրիստոնեության ուսումնասիրություններ» (Variorum volume Studies in Armenian Literature and Christianity, 1994), որին հետևեց գիտությանը մատուցած իր ևս մեկ ծառայության արդյունքը՝ «Հայ դասական գրականության մատենագիտություն, մինչև

1500 թ.» (A Bibliography of Classical Armenian Literature to 1500 AD, 1995), որի 60-էջանոց լրացումը 2007 թ. տպագրվեց Le Muséon հանդեսում:

21-րդ դարի առաջին տասնամյակում Ռոբերտ Թոմսոնը թարգմանեց և ծանոթագրեց հունարեն գրված և հայերեն թարգմանված ու վերաշարադրված երկու գործ, որոնք կարևոր դեր են խաղացել հայոց պատմության ընկալման տարբեր փուլերում՝ Սոկրատ Աքոլաստիկոսի «Եկեղեցական պատմության» հայերեն ամբողջական ու համառոտ տարբերակները (2001) և «Սեղբեստրոսի վարքի» հայերեն տարբերակները (2005): Վերջինս ձեռագրերում հանդիպում է միայն «Փոքր Սոկրատի» (համառոտ տարբերակի) ուղեկցությամբ: Թոմսոնը կրկին դիմեց իր հին աշխատանքներին՝ հիմնովին խմբագրեց և մասամբ նոր առաջաբանով հրատարակեց ս. Գրիգորի Վարդապետությունը (2001), նաև վերանայեց և ծանոթագրություններով ու մատենագիտական տեղեկություններով լրացրեց Մովսես Խորենացու պատմության իր թարգմանությունը, որը լույս տեսավ 2006 թ.:

Թոմսոնի վերջին աշխատանքներից է «Ս. Գրիգորի վարքերը» (The Lives of Saint Gregory, 2010), որտեղ կողք-կողքի ներկայացված են Ագաթանգեղոսի երկի հայերեն, հունարեն, արաբերեն և վրացերեն բնագրերը, 100-էջանոց առաջաբանով նվիրված խմբագրությունների բաղադրությունը, հայկական աղբյուրներում Գրիգորի կերպարին, հայ աստվածաբանների անդրադարձներին նրան և Գրիգորի ու հայտնությունական թեմաների կապին:

Բացի առանձին երկերի առաջաբաններից ու ծանոթագրություններից, Թոմսոնը հատուկ ուսումնասիրություններ է նվիրել մի շարք պատմիչների, որոնց բնագրերն ինքը թարգմանել է, կամ այլոց, որոնց չի թարգմանել: 1994 թ. իր հոդվածների ժողովածուից հետո նա հետազոտությունների մի շարք է գրել Հայաստանի, նրա քաղաքականության, մշակույթի ու կրոնի դերի մասին Կովկասում, Բյուզանդիայի և Իրանի հետ հարաբերություններում, նաև քրիստոնեության ընդունման, հայ պատմագրության և գրականության մասին: Ուշագրավ է նաև նրա հետաքրքրությունը հայ իրավունքի հանդեպ, որի արդյունքում թարգմանեց Մխիթար Գոշի Գատաստանագիրքը, ինչպես միշտ, հիմնարար առաջաբանով և մանրակրկիտ ծանոթագրություններով (2000):

Մեկ այլ ակնարկային բնույթի հոդված, տպագրված 2009 թ. Journal of the Society for Armenian Studies հանդեսում «Աստվածաշնչի հայերեն մեկնությունները. ուսումնասիրվածության աստիճանը» (“Armenian Biblical Commentaries: The State of Research”), ներկայացնում է Ռոբերտ Թոմսոնի գիտական հետաքրքրությունների մեկ ուրիշ ուղղություն, որը նույնքան արգասաբեր է, որքան նրա մյուս ձեռնարկներն էին: Այդ հրապարակումից ոչ շատ առաջ նա հանդես էր եկել Studia Patristica-ում (2006) «Գոյություն ունի՞ արդյոք հայկական մեկնողական ավանդույթ» հարցադրումով: Արդեն 1983 թ.

նա հրատարակել էր Գրիգոր Նարեկացու «Երգ երգոցի» մեկնության իր թարգմանությունը: Հազարամյակի շեմին նա հրատարակեց Եղիշեին վերագրված Տիրոջ շարչարանքի մասին մի ճառ, իսկ նույն թվականի մի հոդվածում (2000) քննեց այդ ճառի և չորրորդ դարի աստվածաբան ու բանաստեղծ Եփրեմ Ասորու առնչությունները:

Թոմսոնը մի ամբողջ շարք գրքեր ու ծավալուն հոդվածներ է լույս ընծայել՝ նվիրված հայերեն աստվածաշնչական մեկնություններին ու ճառերին, 2005 թ.՝ Համամ, «Առակաց գրքի մեկնություն» (Commentary on the Book of Proverbs), քիչ անց՝ «Մամբրեն ու նրա ճառերը» (“Mambrē and His Homilies,” 2005-2007), Ներսես Լամբրոնացի, «Հովհաննեսի հայտնության մեկնություն» (Commentary on the Revelation of Saint John, 2007), 2008-2009 թթ.՝ «Եղիշեին վերագրված Հեսուի և Դատավորաց գրքի մեկնություն» (“A Commentary on Joshua and Judges Attributed to Eliše”), իսկ 2014 թ.՝ մի հատոր, նվիրված Նոննոս Մծբնացու՝ Հովհաննեսի Ավետարանի մեկնությանը (այդ գրվածքի արաբերեն սկզբնագիրը կորսված է): Նույն տարում նա հրատարակեց մի գիրք՝ մինչև 10-րդ դարը Հայաստանում արաբերենի գործածության մասին: Նրա ամենավերջին գործը, որ գրքի ծավալ ունի, մեջտեղ է բերում մի երկ, որն այնքան էլ հայտնի չէ հայագետներին՝ Ներսես Լամբրոնացու ս. Հովհաննեսի ննջման մեկնության բնագիրը, առաջաբանով և ծանոթագրություններով (2017): Երբ վրա հասավ մահը, Ռոբերտ Թոմսոնի՝ մեկ այլ ծավալուն մեկնության թարգմանությունն այն փուլում էր, որ նա սկսել էր հրատարակել փնտրել:

Ռոբերտ Թոմսոնի խորաթափանց հայացքն ու իմաստությունը դեռ երկար կարձագանքեն գիտության մեջ: Ուսանողները միշտ ձգտում էին նրա հետ շփման, և նա սիրով պատասխանում էր նրանց հարցերին, դա և՛ գիտնականի հատկանիշ էր, և՛ նրա մարդամոտ բարքի արտահայտություն: Թոմսոնը երաժշտության սիրահար էր և դաշնամուր էր նվագում: Դամբարժոն Օաքսի տնօրեն եղած ժամանակ նա մեծ խանդավառությամբ համերգներ էր կազմակերպում, ինքն ընտրելով ծրագիրը: Շատ սիրում էր նաև սեղան նստել բարեկամների ու գործընկերների հետ, հատկապես երբ դա ուղեկցվում էր մի բաժակ լավ գինիով: Ռոբերտը սիրում էր կյանքն ու գիտությունը, և ապագան ավելի տեսանելի է դարձնելու նրա նվիրումը վերջինին: Մենք կորցրինք մի բացառիկ գիտնական, գործընկեր, բարեկամ ու մարդ:

Lux perpetua luceat ei (Թող հավերժական լույսը շողա նրա համար):

Թեո Մասառեն վան Կինտ

**ԲԱՆԹԵՐ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ՀԱՆԴԵՍԻ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԶԵՎԱՎՈՐՄԱՆԸ
ՎԵՐԱԲԵՐՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐ**

1. Հոդվածին և ամփոփումներին վերնագրից հետո պետք է նախորդեն բանալի բառեր՝ թվով 8-10:

2. Հոդվածին պետք է հետևի ամփոփում՝ ոռուերեն և անգլերեն (ֆրանսերեն, գերմաներեն)՝ 100-300 բառ ծավալով: Այլալեզու հոդվածների դեպքում ամփոփումները համապատասխանաբար հայերեն են և երրորդ լեզվով: Ամփոփման վերնագիրն ու հեղինակի անունը ձևավորել ինչպես հոդվածի հիմնական բնագրում՝ առանց «Ամփոփում», “Резюме”, “Summary” և նման նշումների:

3. Հայերենի համար օգտագործել AMM MairTcutcak (unicode) տառատեսակը: Ռուսերեն և լատինատառ մասերը շարել Times New Roman տառատեսակով: Հիմնական բնագրի տառերը՝ շեղ (*italic*), չափը՝ 12, տողատակինը՝ ուղիղ, չափը՝ 10:

4. Աշխատությունների տողատակի հղումներում կիրառել միջազգայնորեն ընդունված հետևյալ ձևերը.

ա. Գրքերի և պարբերականների վերնագրերը գրել շեղատառ (*italic*):

բ. Հոդվածների (և գրքերի գլուխների) վերնագրերը՝ ուղիղ (ոչ շեղ), չակերտների մեջ:

գ. Շարքերի վերնագրերը գրել փակագծերում ուղիղ՝ հրատարակման վայրից առաջ:

դ. Աշխատությանը վերաբերող տվյալներն իրարից բաժանել ստորակետով:

ե. Նույն աշխատության կրկին վկայակոչման դեպքում նշել միայն հեղինակին և վերնագիրը կամ հանաչելի ձևով համառոտումով:

զ. Եթե կրկին վկայակոչումն անմիջապես հաջորդում է առաջինին, գրել «Նույն տեղում» և էջահամարը (եթե փոխվել է): Եթե հաջորդաբար նույն հեղինակի տարբեր աշխատություններ են նշվում, գրել «նույնի» և աշխատության տվյալները:

է. Մրանց գումարվում է *BW*-ում ավանդական դարձած՝ հեղինակի անունը թավ (**bold**), իսկ խմբագրի, կազմողի, թարգմանչի անունը թավ և շեղ (**bold + italic**) գրելու պահանջը:

Օրինակներ՝

Դափթ Անյադթ, *Սահմանք իմաստասիրութեան*, համահավաք ֆննական բնագիրը, թարգմանությունը գրաբարից ոռուերեն, առաջաբանը և ծանոթագրությունները *Ս. Ս. Արևշատյանի*, Երևան, 1960, պրակֆ ժէ., էջ 132:

Paul J. Alexander, “Medieval Apocalypses as Historical Sources,” *American Historical Review*, 73, 1968, p. 998:

Մովսէս Կաղանկատուացի, *Պատմութիւն Աղուանից աշխարհի* (ՄՀ¹, ժե. հատոր, ժ. դար), Երևան, 2011, էջ 27-437:

Philonis Alexandrini *Quaestiones in Genesim et in Exodum. Fragmenta Graeca*, ed. **F. Petit** (Les oeuvres de Philon d'Alexandrie 33), Paris, 1978:

5. Հանախակի հղվող աղբյուրների համար մշակել համառոտագրություններ, որոնց ցանկը կցել հոդվածի վերջում:

6. Գլխավոր հավաքածուներում պահվող հայերեն ձեռագրերը հիշատակել հետևյալ հապավումներով.

ՄՄ 1746 (Մաշտոցի անվան Մատենադարան):

Եղմ. 1903 (Երուսաղեմի Սուրբ Հակոբյանց վանք):

Վնտկ. 456 (Վենետիկի Մխիթարյան միաբանություն):

Վիեն. 2159 (Վիեննայի Մխիթարյան միաբանություն):

Փրգ. 58 (Փարիզ, Ֆրանսիայի Ազգային գրադարան):

(Մնացած հավաքածուների համար հապավումներ կմշակվեն ըստ անհրաժեշտության: Առաջարկում ենք ծանոթանալ հետևյալ կայքէջում գետեղված և միջազգայնորեն կիրառվող հապավումներին՝ Coulie, *Liste des sigles utilisés pour désigner les manuscrits*, (Coulie – 2002),

<http://sites.uclouvain.be/aiea/wp-content/uploads/2014/03/Sigles.pdf>):

¹ = Մատենագիրք հայոց: Այլ հանրահայտ հապավումներ են ՊԲՀ = Պատմաբանասիրական հանդես, ԲՄ = Բանբեր Մատենադարանի, ՀԱ = Հանդես ամսօրեայ, ԼՀԳ = Լրաբեր հասարակական գիտությունների, ԲԵՀ = Բանբեր Երևանի համալսարանի, REArm = Revue des Études Arméniennes:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՂԲՅՈՒՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Աշոտ Սարգսյան	Անցյալի հիշողությունը կամ պատմությունը՝ որպես սկտիվ ֆաղափական գործոն. այսօրվանից մինչև Մովսես Խորենացի	5
Գագիկ Դանիելյան	Հայկական վանքերի եւ եկեղեցիների մասին հիշատակություններ Աբու ալ-Մաֆարիմի երկրանհայտ էջերում	22
Քրիստինե Կոստիկյան Հայկազ Գևորգյան	Սեֆյան շահերի նորահայտ հրովարտակները Մատենադարանի կաթողիկոսական դիվանում	58
Վահագն Հակոբյան	Քաղաքական իրադրությունը Երևանի խանությունում և նրա շուրջ 1780-ականներին ըստ Ղուլամ Ալի խանի նամակագրության	76
Հայկազ Հովհաննիսյան	Ուշագրավ դիտարկում ժԹ. դարի հայերի մասին ..	84
Էդուարդ Հովհաննիսյան	Ղարաբաղի խանության միացումը Ռուսաստանին՝ ըստ Կովկասի հնագրական հանձնաժողովի վավերագրերի	91

ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Հասմիկ Կիրակոսյան	Մատենադարանի հայատառ պարսկերեն ձեռագիր Ավետարանների (ՄՄ 8492, ՄՄ 3044) տառադարձման կանոնները	100
--------------------------	--	-----

ՋԵՌԱԳՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ

Լուսինե Սարգսյան	Բեռլինի Պետական գրադարանի հայերեն Մանրամուկ (ԺԴ. դար)	121
Գայանե Թերզյան	Հաղբատի գրչության կենտրոնը	137

ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԲՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Դոնարա Կարապետյան	Հովասափ Սեբաստացին «Պատմութիւն հայոց թագաւորին» գրույցի կաֆաների հեղինակ	163
Կարինե Մոսիկյան	Նեմեսիոսի «Յաղագս բնութեան մարդոյ» երկը հայ միջնադարյան գրականության մեջ	177

ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ

Միհրան Մինասյան	Աբրահամ արք. Քիբեղեան-Եկեղեցեանի անտիպ ժամանակագրությունն ու պատմական գրառումները (1816-1829)	207
------------------------	---	-----

ԳՐԱՆՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Շաղ Թընու	Մաշտոց ծիսարանի նշանակալի հրատարակություն՝ Գեորգ Տէր-Վարդանեանի աշխատասիրութեամբ, Սուրբ Էջմիածին, 2012 թ.	231
Գեորգ Տէր-Վարդանեան	Հայ մատենագրութեան մի նոր մատենագիտություն	243

ՄԱՀԱՆՈՍԱԿԱՆ

Գրիգոր Բրուտեան	Արմինէ Քէօշկերեան	254
Թեո Մ. վան Լինա	Թորերտ Ու. Թոմսոն	258

<i>Բանբեր Մատենագրարանի</i> հանդեսի հոդվածների ձևավորմանը վերաբերող պահանջներ	264
---	-----

ԲԱՆԲԵՐ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ

Հատոր 26

BULLETIN OF MATENADARAN

Volume 26

ВЕСТНИК МАТЕНАДАРАНА

Том 26

*Էջադրուժը, համակարգչային ձևավորումը՝ Շողիկ Զադոյանի
Ոճական խմբագիր՝ Արմինե Գրիգորյան*

Լուսինե Սարգսյան

Բեռլինի Պետական գրադարանի հայերեն Մանրսումունքը (ԺԳ. դար)



Նկ. 1

Սարգիս մեառուպոլիտի և Սբ. Ներսես Շնորհալու դիմանկարները, Բեռլ. 279, 2բ
Տպագրվում է Բեռլինի Պետական գրադարանի թույլտվությամբ



Նկ. 2

Տիտղասաբերք, լուսանցում՝ Սբ. Ներսես Շնորհալին, ՄՄ 9554, 2ա: Տպագրվում է Մաշտոցյան Մատենադարանի թույլտվությամբ



Նկ. 3

Սբ. Ներսես Շնորհալու դիմանկարը, ՄՄ 591, Յբ: Լուսանկարը վերցված է Cl. Mutafian, <<La Saga des Arméniens de l'Ararat aux Carpates>> (Les Belles Lettres, Paris, 2018) աշխատությունից



Նկ. 4

Սբ. Ներսես Շնորհալու դիմանկարը, Վնտկ. 2149, 2բ: Լուսանկարը տրամադրել է արվեստագիտության թեկնածու, երաժշտագետ Արուսյակ Թամրազյանը

Դոնարա Կարապետյան

Հովասափ Սեբաստացին «Պատմութիւն հայոց թագաւորին» գրուցի կաֆաների հեղինակ



Նկ. 1

Ֆոլ. 805, 11ա



Նկ. 2

Բղ. 805, 210ա



Նկ. 3
ԲՈՒ. 805, 211բ

երկեր պատահեն. նոր այխտն այս խաւար. տանը
 կողէն ի գեհեմն. Տայն ժամ հրական երես
 Թարն որ զնայ կայ էջին. կարգն արդակ երգազան
 ձիանցն ի յորն ընկ էջին. զայքն հիացեալ առ է
 Բարկանալն Թարն. երան խեղճ հրականը այն է
 զաւակերս կողբաւորն էին. Ղարմախ հշտի
 մեծի ձիւն զագեաց ի վրայ պարոնին. կորեց զմեկբազ
 ուկն կնիք էջ ի վայր ի պտին. յայն ժամ աւել էալ
 Թարն. կտրաւ ի մեղաւք յոսին. կեղյուն ազատեալ
 կայեց ելաւք որկ ի մեղաւորն էին:

ձիանայ իւր
 զԹան. Գրնին



Ղարմախ հշտի մեծի յայն էր կտրաւք աւել էին ձիանայ
 կային. արհնեալ էտրոնի անայս գիտացեր